




ԱՐԴԵՍՏ

ՃՐ. Բ Տ Ը Ա Վ Ե Ա Խ Թ Ե Ա Ն

Վ Ա Մ Ի

Բ Ա Ր Ջ Ա Գ Ո Յ Ն Դ Ա Մ Ո Ւ



808.5
U-34

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՐԵՎԱՏ

ՃԱՐԱԾՈՒՅՈՒԹԵՐԻՆ

ՅԱԼԻԿԱՆ է 1981 թ.

ԱՀԱՅԱՏԱՐԵԱ,

ՏԵՇ Հ. ԵՓԲԵՄԱՅ Վ. ՍԵԹԵԱՆ

Ի ՄԽՈՒԹԵԱԾ ՈՒԽՏԵՆ


ՊԵՐՈՒ ՊՕՂՈՍ ԼԱԶԱՐՈՎԻՉ

ԲՆԱՑԻ

ՀԱՅԳՈՒՅԵԼՈՅ ՔԵՐՈՅՈՅ ԻՒՐՈՅ

ԱՎԱՅ ՍԱԼՄՈՒԵԿԻ ՄՈՒՐԱՅՏԵԱՆ

ԱՄ Ի ՅԱՀԱՆԿ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՄԱՆԻ ՄՐԲՈՅՆ ՂԱԶԱՄՈՒ

1832 — ՈՄՋԱ

१८५

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Օ ԱՐԴԻՒԽՆՍ վաստակաւորացն պատուել՝ արժանի դատեալ է յամ իմաստուն քննողաց. վասն զի բանաւոր մարդկուես այս առաջին պատշաճական գործ է, մանաւանդ թէ պարտք՝ Ճանաչելը շահէկան աշխատուիս իւրաքանչիւրոց, յարգել զնոցայն վաստակս, և գոհացող մտօք չնորհ ունել զնոցանէ : Օ սոյն շընորհակալութե նուեր պարտապան եմք փոխարինել ընդ գրոյն Շարտասանութե գերապատիւ Առաջնորդին մերոյ Տն Ատեփանոսի Աքքեպիսկոպոսի և Աքքայի, որ յանձին կալաւ ջան և աշխատութի՝ դաստիարակել և մարզել 'ի գիրմն յայն զՃաշակ զրաւորական փութոյ յազդիս մերում, և առաջնորդել ամ ուսումնասիրաց հայկազանց 'ի գեղեցիկ շարադրածս, և 'ի պերճ յօրինուածս Ճառից. որով հայրենատուր բարբառս մեր Ճաղկազարդի, և մտավարժիցն քաջուի 'ի դպրոցս յառաջադէմ զարգանայ : Ա-

ւելորդ է յուշ առնել զփափաք գրասիրաց և յօժարելոց՝ ի վարժու հայերէն դպրութեց, որը մեծաւ եռանդեամբ հպատակէին յընթերցումն գրոց, և օգուտ բազում շտեմարանէին անտի յանձինս:

Վայժմնորոգ սայօրինեցաւ. ոչ եթէ նորոգ ինչ կարդս և կանոնադրութիւն աւանդելով հակառակ առաջնոյն, այլ ըստ շաւղացն՝ զոր կալաւ բազմարդիւն մատենագիրն, և ըստ փութոյն յոր Ճզնեցաւ՝ ի բարեզարդել յազգի մերում ըլբարզաւաճութիւն հռետորական վարժութեց, ջանացաք յաւելուկ՝ ի Ճոխութիւն առաջնոյն նորանոր քննութիւն և զբացատրութիւն արդի քաջանուն վարժապետաց զանազան ազգաց. փութացեալ յարմարել զաշխատութիւն մեր զայս՝ յոչ և՝ ի կարդ բազմայարդար դպրոցաց ծաղկելոց հաստատուն կանոնօք ուսմանց, ևս և ըստ յօժարութեց ազգիս մերոյ:

Օօգուտ նախկին Ճարտասանութեն զովութեր բարձրացուցանէ ամ հայկազն բանասէր. իսկ զերկրորդիս, թէ շահարեր ևեթ գտանիցի, ուսանողին չնորհ կալցուք, և լիցի մեղ փոխարեն վաստակոց :

ԱՐԵՎԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ

ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ԲՆԱԿՄԱՆ ԿԱՌԱՋ, և
իրունք պատկեր արարչին՝ աստուածայնոյն բաժանորդ
աղնուական ձրից մաօքն և կամօքն՝ որով գեր ՚ի վե-
րոյ պահճայ քան զամենայն եղականս՝ որ ՚ի ներքոյ
երկնից . ին արտափայլե զայս անկշիռ ճոխութիւն
իւր . Եթէ ոչ զնելուրամագրեալն բան՝ յառաջքերա-
կանաւն ՚ի գուրս ծաւալեալ . այն է՝ յօդաւոր լեզուա-
խօսութիւն վայելլական , զոր ստեղծիչն անդասին
պարզեւեաց նախամարդոյն և լլութեան ազգի մարդ-
կան . շնորհ գերագոյն ամենայն պարզեաց , որոց վի-
ճակեցան մարդիկ ՚ինմանէ : Զի սորա միայն օժանդա-
կելով հաղորդեն առ նմանիս իւրեանց զնորհուրդու
մտացն , և սովոր որոշեալ զատանին յանասուն կեն-
դանեաց , իրրե երկնայինք ոմանք յերկրակոխ պահա-
րաց : Առանց սորին՝ խորհուրդք մոտաց մարդոյ թէ-
պէտ իմաստուն և հանճարեղ , այլ անսպասան մնային
և անօգուտ . զի որում ոչն հաղորդիցի ոք , զի՞նչ օգուտ
՚ի նմանէ կթիցէ : Մենակեաց մարդ՝ սակաւուց լինի
ձեռնհաս . և թէ պէտ բազումն տաժանիցի , չմարթի
ըստ արժանեցյն առ ՚ի պատշաճն թէքել զմիտս իւր-
քանզի ուր չկայ գործակից և խօսակից ընկերութիւն-
չէ բաւական և ոչ իմիք . զի ուստի նմա լսել և ու-
սանել և զպէտոն հայթայթել յանմխիթար առանձ-
նութեանն : Կա ապաքեն և զոր անուանեմքն թան-
հարդիային , ոչ այնչափ համարելի է գործ և յառաջ
բերութիւն մենաւոր մտաց , որչափ զուգաւորութիւն
խորհրդոց բազմաց ՚ի միասին , փոխադարձ կցորդու-
թեամբ բանից և գրուածոց :

Արդ եթէ այս այսպէս , յայտ ուրեմն է թէ առ

մատենագրութիւն և կարդաւոր խօսակցութիւն պահանջի արթնութիւն մտաց ոչ սակաւ : Վանդիթէ թէ յազդեցութիւն խօսովին նայիցիս՝ որ խնդրէ դիւրընկալ դործել զբանս իւր առ ունկնդիրս, և թէ 'ի յօժարութիւն լսողին, յերկոսին խակ պատճառք հարկեցուցիւք բուռն առնեն՝ աշակերտելընդ երկար և ուսանել զգիարգն և զօրէնս հազորդելոյ այլոց զառ 'ի մէնջ խորհեցեալսն : Վասն որոյ ակնարկեալ միան գամ'ի դպրութիւնս աղջաց աղջայ՝ տեսանեմք յամենեսեան 'ի նոսա, զի այն ինչ սկիզբն կայան իւրաքանչիւր լեզուք ծառալել քան զսահման առաջնոյ պարզութեն, առ նմին ձեռն արկին հմուտք լեզուին՝ չափ և կանոն սահմանել բացատրութեանց . և այն այնչափ առաւել՝ որչափ պէտքն ինքնին թէլադիր լինէին՝ ըստ արծարծել կրիցն և յօժարութեանց՝ տէգին և ազդոյ և ախորժընկալ դործել զբանն, որպէս ինչ հրահանգէր զնոսա իւրաքանչիւր բնութիւն : Զայն որովհափով բարեկարդեալ գտանեմք առ այլ և ոյլ ազինս, ըստ նմին յառաջացեալս համարեսցուք զնոսա 'ի կատարեալ հրահանգս քաղաքական կենաց . իբրու զի որչափ ամէ քաղաքական պէրճութիւն հանդերձ ազնուականութեամք, նոյնչափ առաւելու առնոսա ճարտարութիւն 'ի խօսս, վսեմութիւն յիմաստըս, և ազնուական բացատրութիւն մոտածութեանց, յորոց 'ի մարզս առաւելագոյն ջանիւք հպատակեն . հարազատ աղջակիցս դիտելով զերկոսին զսոսա, զիենաց ազնուականութիւն, և զկարդաւոր բանից պատուականութիւն :

Առ սմին դարձեալ պատկանաւոր մանաւանդ թէ ընդակից գտանեմք զյատակ դրութիւն և զհարազատ ուղախօս բարբառ ընդ այլ ամենայն դիտութիւնս և ազատական արուետս : Վանդիթ որոց յօժարեսցին 'ի քաջարուետս դրութիւն, կամ որք կամիցին ըստ օրինաց ճարտարաստանութեան հրապարակախօս լինել յատենի բազմախումբ ժողովոյ, և զունկնդիրս 'ի բանս իւրեանց յանկուցանել, անհրաժարելի պարտք են նոցա ճոխանալ ամենայն դիտելեք պատկանելովք առ այն, և լիագոյնս խելամտել կարդելոցն առ 'ի նոյն : Զի թէ զիմաստափրութիւնն ասիցես՝ ամենայն մասամբքն համերձ, թէ զիրաւադիտութիւն, և թէ զհին և զնոր պատմութիւն, լի բովանդակ պահանջին

առ Տարտասանութիւն . որոյ վասն անդ ուրեմն առ
նախնեօք առած էր , թէ Պարտ է քաջավարժ դոլ
տեղափակագին յամենայն հրահանդս և յարուեստս :
Վասն զի ուր տեսանիցեմք Տառս յօրինեալս ընտիր
ընտիր և քաղցրաձայն բառիւք , այլ թէրի և կարօտեալ
՚ի քաջարուեստ գասաւորութեանց և յօրինուածոց ,
և յեղանակ բացատրութեանն անշուք , անօդուտ և
անպիտան դատիմք զայն , իրր վերջացեալ յօրինաց
քաջի մատենադրութեան , և միայն սեթեեթիւք
պաճուճեալ : Յաղագս այսր ամենայնի Տարտասանու-
թիւն զայն զայս պահանջէ յաշակերտելոց իւրոց , և
նկանին ուսուցանէ նոցա զատեմարաննն՝ յորոց զայն
քաղցիցն , ընդ նմին և զօրինակ և զափ կիրառու-
թեանն : Եւ ահա զայն առաջի կայ մեզ պաշտել ու-
սումնասիրաց ազցիս մերոց :

Ընդհանուր անկենարկեալ ՚ի բանառէրս հետա-
մուտս Տարտասանական ուսմանց՝ աեսանեմք զի դոր-
ծոց նոյն նպատակ է մին յերկուց աստի - պարապումն՝ ՚ի
բեմբասացուիս և յատենական կարգաւոր գրուածս ,
և կամ մտաւոր ևեթ զուարձուի , առ ՚ի գլուխ հա-
նելոյ զգբաւորական տքնութիւն իւրեանց՝ խելամուտք
հրահանդացն որք ցուցանեն դրնախրն և զիսոտան ՚ի
կարգի գրասեր վաստակոց :

Առաջինքն ՚ի սոցանեւ , որք հարկաւորաբոր մատ-
չին յայս գործ գովելի , պահանջին աշակերտութիւն
բազմաշխատ՝ առ հասանելոյ ՚ի կէտ նպատակի իւ-
րեանց : Քանիզի որ անձնանատոցց լինիցի հրապարակաւ-
բեմբասաց լինել , և զմիտս և զկամս բազմախումբ
մարդկանն ժողովելոց յունինդրութիւն խոնարհել
՚ի բանս բերանոյ իւրոց , ոչինչ կարացէ գործել ա-
ռանց հոյակապ և ազդոյ բանից . զի թէպէտ և զե-
ղուն իցէ յիմաստս , ոչ ինչ տպաւորագոյնս ազդէ ՚ի
սիրս , եթէ ոչ մանրախուզիւ գէտակն ունիցի ամե-
նայն կանոնաց արհեստին . նա՞ անշուշտ զառաւելն
գործիցէ՝ որ ոք նուազեալ յիմաստս , այլ քաջ ՚ի հրա-
հանդան իցէ . քանզի բազումք , որոց ընութիւնն ա-
գահեաց ընձեռել ուշիմութիւն և հանձար մտաց ,
չանիցն սատարութիւն ձեռնհաս գտան գերազանցել
զպակասութեամբ ընութեանն : Խակ թէ որով օրինա-
կաւ կարասցէ արհեստն մատակարարել զայդ օդնու-
թիւն , յայս բովանդակեսցուք համառօտիւ . զի լոկ

կանոնիք գրաւորական արհեստին ինքնին ոչ պարդեն զայն , այլ զշդ նմին պահանջի մտադիր պարագել ուստ և մասնիքութեամբ 'ի կանոնեալն , և արամարանօրէն բան 'ի բանէ ածանցել : Կանոնիք ինքնին ոչ գործեն զինդրելին , և ոչ շնորհեն առաստութիւն մտաց , այլ ուղղեն զայն , և օժանդակեն նմին . չեն բաւական օգնել մտացն աղքատութե , սակայն զիթիւրն և զանգործ յղիեն և յարդարեն : Կանոնաց անկ է ցուցանել զպատուական դաշտախարան առ . 'ի նմանութե . առաջի նկարել զկարեռ մասունս դեղեցկութ՝ զրութք արժան իցէ դեգերել . ընդ նմին ազդել և զինորչելին յորոց զգուշանալ պարա իցէ : Յազագս այսր ամենայնի , մարզութիւնն ընտիր և բարուոք դրելոյ՝ արժանի դատեալ է մեծի ներբողի . որոց սեփական դործ է՝ լրումն տալ զօրութց մտաց մերոց , և նովին զարձանացեալն 'ի հանգէս հրապարակախօսութեան՝ անթառամնահատակութեամբք պսակաւոր երկեցուցանել :

Սորա այսպէս :

Իսկ որք հրաժեշտ տուետլ 'ի քաղաքական հոգոց աստի և 'ի գործոց ատենարանի , միայն 'ի սակս մտաւոր հրահանգութեանց 'ի սոյն դեգերեին , այնպիսէացն չէ ճարտասանութիւնն արհեստ դործական , այլ դիտութիւն տեսական , և մասն խուզարկու իմաստափրութե : Հրահանգք , որք այլոց ուսուցանեն անսայթաք յօրինել , սոցա թելագրեն ուղիղ դատել , և գըտանել զհաճոյականն ի յօրինուածս քաջ մատենագրաց . զորյատուկ անուամբ՝ բանահանութիւնն առցուք անուանել : Բովանդակ կանոնիք ճարտասանութեան , որք ուսուցանեն զանսխալ կատարումն դործոյն , նուքին դարձեալ մարզեն զճաշակս իմաստափրութեան յանսխալ ընտրութիւն : Այս փորձ և քննութիւն վարժէ զմիսս վերաբառնալ 'ի հիացումն ուսուցինամիրութեան : Վանդի մերձ գնել առ ամենայն բան 'զբնարութիւն զգօն , խուզարկել որ ինչ դեղեցիկն է , և զնորուն վասն էրն խորագոյնս հետազօտել առ 'ի խափիր գնելընդ փաղմիւն պահանձել և ընդ անպ աճոյն ազգութե , ըստեւեթեան և ըստական . այս ամենայն մեծապէս սասար լինի մարդոյ՝ քաջավարժ լինել իմաստափրութե մտաց և սրաի : Վանդի և անձուկ կցորդուք ազգակից են իմաստափցն , որովք առաջ նորդիմք 'ի խորագոյն ծանօթութիւն անձանց մերոց .

իրրու զի ընտրութել և հաշակի գործ է՝ ուսուցանել զհետազօտուի գործոց երեւակայութել, և շարժուել ոգույ և որոտին. և առ նմին Հոխացուցանել զմիտս մեր յիրս իրա պատկանաւորս բնուել մերոյ:

Այսափի է գործ Բանափրուել, որ ակնարկէ ՚ի մարդ իրր յէակ գերազանց՝ Տոխացեալ աշխոյժ երեւակայութեր և ընտրող հաշակաւ: Սա ինքն Բանափրուել պարզէ առաջի մտաց գաշտ լայնածաւալ, սրարշաւ լինել ընդ այն ամենայն՝ որ բաժմանորդ է գեղեցկուել, նմանուել, մեծուել, շքեղուել՝ որով միտք զուարձանան, հաճի երեւակայութի, և աիրան խանդաղատի: Թուզ զի այսօրինակ հետախոյզ քննուելը այնու առաւել շահեկան գտանին, զի մարզեն զմիտս առանց պարտասելոյ. առաջնորդեն հետազօտել զնրբինս, այլ ոչ վաստակիչս. խորինս, այլ ոչ ցամնքուտս և վերացեալս. և միանդամայն ասել դաշտ ծազկաբեր յարդարեն առաջի բանափրին զհանապարհն գիտուել:

Զայս և մեր եղեալ է նպատակ առաջիկայ երկասիրութես, քաջայարմար դնել զուսումն հարտասանուել ամշակերտելոց խմաստուել: Զի որոց ընտրեացեն զգործ ատենախօսի, ջանացուք ձեռն տալ նոցակարդաւոր կանոնագրութեք արհեստիս. իսկ որք զընթերցափրութի միայն ընտրեցեն, նոցան և օժանդակել ջանացուք, և ցուցանել զբնաբականան և զնմանուել արժանաւորս ՚ի գիրսն ընթերցեալս: Որպէս զի՝ որք ընտրեցին ծախել զժամանակս իւրեանց ՚ի պատուականագոյնն քան զամշ իրս կենցազոյս, յընթերցափրութի ասեմ, գիտացեն զառ ՚ի նոցանէ զօգաակարան ամանել ՚ի միտս իւրեանց, և լիազոյն ամբարել արդասիս ՚ի թանգարանս յիշողականին. զի միտք և ընութի այնչափ ազնուականք են և երկնայնոյն մերձաւոր, որչափ բազմագանձ ունիցին խմաստուի: Յաղագս այսորիկ կարեորագոյն դատեցաք՝ մինչեւ օրինօք յառաջ խաղացեալ յընդարձակուի դրոցս, աւանդել յառաջիկայդ զհանդամանս սկզբնաւորուել և յառաջաձդուել մարդկեզէն բարբառոյ, զմատենագրուել և զհարստասանուել. զորս բովանդակեալ յայս ՚ափաշաւիդ, երկեակ դլուովք իրը ՚ի վայրագաւիթմ հրաշակերտ տաճարի պերձախօսուել, այնուհետեւ հանդերձեսցի մեզ ՚ի վեր ելանել ՚ի բուն հանդիսարան անդր ճարտասանուել:

ԳԼ. Ա.

ՍԻՒՐԻ և յառաջարտութեալ նեղուակառակել

ԲԱՐԲԱՐԻ և լեզուախօսութիմանամբ դարտայայտութիսրհրդոց յօդաւոր և նշանական ձայնիւք . իսկ ձայն յօդաւոր իման զարտաքերել ձայնին՝ համանդամայն բերանով և ամենայն բնական դործարանօք կարգելովք ՚ի հնչիւն ձայնին , որք են հաղադ , առամունք , լեզու , շրթունք և քիմք : Այս զուգաւորութիսրհրդոց ընդ մարմնեղէն դործեաց՝ յորոց ՚ի կցորդուէ յառաջ դայ բան կարգաւորեալ՝ է որ կամայական է , և է որ բնական . բնական է , զի հարկաւ զգեալ են ՚ի նշանակել արտաքուստ՝ զ՚ի ներբոյ խորհեցալուն . և կամայական է , զի աղջք իւրաքանչիւր ըստ հաճոյս իւրեանց պատշաճեցին զմի մի ՚ի ձայնից առ զանազան նշանակութիս խորհեցելոցն : Այս անանջըրպետ զուգագրութեաց դործարանաց արտաքնոց ընդ ներքին խորհրդոց , այժմ տարածեալ ընդարձակեալ է յազգս ամ , ոչ միայն առ ամ կարևորս կենաց սեփականելով ձայնս և անոււանս , այլև ամ վերաբերութիք , առնչութիք և գործք մարդկան , կիրք և յօժարութիք բովանդակ արտայայտին սովոր կցորդութիք , և այն՝ բազմադէմ յօրինուածով . որով ոչ միայն հաղորդեն միմեանց մարդիկ զլորհուրդս իւրեանց , այլ և ձդնին բոնանալ բանիւք շրթանց իւրեանց , և յափշտակել յինքեանս զկամն նոցա . և ձգեն վարեն զնոսա ՚ի կատարումն գործոյն յոր կամին՝ բազմարուեստ պերճախօսութիւն թելադրելով ՚ի հանճարոյն :

Ոչ անգիտանայ զայս սքանչելի գործ բնութեալ որ որչափ պատուականն է՝ նոյնչափ և առ յաճախութեալ և ընտանութեալ սովորական և դուզնաքեայ իմն համարեալ . որպէս այն՝ զի հանապազօր հայեցեալք ընդ հաստատութերկնից , բնաւ ոչինչ հիանամբ ընդ մեծահրաշ յօրինուածն : Սակայն խուն մի յետս ընդ կրունկն ակնարկեալ մտօք ՚ի սկզբնաւորութիւն անդր լեզուախօսութիւն՝ նայեսցուք ՚ի սկզբն նորա , և ՚ի բազումեւ ՚ի ծանր խափանարարս որոց դիսպաւ բարբառ մարդկան . և յայնժամ լիցի մեզ զարմանալ արժանապէս , հայեցեալք ՚ի գաղաթն լութեան՝ յոր այժմն ամբարձեալ է :

Յառաջնում դարու աշխարհի՝ որպէս ուսուցանեն
մեզ հնասէր իմաստասիրուի և հնախօս վիպատանու-
թէք, բազում այն էր զի թափառել տաստանէին մար-
դիկ ընդ լայնատարած ընդարձակուի աշխարհիս՝ վայ-
րագ արշաւանք պնդեալ զհետ որսոց ՚ի դարման կե-
նաց, և կամ խաղաղասէր կենք արածէին զհօտս խա-
շանց ՚ի մարմանդս և ՚ի գետափունս : Վասն որոյ ուր
ուրեմն էր տեսանել բազմաժողով ընկերութի մարդ-
կան . զի ազգատոհմ իւրաքանչիւր անդորրացեալ էր
յառանձին բնակուե տարանջտոյ յայլոց : Առ սմին և
զայս ունիմք հաստատել աներկեցուք՝ որպէս ՚ի կարդի
բանիս տեսցուք, թէ ՚ի սկզբան անդ չքաւոր և աղ-
քատին էր բարբառ մարդկան ըստ սակաւուե գաղա-
փարացն՝ որոց յայնժամ ծանօթացեալ էին : Ցետ այ-
նորիմկ ըստ առաւելու գաղափարաց և իրաց իրաց կա-
րեւորաց եթէ նիւթականաց, և թէ աննիւթական
ծանօթուեց մտաւորաց, իւրաքանչիւր նոցա անուանո
մակագրելով բարդաւաճեալ ձուսացաւ լեզու մարդ-
կեղէն :

Արդ եթէ այսպիսի էր յայնժամ վիճակ կենաց
մարդկան, որչափ ինչ դուշակել տան աւանդութիք
ովատմականք, և որչափ նկատել ունիմք յաստուա-
ծաշունչ դիրս, զիարդ հնարաւոր էր՝ առ հասարակ
զթափառելոցն իմաստա բերել կապել ՚ի մի միայն
ձայն՝ ՚ի նշանակել որոշակի զմի և զնոյն իր . զի այր
այր զհաճոյականն իւր անուն կարդայր ՚ի վերայ իրին
հանդիպելոյ աշացն յիւրաքանչիւր թափառեալ վայրս
և ՚ի լերինս : Եւ գեթ համարելով թէ միաբանակեաց
ազգատոհմք դաշնաւորեցան ՚ի նշանակել ձայնիւ իւկը
զնշանակելի ինչ, զիարդ էր կարելի ամ մարդկան
սփուելոց յընդհանուրս զնոյն ուսուցանել : Իբրու զի
ամ մտաց հաւանելի է, և անժխտելի ըստ գրոց՝ թէ
յարարչութէ աշխարհի մինչև ՚ի ջրհեղեղն, և անտի
ևս մինչև ՚ի շինուի ամբարտակին՝ մի բարբառ էր աղ-
դի մարդկան . այլ որպէս ՚ի ցրուեալ մարդիկն աճեաց
մի լեզու : Թուրի թէ առ կազմութի լեզուի հարկ էր
դումարել համախումք ամենայն բանաւոր արարա-
ծոց, և միախորհուրդ ընարութիք անուանս և ձայնս
կարդել ըստ ամ գաղափարաց՝ զորս միտքն խորհիցին :
Սակայն ուր դիցուք, զի լեզուի կարդաւորութի երիցա-
դոյն է ժամանակաւ քան զիարդաւորուի հասարա-

կաց ընկերութեն, կամ գեթ ժամանակակից նմին . զի
անհնար է բաղյօդել և դումարել բազմաց 'ի մի վայր,
և հաղորդել իրերաց զիսորհուրդս իւրեանց՝ առանց
գործակցութեարքառոյ : Ապա մեծապէս ճգնել զիմարդ-
կան՝ լրացեալ հետզհետէ, և այն մինչդեռ 'ի բացեաց
յիրերաց տասանէին ընդ երեսս երկրի : Այլ ջանա-
ցուք միաբանել զայն փոքու բանիւք :

Ու ոք անգիտանայ թէ արարիչն պարզեւեաց մար-
դոյ կարտղաւի լեզուախօսութեն . այլ ոչ առ նմին հա-
մարձակիմք 'ի վերայ րերել թէ անդէն և անդ շնորհ-
եաց նոցա լեզու բազմահարտուտ՝ ըստ ամբ կարեորաց
կատարեալ և անթերի . այլ թէ 'ի ստեղծագործութեն
անդ ետ ԱՃ նախասահղծից բարրառել այնչափ միայն՝
որչափ պիտանացուն եր սակաւապէտ վիճակի նոցա,
և որչափ ինչ ծանօթական եր . շնորհեալ նց կարողութե-
նուու զպակստորդն , և ինքնին հանձնարել ըստ իւրա-
քանչիւր պիտայից : Եւ այս յայտ է 'ի Ծննդոց գրոցն,
յածել ԱՅ զամ կենդանիս առ Ադամ՝ դնել նոցա
անուանս , ըս հաճոյից . և զի զայդոսիկ ինքնին Ադամ
անուանասահղծեաց . յայտ է թէ կարողութեն ետ նմա
ԱՃ՝ դնել նոցա անուանս . որպէս և 'ի ստեղծման
Եւայի , նորոյ էակին անուանադիր լիներ՝ թէ Սա կո-
չեսցի կին : Անշուշտ է խմաստասիրել որպէս զօր ամբ
յանձնել զփորձ առնումք , թէ աւուր աւուր՝ մանա-
ւանդ յետ ելիցն 'ի դրախտէն՝ որչափ իրաց գէպ լի-
նէր ականատես լինել նմա կամ հնարագէտ , նոցին
համապատշաճ անուանս կարգայր . զոր անմարդ է աւ
սէլ երբեք թէ յառաջնոմէ զամբ զկարելի և զլինելի ի-
րաց զանուանս ամբարեալ ուներ 'ի միտան : Արդ յա-
ռաջնումն անդ 'ի սակաւախօս վիճակի բարրառոյ
մարդկան , մինչ դեռ սփռեալ էին ընդ երեսս երկրի ,
իրեւ հարկ լիներ նոցա անուն սահմանել իրաց նորոգ-
տեսելոց կմ յօրինելոց , ըստ օրինակի նախահօրն . իբր
արգեօք սահմանէին : Բանուորագոյն թուի ստել,
թէ ընութին յամի աղջեր 'ի նոսա նմանեցուցանել
զհնչիւն ձայնի անուանն ըս ընուել իրին , որպէս նկա-
րեալ լիներ յերեակայութեան նոցա , և սպաւորեալ
'ի միտան : Օրինակ իմն . 'ի դնել անուն խիստ և տա-
ժանաւոր իրի՝ հարկաւ մզէր զնոսա մտածեալ դա-
ռափար իրին՝ ընտրել զծանրահնչիւնն և զիստաձայն :

զի և ոչ այլազդ հնար էր տարաւորել ՚ի միտս ունկըն-
դրաց զգապահիար իրին նշանակելոյ ըստ օրինակին զոր
ինքեանք իմանային . ուստի ոչ անպատճառ այս բառ
և ձայնը ընտրելի թուեցաւ քան զմիւմն . զի նապատակ
մարդկան յօժ արելոց ծանուցանել ինչ միմեանց , էր
նկարել դեղօք բառից ՚ի տախտակ մուաց լսողին զիրն
նշանափեալ . ասկա ուրեմն հարկ էր զի ձայնքն անուա-
նաստեղծեալք համեմատեին բնութել իրին . որպէս զի
զոր ինչ անուանադրովն իմանայր , զնոյն նոյնպէս ի-
մասցի և բազն : Այսպէս ուր միանգամ հարկ լինէր
տալ գանուն իրաց այնպիսնաց՝ յորոց ՚ի նշանակեալոն
համանգամացն զուգընթաց են ձայն , շառաչիւն , կամ
շարժումն , ըստ նմին և զնշանակիչ բառան յարմարէին .
զորօրինակ՝ թռանել , կամ թռաչուն , որ ընդ երադ
շարժելոյն՝ ծանուցանե և զձայնն , որ ըսի ՚ի պահու
շարժմանն : Ըստ նմին օրինակի և կիրք երկիւղի՝ մի-
ջարկութեքս այսորիւք բացատրին ահ . վահ . ոհ . ուհ .
որ են ձայնք յառաջ եկեալք ՚ի խորոց սրտին առ անձ-
կուել վերահաս հոգոց . և ահա գտանեմք զի առ նմին
և բառքն նշանակիչք երկիւղի՝ նմանաձայնք են . ահ .
արհաւիրք . վախ . հոյն . ևն : Այն զի և ՚ի ձայնս ան-
նիւթական կամ բարոյական անուանց նգնին ցուցա-
նել քաջ մատենադիրք՝ թէ և ՚ի նոսին ձայնք իւրա-
քանչիւր ըստ սաստիկ կամ նուազ արտաքերու-
թէն նմանաձայն են յարմատ իւրեանց ըստ իրին նշա-
նակելոյ : Տես զհաւաստիս սոցա ՚ի նշանակուիս ձայնի
և գուման անասնոց՝ նման ձայնի իւրաքանչիւր նոցա .
խմնթէլ ձիոյ , խանչէլ խոզի , հանչէլ շան : Նման սմին
և յայլ իրս , գոռալ ամսոց , ճայթել փայլականց :
Նոյնպէս և կաթել ՚ի ձայնէն առնու զանունն . և այլ
ինչ բազում :

Որ ինչ ցայս վայր ասացաքս , իմա վասն սկզբնաւո-
րութէ ընդհանուր բարբառոյ ՚ի գարս անդ հնուե .
ուր որչափ սակաւաթիւ էին ընկերական պիտոյից
գործարանք առ ՚ի չքոյէ բազմաց արհեստից , նոյն-
չափ և նշանակիչնոցն ձայնք և բառք սակաւք էին ,
միանգամացն և ՚ի բնութէ ստեղծեալք , գաղափա-
րեալք ՚ի բնականնէն . կամ թէ ասել՝ զի մարդկութիս
տակաւին ՚ի խանձարուրս էր , նոյնպէս և բարբառ
նորուն խեցրեկայօդ և անարուեստ , լոկ ՚ի բնութէ
ազգեցեալ : ՚ի բովանդակութիս սասացելոյս , ամ իրա-

ւամբք օրէն է մեղ ասել՝ թէ մարդիկ այլեայլ 'ի զա-
նազան տեղիս անուն եղեալ միոյ իրի, թէ ոչ զնոյն
դէմ զնմանամայնս մակադրէին իրացն գաելոց • ուս-
տի միաձև, կմ դոյզն ինչ այլաձև դտանեին անուանք
զի միօրինակ ըմբռնումն մոաց այնր ժամանակի մարդ-
կանն՝ միօրինակ անուանս սահմանէր իրաց իրաց : Այս
պէս իմա և զայն, զոր տեսանեմք, նմանաձյնութիւն
բազում յայլեայլ հին լեզում 'ի նշանակուե մի և նոյն
իրի փորու այլայլու՞՝, զի գրեթէ ամենեքին միաձայն
էին յանուանս իրացն • թող և զոր առ աշտարակաշի-
նութիւն խառնակութիւն լեզուաց, յորմէ և այսր մնացին
նմանութիւն բառից 'ի վազննական բարբառս : Մինչև
աւուրց յաւուրս բազմադիմի արհեստք և սովորութիւն
և ուսմունք յորդեալք յաճախութիւն՝ ոչ միայն նորա-
նոր բառս ստեղծին կամսյականս, այլ և լեզուս ող-
ջոյն, ոչ թէ նորաձայնս, այլ ծնունդս կամ բողբոջս
լեզուաց առաջնոց :

Երկրորդ հանգամանք լեզուախօսութիւն առաջին և
թերակատար կազմուե՝ կարեւոր 'ի քննուի՝ է Եղանակ
արտաքերտւե ձայնից, յորս միջարկութիւն և ձայնարձա-
կութիւն եռանդեան որաի, էին առաջին բաղկացուք նո-
րահնար բառիցն : 'ի նուազուե անդ ձայնից մինչ չե-
յարդարուն էր լեզու, և բազում իրաց պակասէին բառք
նշանականք, իրրե հարկ լինէր ումեք ծանուցանէլ
այլում զիսորհուրդս մոաց իւրօց՝ զորոյ չգիտէր կամ
չունէր զնշանակիւ բառ, յայտ իսկ է՝ զի յուզեալ ա-
զաղակառ, շարժմամբ ձեռաց և ոսից ծանուցանէր
նմա զբանս իւր • զի զնշանա զայսոսիկ ինքնին թելադրէ
բնութիւն 'ի տագնապել հարկինն : Բառոն շարժութիւն,
ազդեցուի կրիցն և ձայնին ուժգնութիւն՝ մի մի բառս
նշանականս ստեղծանէին վասն առաջիկայ պիտոյիցն •
ուսափ որչափ բնականն նոյնչափ և ազդոյ լինէր ձայնն,
և նշանակութիւն սպարզիմաց : Որպէս թէ տեսեալ ու-
րուք զոմն մերձեցեալ յափունս խորափիտ վհի, կամ
'ի լավրծուտ վախս, և կամցեալ ազդել նմա՝ զորոյ
զբարբառն չգիտիցէ, ձայն բառնայ, ազաղակէ, եր-
կեղախառն շարժմամբք ձեռաց, և կերպարանացն այ-
լայլութիւն ծանուցանէ նմա՝ թէ կան մօտալուտ ահա-
փետք առ ոսիւք նորա : Ահա քեզ տեղի բառից մի-
ջարկուե, որք արտայայտեն զիկիս հոգւոյ : Եւ զայն
յաճախ դէպ լինի հաւասանէլ մեղ ականատես վկայ-

ութիւն, զի թէ չպիսիցէ ոք բարբառել, ձեռամբ և շարժմամբ և այլընդայլոյ ձայնիւ խմացուցանել ճգնի զոր կամի : Անդ ոչ թէ այրն այն, այլ ինքնին բնունն է որ խօսի, յօդնուն հասեալ թերուն առնն ՚ի բարբառել . և զմի բառ բազմօրինակ այլայլելով ձայնիւ և շարժմամբ և արտաքիրութիւն, սակաւ բառիւք բազումինչ խօսի : Ըստ այսմ օրինակի պէտք իւրաքանչիւր պատճառս ետուն կատարելութէ լեզուաց : Առսովին և զայս խմատասիրել արժան է, զի յետ ճռխանալոյ լեզուաց ըստ ազգի ազգի պիտոյից ՚ի բացարութիս, և ըստ առաւելոյ նշանակիչ ձայնից, ՚ի հարկէ նուազեաց տագնապեալ այն արտայայտութիւ . բայց յազդս տնանս մնացին հետք նախկին յուղեալ շարժուեց և ձայնարձակուեց, մանաւանդ որոց բնաւորուի եռանդուն էր և հրատապ : Բայտ որում և անսանեմք ցարդ առ մեօք՝ զի ազգ քան զազդ առաւելու կամմուազէ ՚ի շարժուիս ձեռաց և ոսից, որ շատ և որ սակաւ՝ ըստ առաւելուն և նուազութէ նոցա ՚ի յուղմունս կրից :

Այսչափ յաղագս հնարադիսուն նշանակիչ ձայնից, և եղանակի արտայայտութէ . զերբորդն կայ մեզ քննել այժմիկ, զո՞ք բանիցն : Զի զորօրինակ հնչումն և եղանակ խօսից յաւետ ազդոյ էր և ահաւորավայլ ՚ի նախնի դարս, հարկ էր արդեօք այլաբանեալ լինել և ոճոյն . թէպէտ և անհարթ, այլ բնական, անարուեստ բանաստեղծուի : Վանզի առ ՚ի չգոյէ նշանակիչ անուանց բազում իրաց, որ արհեստական և որ բնական, ողբ օրբատօրէ ՚ի ծամնօթութիւ դային մարդկան, հարկ լիներ փոխակերպութիւ բացատրել զայնս, իր զի զնորագիւտ իրն նմանաձև դատեալ ը այլում նախածանօթ իրի, զնորա զանունն պատկանէին և տմա : Եւ ահա առ պակասուն կարեոր բառից՝ հարկաւորէին զմի ձայն փոխանակ բազում իրաց ՚ի վարարկանել նմանաբանութիւ կամ այլաբանութիւ, և ազգի ազգի փոխարերելով զիմաստ մոյ բառի : Դարձեալ զի պատճառք հանապազօքնայ զրուցաց նոցա էին իրք նիւթականք և զգալիք՝ որը մօտ և առձեռնպատրաստ կային նոցա, յորժամհ հարկ լիներ բան ՚ի մէջ առնուլ վասն անզգալի և խմանալի իրաց՝ զրոց չգիտէին զանուանսն, զի և խկութէ այնպիսի իրաց անծանօթ էին, հնարս հնարկին զառ ՚ի նիւթականաց ընկալեալ

անուանս մակադրել աննիւթական իրաց և հոգեղբաց , որոց առ սակաւ սակաւ խելամուէին : Սովոր օրինակաւ ինքնին առանց արուեստին սատարելց՝ փոխակերպեալ երեւէր լեզուն . որ որչափ բնական էր՝ նոյնչափ և անարուեաս :

Բայց յանհրաժարելի բռնագատութենէ սատի՝ որ հնարագէտ եղեւ ընուշ զպակասութել վաղնջական լեզուաց , է տեսանել միւս ևս բնական սպատճառ յանձախ այլաբանութել ՚ի հնումն : Քանդի ՚ի սկզբնաւորուել և ՚ի նորոդ ամելուել մարդկային ընկերուէս , մինչդեռ յոլով ուրեք ցան և ցիր տատանէին մարդիկ , և անծանօթ էին բազմագիմի ահաւոր իրաց և տեսարանաց , այն ինչ ընդ առաջ լինէր նոցա երկեղախառն տեսութիւ , վարակէին յապշութիւ և ՚ի զարմացումն , և այլընդայլց կերպարանօք նկարէին ՚ի միտս իւրեանց զպատկերս նոր և ահարկու իրացն՝ որոց յեղակարծ հանդիսպէին : Սմին հանգոյն պարտ էր և բարբառոց նոցա նմանելու ոգւոց նոցա յուղելոց . պարտ էր առաւ ելուլ առ նոսա տաստկութել բանից և չափաղանցուել , մանաւաւանդ ՚ի բացատրելն զայնպիսի անցս ահաւորս . զի որով ոք զպածի՝ ըստ նոցին կերպարանէ և զբանս իւր : Անվրէպ է այս խորհրդածութիւ . քանդի քննութին յայտնի եցոյց՝ թէ ոճ խօսից բոլոր վայրենաբնակ ազանց ամենայն ուրեք առաւելեալ դտաւ զիզագէլ բարդութել բանից և չափաղանցութել , ըստ որում հաւաստեն արժանահաւատ քննիչք և պատմագիլք :

Առ այս առցես և զոհ հին կտակարանին՝ որ լցեալ պատարուն է բազմօրինակ այլաբանութեք : Անօրէնութին կերպարանի ՚ի կապերս աղտեղի . աղէտք՝ յարբուցումն բաժակի ափշութել . սնօսի խորհուրդք՝ ՚ի չամբ մոխրոյ . յաջողութիւ ՚ի չահ տեսառն փայլեալ զգըլիսուլ մարդոց : Այսպիսում ոճոյ փոխանակ Արևելան կամ Ամիական անուն տալոյ , յաւէտ արժան է՝ Ա աղնջական ոճ առել , զի յիշատակ է մնացուածոյ հնութել , յոր ընդ բազում դարս կեցին երայեցիք , և ԱՃ ըստ բանականութեան նոցա օրինակպ և նմաննութեք աղդ առնէր նոցա , որով կարող լինէին ՚ի միտ առնուլ զասացեալմն : Թռող և զազդոց տապաւորութիւ բանիցն այնու եղանակաւ , որով յանային իւրաքանչիւր դպիրք սուրբ դրոց ահաւոր ցուցանել զաստուա-

19

ծախօս պատգամն իւրեանց : Զսոյն օրինակ ունիս ուն-
սանել և 'ի վաղեմի երդս հայոց 'ի վերաց Աւհադնի՝
ըստ յառաջքերելոյ խորենացւոյն :

Երկներ Երկին և Երկիր , Երկներ և ծիրանի ծով .
Երկն 'ի ծովուն ուներ զկարմիկ Եղեգնիկն .
Ընդ Եղեգան փող ծուխ Ելաներ ,
Ընդ Եղեգան փող բոց Ելաներ :
Եւ 'ի բոցոյն՝ պատանեկին վաղեր , նա հուր հեր
ուներ ,
Ապա թէ բոց ուներ մուրուս ,
Ուաշկունիքն էին արեգակունիք :

Աւասիկ 'ի սմին ըստ թուոյ բարիցն են և այլաբան
զրոյցք ըստ սովորութէն նախնի ժամանակաց , և առ
հասարակ ամբն է նկարագիր ծաղման և կերսկարա-
նաց արեւու :

Յանցանել դարուց և 'ի տիրել սահմանափակ հրա-
հանգութէն 'ի խօսս և 'ի դրուխս , տեղի ետ խիտ և յա-
ճախ այլաբանելն . և ըստ բարեկարգելոյ քաղաքական
ընկերութէ , ընդ սահմանաւ և ընդ կանոնօք բովանդա-
կեցաւ եղանակ խմացութէ և խօսակցութէ մարդկան .
բազմացան բառք նշանականիք , յղկեցաւ զրոյց հասա-
րակաց . և որք յառաջն յուղեալ երևակայութէ աշա-
կերտէին , յետ այնորիկ ջան եղին 'ի սրբվեմաց բա-
ցարդութի . մերժեցան այլաբանութիք իբրև խրթնա-
ցուցիչ բանիք , և փոխանակ այնց՝ համապատշաճ ա-
նուանիք ստեղծան ըստ իւրաքանչփեր պիտոյից և
գործոց :

ԳԼ. Բ.

Սիւնասուրութի հարգուուր բանակառութէ և գրաւէ :

'ի ԿԱՄԳ անկեալ բանիւս Զանապարհ հորդելով
'ի դրունս Զարտասանութէն , ձեռն արկցուք դարձեալ
հարցաքննել իմաստափառար զհանդամանս բարեզար-
դութէ մարդկային բարբառոյս , յորում ազգի ազգի
դասաւորութի նշանական բառից՝ կարգաւորեալ ի-
մաստք բացարին : Յայսմ քննութէ ունինք խելամ-

տել թէ որով կարդաւ ծանուցաննեն միտք զիսորհեցեալն , և արտայայտեն զնոյն օժանդակութիւն բարբառոյ , կամ որով կարդաւ ըմբռնեն միտք զլուեալն : 'Ի սմին կարեմք քաջ հասու գտանել զանազանութել ընդ վաղնշական լեզուս և ընդ արդիս :

Արկին եզանակք են արտայայտութել խմատից . առաջին՝ դասել զբառու այնու կարդաւ , որովք ծնանին 'ի միտս խօսողին : Երկրորդ՝ ըստ որում դասաւորեն միտք զբառաւ 'ի կամելն նորոգ կարդաւ առաջի մատուցանել լսողին , և դիւրաւ խմացուցանել նմա : Յառաջնումն , այն բառ նախ 'ի միտս անկանի' որ է նպատակ խորհրդոյն և խնդրեալ գործովութիւն . զորօրինակ յայս բան . 'Ի քաղաք գնալ հարկ է ինձ : Արդ 'ի սմին՝ քանոզի նպատակ խորհրդոյն է գնալն 'ի քաղաք , 'ի հարկէ այն բառ զառաջինն հանդիսի մտաց ուստի և նոմին կարդաւ արտայայտէ նախ զքաղաքն . ապա զցնալն , և ապա որ ինչ յարակից գուցէ : Երկրորդն ըստ հակառակն առաջնոյն շրջուն զիարդն բերէ . իբր զի որովհետեւ խօսիմք առ ոմն որ լսէ , պարտ է նախ կարդել զայլ յարակից բառմն՝ որով պատրաստեմք զնա , և ապա զնապատակն զորօրինակ . հարկ է ինձ զնալ 'ի քաղաք : 'Ի սմին յասել քո զբառուն առաջինս՝ զհարկն լինել , զգնալն , զարթնու լսողն իմանալ թէ զինչ է պատճառ գնալոյն , և ուր նպատակ . և մինչ հասցես 'ի կատարած բանին , այսինքն 'ի զնալն 'ի քաղաք , 'ի միտս առնու զնամն դիւրաւ . վասն զի կանուխ պատրաստութիւն հասու գտանի բոլորին : Առաջինն յերկուց օրինակաց աստի՝ յանկաւոր դասի սկզբնաւորութել խւրաքանչիւր բարբառոյ , զի բնական հանապարհաւ արտայայտէ զիմաստնն : Երկրորդն՝ կարդաւորեալ բարբառոյ . զի յաւետ արհեստի և տրամաբանութիւն վարի , և ջանայ դիւրիմաց առնել լսողին զբանն իւր : Զայն յարացուցիւ կամեցեալ յայտնաբաննել , համարեցուք ունել առաջի զայր վայրագասուն բացօմենագ , որոյ աեսեալ միրդ 'ի ձեռս ուրումն կամ պառւղ հասուն 'ի ծառս , փափաքիցէ նմին . և զի չէ քաջազարիք յուղիդ լեզուախօսութիւն , զաւան 'ի պառւղ անդր գարձուցեալ , և զձեռսն ձգեալ առ այրն՝ որ առ նմին կայցէ , կողեզդագին աչք , տագնապեալ ձայնիւ , տատանեալ շարժմամբ խնդրէ զպտուղն ցանկացեալ : Յայտ է զի առ որ յօժարեսցի

նու վուսիսքանոք սրտին յայնմ վրդովեալ պահուն՝ նախ ղնոյն արտաքերէ և բերան նորա, ասելով. Զար տուղն տուր ինձ. այն իսկ է զրո ասացի, թէ գասաւորէ զբառս կարգուն՝ որով ծնանին ՚ի միտս, զի սրտուղն նախ զոռաաջինն ծնաւ ՚ի միտս նորա: Իսկ թէ ասացուք շրջուն կարդաւ, Տուր ցիս զարտուղն, այդ եղանակ սեփական է բարեզարդեալ լեզուի և մտաց, ըստ Երկրորդ եղանակի արտայայտութեն իմաստից, որ է գասաւորել զբառսն ըստ դիւրաւ ընդունելութեան լուղին:

Արդ օրինոք բնաբանութեն արամորանելով, ազդեցեալն յերեակայութեն և ՚ի փափաքանաց՝ ՚ի հարկէ յառաջ մզէ զոդին և զբերանն, անուանել նախ զայն՝ որում փափաքեաց, և նույն ծանուցանել զփափաքումն իւր՝ մինչև առցէ զինդրելին: Այսմ զհետ դայ ասել թէ նախաստեզքն ՚ի բարբառել իւրեանց, և որք յետ նոյ յառաջին դարս սփռեալքն ընդ աշխարհ մինչև ՚ի ջրհեղեղ և ցիսառնակել լեզուաց, այսպիսի օրինակաւ արտայայտէին զիսորհուրդս իւրեանց: Զայն զայս հետազօտեալ դատանեն քաջքն ՚ի քննութեան վաղնջական լեզուաց ըստ առաջնում պիճակին, առաւել ՚ի հայումն, ՚ի Յոյնն, և ՚ի Լատինն, և ՚ի Եւրիկեցին, մանաւանդ ուր իրն անուանելի՝ հիմն իցէ ամրող բանին. զրօրինակ. * Երկուս ինչս ինդրեմ ՚ի քէն. Զբան գուր և սուս հեռի արա լինէն. Մեծուի և մանանկուի մի տար ինձ: Ծնունդ չար՝ զհայր իւր անիծանէ. Ծնունդ չար՝ առ արդարս ունի զանձն իւր. Զբէլայ՝ առ որով նախնին մեր հայկ՝ բազումք բազում ինչ այլ ընդ այլոյ պատմեն. Զանսպառ իսա զացմունս ասսուածայնոցն ՚ի քեզ զնորհացն, և զանդուլ հոդւոյն ՚ի վերայ քո իմացուածոցդ շարժմունս ծանեայ ՚ի ձեռն գեղեցիկ ինդրոյս,, :

Այս կարդ բանից ազդողագոյն բերէ զիմաստն, և յայտնի ցուցանէ զյափշտակուի ոգւոյն առ իրն բազմացեալ, քան զկարգն երկրորդ՝ որյետաց դասէ զնիւթ բանին և զնսպատակն: Թէպէտ առ այտու և երկրորդն առաւելեալ է հոծ յաճախութեր առ նախապատիւ մասենագիրս, զի յառաջ դասելով զբայն, և ընդ նմին ՚ի համար բերէլով կարդաւ զզուդընթաց բառսն, պատրաստէ զսիրտ լսողին՝ դիւրիմաց օրինակաւ ընդ ունել զբանս իւր:

Հանդերձ այսու ամենայնիւ զայս ևս գոյ տեսանել
 'ի վաղեմի բարբառու . իմայ յորժամ ցեղապետութեք
 կարգաւորեալ էր իւրաքանչիւր ժողովուրդ , և լեզու
 նոցա աձեցեալ , այլ չե ամփոփեալ ընդ մանրախոյզ
 քննութեք քերականութեք . յայնժամ անարգել ազա-
 տութիւն էր՝ որպէս ինչ աղջէին նոցա աշխոյժք բնուե
 յետ և յառաջ գնել ՚ի միմեանց զարս բառիցն , կամ
 'ի բացեայ դասաւորել յիրերաց զնոյնահոլով անուանս
 զածական և զցոյական . և կամ զբայն ՚ի խնդրոյ իւր-
 մէ հեռի կարգել ընդ մէջ արկեալ այլեայլ բառս .
 որտվ թէպէտ բացատրութիւն խրթնանայ , այլ ահա-
 ւոր և շքեղ ունի զկերպարանան : Մանաւանդ զի՞ առ
 յոյնս և առ լատինս նմանավերջ գորով համանուն հո-
 լովոց , որպէս և ՚ի հայումա հոլովակերտ նախդրօքն և
 վերջահոլով նշանօք , ցուցանեն ՚ի բացուստ զհայե-
 ցուածն և զհամաձայնութիւն ընդ իրեարս . և ՚ի հե-
 ռուսուս իրրե ՚ի մօտոյ տան զիմսաստ : Լակ նորանոր լե-
 զուք որովհետեւ ՚ի պարզութիւն բանիցն միտ եղին բո-
 վանդակ , և ևս՝ զի անբաւութեք յաճախեցին ՚ի նո-
 րումն բացատրութեք արհեստական և առանին գործ-
 առնութեց , զորս անսպատեհ է ըստ սովորութե նախնի
 մթութեն կարգել , այնր ազագաւ ՚ի բաց մերժեցին
 զայն առաջին մանուածոյ և զահաւոր կազմուի հնա-
 խօսութեն , յամի ջանալով դիւրիմաց ընծայել զի-
 մատասն առ խօսողն և առ լսողն : Վասն այսր ամի՞
 թէպէտ հեշտին են քան զնախնի լեզուս և գեղեցիկ ,
 այլ չունին զնոցայն պերճութիւն , բազմապտոյտ դասա-
 կարգութիւն բառից , և անոյշ ներդաշնակութիւն : Զոր-
 օրինակ այս բան Յովհաննու խմաստասիրի . Եւ զի մի
 թուեցայց՝ այսգունիւ բերեալ ցանկութեք զՊեղեայ
 զթետտաղացոց դոռոզին ախտանալ , որ զզառամա-
 ցեալն իւր՝ Միդիայ առաջի առներ առ ՚ի յօշել զմար-
 մինն . որպէս թէ ՚ի մեռելութէ առ մանկութիւն զծե-
 րութիւն փոփոխել յուսալով : Որչափ դժուարին՝ նոյն-
 չափ ահաւոր է և շքեղ այս բան՝ քան զյօրինուած
 կանոնի նորանոր լեզուաց : Զդոյն տեսանես և յառա-
 ջիկոյ ոտանաւորդ Ովիդիոսի դրէթէ՝ բառ առ բառ
 թարգմանեալ ՚ի լատին բնադրէ . Տիրական . Ա . Եւե-
 նէֆ . ֆ :

“Այս ինչ ժամանեաց այնը արխուերանդ դիւերոյն
աբառկեր,

Որ անձին իմում յետին ժամանակ ՚ի Հռովմ հա-
մարեր,

Մինչ յիշատակեմ ըզդիշերն յորում թողի զարելիս :

Սաղապի յիմոց շիթ առ շիթ յաշաց արտօսր և դար-
դիս :

Մինչեռ լոյս մօտ էր՝ յորում տարադէմ ինձ գը-
նալ կեսար

Յեղերաց անտի վերջնում պատուիրեաց Աւոնեայ
իսպառ :

Ո՛չ միտք ոչ դէպ ժամէին բաւական ըզպէտս հան-
դերձել :

Պաղեցան բոլոր յերկար խորհուրդք իմ և սիրա
՚ի յերեր .. :

Վարա ուրեմն լեզուախօսութենար և նման է աճե-
րուել հասակի մարդոյ : Զի զորօրինակ սա եռանդուն
է երեակերակութե՛ ՚ի մանկութե՛, և ըստ աճել հասա-
կին՝ նուազէ եռանդն, և փոխարէն ընդ այնը ուռնա-
նան միտք նորա հրահանգութե՛ ՚ի զանազան մարդս
հանգիսից, նոյնակէս և լեզու մարդկան յաղքատուէ
փոխեալ ՚ի ճոխութե՛, փոխեցաւ և յեռանդանէն ՚ի
ճշգութե՛, ՚ի յափշտակեալ տապոյն յանդորր բարե-
խառնութե՛ : Միով բանիւ . լեզու մարդկան ՚ի վաղ
ժամանակս պատկանաւոր էր քերթողութե՛ և պեր-
ճախօսութե՛, իսկ այժմ՝ տրամաբանութե՛ և իմաս-
տափիրուէ . վասն որոյ զայժմու զընտանի խօսա արժան
է վարել յիմաստասիրականս . իսկ ՚ի պերճախօսութե՛
և ՚ի բանաստեղծութե՛՝ զհետ զնալ զնախիկի զրուցաց .
հպատակիլով ազգեցութե՛ բնութե՛ . զոր վագոյնս ջա-
նացուք աւանդել ՚ի կարգի գրոցս :

Անայ մեզ առ տեղեաւս ՚ի քնին առնուլ սակա-
ւուք և զզիարդն գրաւոր վաստակոց ՚ի սկզբանց և այսր-
այն որ զինի բանախօսութե՛ զերկըորդն իրաւամբք գրա-
ւեաց պատիւ՝ ընդ շահաւոր արդեանցն որովք օգտա-
կար եղեւ մարդկութես : Քանզի անդ ուրեմն ջանա-
ցեալ մարդկան ծանուցանել որոց առընթեր կային ըզ-
խորհուրդս իւրեանց բանիւք բերանոյ . ասքա յօժմ-
քեցին իմացուցանել զնոյն և բայցակայից՝ ճարատրա-

պէտ հնարիսք, նշանախեցիւք ոմանկը՝ զոր մեք դրութիւն սովորեցաք անուանել: Այլ որպէս նշանք և գըծագրութիւն մարմնեցիւնք յայտ յանդիման տարաւորեսցեն զանինիւթական հոգւոյ զիսորհուրդս:

Կնանախեցից երկու տեսակք են, նշանք իրաց, և նշանք ձայնից: «Նշանք իրաց են նկարք, դրօշուածք, և գաղանաբառում գծագրութիւն յաճախեալք յազգուառաջնուն: Կնանք ձայնից են տառք կամ ամեռեթայք՝ զարդիս 'ի կիր արկեալք յամ ազգաց՝ ըստ իւրաքանչիւք հնարաց խոռութիւն այլաձեւելով զտարազ նոցուն: Անկերապարան սկզբնաւորութիւն նկարչութիւն հանապարհ հորդեաց այսմ բազմաշահ արուեստի գրութիւն. վասն զի նմանութիւն զոր ցուցանեն յինքեանս պատկերացործ նկարք՝ անդամին ախորժական և համարնական երեւելով մարդկային երեակայութիւն, պատճառու ետուն ըստ նմանութիւն նոցուն յայտնի կացուցանել նկարուք կամ լոկ նշանօք գյօժարութիւն և զիսորհուրդս մոաց իւրեանց. զի զպատկերս խորհելեացն հնարեին նմանաձեւ գաղափարոք ծրագրել 'ի տախտակի, և նովին իմացուցանել զմանածմունս իւրեանց: «Եոյն սովորութիւն ժամանակաւ ձգեալ հնարեցան յամ ազինս բազմօրինակ ճարտարութիւն՝ ուրուազրել ըստ իւրաքանչիւք հանճարոց, կամ նշանագրել բազմօրինակարար զոր ինչ ասելն կամեին: Եւ զնոյն առին 'ի ձեռին գործի պիտանացու՝ հազորդել և հեռաւորաց զանցս անցեալս, կամ առ 'ի սպահել յեանոց զիշատակս նշանաւոր անցից: Զորօրինակ կամեցեալ յայտ առնել զայն թէ այր ոք սպան զայլ ոմն զիւր համանման, նկարեին զոր տապաստ անկեալ 'ի գետին, և զայլ ոմն կացեալ 'ի վերայ նորա՝ զեն սպանութիւն 'ի ձեռին: Որպէս առ Մէքսիգացիս՝ միայն այս տեսակ գրութիւն 'ի վար արկեալ էր, առ որս գտին եւրոպացիր ուրուական նկարա սպատմանկանս՝ յիշատակս վաղնջական անցից նոցա:

Սակայն զի նկարք միայն զարտաքոյսն 'ի յայտ ըերեն, չբաւեալ հատուցանել զիւրացն պատճառու, և զներըին խորհուրդս հոգւոյ գործովին կամ խորհեցողին, մանաւանդ որ առ նախնեօք անարտեստ և ոն հարթ սպատկերադործութիւն էին, վասն որոյ յանցանել ժամանակաց՝ 'ի լրումն թերութիւն և 'ի սատարել այսր հարկեցուցիւ կարօտութ, հնարեցան դրօշուածք:

որք համարին երկրորդ ռանդուիս արհեստի գրութեն : Դրօշուածք՝ ևն նշանակք յայտարարք աներեցիթ և խմանալի իրաց, վասն նմանութեն առաջիկայ բացատրելի իրին : Օրինակ իմն, այք նշանակ է խմացուեղին շրջապատ բազորաձև՝ որոյ ու սկիզբն է և ոչ կատարած, նշանակ յաւիտենականութեն : օճ գալարածոյ տուան՝ ի բերանի, նշանակ տարւոյ : Արդ ՚ի խընդրելի նշանակել զդոսին՝ զայդպիսի գրօշուածուն նկարէին ՚ի պնակիտոս և որ յայլ պատկանաւոր նիւթուայսպէս իմաս և վասն այլ ամ իրաց : Դրօշուածոցն աղդեցութեն յաւէտ քան զատաջինն ապաւորագոյն եր և յաճախեալ, քանզի նկարը ուրաւագրէին միայն զարուարինս, և զորս անկանին ընդ աչօք . իսկ դրօշուածք՝ երևելի իրօք յաներեւոյթու ակնարկէին : Այս գորութեն առաւել քան յայլ ազգս ծաղկեալ բարդաւաճեաց յեգիսպասու . զի բովանդակ գերապանծ ուսումն քրնաց նոցա ՚ի սոյն յայս կրթէր, և զայն սպատրուակեալ պահէին յօտպաց իրրե նուիրական իմն անմանացոյ : ՚ի նմանութեն առնուին նաև զբնաւորութիս անասնոց և այլոց իրաց բնականաց՝ խորհրդարանել նորումբիք զկարեւորն ՚ի հրահանգու բարոյականին . զապերախոտութեն նմանագրէին իժի . զանամօթութեն Շանձի . զեախահոգակ խնամն՝ մրջման . զյազլթութեն բաղէ . զորդի հնազանդ՝ կարապոյ . զայր վասանուն օձաձկան հալածելոյ յամ ձկանց . վասն զի բնութենը կենդանեացդ ակնարկին առ իւրաքանչիւր սպատշաճեալս : Այլ զի հնարագիտութեն այնր գրօշուածոյ հաստատեալ եր յանձնիւր յօժարակամ ընարութեն . և ոչ յանվեալ հետեւողութենը ընութեն միոյ միոյ յիւրացն ցուցելոց, բազում այն եր՝ զի ոչ ուղղութենք բերէր զպահանջեալ խմանաւն . կամ երկդիմի նշանակէր, իրր զի զմի և զնոյն գրօշուած մարթ եր այլեայլ իրաց նմանեցուցանել, կամ զուգախառնութեն երկուց և յուղվ գրօշուածոյ՝ փոխանակ ցուցանելոյ մի միայն պատկեր բազմանիւթ, մթագներ և անիմանալի թողոյր զի մասսան : Այնր աղադաւ յանցանել ժամանակաց՝ տաղուկացեալ և ՚ի սմանէ վասն անբաւականութեն ՚ի բացայացել զնոմ զոր կամլին՝ անտես արարին, յայլ ինչ կարեոր և շահեկան յառեալ զաւս և զնարագիտութեն : Հետք այսպիսի գրութեն երևեցան երթեմն և առ սպարս և առ բերուացիս՝ որք ՚ի բազմերանդ եր-

կայն ժապաւենս բազմաձեւ և բազմակարդ հանդուցիւք նշանագրէին զիսորհուրդս մասց իւրեանց , յորոց ՚ի թուոյն , և ՚ի մօտաւորութէ կամ'ի տարանջառուէ հանգուցիցն այլ և այլ խմառս մեկնարանէին : Այլ ու կարէ զբազմախորհուրդ միտս մարդկան ՚ի դոյզն ժապաւենս և յառասանս բովանդակել : Ոչինչ օտարասցի յայլընդ այլոց նկարուց և ՚ի դրօշուածոց աստի՝ տարդ դրութե մինէացւոց , առ որս չկան իբրև զմերս ալփարեղք թարգմանք աննշան ձայնից , այլ մի դրախեց նոցա նշանակիչ է միոյ բառի . վասն որոյ և հարկ է անբաւութ առաւելուլ առ նոսա դրախեցից , որ փոխանակ դիւրելոյ ուսանողաց՝ անհնարին տառապեցուցանէ զնոսա . զի ՚ի շրջանս ողջոյն կենաց իւրեանց հազիւ ուստանին , և այնոր ազագաւ յիրաւի յետնեալ միան ՚ի բարգաւաճութէ դիսուեց . զի ուրը ընթերցումն և լեզուագիտուի անհարթ իցէ , որ դիտուի հարթեսցի : Այս նշանագիրք կարծին սկզբնաւորեալ ՚ի նոսա ՚ի դրօշուածոց անտի նախնի դարուց , որք հետ զհետէ յապաւեալ զդժուարութի նկարուցն՝ յանբաւ նշանագիրս սփուեցին զայն :

Այսափ բազմօրինակ հնարագիտութէք , և որ այլ ևս առ ՚ի սոյն կարգեալք՝ զորովք զանց արարաք՝ աննմանք և օտարաւանք յարգեաց գրերոյ , բովանդակ նշանակք էին իրաց՝ և ոչ ձայնից . երեեցուցիչք արտաքուստ , և ոչ բաւեին ակնարկել ՚ի ներբինս : Յայնի հետէ հանդերձէր դաշտ ընդարձակ՝ հնարել և յօրինել զնշանագիրս ձայնից , և նովին զամցուգադրութի խօսից արտայայտել . վասն զի տաղտկացեալ մարդկան յանթարգման կերպարանաց դրօշուածոց , ՚ի հնարս կենցաղօդուստ մատքերէին՝ վարելով նշանս իմն յայտարար ձայնից և ոչ իրաց : Զի ուր թիւք նշանացն և դրօշուածոց չեին առ ամբ բացատրութիս պատկանաւոր , և ոչ բաւեին զյոլովութի բազմաձայն բառիցն սպարագրել : Քննութե հասու դասն մարդիկ՝ թէ յօդաւոր հնշմունք կերպացուցիչք բառից՝ նուազ ևն և սակաւաթիւ , և պէսսպէս զուգագրութի նոցա բովանդակեալ հողովէ զամենակերպ ընդարձակուի լեզուաց լեզուաց . և առ նմին խելամուցին՝ թէ ըստ թուոյ ձայնից հնարելով նշանագիրս , մարթ է և դիւրահնար՝ սակաւուք դործ մեծ վճարել : Ասսն որոյ ձեռն արկին ստեղծանել նշանագիրս , ոչ ըստ թուոյ բառից՝ որ

անհնարին է, այլ ըստ թուրոյ անհնան ձայնից և արտարերութեց, յորոց զակաւս առ միմիսմբք եղեալ կազմէին զբառն և զիսօտ՝ նշանակեալ 'ի նմին զբան կարգաւոր, բազազանութեց նշանական ձայնից՝ որպես ինչ պէտք լինէին արտայայտել բանս : Քանիզի ամփոփեալ զնչնմունս մարդկային բարբառոյ 'ի սկզբունս իւր, բովանդակեցին 'ի սակաւ տառս 'ի ձայնաւորս և 'ի բազաձայնս, նաև ու ունանք զձայնաւորս անգամ 'ի բաց հանին, իրուու զի մարդ էր բազաձայնիւք և եթ դրումել զկարեւորսն, և ըստ պիտոյիցն յաւելուլ զձայնաւորսն յընթերցման պահուն : Արա 'ի ձեւ ձեւ գըրախեցս յօրինելով իւրաքանչիւր հնչմանց, զորս տառանուանեցին, իրը տարերս բառից, անխափան ճանապարհ հորդեցին յընթացս գրականութեւ :

Խակ թէ ո ճարտարեաց զառաջինն զայտ կենցազոգուտս հնարագիտութիւնն, յանուանէ չէ յայտ . 'ի գրոց Մովսեսի ունիմք խմանալ՝ թէ 'ի կանուխ ժամանակաց սկզբնաւորեալ էր առ եղիսաբացիս գրաւոր արհեստ, առ որս ուսեալ վարժեցաւ և ինքն Մովսէս : Զկնի նորա 'ի գրաւոր աւանդից յիշտակի կամ յԵղիպտոս, և ազա ուսուցեալ ելլագացւոց նոխ զառաջինն գիրս վեշտասան : Եւ այն յայտ է թէ զայնու ժամանակօք յաւուրս ելից խօրայէլից յԵղիպտոսէ՝ վիւնիկեցիք ծաղկեալ Հոխացեալ էին վաճառականութեց, ըորում կից պահանջի գրաւոր դպրութեց վարժութիւ : Նշանագիրք կադմոսի թերեալք յԵլլագա, յետ ժամանակաց առաւելան մինչեւ 'ի թիւ քսան և երեք . յորոց ընդօրինակեցին լատինք՝ սակաւ ինչ փոփոխելով զձեւսն և զհնչմունսն . և 'ի նոցանէ գաղափարեցին բազումք յաղգաց Եւրոպայ (*) :

* Հ նուպ + առանդից հնաւելեանց առէն՝ նէ վաշնչայտն գրանդի Յանաց և իերոպարսն + բառից նոյս նմանայտ էն բառից եբրայէշուց իսմ առարացւոց . որդ և ըստ հասարակուց իսրայէլաց նոյն էն ընդ իսրայէլան ալլաբիտուց : Ո՛չ հետի ինչ է 'ի նոցան նմանաւելն և գիտք բառից մերոց, պէտի ունեալ պառին ըստ հին գրչութեն օրինակի նմանայտ գրանդի ընդ յոյն բառից, նոյն և ընդ լուրինայն . մանաւանդ գիտելով և զայն նէ ո՞ն Մեսոպոլից ըստ Հետման գրչութեալ յարմարեաց զեր անունայս : Դաշ-

Իրրեւ սփռեցան յաշխարհ՝ այս նշանագիրք՝ բազմօքնակաբար՝ ի վար արկանէին զայնս աղջք իւրաքանչիւր ընդ այլքեայլ ժամանակս : Ընդհանուր սովորութէր զառաջինն՝ դրել յաջմէ յահեակ կոյս, ըստ որում ունին մինչեւ ցայտմ ասորիք, արաբացիք, պարսիկք, երրայեցիք : Այս սովորութէ եղեւ երբեմն և առ յոյնս. որք և յետոյ հնարեցին այլ ինչ նորօրինակ՝ դրել անընդհատ յահեկէ յաջ, և յաջմէ յահեակ՝ վասն արագութեւ և յաջողութէ ըստ օրինակի հերկելոյ եղանց գերկիք. զոր և անուանեցին յիւրեանց բարբառ Եւնադարձ. Յաջորօքոծօց. յորմէ և առ լատինս մինչեւ ցայտմ դրութին անուանի և Արօրագրութի : Այլ տեսեալ զի դիւրագոյն և աջողագոյն է դրել յահեկէ յաջ զօրացաւ և տարածեցաւ առ բազում ազգս այն սովորութի . ըստ որումն մերս երանելին Մեսրովայ յահեկէ յաջ կարգեաց զցիրս մեր՝ զլաւագոյնն ընտրեալ յորոց էին յայնմ ժամանակի : Օտար ինք է և գրութի սինէացւոց՝ գաւաղանածն վերուստ ՚ի վայր. ՚ի ներքոյ իրերաց դասակարգեալ զբառս :

Ընդ ժամանակս ձիգս՝ դրութին փորագրութ կամքանդակելով վճարեր. զի ՚ի սիւնս և ՚ի քարեղին տախտակս սովորութէ էր արձանագրել, և ապա ՚ի յըղկեալ տախտակս հրահալ բովուց, և յաւետ ՚ի կակզագոյնս : ՚ի տարածել դրականութեան՝ յայնմհետէ ՚ի դործ արկան և նիւթք թեթիւք՝ դիւրինք առ ՚ի պետքս : Յազգս ոմանս պատկանեցան լայնաթերթ տերեւք, և թաղանթք ծառոց. և այլուր՝ մանր տախտակք փայտի մումապատք, յորոց վերայ գծագրէին երկաթի դրաւու : ՚ի վերջոյ և սովորական քան զառաջինսն առին ՚ի վարել զմագաղաթս՝ յօրինեալս և քերթելը ՚ի մորթոց անասնոց, և ապա հնարեցաւ թուղթ բամբակեայ, կամ կտաւի որ առ հասարակ այժմ ՚ի դործածութեւ է յամցազցս և ՚ի տեղիս :

Յեւ ունանէն ուրիշ իւրիշ ՚ի դառն գրեթե ամ ազգաց. զի որ ինչ իւրիշ է ՚ի մերս ։ բ. գ. ւ. այն, և ինչ իւրիշ յարցոյն : Յաւել այս և պհամանաւան դրերոյն. զի պայտայն անի ալքս, վլուա, զամա, և այն. նման և ընդ գիւղինեցուն և ընդ եբրայեցուն և ընդ արաբացուն. ուրեւ աղաւանաւեւ օրէն է, թէ այս ամ ՚ի մոյ աղբերականէ յառաջ գոյ :

Առև ես քան զես յաւելաւ դիւրութի՛ ընդ նմին
և եռանդն դրաւոր վաստակոց , 'ի հնարել արհեստի
տապագրութե՛ ի հնգետասասն դարու յաշխարհին դեր-
մանացւոց , որով պատապարեցան արդասիք հանճա-
րոյ մարդկան յերեսաց ամենածախ ժանեաց հնուե՛ .
և յայնմշետէ անկորուստ մնացին վաստակը նախնի
մատենագրաց , յորոց զբաղմաց արդիւնս յամիւն դա-
տեալ էր ժամանակին , առ նմին և դիւրադին եղե ա-
մենեցուն ստացումն գրոց , որ յառաջն գժուարին ու-
րեմն էր : Սոյն գովելի ջանք և նախանձ սկիզբն կա-
լու և յազդի մերում 'ի վեշտասան դարու նախ զա-
ռաջինն ի վենետիկ քաղաք . յորմէ և այսր հետապլն-
գութի՛ ուսումնասիրաց յաւել ծաղկեցուցանել զնախ-
նեացն սերմանս :

ԳԼ. Գ.

ԱՀԱՅՆ և բարդապահութի՛ ճաշպահութի՛ :

() ԳՏԱԿԱՄՈՒԹԵԱՄԲԻՆ սկիզբն կալաւ ճար-
տասանուե՛ , և կատարեաց զայն իմաստասիրութի՛ և հրա-
հանդ . քանզի իրրե աճեաց բազմամարդացաւ աշխարհ ,
և տրոհեցաւ յազդս ազգս զանազանեալս բարբառով
և դրութե՛ք , զուդապէս և քաղաքականուի առաւե-
լաւ 'ի նոսա հանդերձ բազմօրինակ արհեստիք և ջա-
նիւք դպրութեց . այլ զոյդ ընդ նմին արմատանային և
անշահ վրիսկակը յամուստունս , մանաւանդ 'ի բարե-
կարդ լեզուախօսութե՛ , ոոկ է իսկ յամ բարեզարդու-
թիս կից գտանել զիսանդարմունս : Հասու եղեն այսմ
նախնի իմաստասէրք , և խորագոյնս զնեալ զբուռն
ազգեցութի՛ բնութե՞ս , որ տպաւորագոյնս թելադիր
լինէր մարդկան ձեռն մինել յիրս մեծամեծս , և յաղ-
թել ամի ճարտարութե՛ բանից , տեսանէին զի եռանդն
վառեալ առ 'ի գործ , ուրեք թերի գտանէր , և ուրեք
տռաւելեալ . որով կամ ոչ բաւէր կատարել զգործն ,
կամ առ հրատապ ջերմութե՞ն՝ բատ չափ անցանէր : Զի
թէպէտ ամենէքին խօսէին և ճգնէին յանկուցանել
զլսողս 'ի բանս իւրեանց , այլ սակաւք ոմանք կա-
տարեին արդեամբք . յայտ ուրեմն է՝ թէ որչափ դիւ-
րին է խօսելն , նոյնչափ և գժուարին՝ քաջ ատենա-

իսուելն : Վասն որոյ կարեւոր դատեցան արհետաբն ճարտարութե՛ ընուլ զթերին . և ըստ օժանդակել յաջողուածոյն՝ պնդեցին ընդ սահմանաւոր կանոնք դիարողութիւ բարւոք և հզօր ասացութե՛ :

Այս եղեւ սկիզբն հռետորական արհետի . որ զի ծնունդ է բնութե՛ և ոչ հնարագիտութե՛ , այնչափ չքնաղ երեւեցաւ՝ որչափ հուալ գոտաւ ՚ի նախկին բացայայտ պարզութիւ ուշիական բարբառոյ . և ըստ նմին կենդանադիր երեւեցոյց զբնաւորութե՛ մարդկեղեն սրրտի , և զյոյզա շարժութե՛ց նորա : Աստանօր ՚ի հետազոտել մեր զսկիզբն պերճախօսութե՛ , չէ մեզ վերունել մինչև յառաջին դարս աշխարհի , յորում ամմ գերգաստան զիւըն և եթ հոդացել խնամեր . և թէ պետք ինչ լինեին ումեք՝ խոնարհել զայլ ոք ՚ի կամս իւր , բռնութիւ զօրանայր տիրել՝ քան թէ փաստ բանտեռոր , ըստ վայրագ սովորութե՛ տեղեաց տեղեաց կամ ժամանակաց : Զտոցին տարացոյց տեսանեմք ՚ի վաղեմի պետութիւ արեւելեաց , եդիստացոց ասեմ և ասորեստանեաց և որ այլ ևս հին պետութեր , որք ընդ զեղեցիկ անուամբ միահեծան անտեսութե՛ իրրե ածատուր իշխանութե՛ , փոխանակ յանձնանձելոյ զժողովուրդս իւրեանց հայրօրինակ թեարկութեր , և արդարակորով անաշխառութե՛ ընդ մեծ և ընդ փոքր , զեղծանեին սաեւպ յիրաւունս , և առանց օրինաւոր փաստաբնութե՛ հարստահարեին զորս կամեինն , և զորս կամեին՝ հարստացուցանեին . և ամբոխն կուրօրէն ձգեալ գնայր ընդ հետս կամաց հրամայողին , առ ահի հարստակելով պատուիրանացն , քան զհրամայեալ օրինաց զօդուան ճանաչելով :

Արդ մեր զհմարիսն հետազոտելով , ոչ կարեմք գտանել հաւասառեաւ զսկիզբնաւորութիւ հռետորական արուեստին ընդ ոլորտս տիեզերաց՝ մինչև ՚ի քաղաքական քարդ զարդութիւ յունաց . յորմէ և այսր աճեցեալ առաւելաւ ճարտարախօսութիւ , և ծաղկեցին ՚ի նոսաարդք առցք ճարտարախօսութե՛ և ճարտարախօսաց : Քանզի ՚ի բզմ պետուխո մանունս բաժանեալ էր Ելլադա , և ամենելին պնդեալ ՚ի նախանձ ազատութե՛ , զրդուեին մախանօք ընդդէմ իրերաց : Հռչակեալն յայնցանէ պերճախօսութե՛ և բարդաւաճութե՛ ազատական արուեստից , ժողովուրդ Աթենայ քաջուշիմ , բաղմահնար , դործօն և վարժ անդստին ՚ի յաջո-

զուածս իմաստանիրականին և արհեստականին՝ սակա
յաճախելոյ առ նոսա մըցմանց և կռուոց ը մերձակայ-
ից : Առվորեալ էր նոցա յազնուապետական իշխանու-
թի , և ժողովուրդն համօրէն բաժանորդ էր 'ի գործ
իշխանութեն . զի թէպէտ և ունէին ծերակոյտ հինգ
հարիւր ատենակալաց , սակայն լրումն իշխանութե-
նոցա ծաւալէր յամ այր քաղաքացի . և նմ՝ դատաս-
տանկ և խնդիրը 'ի գլուխ ելանէին առաջի բազմա-
խումբ ժողովրդէան՝ հաճութը նոցա . զի այն բազմա-
խումբ ատենան հրամայէր զնամը ըստ սատարելոյ քաջու-
թե Տարտարախօսին : Արդ յայտ է թէ կարեոր էին
նոցա հրահանգք 'ի պերճութի բանից . և այն ոչ յաւ-
ելորդ պահոյնս զակատեալ . այլ գուն գործելով նուա-
ճել զրելիս 'ի բանն առաջադիր , համոզել և հաւա-
նեցուցանել . զի և նպատակ ժողովականացն ոչ էր
ծափահարութեն խնդզանկ ընդ գեղեցիկ զրոյց ատե-
նախօսին , այլ հոգ հասարակաց անհանուե , զբարիոքն
միշտ խնդրել և զօդտակարն , որ առաքինեաց էր և
վառելոց 'ի սէր հայրենեաց՝ քան ծանծազամիտ ու-
նայնասիրաց : Թող զի ամ մարդ յայնափառում քաղաքի
ազատ էր , և իրաւանց իւրոց ինամու նախանձաւոր .
և եթէ դէպ լինէր զրկել զնա ումեք և խուել , բողոք
բառնայր յատեան հասարակաց , և անձամբ կամ 'ի
մեռն օգնականի հրապարակագոյժ առնէր զկրեալ
աղետան՝ իրաւունս խնդրելով 'ի համախումբ ժողովը-
զենէն ընդդէմ հարստահարողին , և ազերսէր կանդ-
նել զազատուի իւր՝ առաթուր կոխեալ յանիրաւի :

Ժողովրդէան՝ որ ծնեալն էր և դաստիարակեալ
յազատութե , հարկ էր արդեօք փութով հասարակաց
ազատութե և բարգաւաճելոյ պետութե իւրեանց՝ 'ի
գլուխ լրութե ամբառնալ զարհեստ շքեղ և պերճ ա-
տենախօսութե : Եւ յիրաւի յայն կատարումն ամ-
բարձաւ առ նոսա արհեստն այն , մինչեւ յառակս
եղեւ ասել Առտիկեան ընտրուի . Առտիկեցի տարագ
բանից : Զի ատափիկեցիք թէպէտ և յազատուե սնեալ
մոլէին 'ի շաղփաղիուն զրուցաց , և յառասպելս կոր-
ծանէին , այլ յորժամ հարկ կարեոր գործոյ և մօ-
տալուտ վարանք երկիւզի հասանէր ունէր զնոսա , բաջ
դիտէին խորել , որոշել ընդ օգտակարն և ընդ սնոափ
սկերծախօսութի : 'ի քաղաքախօսմբ ատենի ուր ըստ
սովորութե աղաղակէր քարողն՝ ասել առն իւրաքան-

շիւր զոր բնէ դիպողադոյն համարիցի վասն առաջիկայ գործոյն , անդ մնութի խմատակութելք չունեին աեղի : Ման առ անդ զի և մեծանուն առենախօսք նոցա յելք-նելն 'ի բեմ՝ զդողանի հարկանեին . վասն զի պարտա-պան դատեին զանձինս ելից իրացն , զոր թելքը եին բազմակոյտ ժողովոյն՝ խմբելոյ . առ ՚ի լսել զյանկա-ւորն ՚ի բերանոյ նոցա :

Պիստորտո , որ ժամանակակից կացեալ Սողոնի՝ ա-ղարտեաց զառ ՚ի նմանե կարգեալ զօրէնս քազաքա-կանս , նշանաւոր ցուցաւ յաթենացիս յարուեստ ճար-տարախօսութե , և նովին խեկ ամբարձու յարբայա-շուք պետութե . զի զեղուն և զուոր՝ վարեր առ հա-սարակ ՚ի գործ իշխանութե իւրոյ : Յետ հարուստ ժա-մանակաց առ պեղուպոնիսեան պատերազմոք ծանու-ցաւ Պերիկղէս , զոր յիրաւի է նախասկիզեն համա-րել առենախօս պերճուե : Գիտաց նա միաբանել զնամ-քանուոր դարձուածս լեզուին ընդ ուժոյ ճարտասա-նութե . զի մինչ քազցրուքն զուարձացուցաներ զա-թենացիս , ուժողնուուքն դողացուցաներ զելքագա : Ծն-թանայր յայնժամ ՚ի բերանս նամցն՝ իրր թէ դիցուհին համոզանաց հանդէր ՚ի շրթունս Պերիկղեայ ոող ՚ի սեփական դահոյս իւրում . և ՚ի բանալ նորա զրերան իւր , ոչ թէ ձայն և խօսք՝ այլ որոտընդուստ շանթք Արամազդայ հատանեին անութի : Առ նովին ժամանա-կօք պայծառացան կղէոն , Աղկիրիադէս , Կրիտիաս և Յերամենէս աթենացիք . որք թէպէտ և չէին ա-շակերտեալ առ ուստ ճարտարախօսաց , այլ հայրենա-սէր եռանդն նոցա քանախօսս և աղդողաբանս եդ ըղ-նոսա :

Յետ այնորիկ ըստ փառաւորել ճարտարախօսու-թե՝ առաւելեալ բազմացան աշակերտեալքն , իրեւ դասս իմն և կամ սաել աղանդս խմատասիրաց , որոց հուետոր անուն կոչեցաւ : Որք ընդ առենախօսութե կցորդէին և զորամարանութի , որպէս զի նրբին պատ-ճառաբանուք յաւէտ ևս պարանեցեն զմիտս ունեն-դրաց : ՚ի սոյն վարժապետութե մեծանուն հանդի-սացաւ գորդիաս լէսնդացի ՚ի Ախկիլիոյ : Որոյ եկեալ հըեշտակութե յԱթէնս՝ ինդքել օդնականութի հայ-րենեացն ընդգէմ հարտահարութե սիրակուսացւոց , հանդէս արար ճարտարախօսուե իւրոյ առաջի աթե-նացւոց : Որոց այնպէս սքանչուցեալ , զի աւուրս բա-

բորութե կարգային զուռուրսն՝ յորս առենախօսէրն : Եւ կառոց նա յԱմենս լսարան հոետորութե, և աշտկերանաց զյոգունս : Այլ զի մ.ծամիտ էր և յանձնապատճանն, կամ ցեալ առենախօսէլ յամենայն ժամանակի առանց պատրաստութե, և զամենայն աղդ պի աղդի խնդրոց՝ որ ընդ առաջ ելանիցեն, թուեցաւ զրուխ խմաստակաց . մանաւանդ զի ճարտարախօսութենորա պՃնազարդ էր և սեթեթեալ : Զանց արարեալ զբազմօք 'ի նոցանէ, ակնարկեսցուք միայն 'ի դարն յորում տասն քաջանուն ատենախօսք կացին համանգանցն, արձանացուցեալ զիսկն ճարտարախօսութենորա ամենայն աղդս և ժամանակս . զորոց զվարան Վլուտարքոսի համառօտեալ, անուանք նոցա՝ են Անտիփոն - Անտոկիդէս, Աիւսիաս, Խառիքատէս, Խաչոս, Եպինէս, Աիկուրդոս, Դիմութենէս, Խալերիդէս, և Դինարքոս : Առենարանութե ամենեցուն սոցա քաջ ճարտասանից պահեալք ցայսօր՝ միշտակք են արիսական և վեհ ոգւոյ և բանից նոցա: 'ի տասանց աստի զյաւերժական պարծանացն առան յաղթանակ Եպինէս և Դիմութենէս : Այլ առ 'ի խելամուտ լինել թէ որչափ արգաւանդ էր յԱմենս պերճախօսութեն, շատ լիցի ընդ միտ ածել զի 'ի ժամանակս Դիմութենէսայ բաց 'ի տասանց աստի հռչակաւորք էին Կալիստրատոս՝ որոց քաջութեն 'ի բանս, և փառք ընծայեալք նմա, մորակեցին զԴիմութենէս 'ի ճարտարախօսութեն անդք : Դեմաս, անպարտելին անուանէալ վասն բնական և անարտեստ քաջրաբանութեն : Փոկիոն՝ անուանէալն 'ի Դիմութենէսայ սուսեր հատու, զի 'ի մի հարուած փշուր զամենայն վաստակս նորա: Թանգ զայլսն, որոց առենախօսութելք ոչ ինչ տաղակալ էին յետ լրոյ Դիմութենէսայ ճառիցն . քանզի այն խել փառք են նոցա՝ զի ոչ նսեմացան 'ի բազմանշոյլ ճառագայթից Դիմութենէսայ . որում պահէր յաջուղուած բաղդին՝ վերամբառնալ զփառս ճարտարախօսութեն Ելլագայ 'ի ծայր կատարելութե . զի զամենեցուն զնախորդացն իւրոց զկարեոր ձիրս յանձին բռվանդակեալ՝ խօսեր 'ի բարբառ ամենեցուն . և լս Կիկերոնի, էր նա առենախօս գերակատար՝ ոչ իւլիք թերի : Ինքն խել Եպինէս հզօր ախոյեան նորա պարտեալ 'ի նմանէ, և տարագէմ մէկնեալ յաքսոր . 'ի

Հռոգոս կզզի, ոչ ամօթ համարեր ընթեռնուլ ախոր ժանօք զնառու նորա՝ որովք ինքն դատապարտեցաւ. և 'ի զարմանալ ըսողաց ընդ հարտարութի գրչն Դիմութենեայ, նա զհրաշտին տայր պատասխանի. իսկ զի՞նչ պարտ էր ձեզ տաել, եթէ նմին ինքնան Դիմութենեայ ունկնդիր լինեիր :

'Ի մեռանել Դիմութենեայ՝ ը նմա շիջառ աղոտուն և պիրճախօսութի Յունաց, մինչև յետ ժամանակաց բազմած աղիկ ընձիւզեցու 'ի Հռովմ: Քանզի հռովմայեցիք զառաջինն զհռումուլեայ օրինակին զհետ երթեալ նկրտեին 'ի յառաջազիմութի սեփական զարմի և աղդի հայրենասեր բարուք, ոչ այնուամբ հանճարով որշափ բուռն զօրութիք. նմին իրի առ հասարակ միաբան զհետ պնդեալ էին ընդարձակել զարհմանս իւրեանց, և 'ի զինուց մարզս հրահանդէին : Ոչ միայն անունդեակը գիտութեանց՝ այլ և ոխերիմ թշնամիք էին, վնասակար համարեալ զգրոց գարութիւն՝ հասարակաց սկետութիւն : Յայն հայեցեալ՝ ոչ ոք արդեօք ակնունէր արմատանալոյ պերճախօսութեան 'ի Հռովմ: Սակայն 'ի նուաճել նոցա զԵլլադա, զօրոցաւ պարտեալն նուաճել զվայրագութիւն յաղթականին իւրոց, տեղափոխեալ զազատական արհետատ և զդիտութիւն յաւերակաց իւրոց յագարակս Լատիոնի՝ ուր հիմնեցաւն Հռովմ. մինչև որ յառաջն յանցանս համարեր 'ի Հռովմ՝ ունկնդիր լինել յոյն բարբառոյ, ապա յետ ժամանակաց ոչ յօժարեին աշակերտիլ վարժապետի՝ որոց չեր եկեալ յԵլլադայ: 'Հռովմայեցիք անհրահանգը զառաջինն, ոչ զեղանակ աշակերտութեն պիտեին, և ոչ թէ իցեն կանոնք արհետատին . և որչափ հնար էր՝ ըստ բուռոյ բարուց և յօժարակամ 'ի բաց խորշէին յայնցանէ : Իսկ յօրժամ աշակերտեցան հռետորաց յունաց, և 'ի միտ առին զմատենապրութիւն նոզա, վատեցան մերքն անակնեալ ջանիւք ուսումնասիրութիւն, .. Աշ յ՛ս պէնսանի : Այսպէս վկայէ Կիկերոն. և յաւելու տաել, թէ դափ և ոչինչ ըստ կանոնաց հարտասանութիւն 'ի բեմբասացութիւս առաջնոց Հռովմայեցւոց :

'Ի սակս այսոցիկ պատճառառաց՝ յառաջ քան զաւեր Կարքեղոնի չերեւեցաւ 'ի Հռովմ ատենախօս մեծանուն. իսկ իրու անտապատացաւ քաղաքն այն, և անդորրացաւ պետութիւն հռովմէական, որում հար-

տակը էին և հարկս հարկանելին թագաւորք և ժողովորդք : բուռն հարին հռովմայեցիք յածիլ 'ի մատեանս փորժապետաց յունաց , և ընկալան 'ի հոյրենիս իւրեանց զգրաւոր վաստակս և զարուեստս հարաբութեան նոցա : Արով փայլեցին 'ի նոսա կրասոս , Սուլպիկիոս , Կոստոս , Պիտոն , Լենտուլոս , Բրուտոս , Անտոնիոս , Արամենսիոս , և այլք : Այլ քանի զամենեսին զնոսա քաջախայլ հանգիսացաւ Կիկերոն . մինչև չդիտեմ ասել , նա արդեօք պարտապան դտաւ Տարտարախօսութեն՝ որով 'ի բարձրակաստարն աւագութիւ ամբարձաւ , թէ Տարտարախօսութիւնմա՝ յորոյ 'ի ձեռին և 'ի բերանի առաւելան փառք իւր : Սասյս Տարտարախօս հռովմայեցի՝ մենաւոր գողցես տրամանացեալ 'ի հռովմէական հրապարակին , և 'ի բանս շրթանց իւրոց ձգեալ զծերակոյան և զժողովուրգն տիեզերակալ , այնպէս բազմայազմ դտաւ և 'ի մեծամեծս ձեռնհաս , մինչև ասել ումանց թէ Տուղիոս Կիկերոն ինքնիշխան տիրէ յառեանս և 'ի դատաստանս հռովմայ : Եւ առ յետինս այնպէս մեծանուն եղեւ . զի զկիկերոնի զանունն իիշատակելով զՃարտարախօսութիւնի իմանալ գլխովին : Եւ մօտեանք նորա ընդ ամենայն դարս մեծարեցան յընթերցասիրաց :

Որչափ գժուարին է ամբառնալ զօդտակարս 'ի ծագկատարելութե , նոյնչափ գմնդակ է պահպանել զնոսա 'ի կշիռ առաւելութեն : Ցանկութիւն նախանձուն վառէ զոգիս՝ վերաթեևէլ զառաջինն անդ 'ի բարձունս . այլ ուր միանդամ վերջունեսցի զօրութին , թողանայ լքանի յառաջնոյ պնդութիւն . այսպէս և 'ի Հռովմ 'ի մահուն Կիկերոնի՝ խաւարեցաւ և պերճախօսութեն բացափայլութիւն : Եւ այն յերկուց պատճառաց . մի զի կորստեամբ հռովմէական ազատութենն 'ի միապետել Յուլիոսի կեսարու , փակեցաւ բերան առենախօսից . զի ոչ ևս էին ժողովրդեան իրաւունք 'ի գործիշխանութեն , և 'ի կամս միոյ աշխարհակալի բովանդակէին իրք հասարակաց : Երկրորդ՝ զի ոչ խիզախեալ փաստարանք ժամանակին հաւասարել պերճախօսութեն Կիկերոնի , կերպարանափոխ արարին զամենարանութիւն 'ի վար արկեալ կցկառուր իմն և իմաստակական ոճ բանից . և այն սովորութիւնն ափրացեալ կալաւ , և գամ քան զգամ վատթարեաց զպերճախօսութիւն , մինչ զի յաւուրս Տիրերեայ կայսեր շրջեցաւ

այն 'ի խաղ տղայական : Յարեաւ յետոյ ֆարիսու կուինտիլիանոս՝ պատսպարտան Տարտարախօսութեան յաւուրս Դոմետիանոսի յերկրորդ դարուն . և կանոնադրութեք և վարժապետութեք փութացաւ դարձեալ պայծառացուցանել զանչքացեալ զբեմբ ատենախօսից : Եւ արդամիք նորա ցուցան 'ի փոքրն Պիենիոս , որ 'ի կացրդական հրապարակախօսութե իւրում առ Տրայիանոս կայսր՝ չքնաղ երևեցոյց զիւր Տարտարութին և զլատին բարբառոյ քաղցրութի . այնչափ առաւել զարմանալի լեալ , որչափ զի ընդ նմա վախճանէր լատին պերճախօսութի : Զի 'ի սպառել հռովմէական պետութե , և 'ի բռնանալ ունել զւրոպէ խուժագուժ ազանց , 'ի սպառ անհետացաւ անտի դիտութիւն , աստանդական թափառեալ ընդ դաւառուուրեք հեռաւորս : Խակ 'ի թափառորել քրիստոնէութե նախ յարևելս և 'ի միջերկրեայս , բարձրագլուխ ցուցաւ և Տարտարախօսութիւն յածախօս բեմբասացութե . յորում պանչելի արձանացան Գրիգոր ածաբան , Կիւրեղ , Ոսկերերան , և այլք բազումք ըստ նոցանէ նոր Դիմոսթենէոք ածապաշտք կացեալ : Մինչև ուր ուրեմն յանդորրանալ Եւրոպայ , և 'ի թօթափիել զուծ տգիսութե , առ հասարակ զարթեան խոալցիք , դաղղիացիք՝ այլովքն հանդերձ , հրաշեկերաել զիսաթարեալ տաճար պերճախօսութեան . և խուռն անբաւութե զօրացան ատենաբանք և վարժապետ յազգս ազգս՝ պանծացուցանել զփառս նորա , մանաւանդ զվարդապետական բեմբասացութէն , հաւասար հնոյն Հռովմայ և տապալեալն Ալթենայ . և յանողեցին ջանք նոցա : Ընդդէմ բազմաթիւ պարունարտարախօսաց այլոց ազգաց չունիցիք և մերն այրարատ ախոյեանս ունանս հանել 'ի Տակատ : Առ այս կարեոր հարցուած առանց ինչ ը բանս ածելոյ՝ զայտ 'ի գէպ է տալ պատասխանի . ատենաբարանս արձանացեալս 'ի դատաստանին՝ չունիմք ամենեին . և յայտնի է պատճառն , զի միապետական տէրութեք վաղեմիք ոչ ներեին զայդ : Խակ 'ի մասանագիրս պերճախօսս իցէ մեզ թերեւս պանծացալ յոմանս . որք զյունական աշակերտութեամբք թեւակոյնեցին . յորս և մեզ արժան է դեղերել անխոնջ , և թէ կամիցիմք զբնիկ մերոյ բարբառոյս զշարազատութին կը ել առ 'ի նոյանէ , որպէս և պարտք խակ են :

ՃԱՐՏԱԾԱՌՈՒԹԵԱՆ

թէ կինը է մարդուանութէ, և իր սահմանի, և յառաջ-
մասն նորա, և ոչի ոչի մարդուանութէ:

ԱՄԵՒՈՐ է աստեն 'ի սկզբան հաւասարի քննու-
թէ խելամուել խակութէ հռետորականին գիտութէ -
զի ոչ է օրէն ձեռնարկել 'ի գործ՝ մինչև քաջ 'ի
միտ առեալ զորպէսն նորին: Են բազումք որք 'ի լսել
զանուն պէտքանութէ՝ խորշին յայնմանէ, համա-
րեալ զայն՝ արհեստ պատրանաց և սնապարծութէ.
և գորովէն զայն իրրե տղայաբարոյից անկ, ճառա-
տանս, և մնուաի խարէութի. ապա չեն ինչ զարմանք
թէ սովին թիւը կարծեօք խոտան երեւցաւ երբեմն
յաչս մարդկան արհետս այս: Այլ մեզ որ 'ի խնդիր
ճշմարտութէ ելեալս եմք, մի լիցի նոյնօրինակ կեղա-
կարծ դատաստան: քանզի հայեցեալ 'ի կատարած
իրացդ՝ զհաւաստին է մեզ 'ի միտ առնուլ: Որ միան-
դամ բուռն հարկանէ 'ի խօսել կմ 'ի գրել, ունի իւր
կէտ նպատակի հրահանգել, կամ զուարձացուցանել,
կամ խելամուել, որպէս և արժան է մարդոյ բանակա-
նի: Արդ հրահանգելն՝ ոչ է խարէութի. զուարձա-
ցուցանելն՝ ընկերական և մարդասէր մտաց գործ է,
և ոչ նենդաւորի. առաւել ևս՝ խելամուեցանելն
բանաւոր փաստիւք զայր ուստմական և հանճարեղ
առաջի դնելով զարդարացի պատճառս, չէ գործ խի-
թալի. նա աւանիկ այդ իսկ է անքոյթ և վայելուչ
և չքնաղ և քաղցր 'ի կեանս մարդկան: Զի այս ամե-
նայն ոչ մնուաի սեթեեթիւք վճարի՝ թէ սպրդեսցին
յայն նենդուիք և պատրանք, այլ հաստատուն պատ-

Ճառօք, ընտիր ընտիր դարձուածովք բանից, և խոհական խմաստիւք թելադրելովք 'ի բանէն: Առ ՚ի խելամուտ առնել զայր խմաստուն, նախ պարտ է յաղթահարել զնա անդիմադարձ փաստիւք, մինչեւ խոհարհեսցես զնա 'ի հակառակս մասցն, զի տեղի տուեալ բանից քոյ՝ ինքնին ձգեսցի ուր առաջնորդես նմա: Եւ զի՞նչ առաւել քան զայնպիսի փառուն կայցէ, զի այր ոք զբազմախումբ ունկնդրացն զիամն յիւրն ձգեսցէ, և արձանացեալ 'ի մէջ բազմակոյտ մարդկան՝ մարթացի առանձին 'ի գլուխ տանել զոր անկէ է բազմաց: Տես ինձ ապա զիառուս արհետիս և զմեծութիւնորա՝ որ զժողովուրդ բազում, զատենակալս ծերակուտին, և զիուսակալս պետութէ յակձիռս կացուցանէ 'ի բարբառ և 'ի պատոգամ առն միոյ: Յաւել առ այս և զարքայօրէն իշխանութին՝ որ ձայնիւ բարբառոյ ատենախօսին վարձահատոյց լինի ազաշաւորաց, վերաբառունայ զանանկացեալս 'ի կարօտութէ, ձեռն տայ վասնգելոց, և դարձուցանէ զմարդիկ 'ի հանգիստ հայրենեաց իւրեանց: Խակ եթէ 'ի հարկ իրացդ նայիցիմք, զի՞նչ ևս քան զայն հարկաւոր կայցէ, զի իրը այն թէ զէն 'ի ձեռին կազմ կայ՝ պատրապարել 'ի հարստահարութէ զառ 'ի նա վստահացեալսն, կամ իշխանաբար պատուհաս 'ի վերայ կապել յանցաւորաց: Այս բնութիւն է ճարտարախօսութիւն՝ գրաւել զսիրտա լսելեացն, ազդուութիւն բանից յօժարեցուցանել զնոսա 'ի կամս իւր, և իրը տիրաբար հրաման տալով յանկուցանել զնոսա յոր ինչ և կամիցի: Խմաստախրաբար համառօտէ զոյն Կիկերոն 'ի սկիզբն հռետորական գրոցն: * Բազում անդամ և ընդ երկար մատախոհ լինէի՝ բարւոյ թէ չարի արդասու իցէ ճարտասանութիւնն մարդկան և քաղաքաց: Քանզի այն ինչ զմուաւ ածեմ զաղետա հռովմէական պետութեան, և զմեծամեծ քաղաքաց զվիշտա անցեալս 'ի համար բերեմ, և ոչ մի գոտանեմ տոյժու տուգանաց առթեալս յատենաբանից: Եւ մինչ ակնարկեմ 'ի գիրա՝ քաղել զանցս հեռաւորս 'ի յիշատակութիւն մերմէ առ հնութեանն, տեսանեմ անդէն բազում քաղաքս կառուցեալ, բազում պատերազմունս հանդարտեալ, անդրդուելի ընկերութիւն և ուխտու բարեկամութիւն հաստատեալ հեշտեաւ՝ և խմաստասիրութ և ճարտարիսօսուք: Արդ մինչ դեռ ը երկար վա-

բանեալ դեգերեի , յայս առաջնորդեաց ինձ բանն , հումարել թէ իմաստուի առանց պերճախօսուե ոչ ինչ օգնէ քաղաքաց . և պերճախօսուի առանց իմաստուե բազում ուրեք խոչընդակն է , իսկ օգնէ բնաւ ոչ : Ազա թէ ոք զանց արարեալ զանվթար և զվայելուչ իմանոնք բանին և զպատշաճից՝ ժամավաճառ լիցի ՚ի հրահանդս խօսից , նա քաղաքացի է անօգուտ անձին , և հայրենեացն վեսասպարաս : Իսկ որ զինուորի ճարտարախօսութէ , ոչ առ ՚ի հայթայթել զբօսանս հայրենեացն՝ ոյլ ՚ի պաշտպանել նմին , նա թուի ինձ այր աղողակ անձին և հասարակաց , և հաւասարիմ քաղաքացի :

Այսափ է սորսյս կենցաշօգտութէ . իսկ անձին իւրաքանչիւր օգուտ ՚ի սմանէ , զի սու բազմադէմ մարզութք հրահանդեալ զիմացութէն մորդկան զիասողին և զլողին՝ ՚ի գնարատիճան կատարելութէն մուտքերերէ : Մարզէ զիսուողն , զի ճգնի վայելուչ և համոզակեր ընծայել զբանս իւր առաջի բազմաժողով մարդկան՝ յորս գահագլուխ բազմեալ իցեն արք հմտուք ՚ի հանդէս դիսութէց , իշխանազունք , ևս և թագուորք . որոց վասն հաճցական և ազդոյ ընծայելոյ զբանս՝ պահանջի աշխատութէն բազում և հմտութէն բազմազոյն : Իսկ զլողն , զի ըստ յառաջբերութէն փաստից բազմեազրուագ ստենախօսութէն դատաւոր նստի յստենի խորհրդոց իւրոց՝ ընտրել և առնուլ զպիտանին յորոց լուաւն , և զանպիտանն ՚ի բաց հերթել : Բովանդակ ՚ի սոյն սահմանեալ կայ հռետորականին արհեստ և կանոնադրութէ :

Արդ ՚ի սահման ճարտասանութէն մատուցեալ ըստ որում սահմանի այժմ՝ ՚ի դպրոցս , և Արհետ բարստ իսուելու առ ՚ի համուշէ զանիտիրն : Արհեստ է , զի ըստքինաց ազատական արհեստից բովանդակի ընդ որաշեալ կանոնք՝ որք ուստուցանեն զզիարդն կարգաւոր դրութէ : Ազա ուրեմն հրահանդիչ է մարդոյ իսուելու բարստ . այս է բանաւոր փաստիւք , իմաստիցն յարմարութք և շքեղ ասացուածով : Յաւելու սահմանս զգործ և զնակատակ իրացգ՝ որ է համուշէ և յանիստանի զանիտիրն յառաջագիր կատարած բանից իւրոց : Այլ և այլ մատենագիրը զանազան սահմանս սովորեցին աւանդել . սակայն ամենայնն ՚ի մի յայս յանդի :

Եւ զի մեռնաս գոյի ճարտարանն ՚ի գլուխ հս-
նել զառաջի Եղեալն իւր գործ , հարկ է նմա ուսու-
ցանել զունկնդիրն , ամոքել և շարժել . զի քաջ առե-
նախօս այն է՝ որ ՚ի բեմբասացութե իւրում մարզի-
զմբաս ունենգրաց , ամոքէ և շարժե զիրաս : Արդ ա-
մենայն մասունք ճարտարանութե յայս ըերին , խնդրել
հարա մարզելոյ վնսաս նորանոր գիտելոք , ամոքել և
հաւանեցուցանել նոցա զՃշմարտութե ասացուածոց
իւրոց , և շարժել զնոսա ՚ի կատարութե ասացելոյն
վուեալ զկիրս նոցա : Կիկերոն բազում ուրեք առէ-
զուանել և տրամադրել զնիւթս ճառից՝ անկ է առն
հանճարեղի , խկ պերճարանելով կարգաւորել առե-
նախօսին պահի : Ազա գործ և նպատակ ամենայն
վաստակոց առենարանի է հաւանեցուցանել . այս է՝
ճոխարար հրապարակախօսութուն՝ ՚ի լաւն յօժարեցու-
ցանել . և զթիւրն խորչելի առնել . և զնկարագիրս
բնութե յամենայնի առաջի աշաց ունելով . անտի զըն-
տիրն օրինակել և զնել առաջի ունենգրաց իւրոց , զի
զիւրագոյն և հեշտինկալ է մարդոյ՝ բնականին հետեւ-
զութե : Սակայն եթէ ճարտարանութե և բանաստեզ-
ծութե Երկրորն ևս զնմանութե բնութե ունին կետ
նպատակի , խկ որով զանազանիցին ՚ի միմեանց : Անդ
այս ըռութե անցանել օրէն ոչ է :

Բանաստեզծութե օրինակէ ՚ի բնութե որ ինչ զե-
ղեցիկ է և զարդարուն , և զդեցուցանե նոցա պահու-
նանս՝ զոր սադրեն նմա երեակայութե և ներդաշնա-
կութե . խկ ճարտարանութե թէ պէտ և խկապէտ
անպահցա . այլ գազափարէ և նա զարհեստ նկարա-
զրին կարթելոյ զմելիս և զոգիս վառելոյ : Քանզի
յարդեանց իրացն ուսեալ՝ զի ճշմարտութե թէ պէտ
և ինընին հաստահիմն , այլ ոչ յաջողէ յամենայնի
՚ի թողուլ զարդարուի գատաստանի իւրոց ՚ի ձեռս ան-
հրահանգ և անվարժ մասաց՝ որ ոչն գիտիցէ ՚ի վար ար-
կանել զդարձուածո բանից և տնտեսել զիսոից կար-
դաւորութիւն , ակնարկեաց ՚ի վաստակո քաջ մատե-
նագրաց առաջնոց՝ որ քերթողք էին , մանր զնենեցց
զյօրինուած , զմասունս և զրովանգակութե նոցա .
և Եդիտ զՀոմերոս ոչ միայն նախահայր քերթողաց ,
այլ և վարժապետ ճարտարանութե և պատմութե և
բարոյականին , և որ այլ ևս ըստ նոցանէ : Զի նա ու-
սոյց չերտգոտոսի զհանգամանս պատմագրելոյ զարու-

թիւ գիւցազանց. խոկրտառեայ՝ պարանել՝ ի բանս իւը զողիս լողաց. Դիմումնենեայ և Եպինեայ զիստ. նուած երանցոց ՚ի նկարագրել, ՚ի շարժել, յօդնել և յուսուցանել: Աշակերտեցան սոքա վարժից Հոմերոսի, գաղափարեցին զբնութիւն ըստ որակս որակս՝ որպէս ինչ իւրաքանչիւր նոցա դործ յանձնին կալեալ էր: Այսպէս բանաստեղծութիւն ճանապարհ հորդեաց ճարտասանին, և ջահ առաջի վառեաց զօրինակս նմանութիւն. ընդ այս հետո ընթացան հյուսիսակ առենախօսք. և թէ ասել օրէն իցէ, բանաստեղծեցին ՚ի ճարտասանին. և քաջ բանաստեղծք ճարտասանեցին ՚ի քերթելն: Սոցա երկոցուն մի է ոկիզն, այլ զանազան նպատակն. բանաստեղծութիւն զուարժացուցանել և եթ ջանոյ. բայց և ուրեք ՚ի ներքս խառնել զուումն, զի այն խոկ երրեմն արագագոյն դիսդեցուցանէ զնա ՚ի նպատակն: Խոկ ճարտասանութիւն հրահանգել ջանայ. բայց և զուարժացուցանէ, անվրէս ճանապարհ համարեալ ՚ի համոզել՝ քաջցր գուով և համոզական: Բանաստեղծութիւն ձեռն արկանէ յամենայն որպէս զի հասցէ ՚ի դիսաւորութիւն իւը. զի թէ ճշմարիտ իցէ, թէ սուտ, ստեղծուած, պատմութիւն, հրաշալիք, բնականիք, հնարաւորք, անհնարինիք, զրովորն անխոտիր հաւաքէ, աշխոյժք մատցն վառեն զնա. կառուցանէ ամբարտակ, թէ ավելա վազավուլ: Ճարտարիսուութիւն՝ միշտ ծանր է, յամենայնի բարեշափ, բանն է ուղղիչ նորա, և բնաւ զիսոհականին առաջնորդութիւնամբ ու զանցանէ: Այս են իրաւունք և սահմանիք երկոցունցն պետութէ. երկոքին ևս ծաւալին ընդ ոլորտս համատարած բնունս. այլ ՚ի միունն ճշմարտութիւն տանի զգաւազանն, և յերկողդունն եռանդն ոգւոց:

Ե գարձեալ նկատել զճարտասանութիւն աղջակից տրամարանութիւն և քերականութիւն. զի տրամարանութիւն արհեստ է ուղիղ խորհելոյ, խոկ ճարտասանութիւն, բարւոք խօսելոյ: Արդ ուղիղ խորհել է ճշդիւ շափել զիսորհուրդ մատցն. ուղիղ խօսել ըստ հարազատ նշանակուլ վարել զամենայն բառ. խոկ բարւոք խօսել է՝ ուսուցանել և հաւանեցուցանել զոր ինչ և կամիցի. ապա առանց ուղիղ խորհելոյ, և առանց ուղիղ խօսելոյ՝ չմարթի բարւոք խօսել զի պահանջի շափ ուղղութէ յիմաստա, և կանոն ուղղուել ՚ի բարբառն:

Աւոդ զի դարձեալ զկիկերտնին՝ ՚ի մէջ սուխց զբանս,
երկորումըք յարդարի ճարտարիւութին, բնութքը և
աշակերտութքը. բնութին սկսանի, և աշակերտութին
կտարարէ: Բնութին մէծապէս ստար լինի ճարտա-
ռանութեն, զի պարտ է մտաց և ոգւոյն երադաշտք
լինել, ՚ի խորհրդարաննելն սուր, ՚ի բացայայտութեն և
՚ի զարդս նոխ. ըստ յիշողութեն՝ հաստատուն և յեր-
կարտուն. յեռանդն կրից՝ արծարծուն և հրատապ:
Խոկ թէ ընդ խափանածով անկեալ իցէ բնութին, և
ցրտացեալ ՚ի վառմանէն, անօգուտ են ամենայն հրա-
հանդք. թէպէտ և չէ արժան ՚ի նահանջել բնութին՝
վհատութքը յետս կատել. քանզի բազում այն է՝ զի
վութաջան ինամք զօրացուցանեն զբնութին. և ան-
խոնջ տշիւտութին առաւել զօրանայ հրահանդէլ.
քան զըոկ անդործ կանոնադրուխ. վասն որոյ պարտ
է պինդ ունել զայն. և որչափ հպաւոր դացի այն ՚ի
նմանութին մատենագրաց քաջաց, այնչափ արի դործէ
զՃարտառաննն: (*)

Որ ինչ անկ է ճարտառաննն յատենարանութին,
գտանել նիւթս բանից, զգտեալսն կարդաւորել տրա-
մագրութք, զարամագրեալսն յարդարել պերճարա-
նօրէն, և զյարդարեալսն արտասանել. ըստ այնմ զա-
նազաննեն մասունս ճարտառանութեան վարժապետք
արհեատիս. այս է, Գիւտ, Տրամագրութիւն, Պեր-
ճախուսութիւն, Արտասանութին. թողլ և զՅիշողու-
թին՝ զոր ոմանք յաւելուն ՚ի կարդս մասանց ճարտա-
ռանութէ, թէպէտ և ոչ ամենեքին միաբան են ՚ի բաշ-
խումն և ՚ի կարդ այսոցիկ մասանց:

* Ճարտառաննն անուն ըստ յայնին նշանակելոյ լին՝
ճարտառանք առել. իմ պէրճարաննել: Ասի և Հանդո-
ւութի, առեւու ՚ի յայն բարեն Ուեօ. առել. պէրճարաննել:
Սահար ըստ յադունի նշանակեսնեն ՚ի դորոշական պատճենին ՚ի
դիմանց Հանդուրանի և Ճարտառաննենի, ըստ որս նայեա-
նալու առանձիւ մէտ և վայրէնախօսութի: Զի հանդուր նայ-
նակ զիարժադադուն առեւուխօսութի, որ Ճարտառանք զի-
նան ճարտառաննն յանին աւակէրտելոց, ճարդն զիստ
ըստ իւնուաց արհեստին: Ասի ճարտառան ՚ի որ ապէնակո-
ւէ և բէմբառաց լինի ՚ի սէլլու բազմութին՝ ըստ իւնուաց
զիստ առանձիւ ճարտառանննի: Հանդուր և վայրէնախօսութի: Ճար-
տառան է վայրէնախօսութի: Ուստ նեղէդ ՚ի հայրածն հայտնաւ-

Ըստ նիւթոյն՝ ըստ որոց հասանել առենախօսել, զանազանի ճարտասահութեն և 'ի հանդէսս - իսկ հանդէս նշանակել հրապարակեալ հարցաքննութիւն ՚ի տեսպիլ հանել զՃարտարութիւն բանիցն, իրը յատեան ածելով առենախօսին զհրահանգութիւն իւր առաջի բազմախումբ առենի՛ դիմամրցութիւն ընդ այլում ախտոյեանի, կամ բնիքնին առանձինն ըեմբասաց լինելով։ Ամենայն հանդիսական առենախօսութիւն՝ խնդիրք են որոշեալք, զորս ապացուցանել ջանայ ճարտասանն՝ ըստ կանոնաց ճարտասահութիւն։ (*)

Եշրակի է հանդէսն ճարտասանական։ կացրդական, բաղխոհական, առենական։ Կացրդականն թարդմանի տօնախմբական, կամ ժողովական։ զի ՚ի մէջ ժողովը գովի՛ կամ պարաւել զցործս ուրուք։ կամ զցործողն զլիսովին։ Նիւթ Են այսր հանդիսի։ ամենայն ճառք առենախօսեալք ՚ի կատարումն տօնից եկեղեցականաց կամ քաղաքականաց, ևս և յեղերական ախրութիւն, զորորինակ են ողբք և դամբանական ճառք։

Բաղխոհական են ամենայն զիմաննարա առենախօսութիւն կարգեալք ՚ի խելամուռութիւն ունկնդրաց՝ առ ՚ի զործել և հաւանել ընդ դործ բնէ, կամ ՚ի տարհամոցումն առ ՚ի հրաժարել ՚ի զործոցն վասն որոյ բանել, առաջի առնելով զիրացն վայելութիւն, զօգտակարութիւն, զհարկաւորութիւն, և որ ՚ի նոյն սակի Են։ կամ ընդ հակառակն՝ զյոռութեն ցուցանելով։ Առենական է ջատագովութիւն, կամ ընդ հակառակն՝ սոդիւտ և մեղադրութիւն զումեքէ, վասն արդարացուցանելոյ ՚ի յանցանաց, կամ պարաւորելոյ ՚ի վրէժ յանցանացն։

Դաստիարակութեան և հանդուրն, այլ մէտ ջանացած հասարակութեան դահնէ զանազանաւթիւն։

Ո՞ր մէտ սուլուկութեան հանդէս անուանելու շաբ նախնական մէտքաց մէրաց, Յայն և Լուսին Սեւ անուանեն, իշրացն իւրև դորանաւուուշ զարկեալ բեռնի մասից՝ ոչ շնորհած բաշնուդավին։ Այսինայն նիւր ճարտասահութեան մասն մանաւու որ յըշանիք լինի երիսց հայաստանաց մարդ ալուրանից՝ խնդիր անուանի։ Պրոյ զհանգաման և զբաժանան և այլ ևս իշրանք, անդեպաշտ իշրանք բար յէր։

ջանալով շարժել զդատաւորն ՚ի վարձ կամ՝ ՚ի պատռւհաս, և յուղել զիերս ՚ի գլխութիւն կամ՝ ՚ի ցասումն :

Կարդ, զոր ընտրելի թուեցաւ ունել մեղ յայսմաշխատասախութես, թերեւս նորօրինակ երևեսցի ոմանց՝ ստար ՚ի սպարականէն, իրր զհակառակն ընթանալ զուղի : Այլ որպէս ընտրեալ կալան բազումք ՚ի քաջարժապետաց, և որչափ ես ինքնին ՚ի փորձոյ քննեցի զիրսդ, դիւրաւ յաջողէ ուսաննողաց՝ նախ մարդիլ ՚ի յստակ դրութիւն և ՚ի պերճախօսութիւն, զի առցեն ըղճաշտկ վաստակոց իւրեանց, և ՚ի զարդս անդ և ՚ի ձեւակերպեալ յօրինուածս զուարճասցին՝ ընտրելով զպիտանին յանպիտանեաց, և ասպա մոցեն ՚ի կանոնս տրամադրութեն և շտեմարանաց նիւթոցն զի մի՛ այն առաջին ուին ցամաքուի տաղուկացուսցէ զնոսա : Զի թէպէտ ունին ասել ոմանք, թէ որպէս առանց զտեղիսն դիսելոյ, և նիւթս ունելոյ ՚ի ձեռին, զզարդս ճարտասանութեն ՚ի գործ արկանիցեն . բայց այս հաւաստի է, թէ շարժիչ համբակաց զառաջինն անդ յաւէտ զարդքն են քան զհամատառն կերակուրս . զի ՚ի մանունս անդ և ՚ի զարդս խնդամանեալ նոցա, ասպա յօժարժութք աշխատին ՚ի մասդրութիւն կարեորացն : Ա ասն որոյ զայս շաւիդ կալեալ, յերրեակ մասունս տրոհեցաք զճարտասանութիւն . յառաջնումն աւանդեմք զՊերճախօսութիւն . յերկրորդումն զՏրամադրութիւն, յորում դասաւորեմք զԴիւտան և զամենայն բաժանմունս Երից հանդիսիցն . յերրորդումն զԱրտասանութիւն . որովք բովանդակին կանոնք և ամենայն դիտելիք ճարտասանութեն :

ՄԱՍԻՆ ԱՌՈՅՆԻՆ

ՑԱՂԱԳԱ

ՊԵՐ Ճ ԱԽ Օ Ս Ո Ւ Թ Ե Ա Ն

ՊԵՐՃԱԽՕՍՈՒԹԻՒՆ է այն մասն ճարտասա-
նութե, որ ուսուցանէ զպատշաճական եղանակն ար-
տայայտելոյ պատկանաւոր բառիւք զնորհուրդս մտաց,
և զիրսն զորոց բանիք են : (*) Այսպէս սահմանէ զայս
կիկերոն . Պատկանաւոր բանից և զորոցաց բարեկարդ-
յարմարուի : Սէ վական է այսր մասին ճարտասանուե-
ուսուցանէլ զշքեղ զոզորի և զճախարակեալ դարձ-
ուածո բանից . յորում որչափ առաւելու ակերծուին .
նոյնչափ և առընթեր դասաւորին ըստ իւրաքանչիւր
պէտս կարեւոր կանոնիք անհրաժարելիք 'ի ճարտասա-
նուէ . վասն որոյ իրաւունիք են զառաջին տեղին գրա-
ւել սմա :

Զարդս պէրճախօսուէ անուաննեն ճարտասանիք զօ-
րինակս և զտարազս զրոցաց՝ որք ախորժելի ընծայեն
զբանն , ազդոյ և համոզակեր : Ճարտասանն ոչ խօսի
առ արտայայտել և եթ զնորհուրդս մտացն . զի առ
այս շատ է ասել զիրսն դիւրիմաց բանիւք . այլ որպէս
և այլուր ասացաւ, որովհետեւ նպատակ ունի համո-
զել և շարժել, վասն այնր խնդրէ թափ անցաննել 'ի
միտս և 'ի սիրտս լսողաց . զօր ոչ կարէ կատարել՝ ա-
ռանց բարբառելոյ զնորին յանկաւորն , այն խոկ են
փոխակերպութեր և ձեք : Զի երեակայութիւն և խոր-
հուրդք՝ զցալեօք շարժին , և ընդ այնս հաճին , և այն
հաճութիւն սատար լինի հաւանականութեան . քանզի
ունկնդիրն դիւրաւ իրրե ճշմարիտ ընդունի՝ զոր հա-
ճոյական դասի : Աշրդ չէ բաւական լոկ բացայայտու-
թիւն բանին , և ոչ հաստատութիւն բանաւոր փաստիցն ,

* Յն Եսթրաձիա — լո, Elocutio. Հին ճաշգառանու-
թին զայս մասն ճախարժանաւթիւն անուանէ . այլ մէջ այսպէս
անուաննէ Շիդալադայն Բանեցաւ :

այլ պերճախոսութեն մեծութիւն և շուք համանգամայն կատարեն զփափագումն մասց և զերեակերպութեն : Զի՞նա առաջի գնէ մասց զջշմարտութիւն և զհատու տութիւն բանիցն և զսպացուցից . զուարձացուցանէն և զերեակերպութիւն՝ գեղեցիկութեր ասացուածացն , և ուժգնութեր՝ որ նման սեփական է : Ցորչափ պարզա պէս յառաջ բերէ զրանս իւր ատենախօսն , թողու զւտողն ցուրտ և հանգարտ , և զզարթուցանէն 'ի նմա զարմանս և սքանչացումն , զոր ազգէ ըստ վիկերնի՝ յարդարուն ատենախօսութիւն Տոխացեալ ըստ ամենայն քաջութեանց պերճաբանութեան : Եւ այն զի տնկակից տեսանեմք 'ի բնութես յօժարութիւն ոչ միայն առ բարին և Տշմարիտն , այլ և առ գեղեցիկն . զի որ զինչ և մատուսցի յաւս մեր՝ ոչ հաճիսք մինչք նշմարեալ 'ի նմա զուգաշափութիւն գեղեցիկութեն : Կա աւանիկ կարգն և պահոյման արտադին՝ հաճոյական առնեն մեզ զիրան վասն որ 'ի նմա գեղոյն , քան բար ոյն և Տշմարտին : 'ի բազումն 'ի Տառից , մանաւանդ 'ի կացրդականս՝ որոյ գործ է հաճել զունկնդիրս և բերկրեցուցանել , օրէն և պարտք են 'ի մեջ մատուցանել զամենայն Տոխութիւն արհեստին . իմացուածս Տարտարահնարս , տպառ որութիւն ազդողականս , ձևս հաճոյականս , փոխակերպութիւն արծարծունոս . և համառօափէ՝ զայն ամենայն , որ ինչ մեծութեր և Տարտարութիւնք են արհեստին՝ հարկ է ատենախօսին ոչ . միայն երեեցուցանել անդ , այլ և հրաշալի օրինակա դասակարգել՝ 'ի լուռն ակնկալուն ունկնդրաց խմբելոց 'ի լուր գեղեցիկ ասացուածոց :

Առ այս՝ Երրեակ հանգամանս պահանջնեն վարժապետք այսր գարութեն . առաջին՝ Վայելլարանութիւնն , որով իմանամք զուղիղ ընարութիւն բառից . Երկրորդ՝ Շարակարգութիւնն , որ է Տարտարագութեստ գասաւորութիւն բառիցն ընարելոց . Երրորդ՝ Ըքեզութիւն , որ է բազմացեղանակ Տոխութիւն փոխակերպութեց և ձեռց՝ սակա ամրութելոց և բերկրեցուցանելոյ և շարժելոյ . որովք կտառարի արհեստին Տարտարասանութեն :

Յաղագ Հայելսբանութիւն : (*)

Ա ՍՅԵԼՉԱԲԱՆՈՒԹԻՒՆ, և յօրինել դրանն ընտիր ընտիր բառիւք, հեռի ՚ի ռամկական և ՚ի խաթարեալ օտարաձայն բառից, պատկանաւոր ՚ի բացատրութիւն առաջադրեալ ինսցուածոյն, և ըստ տանելոյ ըսելեացն բաւականութիւն : Անհրաժարելի պարագ Են ՚ի վայելութե բանին քաջ զնելով զընարութիւն բառից, թէ առանձինն քննելով զնոսին ըստ նշանակութեն և ըստ ձայնին քաղցրութիւն, և թէ վասն այլոյ յարակից բառի՝ որ մակադրական իցէ առ գոյական անուանը, կամ մակրայ առ բայիւ . միտ դնելով յընտրութիւն զուգադիր բառից առնուլ զպասուականն և զի կիր արկեալն յականաւոր մատենագրաց բնիկ բարբառոյս : Այս ոչ է յարհեան ապաստան, այլ ՚ի ներքին ընտրութիւն մասւոր ճաշակին, որ յաճախ վարժութիւնը քան մասց քաջութիւնը յաջողի :

Որպէս յայտ է՝ բան ՚ի բառից կազմի, և ամենայն բառք վարին ՚ի բանս յասուկ կամ փոխարերեալ նշանակութիւն: Յատուկք են՝ որք ըստ սովորութիւն իւրաքանչիւր բարբառոյ և ըստ հասարակաց գործածութիւն վարին ՚ի բան . իսկ փոխարերեալք Են որք կամ ՚ի հարկէ, կամ զարդուց աղադաւ, կամ ՚ի համառօտութիւն սակա կարգին ՚ի շարակարգութիւնոր նշանակութիւն . զորօրինակ ծիծազել՝ յատկապէս ասի վասն մարդոյ, իսկ փոխարերութիւնը ասի և վասն ծաղկազարդ դաշտի : Արդ վասն ըստութեան և ընտրութեան բառից պարտ է ՚ի միտ առնուլ զյետագայ կանոնագ :

Մախ՝ 1 իսկ իսելսմուկ ողջոյն կազմութիւն լեզուին, և ամենայն կանոնաց քերականութիւն . գիտել՝ որ եղանակ բացատրութեան ուղիղ իցէ, և որ վրիսպակ կամ գեղջկական . զի որ ոք զպատուվելով ՚ի կանոնաց՝ անոնք գատակարգեցէ զմասունս բանին, և ոչ մօտ դիցէ իւրաքանչիւր բայի զշամապատշաճ ինդիրին, վրիսպաց անդէն ընդդէմ կանոնաց լեզուին :

Երկրորդ՝ օգուշանալ յանորոշ և յերկգիմի նշա-

* ՅԱ. ԿՃԱՀԱՊԻԾՄԱ. Մ. Elegantia.

նակութելք բառից . քանզի են բաղում բառք՝ որ կրկնանակութիս ունին , զորս թէ ոչ ոչ քաջ որոշեցէ , և ոչ առջնթեր գիցէ զհամապատշաճ անտականն , օտարանայ ՚ի վայելըութել : Օրինակ իմն . Առեալ զսերմն սարդի՝ արկ ընդ երկիր : 'Ն սմին բառդ ստրդ զզեռունն արդեօք նշանակէ , թէ զծառն : առ որ առանց մերձ դնելոյ զմակադրականն որոշիչ , ոչ ինչ կարեմք իմանալ :

Երրորդ՝ յաճախ և մատիւր դեգերէլ յընթեր ցումն նախապատիւ մատենագրաց իւրաքանչիւր լէ . զուի , զի որպէս ասայն Կիկերոն . * Ամենայն վայել չութելք բանից թէպէտ և ողորկի գրոց գիտութբ , այլ առաւելու ընթերցմանը ատենապանից և քերթողաց , զի որք միանդամ քաղցրացին ՚ի բանա նոցա , այնուհետեւ թէպէտ և կամիցին՝ ոչ է մարթ նոցա խօսել այլ ազգ՝ բայց եթէ լատիներէն . (գու իմա՞ հայերէն) ՅԱ սրբագիտ գ : Յոր յաւել ասել ոմն . յայնժամ ընտիր են ամենայն եղանակք և ոճք բանից , յորժամ յենուցուն ՚ի վկայութել նախապատիւ մատենագրաց : Զայս գիտելով . ՚ի հայկաբանութել և եթ հին մատենագրաց մերոց կրթելոյ պէտք են մերազնեայց , քան յայս և յայն յաշխարհիկ և ՚ի գաւառական բարբառ ժամավաճառ լինել . որոց ոչ կանոնիք գոն , և ոչ օրինակը մատենագրութել . զի այն ոչ այլ ինչ է՝ բայց թէ ջանալ ՚ի գերեւ հանել զվաստակս նախնեաց , որք ճգնեցան պայծառացուցանել զհայրենասուր բարբառն . և ընդ հակառակս նոցա նոր և ըստ քմաց լեզու ստեղծանել :

Չորրորդ՝ ընտրութելք բառից , որ և այս դարձեալ յաճախ ընթերցանութբ քաջաց և վաղեմի մատենագրաց հայկաբանից յաջողի :

Թէրութելի համբակաց յընտրութելք բառից յառաջ յերից ասամի . նախ՝ զի բառքն նշանակեն ոչ զայն զոր գրողն կամիցի ազգել , այլ զոր նման է նմին կամ ազգակից . Երկրորդ՝ ուր պակաս նշանակեն , և ոչ որչափ գրողն կամիցի իմացուցանել . Երրորդ՝ Երրառաւել նշանակեն քան զոր կամիցին . զի յայնժամ բաց ՚ի հարկաւոր իմաստիցն՝ ձգեալ տատանին միոք և յաւելորդ իմաստա , որ ոչ են անկաւոր առաջիկայ բանին :

ԳԼ. Բ.

Յ-Ղ-Դ-Հ- Ը-Ր-Ա-Խ-Ր-Դ-Ա-Խ- :

Ե Ե Տ պատկանաւոր ընտրուել բառից որովք զայել
շարանութին յօրինի, երկրորդն է շարակարգութի. (*)
որ եթէ ըստ օրինի յարդարեայի՝ ըստափայլէ և միա-
ւորէ ընդ իրեարա զամենայն մասունս բանիցն. յո-
րում պահանջի ամենազդաստ հարտարութի առ ՚ի
բացայաց ծանուցանել զիմաստան, և զբովանդակն
չղթայօրէն ՚ի միմանս աղխել. որով դիւրին լինիցի
հասանել նկատեալ կատարածին: Առ որ պահանջին
չորեքին այսորիկ բացայացառւթիւն, Սիութի, Ուժ-
գնութի և Կերդաշնակութի. զորս ՚ի մէն մի պղակս
աւանդեսցուք յառաջիկայդ:

ՊՐԱԿ. Ա.

Յ-Ղ-Դ-Հ- Բ-Ա-Շ-Ա-Խ-Ր-Դ-Ա-Խ- :

Ա Ա Յ Ա Յ Ա Յ Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն ՝ նախսկին պահանջեալն է
՚ի բանակարգուել. զի անօգուտ է շարագրածն ովզոյն,
Եթէ մթին իցէ կամ Երկրան. քանզի պարտ է դիւրի.
մաս լինել բանին այնոցիկ իսկ՝ որք ոչ միտ գնիցն,
բայ որում ծագէ արեգակն և յաջս նոցա՝ որք ՚ի նա
ոչ հայիցին. որպէս զի՞ ոչ միայն դիւրին լիցի առ ՚ի
խելամտութի, այլ և անհնարին առ ՚ի չիմանալ. առ-
րին աղագաւ արժան է զցոյշ կալ ամենեին յերկդի-
մութէ՝ որ խափան արկանէ խմաստից բանին: Ըստ
պատմելոյ կուինախիլխանոսի, այր ոմն ՚ի մեռանելն իւ-
րում աւանդեաց կտակաւ, կանդնել յանուն իւր
անդրի ոսկի նիզակ ՚ի ձեռնին: Այս կտակ իբրև խըն-
դիր դժուարիմաց մնաց ընդ դատաստանաւ, զի ար-
գեզք անդրին ողջոյն՝ թէ նիզակն միայն լիցի ոսկե-
զէն. զի բառոդ առի միօրինակ հայէր առ անդրին և
առ նիզակն. որ եթէ դրէր, ոսկի անդրի՝ նիզակ ՚ի ձե-
ռնին, և կամ անդրի՝ ունելով ՚ի ձեռին նիզակ ոսկի,

* ՅԱ. ΣΥΓΤΑΞΙΣ. Մ. Compositio.

բացայացաւ լինէր բանն, և ոչ մնայր երկմտութեան
տեղի :

Արդ վասն բացայացաւթե յետ սպահանջելոյ յու-
սանողաց զիթուլի հմտութի յամենայն մասունս քե-
րականութե, աւանդին յետագայ կանոնքոր :

Կախ, զայն բառո՞ որոց է յարաբերութի ընդ իր-
եարս, զորորինակ են ածական և գոյական, բայ և
ինդիր, մակրայ և բայ, մի յոյժ հեռացուցանել 'ի
միմեանց, և մի զմիջոցն այլովք օտար բառիւք ընուշ՝
որք յայլ հատուած պարբերութեն նայիցին . զի յայն-
ժամ 'ի բազում իմաստս ձգի բանն, և աշխատ առ-
նէ զմիտա քննողաց : Զոր օրինակ այս բան . * Յորժամ
կարօտութի և նուազութի անհնարին հասցէ 'ի վերայ
քաղաքաց՝ առաքինութե . տես զհեռաւ որութի յառ-
կացուցչին առաջնորդի, և յատկացելոյն նառաջնորդի,
զորս պարտ էր մօտ գնել միմեանց :

Երկրորդ, ինամով ուշ ունել դասաւորութեան
մակրայից : Քանզի մակրայից գործ է ծանուցանել
զհանգամանս յառաջընթաց կամ հետեւորդ բայից .
որք թէ ոչ մօտ դիցին բայից իւրեանց, ոչ կարեն ծա-
նուցանել զիլճակ գործողութեց նոցա : Զորօրինակ՝
յայսմ բանի . * Ճշմարիտ գիտութին արհամարհեալ
է 'ի տղիտաց միայն || . իմանայ ամենայն ընթերցող թէ
միայն տղեւոք արհամարհեն զդիտութիւն : Այլ թէ
զնիցես . * Ճշմարիտ գիտութին միայն արհամարհեալ
է 'ի տղիտաց || . և այլ իմն իմաստս բերէ . սյսինքն թէ
միայն Ճշմարիտ գիտութին արհամարհեալ է 'ի տղի-
տաց, և ոչ այլ ինչ : Ահա այսչափ իսանգարեաց զիլարդ
բանին լոկ մակրայն հայն . չդնելով զայն 'ի պատշաճա-
ւոր տեղւո՞ն :

Երրորդ, յարաբերական դերանունս ո՛չ և յարա-
բերելին զետեղեցին 'ի դիսան տեղւո՞լ . զի զբովան-
դակ կարդ բանին յայտ յանդիման ցուցանել պատ-
շաճ զուդագրութի յարաբերականին և յարաբերել-
ւոյն . իսկ այլազդ՝ անիմանալի առնել զիմաստն : Եթէ
ասիցէ ոք . * Բազումք առ սովորութեն ինայելոյ 'ի
ժամանակ և 'ի թուղթ զոր ստացան 'ի դպրոցս՝ այն-
պէս մանր գրեն, զի և ինքեանք գրովքն դժուարութե
ընթեռնուն || : Թուի 'ի բանիս թէ մարդիկն զորոց
բանքն են՝ ստացան 'ի դպրոցս ժամանակ և թուղթ,
և նոքա, սովորուի կալան մանր գրելոյ . և այլն : Ա-

կայն հարազատ խմացուածն սպարտի լինել այս . Բազումք առ սովորութեն՝ զոր ստացան 'ի գագրոցս՝ խնայելոյ ՚ի ժամանակն և . 'ի թուղթ , և այլն : Ահա աւսանես զի և . 'ի սմբն երկդիմութեն յառաջ դայ ՚ի խեղաթիւր դասաւորութել յարաբերականիդ որ :

Չորրորդ , մի յաջորդել զինի միմէտնց անուանն ՚ի հոլով սեռական , յորս բազում անգամ սպրդեն երկբանութիք : Որպէս եթէ ասիցէ ոք , Գիրք պատմուել Եղիշէի , խմանի՝ գիրք անցից անցելոց ընդ Եղիշէ , և ոչ թէ գրեալ յԵղիշեայ :

՚Ի վրա այսոցիկ և բուն պատճառ երկբանուե և անկատար բացատրուե է թերի և խառնագինդոր ըմբռունումն մոտաց իւրաքանչփեւր դրողի : Եթէ ուրեք պիտոյ լինիցի միտ դնել երկուց կմբ բազում իրաց համանդամայն , մահաւանդ ուր նմանք և մերձաւ որք իցն իրերաց . 'ի հարկէ տագնասպին միտք , և չկարեն զատաբար նկատել զմիոյ միոյ 'ի նոցանէ զհանգամանս : Եթէ մատուցի ինձ դազան իմն հրէշ նորաաեսիլ , ինդրեմ քննել զինա ուրոյն 'ի բաց զատուցեալ յամենայն աւելորդաց . որպէս զի մերկ և սոսկ քննելով , բովանդակութեն խելսումւալ լինիցիմ : Զնոյն է ասել և վասն բառից . զի եթէ առ արտայայտել զոր խորհիսդ՝ ասիցն ինձ աւելի քան զոր 'ի միտադ ունիս , և յաւելուցուս 'ի գլխաւոր նիւթ բանիցդ պարագայս օտարս , և տարապարտ այլսյէլով զբարեոք բացատրուիդ՝ խանդարես զդիսական տեղի տեսութեն իմոյ , մերթ զայս ցուցանելով ինձ , և մերթ այլընդայլը յաւելսւածովք յեղափոխեալ բուռն առնելով ինձ 'ի բազում իրս բաժանել զհայեցուածն իմ 'ի նմին ժամանակի , թերի զմասունան տեսանելով իմ , չկարացից և զրուորն տեսանել : Այսպէս վրիսկեն հետեակ մատենագիրք . որք խուռն կուտակեն նոյնանշան ձայնս՝ կարծելով որոշակի խմացուցանել , և այն զի առաւել ևս մթագնեն . քանզի ոչ ամենայնին հասու եղեն զոր ինչ ասելն կամէին . վասն որոյ 'ի բացատրութեանն ծուատեն զիմաստմն , և ոչինչ վճարեն : Պատկեր բանիցն զոր նօքայն նկարեն՝ երկդիմի է , և ոչ ցուցանէ որոշակի ըլդ դաղափարն : Զորօրինակ եթէ ոք ներբողէ զքաջութիւրոյ դիւցազինն ՚ի պատերազմի , որոշակի խմանամ զիրան . այլ թէ 'ի ներքս խառնեսցէ 'ի յաւելսւած բառիցն և զարիսութիւր կից ընդ քաջութեն , յայն-

Ժամ շվիթեմ զբանն . Նո զմին կարծէ բայցատրել ,
ես երկուս իմանամ . քանզի քաջութին ընդ վտանգին
կռուի , իսկ արիութի ընդ բնական կամ բարոյական
ցաւոցն , զորս պատմագրողն ոչ քաջ ուշ եղեալ՝ ընդ
մի համար գրեաց : Անհոգուի վերոյդքեալ կանոնացդ՝
՚ի վրիպակս յայսոսիկ ձգէ զբանարարն :

ՊՐԱԿ . Բ .

ՅԱՆԴԱՄԱՆԵ :

ՎԻՌԻԹԻԽՆՆ է՝ բերել զկարդ բանին ողջոյն զմիով
իւիք . որպէս դուռն որ զնովիմբք ծխնեօք շրջիցի :
Կարեռըագոյն է սա քան զառաջինն , և դիւրիչ լսողին .
քանզի միութի կազմածոյ պահանջի յամենայն բանա-
կարդութիս , որպէս զի կարասցէ իմաստա բարեկարգս
ընծայեցուցանել , և մի յայլ և այլ իրս տարբերելով
գժուարիմաց առնիցէ զբանն : Եւ զի որոշեալ նպա-
տակ ամենայն զրուցաց է յայտնի ցուցանել զիմաստ
բանին , թէպէտ և գուցեն առ նմին մասունք բազումք ,
պարտ է այնայէս կցորդել զնոսա ընդ իրեարս , որպէս
զի զմի միայն իմաստ տպաւորեսցեն ՚ի խորհուրդս , և
ոչ բազում . և այն ամենայն մասունք իրբե դործա-
կիցք ՚ի հասարակաց նպատակ ուղղեսցեն : Սոցին սակա
՚ի միտ առցես զյետագայ կանոնքս :

՚Սախ , մինչև ցկատարած պարբերութին և իմաս-
տից՝ մի փոխեսցի տեսարանն , այլ բովանդակն ՚ի նմին
տեղով և զնովին անձամբ յածիցի . մի երբէք լիցի
տարաժամ անցանել խօսովէ ՚ի խօսով , և նիւթոյ ՚ի
նիւթ : Եւ քանզի յամենայն բանակարդութիւնս գոյ
Ենթակայ իմն՝ յոր յանկի նիւթ բանին , պարտ է
միշտ ՚ի նա ուղղել զկարդ բանիցն . զորօրինակ եթէ ա-
սիցեմ . * * ՚ի հասանել մեր ՚ի նաւահանգիստ , արձա-
կեցին զիս նաւաստիքն ՚ի ցամաք , ուր ընկալայ ես
զողջոյն բարեկամաց իմոց , որը ցուցին ինձ մարդասի-
րութի || : ՚ի սմին թէպէտ և մասունքն ամենայն վեր
՚ի վերոյ շաղկապին ը իրեարս , այլ բազմադէմ կըրկ-
նութ բառիցդ՝ հէր . նասսսիդ . էս . որդ . անջառեալ և
կարեկատուն ցուցանէ զբանն . զոր թէ բացատրեսցես
ոյսայէս . * Հասեալ ՚ի նաւահանգիստ՝ ելի ՚ի ցամաք ,

ուր ընկալայ զովոյն բարեկամոց իմոց , և մարդասեր ընդունելութե դտի առ ՚ի նոցանէ || , յայնժամ ամենայն գործողութիւն նշանակեալք՝ վերածեն զառնելութե ՚ի մի և ՚ի նոյն տէր գործողութե , և միակ և անանջատ ընծայեն զիմաստն՝ դիւրին ՚ի խելամտութե :

Երկրորդ , չնառնել ՚ի մի զոյց իրս այլ և այլս՝ ողբ ընդ իրեարս ոչ կցորդին : Արիստակ կանոնիս տաղտկութե բերէ ընթերցողին . վասն զի առաւել ընտրելի էր զանազանաբար աւանդել զպատուցեալն քան խառնել ՚ի մի զամենայն , և ոչ զմիոյն իմաստ բացերեւ ընծայել : ՚Ի սոյն վրիստակ երեսի անկեալ Ղազար փարացցի ՚ի յառաջաբանին իւրում , անցանելով տարապարտ նիւթոյ ՚ի նիւթ . քանդի իշխատակեալ զիտատու բուզանդացի , և խնդրելով ազատ կոցուցանել զնա ՚ի մեզապարտութէ , միսի ՚ի պատմութիւն շնութե Բիւզանդիոյ , և երեւելոյ աստեղեայ խաչին առ Կոտանդիանոս . զոր ՚ի գլուխ հանեալ երկար բանիւ , և ՚ի կարդ բանիցն դարձ արարեալ . յիշխատակէ դիպուածով զմարժապետ իւր Ազան արծրունի . և անդէն վաղվարդակի թողեալ զիարդ բանին , սկսանի պատմել զվարա նորա՝ ՚ի մանկութենէ մինչև ՚ի վախճան : Այս ամենայն ծանրաբեռնութե է բանիցն և կարգի պատմութեն :

Երրորդ՝ զգուշանալ ՚ի միջանկեալ յաւելորդ բանից , ողբ թէպէտ ուրեք սաստարեն ՚ի բացայայտութի , և ուժգնուի ընծայեն բանին , եթէ բանն ինքնին պահանջնուցէ , այլ յոլով անգամ ամբոխեն , և իրրեւ անիւ ՚ի մէջ անուոյ ընդիսառնեն զկարդն : Զօրօրինակ . եթէ ուրուք կամեցեալ պատմել զճանապարհորդուի իւր ՚ի վան քաղաք , ասիցէ . * Հասի ՚ի քաղաքն վան զոր շինեաց Շամիրամ , որ էր դշխոյ ասորեստանեայց . այն որ ընդ հնդիկս մարտեաւ և պարտեցաւ : Մտեալ ՚ի քաղաքն տեսի զնորոգութիւս զոր արար Ապարաշակ արքայ եղբայր Արշակոյ՝ որ ՚ի զարմէ Պարթեաց || ևն : Զի՞նչ յարմարուի է ճանապարհիդ ընդ անցիցն Շամիրամայ , և Վաղարշակոյ : Աբդ այսպիսի զրոյցք խանդարեն զբանն և տաղտկալի առնեն լսողաց :

Չորրորդ՝ ամենայն զոյցք զմի ունիցին սկիզբն , ըզնոյն մէջ , և զնոյն վախճան . զի որ ինչ մի է , սկիզբն նորա և մէջն և կատարած մի և նոյն է : Ըստ այսի եթէ ՚ի կարգի բանիցն ասացի այն՝ որում մնայ ուն-

կընդիրն առ ՚ի լսել, անդ լրացեալ համարի զրոյցն . խակ յանկարծուատ անուեցի յաւելուածս ինչ առնել՝ արտաքրոյ է բանին, և երկփեղինչ իմացուածոցն . որով խանգարի կարգն, և զօրութիւն տկարանայ : Ար սպես թէ ոք գրիսցէ վասն գործոց կիմերոնի այսպէս . * Սոգիմիք քան զջառս Դիմութենեայ՝ առաւել իմն զրաղումն անձանց գտանեն ուշիմ պատանիք . քանզի միրաւի գեր ՚ի վերոյ անց զայլովք՝ գէթ իբրև առենախոս || : 'Ի ամին ինչնին գագարէ բանն ՚ի բառան գէ՛ ՚ի վերոյ անց զայլովք . խակ որ ինչ յետ այնը՝ ամենեւին առելորդ է, և պղտորիչ մատց :

ՊՐԱԿԱ • Գ .

Յ-Հ-Հ-Հ-Յ-Յ-Յ :

ՈՒՃԳՆՈՒԹԻՒՆՆ, իմանառիք զայն քաջայարմար դասաւորութիւն բառից և անդամոց պարբերութիւն, որ պատկանաւոր յօրինուածովն ազգեցութիւն տացէ բանին՝ ըստ առաջիկայ նիւթոյն պահանջելոյ :

՚Ի կանոնադրութիւն սորին յետ առաջի դնելոյ զնախագրեալմն վասն բացայայտութիւն և միութիւն, յաւել ցուք և զառաջիկայս :

՚Սախ՝ ՚ի բաց թօթափել զամենայն առելորդ բառս : Զի ամենայն ձայն՝ որ նոր ուժգնութիւն ոչ ընծայէ, ծանրաբեռն է և միասսակար . խափանէ, սաէ կուին տիլիանոս, որ ինչ ոչ օգնէ . զոր օրինակ այս բան . ՚ թագաւորն պերճացեալ զօրութիւն և փառօք՝ ՚ի մանուկ ՚ի կուսէն պարտեալ ամացէր . . ուժգին է և ազդոյ, քան եթէ ասիցեա . թագաւորն՝ որ պերճացեալ է՛ը ահաւոր զօրութիւն և մեծասազաս փառօք, ՚ի մանկահասակ կուսէն հռիփսիմեայ ՚ի պարտութիւն վատթարեալ՝ կորագլուիս ամաչէր : Ո՞վ ոչ նշմարէ ՚ի սոսին՝ զառաջնոյն թափանցանց տպաւորութիւն, և զերկրորդին դանդաղութիւն : Միայն թէ մի՛ ծայրացեղ խոտորեսցուք կարի յոյժ ամփոփել զբանն՝ իբր տերեւաթափ առնելով և ՚ի կարեորացն . զի չափաւոր լիութիւն բանից՝ քաղցր է ականջաց . և սաղարթաղցեաց կանաչութիւն շուրջ պատէ և պատսպարէ զպտուղն :

Երկրորդ՝ քաջ միտ դնել 'ի վարումն բաղկացաւ մասնկանց, շաղկասպաց և որոց 'ի նմին կարգի, որը օգնեն 'ի կցորդել զայլ և այլ մասունս ընդ միմեանս: Բառքդ՝ բայց և ուր իսկ և և թէ ապէտ կարեռը են և օժանդակ 'ի զօդուած բառից անդամոց, և ոյրն դադոյնս կապեն զբանն, սակայն 'ի չափաւորն է ընորհ վայելութեն: Յօրինուած նոցին և զուգադրութիւնն ընդ այլոց բառից՝ զանազան է և բազմօրինակ, և անհնարին է ընդ սահմանափակ կանոնօք պարունակել զայն: մասդրութք 'ի գիրս քաջ մասունագրաց առաել մարթ է ուսանել զհանդամանս բարուոք 'ի կիր սրկանելոյ զայնս:

Երրորդ՝ վերոտնել տակաւ զբանն, քանզի յամենայ նի հաճոյական դասի, հանդոյն բնութե՝ 'ի բարւոյ 'ի լուագդոյնն անցանել, և 'ի փոքրուէ 'ի մեծն, քան թէ յէտա ընդ կրունկն դառնայլ: Եւ ըստ կուննտիլիանոսի, զգուշանալ պարտ է՝ զի մի նուազեսցէ ճառն, և մի հզօրագունին տկարագոյն ինչ 'ի վերայ յաւելցի: որպէս եթէ 'ի յանցանս սեղանակասպոտւթեն յաւելցու զգողութին, որ փոքր է քան զառաջինն. և զստամբակութի առ աւաղակութի. այլ զհակառակն պարտ է սունել միշտ սաստկութի և եռանդն յաւելցով 'ի բանն: Առ այս բազում օրինակս ընծայէ կիկերոն: որպէս 'ի միլոնեան ճառին խօսելով զխորհրդոց կղոգիովի՝ որ դարանէր Պոմպէի, ասէ. " Եթէ էր ինչ գործ, կամ այր, կամ ժամանակ՝ արժանի նորոգ քննութեն, անշուշտ դիսուածն Պոմպէի էր: Դաւաճանն դարանեալ կայր 'ի հրապարակամիջի, ևս և 'ի վայրագաւիթու տաճարին խորհրդոյ, և այնպիսում առն մահ նիւթէր՝ զորոյ զկենացն կախեալ կայրին կեանք քաղաքին: և այս յայնմ ժամանակի պետութեն՝ յորում թէ նա միայն անկանէր, ոչ այս միայն քաղաք, այլ և աղջք ամենայն տապաշեալ կործանին: Որպէս և մերս Սարդիս 'ի կաթողիկեայց մեկնութեն ասէ զառագելոցն. " Ոչ միայն առաքեալք՝ այլ և սպասաւորք, այլ և ականատեսք բանին: և ոչ միայն ականատեսք՝ այլ և սիրելիք, և բարեկամք, և որդիք, և ժառանգք, և ժառանգակիցք":

Չորրորդ՝ ուր միանգամ յանդամն ինչ բանին ներհակութի խմասաից պիտոյ իցէ ցուցանել ըստ նմին պատշաճ է հակադրութի երևեցուցանել և 'ի նիւ-

թական կազմութեա բանին , որոց ձայնը նման իցեն , և նշանակուին ներհական . զի լսելիք զարթնուն նովա՝ իմանալ զդիտեալն ՚ի բանս անդ : Այսպէս ունի նարեկացին հակադրութիւն յիմաստս և ՚ի բառս . (ծէ) *

* Որպէս զվամբն գլմել՝ ոչ գրեցեր , և զաւազոյս փոքու սասանել՝ մի համարեացիս || . յորում ներհակութեա զոյ ընդ վէմ և ընդ աւազ . ընդ Պետրոս առաքեալ՝ և ընդ մարդ մեղաւոր : Այսպէս և ՚ի շարականի .

“ Կողահոս շիթք անապական արեանն՝ զկողածնին ընծեաց զմեզու ” :

“ Պարգեատուն ամենեցուն՝ այսօր խնդրի պարգես ՚ի Վլատոսու . և արկողն զլոյս որպէս զօթոց՝ հաւանի պատիլ ՚ի Յովակիայ ” :

“ Նման է այսմ շարականս այս ողջոյն :

Տկարացուցանել զբնթացս բանիցն վայրապար յաշխութեա բաղհիւսական շաղկապին և , կամ այսոց նմանեաց : Յօրինակ ՚ի մէջ առցուք ՚ի փարապեցոյն թէպէտ այսու ոչ կծանել ինչ յանդգնիմ զքաջ մատենագիրն , այլ զանվթեալ կանոնս դրաւոր յօրինուածոց՝ թերութիք քաջացն ցուցանեմ , առ ՚ի զդուշուոյն փոյթ համբակաց : * Եւ զօրավարն հայոց մամիկոննեան Վահան ... արամելք որպէս թէ հարիւրովք , և թերևս սակաւուք , և կամ յոլովիւք . և Միհրան այնշափ հազարօք առ նա բանակեալ էր մօտ . և ուղին ուր զօրավարն հայոց մամիկոննեան էր՝ յիշխանութեն պարսից թագաւորին էր || : Բազում անդամ առանց բաղհիւսական շաղկապիդ՝ ամփոփ , աղդոյ , և երագաշարժ ձեանայ բանն : Զափով պիտառութեա այսպիսի շաղկապից ՚ի խորենացոյն է ուսանել . որ ըմանդրապատում պարագայից յիշատակութէ՝ տակաւին հզօր և ուժգին բերէ զիմաստ բանին , և բազում ինչ բովանդակէ (բ . 43 .) Օրինակ իմ . Ա . Ժ .

“ Զայս իմացեալ աղեղնաւորին հայկայ , յառաջ վարէ զինքն , մօտ հասանէ յարբայն , լի քարշէ պինդ զլայնալիձն , դիպուցանէ զերեքթեանն կրծից տաիւտակին . և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր անկանի սլաքն :

Է ուրեք դարձեալ՝ զի խիտ առ խիտ կրկնութիւն շաղկապից բռնադատիչ ձեացուցանէ զբանն . օրինակ իմ . (հռովմ . ը . 38 .) * Համտատեալ եմ եթէ

ու մահ և ոչ կեանկը և ոչ հրեշտակը, և ոչ իշխանութիւնը, և ոչ որ կանս, և ոչ հանգերձեալքն, և ոչ զօրութիւնը, և ոչ բարձրութիւնը, և ոչ խորութիւնը կարեմեկնել զմեղ 'ի սիրոյ անտի Ա.Յ., որ 'ի քոյ յն 'ի տէրմեր || :

ՊՐԱԿԻ • Դ.

Յաշադաներականութեալ :

ԱԵՐԴԱԾՆԱԿՈՒԹԻՒՆՆ է քաղցրաձնիւն յօրինաւած բանից ազգեցեալ յականջս լսողին: Հնչիւն ձայնի թէ պէտ ոչ ինչ համարի առ դործողութք մտաց՝ որ յիմաստս բանին յառէ զաջս, սակայն և անտես առնել զայն չէ արժան. զի զորօրինակ հնչմամբ ձայնի խմանամբ զառ 'ի յայլոց խօսեցեալըն, նոյնպէս և սերտ մերձաւորութիւն նշանակեալ իրին ընդ հնչիւն անուան նորա և ընդ եզանակ արտասանութեն՝ դիւրագոյն տպաւորէ զբանն 'ի միտս: Քանզի 'ի խիտու և յահստվոր ձայնից յետա ընդգետմ զառնան միտք, և խորշին 'ի լսելոյ. զի ոչ մտանէ՝ ասէ կուբնտիլիանոս 'ի սիրոտ մարդոյ այն ինչ, որ յականջս անդ իբր 'ի դաւթիւն պատերազմով եղիցի:

Որ ինչ վասն ներգանդակութէ գիտելիք իցեն, յերկուս գլուխս բովանդակինն. առաջին՝ ընդհանուր քաղցրաձայնութիւն 'ի կարգ բանին ողջոյն. Երկրորդ՝ զհնչիւն բառից բազմաց համեմատ կարգել իրացն նշանակելոց: Զպատճառս սորա և զորպէսն 'ի նախաշաւիդ տեսութիւն մեր հատուցաք. աստ զկանոնս դործով կատարմանն մնայ մեղ տեսանել:

ԱՐԴ առաջինն յերկուց աստի, այս ինքն ընդհանուր քաղցրաձայնութիւն բանիցն ողջոյն՝ բարւոք է, և թէ կազմեսցի բարեխառնութիւնը մեղմ և ուժգին բառից, որոց առ հասարակ քաղցր իցէ հնչումն 'ի լսելու, և բարեչափ զուգախառնութիւնն ընդ ձայնաւորս և ընդ բաղաձայնս. քանզի և ընութեն քաղցր և անխռով ազգեցութիւն է՝ համապատշաճ և զուգաւոր բերել զայլեայլուի ձայնիցն. յոր որչափ մերձենամբ՝ այնչափ նմանող դտանիմք թէ լագրութէն ընութես: Առանց ձայնաւորաց՝ քաղաձայնիւք անտառացեալ

բառք՝ ծանրալուր են. և առանց բաղաձայնի յաճախութիւն ձայնաւորաց, բերանաբաց ձայնարձակութիւն. քանզի բառք դժուարինք առ. 'ի հնչումն՝ ծանր են և 'ի շտեղս. իսկ յերկոցուն զուգախառնութեն՝ քաղցր են ձայնաւորք, և ահաւոր՝ բաղաձայնք: 'Նոյնպէս և վասն երկարութեն բառիցն է իմանալ. բազմավանկք՝ ախորժալուր են քան զմիավանկս. մանաւանդ յորժամ զուգախառն իցեն երկարք և սուզք, որով ներդաշնակութիւն քաղցրանայ: 'Ի կատարաւմն ասացելոց՝ պարտ է նկատել զգասաւորութիւն բառից և զպարբերութեց: 'Ի բառան զգուշալի են սոքին:

'Սախ՝ մի՛ մօտ առ միմեանս զնել բազում բառ միավանկս՝ որ դժուարին է յարտաքերութիւն. զի յաւարտ մէն մի բառից 'ի կախ ունելով զձայնն, բրդդզել պատառառափ կարդ բանին:

Երկրորդ՝ մի՛ յարել 'ի միմեանս նմանաձայն բառս, մանաւանդ զառաւելեալսն ձայնաւորօք. զորօրինակ. Ահա հասեալ են արհաւիրք աւերածոյ: Փրկեցից և փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից և ցուցից նմա զփրկութիւն իմ:

Երրորդ՝ մի՛ գասակարդել կից միմեանց զբառս սուզս և դիւրագարձս՝ որ գահավիժել տան զբանն, և իմանալ ոչ ինչ. և ոչ գարձեալ զերկարս տողել առ միմեամբք՝ որք դանդաղուի տան կարգի բանին. այլ զուգախառնութիւն այսոցիկ ամենայնի հաճոյ է ականչաց, և դիւրին առ. 'ի միա առնուլ:

Իսկ առ. 'ի դասաւորել զպարբերութիւնս՝ պարտ է այնպէս բաշխել զանգամն նոցա, զի յաւարտ իւրաքանչիւրոցն սակաւ. մի հանգիստ տացի ձայնին, որով դիւր լիցի տուքեառութեն շնչոյ. և միանգամայն զուգախառնութեամբ. կատարածի առաջնոյ անդամոյն և սկսման երկրորդին պարտ է ներդաշնակել զհնչիւն ձայնին. այսինքն՝ զմին ձայնաւորաւ առնել, և զմիւնն բաղաձայնիւ. կամ զկատարած առաջնոյն և զսկիզբն երկրորդին այլ և այլ բաղաձայնիւք յօրինել, որպէս զի՝ մի կրկնութիւն ձայնաւորաց, բերանաբացութիւն, և վիշ դործեացէ 'ի ձայնն, և մի յերկակատկել բաղաձայնիցն խստացի հնչումնն: Իսկ աւարտ պարբերութեանն զլիսաւորեացի ընտիր և քաղցրալուր բառիւք. մանաւանդ թէ յետին անդամբն ողջոյն քաղցր յօրինեսցին ըստ բառիցն և ըստ իմաստից. զի որովհետեւ

ունկնդիրն յաւարտ պարբերութեն զյետին բառն գրեթէ անմոռաց 'ի մոխ պահէ , վասն այնր պարտ է ըղղուարձացուցին և զոդտակարն մատակարարել նմա : Պարբերութելք մի երկայն լիցին միօրինակ հետ զշետէ , և մի ամենայնն կարճ հաւասարաշափ , այլ ընդխառնեցին երկայնք ընդ համառօտա : « Այնպէս և եղանակք շարագրածոյ պարբերութեց մի լիցին յամենայ նի նմանք միմեանց , կամ միաձևութեք յետ և առաջ դասեալ , զի յերկարաձիգ միաձայնուին տաղակացուցին է և ձանձրալի . այլ պարտ է զմի մի 'ի պարբերութեցն ազգի ազգի յօրինուածովք ձեւացուցանել :

Չընդհանուր յօրինուած ներդաշնակութե ըստ ասացելոց ցայս վայր՝ ունիս տեսանել , զառաջիկայ օրինակսդ ընդ իրեարա համեմատեալ (Պիտոյիշ .) « Բայց բեր ազէ՝ փորձեացուք բանիւմ՝ և յարտաքինն նորա հայել մեծութի , զոյս շուրջ զիւրեւ 'ի բոլոր ազգացն հաւաքեսլ իւրումն համբարէր ազգի . առաւելապէս իմն կամեցեալ երեւցուցանել փառացիս առ բնաւ ազգօք , փոխանակ թշուառադոյն աղքատութեն : Եւ յայտ 'ի խորանին կազմութէն է , ոյք զանազան գեղեցիութեք յարուցեալ կանգնեցին նիւթովք պատրաստութեն՝ յայնմանէ 'ի նորայն մեծերից ստոյդ արդարեւ հրաշակերտ անծային կոչեցեալ խորանն « : (Եւլու) * Վասն գիւրութեն՝ որ գու հրամայեցեր մեզ առնել , եր մեր իշխանուի անդրէն յաշխարհին մերում՝ չանկանել մեզ 'ի ձեռս թագաւորիդ , որպէս և այլքն՝ որ ապրեցան յայսպիսի փորձանաց : Այլ որպէս կամօք և յօժարութե եկաք , իրեւ գիտացաք զվեշտ վտանգիս՝ ոչ ինչ զանգիտեցաք յայսպիսի հզանաց , սոյնապէս կամիմք զի այլ ևս ծանրացուացես 'ի վերայ մեր , մինչեւ քո չարութի կամացդ յագեսցի 'ի մեզ « : Զտարբերութե երկուց օրինակացս ըստ քաղցրաձայն բառիցն , և ըստ հանգստից անդամոց պարբերութեն՝ ինքնին աեսանէ մտադիր ընթերցողն . վասն որոյ ոչ է կարօտ բացատրութե :

Այսափ յաղագս քաղցրութե յօրինուածոյ առ հասարակ . յետ այսորիկ կայ մեզ աւանդել զերկրորդ դլուխ բանիցս մասնաւորաբար հառելով զցեղեցիութէ և զշնորհաց բանին , որ է համեմատութի հեշման բառիցն ընդ իրացն նշանակելոց : Վասն պատշաճապէս կատարելոյ զայս՝ պարտ է միտ գնել նիւ-

թոյ բանիցն . եթէ խմաստն յառաջ գալցէ 'ի շարժութէ կրից , կամ 'ի յուղեալ երեակայութէ , որպէս թէ իցեն բանք հիմացման , բարկութէ , տագնաալի , այնպիսի բառիւք պարտ է յօրինել զրանն , զի ոչ միայն նշանակութին՝ այլ և շարադասութին և դիւրացրնիկ կարդ բառիցն ցուցանել կարացեն զայն եռանդն ըշնութէ : Նոյնպէս եթէ մեղկաղէտ սրափ բանք իցեն , կամ աղերս , կամ տարակոյս , թոյլ և հանդարտ լցի դասաւորութի և ձայն բառիցն . այնպէս զի լոկ բացախօսութի ոյնպիսում շարագրութէ 'ի ձայնեն և եթ ծանուցէ զիսկութին իմաստիցն : Ամին հանդոյն ընդհանուր կանոն է , ըստ զօրութէ խմաստից բանին՝ յարմարել և զրառս շարամանուել . 'ի սաստիկս ուժդին , և 'ի մեղմ բանս թոյլ : Տես առ ոյս զճարտար յօրինուած Եղիշէի 'ի նկարագիր արիւնահեղ պատարագին Յեփթայեայ . կարգաւորութի բառիցն՝ ըստ աղողողում նիւթոյ պատմելեացն , տագնաալ յարարող գործոյն , և շարագրութին զարթուցիչ տագնաալի : « Փութացաւ Յեփթայի , և եհան զսուրն վաղվաղակի , կափոյց զալս մտացն յանտեսութին , մինչև աղիքն գալարեին 'ի գութ խանդաղատանայ , թէու սիրան 'ի բերանն էր , հարաւ սուրն 'ի փողս դատերն և կըտրեաց : Առ 'ի գոչիւն հեղման արեանն , և 'ի հանցիւն կոկորդին , և 'ի շարժութին բոլոր մարմնոյն , առ հասարակ ամենայն բաղմութին բոլոր մարդկանն միաբարբառ Ճշեցին , իբր թէ երկինք և երկիր ըստին զմուհ միամօրն .. . Որչափ կսկիծ և երկիւղ ահաւոր խառնէ աստ ըստ պատշաճի առաջիկայ նիւթոյն , նոյնչափ դարձեալ 'ի պատմութեան կանանցն երանելեաց ըստ ձեռնարկեալ նիւթոյն զուգայարմար ունի զկարգաւորութի բառիցն , քաղցրութի և կարեկցութի աղդելով յընթերցողս և 'ի լսողս , որպէս է տեսանել 'ի գիրս նորա :

Վասն զգալի ևս գործելոյ զներդաշնակութին՝ որպէս ասացաք , պարտ է առաւելապէս միտ գնել զի մեծամեծ գործողութիք ստորագրեոցին յայնին , կամ շարժամբն : 'ի ստորագրելն և 'ի պատմել զգործողութի ձայնին , լաւագոյն է այնպիսի բառ կարգել 'ի բանին , զի ձայն նորա հանդիսացի նշանակութէն . զորօրինակ , խոխոջել գետոյ , մռնչել առիւծու , թընդիւն ոտնաձայնի : Այս յօրինուած դիւրընկալ է և

սրարող, մեծապէս գեղեցկութիւն ընձեռէ բանիցն, չկարօտի բազում արհեստի, զի բազում այն է՝ ուր բառք ինքնին նման ունին զհնչումնն ընդ նշանակութեն, ըմելադրելոյ ամենաբուեստ բնութենս։ Որգոն. (բ. մ. ե. 3.) * Անդ էր լսել թնդիւն վահանաց, չկահիւն զաղեղանց, շողիւն սուսերաց, շառացիւն նետից ։ (յհ. ինչ.) ** ՚Ի տրոփական դոփմանէ ոտիցն թնդեալ տանիքն և ՚ի վայր վիրուզեալ ։

՚Ի բացատրութիւն շարժման՝ խնդրել արժան է, զի հնչիւն բառին և հոլովումն ձայնին ՚ի բերանն՝ ըստ արագութեն կամ ըստ դանդաղութեն, և կամ ըստ եղանակի շարժման՝ նման դացի շարժութեն պատմեալ երացն։ ՚Ի քաջութիւն քերթողին է այս ապաստան՝ պատրել զերևակայութիւն, և առաջի ընթերցողին իբրև ՚ի թատեր գործով կատարել զպատմեալն։ Զորօրինակ քերթողի ուրումն գաղղիացոյ՝ զակոսաձգութիւնին նկարագրելու այսպէս քերթողաբաննէ, թէպէտու ոչ զնոյն նմանաձայնութիւն կարեմ բերել ՚ի հայումն։

** Եղն ՚ի յոտին դանդաղ ՚ի քայլ.
Ըզնիստ ակօսըն պատառեալ ։

Տես զհանդարտութիւն հնչմանն, նոյնպէս և զնշանակելոյն։ Ահա և հակառակն։ * Զհասանելն, զանցանելն, զյարձակելն ՚ի վերայ՝ մի առներ ։ Յորում թուի թէ գործիցի պատմեալն։

Այսափ մանր զննութեք իիրաւի ոեփական Են սապաշափութեան. սակայն ոչ գոյզն ինչ օգնէ սա և նարտասանութեն։ Բնութիւն է մարդոյ՝ զուարձանալ յամենայնի ընդ թիւ և ընդ զուգաչափութիւն. զոր թէ խնդրեացես մուծանել և ՚ի յօրինուած լւզուի՝ շատ լիցի հետեւ բնութեն, քննել զայխոյժմ և զեռանդն բարբառոյ, հարցանել փորձել զսելիս. քանզի թէ և նիւթ խմաստիցն վոեմախո՞ իցէ, առանց զուգադրութեն բառիցն՝ զփափիկուի լսելեացն խայթէ։ Ուր չամին և հանդիսատ և աւտրտ թերի դացին ՚ի յօրինուածն, զգայ զիսանգարումնն։ Ուր աւելի և հոծ է, տաղտեկութեք զերեսս գարձուցաննէ։ Կամիցին խմանալ զաւութիւն յօրինուածոյն, և դիտել թէ նման իցէ թէ լսդրելոյն ՚ի բնութեննէ. այն է յորժամ զուգապէս զուարձասցի գիտունն և տգէտ, առաջինն ՚ի պատ-

Διαπομὴ βιβλωμούτεροվ, Ερկրορդն 'ի բերկրութի շարժելով: Յաղագս այսր ամենայնի կարեւորագոյն է աշտկերտելոցն ճարտասահնութել հպատակել 'ի ջանա յայսև 'ի քաղցրաձայնութել յօրինուածոյ: Քանզի բառք՝ Են իրը մոտ կակուզ, ասէ Կիկերոն, որ դիւրաւ զինիք տպաւորութեն ընդունին, և առ ամենայն յօրինուած ձեւոց են դիւրընկալ, որովք է ուրեք զի ահեղ ընթացիւք յառաջ խաղաց բանն, և ուրեք շոյտ սաղապի: մերթ ամբքէ զունկնդիրն, և մերթ ահիւ պակուցանէ:

ՊՐԱՎԻ. Ե.

Յ-Հ-Գ- Պ-Ր-Բ-Ե-Ր-Ա-Ց- :

ՈՐՈՎՀԵՏԵՒ ցայտվայր բազում ուրեք յիշատակեցաք զպարբերուի, կարեւոր է տւանդել աստ սուզ բանիւ՝ թէ զինչ է պարբերութի, որպէս ամենեցուն իսկ տվորուի է առնել որք աւանդեն զուսումն ճարտասահնութել:

Պարբերութի է բան լրացեալ, որոյ սկիզբն է և կատարած, և ընդարձակութի չափաւոր, առ 'ի բացատրել զիսորհեցեալ իմաստն բարիոք յօրինուածով և քաղցրութք: (*) Աստ որում տւանդէ Արիստոտել, նախնի իմաստասէրք և ատենաբանք կացեալք յառաջ քան զաւուրս նորս ընդարձակագոյնս յերկարեին 'ի բանս իւրեանց անդուլ և առանց իսորոց տալոյ բանին, մինչև 'ի վճար խօսիցն ողջոյն: Այս տազտկալի էր լսողաց, որք գժուարեին միտ գնել յերկարաձիգ զլուցացն, և զուեալսն 'ի միտս ամփոփել: Յաղագս այսորիիկ սահմանեցաւ պարբերութի և չափ 'ի խօսա: Թէ պարբերութին չունիցի ինչ հատուած, այն Պարհանուանի, զորօրինակ այս բան: * Մեք չեմք բաւական մերձենալ յամենեցունց պատճառն ||: Իսկ թէ ոչ միահետ ձգեսցի պարբերութի, այլ ուրեք ուրեք հանդիստ տացի, նշանագրեալ միջակետիւ, կոչի Բ-Ա-Ղ-Դ-

* Պ-Ր-Բ-Ե-Ր-Ա-Ց- : յն. περίσσος. լր. Periodus.

Ա-Ղ-Դ- : յն. κάλον. լր. membrum.

Հ-Դ- : յն. κόμμα. լր. incisum.

բեւ պարբերութիւնն ։ արդ այն մասն պարագրեալ ընդ մէջ երկուց միջակէտից՝ անուանի Առաք ։ և թէ դարձեալ Անդամն բաժանեսցի ՚ի մասունս՝ նշանագրեալ ստորակէտիւք, մէն մի այն մասունք՝ Հայոց անուանին :

Տես զվերլուծութիւնն համեմատ ասացելոցո յայս պարբերութիւն ՚ի գրոց Եղիշէի ։ * Գիտէք դուք ամենեւքն, հայոց է ։ յառաջ Ժամանակաւ հասեալ ձեր ՚ի գործ պատերազմի, թէպէտ և էր ձեր սովորութիւն՝ քահանայից հանապազորդէլ ՚ի մէջ բանակիս, Դարձեալ հայոց է յայս Հայր ։ ՚ի ժամ ճակատուցն յանձնեալ ձեզ ՚ի նոցանեւ աղօթիւք, յամուր տեղւով ուրեք թողութիւնոսա : ասդ կարուեցաւ մ անդան : Խակ այսօր եպիսկոպոսք և երիցունք և սարկաւագունք և դրակարգացք իւրաքանչփուր կարգաւ կանոնաւն, իրրե վառեալք զինու և պատրաստեալք ՚ի պատերազմ, հայոց մ ։ կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զիթընամիսն ճշմարտութե : ասդ լրացաւ երիբու անդան, և ողջ պարբերութիւն || :

Երկու ազգ Են բաղադրեալ պարբերութեց առաջնոցն յօրինուածն այնպէս իմն ՚ի կախ ունի զանդամնն առ միմեամբք, զի չէ հնար ՚ի միտ առնուլ զբովանդակ իմաստան՝ մինչեւ կատարեալ պարբերութեն : Յերկրորդումն թէպէտ անդամբն կցեալ Են յիրեարս շաղկալօք, այլ անկախ Են զմիմեանց, զի իւրաքանչփուր ունին զկատարեալ իմաստա : Առաջնունքն վարին ՚ի յառաջաբանս, յընդլայնմունս, ՚ի վերջաբանս և ուր պէտք իցեն ընդարձակ պերճախոսութե : Երկրորդքն վարին ՚ի պատմականս, ՚ի վարդապէտականս . մասնեն ուրեք և յառաջինսն, զի այլաձեռութեն ՚ի բացմերժեսցն զտաղակութիւն եթէ հանդիպեսցի : Առաջնոցն օրինակ . * Եթէ քաջն վարդան կասէր երբէք ՚ի մարտնչելոյ և ՚ի յաղթելոյ, եթէ ոչ գեր ՚ի վերոյ ամբառնայր քան զապայման մարդկեղէն ընութե, եթէ քաջութիւնորա և իմաստութիւն ոչ խրախուսէր անպարտելի հաւաստովքն և սիրով, յայնժամ զնա հաւասարէի ընդ Տիգրանայ և ընդ Վահագնի || : Այս քառանդամ պարբերութիւն է, և լրացաւ վերջին հատածովն : Զայն գարձեալ տրոհեսցուք ըստ այսմ օրինակի . * Քաջն վարդան ոչ ուրեք կասեցաւ ՚ի մարտնչելոյ և ՚ի յաղթելոյ : Գերիվերոյ ամբարձաւ

Նաքան զպայման մարդկեղէն բնութեն : Քաջութիւնը նորա և իմաստութիւն խրախուսէր անպարտելի հաւատովքն և սիրով . վասն այսր ամենայնի վեհագոյն դաւեմ զնա քան զժիգրան և քան զվահագն || :

Ընդհանուր կանոն է վարժապետաց ճարտասանութեն զի անդամք ՚ի պարբերութիւն մի լիցին նուազ քան զերկու , և մի առաւել քան զորա : Երկրորդ՝ զի ամենայն անդամքն հարկաւ կից դաշին յիրեարա , և մին ՚ի միւսն ակնարկեցէ , մինչև հասեալ ՚ի յետին հատածն՝ լրացի բանն , ոչ ինչ յաւելով և ոչ պակասելով : Երրորդ՝ զի որովհետեւ առ ՚ի բացարձել զանազան կիրա՝ երբեմն պահանջի արագութիւն և սղութիւն պարբերութեց , երբեմն թուլագոյն յօրինել , մերթ բազմարուեստ , և մերթ անզարդ՝ որպէս ինչ պէտք լինիցին առ ՚ի շարժել կամ ՚ի համոզէլ . նմին իրի հարկ է ուրեք զհատածն առաւելուլ , ուրեք զանդամն , և բազմում անդամն յերկարաձգել զպարբերութիւնն պլոտին : Տեսոցուք մի առ մի զերիս զայտոփիկ :

Զհատածն առաւելումք՝ երբ հարկ լինիցի ՚ի նեղ արկանել զհակառակորդն , կամ մեծ երևեցուցանել զիրն զորմէ բանք Են , խիտ առ խիտ յեղյեղելով զնաման բանս անկատարա : Զօրօրինակ յայս բան Լամբրոնացւոյն . Եւ արդ զինչ . խապառ մնացաք ՚ի նոյնն , և մինչև ցյաւիտեան անաւես եղեաք ՚ի տեառնէ . և դեռևս միսս պահէ մեղ բարձրեալն || :

Զանդամն յաճախեմք՝ առաւելապէս ՚ի պատմականս , երբ զանազան պարագայս , կամ գիպուածս ՚ի մէն մի անդամն պարունակեալս կարգեմք զինի միմեանց , որը թէպէտ զատարար տեսեալք՝ ուրոյն խմաստ պարտնակեն , այլ բովանդակն միանգամայն ՚ի մի նպատակ ուղղին : Այսու է ողջոյն պատմագրութիւն խորենացւոյն . յորմէ ածեմք զօրինակդ առաջիկայ . (Գ . 7 .) Երթեալ մանաճիհր հայոց հարաւային գնդառն և կիլիկեցւոց զօրօք զկողմանքը ասորեստանի , ճակատ տուեալ ը բակուր բգեշխի , սատակէ զնա և զզօրս նը . և զպարախկս օգնականս նմ՝ հալածականս առնէ , և զորդին բակրոյ զհեշայ ձերբակալ արարեալ հանդերձ երկաթի կապանօք առաքէ խոսրովու . և զգաւառս իշխանութեն նորա սրով դասի յանխնայ , ոչ միայն զմարտիկս՝ այլ և զռամփիկ շնչականս . և բազում գերիս առեալ ՚ի կողմանց Մծբնայ . ընդ

որս և սարկաւագունս ութ զմեծի և պիտի կոպոսին Յա-
կոբայ || :

Յերկարածքեմք զպարբերութն՝ Երբ կամիցիմք շար-
ժել զլողն, արհեստիւ և ճարտարութը կցելով յի-
րեարս զանդամն բազում, ոչ ուռուցիկ և դատարկ
յիմաստից, այլ վաեմ յօրինուածով, և պատարուն
խմաստիւք : Այսպէս 'ի դիրս Եղիշէի . " Մի սիրտ յօ-
ժարութեն Էր ամենեցուն արանց և կանանց, ծերոց և
տղայոց և ամենայն միաբանելոցն 'ի Քրիստոս . քանզի
առ հասարակ զմի զինուորութիւն զինուորեցան, և զմի
զրահ զբեցան դշաւատոց սպատուիրանին Քնի, և
միով գոտեաւ Ճշմարտութեն պնդեցին զմեջս արք և
կանայք : Ընկեցեալ կայր այնուհետեւ ոսկի, և ոչ ոք
առնոյր իւր առանձինն արծաթ, և արհամարհեալ ա-
ռանց ագահութեան, անարդեալ սպատուական հան-
դերձք առ 'ի զարդս մեծարանաց : Նաև իւրաքանչիւր
ումեք ստացուածք ոչինչ համարեին յաւս ստացողաց
իւրեանց : Տեսանեին զանձինս իւրեանց իրրեւ մեռեալ
գիակունս, և զիւրաքանչիւր գերեզմանս ինքեանք
փորեին . և կեանք իւրեանց 'ի մահ համարեալ էին, և
մահք իւրեանց անշուշտ կեանք .. :

Որպէս զի ըստ սպատշանի յօրինեսցի այս յերկարա-
ծիք պարբերութիւն, պարտ է նախ ՚ի միտ առնուլ հա-
մառօսիւ զիմաստսն՝ զոր բացատրել կամիցիս, և ապա
զարդարել զնոյնս հոյակասկ շքեղուք, և մանրիկ շաղ-
կապօք սերտ միացուցանել զանդամն ընդ իրեարս .
որով միաւորեսցի սկիզբն ընդ վախճանին : Միայն թէ
մի աւելորդ և անհամ բառիւք առաւելուցու բանն .
և ևս՝ զի ընդարձակուն բանին համեմատ լինիցի ընդ-
արձակուել իմաստիցն, որպէս զի երկուքն ևս համան-
դամայն վճարեսցին :

Յ-Ղ-Դ- Շ-Ի-Ա-Բ-Ա-Ն-Ե-Ց- Ե:

ԵՐԻՈՒԴԻ պայման Տարտարիսութեն է Տոխութեն . (*) այսինքն է մեծազարդ վայելացուցանել, և բազմադեմ կիսուածովք բանից բերկրեցուցանել զունկնդիրն: Ամա անկ են ամենայն նկարք և ծաղիկք պերՏախօսութեն, և աղդողական զրոյցք, որովք ատենախօսուն գրաւեալ զմիրտո ունկնդրաց, յանկուցանէ զնոսա ՚ի բանս իւր. ՚ի նոսին բովանդակի ամենայն զարդ և բաշմաթել հիւսուած շքեղութ բանից ատենախօսին, զորա գունակ գունակ զուգադրութ պատրաստեալ հանէ ՚ի հանդէս ըեմբասացութ իւրոյ: Երկու աղջք են զարդուց, Փոխակերպութիք և Զեք, (**) զորոց լիսադոյնս տացուք տեղեկութեն յառաջիկայդ, զի այն ինքն է իսկութիւն պերՏախօս բարբառոյ:

Փոխակերպութիք ՚ի վար արկետալք ՚ի խօսա՝ են զանազան եղանակք խօսելոյ, որք շատ կիմ սակաւ օտար երեխն ՚ի սովորական կարդէ խօսից. զի հանդամանն իմն յաւելեալ յիրն յանդիմանակաց և նորօրինակ տարադ, նորադոյն օրինակաւ բացատրեմք զայն, վասն ուժգնութիւն տալոյ բանիս մերում: Զորօրինակ յասել Յորայ. Անեսք առն ՚ի մարմնի իմում, . Աշու ասէ փոխանակ ասելոյ Կ-Դ-Դ- առն: Յորում տեսանես զի այլ ինչ հնչէ բառն, և այլ ինչ իմանան միտք:

Յերկուս տրոհեսցուք զբոխակերպութես, ՚ի բառս և յիմաստա: Զառաջինան սովորութիւն է՝ առ հասարակ փոխակերպութես անուանել, որ է ՚ի կիր արկանել զբառս օտար նշանակութք, որպէս զի ՚ի վոխել զայն բառս՝ փոխի և օրինակ բանին: Այսավէս ՚ի նախակարգեալ օրինակիդ. Անետք առն ՚ի մարմնի իմում, . Փոխակերպութիւն է ՚ի բառն Աշու. զի չէ եղեալ սեփական նշանակութքն, այլ փոխանակ ասելոյ՝ Երադ կիմ պատռհաս: Իսկ ՚ի վոխակերպութեն իմաստից ՚ի գործ ածին բառքն յատուկ նշանակութք. և արհեստն յի-

* Σεμνότης. լո. Dignitas.

** Φ-Ի-Ե-Ր-Պ-Ա-Ն-Ե-Ց- յ. Τρόπος. լո. Tropus.

Չ-Ն- յ. Σχήμα. լո. Figura.

մասսա անդ է, որ զիարդ և փոփոխեցի յետ և յառաջ տարութերելով, միշտ մեսոյ յիւրում նախկին նըշանակութե, այլ ամբողջ խմասաքն բաց ՚ի գրտ որեն յայլ միտս ակնարկեն. զորօրինակ. “Կառար ՚ի ալք հմտարար ընդ զբահեղեղ կռապաշտութիւնն” : Այս փոխակերպութիւն խմասաից է, որ յայլ խմաստ տանի զնշանակութե, թէ անըլաս անցիք ընդ հալածանս կռապաշտութե :

Չեք Են նորօրինակ բացարութիւն մի և նոյն բանի՝ բազմառեսակ դարձուածովք, որ այն ինքն է զարդ և պերճութիւն Տարտասանական : Ըստ որում տեսանես յառաջիկայ օրինակդ. “Անհնար է մեզ, որչափ և ըդհետ ձգիցիմք, լիով խելամուել աստուածային բնութե, այս առաջարկութիւն պարզ է. խեկ ձեւուոր է թէ ասիցես. “Բաւական ինչ իցես քոյով զօրութիւն հասու լինել Աստուածոյ, կապող իցես թափ անցանել մուգք ՚ի բնութե անմահին. ՚ի վեր է նա քան դերկինս, և դու զի՞ գործիցես. խոր է նա քան զանգունդս, խեկ դու յո՞ իշանիցես” : Այս ասացուած ըն խմասաիցն նոյն է ընդ առաջենյն, այլ զանազանի ըստ եղանակի բացարութեն, և յառաջքերութիւն զանազան պարագայիցն : Արդ ՚ի փոխակերպութիւնն աշխատին միաք տրամաբանելով իմանալ զի՞ ներքոյ եղելալսն և զթագուցեալսն ընդ բառիւքն այլայլովք. խեկ ՚ի ձես տրամաբանեն միտք, և աշխատ առնեն զերեակայութիւն, զի՞ ի բազմազարդ և նորակերպ բանի անդ որոշակի գոյցէ զիմաստն :

Որչափ ՚ի սոսին մանրախուզիւ երկայնամատէ և աշխատափիրէ Տարտարախոսն, այնչափ Տշդրիտ դաղափարէ զնկարագիր բնութե. քանիզի գժուարին՝ չասացից թէ անհնարին է՝ յօրինել բան կարդաւորեալ. և ոչ յայնս յաճախսակի վարել զդոսին. յորում իմաստափիրեմք արդ արագէս, թէ ձեք թելադրին ՚ի բնութե, և ոչ թէ հնարագիտութիւն է արուեստի : ՚ի բորբոքել երեւակայութ և ՚ի յուղել կրից, տեսանեմք և զարս ախմարս ՚ի յորձանս իմն ազդոյ և ուժին բացարութեց, որչափ ուր ուրեմն Տարտարէ գրիչ ներհուն առնենախօսի. և ահա այն խեկ Են ձեքն զորս խնդրեմք : Յայս ամենայն նայեցնալ քաջ վարժապետաց, կարեւոր վարկան զազգեցութիւն բնութե ուղղագոյն համառօտել ՚ի միտս աշակերտելոց, վերածեալ

զնոսին՝ ՚ի դասս դասս, որպէս զի պատշաճ կարգաւորութեալը ըստ իւրաքանչիւր պիտոյից յարդարեսցին կանոնիք Տաղբասանութեալը : Այսչափ ինչ յաղագս խկութեալ փոխակերպութեց և ձեռոց տեսցուք արդ և զգացանառն :

Յերկար քննեցաք ՚ի Նախաշաւիլ գրոցս թէ ՚ի սկզբնաւորել անդ մարդկացին բարբառոյ՝ սկսան մարդիկ անուանս մակադրել իրաց իրաց ըստ աղջելոյ պիտոյիցն : Այս անուանագրութեալ՝ զառաջինն յանձուկ տահմանի բովանդակէր ըստ սակաւասպէտ վիճակի կենաց առաջնոց, և ըստ նուազ թուոյ նոցա . այնուհետեւ ըստ չտփու բազմանալոյ մարդկան և առաւելլոյ ծանօթութեալնոցա, նովին համեմատութեալ առաւելան և բառքն նշանականիք իրացն և հանդամանացն : Սակայն և ոչ մին ՚ի լեզուաց, և թէ ՚ի հնոց և թէ ՚ի յեանոց, բաւական գտաւ զատարար անուանս կարգել ամի՞որոց հանդիսավեհն : Մանաւանդ թէ ընարելի դատեցան մարդիկ առ ՚ի թէթեաթեռնել զիթշողականութեալ, զմի բառ կամ զձայն նշանակիչ միոյ իրիք՝ յարմարել և ՚ի միւս այլ՝ վասն որ ՚ի նոսա նմանութենն կամ ընդակըցութեան՝ զոր նշմարեին անդէն : Վարժեալ այսպէս յանուանակոչութեալ իրաց նիւթականաց՝ որք ՚ի ձեռու գային նոցա, յետ այնորիկ իրրեւ հարկ լինէր նոցա անուանել զանմարմին էակս, կամ զաննիւթական իմացմունս, և առհասարակ զշոգեղէն կամ զմտաւոր գործողութիս, և պակասէր նոցա բառ յանկաւոր նշանական, խորհուրդ յանձնն կալան՝ քանզի և ոչ այլազդ ինչ աղդէր ՚ի նոսա հանձարեղ բնութեալ, զարտաքին գործողութեալց զանուանս ՚ի նոյն յարմարել զորօրինակ . Թափ անցանել ասի զինիւթականաց նոյն և դարձեալ զմտաց և զիսորհրդոյ՝ որ ընդ դժուարիմաց գիտելիս ուժդին յարձակիցի : Ելանել, կամ իջանել՝ միապէս ասի ՚ի վերայ արտաքին գործողութեալ ներքնոց : Այսպէս սովոր էմբէ ասել . գուռն տան, և դուռն խորհրդոց : Նմանակի իմաս և զայլսն ամենայն :

Երկրորդ պատճառ՝ աղջեցութեալ երեւակայութեալ : Ամենայն ինչ որ տպաւորի ՚ի մարդկեղէն հոգւոջ, և թէ նիւթական և թէ հոգեղէն, յարակից ունի և ըզ հանդամանս իւր, ընդ որս բաղում իրաց գաղափարք համանդամամայն ՚ի ներքս մտանեն, ունելով յառաջոյ

և զինի կցորդութիւն ընդ զանազան իրաւ։ Այս ընդակեցութիւն այլ և այլ իրաց բազում այն է՝ զի առաւելքան զբուն իրն յափշատիէ զմիտս, և 'ի բազումն հայեցուցանէ, յուշ առնելով նմա ղհանգիտութիւն կամ զանանուի՝ որ 'ի նոսին։ Արա յըմբռնել անդ համանգտանայն զբազում իրս յարակիցս ընդ բուն իրին, յանուն առաջնոցն անուանէ և զերկերորդան՝ զի նմանագոյնս դտանէ զնոսա. կամ անուամբ միոյ իրեք գլխաւոր յարակիցի նշանակէ զբովանդակն. և այնպէս մի ձայն՝ յայնմհետէ լինի բազմանշանակ, և տարածեալ ձգի 'ի վերաց իրաց բազմաց. որ թէպէտ լինքեանս այլասեռք 'ի միմեանց, այլ վասն նմանութեն երևելոյ 'ի նոսա, 'ի մի անուն անուանին։ Զորօրինակ՝ 'ի ճառել զմեծազօր պետութէ, թէպէտ ոչ պակասն յատուկ բառք 'ի բացարութիւն, այլ զյաջողողուածք բարձրանալոյ թագաւորութեն այնորիկ հանգիտացուցեալ տնկոյ բարգաւաճելոյ՝ որ 'ի գոյզն սերմանէ բուսեալ բարգաւաճէ, և ծաղկի 'ի գեղ և 'ի սպողաբերութիւն, ասեմք։ « Թագաւորութիւն հայոց բարգաւաճեալ ծաղկեցաւ յաւուրս Արտաշէսի։ Այսպէս դարձեալ. Առաջնորդ խոռովութեն ասել զայր ոք երկուականին, սեփական նշանակութիւն է. այլ զի տեսանեմք զգլուխն զնախապատիւ մասն մարդկային մարմնոյ՝ տնօրէն ամենայն կենդանական դործոց, ըստ այսի նմանութեն, ասեմք։ Վասակ դլուխ եղեւ երկպառակութեան աշխարհին հայոց։ Յայսմ հասարակաբար զննութէ զբովանդակն իմաստասիրես. զոր և այսպէս համառօտէ Կիկերոն. (Յշ. ադէնաբանի. Գ): « Եղանակ փոխակերպութեն բառից՝ ընդարձակ է. նախ հարկն ծնաւ զնա 'ի տոփակէլ կարօտութեն և անձկութ. յետ այնորիկ հրասպարակեաց ախորժն և քաղցրութիւն։ Զի որպէս հանգերձ հնարեցաւ զառաջինն ՚ի վանել զըրատութիւն, և ասկա սկիզբն եղեւ 'ի վար արկանել ՚ի սրբաւ զարգուց մարմնոյ և աւագութեն, այսպէս ծագումն փոխակերպութեն 'ի կարօտութեն սկիզբն կալաւ, և բերկութիւն յաճախեաց»։

Արդ զահ և զաւութիւն փոխակերպեալ և ձեւոր բանից ով ժխտեսցէ, որով առաւելան բառք և եղանակք խօսից առ 'ի լիով և 'ի բազմակերպ բացարութիւն իրաց մասաւորաց և աննիւթականաց, զոր ոչ արդէօք յաջողէք բացարել նշանակութիւն յատուկ

Հայնին իւրոյ, և առանց սատարութե ձեսց զի իբրու դեղագործ պատկեր նկարեն զիրն առաջի մտաց՝ միանց գամայն և աշաց: Որպէս թէ ասիցես. Աիրու եռաց եալ 'ի կրից բորբոքելոց՝ ծուխ 'ի գլուխն ծառացոցանէ, և մթագնէ զնա: Այս զուգադրութիւ զդալոյն և իմանալոյն՝ որչափ զուարձացուցանէ՝ նոյն չափ և բացայացտէ զիմաստ բանին, 'ի նիւթականէն 'ի մտաւորն անցանելով. յորում համանգամայն օդտէ մտաց և Երևակայութե:

Երրորդ՝ փոխակերպութիւն և ձեք պէրձութիւն յաւելուն 'ի բանն. քանզի յերկարաձգութիւն սովորական և ընտանի խօսից, պտրզախօս մանաւանդ թէ տկար Երևեցուցանէ ղբանն. այնոր աղագաւ ուր միանգամ հարկաւոր իցէ ահարկու կազմել զբանն, բազմօք սատար լինին ձեք որպէս շքեղազարդ հանդերձք իշխանի: Զորօրինակ զոյս բան պարզիմաց. Տեսանելով զբանս նամակի քո, անդէն առ նմին համարեցայ տեսանել և զքեզ զգրող բանիդ. տես զիարդ շքեղէ Ընորհալին փոխակերպութիւս. ' 'ի զդալի դիտաւորութիւն գրաւորական քում նամակին ընդ ծնեալս բանի, տեսի և զհայրդ բանիս .. : Կազմութիւն փոխակերպութիւն է. Զգալի աչօք տեսանելով զգրաւոր նամակ քո, ընդ բանիդ ծնելոյ և յառաջ եկելոյ 'ի քէն, իմանալի աչօքս այնպէս համարեցայ՝ իրրե թէ տեսի և զքեզ զյօրինող կամ զհայրդ բանիս: Այսպէս պրանշելի փոխակերպութիւն է և 'Սարեկացւոյն ասել վասն որրոյ կուսին Ընաշօք աբժանդ. զկուառութիւն նորա ծանուցանելով այսու գեղեցիկ նմանաբանութիւն:

Չորրորդ՝ համոյական է իմաստասէր մտաց՝ երկուս իրս համանգամայն նշմարել 'ի մի և 'ի նոյն բանի. այս է՝ զնիւթն առաջարկեալ զորմէ բանն է, և զպատահականն՝ յոր անցանէ դիտաւորուի բանին սակս զարդուց: Անդ զուարձանայ Երևակայութիւն՝ տեսանելով զնմանուի և զազդակցուի երկուց իրաց ընդ միմեանս, որ օտարը միրերաց դորով ընդ մի համար դասին վասն արդարացի, նմանութիւն: Որպէս թէ ոք փոխանակ ասէլոյ՝ Մանիսանի, ասիցէ Արշալոյս իւնաշ. անդ Երևակերպութիւն ընթանայ յածի քննէ զամենայն յարակից հանդամանս՝ որք նմանեցուցաննն զերկոսին, զարշալոյս ընդ մանկութե. միանգամայն և յածէ ընդ միտս իւր զշրջան մարդկային կենաց և զաւուրն հոլո-

վել, որով գտանէ զպատճառս նմանութեն որ 'ի նոսա, թէ 'ի սկզբանն զուարճալի է, 'ի հասաքակելն՝ աշախատ և հասունացուցիչ ըստ նմանութեն արեւու, և ամենայ նի բաւական. իսկ մօտ 'ի կատարածն՝ ակար և կթուց եալ 'ի զօրութեն: Տես ինձ զիարդ փոխակերպութեն ամենակերպ դարձուածովքն մեծապէս չքեղէ զրանն, քաջ խմացուցանէ զբովանգակն, և ազգուուի այց խօսից • զի բազում այն է՝ ուր ընտիր ընտիր փոխակերպութեք և ձեք պատկառեցուցանեն զսելիս, և չուք դնեն խօսողին:

Զայս ամենայն նախակարգեալ տեղեկութեալ ծանուցեալ համառօտիւ, արդ մատիցուք յօրէնս անդ և 'ի կանոնս փոխակերպութեց և ձեռց, որովք կազմի բարեյօդ Առխարանութեն:

ԴԼ. Դ.

Յ=Հ=Գ= Փ=Ե=Խ=Ե=Ղ=Ա=Լ=Ե= :

ՈՒՐՈՅՆ 'ի միմեանց աւանդեսցուք զիտիսակերպութես և զձես. զի փոխակերպութեք՝ որպէս ասացաք, այլ ինչ ասեն, և այլ ինչ ասն խմանալ. իսկ ձեք զնշանակուի գրելոցն անփոփոխ պահելով ուժութեալ իւիք, կամ դարձուածով, կամ կրիսք արտեյացանն զբանն, որով ազգեցութեն ներգործեն 'ի բանն ողջոյն: Դարձեալ և երկոքինդ բաժանին 'ի փոխակերպութես և 'ի ձես բառից և խմասաից. ըստ կարգին՝ զոր արդ աւանդեսցուք: Փոխակերպութեք բառից երեք են, փոխարերութեն, խելամտութեն, և Փոխանունութեն: (*)

Աշխատավել ու առնել զայս զանազան անդ դաշտական այլ յէտ հորա հանձարենին զայս հանդարեն անդ անդ իւնահարենին զիշտարենին մարդարանըն:

Յ-Հ-Դ- Փ-Խ-Ե-Շ-Ն-Ե- :

ՓՈԽՎԲԵՐՈՒԹԻՒՆ է փոխադրուել նշանակու-
թել միոյ յայլ՝ վասն նմանութեն կամ համեմատու-
թել : (*) Որպէս եթէ զջուր ոք կոչեցէ . Լշջ առաջի .
այս փոխաբերութիւն նմանական է . քանզի նմանութեն
ինչ է նշանարել ընդ ջուրն և ընդ սպասկին : Այսպէս
գարձեալ ասել լիձ լուսոյ, փոխանակ աշաց . զի նմա-
նութեն գոյ ընդ գոյ աշացն և ընդ լիճ . ի մին փայ-
լումն լուսասեսիլ, և 'ի միւսն ցոլացումն ջրոյ : Խակ
յասելն , Ո՞ւ չէին . այս փոխաբերութեն համեմատա-
կան է . զի չիք ինչ նմանութեն ընդ սպառուած լերին
և ընդ ունի մարդոյ, այլ համեմատութեն ևեթ , իբրև
ստորին մասն մարդմոյ : Ընդ յատուկ նմանութեն և ու
փոխաբերութեն այս է խոփր . զի նմանութեն միշտ ըլ-
քաղդատուին ունի իւր նպաստակ, որով ցուցցէ զծոյր
համեմատութեն երկոցուն . խակ փոխաբերութին յի-
րեարա տանելով զնշանակութին, նոյն կացուցանի , և
ոչ թէ նման , թէպէտ և յենու . ի նմանութեն : Զոր-
օրինակ եթէ ասիցէ ոք վասն մեծի ուրուք նախարարէ,
թէ Նա է խնամակալ ամենայն պետութեն , իբրև սիւն
որ բառնայ զծանրութեն տանն . այս նմանութեն է . խակ
Եթէ ասիցէ , թէ Նա է սիւն հաստատութեն ամենայն
պետութեն , այս փոխաբերութեն է . զի ոչ ևս բաղ-
դատէ , այլ իբրև այնպիսի համարի վասն վաստա-
կոցն :

Չորեքկին է փոխաբերութիւն . Առաջին՝ զգործո-
ղութեն սե վական միոյ կենդանւոյ փոխաբերել յայլ
կենդանի : (Յ-Հ- Խ- Դ-) .. Բացաւ պատրուակին , զեկու-
ցաւ մեզ մրմուումն և սպառնութին վայրագն դազա-
նին .. այսինքն Յուսպիայ ոստիկանի : (Ըար) . “Ազա-
յի քայլցրաբարբառ . հեղարանեալ զմէք Յիսուս .. .
աղաւնի խմա զառւրբ մահուեկն Կիւրակու : (Եղիշէ .)
“Նա վերաբերեմք ընդ քեզ ճամփանելով իբրև 'ի
բարձրաթռիւս եղեալ .. . այսինքն թռչելով ընդ քեզ
իբրև զժուացունս :

Եշրկրորդ՝ զյատկութի միոյ անշնչի փոխաբերել յայլ անշունչ . ուղղ թէ ասել . Անձրև արտասուաց , մառախուղ սրտմառուն : (Ամբոր .) "Արկցուք զնոսա ՚ի բովիւ Քրիստոսի , և նովաւ փորձեսցուք զբնարութիւնն , . արտինքն ՚ի Հշմարիտ քննութիւնն արկցուք : (Կար .) "Եթէ զիտականս շարժողութե շրմահց բայցից բըռնադատեցից խօսել կամեցեալ , . այսինքն՝ թէ բայց զըռութիւ բերանոյ :

Երրորդ՝ փոխադրել զյատկութի անշնչի ՚ի շնչառոն . որպէս յուղով ուրեք ՚ի Տարականս . , Աշխարհակիր բանին բազկաց եղեալ հիմունք սրբոյն Ալտնի . Երինք անշարժք , հովիտք ծաղկածինք :

" ՚ի բարեբուն հոգւոյն վտակք և որոտմունք տիեզերաց . ցորմունք հրեղենք , ասուղք լուսափայլք :

Չորրորդ՝ փոխադրել զգործու շնչառորի յանշունչ = որպէս թէ զծաղք՝ որ յատուկ է մարդոյ , տացէ ոք արտօրէից կամ խաղաղ ծովու : (Յահ . Առաջ .) "Այնուհետեւ շարութիւն զգալանի պատրուակն մերկացեալ , զումանս ՚ի պատուական աղատաց բազմախողիսող երկաթոյն տային կերակուր :

(Ըար .) "Տարածեցեր զամենազօր բազուկս քո ՚ի վերայ խացին , և երկիրս հիացեալ սասանեցաւ , և Դողալով երերիւր ՚ի յահէ փառաց քոց :

Այս չորրորդ տեսակ փոխաբերութե վերաբառնայ զիմաստա բանին , և հայի ՚ի ձեւ դիմառնուն , զոր յիւրում տեղունցն յերկար քննեցուք :

Բայց դիտելի է նախ , զի փոխաբերունք քաջայտրմարմար գտցին ընդ բնութե իրացն զորմէ բանիքն են , և մի լիցի զանցանել զազնուութե նորին , և մի ՚ի վայր արկանել զայն՝ անշուք փոխաբերութե . զի որպէս և թէ այս թագաւորացուն ցնցոտի գրդշեակս զանձամբ արկանիցէ , և գեղջուկն ծիրանիս զցեցի , երկրոբին իսկ արտաքոյ ընթանան վայելուշ սահմանին , այսպէս իման և վասն հանդահանաց փոխաբերութեանց : Եւ որովհետեւ փոխաբերութիք Են ՚ի շքեղութիւ բանից , և անպիտան է շուք տարրանդայման , ասպա ուրեմն անվայիլ է փոխաբերութիւ ՚ի պարզախօս տրամարանութեան , կամ յուսումնական վիճարանութիւս , զի արտաքոյ Են իրացն պայմանի : ՚ի բանս՝ ուր մնան ունենդիրք լսել զիտական և զբաժանումն նիւթոյն , անդ փոխաբերութիւ

՚ի մէջ առնուլ՝ տաղտկացուցիչ է լսելեաց, և մթաղ նիշ :

Երկրորդ, նմանութին որ հիմն է փոխարերութեացայստ լիցի. մի հեռի և դժուարիմաց: Զանցումն կանոնիս անոնք գործէ զիտիաբերութիւնն, և ծանր աշխատութիւն բերէ առ խմանալ զմիտան, փոխանակ գիւրելոյ ընթերցողին՝ յերկմիտա արկեալ զնա և վարանեցուցեալ: Զի այնորիկ ոչ թէ փոխաբերութիւնը էն, այլ եգիպտական խորհրդաւոր դրօշուածք՝ կարութ բաղմադէմ մեկնութեց, և սրատշաճեալք առ բազում իրս անխարութիւն: Ումանք սովորութիւն կալան յայսպիսիս՝ պատրուակ արկանել և քօղարկել զան հեթեթ նմանութին շաղկապիւք իմն՝ իշտ նէ, կամ նէ այսուհետ իշտ առէլ և նէ. և զայսպիսիս Պէտականի անուանեցին. որ ոչ թէ ՚ի պերճութիւն բանին հայի, այլ ՚ի պարզել զմթութին, և ՚ի գիւրել զիսրթնութիւն. թէպէտ և այն ևս ծանրացուցիչ է, և ոչ առ ՚ի զարդ:

Երրորդ, մի զուգախառնեցին ՚ի փոխաբերութիւն իմաստք ըս ճառին և առ ՚ի միտա, զկէսն փոխարերաբար ուալով իմանալ, և զկէսն ըստ գրոյն. զի այս շփութութիւն ՚ի ներքս արկանէ, և ցնդէ զընթերցանելեացն մասադրութ. զորորինակ ասել. գետ արատառաց իմոց կարճէ զթել կենացս. յորում ոչ ինչ համեմատութիւն և նմանութիւն նշմարի: Զայն խնամով ուատուիրէ կուինտիլիանոս. “Մեծապէս կարեոր է չանալ՝ զի յոր ազգ փոխագրութեց սկիզբն սրասցես, ՚ի նոյն և կատարեացես. այլ բաղումք ՚ի մրգկէ սկզբնաւորեալ ՚ի հրդեհ կամ ՚ի կործանումն աւարաեն, որ անտեղի և տարադէպէտ է..: Դարձեալ և մի խուռն կուտակեսցին փոխաբերութիւնը ՚ի վերայ մի և նոյն իրի, որ տատանէ զմիտս և տագնապէ:

Հաեմարան և աեղի փոխաբերութեց ընդարձակ է յոյժ. բնութին ովզօյն ածաստեղծ՝ անբաւութիւնը յան դիման առնէ զգանձս իւր, հաւաքել յամենայնէ ըստ պիտոյից նիւթ փոխաբերութեց ՚ի բացասրութիւն ամենայնի:

Յաշում ԽԵԼՄԻՔԱՆԻ :

ԽԵԼՄՏՏՈՒԹԻՒՆՆ է փոխակերպութիւն՝ յուրում մասն փոխանակ բոլորին դնի. իբր զի անուանելով զմասն մի և եթ՝ խմանամք զբոլորն. և ասելով զբոլորն՝ խմանամք զմի մասն միայն. յորում տրամաբանելով խելամումք թէ յինչ ակնարկէ բանն, և վասն ոյնը առացաւ խելամումքի : (*)

Չորեքին է խելամումքի. «Սախ» զբոլորն դնել փոխանակ մասին միոյ, և կամ զմասն փոխանակ բոլորին : Զորօրինակ (Եղիշ.) Միանդամայն ամենայն մարդնոյ էին պարծանք .. . այսինքն ամենայն մարդկան : (Ալիրդիլ.) «Պարթեն արբցէ զԱրարիս .. . փոխանակ ասելոյ, 'ի ջոյ Նկարիս գետոյն : (Գործոց.) «Ահա ոտքն՝ որք Ծաղկցին զայրն քո 'ի դրան, հանցեն և զքեզ, .. ուր ոտն փոխանակ մարդոյ դնի : (Յոհակիթ.) » Զեռն Խամայէլի սպառսպուռ առաւել քան զկար ՚ի վերայ մեր ծանրանայր .. . Ըստ այսմ կոչին դուռո՞ն՝ ապարանք մեծամեծաց և արքունիք :

Երկրորդ՝ դնել զնիւթն փոխանակ յօրինելցյն 'ի նիւթոյ անտի. զորօրինակ . «Այլ ես հող եմ և մոխիր .. . այսինքն եղեալ 'ի հողոյ : (Լամբը.) » Դիակ վանել արծաթն ծառայեցուցիչ որով խրոխտանան .. . այսինքն ինչք. որոյ ակնկալութի ծառայեցուցանէ զմարդիկ : (Յոհակիթ.) » Զոմանս 'ի սպառուական ազատաց բազմախողսող երկաթին տային կերակուր .. . այսինքն սրոյ :

Երրորդ՝ դնել զսեռն փոխանակ տեսակի, կամ ըլլմիաւորն փոխանակ բազմաւորի. զորօրինակ մահկանացուս ասելով կամ արարածս, խմանալ զմարդիկ և եթ ըստ այնմ. (Մարկ.) Երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք զաւեսարանն ամենայն արարածոց : Եւ գարձեալ. (Յոր.) » Ո՞ եթող զցիս՝ ազատացեալ, ով ելայծ զկասպանս նորա : Եդ 'ի նմա կապանս զառապարս, և բնակութի նմա զաղտաղտուկս : Ծաղը առնէ զբազմամբոխ քաղաքաց : Եթէ կա-

* Յն. ΣΥγέκδοχη. լո. Intellectio.

միցի քեզ միեղջերուն ծառայել, կամ հանդէլ առ
մսուր քո, կապիցե՞ս սամետիւք լուծ նմա,,,: Յեղա-
կանն վարելով՝ ՚ի սմին՝ ՚ի բազմաւորն ակնարկէ, և ՚ի
բոլոր տեսակ մենասնոցդ միշտակելոց:

Չորրորդ՝ ՚ի մէջ բերեալ զառաջնալսն՝ նո-
վին լուելեայն յուշ առնել զհետեորդսն, կամ ընդ
հակառակն՝ ՚ի հետեորդաց դուշակել զառաջնալսն:
Ըստ այսմ Ալիրդիլոս փոխանակ ասելոյ թէ արդ երե-
կոյ լինի, ասէ.

“ Նըդ ՚ի բացուստ ծըխեն շինից բարձըր կասարք,
Եւ մեծաստուեր նըսեմանան լերինք ըստուարք,,,: ”

Զի յորժամ Երեկոյ լինի հուր վտուն յամենայն
տունս վասն կերակրոց եփելոյ, և ծուխ հրոյն բարձ-
բանայ ՚ի տեսիլ: Կոյնալէս և ՚ի խոնարհէլ արեւուն ը-
երեկո՝ ստուելլք լերանցն Երկայնին:

Աշխալէս ՚ի վաղնջական երդս, զոր յառաջ բե-
րե Մագիստրոս, սոյնօրինակ բացատրի փափաքումն
Արտաշիսի Հայոց թագաւորի ՚ի զուարձութիս առա-
ւատին տեսարանաց ՚ի լերինս:

“ Բաղձայր մզոյ մրրկեալ ծխոյ՝ շամանդաղեալ մա-
կաւասար շինից և քաղաքաց. ո՛ տայր ինձ զծուխ
ծխանի ասեր, և զառաւօսն նաւասարդի. զվաղելն
եղանց, և զվադելն եղջեռուաց,,,: ”

Քանզի բազում անդամ յամառնային առաւօս շա-
մանդաղ իմն տեսանի սփռեալ ՚ի վերայ շինից և
քաղաքաց՝ յամենայն տունս կրակ առնեն վասն կե-
րակրոց, և ընդ բլուրս զուարձութի վազվաղէ երէ
վայրի:

Յատկարար վերջինս այս է խելամտութիւն զի ուր
նախակարգեալքդ ՚ի բառս և ՚ի փոխադրեալ նշանա-
կութիւնս նոցին կապեալ կան, սա յայլեայլ տեղիս
տարուբերեալ զմիտսն՝ անվրէպ հասանէ ՚ի դիտեալն:

**Խելամտութիւն դործ այս է առժամնն ՚ի կախ թո-
ղուլ զբանն՝ մինչեւ խելամտատ արացէ, և առաւել
ուժգնութիւն տացէ բանին՝ քան թէ յօրինէր պարզ և
յատակ բառիւք: Եւ պարտ է պատկանաւորել զեր-
եկուս բառան ընդ միմեանս, զի մի առ անպատշաճ
յարագրութեն՝ փոխանակ խելամտցուցանելոյ՝ ամ-
բովսեսցէ զմիտսն:**

ՊՐԵԿ. Գ.

Յառաջ Փակունականին :

ՓՈԽԱՆՈՒՍՈՒԹԻՒՆ է՝ ՚ի մերձաւոր բառից
տոնուլ զիմաստ նշանակութեն : (*) Իբր զի անուա-
նելով զիմն, զայլ ինչ զկցորդ նորին իմանալ. քանզի
յայնպիսի անուանափոխութիւն՝ երկու տպաւորութիք
համանգամացն լինին ՚ի մլուս՝ սակա այլանշան բառին,
և զտակաւորութիւն միոյն փոխադրեմք ՚ի միւս. այնոր
տղագաւ փոխանունութիւն անուանեցաւ : Զորօրինակ-
“ Սրտիւք իւրեանց զամբարտաւանս բարբառին .. .
սիրան ոչ բարբառի և ոչ իսկ խորհի, այլ զի սկիզբն
է կենսական շարժութեց, վասն այնը նմա վերադրի
և նախապատիւ գործողութիւ բնութես մերոյ : Փօ-
խանունութիւն տարբերի ՚ի փոխաբերութէ, զի նա ընդ-
նմանւոյ նոյնացուցանէ զիրան, իսկ սա ՚ի մերձաւոր
իրաց առնու փոխանակել՝ ոչ ըստ նմանութեն, այլ
ըստ մերձաւորութեն : Տարբերի և ՚ի խելամութէ .
զի ՚ի նմին մասն և բոլոր փոխադարձին . ՚ի սմին մեր-
ձաւորք և յարակիցք :

Չորեքին է փոխանունութիւ . Նախ զպատճառն
գնել փոխանակ գործոյն, կամ ընդ հակառակն՝ ըդ-
գործն փոխանակ պատճառի . զորօրինակ՝ երկիւով
գնել փոխանակ գործոյ նորա այսպէս . “ Տժգոյն եր-
կիւզիւ զդէմնն նկարեաց .. . որովհետեւ ՚ի սաստիկ
երկիւզին հատանի գոյն երեսաց : Եւ դարձել (Սազմ.)
“ Բարկութեն ան համբերից, զի մեղայ նմա .. . ուր
բարկութեն իմանի պատիւ կամ խրամ՝ որ զհետ գայ
բարկութեն : Դարձեալ զդործն գնել փոխանակ պատ-
ճառի, որպէս (Նախադր. փոքր մարդ :) .. . Եւ որպէս
զտիրութիւ գիշերոյ աստեղըք, և զյարայէլ բազմութեն
մարդարէիցն միմիթարէր .. . ուր ախրութիւ փոխանակ
մթան եղեալ է, զի մութն ածէ զտիրութիւ :

Երկրորդ՝ զպարունակողն փոխանակ պարունակե-
լոյն դերանուանել . որպէս ունի խորենացին յողբա-
իւր : “ Ազրամ զքեղ հայոց աշխարհ ու . իմա ոչ զաշ-

* ՅԱ. ՄԵԴԱՂՄԱՀ. լ. Denominatio.

իսարհն և զգետին, այլ զազդ Հայոց : Եւ ՚ի Մակարացէցիսն ասի զԱղեքսանդրէ մեծէն, թէ ս Սարսէր Երկիրս ամենայն առաջի նորա , . . այսինքն ազգք բընակեալք ՚ի վերայ ամենայն Երկրի : Եւ անառակ որդւոյն ասելով : “Մեզայ յերկինս և առաջի քո , . . Երկինք խմանի բնակեալն յերկինս ած , ընդդէմ որոյ մեղաւ :

Երրորդ՝ գնել զատացողն վոխանակ ստացուածոյն : Այսպէս Կիկերոն ընդդէմ Ակրիսի ասե : “ԶԱզողն յանդգնեցար դու աւար հարկանել , և ոչ զԴեզոս , . . այս է զապատ մեհենին Ապողոնի :

Չորրորդ՝ գնել զախտս կամ զառաքինութեա վոխանակ ախտաւորին , կամ առաքինուոյն : Չորօրինակ՝ (Իմաստ) “Յափշտակեցաւ , զի մի նենդուի պատրիցէ զանձն նորա , . . այսինքն զի մի նենդողք պատրեսցեն : “Մանկութեա վաղվարդակի վախճանեալ , . . վոխանակ ասելոյ՝ մանուկ վաղամեռիկ :

Ընդ սոքք բովանդակին և Փոխառութեա (*) , զմիոյ երիք հանդամանս յայլ ինչ վերագրելով . զորօրինակ . (Միմիթ դօշ .) “Գիշերադէմ գործ ես ՚ի բնաւից պարաւաւ իմ , . . այսինքն սևագէմ : Եւ (Լամբր.) “Որքան ՚ի սև և ՚ի մուը կեանիքս պանդխախմբ , . . այսինքն ՚ի խաւարային և ՚ի տիսուը կեանիքս : Այս մանաւանդ բանաստեղծից է :

ԳԼ: Ե.

Յ-Ղ-Գ- Փ-Խ-Ա-Շ-Ր-Ա-Բ-Ե- Ի-Ն-Ա-Գ-Ի-Յ :

Արգիւ Փոխակերպութեք բառից լինին վոխելով զնշանակութեա բառին , նոյնապէս և ՚ի վոխակերպութե խմաստից Փոխի նշանակութեա ամբողջ ասացուածոյ յայլ նշանակութեա . այս է՝ այլազդ իմանալքան զոր շարագրութին ցուցանէ : Ընդ սովաւ կարգին Այլաբանութեա , Հենդնութեա , Չափազանցութեա , և Շրջաբանութեա :

* ՅԱ. ՄԵՏԱԼՈՒՔԻ. ԱՅ. Participatio.

ՊՐԵՄԻ • Ա.

Յառագութեան Այլաբանական :

Վ. ՅԱԲԱՆՈՒԹԻՒԽՆ է յարատական փոխարեւութիւն . իմաս յերկար և մանուածոյ ասացուած փոխարեւեալ . որոյ բառիցն շարամանութիւն յօտար տեսութիւն ակնարկելով այլ ինչ ցուցանէ ՚ի վերին երես , և այլ ինչ նշանակէ ՚ի ներքոյ : (*) Զանազանութիւն որ ընդ այլաբանութիւն և ընդ փոխարերութիւն այս է . զի այլաբանութիւն երկայն է , և փոխարերութիւն սուզ :

Կանոնք այլաբանութիւն են նախ Պարզութիւն և բացայացութիւն . զի եթէ պարզ և դիւրիմաց յօրինեացի այլաբանութիւն , մեծապէս շքեղէ զիարդ բանին :

Երկրորդ՝ միշտ զնուին փոխարերութիւնը դալ , և ոչ զսկիզբն այլաղդ յարմարել և զկատարածն այլ . և մի ընդհատանել զդրաւորական իմաստն ընդ փոխարերականին , որպէս ՚ի վերոյ աւանդեցաւ :

Երրորդ՝ խնդրել յարմարութիւն ընդ առաջիկայի իրացն՝ ոչ ՚ի բացուստ ակնարկելով , և ոչ յանսպատշաճից :

Սալմոներդուն այդուոյ օրինակաւ այլաբանէ զանցս ժողովրդեանն իսրայէլի , և զԱՅ խնամակալուին առնոսա . (հԷ.) “ Ած զօրութեց դարձո զմեզ , երեւեցո զերեսք ՚ի մեզ և կեցցուք : ” Զայս այսպէս եղեալ ասպա սկիզբն լինի այլաբանութիւն , որոյ իմաստն ինքնին յայտ լինի ՚ի բացատրելն զմիանգամ կարգեալն : “ Այդի յԵգիալտուէ փոխեցեր , հաներ զհեթանոսս և զնոսա անկեցեր , և առաջնորդեցեր նմա . հաստատե-

* Յ. Ա'ԼԱԽՂՈՐԻՇ . լ. Permutatio.

Յառագութեան այլաբանական իշխանութեան է ին ՚ի իրաւունքանունքունք . զի որոյ մէս առաջարկելս իշխանութեան է ին , նոյն առաջարկին զայս այլաբանէլ ՚ի վերաբարդիւն՝ ՚ի գործուց մասնաւոյ իշխանութեան , և նոյն ՚ի իշխանութեան բարոյաւուն իրաւունք : Ընդ առվանդն բաշխութեան է ին դրաւունքու և դրաւունք . զորոյ վերաբարդիւն ՚ի կազմակերպութեան :

ցեր զարմատա նորա՝ և ելից զերկիր. ծածկեաց զերինս հովանի նորա, և բարունակ նորա զմայրա Այ: Զդեաց զորթ իւր մինչեւ ՚ի ծով. մինչեւ ՚ի գետս են շառաւիզք նորա: Ընդէր քակեցեր դցանդ նը. կթեն զնա անցաւորք ճանապարհի: Ապականեաց զնա խող անտառի, և երէ վայրի արածեցաւ ՚ի նմա: ԱՃ զըլութեց դարձ, հայեաց յերկնից և տես. այց արա այդուոյս այսմիկ, և դարման տար սմա՝ զոր սնկեաց աջ քո,,:

Ծնորհալին ՚ի նաւարկութիւն այլարանէ զվախճանել եղօր իւրոյ Գրիգորի Կաթողիկոսի. „ Խեցն նաւու հաւատոյ ընդ ծով աշխարհին հողմով հոգւոյն ուղղակի նուապետեալ, ճշմարտութեամբ և առարինութե, եհառ անշնաս յանքոյթ և առանց ալեաց նաւահանդիսան,,:

Աբանչելի այլարանութիւն և Շարականին զհռիփսի մեսանց .

“ Խորհուրդք հոգեոր յըղութեցին յայտնէր,
Եւ երկունք վըրկութեւ աշխարհի ճեպէին.
Քանզի կամըք վերին հրամանին քաղցրացեալք,
Խջուցին ՚ի վերուստ ըզպարգևս վըրկութեւ:
Ծընան կուսանք ազգըս բազումս,
Եւ մարըք մանկունք զհրապարակըս ծերոց.
՚ի գիրկըս սըրբութեւ ազօթից և պահոց
ԱՃեցին հաւատովք զարդացեալք ՚ի գրիատոս,,:

ՊՐԱԿ. Բ.

Յաշու Հենքնառնէ: (*)

ՆԵՐԴԱՍՈՒԹԻՒՆՆ, Է յորժամ ներհակն խմանի ասացելոցն, ՚ի մերձաւոր բառիցն յայտնեալ կամ յեղանակէ խօսիցն և յոլորակէ ձայնին: Սովորական էլունակ հենդնութեւ պարտի մեզմ դու և ամոք. իսկ թէ խիստ իցէ և գառն՝ մինչեւ զկծեցուցանել զլսովն՝ Երգիծանք անուանի, որ է խածատիչ այլանութիւ:

* Յաշու Երանեալ. լու Իռոնիա.

Հեղնել և երգիծանել ուսուցանելով ճարտասա-
նութեն, ոչ թէ զէն 'ի ձեռս տայ ստահակաց, այլ
'ի զգօնութիւնախօսին ապաստան առնէ՝ կըուել
զարժանն և զիրաւացին, որպէս մարթ իցէ 'ի վար ար-
կանել զայնս վայելու և պարկեշտութե՛. զի մի 'ի
նախատինս ասողին կրթիցի, և մի յանարդանս լսո-
ղին. քանզի անդ ատելութիւնագորէ, և ոչ փաստ
արդարակշիռ։ Ա ան որոյ վարժապէտք արհեստիս
աւանդեցին առ այս կանոնս զդուշութե կարեւորս։

Կախ՝ զի անմեղ և անվնաս լինիցին հեգնութիւնք,
առ 'ի խաղ քան թէ 'ի ձաղանս. համեստ ճարտար-
մուռթե՛ 'ի վար արկանելով զհեղնութիւն, որպէս զի
Երեւացի հանճարեղ ատենախօս, և ոչ խեղկատակ
ծաղրածու։

Երկրորդ՝ մի 'անժամ յաճախմէլ 'ի նոյն, այլ գուն-
ուրեք 'ի կիր առնուլ, և ուր հարկն պահանջիցէ առ
'ի գերե հանել զփաստս հակառակորդին, կամ առ 'ի
դուզնաբեայ ինչ ցուցանել զայն, և ոչ առ 'ի ծաղք
շարժել, որ միմոսաց է դործ։

Ըստ այսմ կանոնի՝ 'ի տեսանել զոք ձախողակ
բախստի հանդիպեալ, մարթ է առանց կծանելոյ ա-
մել թէ հողմն հակառակ շնչէ նմա. կամ 'ի ծանծա-
զի խրեալ զնաւ նորա. այլ կծանող և դառն է՝ Եթէ
տեսեալ ուրուք զայր ոմն կաղ յոտից, ասիցէ թէ
ձգէ զման։ Եղիս մարդարէ արդարապէս այպանեաց
զմարդարէսն Բահաղու 'ի մատուցանել նոցա զողջա-
կէզ, ասէ. «Մեծաձայն կարդացէք՝ զի աստուած է -
թերեւս զրօսանք ինչ իցեն նմա, և միանդամայն թեր-
ևս առնիցէ հրաման, կամ թէ 'ի քուն իցէ և յառ-
նիցէ,,։

Կարի յոյժ ճարտար ձեռվ հենդնէ Լամբրոնացին
զոմանս 'ի տիմար քահանայից։ «Հարցանեն ոմանք
ցիմաստունս մեր. կենդանւոյ լինի՞ պատարագ թէ ոչ.
Խոկ որ բուն կատարեալքն են, պատասխանեն. ոչ
բնաւ.»

Դարձեալ և Գրիգոր Մագիստրոս այսպէս խաղ
առնէ ծաղրաշարժ բառիւք ըստ իւրումն զուարթ
կերպարանաց բանիցն զձկունս յղեալս առ նա 'ի
նուեր յումենէ 'ի բարեկամաց իւրոց։ «Զոր այժմ
առաքեցեր թէպէտ և զթիւն ուներ կատարեալ՝ զոր
Պլիւթագորոսն պատուեր, 'ի քառեկէն շարագրելով

որ զտատսնեակն ծնաներ, բայց սորա Ախմեալք և Աւ-
նեկեալք Տիօրէն ծողորաեաց . և թուի ինձ եթէ 'ի
կարծրութէ վիմացն ծպուլոցն գտեալ զտսանքէնը,
կամ թէ 'ի հաւուց հոյլս կլեալք, և դարձեալ յար-
տարինսն զնոսա գտեալք, յիրաւի և զտսա ոչ մեզք
և ճաշակել քեզ . քանզի ոչ մարմին, և ոչ պարար-
տուի ինչ 'ի սմա գտաք, այլ որպէս մարախ և ճանճ,
այսպէս իմացիր զտսա : Եւ դու վիռլժացիր հաճե-
ցուցանել զմեզ ձկամբք՝ նորագոյն և առոյգո զնոսա
տռաքել . և յայտ մի դանդաղեացիս խնդրոյ, եթէ
ոչ զաշխատութ իմաստափրէլոյդ իմ զեզէալս յղու-
ղակս քո ենթադատութիս հակաճառեցից ընդգէմ
քեզ : Նա ինքն դարձեալ առակարանութիւն հեգնէ
զիմաստակ ոմն . Մերձ առ մեզ ելոյ ոմն գորտ գտեալ
'ի վերիացւոցն կողմանէ՝ առէն ապուխտ արարեալ, և
'ի Կոթ գտաւուն Գեղամայ ձայնէր՝ ձուկն զնա կար-
ծելով զի գնեսոցեն . որոյ բատանձնեցուցեալ բառնան
նմա յարտակիտէլոցն կողից, կարկասուն կեմովքն
կաշկանդէալ : Բայց թէ պարտ է՝ և հաճոյ ոմանց
թուեսցի որք հռետորականացն են մանկունք՝ առա-
կականս ինչ շարամանել սակս տարագրական և խոր-
թիցն խուզման վերաստեղծական մակամտածական
տարախոհութ՝ յեզէրուաքազսն, և յուշկապարիկան
յածման . զոր 'ի դէս մեզ թուեսցի՝ ոչ միայն եղջե-
րուաքազս, այլ և վիզաքազս և ուզտաքազս զլուծ-
մունսդ կասկածեմ դու :

ՊՐԱԿԻ · Գ.

Յ-Հ-Դ- Զ-Ի-Ն-Շ-Ա-Բ-Ի :

ՎԱՓԱՋԱՆՑՈՒԹԻՒՆՆ Է՝ առաւելուլ կամ
նուազել տարապայման զգօրութիւն բանին . և 'ի կիր
ածի ուրանօր ոք կամիցի մեծացուցանել զբանն, կամ
փոքրկացուցանել . որով խայթուած ասզան՝ լինի հա-
րուած սուսերի, և նորին ներհակն վոխադարձուք :

Ուր միանգամ յանդիման նկարի մոտաց մերոց բարի
իմն կամ մեծ, սովոր եմք 'ի վերայ յաւելուլ նմին
մակադրականս սասակացուցիւս, վտան մեծագոյն կմ
շաւագոյն ցուցանելոյ զայն : Եւ յամենայնի ախորժէ

երեւակայութեն՝ առաւելուլ և դեր ՚ի վերոյ ցուցանել
զառաջի եղեալն, զի ՚ի նօմն զուարթանան միտք, և
բազում ինչ գտանեն արժանի քննութեն (՝) : Ըստ
այսմ օրինակի առաւել կամ նուազ տիրէ այս եզա-
նակ չափազանցութեն բանից՝ որչափ շատ կամ սակա-
իցէ եռանդուն երեւակայութեն ազգի քան զազգի : Եւ-
տեսանեմք քաջայայտ թէ արեւելեան ազնոք չափա-
զանցք ևս են ՚ի բանս իւրեանց քան զարեմտեայս .
որոց զի մազասային է խառնուած, և ՚ի գիտութիւնս
հրահանգեալք, վասն այնր հանգարաւարոյք են, և
արգարակալչիոք յերեւակայութեան : Յորմէ մարթիմք
խմանալ համեմատութ՝ թէ յառաջնում անհրահանգ
ընկերութեն մարգկան՝ առաւելեալ էր չափազանցու-
թեն, ուր առաւել էր բոց երեւակայութեն, այնր ազա-
գաւ չափազանցութիւն չէ յանկաւոր ՚ի սովորական
կամ ՚ի հանգարտ զրոյց . իսկ ՚ի յուզեալս ՚ի հրա-
տապ երեւակայութեն՝ քաջայարմար է և վայելու :

Երկու ազգք են չափազանցութեն . Են զորս ՚ի վար
արկանեմք ՚ի նկարագիրս, և են զորս ՚ի սասափիկ յոյզո
կրից : Լաւագոյն են թէլագրեալքն ՚ի կրից՝ որք
ստուարացուցանեն զառաջիկայսն ՚ի վեր քան զչափն-
զի որովհետեւ անգանօր բնութիւնն ազգէ, պատկանա-
ւորք են և բնականք . վասն զի ամենայն կիրք յուզեն
և շարժեն զոգիս, և մեծամեծա ցուցանեն զիրան :
Այսպէս սասափիկ իմն չափազանցութեամբ կշտամ-
բէ Յովհաննէս իմաստանէր զհակառակորդն . (ընդ-

* Յն. Կուրթօլի. լո. Superlatio.

Սնեն իմաստանէր՝ հանձնըէլ բանիստ բնախուէ զչ-
ափազանցութեն այսպէս . (ՅՆ. Բըրբոնէ, կ. 23.) “ Եթէ
իմաստ ՚ի մի առնիցի զայնցունէ՝ որոց պարագանէն, զ-
անէն ուն զչափազութ ուրբ և դահունըն ՚ի նայունն, զի
իմաստըն լուժութը : Առա այնը՝ անդրագոյն անցուն
լուժունցունին՝ զի ապանին ՚ի ճշմարդունէ ենուցէ :
Ուրբի ու առաջն՝ թէ Աղիտուիստուց են ուն զինն, երա-
գունդ ուն զինն, ու զի այսպէս են առաջ, այս զի հա-
մարտուիստ ինչ հնարաւորն իոն : Ես ու առաջն, Ան-
շորք ուն զինն, բանագոյն ուն զինք, զին համանէ
զայնցունէ զայնցուն նէ և անշորք իբրև զինք : Ու ոյն
զի յաստ լուժունց բանիստ իսունը՝ որութ առնէն ինչնէ,
ոյւ յանհամարտունին նիրքի, զի ՚ի համարտուին համարտ :

գեմ երեսութ .) "Հիացեալ Եմ մեծապէս՝ զնորանշանդ ՚ի քեզ տեսանելով ձևացուի . զի այլք յահեկանացն զմի մի ինչ ՚ի տատանայական ուտմանցն բարձեալ տարան շահս . իսկ դու յոյժ ագահելով և ոչ զմի ոք անդուստ ՚ի կողմանէ թողլով տենչացար . . . անտօնօթեալց և ՚ի խոստովանականս , և ՚ի կարգս , և ՚ի կրօնս . արանց ամենեցուն հոլանեալ՝ և զամենեցուն զուղի արարեալ լցեր զհայհոյութեն չափ : Գոյ հնար թուել զիսինս հեղեղատի և զաւազ ծովու և զիթս անձրեի , և ու զատեղծեալն առ ՚ի քէն նորապիւտ բանս և իրս : . . . Լցի ասէ Երկիր գիտութը տեառն՝ իրրե զջուրս բազումս որ ծածկեն զծրվս . այսանակ և դու հրապուրականդ քո բանիւք ծովացուցեր . ամենայն օր , և ժամ , և ամիս՝ քեզ նորաձեւութեն , :

՚ի նկարագրական չափազանցութես իննդրի ճարտարուի առ ՚ի հաճել զմիտս . զի որովհետեւ ոչ կիրք շարժեն անդ , այլ լոկ հնարք երեակայութեան , իրն նկարագրեալ այնպէս ազդիցի ՚ի սիրտ , զի ինքնին պատճառս տացէ նկարել ՚ի մակ զաւաւելն կամ զնորագոյն : ՚ի նկարագրիրս Երկրաշարժութե , մրրկի , պատերազմի , որք յածին զիրօք մեծամեծօք՝ ինքնին բորբոքին միտք՝ մեծագոյնս մոածել զիրսն . այլ ոչ նոյնպէս և ՚ի հանդարտ բանս , յորս տարագետ չափազանցութեն ցուրտ է և անալի : Որպէս թէ կամեցեալ ուրուք նկարագրել չափազանցութը զտիրութե ուրուք , ասիցէ՝ թէ հեղոյր նա արտասուս այնչափ , որ թէ տիեզերք ՚ի հուր փոխեին շիշանեին ՚ի ջուրց անտի : Ո՞վ ոչ տեսանէ զհողմակոծ վիքացումն բանիս : ՚ի չափազանցութե պարտ է յօրինուածոյ բանին արժանահաւատ ընծայել . զի սուտն և անձոռնին այնպէս է՝ որպէս այլանդակ նկար ՚ի պատկերի օտար ՚ի բնականեն . որ անհեթեթ տեսութեն մերժի ՚ի տեսղաց :

՚ի գիրս Եզիշէի գտանին ընախր օրինակք նկարագրական չափազանցութե . "Անդ Եր տեսանել զմեծ աղետ տարակուսին . ոմանք զգերարտօսրն իրք յաղբերականց հուեին յաչաց իւրեանց , և այլք բարձրածիչ աղաղակաւ՝ իրրու այն թէ զերկինս դողացուցանեին : . . . Աքրոին աղաղակին յերկոցունց կողմանցն իրրե . ՚ի մէջ ամսոց շփոթելոց ճայթմանս դործէր ,

և հետումն ձայնիցն զբարանձաւո լեռանցն շարժեր : ՚Ի բազմութեաւարտիցն , և փայլուն պատենազմն վառելոց , իրրե նշոյլք ճառագայթից արեգական հաստանէին : Նոյն և ՚Ի բազմում շողալ սուսերացն և ՚Ի ճօճէլ բազմախուռն նիզակացն՝ իրրե յերկնուստ ահագին հրձգութիւն եռային : Քանզի ով իսկ է բառական ասել զմեծ տագնապ ահաւոր ձայնիցն : Ո՛րպես կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից ազեղանցն զլսելիս ամենեցուն առ հաստրակ խլայտցանեին , : Գեղեցիկ է և Երեմիայի ասելն . . . իրրե զմրրիկ կառք նորա , արագագոյն քան զարծուխո երիվարք նորա , :

Այսպէս և Ալիքիլիոս՚ի կանկանին չափազանց օրէն նկարագրէ զընթացս կամիլլայ ամազոնի .

Թեթև ոլանայր նա որայիցն ընդ նուրբ ծայր ,
Եւ ոչ կըքէր ՚նդ ոտամբ նորա հասկ տըկար .
Կամ ընդ ծովուն դիզան ալեացն եթէ գնայր ,
Ոչ թանայր ջուր զնորայն ճապուկ գարշապար :

ՊՐԱԿԻ • Դ .

Յառագութեան Շահապահութեան :

Ը մաքանակ թիկնէն է փոխակերպութեամբ յուրում նրկայն բանիւ ծանուցանեմք՝ զոր մարթ էր սակաւուք վճարել () : Այս է , ազգի ազգի դարձուածովք բանից բացատրեմք զայն՝ զոր ՚ի սովորական զրոյց , կամ յուսումնական շարագրածս օրէն է բացատրել պարզիմաց բանիւ : Երրեակ են պէտք շրջանութել :

՚Եախ յորժամ պարզ յայտնաբանել զիրսն տարադէպ իցէ կամ անհաջոյ . զի յայնժամ ատենախօսն յերկարաբան զրուցիւք թելադրեալ լսողին տայ ՚ի միտ առնուլ զոր ասելն կամիցի : Այսպէս ՚աթան մարդարէ տարագէալ համարեալ ուղղակի կարգել զբանն ՚ի թշնամանս Դաւթի , յերկար շրջաբերութիւն ազգ

* Յէ. Περιοράσις . լ. Circuitio.

առներ նմաս զյանցանան : « Առյնպէս և Սամփոռն փոխանակ անուանելոյ զկին իւր , առէ . . . Եթէ ոչ ճընշեալ էր զերինչն իմ , ոչ դտանէիք զառասպեն իմ , : Վայելու իմն և Եղիշէ փոխանակ ասելոյ՝ ոչ ամուսնացան , համեստ շրջարերութիւն առէ . . . Ոչ ճաշակեցին զաշխարհ , . . :

Երկրորդ առ ՚ի շքեղ և ահաւոր դործել զբանն ընդ աղօտ գարձուածովքն : Որպէս ահեղ իմն շրջաբանէ Յովհաննէս կամթողիկոս ՚ի սկիզբն գրոց իւրոց , փոխանակ ասելոյ՝ յետ ջրհեղեղին . . . Յետ երկնասահանացն հեղեղաց , և անդնդապատոյտ ջրահեղձն լինելոյ բոլոր շնչականաց , և յետ ակամայ կամօք նաւարկութեն Նոյի , և ՚ի ցամաք ելանելոյ ՚ի Հայս , :

Երրորդ՝ առ ՚ի տալ բացայայտութիւն իրացն , գնելով առաջի զբնութիւնոցա , զյատկութիւնն և զյարակիցս : Որպէս Ագամթանգեղեայ կամելով բացատրել շրջարերութիւն զրախողիսող մահ խոսրովու արքայի , առէ . . . Մինչդեռ Ծերմ ողիքն ՚ի ծոցոյն չե էին թափեալ , և շունչը վախճանին չե էր հասեալ , : Դարձեալ նա ինքն այսպէս շրջարանէ զսկիզբն գարնան . . . Եկին հասին աւուրք Ծերոտ հարաւակողմն գարուն դրանցն բանալոյ : (*)

* Թէ՛մասի զետք զօրավար անենացի գեւեալ իւ զբուժք ան արժայ Պարսից անբար զօրօն Շիմեալ գոյ յԱնեն , և անհնար է ՚ի Շիմ հարիանիլ նմա , խորհուրդ դայր անենաշուրջ լասել զատշատ իւրեան : Այւդի ծանր էր լուս զայնութայն , դարձոյ շրջեաց զբանն և առաջ . Ասոնդ դաշտ զատշատն մեր ՚ի յեռա Շից : Դարձիւալ և հարցութիւն դաշտեայ իւրագ դայր նորա ՚ի դարիսոյ դայրակիւթիւն ամ ըստաւ . այսինքն ՚ի նոռա :

ԳԼ. Զ.

Յաշտ. Ձեռաբուժութեա:

ՉԵՒ բառից է նիւթական յօրինուած շարադրածոյն՝ որով խնդրեմք ուժգնութեն և աղջուութեն ընծայել բանին. և կազմին ազդի ազդի դասաւորութեր բառից, զորս 'ի բառնալն, կամ 'ի փոփոխել թէ սպետ և խմասոն անփոփոխ մնայ, այլ փոփոխի ձեւ հաստատեալ 'ի քաղցրաձայնուն և 'ի կարդ բառիցն. լի ձեք բառից զօրեն քաղցրացուցանել և եթ զլսելիս. մ ոչ փոփոխին 'ի նշանակութեն, այլ յիւրեանց նշանակութեն մնան, զի ոչ 'ի նշանակեալն է զօրութիւն ոցին, այլ 'ի նիւթական շարադրասութեն: Չեք բառից յաւետ պաճուհանք են, քան թէ զարդք գեղապատշաճք. նմին իրի և ուր ուրեմն վարեն զայնս քաջ մատենագիրք. և մեզ չեր արժան յերկար գեղքել 'ի սոսին, բայց համառատիւ յերրեակ պրակս տացուք զայնմանէ տեղեկութեն ըստ երից տեսակացն, ոք են Աւելադրութեն, Զեղումն և հանգիստութեն:

ՊՐԵԿ. Ա.

Յաշտ. Աւելադրութեն:

ՎԻԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ (*) անուանին ձեք յօրինելք բառիւք ումամբք, զորս մարթ էր լուել, կամ այլազդ յեղանակել զբանն, այլ նոքին կրկնին առ 'ի զարդ կամ յազդութեն:

Աւաջին 'ի կարդս այսոցիկ է այն, յորժամ ստեսէ կրկնի մի և նոյն բառ 'ի սկիզբն անդամոց միոյ պարբերութեան, կամ մերթ ընդ մերթ յեզեղի 'ի միում բանի: Զայս ձեւ այսպէս կաղմէ Սարդիս վարդապետ. (Տ. Պէտք. դ.) « Մէք եմք որ վախեաք յաշխարհակիր ցանկութեց դիտութեքն քրիստոսի, և յերկնաւոր բարեացն ճաշակեցաք, և որդեգրութեր հօրն երկ-

ՅԱ. Ա' ՀԱԼԻՒՏ. ՅԱ. Repetitio.

նաւորի պատուեցաք : Մէք եմք որ խրախանակը, ածային դրոց վարդապետութիւն, և ուղղափառութիւն զուարձանամբ : ... Մէք եմք որ խորհրդոցն Աստուծոյ խորհրդազածք եմք և վկայք : ... Մէրկացաք ըդ վառս աշխարհիս . մերկացաք զհեթանոսակիր ցանկութիս . մերկացաք զգաղանիս ամօթոյն : Մի դարձել վերսան զգեցցուք պատրանք աշխարհականօք . մի դարձեալ շաղախեցուք ՚ի ամս , զի մի լինիցի վերջինն մեր չար քան զառաջինն : (2.) Վասն նորին վաստակիմք . վասն նորին հրաժարեցաք ՚ի դադանեաց տմօթոյն . և վասն նորին զվայելականս կենցաղոյս աղք անպիտան վարկանիմք : Վասն նորին հզունք աղջի , արտասուաց և ողբոց .. :

Եշրկորդն է Դարձումն (*). զի ՚ի նոյն բառ դառնան և աւարտին ամենայն անդամիք պարբերութեանն Շարտար յօրինէ զայս ձեւ Նզիշէ ՚ի խրատն միան ձանց . և Խակ արդ բնութիւն իմ ոչ կշտամբեալ յան զիմանէ զիս , և թէ սուեղծայ մերկ , և եթէ եղայ ի դրախտին մերկ , և եթէ ելի անտի մերկ , և եթէ ծնոյ մերկ , և եթէ անդրէն յերկիր մերկանդամ երթաւ : Արդ եթէ տանել աստի ոչ կարեմք , զի ևս աստէն՚ի սմին թարթափիմք յաշխարհիս .. :

Երրորդ Բազիւսութիւն (**). որ է գումարում Երկուց նախակարգելոցդ . նովին բառիւ սկսանել զանդամն պարբերութէ , և նովին աւարտել : Այսպիսի է Ընորհալւոյն գեղեցիկ տաղ ՚ի որ քառասունան :

Ա. Որ իմն է հընվեն ընթերակայ Երդոյս ,

Երդ ներտաղական յոգնատեղեան Բախճան .

Բախճան պանծալի բազմերանեան քառասոնալիւ

Սըրբոց :

Սըրբոց վրկայից զինաւորաց թագաւորին Երկնից ՚ի յերկնակառոյց արարշական բանին վառեալ Սիրոյ .

Սիրով հրաշայնոյ զինեթ հողեղէն յեղափոխեալ ՚ի լոյս .

՚ի լոյս գերազանց դեր ՚ի վերոյ քան ըզբնութիւն Եղեալ ,

* Յ. Επιφορή . լ. Conversio.

** Յ. Συμπλοκή . լ. Complexio.

Եղեալ յայս նըշան առ տրինեաց անձանց ինքեամբ
Քարուն :

Քարուն հանձարոյ սըրբազանից յոդներամեան Գլըն-
գից :

Գլընդին միայնոյ թիւ քառառաջ ըստ եղակացն ՚ի
սմա :

՚ի սմա տեսանի խորհուրդ սըրբեալ աւուրց տա-
սանց Ք.առից :

Ք.առանից սըրբոց գունդ գումարի Այսօր :

Այսօր վիմարկի գէմ բելիար Ռատմին :

Ռատմիցն անմաքրից մարմնոց սըրբոց Երկբ յաճա-
խեալ Աստուստ :

Աստուստ պարարկին ՚ի ծովլ լրջին սառնասառոց
Սուզմամբ :

Սուզմամբ ծովայնոյ օդ դառնաշունչ հիւսիսայինն
Որոտ :

Որոտ տարափման յանդիւրական վայրին անձկով
Իիւծեալ :

Իիւծեալք ՚ի յարեանց կապուտատիսլ ծովն ՚ի կար-
միր Ներկեալ :

Ներկեալ վարդագոյն թաթաւելոյ յարեան մարմնոց
Վըկայք :

Վըկայք խաչելոյն միաբանեալ յուսով առ նոյն
կային :

Կային աննըւազ բայց ՚ի միոյ եղերական Անձին :

Անձինն Եղելոյ տարամերժեալ ՚ի բաղանիս Յըն-
թացս :

Յընթացս գնացիւք օտարացեալ ՚ի ժողովոց Աըր-
բոց :

Աըրբոց վըկայից սուդ յաճախեալ առ կորըստեան
Նորուն ,

Նորուն խեկապէս վախճան կենաց մահու հասեալ
Առ նոյն :

Առ նոյն նըւագեալ,, . . . ևն :

Չորրորդ՝ Յոդնահոլովուի (*) . որ է յաճախ կրկ-
նութիւն մի և նոյն բառի զանազանաբար Ծորդելով,
կամ հոլովելով, և կամ ածանցելով : Որպէս յայս
վազեմի ազօթս առ տիրամայրն . . . Դու էս հարսն

անսկզբնականին, դու ևս մայր մարմնացելոյ միածնի որդւոյն եց. դու ևս բնակարան հոգւոյն սրբոյ: Քե հաճեցաւ ան ընդ մարդկային բնութիւն որ մեղաւ ... Քեզ միայն տուաւ համարձակութիւ բարեխօսել վասն ազգի մարդկան: Ո'վ որովայն ածակրող. մայր ածածնող. ածաշօշափ ձեռք. ածահանգիստ դիրկ. ածաղիաց սախնք. ածաբարձ բազուկք, ածամերձ խորան, ածահամբոյր շրթունք, ածահայեաց աչք. ածախօս ըեզու, ածընկալ խորան, ածաբնակ տաճար՝ մի մառար զիսոստովանողակը քո: :

‘Եղնակէս և այս բան Եղիշէի ’ի միանձանց խրատուն. յորում մի բառ ածական առ երիւք գոյականոք այլևայլ նշանակութիւն ունի. ‘ ’ի խաւարային ժամու՝ զիսաւարային կերակուրս՝ խաւարային մարմնոյս տացուք: :

Հինգերորդ՝ Համանուանիք (*). որք Էն կուտակութիւ բազում նոյնանշան բառից: Այս ձեւ ընտիր ևս է, Եթէ նոյնանշանք վորու իւիք առաւելուցուն քան դիրեարս ’ի նշանակութեն. որպէս յայս բան Յովհաննու կաթողիկոսի. ‘ ’Արիաբար, առնաբար, առնազէն, ասպազէն ’ի պէրայ շահատակեալք՝ առ ’ի քթթէլ ական վազվազակի հերձեալ ընդ մէջ զջոլիրս ասպարագակ ռազմին բազմութէն ընդ կրունկն դարձուցանենին, : Եւ դարձեալ ’ի Մակաբայեցիսն (Բ. Ճ. Ճ. Չ.) .. Հարկանել, սատակել, կործանել, թափանել, :

Վեցերորդ՝ Յարակցութիւ (**), որ է շաղկապատմերտ կցել ընդ իրեարս զմասունս պարբերութեն զի յաւէտ ազգողագոյն լինիցի բանն: Զորօրինակ (ԿԴ-Նադ.) ‘ ’Որ տիրեացն՝ մեծաւ բռնութիւ կապեաց. և կուրութին զդուռն փակեաց, և անդիսութին զնանապարհն կորոյս, և հիւանդութին զիմաստութիւնն ելոյց, և թմրութին զխորխորաան ծածկեաց, և կամքն զանսութին կապեաց .. : Եւ և ներհակ սորին ձեւ աղուհան, զոր անսցես զինի:

* Εν. Συγνυμία. լո. Interpretatio.

** Εν. Πολυσυνδέτον. լո. Colligatio.

ՊՐԱԿԻ • Բ.

ՅԵՂԻՄ ԶԵՂԱՅԻ:

ՕԵՂՉՈՒՄՆ անուանեմք զատացուածս՝ յորս
լոին բառք՝ դիւրաւ գուշակելիք։ Երթեակ աղջք են
զեզման։ Տրոհումն, Զուգորդութիւն, և Կրճատումն։

Տրոհումն հակառակ յարակցութե՛ ՚ի բաց թողու
զրադիւտական յօդս, որպէս զի ուժգին երեւեցուացէ
զրանն, և միով հայեցիւք մասաց բազում ինչ միան-
գամայն ըմբռնեալ աղջուութէ՛ սպաւորեսցէ ՚ի լսե-
լիս (։)։ Ըստ այսմ՝ Նարեկացին ՚ի ներբողեան տիրա-
մօրն։ Ալացաւ որպէս վերնայինն, թռեաւ որպէս հո-
գեղէն, ծածկեցաւ որպէս զանքնին, փախեաւ որպէս
զանհաս, ՚ի յամսս երկնից եղ զգնացս. գովեցաւ որ-
պէս միածին, բոսորաբուղիս կայլակօք ներկեաւ, ան-
կից վիրացն խոցով հարցաքննեցաւ, ՚ի վեհից անման
հրեշտակաց հաւատացաւ։ Եւ գարձեալ ՚ի Մակա-
րացեցին (Բ. Ճ. 51.) ։ Քննեցաւ (վնասապարտն),
ինդրեցաւ, դառաւ, պատժեցաւ, ՚ի սուր սպառե-
ցաւ։

Երկրարդ՝ Զուգորդութիւն (։)։ յորում դրու-
թի միոյ բայի բազում հատուածք բանից ՚ի նոյն վեր-
բերին։ Այս է, զի ուր այլեւայլ անդամեք միոյ պարրե-
րութե՛ ինքնին զանազան բայս պահանջնեն, զայն ամե-
նայն միով բայիւ բովանդակեմք՝ վասն աղջակցութեն-
որ ՚ի նոսա, գնելով զրայն ՚ի սկիզբն, կամ ՚ի մէջն,
կմ ՚ի կատարածին որպէս զիարդ պահանջնեցէ վայել-
չութիւն։ Օրինակ իմն։ (Լաբէին) ։ Եթէ առ նոյն ինքն
Աքրահամ ձայն արձակիցեմ՝ ... և նա փակեալ է
ընդ կարեօք հասարակաց անհնարութե՛. իսկ եթէ առ
Մովսէս, և նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի։
իսկ եթէ առ Դաւիթ, ՚ի մէջ բարեացն առաւելու-
թե՛ ստպանեալ է և նա . . . իսկ եթէ առ Պետրոս, ՚ի
քումդ ինամոց խուն մի ինիթացեալ և նա ընդ կրիւք
իմն գրաւեցաւ . . . ՚ի սմին ամենայն անդամեք բանիս

* Յն. Α' σύνθετον. լր. Assolutio.

** Յն. Ζεύγμα. լր. Coniunctio.

92
ակնտրկեն ՚ի վերին բայն՝ յայն աշխալիշեմ, և խնդիրք
են նորա :

Երրորդ՝ Կրծատումն (^{*}), յորում լոին բառք կա-
րևորք, և մանաւանդ բայք՝ որ ինքնին իմանին ՚ի կար-
գե բանին : Զայս ձեւ՝ որպէս և զնախակարգեալդ՝
յաճախագոյն գոցես աւանդեալ ՚ի քերականուե, բա-
ցատրեալ բազում օրինակօք • այլ և մեք սակաւս դի-
ցուք յառաջիկայդ : (Լամբը .) “Օրէնք զի՞նչ • բա-
րեացն որ առ միմեանս՝ ներհակս, և միոյ հասարակաց
ճշմարփտ հաւատոց ընդդիմարանս : Զան՝ ո՛չ այլ ինչ
՚ի բանսն • քան զի՞ն եկեղեցի Քրիստոսի ՚ի միմեանց
պառականել : – Յետ տեսանելցյ զնա յարուցեալ, և
շշագելցյ ձեռամբ թումայի, զի՞նչ ..” :

ՊՐԱՎԻ • Գ. •

Յաշուա Հանդիդութիւն :

ՆԱԽԴԻՏՈՒԹԵԱՆ ձեքն կազմին նմանաձայնու-
թիւ կամ հանդիտութե բառից, որք քաղցրաձայն հնչեն
յականջս : Բայց հաճոյագոյն թուին՝ թէ սակաւ-
ուրեք վարիցին իբր ՚ի զարդ • իսկ յաճախութին ծանր
է և տաղակալի : Կրկին է հանդիտութիւ . Կմանաձայն
և Կմանավերը :

՚ի նմանաձայնն (^{**}) դնին երկու բառք նմանք ըստ
ձայնին, այլ ըստ նշանակութեն աննմանք • որ նորօրի-
նակ եղանական զարթուցանէ զմիտս, և կենդանա-
ցուցանէ զբանն, որպէս և այլուր յաղագս ուժգնու-
թե ասացաք : Այսպէս ՚ի տաղս շնորհալւոյն .

“Անմահ ունիս վեսայ, թէ և սիրով քոյին մեռաւ.
՚ի կեանս են և որդիք, թէ և ետուր գերեզմանի :
Հուր սիրոյ յինքեանս սուրբ վեսային վառեալք,
Զհուր մեղաց բոցոյն կուսութիւ շիֆուցին ..”

* Յ. Ελλειπτις. լ. Reticentia.

** Յ. Παρογομασία. լ. Adnominatio.

Եւ ՚ի շարականի . “ Անմահութեց տուող Քրիս-
տոս՝ իջեր ՚ի հող մահու , :

Ընդ սովորն բովանդակի և Նոյնատառն յաճախեալ առ-
իմաստակո , բազում բառս միահետ նովին տառիւ-
սկանելով . որ ՚ի ծաղրական բանս զաւեշտարարս ներե-
լի է , որպէս (Մագիստր .) “ Վարդապետն քո ծայ-
բագոյն ՚ի ծայր ծարաւի ծորեալ : - ՚ի դատաստանսն
մտէլ ակկարութեան ճանճիցն ճննջերելով ճիսմեալք
Ճոռոմարաննեն զճաշակաց առիւծուն , : Է ուրեք զի
և ՚ի քերթուածու և ՚ի շարագրածս գեղեցիկս վայել-
շաբար ՚ի գործ ածի . զորօրինակ . (Ըստ .) ”

“ Ծառին ՚ի միջի իմ ծածաներ ,
Քաղցրիկ օգովըն ծիծաղեր :

Եւ դարձեալ . (Կարեն .)

“ Գոհար վարդն վառ առեալ
՚ի վեհից վարսիցն երփենից :
՚ի վեր ՚ի վերայ վարսիցն
Պրզալրջեր ծաղիկ ծովային :
Ծուշանըն շողեր յովախին
Ծողչողեր դէմ արեգականն .
Այն հիւսիսային հաւեն
Հով հարեալ գոհար շուշանին , :

Իսկ նմանավերջ (*) է յորում անդամք պարբե-
րութե գրեթէ բովանդակ միաշափ են ՚ի թիւս ոտից ,
և ՚ի յանգսն նոյնաձայն : Լամբրոնացին յաճախ վարէ
զայս ձեւ . ոոկ է առաջիկայ հատուածդ ՚ի համբարձման
ճառէն . “ Ո՞վ է սա թագաւոր վառաւոր դիմեալ
յերկրէ , այսինքն յԵղոմայ , շքեղ կարմրազարդ յազ-
դէ բոսորայ , անազոտ պատմուանի ՚ի մարմնոյն գեղն
ցողանայ , և բուռն զօրութեց ընդ երկինս ընթանայ , :
Ընդ սովառ անկանի և Նոյնահոլովն անուանեալ՝ որ
՚ի նոյն յանգ աւարտէ զայլեայլ բառս միօրինակ հո-
լվելով և լծորդելով : Զոր օրինակ (Կարեն .) “ Եւ
հետո շաւզաց երթեւեկութեց վայտակերտ լաստաց ,

* Յν. Ομοιοτέλευτος . γν. Similiter desinens.

անխարիսխ յարկաց և անշունչ կառաց , գերազոյն
դիմաց երկնագոյն դաշտաց , լուծական վերանց , ան-
կայուն յատակաց , 'ի կոյսա կոհակաց կապոյտ կու-
տակաց , իբր ՚ի թռիչս օդոց ՚ի թեւս թեթեւս : - Տա-
տանին տագնասպաւ տերեւք տնկոց եղեին ծառոց ,
շարժեալք ՚ի հողմոց ուժգին բայլիսելոց .. : 'ի յետինս
այս երկոքին ևս ձևք տեսանին , նոյնատառն և նմա-
նավերն :

ԳԼ. 12.

Յ-Հ-Գ- Զ-Ե-Շ Ի-Մ-Ա-Գ-Ե :

ԶԵՒՔ. իմաստից Են եռանգուն և հրաշալուր ա-
սացուածք , որովք բանն ըստ պատշաճի իրացն ազգոյ
կամ շքեղ ձեւանայ . և նովին խորհուրդք մտացն
զուարձանան , զմայլին և շարժին : Յերկուս գլուխս
կարդեմք զձեւս իմաստից , մոածեալ ՚ի նոտին երկուս
տեսակս զանազանեալս գործով և իսկութք . զի որով
հետեւ ոմանք ՚ի ձեւոց աստի յառաջ դան ՚ի զուար-
ձացեալ մոաց և ՚ի զմայլեալ ոդւոյ , և ոմանք ՚ի հրա-
ցայտ կրից և յերեակայութէ , ըստ նմին արժան դա-
տեցաք յերկուս տրոհել զսուին , զի համազգիք ընդ
համացեղան պատշաճ ունին զյարնարութին : Արա-
ջինքն՝ որ մեզմով լինին և ընթացակցին ընդ սովորա-
կան զրոյց մարդկան , ջանան հաճել և զուարձացու-
ցանել զունենդիրն . իսկ երկրորդքն ուժգին և շան-
թաձիգ՝ հատեալք յերեակայութէ վառելոյ , շարժել
և յաղթահարել նկրախն զսիրտա ունկնդրաց :

Զսոստ կարդաւ դասաւորեսցուք յառաջիկայդ ,
ցուցեալ մի առ մի զտարազ կազմութէ նոցա :

ՊՐԱԿԻ. Ա.

ՅԵՂԱԳԻ ՏԱՐԱԿՈՎԱՅԻՆ :

ՏԱՐԱԿՈՎԱՅԻՆ ԹԻՒՆ է՝ յերկուանօք խնդրել թէ զի՞րն ընտրեսցէ յերկուց, կամ 'ի բաղմաց (*). Այս է՝ գեղերանք մոաց ատենախոսին՝ թէ ուստի սկսանիցի, զի՞նչ ասացէ, կամ յոր խորհուրդ ձեռն արկանել լու իցէ: Յառաջ դայ տարակոյս ուր երկուստելք մրցին ընդ իրեարս պատճառաք, որով 'ի կախ մնայ ընտրութին, մինչև ընտրեալ զմին յերկուց՝ յայնմ հետէ փարատի մոայլ մոացն, և բառնի տարակոյսն՝ մերժելով զիսափանարարսն:

Բնիկ տեղի ձեռոյս է՝ 'ի յառաջարանութել, որով գեղեցիկ սկզբնաւորի բանն, յաճախ 'ի կացրդականս վարի տարակոյս 'ի գովեստն կամ 'ի պարսաւ, թէ զորմէ յառաքինութեց ուրուք պարտ իցէ նախ բուռն հարկանել. որպէս առնէ Ոսկեբերան 'ի ներբողենի սրբոյն իգնատիոնի: Նոյնպէս վարի և 'ի բաղնուհականն և յատենականնել:

ԱՐԴ յօրինեսցես զձեւ տարակուառութել, ափշութին իմն սկիզբն աալով բանին՝ իրը արգելեալ յառաջիկայ գժուարութեց. առցես 'ի մէջ զպատճառս տարակուառութել կամ զիսափանարարս գործոյն, ցուցանելով զահաւորութին, զժուարութին, զերկիւզն որ անտի, և զքո վարանումն՝ թէ զի՞րն յերկուց ընտրեսցես, կամ զիսարդ յաղթեսցես խափանածոյն, մինչև վարանել և ունկնդրաց, և նովին տարակուառնօք պաշարել. և ապա դացես զէլս իրացն, և յառաջ խաղացես 'ի բանս՝ ընտրելով զոր կարեորն գատիցիս: Յայտ յանդիման տեսանես զայտ 'ի բան անտեսին՝ զոր առակաւ ձեւացոյց փրկիչն (Վ. Ժ. Ծ. 5.) Ասէ ընդմիտս իւր տնտեսն, զի՞նչ գործեցից՝ զի աէր իմ հանեցանտեսութիս. գործել ոչ կարեմ, մուրանտլ ամաչեմ: Ահա երկուասեք գժուարութիւն, մինչ յետոյ ինքնին զէլսն հանճարէ, գիտեմ զի՞նչ արարից. ևն:

Սարդիս վարդապէտ սովին ձեռով վարի 'ի մէկնու-

* Յ. Α' πορία. լ. Dubitatio.

թե բանին . (ա . Ա - հ . ա :) Զեռք մեր շօշափեցին ՚ի վերայ բանին կենաց . “ Որպիսի՞ ինչ է այն զոր առէ . . . բանն անմարմնական բնութի՝ զիադոք շօշափի ձեռքօք . վասն զի ամենայն որ մարմին է՝ անկանի բնդ շօշափմամբ . իսկ որ անմարմին է՝ ազատ է , և անհնազանգ մարմնական կրիցս : ” Այսպէս ապա լուծանէ զատարակոյն . “ Զորօրինակ բան միացեալ ՚ի զրի մարմին զգենու , և յայնմ հետէ ոչ բանն է առանց դրայն , և ոչ զիրն առանց բանին , . . . այսպէս ծանիր և զմարմնանալ բանին , և զօշափիլն ձեռքօք : ”

Ըստ այսմ և կիկերոն ՚ի ճառին որ վասն հռուկիոսի . “ Եւ զի՞նչ բողոք կալաց ՚ի սկզբան , կամ ուստի՞ յառաջ խաղացից ո՛ դատաւորք . կամ զի՞նչ , և կամ յորս օգնութի խնդրեցից , ՚ի դիցն արգեօք ան մահից , ՚ի ժողովրդենէ՞ն հռովմայ , կամ զձերցի՞ն հաւատարմութի մարգմեցից , որ ՚ի ժամանակիս ընդ ձեռտիք գրաւեալ ունիք զծայր իշխանութե՞ : ”

Վայելուչ ՚ի կիր արկանէ զայտ ձեւ և Լամբրոնացին . “ Ոչ զիաւեմ ուստի զայտ օրէնս այժմ գտեալ մեր . ՚ի նախնեացն ոչ ունիցիմք , . . . և յայլ ազդուոչ տեսանեմք , և նոր առաքեալ ոչ յայտնեցաւ մեզ՝ որ խախտեաց զառաքելոցն սահման . յայտ է՝ թէ ոնչիմք յանխմատութէ և յարհամարհութէնէ օրինացն այ , : ”

Գեղեցիկ է Ասկերերանին . “ Եւ արդ ուստի հաւանեցուցից զձեզ՝ ոչ զիաւեմ . զայն ասացից՝ թէ Արդն նոցա ոչ վախճանի , և հուրն ոչ շիֆանի . . . թէ զմիւոն որ ասիցէ՝ թէ . ” Երթիցեն ՚ի հուրն յաւետնից . . . : Եթէ զմեծաստանն ածեալ կացուցից առաջի , և տակաւին ասիցէք թէ վասն սպառնալեաց ասացեալ է . և արդ ուստի հաւանեցուցից զձեզ՝ Սատանայի միար Են այդ . անօգուտ շնորհ շնորհեալ , որ ամեննեին ծոյլս կազմէ . և արդ ուստի բառնայցեմք զայն ՚ի միջոյ . որչափ և ասիցեմք ՚ի գրոց , ասէք . վասն սպառնալեաց է : ” Այլ զայլոց զհանգերձելոցն թէր ևս մարթիցէ ոք ասել , այլ զանցելոցն և ՚ի զլուխ ելելոցն ոչ ես : Դուարուք զջրհեղեղէն . մի թէ այն վասն սպառնալեաց ինչ ասացաւ . և չեղե՞ և չել՞ ՚ի զլուխ :

Յաշոց Ընդհանու :

ՎԱՐԴՀՈՒՄՆ (։) է թողացուցանել հակառակորդին անտեղի նույն իրա , ասպասառնել յանապարտելի իրաւունս : Զի ուր նույն առենախօսն աներկիւղ է ը հջմարտուի դաստին իւրոյ , տեղի տայ հակառակորդին յիրս իրս դուզնաքեայս , և անդէն հետեւորդ բանիւքն և վաստիւք ունայնացուցանէ զշնորհեալն : Այս դործ է վեհանձնութե ասենախօսին՝ որ չկամի ժամանառ լինել ՚ի մանունս , ոյլ ՚ի կարեւորսն ուշ եղեալ , և ոչ հերքելոյ արժանի համարի զդուզնաքեայս :

Սովին մեռվ վարի առաքեալն առ հռովմայեցիս . (Ճ- 19.) “ Խակ արդ ասիցես , ոստքն վշրեցան՝ զի ես պատուաստեցայց : Բարւոք է . անհաւաստութիւն վշրեցան , և գու հաւաստովք հաստատեցար : Մի հպարտաանար , այլ երկիր . զի եթէ Ած ՚ի բուն ոստան ոչ խնայեաց , դուցէ երբէք և ՚ի քեզ ոչ խնայեսցէ .. :

Դարձեալ և Լամբրոնային գեղեցիկ ՚ի կիր արկանէ զձեւս զայս . “ Բայց համարեաց թէ ՚ի հաւաստոյն թիւրեցան . ՚ի կարդայն ոյր ազագաւ : - Դարձեալ թիւր՝ մի ազդն կամ երկուսն . Երեք ազդ քրիստոնէից , և որ ընդ նոքօք բազմապատիկ ազինք հաստատուն աշխարհօք և աթոռովք՝ վիարդ վրդովեցան ՚ի հջմարտութն , և առ յեղյեղեալ և տաստանեալ ազդս մեր նոյն միայն մնաց հաստատուն : - Գեղեցիկ դատիմք ՚ի ձէնջ , եղբարք քանզի դրեալ է , մի փոխեացես զահմանս՝ զոր եղին հալքն քո : Բայց ասա , զոր խոստվանիս դու հարս քո . Եթէ զառաքեալսն ... և ևս եմ նոցա ջատագով ... ապա թէ այլս ոմանս՝ որոց ոչ անուն երեխ ՚ի միջի մերում , և ոչ արձանագրութիւնից՝ վկայ իւրեանց ուղղութեն , զիմաստասիրութիւն պարտիմք յայսմ վայրի ՚ի գործ արկանել , և ընտրութիւն հանաչել , մի դուցէ լիցին մեզ մոլորեցուցիչք ՚ի սրբոցն հետոց , որպէս ծերքն իսրայէլի ՚ի Մովսիսէ .. :

* ՑԱ. Συγχώρησις . լու Concessio.

Յ-Հ-Դ-Դ-Ն-Ի-Ա-Պ-Ա-Հ-Ա-Ր-Ժ-Ա-Ն :

Ա, ԱԽԱՊԱԾԱՄՈՒՄՆ (*). Եյառաջ բերել զկարծիս լսողաց, կամ զհակառակն խորհողաց, և զթժուարուին լուծանել: Այս ձեւ սատարէ առենարանին՝ կարձել զհակառակորդին բանսն, և հողմոյ համել զմթերածոյ դիմանարառութիս նորա: և իրը թէ կանխաւ պաշարելով զնա յամենայն կողմանց, չներէ խըրտել երբէք: և ճարտարմառութը՝ ոչ միայն զիւրոց դատին, այլ և զհակառակորդացն բանս քննեալ և խարրացեալ, երկուստեկ պատշաճէ զդարմանսն: Որով զկրկին գործ ճարտարանի միանգամացն կատարէ, և կրկին մրցի ընդ հակառակորդին՝ պաշտպանական և հարուածող զինուք: և կանխեալ վատթարէ զօօրութիւն նորա, որպէս զի յայնմշետէ անպիտան լեալ պատրաստութեց նորա, հարկաւորել յայլոց փաստից ճակատ յարդարել: Յայտ է յասացելոցս՝ թէ զայս ձեւ բնութին իսկ թելագրել: զի ՚ի կատարութին առաջարկեալ գործոյն ուշ ունելով ջանայ ամենայնիւ զիւրն գեր ՚ի վերոյ դնել քան զթշնամուոյն: վասն այնը բաց յապացուցից և ՚ի հաստատութեց՝ գուն գործէ ՚ի մէջ բերել և զօր ինչ մարթ իցէ առարկանելընդդէմ իւր, և կանխէ զբովանդակն հանել ՚ի գերե:

Ձես այս սովորաբար վարի յետ յառաջբերուէ միոյ ՚ի փաստից, մօտ կարգելով առ նոսա զընդդիմութին և զուծումին իւրաքանչիւր: զի մինչ կարէ ունենդիրն զհակառակն մտածել, անդէն զառաջս առնուլն ահաւոր ցուցանէ զկազմած ճառին:

Բայց պարտ է փաստս հզօրս, յառաջ բերել ՚ի դիմաց հակառակորդաց, և մի ծիծաղականս կամ անհեթեթս: զի այնպիսիք ինքնին ՚ի բաց մերժին, և շնէն արժանի պատասխանուոյ: Եւ գարձեալ պարտ է քաջ լուծանել և հիմն ՚ի վեր տապալել զդժուարութիւնս: զի մի գուցէ մինչ անբաւական իցէ պատասխանին, տկարագոյն մնացէ բան իւր: զի լաւ երբնաւ չիշել զներհակ կարծիսն, բան թէ տկարութը դէն ՚ի ձեռս տալ թշնամուոյն:

* Յ. Προκαταλίτις. լ. Praeoccupatio.

Իգնատիոս վարդապետ՝ ՚ի յառաջաբանին իւրում սովորին ձևով զառաջս առնու զհակառակորդաց. “Ու նիմք առ այս և զհակառակագրացն զբանսն, որք ոչ սակաւ տան ամբոխումն խորհրդոցն որ ՚ի մեղն շարժման. քանզի է նոցա առ ամենայն բան զներհակն մերձ դնել: Եթէ երկայնագունից հանդիպին բանից, գովեն՝ փոքու հասանել և անցանել: Խակ եթէ սուզիցէ բանն, իրրու ոչ պարունակող զիմաստ և ոչ բաւականապէս տալ զրոյց՝ պարսաւեալ լինի: Դարձեալ առ այս՝ եթէ նըրբագոյնս ինչ օւնիցի, զպարզն առաջի դնեն իրրե գիւրահասս, վասն այնորիկ և օգտակարս. ասպա եթէ պարզագոյն իցէ, գովելի է նոցա խմաստամիրացն եղանակ բանից, իրրե զօրաւորս և արուեստականս: Արդ այսչափ է նոցա դասելն. ոչ վասն առաջիկայ իրին, այլ միայն զի ընտրողս և ճանաչողս ցուցեալ լինիցին,,:

Սարդիա վարդապետ՝ ՚ի դիմաց փորձանաւորաց այս ողէս ընդդէմ իւր բանս դնէ. “ Այս որ ամենաբարին է բնութիւն այլ ումեք շարի պատճառ ոչ լինի: Եւ եթէ ոք ընդդէմ այսոցիկ դնիցէ՝ եթէ և զիարդ խակ ինքն ասէ. ես ևմ որ առնեմ զիսաղաղութիւն, և հաստատեմ զւար. այսոցիկ գիւրին են լուծմունք: Արժանաւորացն խաղաղութիւն՝ արդարե ինքն խակ առնէ զիսաղաղութիւնն, որպէս ասացն: Խակ անարժանիցն՝ չոր ինքնին երբէք ոչ առնէ, այլ լքանէ թողու յօդնականութիւն իւրմէ, և նոքա անկանին ՚ի զանազան նեղութիւն,,:

ՊՐԵԿ Դ.

ՅԵՂԵԴ ԱՆՇԱԽ:

Անջունութիւն (*) է ցուցանել համառօտիւ զոր ասացան. և յիշատակել զոր ասելոցն է: Այս ձև համարի զօդ միաւորութիւն մասանց ճառին. զի որով հետեւ թողուլ զմին, և անկցելի բանիւ անցանել ՚ի միւռն՝ անտեղի է և ծանր լսելեաց, վասն այնոր հնարի ճարտասանն քաղցր եղանակաւ իւլիք ՚ի միոցէ բա-

* Յ. Μετάστασις. լ. Transitio.

նէ անցանել յայլ : Զսոյն տեսանեմք հանապազօր և յընտանի զրոյցս մարդկան , անցումն գործել նիւթոյ ՚ի նիւթ՝ վայելու շաղկապելով ընդ իրեարս զայլ և այլ մասունս բանին : Ք.անդի ՚ի համառօտ բանս ձեռյդ խօսողն յիշատակել տայ լողին զոր ինչ ասացն՝ իրեւ բովանդակութի անցելոյն , և առաջի կարգէ զնիւթ հետեւողին իրեւ կանխաբանութի :

Թէ յայս ձեւ անցման զերկոսին մասունսն ասասցէ ստունարանն՝ զանցեալն և զապագայն , կատարեալ կոչ չի այն եղանակ . իսկ եթէ զմին ևեթ յիշատակեցէ՝ զանցեալն , կամ զապագայն , Անկատար անուանի : Ըստ այսոցիկ երկուց ծայրից կրկին է անցումն , կատարեալ և անկատար :

Օրինակք կատարեալ անցման . (Յահ. իւղ.) ՚ի Եւ արդ այսոքիկ քեզ վասն այսոցիկ բաւականացեալ , ես դարձեալ ՚ի կարդ պատմուես դարձայց : – Այսոքիկ վէ՛ հասարակացս բանաւոր հօտի ինձ ՚ի ոնել մաղթանք աղերսանաց առաջի ձեր եդաւ . իսկ անձին առանձին այս ինչ է՝ զոր առ քրիստոսակատիեալ թագաւորդ ունիմ ասել . (Բ. մ. զ. 17.) ՚ի Զայս բանս ը ձեզ վասն յիշատակի բանիցդ խօսեցաք . արդ անդրէն ՚ի դլուխ պատմելոյն մասիցուք . (Ընորհալ.) ՚ի յաղագմ համագոյ երրորդուն և մի ածութեն ... բաւականացի առ այժմուս , իրեւ պատճառս տալով իմաստնոյդ՝ ըստ իրատու իմաստնոյն՝ իմաստնագոյն ևս լինել . ասացուք սակաւուք և յաղագմ աւանդութեալ եկեղեցւոյ :

Օրինակք անկատար անցման . (Կարէն.) ՚ի Դարձեալ այլաբանեցից ՚ի նոյն շարունակ բարդել զեւտամ բանացս եղանակ դարտվեալ անձինս . (Ընորհ. ճա . հրա .) ՚ի Հետեխմք այսուհետեւ ցուցանել և զոր յաղագմ սրբազնից զանազնեալ կերպարանացն երեւցուցանեն ածաբանքն՝ զերեմունս մարմնականացն . (Լիք.) Իմ զընթացս բանիցս ամբովք պահելով առ ՚ի հոգեւոր տեսութիս , զբաղում անդամ ասացեալն երկրորդեմ վկայուք իւրաքանչիւր մասց . (Իգնատ.) ՚ի Բայց զու ինձ նայեաց ընդ վերին իմաստութին՝ թէ զիարդ հնարի լուծանել զերկրաւոր զատորինս զայս շարուի՝ որ հակառակ ամբառնայ հոգւոյն իմաստից . (Կիլէն.) ՚ի Հասկա դատաւուք տեսցուք զորս զհետ ե-

կին : Հայեցարուք միանդամը ընդ յանդգնութեառն
և ընդ տմարդութեառ :

Զայս ձեւ նորօրինակ իմն վարէ Եղիշէ . զի առանց
առելոյ թէ ուստի ուր անցանէ , դնէ այսպէս . "Բայց
'ի տեղի այլ՝ ինձ գարձեալ գալ պիտի , :

Գեղեցիկ է և Ասկերերանին . "Այլ չդիտեմ
զիարդ վայրապար ընդ խարս եկի յայսպիսի ըանքս .
զայլս խրատէի հեղութքը ուսուցանել , և ես ինձէն 'ի
ցառումն զառածայ : Թէ այնպէս իցէ , գարձուք ան-
դրէն 'ի մեր խրատն , և հոգ տարցուք ամ թէ ըութեառ
կենաց մերոց , զի ուղղեսցուք զոր կամիցինք :

ՊՐԱԿ Ե .

Յաղագ : Աբդուլլահ :

ԱՐՏՈՒՐՈՒԹԻՒՆ (*) է սուղ ինչ հեռացումն
յառաջադիր բանեն՝ առ 'ի հանդիսաւ ունկնդրաց և
կի՞ յաղդուռն բանիցն : Կրկին օրինակաւ լինի ար-
տուղութեառ . քանզի բանն առ որ ելանէ՝ ուրեք լինի
զրոյց իմաստալից կարգեալ 'ի բացայայտութեամ 'ի
պատճառս ասացելոյն , և իբր թէ յուղութեան իրացն
բովանդակ : Եւ կամ ընդմիջէ ատենաբանն զիսօսս
իւր՝ վասն սպատմելոյ նորագոյնս ինչ , կամ իմաստա-
սիրական բանս 'ի մէջ առնու՝ յարմար գլխաւոր նիւ-
թոյն . որ թէպէտ ինքնին յայլ ինչ հեռաւոր ակ-
նարկեացէ , սակայն իշխանութեամ է ճարտասանին՝ յար-
մարէլ զայն 'ի բանս իւր :

Տեղի ձեռոյ է սովորաբար 'ի յերկարաձգութեամ
ուից . մանաւանդ 'ի հանդարս բանս , յորս առ 'ի
բարձումն տաղակութեամ արժան է ընդիսառնել զնեա
զայս 'ի զարթուցանել և զուարթացուցանել զունկն-
դիրս :

Կանոն արտուղութեամ է նախ՝ բնական եղանակաւ
'ի ներքս բերել զայն , և ոչ բռնի և անյարմար . մեր-
ձաւոր լիցի ընդ նպատակի ճարին . յաւելեալ իբր 'ի
զարդ , և ոչ իբրեւ գլխաւոր նիւթ բանին :

Երկրորդ՝ քանզի արտուղութեամ հնարեցաւ 'ի զար-

* ՅԱ. Α'παλλαγή . լու. Digressio.

դուց սակա , իցէ ՚ի նմա նորութե և զուարձութե , և
ոչ բացասարութեն գեղաւոր :

Երրորդ՝ ՚ի կատարած արտուղուեն պարտ է ճար-
տարութ շրջել զնոյն և խառնել ՚ի բուն բանսն վայել-
չութք , և ոչ առ հարկի՝ բռնազրօնելով . ապա թէ ոչ
միշտ արտաքոյ մնայ կարդի բանին , և զամբողջութին
խանգարէ :

Ըստ կրկին մասանց արտուղուես ունիս տեսանել
և զօրինակս : Ըստ առաջնոյն Կարեկացին (իշ . 20.)
մեհենի նմանեցուցեալ զհոգի իւր՝ արտուղի այսպէս .
“ Վասն զի նոյն է սպաս տանել ձուլեալ պատկերի .
և մեղաց ախսի .. : Եւ Ոսկեթերան . “ Երթեալ ու-
րուք իցէ ձեր ՚ի պազեստինացւոց աշխարհն : Այսու-
հետեւ ոչ ևս բանս , այլ արդիւնս իսկ ասեմ : Թէպէս
առաջնուքն քան զարդիւնքն յայտնագոյնք են . զի զոր
գիրք ասեն , և քան զաշաց տեսիլ հաւատարմագոյնք
են : Երթեալ ուրուք իցէ ձեր ՚ի պազեստինացւոց աշ-
խարհն , , :

Ըստ երկրորդին՝ ունիս լիով գտանել ՚ի ճառս տե-
զեաց որ յաղագս նմանութե , և ՚ի ճառս ձեռնար-
կութեց յաղագս յարացուցի . զի և նորին՝ որպէս ան-
տանօր առանդեսոցւք՝ արտուղութիւն են , ակնարկե-
լով յայլ ինչ հեռաւոր՝ վասն առանել բացայայտու-
թե և կամ վասն հանդիսատ տալոյ տակաւուք ՚ի վաս-
տակոց յերկար լսողութե . զորօրինակ էր արտուղելն
Դիմութենեայ յատենաբանելն իւրում՝ պատմելով
զանցս իշապանին՝ որ կրուէր ըստ երիտասարդին , վասն
նստելոյ նորա ՚ի մէջօրէի ՚ի տառւեր իշոյն . որով ընդ-
ուստոյց զդատաւորսն թմբքեալս :

ՊՐԱԿ Զ.

ՅԱՀ-ԴԱ-ԲԻ :

Լ ՌՈՒԹԻՒԽՆ (۴) է թողուլ և չասել զոր ասելն
հնարաւոր էր , կամ տղիսուի ձեանեալով կամ ցա-
սումն , և յիշատակութե անդամ մնարժան համա-

* Յայլ + յերիսս բաժանեցին զայս յև . ո՞ւ էրբ յեղձէ
արինուբանն ըսել զայն զը առէ իսիսղէս , անսառնէն

թել . և այնպէս լուելովն առաւել աղջողագոյն առնել դրանն . և չասելովն ասյ լիով խմանալ , զոր ոչն կամցաւ յայտնի բարբառել : Յօրինուած ձեւոյս պահանջէ արթնութիւ մասց . գիտել՝ թէ որպէս հնարաւոր իցէ՝ ոչ ասել , և զբովանդակն ասել . յասպաւել զառաւելութիւ բանիցն , և զու հաճոյականս ըլուութիւ պահելով զամենայնն յայտնագոյնս 'ի գուրս բերել : Միով բանիւ . ամեննեին անտոգիւտ օրինականանուցանել զիրսն , զոր թէ այլազգ ասեր՝ ընդ մեղադրութիւնէր : Օրինակքդ յայտնի ցուցանեն զիրացդ բաղմադիմի կերպարանս :

(ԵՎԼԻՆ) " Զի՞ մի թուեմ . այլ զամենայն անարժանս յառաջ մասուցաներ , և զամենայն արժանաւորս յետո առնելու .. :

(Լ-ՀՀՇ) " Յայտնանէ յառաջ բերեն ոմանք բանս . . . որ թէպէտ 'ի գիտոց , սակայն սիրոյն քաղցրութիւ ագէտ եղելոց . զի այսչափ ասել բաւական է , և ոչ յայտնել զառականս ծնողաց .. :

Եւ դարձեալ . " Որ մեղանչէ՝ օրինազանց է . իսկ որ զօրէնս լուծանէ՝ զի՞նչ է անուն նորա . ես պատկառիմ ասել՝ մանաւանդ թէ երկնչեմ , զի մի աղեկէղ բժշկութիւն վասն 'ի խոր հարմանս զգեղ բանիս երեւցայց թշնամի .. :

(Ս-ՐԴՒ) Զորս վասն կռոնոսի և Արամազդայ պատմութիւն իցեն՝ ամաչեմ ասել . ոչ սակս նոցա՝ որ արժանի են ամենայն պարսաւանաց , այլ խնայեմ 'ի լեզու իմ՝ զի մի ժանտասցի յիշատակօք պղծութենոցա .. :

Կիկերոն 'ի Ճառքին վարումպէտոի . " Ոչ ինչ ասացից , կուիրացիք , որչափ նա 'ի գլուխ տարաւ 'ի քաղաքի և 'ի բանակի , ընդ ցամաք և ընդ ծով . քանզի և կամաց նորա ոչ քաղաքացիք և եթ հաւան գատն , նա և դաշնաւորքն հարստակեցին , թշնամիքն հնազանդեցան . այլ և հողմք և մըրիկք յաջողեցին նմա .. :

Դայն Պարահայ լուս . լուս . praetermissio . Թաղաւան : Խոչ զաւանամբ 'ի բաշ մէջէ արէնախօսն ձ'ոօնիաչէ . լուս . expulsio . Մէրժաւան :

Յաշտի Բաժանորդութեան :

Իւ Ամառն ՈՐԴԻ ՈՒԹԻՒՆ, (*) Է յիշատակել համանացամայն զկարուոր մասունս բանին, և ապա մանրամասնաբար բացատրել զայնս : Կապատակ այսր ձեռոյ է պարզ իմացուցանել զբանին . զի Երբ յիշատակեալ զմասունս բանին, և երկմատիցի թէ ոմանք ոչ իմանայցեն լիով, դառնայ կրկին բացատրել զայնս յայտնաբանութե : Եւ վարէ զձեւս զայս յորժամ նորագոյնս ինչ ուսուցանել կամիցի Տարտասանն յընթացս բանին՝ որ բաղում իմաստս պարունակեացէ յինքեան, և հարկաւոր իցէ քաջայայտ իմացուած նոցին : 'Ի սմին ոչ մտանեն զարդք բազում . զի որտվետե ուսուցանել միայն է գործ նորա, յաւէտ ՚ի պարզութիւն անդր ջանայ, բան ՚ի շքեզութիւն : Կանոնք ձեռոյս ամենենին նոյն են ընդ կանոնաց բաժանման, զոր լիով անդէն ուսանիս . այլ աստ դիցուք օրինակս :

(Մահմէրէ) " Մէրթ ասէ . այն հիւանդութիւն չէ ՚ի մահ . և դարձեալ ասէ . վասն փառացն ԱՇ է, զի փառաւորեացի որդի ԱՇ : Հիւանդութիւն անվրէալ ՚ի մահ էր, և փառքն ՚ի մահուանէն յորդեցին ՚ի տեսանելիս ամենայն թէրահաւատ ժողովրդեանն , :

(Սարգիս.) " Զ ասոկ լսելուն զանպիտանութ կամկը լով ամենեցուն ցուցանել, օրինակս ինչ նմանագոյնս առաջի դնէ, որ քան զամենայն օրինակս տպաւորագոյն է, և անտպագոյն : Տաւորագոյն՝ զի առանց նենդութէ է, և զոր ինչ յինքն անկանի պատկեր՝ երբէք ոչ ծածկէ . թէպէտ քաջավայելուչ իցէ, թէպէտ յոռի : Խոկ անտպագոյն՝ վասն զի կատարելապէս զպատկեր ինչ ոչ ցուցանէ, այլ չնչին և փոքր՝ իբր օրինակաւ ինչ,, : Եւ դարձեալ . " Հոդիք սրբոց հեռի են յայսպիտի ախտակրութեց (՚ի Խարահաճութէ .) այլ մանաւանդ ընդդիմակացք այսպիսի ախտիցս Են բանիւք և արդեամբք : Բանիւք՝ յորժամ ասէն Դաւիթ . Ամցրուեսցէ զոսկերս մարդահանոյից . և կորուսանէ տէր զամենեսին ոյք խօսին սուտ : 'Ի վերայ այսորիկ կնքէ

* Յա. Διάλλαχγ. լո. Distributio.

առաքեալ բանիւք իւրովք . և թէ տակաւին մարդկան հանձոյ լինէի , ապա Քնի ծառայ ոչ էի : Իսկ արգեամբ՝ յորժամ թշնամանէին և բամբասէին և նախատէին և զիառաց ինչ ոչ հոգային , և փոխարէն զնախատիչն ոչ նախատէին , այլ և երախտիս հատուցանէին :

ԳԼ: Ը.

Յ-Ն-Գ-Հ- Հ-Գ-Ե-Զ-Շ- Յ-Ն-Գ- Ի-Ն-Ա-Գ-Ի-Շ :

Օ ԱՄԹՈՒՑԻՉ և շարժիչ ձեք են՝ որք յառաջ դան ՚ի յուղեալ կրից . զի որպէս լիագոյնս յիւրում տեղւո՞ն ասացուք , անհնար է տապաւորել ինչ ՚ի լսողն՝ եթէ չիցէ ինչն ատենախօսն նովին զգածեալ . զի իբր թէ յանձին կրելով զզայրոյթ կրիցն շարժեւաց , ձեռնհաս լինի զնոյն եռանդն հաղորդել և ոյլոց , և շարժել զնոսա ՚ի կատարումն բանիցն իւրոց : Զինչ յանախեալ առ մարդիկ՝ քան զհարցումն , քան զբացադարձութիւն և զբացադանչութիւն , և ահա գոքին եռանդուն և ազգողագոյն գործեն զբանն : Ի՞ւ առաւել խրախուսել կարէր սուրբն Սահմակ Եպիսկոպոս զնահատակակիցս իւր ՚ի ժամու պատման իւրեանց , քան ասելովն . “ Հասկա առաքինիք , և հաս ժամ պատման մերոյ . Խցէք զայս մարմնոյդ վայր մի , և այժմ տեսանէք զայսն մեր Քն , : Մամբրէ վերծանող բացադարձութեան ձեռով շանթաձիգ եղեալ ՚ի վերայ հերետիկոսաց՝ ահաւոր կացուցանէ զբանն , ասէ . ” Ամաչեա թէոդորոս . մի համբառնար զաչսդ յերկինս Նեստորիոս . քանզի կոյր աչօք Էս ՚ի միաբանութեն երրորդութիւն , վասն կորստեան ձերոյ միաբանեցէք պատմել զամօթալից վարդապետութիւն , : Ալդ ՚ի ձեռոց աստի ջանասցուք կարճ ՚ի կարճոյ աւանդել զկարեւորն :

Յ-Հ-Դ-Հ-Ն-:

ՆԱՄՑՈՒՄՆ (*) է թախսանձել զոք հարցուածոյ պայմանաւ՝ ոչ առ ՚ի գիտել զանձանօթ ինչ կամ զտարտկուաելի, այլ ստիպողական բանիւն բռնադատել զնա ՚ի հաւանութիւն. վասն զի յայնժամ բռնադատէ զստղն ունկն դնել բանից իւրոց, և այնու ՚ի չկամել իսկ նը՝ խորագոյնս տպաւորէ ՚ի նմ զբանս իւր:

Ա-յս ձեւ բնական բարբառ է կրից, որոյ վասն և յաճախեալ յընտանի զրոյցս՝ ուր ջերմացեալ մարդկան՝ սինդել ջանացցեն զբանս իւրեանց, կամ զհակառակորդին մերժել, վստահացեալ ՚ի ճշմարտութիւն իրաւանց իւրեանց : Զոր օրինակ յասելն Մովսէսի յօրհնութե իւրում. “ Ո՞վ է նման քեզ յածս տէր, կամ ով նմանիցի քեզ փառաւորեալդ. ՚ի սուրբս ... Եւ Դաւթիւն. “ Միթէ որ տնկեաց զունկն ինքն ոչ լուիցէ ... Եւ լամբրոնացւոյն . “ Այդպէս ուսար ՚ի տեառնէն քումմէ, այդպէս վարդապետեաց որ ասացն էթէ սիրէք զսիրելիս ձեր՝ որ շնորհէ ձեր,, : Թէ ՚ի սոսին այս հարցողական բանք եղեալ լինեին առանց հարցման՝ այսպէս . ոչ ոք է նման քեզ, ոչ այդպէս վարդապետեաց տէրն քո, ցուրտ լինեին և անպանոց. սակայն ջերմութիւն և եռանդն բանին զոր ցուցանէ ստիպողական հարցումնն զարթուցանէ զլտղն, և ազգուութիւն հարկանէ : Որպէս և ասելն Ոսկերերանին՝ մինչև ցայդ վայր համբերիցեմ, այս անհամեմատ գերազանց է և ազգոյ, քան ասել՝ այլ ոչ ևս համբերել կարեմ :

Կանոն այսր ձեռոյ ոչ այլ ինչ է՝ բայց անվրեալ հետեւողութիւն բնուութե . այնպէս յարմարել զհարցուածն՝ որպէս ինքն զցածեալ իցէ . քանզի այլազդ ունին ՚ի միմեանց զազդեցութիւն՝ հարցումն որ ՚ի սրտմտութէ, և հարցումն որ յուրախութէ . ՚ի միտւմն խստութիւն բռնադատութիւն սրահանջող, յերկրորդումն թախսանձանք և յորդորք : Ըստ այսմ իմա և յաղադս այլոց կրից . զօրոյ զհետ գայ ասել՝ թէ իւրաքանչիւր եղանակք հարցմանց թարդման են և յայտարար նշանակք

* Οὐ. Ερώτημα. լ. Interrogatio.

միոյ միոյ 'ի կրից յորոց յառաջ բխեն : Հասարակաց
է մարդկային բնութես, վարակել կրիւք՝ զոր յայլ
տեսանիցեմք : Նորին ազագաւ՝ թէ մի ոք մոցէ 'ի ժո-
ղովս ուրեք համակեալ 'ի տիսրութիւն կամ 'ի խնդու-
թի, 'ի նոյն զդածէ զժողովն բովանդակ - ապա զա-
ռաւելն 'ի գլուխ հանէ՝ որ նովին ազդեցութիւն յար-
մարեցէ զդարձուած լեզուին և զհարցմանցն ուժգ-
նութիւն կամ տիսրութիւն :

Օրինակս հարցման յոլովս դացես յաճախեալ 'ի
դիրս - զոր օրինակ Եղիշէ վարդապետ այսպէս յա-
ռաջ բերէ զհարցողական յանդիմանութիւն հաւատացե-
լոց առ նախարարա Հայոց . (Պ.) "Նոցա էր փորեալ
զիսորիսորասան, դուք ընդէր լուկ յառաջադոյն . Եր-
տուանիցիք զբազմաթիւ անուանս աստուածոց նոցա,
այն՝ որ չիք ուրեք 'ի միջի և ոչ մի , :

Եթէ առ այս ձեւ հարցման յաւելուցու առընթեր
դնել և զպատասխանին, Կշռտ անուանեն զայն հռե-
տորք . այսպէս առ Եղիշէի . "Իսկ արդ՝ չար արժան
էր ասել թագաւորին . քաւ, ես ոչ ասեմ. այլ խրատ
'ի գործ արկեալ զայլս ուսուցանեմ,, :

ՊՐԵԿ Բ.

Յ-Ղ-Գ- Բ-Ա-Գ-Դ-Ա-Ն-Ե-:

Ի-Ա-Յ-Ա-Գ-Ա-Ն-Չ-Ո-Ւ-Թ-Ի-Խ- (*) է յայտնուի յուղ-
ման և այլայլութե ոգւոյ - քանզի ատենաբանն, որ-
պէս և ամենայն մարդոյ դիսլի, հիացեալ իմն և իրը¹
յանձնեն արտաքս ելեալ ընդ դիսուածս ինչ անակն-
կալս, յանկարծակի խզէ զկարդ բանիցն, և յսկըտա-
կեալ բարձրաձայնութիւն արտայայտէ զեռանդն կրից
հոգւոյն և զիրացն մեծութիւն : Այս ձեւ բեղնաւոր է
'ի յայտարարութիւնն ամենատեսակ կրից, և զսոյն է
մեղ տեսանել յաճախամիլ, զի ըստ զդածեալ բացա-
դանչութե միոյն ևեթ, նմին առ հասարակ զուգա-
ձայնին 'ի սիրտս և 'ի դէմս ամենայն որ շուրջն կան,
յուրախականս, առաւել ևս 'ի տրամականս :

Կանոն կիրառութե ձեռյդ՝ այս է . զի թէպէտ բա-

* Յ. Εκρώαστις, լ. Esclamatio.

ցադանչութեն նշանակ է գրդուռւթեն կրից . սակայն և անպատճառ յաճախելն՝ տաղտկութեն գիտէ ծնանել . քանզի ստէպ կրկնութեն ձեռոյդ՝ ոչ կարէ լինել գործ բնութեան , զի անհնար է ստէպ բորբոքիլ այնպիսի կրիւք՝ յորմէ բացադանչութենք յառաջ դայցեն : Եւ որպէս այլուր ունիմք ասել , այն թռուցեալ մերացումն մտաց՝ շարժիս ոգւոյն 'ի բացադանչութեն՝ ոչ յերկար տեէ , և ոչ ստէպ յաճախէ . զի պահանջի դիպուած արտաքոյ քան զսովրականն , և այն զի դիպուածք այնպիսիք ոչ միշտ պատահեն :

Արդ լինի բացադանչութեն 'ի բանս ցաւոց , պահանչացման , սրտմառութեն , կարեկցութեն , խնդութեն , փափաքանաց , և որ ինչ ևս այլ շարժմունք հոգւոյ 'ի սաստիկագոյն աստիճանի . ըստ որում ունիս տեսանել յառաջիկայ օրինակոդ :

Խորենացւոյն յիշատակելով զառասպելասրատում քանչութեն Տորքայ նահապետի , հրաշացեալ ըստ այնս բացադանչէ . "Ո՞հ կարի է առասպելս . այլև առասպելսց առասպել . բայց քեզ զի՞ է . քանոցի էր արդարեսաստիկ հզօր , և այսպիսեաց զրուցաց արժանի . : Մամբրէ 'ի ճառն յարութեն Ղազարու . " Արդարեգառինք անմեղք էին աշակերտքն . զոր ինչ տեսանէին զնոյն և դիտէին . և զոր ինչ լսէին՝ զնոյն և հաւատային . յածային խորհուրդն ամենեին հասու ոչ կարեին լինել Տէր , ասեն , եթէ ննջեաց , ապա ապրի . բազում հիւանդք ննջեն , և ոչ ապրին : Ո՞վ փաղաքշանք տգիտաց . զծածկագէտ զօրութին կամեին սփոփէլ . : "Արեկացին պքանչէլի բանիւք 'ի համար արկեալ զւարչարանս տն , և բովանդակ յամիշտակեալ 'ի խոկումն ածային տնօրէնուն կրիցն , բացադանչութեն գործէ այսպէս . " Ո՞վ քաղցրութիդ և երկայնամիտ բարերարունդ ողորմածիդ գլութեն , որ վասն ապախտաւոր և անօրինեալ ծառայից , տէրդ բոլորից զայս ամենայն կամաւորապէս և հաւանողական հաճութք տարեալ՝ մարմնոյդ միութենք 'ի քեզ ընկալար . : Ըարականն յետ երգարանելոյ զմանունի Յուղային յաւելու . Ո՞վ համբոյր՝ նենդուն նշան և առիթ մահու . :

'ի սոյն պատկանի և Մակագանչուի (*) անուանեալն ձեւ որ է վճռաբար զրոյց զգործոց և զբանից զլաւու-

թե նոցա կամ զյուռութե յայտնաբանելով. այն իսկ
է իմաստուն բագագանըութե յարմարեալ 'ի կատա-
րած պատմութեց կամ առաւելահրաշ գործոց ընդ-
որ հիացեալ զուարձանայ բնութիս, և զխոհական ա-
սացուածն 'ի վերայ բերէ : Կամբրուացին յատենաբա-
նութել իւրում յետ 'ի մէջ բերելոյ զյայնմ ժամու-
սաստկացեալ ասելութիւնն ընդ Յոյնս և ընդ Հայս,
մակագանչէ : "Այս է խոսորնակ Հանապարհ և մո-
լոր՝ ընդ որ այսօր հետեխիմք, և զգործով ածատեցու-
թիս պիտակ բանիւ ածսիրութե առդնեմք . զճշմար-
տութեր մարտնչէլս ընդ Քամ ստայօդ խօսիւք խաղա-
ղութիւն առ նա համարիմք : Այս է մոլորումն չարա-
չար, որ ընդ զզջումն պատերազմի, և ամբարտաւա-
նութե կործանող՝ որ հեղութե զրկողացս թուի : Այս
է խաւար տգիտութե աղջամուղջ որ լոյս 'ի մէնջ մէ-
ծարի, և մեռելութի անկենդան՝ որ զկենդանութիւն
խնդրել հրաժարէ , :

Յովհաննէս իմաստասէր 'ի համար բերեալ 'ի Հա-
ռին ընդդեմ երեսութականաց զմոլորուիս նոցա, յա-
ւելու . "Այսպէս մնութիս զնութիւք պատէք, և դնե-
լով ստութ 'ի յոյնն ձեր, ընդ ստութէն և մտել ծած-
կիք : Այս Են երջանիկ հարանցն ածարանական դա-
սանութիւնն, որովք բանիւք դու հերձուածող առա-
սես զնուա, և ոչ զանգիտես և զարհուրիս , :

ՊՐԱԿԻ Գ .

Յաղափս Դ. ի մասնաւուն :

* Ա. ԱՄԱՆՈՒԹԻՒՆ, (*) է կեղծեալ զբոյց բացա-
կայի կամ ոչէի : Այս է . 'ի մէջ բերել 'ի կարգի բա-
նիս մերում զայլ էակ եթէ անշունչ, և թէ չնշաւոր,

* Յն. Προσωποποία. ψ. Conformatio.

Զյու մարդաստանական վոր մէս համայստենք արդի հու-
գորաց Գիմաստանալի սասցաւ, յըրամ իմանամք զվեշիւու-
շըրաց անշնչի և իննաստրի և բանաստրի, և Սահմա-
ներնուզ 'ի պիտուից գիշան շնդհանուուր յայնիւ Բարբառանու-
իւն, ահանաւաւ . "Ամանաւունի բարբառ ներակայ դիմաց ..
իւն նմանագործունի, իբր նև զնուա և զնանգիւ բնաւուն

և թէ մորդ գլխումին, տալով նմա բարբառել և դոր-
ծել զդործ կենդանւոյ: Յաճախութիւն այսր ձեռյ ամե-
նեցուն յայսմի է, զի յառաջ գայ ՚ի սասատիկ ջեր-
մութէ եռանդան: և թէ արէտ ծաղրական իմն կարծի,
զի զի՞նչ այնպէս օտար ՚ի մորդկայցին խոհականութէ,
քան քարանց, անկոց, դաշտաց, գետաց, խօսել կեն-
դանաբար, խորհել, յօժարել և դործել, սակայն
կարի քննեալ այլազգ գտանի: և կարեոր է համբա-
կաց խելամտել այսմ:

Աչ ինչ երկրայելի է՝ զի ըստ ընաւորեալ յօժարու-
թէանն աենայ ընկերասեր ընութիւնս յամենայն
միշտա սրտին իւրոյ սփոփութիւն գտանել՝ ուստի և յա-
ջողեսցէ: Վասն որոյ զամենայնն շնչաւորս և բանաւորս
կարծէ, և ՚ի վեր առնու զամենայն արարածականս,
որպէս զի սփոփութիւն գացէ ՚ի նեղութիւն իւրում: և
ահա ՚ի սմին տագնապի յուղեալ հոգւոյն վասն սիր-
տոյից կարօտութէն, ընծայէ առընթերակայից իւրոց
առժամեան ինչ կերպարանս կենաց: Զայս խմասա-
սիրական քննութիւն հանապազորդեան վորձով յան-
դիման տեսանեմք: որպէս թէ ոք յընթացս իւր ան-
փոյթ լինելով դժեսցէ կամ զքարի հարկանիցէ
զոտնն, յամբոխման անդ սրտմտի ընդգէմ վիմին, և
նախսատէ զայն բարկութքը իբրև վրէժ խնդրելով առ-

նարս բանս գայ բարբառել: Ասեան բարեանել զայն ցէրիս.
Ուն է նոյն բարբառեանի, և ոճ գիմառեանի, և ոճ
կերպարանանութիւն: Եւ բարբառեանի է՝ սորտօր
գուշն ծանօթն էն, բայց զբարան յագուահ սրեղծանեմք: որ-
պէս: Զինը արդեօս բան ասից Ասէլը՝ Պատրիկի ՚ի
բաց բարյելոյ: Յամասին է ամ բանին, զոր իմանամ այ-
դէս: Որոյ անան և անին ծանօթն էն, յագուահ նմ սրեղ-
ծանեմք բան պարսկան: ՚ի Եւ Գիմառեանի, սորտ-
օր զբարան, մասնգամայն և զդէմոն սրեղծանեմք: որպէ-
ս: Զինը արդեօս ասից բան ծով ծովաւու եղելու լա-
հերթեմացաց: ՚ի կերպարանանութիւն է սորտօր
գուշն էն ծանօթն, այւ տարբարեաց էն, և պահմացն ՚ի մէջ
բերեն պէրպարան: որպիսի: Զինը արդեօս ասից բան
Առջն, արդ ՚ի ուշեղանեսիան ուրաւար լաւ կշառչն: Ա-
յս մաս զանապահանի ոիդուից գրան առելուր նուն-
շան մէջ զի գործ երից այսոցին մէ և: վասն որոյ զբար-
անի ընդ ՚ի մառանանի ամիսին եցած:

ի նմանէ ընկալեալ յիսասուն : թէ այլ ոք ընդ երկար
ժամանակ գեղերեալ իցէ զիրօք ումամբ՝ որբ քաջ
տարրացեալ իցեն 'ի խորհուրդս նորա , կամ ընակիցէ
հանդսուամբ 'ի տան միում կամ յարառայս , 'ի ծա-
ռաստունկ վայրս , 'ի լերինս , ընդ որս յաճախ շրջադայ-
եալ իցէ զուարձութք , 'ի մեկնելն անտի՝ բնաւորեալ
ակնկալութի է նմա՝ միւսանդամ տեսանել զայն տե-
ղիս , որպէս այն թէ անջատիցի 'ի մասերիմ բարեկա-
մաց , որովհետև քաջցր է նմա յիշատակ և տեսութի
այնոցիկ . վասն որոյ դժուարեալ գոգցես ընդ դնալ
իւր՝ կամոդին նայի ընդ նոսա , և առ սրբին յորդո-
րել՝ ոչ ինչ տարադէպ թուի նմա ջեռնուլ ընդ նոսա՝
խօսակից լինելով 'ի խորհուրդս իւր , գրեթէ հրաժա-
րական իմն տալով նոցա ողջոյն : Սովոր մարդեմք իմա-
նալ զպատճառ յաճախելոյ դիմառնութեց յամենայն
շարագրածս՝ ուր մուսնիցեն յուզմունք երևակայուե
և կրից : Կա և 'ի բազում պատահարս զայն տեսա-
նեմք սեփական բազբառս կրից և երևակայուե յառաջ
եկեալ 'ի նմանօրինակ պատճառառացդ նախակարգելոց :

Երրեակ աստիճանք են այսր ձեռյ : Այսանին և
ստորին աստիճանն է՝ տալ անշնչից յատկուիս և կա-
րողութիւն կենսաւորաց : 'ի տմա՝ որ յաճախ և 'ի խօսս
իսկ և հանապազրդ վարի , և զոր 'ի փոխարերութէ
փոքու իւիք յիշատակեցաք , մի կամ երկու բառ յա-
ւելումք 'ի վերայ առաջարկեալ իրացն՝ ցուցանել ըլ-
հանգամանս նորա , զառաւելութիւն կամ զնուազութի
ուժգնութեն : Զորօրինակ . կատաղեալ մրրիկ . ամե-
հի ալիք . արկած անողորմ . այս գոյզն իմն ուժգնու-
թիւ տայ բանին , զի մուսնէ յամենայն զոյցս . մինչ զի
և ոչ 'ի համար գրեն ումանք զայն՝ ընդ աստիճանս
ձեռյս . սակայն վայելուց կազմուի սորա շքեղէ զբանն :
Որպէս յայս բան՝ կարեկացոյն . . . Կաւն 'ի բախմանէ
վայրենի ալեայն խռովեցաւ . . . : Բառդ կայէնի՝ որ մա-
կադրական անուն է դժնդակ գաղանաց՝ յաւէտ աղ-
դողագոյն է և կենդանացուցիչ , քան թէ դնէր՝ սաս-
տիկ . բուռն , ահաւոր , որբ ոչ հաւասարեն սմին :
Իրարձեալ քան զպարզաբար ասելն . Երկիր ցամաքուա,
կամ անջուր , յոյժ գեղեցիկ է ասել . երկիր ծարա-
ւուտ . կենդանական յատկուե տալով անշունչ հողոյ :
Երկրորդ աստիճանն է՝ գործողուե ընծայել անշոն-
չից՝ իրրե կենսաւորաց . զի 'ի սմին զուժգնութիւ գի-

մոռնութեն առաւելագոյնս՝ ցուցանեմբ ըստ հանդա-
մանաց գործոյ տուելոյ անշունչ նիւթոյն։ Եւ զի 'ի
գործս անդ նոցա և 'ի շարժմունս, միոք իմն 'ի վեր
երեխն, այնր աղագաւ հաճոյական ևս է բնութեն՝
աեւանել դոգցես զմեր նմանիս զիսորհեցողս և զիմա-
ցողս և զգործողս, մանաւանդ թէ և ընկալուա այլ
այլութ կրից իրրե զմեզ, զի այս ամենայն որչափ ան-
ակնկալ է, նոյնչափ և զուարձացուցիւ։ Ըստ այսմ
ունի Համբրոնացին 'ի ճառն համբարձման։ « Յայն-
ժամ 'ի տն մեր մահն՝ ընդ մեզ և տարելըս սուդ ըզ-
գեցան։ այսօր 'ի համբառնալ նորա՝ և օդ և երկիր
պայծառացեալ չքնութ ցնծութը ընդունին զնա, և
պարք լուսաւորացդ խոնարհեալք՝ աստիճանք լինին
սուդողին իւրեանց, որ փոփոխեալ զդարշապարս՝
անցանէ վերոյ նոցա յերկինք,» :

Այսպէս և 'ի Ճարականի։ « Անուանեալ փայտ
դիտութ զմեզ 'ի կենացն հանեալ արտաքսեցոց։ որով
յանցեաւ մայրն Եւա, և պատրեաց զնախահայրն։
Խակ փայտ խաչի քո կենաստու դաւազան զօրութեն
կենաց մարդկան, և յոյս հաստատութեն, առաջնորդ-
եղե մեզ 'ի կեանսն յաւիտենից,» :

Եւ կիկերոն 'ի Միլոնի ճառին։ « Է զի և օրէնք 'ի
ձեռու սան սուր 'ի սպանութիւն մարդոյ,» : 'ի սոսին
գործողութ անշնչից աղդողագոյն գործեն զիմաստան։

Երրորդ աստիճան վերագոյն քան զնախակարգեալս՝
է տալ անրանից և անշնչից իմացումն կատարեալ և
բարբառ յօդաւոր։ Խօսելով մեր տոնուա, և պա-
տախանել նոցա։ Այս թէպէտ և բազում ուրեք չէ
օտար 'ի բնականէն, սակայն գժուարին է առ 'ի կա-
տարումն։ զի պահանջէ յոյզս կրից առաւել քան զա-
մենայն ճարտասանական ձեռք, վասն որոյ տարագէպ է
վարել զայս 'ի հանդարտութեն մասց, այլ 'ի տագնա-
պէն և 'ի զայրանալ Արդ ամենայն բուռն կիրք գըրգ-
ռեն զոգիս 'ի յօրինուած ձեռյս, զի և 'ի լուսութեան
չունելով զոք՝ ընդ որում խօսեցին, կոչեն 'ի կարեկ-
ցուեն զանտառս, զերինս, և զաներեւոյթ էակս։ մա-
նաւանդ ընդ որս կցորդութիւն ինչ գուցէ նոցա։ Եւ
ոչ այսչափ միայն։ այլ է՝ զի և զդերեզմանս բացեալ՝
յարուցանեն անտի զմեռեալս, և տան խօսել նոցա
քաջալերս և կշտամբանս։ Բանք և գործողութիւն այս-
ովէս 'ի դէմս և 'ի բերան հեռաւորի կենդանագրեալք՝

բերեն ուժգնութիւ յոյժ, որչափ ոչ կարեն զրդռել
զաշխոյժ մօսց լոկ ցամաք պատմութիւք: Տես զի՞ ի
տաղին ծրօրհնեաց ոնդ երեւցուցանեւ քերթողն զգեան
Յորդանան զարհութեալ ՚ի կոխել անդ Յնի զոս
իւր:

“ Յորդանան լրւեալ վախրատական դառնայր.
Ալքտակ առ վրտակ սպատգամուռ լիներ:
Գետ, մի՛ զարհութիր, քո արարիշն եմ ես.
Եկեալ մըկըրտիմ, և լրւանամ ըզմեղս:

Կանոնիք ձեռյս այսոքիկ աւանդին ՚ի հռւտորաց:
Կախ ՚ի սաստկութեան և թի կրից վարել զայն, և
մի՛ յերկարաձգել. զի՞ ի զայրոյթ բնութեալ կարի շքե-
զէ զբանն, իսկ ՚ի հանդարտելն՝ ոչ ես սպաշտածի:

Երկրորդ՝ առ իրս մեծամեծու և վակմակոնս գոր-
ծել զդիմառնութիւն, և ՚ի մէջ բերել յայնցտնէ բանս
ահաւորս և շքեղս: Զգուշութիւն կանոնիս հարկաւոր
է և յառաջին աստիճանան, այլ յառետ ՚ի սմին: Խո-
սել առ անշնչացեալ մարմին բարեկամի՝ բնական է և
շքեղ. իսկ խօսել առ հանդերձս նորա կամ առ մա-
սունս մարմնոյն, անդէստ է. վասն զի անդամք՝ լրա-
ցուցիչք Են բոլոր մարմնոյն, և ոչ թէ մարմին կամ
էակ զատուցեալ:

Առդ հաւաստեսցուք զատացեալքս օրինակօք:
Մամբրէ Վերծանող ուրեիք ուրեիք համառօտ և ուժ-
դին գիմառնութիւն գործէ այսպէս. “ Զտեղի կալաւ
Յն աւուրս Երկուս, թոյլ Ետ աւազակին մոտելն ՚ի
տուն սիրելոյն. եմուտ ապականագործն, և արար
խռովութիւն ըստ կամաց իւրոց: Գոռողացաւ հպար-
տացաւ մահ, և կատարեաց զիսամս իւրոց չարութեն: Եմուտ ձայնն ՚ի գեղեղմանն, կալաւ զմեռանէ մեռ-
լոյն: ” :

“ Կարեկացին այսպէս Երդարանէ դիմառնութիւն ՚ի
բերանոյ գժոխոց.

“ Սանդարամետն այն ՚ի գող եղեալ, ասսանի ՚ի
ձայնէն ահեղ.

Ահեղ ձայնս՝ որ ես լրւայ, սա քակէ զամուրս որ
ունիմ:

Զամուռա իմ քակել կամի , զերելոցն առնել գերե-
դարձ :

Գերելոցն երանի՛ առեմ , որ եղեն ՚ի յառն առիւ-
ծուն , :

Այսպէս և Ծնորհալին յնպան Եղեսեայ յաջախ
՚ի կիր արկանէ զնես զայս . զոր օրինակ .

“ Յայնժամ որդիբդ իմ հեռացած
Որք այժմ յինէն էք բաժանած ,
Դայք ՚ի վերայ բարձեալ կառաց ,
Պալարակապ երիվարաց ...
Ենդ որ խընդամ և ցընծացած ,
Դիրկս արկանէմ զըւարձացած ,
Եւ զայնիրական զգեստ մերկացայց ,
Կարմիր կանաչ գոյն ըզգեցայց .. :

ՊՐԱԿԻ Դ .

Յաջադաստաբայնութէ :

ԱՎՅԱՆՆԱՐ ԶՈՒԹԻՒՆ (*) է զքոյց ուզզեալ առ
անձն բացակայ կամ մեռեալ : Այս ձեւ ազգակից և
լրդ նոյն է ընդ նախակարգելոյդ . մինչև երբեմն միով
անուամբ՝ բացադարձութիւն կոչել երկոցուն : Յատուկ
բացադարձութենն եռանդն նուազ է քան զգիմառ
նութեն . քանզի ոչ այնչափ պահանջին աշխայժք կրից
՚ի բացախօսելն առ հեռակայ մարդ , որնափ ՚ի հոգեռ
րել զիրս անցունչօ և ՚ի խօսել ընդ նոսա :

Առ նմանութեն երկուց այս ձեռց , չմնայ մեզ ա-
ռանդել ուրոյն զամանէ կանոնս . զի ընդ առաջնովքն
բովանդակինն . և կարդաւորինն ըստ նմին օրինակին :
Եղիշէ վարդապետ ՚ի կարդի պատմութեն յեղակար-
ծում բացադարձութիւն գործէ առ թագաւորն Պար-
սից այսպէս : “ Զի՞ կոծիս , զի՞ մրցիս , զի՞ այրիս , զի՞
բորբոքիս , զի՞ շիջանիս , զի՞ կոչես ՚ի խորհուրդ զայ-
նոսիկ՝ որ զոգիսն ձեր ՚ի ձենջ քաղեալ հանեալ է
զանազականդ յապականութիւնն , և զապակականելի

* ՅԱ . Ա'ՊԵՏՐՈՓԵԼ . Ս. Aversio.

մա ըմինդ գիւտքարչ աբարեալ՝ իրրե զազիր մռակլոտի
՚ի բաց ընկեցեալ։ Ապաքէն զայդ կամիս՝ զի ծածկես
զիս որհութդ ամբարշառւթէ։ աևսջիր յորժամ՝ յայտ-
նե սցի, ապա գիտասցես զելս կատարածի դորա, : (**)

Գեղեցիկ և բանաստեղծական օրինակ է երգ Ծնոր-
հալուոյն ՚ի խորհութդ իշանելոյ մինի ՚ի դժոխս հոգւոց
արդարոց և ազատելոյ զնոսա.

“ Ծանեաւ Ազամ զերշան գալըյն ան ՚ի դըժոխս,
Ծանր ամօնթով կայր հիացեալ երկեղագին։
Կարկառ նըմա Յ՛՛ ըզձեռաս իւր բեկուալ։
Կոշէր ձեռամբ, քաջալերէր՝ մի երկընչիր։
Հայեաց ՚ի ձեռաս յոտս և ՚ի կողմ՝ որ վասրն քո,
Հայեաց ՚ի գլուխս բարձեալ զանէծո ՚ի փշոց երկրի։
Զաղկ եղեգան հարին դըլիոյս իմ մեզաւորք,
Զաղկեալ ապտակ և թուք ՚ի ծնօտս ինձ մատուցին։
Ղեղի ետուն ինձ կերակուր ընդ քայախոյ,
Ղեղւոյ մեղաց քոց փոխանակ որ ՚ի գրախատին։
Ճանապարհաւ մահու ընդ քեզ հետեցի,
Ճանապարհիս կենաց ընդ իս եկ յարութը։
Մարուր հոգիք սըրբոց, և ձեզ մեծ աւեախ։
Մասիք տեսէք մարմնով եկեալ՝ ում ցանկայիք,
Յառաջագոյն գուշակելով զիմ ըզդալուստ
Յայս ահագին խոր խաւարին՝ ուր էք կացեալ։
Նովին մարմնով զոր ՚ի կուսէն եմ ըզդեցեալ.
Նախ ՚ի դըժոխս իջի փըրկել ըզիորուաեալ։

*** Ղիմանթէնէս յէս գիւրանեայ պատերազմին, յըրամ
պարզէցան ամենաշին, յէրեսոց Փիլոդուի հայնդոնացուց,
իւմշեալ վերաբին իւրականական զանէնացին՝ ոք շետ եին
և սորչացէալ շնտ սասազին պարերազմն, բայստրը յանի
առնե այսպիսի օրինական։ “ Երդուեալ ՚ի դիւշազանան՝
ոք զարդ նահապահութիւն նահապահիւշան ՚ի Արքաթին, ՚ի
Արշակնա, և առ Պլատեան, զի ու Պարտեցոյ դաս+..:
Ու-ը Պարտեց սանէր սանէր օրինակ նայս որդարացացաւ-
նե շնչութ մեր։ Այս ժամանակ ըստը անու ՚ի Ած և յահա-
սոր, նորանալսն երդ հասարակ զբան, և զանիւնն
՚ի պատերազման յայնակի՝ դիւշազան անուան, վեր-
ամբ յէտ զնոսա ուն զհասաւուաց բնաւին հարդան։ և
ուշաց օրինակ առան ՚ի սիրու սանիւրուց զգի արանի
առնաց այնացին։ և զպարտութիւն իւրեանց հաւասարէ յաշ
իւսանիցին՝ ոք ՚ի Արքաթին և ՚ի Արշակնա :

Յաշտ և հարավունի:

ԱԿԱԲԱԴԻՐ (*) է յայտ յանդիման պատկերել ստորագրութեք զիրան՝ զորոց բանքն Էն: 'Ի սմին տեսանի ուժգնութեն և զօրութեն պերճախօսութեն, որ առանց այսր չունի դրաւել և բռնանալ 'ի վերայ լողաց: Թերեւս և ոչ մի 'ի ձեռոց գտանի դժուարին քան զայս, այլ և ոչ հզօրագոյն 'ի յոյզո կրից, և 'ի զարդ բանին:

Կանոնք նկարագրին Էն: 'Ատիս կերպարանել զիրան 'ի մաի, և ապա դրոշմել 'ի դիր, որպէս զի քաջ ազդոց ընծայեսցի լողաց: Զի որպէս որ զառաջեաւ զիմն ունիցի, է զոր զգալի աչօք, և է զոր աչօք մասցն տեսանե: 'ի նմա, նոյնապէս և Տարտառանն բաց 'ի վերին երեսոցն պարտի նկատել 'ի նմա և այլ ինչ բազում:

Երկրորդ 'ի համար առնուլ զմասունս իրին, զյարակից պատահմունս, զպատճառաւսն, զգործս և զամենայի հանգամանս' ողք ձեռնուու գտանին առ 'ի կենդանի նկարագրել:

Երրորդ զի դիւրիմաց լինիցի շարագրութին և պերճ: Եւ լինի դիւրիմաց, որպէս յոլով ուրեք պատուիրեցաք և պատուիրեմք, եթէ յատուկ և պատկանաւոր բառիւքն բացատրեսցի: Քանզի յարոց նկարագրին 'ի բացայայտութեն հաստատեալ կայ: Խակ առ պերճութին 'ի մանունս և 'ի շնչինս իջանելի է: զի այն ոչ թէ 'ի բացատրութին, այլ 'ի ծանրաբեռնութին և 'ի մեռյլ ձգէ զբանն:

Չնկարագիրս զգալեաց բնականաց այսպէս գործեցես: ուր բանք իցեն յալագս երկնից և երկրի, և որոց 'ի նմին կարգի իրը մեծամեծք, զամենայի ահա-

* Յն. ԿՊԾԱՊՈՇՏԻՑ. լո. Demonstratio.

Չայս յւ Ա-ՀԱՆ-ԳԵ-Շ-Ն-Ղ 'ի ՊԻ-Գ-Ր-Ի-Շ ԳԻ-Շ-Ն Ա-Բ-Մ-Ա- ստութիւն անուանէ: այլ զի մէ զարդարանութիւն նախ գրելու երբեմ նախն գրոյս, վահ ուրա առան զնիարա գիրն կարեւու: 'ի հայդի բանին, որպէս և հին ճարդարա-

ւոր և շքեղ կերպարանեսցետ ջի կամ ահաւոր են և վսեմ, և կամ գեղեցիկ և անակնկալ. և նոցին զոյդ պահանջի կազմութիւն բացատրութեն: Շարար նկարագրէ Խորենացի զտեղի քաղաքին Ա անայ. (ա. 16.)

“Տեսեալ Շամիրամայ առ Եղերը ծովուն՝ երկայնաձեռլուր մի, որոյ նիստ երկայնութեն ՚ի մուտս կոյս արեգականդ, սակաւ ինչ առ կողեալ հիւսիսոյ, իսկ ՚ի մի ջօրէ կողմանէ դէպ ուղիղ առ Երկին հայելով քարանձաւ կանգուռն անշեղ. և ՚ի ամանէ զհարաւով բացադոյն հովիս իմն գաշտաձե երկայնաձիդ յարևելից կողմանէ լերինն իջանելով յեզր ծովուն՝ ընդ արձակ և գեղեցիկ ձորաձե. որոց ընդ մեջն հոսանք ջուրց բարեհամաց ՚ի լեռնէն իջանելով ՚ի ծործորոց և ՚ի հովտաց ծորեալք, և ՚ի հիմանց փեղից լերանց միաւորեալք, ՚ի ծաւալումն գետոց պերճանային, և չենք ոչ սակաւք ՚ի հովտաձե ձորակին յաջմէ և յահեկէ ջուրցն յօրինեալք. ՚ի յարևելից կողմանէ հաճեցեալ բլոյն՝ լեռն մի փոքրագոյն ..”

Զարհեստականո գեղապահոյն յօրինեսցես, յանդիման ածեալ զպանչելիս արհեստին, զնոխութիւն դործոյն, զմեծութիւն ստացողին. և մանաւանդ զհամեմատութիւն արհեստին ընդ գործոյ: Չքնազ նկարագրէ դարձեալ Խորենացի զերուանդակերտ՝ ընականան մասամբ և արհեստականաւն, զուարճացեալ և ինքն գրողն. զի ասէ. (ը. 42.) “Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ գաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնազ յօրինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի շնու մարդկութը և պայծառ շնուռածովք, լուսաւոր որպէս ական բիր. իսկ շուրջ զմարդկութըն՝ ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբքուն՝ զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբաղմութիւն այդեւաննոյ, իբր զարտեանաց խիտ և գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն զիր կարակնաձե՝ արդարեւ գեղաւոր կուսից յօնից դարեանդաց համեմատ. իսկ ՚ի հարաւոյ հարթութիւն գաշտաց՝ ծնօտից պարզութե գեղեցկութիւն. իսկ գետն բերանացեալ գարաւանդոք ափանց, զերկթերթիսն նշանակէ շրթունս: Եւ այսպիսի գեղեցկութ զիր՝ անդթթելի իմն գոպցես ՚ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի,,:

Նկարագրութիւն մարդոյ ըստ արտաքին կերպարա-

նացն լիցի Հջորիս և մանրապատում - քանզի ՚ի դոյզն պատկերի անդ մէն մի երանզք տպաւորեն տղթեցւթե բազում, և ՚ի յայտ թերեն որ ինչ ՚ի նկարագրեալին Են կիրք և խորհուրդք : Օգնեն առ այս նմանութերք և փոխակերպուիր և այլ ևս պատշաճական զարդք, առ բացայսյտ խմացուած իրացն : Ակրդիլիոս գեղեցիկ նկարագրէ յԵնէականին (կ. 296.) զքարտն դիակիր՝ որ նաւակաւ անցուցանէր ընդ դեռ զմռուեալս, ըստ վաղնջուց այլարանուե առապելաց՝ օրինակ զայս .

։ Թանձր Ամերոն արզմայորդեալ անդընդապայտ, Յուղեալ թափէ ՚ի կոկիտոն զաւագին կոյտ (*) . Պահակ ՚ի ջուրսն անդ և գետոյն այն նաւագար ՚ի մռայլն ահեղ կացեալ քարտն սոսկաւիթիսար, Ոյլր ՚ի ծնօմին կախին խրառւեալ ալեաց դիակիր . Աչքըն հրացայտ, պընդէ զուսովք դըձուձ դըրդլեակ : Թիավարէ պարզեալ հողմոց և առագստատ, Կրելով ըզթուիս դիականց շեղջ բարձեալ ՚ի լատտ, Ծեր հինաւուրց՝ այլ դիցն ՚ի տիպ հուժկու և ժիր : Անդր ՚ի գետափիլն խառնամբոխ խրանի ջոլիդր. Արք և կանայք, և գոռ մարտկաց գի անկենդան, Տըղայք ւազջկունք գեռ անմատոյցք ՚ի սրբակապան . Նւ սրտանեաց ՚ի փայտակցյտ անդր ՚ի խարոյկ Հանգէստ աչաց ծնողացն եղեալ մարմինքն առոյդ : Երր ՚ի նախկին սարսուռ աշնան ՚ի յանտառին Թափին սաղարթք, կամ որպէս հաւք երամովին Վարեալք ՚ի խստ ձըմերայնոյ յափն ՚ի ջերմնեակ : Միթածովէն խըռնին ՚ի յայն կոյս ՚ի ցամաք . Հանդէսպակաց ափանն անձձկով բազկատարած, Պազատէին կանխել ՚ի չու ընդ գետն ՚ի յանց, Այլ ոխերիմն առեալ նաւաստ մերթ զայս մերթ զայն, Զայլս ՚ի յափնէ անտի մերթէ ՚ի հեռաստան :

Առ Նկարագիր անցից և դիպուածոց՝ առաւել ևս ճարտարութիւն պահանջի . յառել երեակերպութեան

* Ակենքն և կոմիտոն անուան + նև գետոց, զորս իւղելին բանապեղն + ՚ի դեմիս : Ակրդիլիս այնու իւղելու ու դժուն, որուս նև Ակենքն մուտք ՚ի կոմիտոն ասոքին յորդաբ՝ զուուլ յուրածի իւրուս անդր տարեւու նուին :

՚ի խորս իրաց, և քաջ խելտմունը այնոցիկ, որպէս զի կարասցէ տպաւորել ՚ի լսողն զզցացմունս իւր ըն նա խակարգեալ կանոնացու: Ընտիր օրինակ է ՚ի դիրս Նղիշէի նկարագիր ցատմանն Յաղկերտի արքայի ընդդէմ նախարարաց, որ ունի այսպէս. (Բ. 79.) “Յայն ժամ գառնացեալ քան զըւղի թագաւորոն, փլուզաներ անդէն ՚ի փորին զծով կամաւոր մազձուն իւրոյ. և ը չիթան և ընդ բերանն առ հասարակ գոլորշի ջերմա խառն ելաներ, իրեւ ՚ի սասատիկ հնոցէ ծուխ թանձրացեալ: Եւ առ չհանգարանել սրտին՝ կոտորէր զջորութիւն մարմնոցն, և ծակուտէր զբազմամթէր ամսն խորհրդոցն. ցրուէր և վատներ զամենայն խորհրդունն նենգութէ: Եւ զոր ու երրէք կամէր իւրոց սիրելացն յայտնել, ակամոց առաջի ծառայիցն քնի մեր կանայր . . . : Եւ ինքն զառածեալ անգրէն գառնայր անմիտթար արտամութը զօթեանս ագաներ, :

Ընտիր է և ՚ի դիրս խորենացւոյն նկարագիր ամբոխի զօրացն թէլայ, և զինուց նորին իսկ հսկային, և ահաւոր կառուցն: (ա. 111) “Երեւեցաւ նոցա բազմութէ անկարգ հրոսակի ամբոխոյն թէլայ, ցան և ցիր յանդուդն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով: Իսկ թէլ հեղ և հանդարտ ամբոխիւ մեծաւ. ՚ի ձախմէ ջուրոցն ՚ի վերաց ոստոյ միոյ իրեւ ՚ի դիտանոցի: Ծանեաւ Հայկ զինութիւ վառելոյ ջոկատին, յորում թէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ ընտիւք և վառելովք ունամբք, և երկար միջոց Տանապարհին ընդ նա և ընդ ամբոխին. և ինքն գլխանոց ագուցեալ երկաթի նշանաւորոք վերջոք, և տախտակս սղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից և բաղկաց. գոտեորեալ զմէջան, և յահեկէ զստինն՝ երկսայրի. և նիզակն արի ՚ի ձեռին իւրում աջոյ, և յահեկումն վահան, և ընտիրք յաջմէ և ՚ի ձախմէ: Եւ տեսեալ Հայկին զախտանեանն կուռ վառեալ, և արա ընախիրս ընդ նմա աջմնս և ահեկինս, կարգէ զԱրմենակ երկու եղբարբք ընդ աջմէ, և զկադմու և զայլս երկուս յորդուց իւրոց ՚ի ձախմէ, զի արք կորովք էին յազեղն և ՚ի սուսեր. և ինքն առաջի, և զայլս հրոսակին զինի իւր կարգեաց, երեքանգիւնի իմն կարգեաց ձեռվ, հանդարտ յառաջ մատուցանելով: Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ՚ի մեանս, ահագին դպրոցիւն ՚ի վերայ երկրի առնեին շա-

Հաստակելովն, և ահա՝ պակուցանողս տարագուք յարձակմանցն զմիմեամբք արկանէին : Անդ ոչ սակառք յերկոցունց կողմանց սկայիցն, արք յաղթանդամք, բերանոյ սրոյ դիսպեալք՝ տապալ յերկիր կործանէին . և մարտն յերկոցունց կողմանց մնայր անսպարտելի : Զայս պիսի անակնունելի դիսպուած տարակուսանաց տեսեալ արքայն տիտաննեան զարհուրեցաւ, և 'ի նոյն բլուր ուսափ էջն՝ վերջուննեալ ելանէ . քանզի խորհեցի միջոցի ամբանալ ամբոխին, մինչեւ հասցէ բովանդակ զօրն, զի միւսանդամ Տակաս յօրինեսցէ : Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ սլինտ զայնալիճն, դիսպուցանէ զերեկը մեւանն կրծից տախտակին . և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ, յերկիր անկանի սլաքն : Եւ այսպէս Տոխացեալն տիտաննեան կործանի, յերկիր զարկուցեալ, և փչէ զոդին . . .

Գեղեցիկ է դարձեալ և (ա. 26.) պատմուի երազոյն Աժդահակայ . և 'ի դիրս Մակաբայեցւոց (ը. 17. ժդ.) նկարագիր՝ տարասպարտ անձնասպանութեն Հռաքուի :

ՊՐԱԼԻ Զ.

Յաշտս Աշերսանաշ :

Ա. ԴԵՐՄԱՎԱԿ. (*) Են սպազատանկը 'ի կատարութիւններուածոց : Այսինքն է խնդրել զօդնութիւնն առն գերակայի, կամ զարդար դատովութիւնն դատաւորի, կամ հանդերձ խոստվանութեամբ յանցանացն՝ հայցել ներումն և ձեռնտուութիւն, 'ի դթուի դատաւորին ապաստան առնելով զիրսն, և ոչ յիւր արդարութիւն խրախուսել . նկարագրելով զաղէտան առ 'ի դութ արկանել .

Ցայս է 'ի սահմանէս և 'ի բացատրութէս՝ թէ առայս ձեւ պիտին ամենայն կանոնիք զիջուցանելոյ զբարկութիւն ցասուցելոյն, և շարժելոյ զնա 'ի մարդասիրութիւն 'ի վերայ տագնասպի վշտացելոյն : Այս ամենայն թէ վայելուչ օրինակաւ կազմեսցի՝ ոչ հեռանալով երբէք 'ի խոնարհ կերպարանաց և 'ի բանից, կատարի

* Յն. Ομολογία. լս. Deprecatio.

դործն աղերսանացն : Այլ զի անգատին յազդեցուեցնութեան յառաջ էկեցեն իբրդ , և խօսողն զգածեալ իցէ բնաւորապէս , պարտ է նմա խելամուտ լինել մէծութեն և կարողութեն նորա՝ առ որ սկազատի , որ ձեռնհաս է պատժել և ներել . նոյնպէս գիտել և զանձին տկարութի , յանձին կալեալ զի՞ւամն : Դարձեալ և յիշեցուցանել նմա խոնարհութիք , որպէս ոչ զանիսուլ ինչ ՚ի նմանէ , զարդարացի պատճառս գործոյն . սակայն մի բնաւ խատութիք և յառաջըներութիք վաստից :

Տեղի այսր ձեռյ սովորաբար ՚ի վերջաբանին է . ուր ՚ի շարժութեն կրից թէ տկարագոյն դացէ զընթացս և զկազմուեն բանից իւրոց , կամ ոչ համոզեալ զունկն գիրս , մարթ է աղերսանօք մեղմացուցանել զիստուեն սրախ նոցա , և ՚ի ձեռս բերել զիսնդրելին :

Լամբոնացի ՚ի Հոգեգալբանէան ճառին աղերսանս իմն կամ յորդորանս հարկեցուցիչս ձեացուցանէ ՚ի գիմաց Որդուոյ առ Հոգին , շարժել զնա ՚ի կարեկցութի և ՚ի գթութի ՚ի վերայ աշակերտացն : “ Այսուհետեւ քեզ եկեալ եհաս ժամանակ գործոյ , ուլ փառակից իմ Հոգի . պարտիս և զքոյդ մարդասիրութիցուցանել ՚ի յերկրի . այսուհետեւ քեզ ապաստան առնեմ զանումն անցութես մեր յարդել առ մարդիկ : Հայր իմ ներեաց և եթող զպարտսն՝ որով դուն խափանեցար ՚ի հեղոյ առ նոսա , մարմնոյ իմ պատարագաւն սա առ զիս առհաւատէեայ ՚ի նոցանէ , և տայնց զքեզ խաղաղութի : Կը այժմիկ , սիրոյ աղբիւր , սիրով առ նոսա . և միմիթարեա զորս ՚ի պանդխտուեն վայրն՝ նժդեհ և անցաւոր կենօք տառապին . . . քեզ առմ զնոսա , քեզ յանձն առնեմ զնոսա . զքեզ խոստացայ նոցա , և այժմ ՚ի քեզ ամրափակեմ զնոսա զամենեսեան : . . . Ոչ են ծանօթ երկնաւոր փառաւորութի , այլ միշտ ընդ երկիր յածին , և կարծեօք ունին զայս ճշմարտութի : Արդ էջ աղաւեմ , էջ . զի պաշարեալ է տարակոյսն զնոսա , :

Կիկերտն այսպէս աղերսէ ՚ի ճառին Դէստարայ . “ Թափեա զմեզ յերկիւղէ աստի , կեսար , քոյին հաւատարմութիք , հաստատութիք և գթութիք . զի մի ևս խիթացուք՝ թէ իցեն ՚ի քեզ և հետք անգամ սրտմութեն : Ազաւեմ զքեզ . վասն աջոյդ , զոր հիւրընկալեալ ՚ի Դէստարայ աղբայէ՝ ձգեցեր առ նա . զայնը

աջոյ ասեմ, որ ոչ այնչափ ՚ի մարտու և ՚ի պատերազմունու, որչափ ՚ի խոստմունու և ՚ի հաւատարմութեան հաստատուն կայ,, :

Վիրդիլիոս յԵնէականին (էլ. 565.) զՊալինոր զոմն ՚ի ներքս ածէ ղեկավար նաւուն Ենէասայ, որ ՚ի թմրութե գիշերոյ անկեալ ՚ի ծով ՚ի նաւէն, և տնացազեալ յերեսս ջուրց, զայսօրինակ աղերս արկանէ առ տէր իւր :

“ Հովմ ՚ի ծովափն արդ զիս մըզէ, կոծէ զդիակն իմ ալիք

Երդմնեցուցեալ ըզքեղ ՚ի զուարթ լոյս Եթերին և ՚ի սիք .

Յանուն ծնողիդ քո և Յուլեայ մանկանդ ՚ի յոյս դեռափթիթ ,

Զիս յազէտից աստի դերծո, քանզի կարես կորովիդ .

Արկ զինե հող, և Ալլինեան ՚ի նաւակայս երթ ըզկնի ,

Կամ ընդ ուրեք թէ դիցուհին մայր ցուցանէ քեզ ուղի ,

Զիս կարծեմ զայսքան սըստոյտ առանց վերնոց տեսչութեան

Հասանել քեզ, և անցանել ՚ի լող ընդ լիճն ըստիւ զեան ,

Զաջ քո առ իս ձըզեա առ հէզս, ած զիս ընդ քեզ ընդ ալիս .

Զի դէթ ՚ի կայս խաղաղութե հանդեայց մինչ շունչ չիցէ յիս,, :

ՊՐԱԿ Ե.

Յ-Ն-Գ-Ա- Ա-Խ-Ե-Ւ:

Ենէնաք. (*) Են շարիս մաղթել անձին կմ այլոց, ըստ արդար վրէժինողքութեան : Յայանի է ՚ի յետին պայմանէս՝ թէ չէ օրէն Տարտասանին տարրապարտուց կամ առ ատելութե անիծանել զոք : Այս սովորու-

* ՅԱ. Ε' ταρρά. լս. In precatio.

Եթի չարփս մաղթելոյ՝ թերեւս հետք ինչ իցեն վաղեմի
սովորութել հեթանոսաց. որբ 'ի ցառնուշն սրտմոռուք
'ի վերսոյ ուրուք՝ զնհանգս դժոխոց (*) կարդային,
առ. 'ի տանջել զնա 'ի վրէժ մեղանացն :

Ենի անիծանել զանձն 'ի հրաժարականս, երբ ոք
առաւել յանձն առնոււ զւարփս անիծից, քան հազորդ
լինել վատուե դործոյ. յորում է խմանալ և զերդումն
ահաւոր յանուն ամենակալին, 'ի նմանէ մնալով սպա-
տուհասի յանկանել իւրում 'ի մսացն հաստատուե:
Այսպիսի է անէծքն որով Մաշտոց անիծանէ զանձն,
'ի թուղթն՝ զոր զրէ առ Արա սպարապետն Հայոց.
որ հրաւիրէր զնա գալ միարանել յանօրէն ժողովն,
զոր կամեր առնել նա ինքն սպարապետն և ընկե-
նուլ զիշորդ կաթուղիկոս յաթռուոյ, 'ի դիւաշունչ
մախանաց դրգուեալ: "Այլ իմ առէ մեռցի և կո-
րիցէ անուն և յիշատակ յերեսաց երկրէ. և խաւա-
րեսցին բիրք աշացս, և մի՛ սեսցն զլոյս. և քակես-
ցին ականջքս, և համբ եղիցի հովեալ բերանս, և լե-
զու. իմ 'ի քիմս իմ կցեսցի. և մէդ և մառախուղ մե-
զաց և ստուերք մահու պատեսցէ զբոլոր անձնս,
եթէ ինչ շարժեցայց կամ զդացայց տեսանել կամ
լսել կամ խօսել զարդարոյն զանիրաւութի... քա՛-
լցի ձեռս ամբառնալ յօծեալն այ, և քրէական մե-
զօք վատրանգի լինել անթողըովն և անթշկելովն.
քա՛ լցի ինձ լինել կորիս և Դադան հակառակ ըն-
տրելոցն այ. ապա թէ ոչ, բացցէ երկիր զիշերան իւր
և կլցէ զիս կորատեամբ ընդ բանակն Արփրոնի, և կեն-
դանւոյն իջցեմ 'ի գժոխս: Իմն այդ է. և յայգմանէ

* Ահանգ + Դժոխոց շաբ հեթանուսիսն այլաբանակնէց
երեւ և ին, Անումիտ ազգի մարդիսն համաշխն Դոդեկան Աստ-
րանի և Գիշերայ, անսանեաց Ալիւոն, Տիսիտոն, և
ՄԵԴԱՐԱ: Պատճենին սահս և գու հարիւտեին պարակա-
շաբ մարդի օյիւտ և զահիւտ լսուշելով. որոյ վասն նիս-
րեն չասա գիւտիսիս, լուսու իծիւտ: Այս այլաբան-
նի սիրբն իւլս 'ի բարյասիս վարդաղետուն, Ան սար-
գուշտ առնջին 'ի խոզէ մուաց իւրեւնց, և հանագու իս-
ծագին 'ի նոյանէ իբրւ յիշիւ և յօյիւ. զոր վասն առա-
շագոյն յօյինէւր' այսպէս նմաւագրեին ուրիսոց և մար-
դանանի:

զիս ոչ որ կարէ փոխել . ոչ դեհենին երկիւղիւ , և ոչ
արքայութեն խոսամամբ , . . (Յաշէ . Խան :)
Խակ օրինակ անիծից որ առ այլտ , ունիմք առ սըյն Ներ
սէսի Ընորհալւոյն յողբսն Եղեսիայ .

“ Ապան այսորիկ ած խապառ .
Կործանեսցէ զքեզ յաւխեան .
Եւ իրլեսցէ զարմատըս քո
Յերկրէ հանցէ կենդանական . . .
Արդ քեզ ելցէ կարճ ’ի յօրեր ,
Եւ կայենին հասցէ երեր :
’Ի դառնութիւ գարձցին տարելլք .
Ճըրհեղերին ելցեն գետերք :
Սեաւ ամնզ մըթին կարկրտարեր
Զքեզ արասցէ անսլրտղարեր .
Սոդովմացւոց հուր ծըծըմբեր .
Իջցէ ’ի գլուխդ արիւնակեր . . .
Արդ ’ի գըժոնս իջցես ’ի խոր ,
Վեզ անկողին մէցք և ցեցեր :
Եւ նոյն հրեշտակըն մահարեր
Սըրով հասցէ զքեզ ’ի յաղցեր . . .
Արդ հատուսցի քեզ փոխարէն
Զարեացն ամէն զօր գործեցեր .
Տուն քո լիցի անհետ աւեր ,
Եւ դու գերի ազգով երեր . . :

ՊՐԼԱԿ Բ.

Յ-Հ-Դ- Ո-Ղ-Ղ- Բ- :

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ (*) է՝ բառնալ զատացեալն , և
դնել ը այնը զյաւետ պատշաճականն : Այսինքն կա-
մաւ վրիպել՝ առ և ևս ազգողագոյն յօրինելոց զկաղ-
մութիւ բանին . իբր զի զոր յառաջն ասաց առենա-
խօսն՝ կեղծէ ոչ հաճել ընդ այն , և կրկին ուղղագրէ .
և զոր յառաջն լաւագոյն երեւցուցեալ էր , սաստկա-
ցուցանելովն քաջահաճոյ առնէ : Այս ձեւ չէ հետք
ճարտառասական , այլ թելադրութիւ ընութեն՝ որ զա-

* Յն. Διόρθωσις . լու . Correctio.

մենայն հնարս 'ի դործ արկանէ առ 'ի յաջողութիւն .
յաղագս այնորիկ զմիանգամ ասացեալն՝ յաւելու այ-
լովք ևս աղջողագոյն խմացուածովք սկնդակազմ յօ-
րինել , և իրո աստիճանոք յաներկբայելի ճշմարտու-
թի հանել զրանն :

Ա. յսպիսի է խորենացւոյն ասելն . (ը . 8 դ .) “ Աս-
տանոր ամաչէմ ասել զՃշմարտութի , մանաւանգ թէ
զանօրէնութի և զամարդութի ազգիս մերժ , զմե-
ծի ողբոց և արտաստուաց արժանի սոյա զգործս , :
Սարգիս վարդապետ . (յակ . ը .) “ Զայսոսիկ լսելով ,
Եղբարք , հայեացուք 'ի մեզ և սթափեացուք յահա-
գին արբեցութէս , Եթէ արբեցութի պարտ է անուա-
նել զմերս և ոչ խելագարութի , : (յակ . թ .) ... Բան
զամենայն դժնդակ տանջանս դառնագոյն ինձ և մե-
ծագոյն տուգանս այս է . և զի՞նչ ասիցեմ զամենանս .
թէ յարբայութին մտանիցեմ և զամենայն փառան
ժառանգիցեմ , և զիա ոչ հասանիցէ ինձ տեսանել .
Քան զգեհենն չար համարեկի զայն հանգիստն , : ”

Յովհաննէս խմատասէր ընդդէմ երեւութականաց .
“ Այս է քո պանծալի անծարանութիդ , մանաւանդ
թէ յիմարութէդ ցոյցք . զնիւթս զայս յաւէժակից
ասել արարշական զօրութէն , :

ՊՐԱԿ թ .

Յաղագ կայ յան յեւայ :

Ա. Ախոնի Սմ . (*) է տարտամելունել զոգիս ունին-
դրաց , յուսացուցեալ 'ի լուր կարեոր ինչ և օգտա-
կար իրաց : Այս ձեւ հնարագտառութիւնն է ճարտա-
սանական արհեստի նմանութիք ընութէ , առ 'ի պա-
րանել զլողս , և ձգել զնոսա ՚ի բանս իւր : Զբոյցն
անորոշ , զոր 'ի մէջ առնու տանենարանն , առ ժամա-
նակ մի յերկմառութէ տատանեցուցանէ զլողս . որք
զի ոչ գիտեն՝ թէ ուր յանկեսցի բանն սկզբնաւորեալ ,
իւրաբանչիւր ոք այլնայլ ինչ մտածէ յանձն իւր՝
յայն կամեցեալ պատկանել զսկզբնաւորեալ բանս
ճարտասանին . մինչեւ 'ի յայտնել իրացն անակնկալ
օրինակաւ , գեղիցիկ և հանճարեղ տեսանի գիւտ ա-

* Յն . Παράδεξογ . լա . Suspensio.

ամենաբանին : Եւ զի կարասցէ . Հարասարութ՝ 'ի գլուխ հսկել զայն, պարտ է նմա քաջարուետո յօրինել զձե կախմանն իմաստուն բանիքն և զեղուն մաածութը՝ ոռ ՚ի կարթել զունկնդրուն նոցա , մինչե ՚ի յառաջ բերութի պատրաստեալ բանին :

Օդուտ այսր ձեռոյ այն է՝ զի ըստ օրինակի յառաջարանութեն յօժարամիտա առնել զունկնդիրս , որով ազգողագոյնս ընդմտանեն բանիքն ՚ի ըսլիս նոցա . իսկ պատշաճ առ զին է սկզբնաւորութ զլիսաւոր ինչ իրաց՝ յոր ձգել կամիցիս զունկնդրութի լսողաց , և անտի զշետ բերել մեծ ինչ և օգտակար : Գեղեցիկ յոյժ զձես զայս ՚ի կիր արկանէ Ուկեբերան ՚ի Տառելն զիւղկատակութէ :

“ Եւ ուր է՝ զի չէ ախտն այն . արդ և յեկեղեցի ևս եմուտ , և ՚ի գիրս ևս մեսնցաւ : Առացից ինչ , զի ցուցից զշարեացն առաւելութի . ամաչեմ , բայց սակայն ասացից . քանզի կամիմ ցուցանել՝ թէ որչափ տարածեցան չարիքն , զի մի կարծիցիմ և թէ վասն չնչին իրաց սուտ խոսիցիմ , այլ զի գռնեա այնպէս կարացից մերժել զձեղ ՚ի պատրանացն . և մի ոք համարիցի եթէ ՚ի մասց ինչ կարկատեմ , այլ զոր ինչ լուայն զայն առեմ : Եմուտ ոմն ՚ի տուն աւագաց . թէսլէտ և ծաղու բանիք Են , սակայն ասացից : Իբրև սկուտեղ խորտկօք առաջի եղին , սաէ : Ընկալարութ զնրատ զի մի բարկասցի որովայն .. :

“ Դարձեալ և այլուր . “ Հաւատայցէք արդեւք՝ եթէ եղև ջրհեղեղ . եթէ առանցելոց ինչ բանիք թուիցին ձեղ . ուր և լերինքն յորս տապանն դադարեաց՝ վկայեն . զհայոց լերանցն առեմ : Այլ ևս յաճախութեամբ , և յայլ ևս քան ՚ի նոյն , յայտնագոյն ածիցէ բանս . երթեալ ուրուք իցէ ձեր ՚ի պաղեստինացւոց աշխարհն : Այսուհետեւ ոչ ևս բանս այլ արդիւնս իսկ առեմ , թէսլէտ առաջնինքն քան զարդինքն յայսնագոյնք Են . զի զոր գիրը առեն՝ և քան զաւաց առեսիլ հաւատարմագոյնք Են : Երթեալ ուրուք իցէ ձեր ՚ի պաղեստինացւոց աշխարհն . ոչնչ ոք ՚ի ձենչ վկայեսցէ ինձ , որոց զանդիսն իսկ տեսեալ իցէ . քան զԱսկաղուն և քան զԴազա ՚ի վերոյ , անդ իսկ ՚ի սպառուածի Յորդանան գետոյ՝ վայրըն ինչ բազում են և ամենալիցք . մանաւանդ թէ էին , քանզի այժմ ոչ է նոյնպէս , որ երբէմն իբրև զցբախան այ էին .. :

Ճարտար՝ ի կիր արեկանէ զձհա դայու և Յովսեառան
նախ քան զպատմել զիրս կեօշն, որ վասն սովոյն՝ զոր.
գին իւր խորովեաց և եկեր: «Քանզի յետ պատմելոյ
եթէ որպէս յանհնարին սովուն զկաշխս վահանացն և
զիսոտ ցամաք Խարակելին Հրեայքն, յաւելու տպա.
» Բայց զինչ պիտոյ է մեզ զբարութիւն սովոյն յան-
շունչ կերակրոյն ցուցանել. զի ունիմ ևս ցուցանել
գործ մի, որ նման նմա ոչ ՚ի մեջ Յունաց և ոչ բար-
բարոսաց պատմի եթէ գործեցաւ, զի գողումն և սոս-
կումն է պատմել և ըսելեաց գժուարին է հաւատալ:
Արդ կամակար անփոյթ տռնեի ևս անցանել զայ-
սութչուառութիւն, զի մի ստել երևեցաց յետամենա-
ցացն, եթէ ոչ բազում վկայս ունեի. և թերեւս
շնորհս ինչ գուղնաքեայ ընդ որդիս ժողովրդեան իմոյ
առնեի ևս, խնայելով Խառել զայն ինչ՝ զոր արդեամբն
պաշտեցաւ: Եւ ապա յարէ զպատմունն, զդժուա-
րահաւատապի անցոն հաւատարիմ առնելով այսու-
ձևով:

Լամբրոնացի ՚ի ճառն Համբարձման՝ ողօրմեցա-
ասէ մարդկան ած. «Որսիսի որինակաւ՝ ոչ եթէ զմե-
զանչական բնութիւն յայլ էութ տարազ յեղացրէաց,
և կամ տկարացեալ զդայութիւն զդալի պարզեւաց
զօրութիւն: «Քանզի թէ այսպէս էր, զդումն երևեցու-
ցանէր նմա վասն առաջին արարութիւնն որում ան-
մարթ է հետեւել նախահայեաց բնութիւնն. և զիարդ
զոր ՚ի բարի ստեղծեաց բարւոյ արարիչն՝ ուներ յայլ
ինչ փոխել, բայց թէ զիանդ ախտիցն՝ ընդ որ յետոյ
թաւալեցաւ՝ մարբելն: Եւ յետ այսորիկ յառաջ
խաղայ ՚ի լուծումն բանին:

Ըստ կանոնիս և ըստ օրինակացս թէ կամիցի ոք
դամբանական յօրինել ՚ի մահու առոյդ Երիտասարդի՝
իւրում սիրելոյ, մարթի կախումն առնել այսպէս.
Տեսանեմ զոգին զայն վերամբարձ, զառաքինի երի-
տասարդն՝ բազմահանդէս զարդարեալ նահատակու-
թիւն, զնոխացեալն բարդաւաճ արդասեօք, զայն՝ որ
ինձ առաւել էր քան վեզրայր հարազատ. ՚ի իսոր-
հուրդս հայր էր ինձ, նեցուկ ամրութիւն ՚ի գործս և
ընկեր մաներիմ. որ բարեմարգութիւն, համեստութիւն,
հեզութիւն, բաղըրութիւն և աղնուականութիւն իւրով
յափշտակէր զիրոսս ամենայն մարդկան. նա ինքն ՚ի
պահու՝ յորում ոչն երթէք ընդ միտս անկանէր, ՚ի

ծաղկի հասակին մինչդեռ մեծապատիւ դաշտու մնայր հասանել, և այն բնչ հանդերձեալ էր կթել զերե խայրիս առաքինի վաստակոց իւրոց, 'ի միում առուր, 'ի միում ժամու և 'ի միում վայրկենի վճարեցաւ 'ի կենաց :

Ըստ որում յայտ յանգիման տեսաւ յօրինակացս, բազում ուստեք մարթ է նիւթ ամբարել 'ի պէտս այսր ձեռյ՝ ըստ զուգընթաց սկատահարաց՝ զորս անհնար է ընդ փոքրու տեսութիւ բովանդակել. վարժութին և թելագրութիւ բնութե ըստ իւրաքանչիւր սիստյից զիտէ ուսուցանել զիթուլին :

ՊՐԵՎԻ Ժ.

Յաշտա Բազմայէղանաբն յեւ :

ԲԱՅՆԱՑԵԴԱՆԱԿԻՆ (*) է որ զնոյն զմի բան բազմօրինակարար յեղյեղէ : Այս ձեւ բազմօք սատար լինի 'ի ճոխութիւ բանին . վասն զի զանազան եղանակօքն ազդողագոյն առնել զբանն : Իմանամբ 'ի սահմանէս և 'ի բացատրութէս թէ 'ի շարժել և 'ի վրդովել կրից՝ ազդի 'ի սիրտ այս թելագրութիւ բնութե, ոչ բաւականանալ ընդ մի միայն բացատրութիւ, այլ բազմագիմի բանիք ձեւացուցանել. և որչափ յառաջ խաղաց 'ի գործն, նոյնչափ սաստկանայ և եղանակ բանիցն : Տեղի ձեռյս չէ որոշեալ, այլ անխափիր մարթի տեղի գտանել ըստ ամենայն սիրտոյիցն, մանաւանդուր կամիցի ատենաբանն քաջ տպաւորել 'ի միաս լուղաց զբանս իւր :

Զուգընթանան 'ի յօրինուած այսր ձեռյ և բազում այլ ձեք . որովք իբր թէ կենդանւոյն յանդիման նկարագրի բանն, և բազմագիմի յերիւրմանիք քաղցրանայ 'ի լաւլիս, և զուարձանան միուք ընդ բացատրութին :

Աքանչելի յօրինէ Սարդիս վարդապետ (թ. պէտք. է.) զայս ձեւ 'ի կոչելն այ զԱդամ' յապտշարութիւ . ' լուր նմին այ, զինչ ասէր առ մեղուցեալ և թաքուցեալ մարդն . Ագամ, ուր ես : Միթէ ոչ դիտէր

* ՅՆ. Αγαχεφαιώρις. Ա. Frequentatio.

թէ ուր էր, մի՛թէ ոչ տեսանէր ամենաստես ակնն, մի՛թէ տղիստանացը արարին, քան լիցի : Ադամ, ուր ես : Տրամաւթէ էր ձայնն, տարակուսանաց բարբառն : Ուրապէս հովիւ զի կորուսանիցէ ոչխար ՚ի հօտէն, և արտմութ ձայնիւ շնուցու զանատն, նոյնգունակ և արտրիչն զդրախան : Ադամ, ուր ես . ընդէ՛ր թաքչիս յերեաց արարչիս, հիմ ամօթով լցեալ ես և երկիւղիւ : Աչ վասն այդորիկ ստեղծի զքեզ, զի փախստական լինիցիս յինէն . ոչ վասն այդորիկ փառօք զարդարեցի զքեզ, զի ամսւէիր յինէն . այլ զի ՚ի զիրկո քո և ՚ի հոգի ընդունէիր զիս : Ադամ, ուր ես . յորպիսի անարդանս, յորպիսի զազդրալի տեսակս, յորպիսի ամօթ երեսաց, յորպիսի խիղն մտաց, յորպիսի ալիս տարակուսանաց : Լուայ, ասէ, զձայն դնալոյ քո ՚ի դրախտի ստո, և երկեայ . քանզի մերկ էի, և թագեայ : Վասն էր երկեար, ով Ադամ . մի՛թէ ահաւո՞ր ձեռով երեւցայ քեզ . մի՛թէ սակառշանով և ահարկու ձայնիւ վարեցայ առ քեզ . մի՛թէ սաստեցի կը յանդիմանեցի . մի՛թէ ոչ որպէս յերկեն և յեռանդն երեւցայ քեզ իմ ընտանի փառօքն, իմ քազդրահայեաց աչօք, իմ խոնարհ և հեզ դնացիւք : Այս՝ ասէ . բայց ես մերկ էի և թաքեայ : Արդարեւ ստուդապէս մերկ . ոչ ՚ի հանդերձի միայն, այլ և յարդարութէ և ՚ի սրբութէ և ՚ի բարեգործութէ, և յամենայն առաքինասէր վարուց : :

Յոլով ուրեք յանձաշունչ գիրս, մանաւանդ յերդս, կայ այս ձեւ բազմայեղանակ՝ հոլովեալ երկիցս կամ երիցս գրեթէ նովինն կազմութ և նմանաձայն բառիւք, որ ազգոյ է և ահաւոր . զոր օրինակ (Սլէ՞ . ժե . ց :) յերգսն Մովսէսի . Հազմով սրտմառուք քով պատառեցան ջուրը. պազեցան ոչ պարիսպ ջուրք, պազեցան ալիք ՚ի մէջ ծովուն : . . . Մինչեւ անցցէ ժողովուրդ . քո . տէր, մինչեւ անցցէ ժողովուրդ . քո այս՝ զոր ստացար, :

(Դադասար . Է .) Լերինք շարժեցան յերեսաց ան Ելուայ Աինայի, յերեսաց ան այ Խարայէլի : Յաւուրցն Սամեգարայ որդւոյ Անտեայ ցաւուրս Յայելի՝ պակասեցին թագաւորք և գնացին ընդ շաւիզո, գնացին ընդ հանապարհս կամակորս : Պակասեցին փորազունք բնակեալք ՚ի մէջ Խարայէլի, պակասեցին մինչեւ յարեաւ Դեքուրա, մինչեւ յարեաւ մայր Խարայէլի : . . . չուր խնդրեաց, և ետ կամըն . դաշխտւրանաւ զօրտու-

բաց մատոյց կոդի : Զձեռն իւր ձախ ձգեաց 'ի ցիցն, և զոջ իւր 'ի սպառապուռ ջախջախանս՝ անպիտանացուցանել, և վախճանեցոյց զԱխարա . վարսեաց ընդ ծամելիս նորա, և անցոյց ցից ընդ դլուխ նորա, և սառակեաց : 'ի մէջ ոտից նորա անկաւ ծանրացեալ, և նիրհէցոյց 'ի մէջ ծնդաց իւրոց, յորում կորացաւ մինչեւ զդետնեցաւ անդ . անկաւ չուառականն , :

Այսլամփ յաղագս աղդի ձեռոց, զորս հոգացաք 'ի սակաւս բովանդակել՝ խոյս տուեալ 'ի ծանրատաղտուկ կրկնութել : Զի թէպէտ և այլք բազում կարգս ձեռոց յաւելուն և դժիւ նոցա բազմապատկեն, սակայն յոլովք յայնցանէ 'ի միմեանս բովանդակին, և կամ ընդ այլով անուամբ և կարգաւ յայլդլուխ դրոցս աւանդին . որով ակն ունիմք զամենեցուն նոցա զասացեալսն ամփոփել 'ի համառօսութեն մերում :

ԳԼ. թ.

Յաշիւ լուրջնաման (*) :

Իւլ. ջնիւթիին, պերճախօսութեն հաստատեալ կայ յայն, զի ատենաբանն ըստ պատշաճի ընդլայնմամբ անեցուցէ զիրն՝ զորմէ ճառէ . քանզի ասէ Կեկերոն, ծայրագոյն գովութիւն պերճախօսութեն է՝ ընդլայնել զիրն զարդուք, որ ձեռն տան ոչ միայն յառաւելուլ և 'ի բարձրացուցանել զիրն, այլ և առ 'ի նուազել և արհամարհ ցուցանել : Սահմանի ընդլայնումն, լայն և լի ստրագրութիւն իրաց իւրաքանչիւր, և մանրապատում յայտնաբանութիւն ամենայն հանդամանաց նոցուն : Կատարի ընդլայնումն՝ բազմադիմի զուդագրութիւն և յօրինամամբ ձեռոցն նախակարգելոց, յորոց զոմանս ընդ երկայնաձիգ բանս յեղյեղելով, զոմանս ամփոփ ունելով, զիկսս աղդողագոյնս և հզօրագոյնս բացարելով, բովանդակի ընդլայնումն պերճախօսութեն : Եւ զոր օրինակ երկու աղդ են ձեռոց, ըստ բառից և ըստ խմասաից, նոյնպէս և ընդլայնումն կրկին օրինակաւ յօրինի, բառիւք և խմասաիւք . բա-

* Յն. Παρούξησις . լո. Amplificatio.

ռիւբ ընդլայնումն՝ երբ միայն 'ի նիւթական յօրինուածն աշխատ լինեցիս. իսկ իմաստիւք՝ երբ զմի և զնոյն իմաստ ջանացես բազմադիմի կազմել նորանոր և զուարձալի. և լաւագոյն գործի՝ Եթէ բառից ևս ընդլայնումն՝ 'ի նոյն խառնեցի:

Տիրապէս ընդլայնումն իմաստից լինի՝ եթէ շտեմացանեալ նիւթո յիսկուէ գործոյն՝ զորմէ բանքրդ Են, 'ի պատճառացն, 'ի գործոյն, 'ի յարակցացն, 'ի պատահանցն, 'ի հետեռութեանցն, զայն ամենայն բազմաձեռք զարդարեացես: Առ այս իրրե կանոն և օրինակ նմանուէ առաջի մասուցից վերլուծուք զՃառն գրիգորի Նիւացւոյ 'ի կոտորածն անմեղ մանկանց թեթզեհեմի. յորում է տեսանել զեղանակ ընդլայնման:

Յետ յառաջաբաննելոյն, քանզի ծեր գոլովք վասն խնդրոյ ժողովրդեանն ելանելը յատեան բեմբասացութէ, սկիզբն առնէ բանին՝ իրրե 'ի պատկերի տեսանելով զաղէտս կոտորածի մանկանցն, և զչէ ծութիւն մարցն լսելով: Ապա յառաջ խաղացեալ 'ի կարգ բանցն, հետազոտէ զպատճառ մոլեգնութէն Հերովդիուր սբանչէլի է նկարագիր ամբողուտաւանութէն նորա: Երրորդ՝ ձեւացուցանէ Հերովդի պատուէր տալ առզօրականս վասն սպանութէն, իրը նեղեալ յառանին ապատամբաց: Չորրորդ՝ կատարումն հրամանին, և կատաղութիւն զինուորացն առ ահի թագաւորին: Հինգերորդ՝ աղէտք թաղման մանկանցն կոտորելոց 'ի ծնողաց նոցա:

Մէն մի մասունք հնդեակ բաժանմանս յայտնադոյն ուստուսկեն զեղանակ պերճախօս ընդլայնման. զուգագրութէն նախակարգեալ ձեւոցն յիւրաքանչիւր պատականեալ մասունս հառին:

Ա. "Արդ զիս գեռ ևս տղայոցն հնչեցուցանէ գոցումնն. և տեսեալ զնոսա՝ կարծեմ ճշել անգուշակս զարհուրելով, և 'ի նշյլս սրոյն կափուցեալս, և երկիւղիւ խոնարհեալք 'ի դիրկս մարց իւրեանց իրրե յապաւէնս, այլ և 'ի ծոցս խուսափեալս: Ապա և զմարսն կարծեմ անսանել, այլ զոմն առ այլուրս վախուցեալս 'ի քաղաքէն այնու ոզորմելի և քաղցր բեռամբք, և խնդրողս տեղի ապաստանի. և զոմն 'ի նոցանէ՝ ոչ ծածկոյթ բարեշուք զեւրեաւ առեալ 'ի գառնութէն. իսկ ոմն և զոր ուներ՝ 'ի բաց ընկեցեալ

ի շփոթական փախստենեն : Եւ զայլ ոմն զմանկամբն անկեալ յայնպիսի ծածկութի զողացն վասնգեր, դռ զանալ յուսալով . և զմիւս ևս այլ՝ հասեալ 'ի հալածացն ուժգնակի, և ապա սպակասեալ 'ի դնացիցն, և սպարաւանգեալ յերկիւղեն, և սրբատեալ աշօք հայեցեալ 'ի փայլումն սրոյն, և զհայեցուածն յերկուս բաժանեալս, և զանձն առաջի Եղեալ փութապէս իջմամբ սրոյն : Եւ գարձեալ միւս այլ ոմն ոչ կարացեալ շարժել ուրեք, կապեալ ոսիցն 'ի զարհութիւնցն, այլ յառաջ կորուսեալ 'ի ոսպանմանէ իւրոյ զաւակին, և սպանողին՝ սուզ ինչ անսացեալ հառաջմանն, և ուրեք ձեռօքն ըուծեալք և յոյժ սասանելովք սննդիացեալք, և զմանուկն 'ի գիրկոն սասակեալ . և կանխեալ զմահուանն դիակոյտ նախ քան զարոյն կորուսա :

Բ. Ո՞վ Հերովդի մալեզնութեն . որպիսի՝ յանիսոր հրդականունն ործովք զերկիրն զայն ելից . ո՞վ արդեօք եր Երիցո թշուառականն՝ որ զայնպիսի դառն զատավճիռան վասն այնոցիկ արտարերեաց, որք ոչինչ մեզան : Բայց Եթէ արդեօք զթագաւորական ձեն զգեցեալ . . . յաթոռ նաևեր, ընդելուզեալ յուկւոյ և յականց փայլելոց, և զընդարձակութի լանջացն 'ի որամատութէ և նախանձուէ նեզեալ, և 'ի սպատեան մազակաւորին հաստատեալ զաշն . . . զարաժամ հասակացն խորհեցաւ զհունձնեն :

Գ. Եւ քանզի անողորմ հրամանաւն զայն զմարդաւացն զօրացոյց զիսորհուրդ և զտխուր, վառեալ ամենայն զօրացն հրամայեր, և կռեալ յերկաթոյ և դասուք զնոսա բաժանեալ, և զօրավարս ձեռնադրեր խորամանգս առ 'ի հրամայել 'մէ զինչ սպարտ է առնել 'ի ժամանակին, և խորամանկազոյնս 'ի պէտա նիզակաց . և թերեւս արդեօք այսպիսի ինչ ասեր ցնոսա, ոչ ինչ ամեաչելով զոր ասերն :

'Ի բազում ճակատամարտ, ով զինուորք, բազում անգամ սպատերազմեալք քաջացարուք, և յաղթութէք, իշխանունս սպարփակեցեք սպարփառ . այլ այժմ առաւել քան յայնժամ սպարտ է ձեզ փութալ 'ի յաղթումն : Քանզի ջան սպատիկ է, և մեծ է տագնապա . 'ի տանէ բուսաւ ինչ չարս գաղու խմաց թագաւորութես, և յայտ յանզիման դայ 'ի վերայ իմ ախոյեան : Ոչ ևս զիտելի մանուկ կողոսկաէ զիս 'ի թա-

դացս . դիտեք զբեթղահէմ՝ 'ի ամա աեղեկացայ մանուկ ծնեալ թագաւորութէ , յայ վիայութի յինքն ձգելով , ոչ երբէք երկուց ժամանակաց ամբ ՚ի վերայ ժողովին . սրատրասառութի և ոչ մի ոք խռովէ զիս . այլ մարգարեիցն վնիոս ՚ի վերայ նորա ասացեալու : Երկնչիմ ՚ի բարբառոյս . քանզի և մոզքն , յիշեցէք , յորժամ նախ վազ առ մեզ եկին յասակղէ միոջէ երեւցելոյ , նոցա զեկուցեալ զմանկանն զծնունդն սրատմէին , և զբեթղահէմ ինչդրեցին , որպէս զի զմանուեկն անսցն , և թագաւորի վայելսական ծնելոյ մատուցեն սպատիւ : Այլ ես կամեի ՚ի նոցանեն աեղեկանալ՝ թէ ով եր սա . զի դիւրագոյն ինձ լիներ և երկայն ցաւոց ազատ , և բռնութէ քակառումն . այլ քանզի նոքա զիստառումն , զոր առ իս գաշնաւորեցին . ոչ զիտեմ էր վշ ստեալ՝ յիւրեանց երկիրն չուեցին :

Խռովեալ եմ և երկնչիմ , հասեալ կարծեմ ըղվանեկն . ՚ի ձեզ նայիմ այսուհետե , արձակեցէք զիս յերկիւզէս . ՚ի վերայ բեթղահէմի , զինուորբդ , ձեզեցարուք . շուրջ վասկեցէք զմանայն սահմանօք նորա հոծ զմահուանն թակարթաւ : Արանցն եղիցի խնայումն . ՚ի ծերոց ՚ի բաց քերեսցի սուրբն . երիտասարդացն մի ինչ ածէք վասնկ ՚ի վերայ . ՚ի փոքունսն միայն և եթ ՚ի մանկունսն վառեցարուք : Զամենայն հնձեցէք զառաջին հասակն անողորմարար . մի և միոյ մօր արտասուաց մի ողորմիք . զիմ թշնամին յիւրաքանչիւր ծոց հետազօնեցէք . ընդ արդի ծնեալ մանկունս՝ որ զեռես ՚ի սախնս մարցն մզեցէք զուրբն , և խառնեսցի արիւն սպանմանն ընդ կամթինն : Այլ թէպէս և զինքեանս մարցն թափանցանց խոցուոցէք . ՚ի բռնութէ վիրաց սրոյն ՚ի զիսկուտեալ մարմինս նոցա գթելով , ոչ ոք ՚ի վերայ ձեր յարիցէ այնապիսի մահուամբ . ասսանոց փութացարուք , միայն ձեզեցէք ՚ի քազաքն հանգոյն առիւծուց . մի լիցի ձեզ յագումն մահու , մինչև ոչ մնացեալ ուրեք երեւեսի տպայ : Եթէ ումիք թողուցում կեալ , և նա ընդ ամենեցուն լիցի եղեալ , և նա ոչ բարւոր և ոչ զգուշութք ՚ի ձայնէ մողուցն վայելիցէ . խակ ինձ ամուր կեանս ստանացցէք և ազատ ՚ի հոգոց :

Դա Զայս նոցա լուեալ , զամենայն վասակցութիւնս յանձանց ՚ի բաց հասեալ , և խորհեալ յազթել ապիքատութիւնը իրացն , և արշաւանքն ՚ի քազաքն հասա-

նեին . զձեռս ՚ի վլր ճգեալ զինալիցս , և ՚ի վերաց
թեթզահեմի իշխանութենցն անկեալս զիտապղ դա-
ռինսն խողիսողէին , և յամենայն կողմանց աղբիւրք
արեանց յորդարուղիք զգեմն երկրին շաղախէր : Եւ
ոչ ինչ բաւական էր կարուսելցն առ ՚ի փրկուի . ոչ
տուն զօրէր թաքրուցնել զմանեալն . ոչ սպառութեն այ
պատկառումն ինչ առներ սպանողացն . ոչ մառացումն
լինէր , այլ մրմռումն . և ամենայն ուրեք զմանկունքն
իրու զգառնամոլս խռովէին , և ոչ որ ՚ի նոցանէ թաք-
շէր ՚ի սրոյն : Խւրաբանչիւր որ ՚ի նոցանէ՝ որպէս զի
նա է . քնն , իւրաքանչիւր արեան ինդիր :

Բայց որք եին քաջակար համարձակ մարդն՝ ընդ-
դէմ հաստանօզ խոցմանց սրոյն վիրաւորեն վասն իւ-
րեանց տղայոցն իրրե . հեշտ իմն վիրօք , այլ օգուտ ա-
նեին և ոչ ինչ , բայց Երկայնագոյն առնեին իւրեանց
զվասնգին ժամանակն : Խակ կէպն բռուն հարեալ
բռնարար ՚ի ձգմանէ մանկանցն զրո և իցէ անդամ ,
ձեռօքն սինդեալ զայն ունելով , յետ այսորիկ երեւեցան
սրոյն մօրն որոց ձգեին զմանուկն բաժանելով : Խակ
մի ոմն զձեռնն և զմի մասն ոսինն , այլ ոմն և այլ ինչ
անդամ՝ որպէս զբուժը մանուկն ունելով . ընթանայր
Խակ բազումք ՚ի փախառնէն սրոյն ՚ի զիտակուտեալ
մարմինսն գլորելով . և ՚ի կարծրութեն երկրին բաղիսե-
լով գեռես մաստազ իւրեանց մանկունքն . որ սրոյ ոչ
ինչ սիմայանայր զմանկունան կարուսանելոյ : Խակ մի
ոմն հանդերձելոյ վիրաւորել տղայոյն , առաջի ան-
կեալ բազումք անդամ երդինեցուցեալ զնա վասն իւ-
րոյ զաւակին , այսպիսի ինչ արտագուշէր ոսելով .
Ըսորհեա ինձ , զինուոր , որ ՚ի քէնդ գործի տպիսու-
թեն . և նախ քան զմանուկդ զիս եգեալ ցոյց , և մի
տրամեցուցաներ զիս այդպիսի տեսլեամբ զաւս մօրս :
Ե՞ ուրեք արդեօք , բայց եթէ քո մայր . Ե՞ քո կին
ստացեալ մանկունս . արդ ՚ի քոյոյն և խմումն ողոր-
մեա . յիշեա զի ՚ի գմնդակութեն մանկանց՝ գալարին
աղիք ծնողաց և խռովին :

Խակ նորա իրրե . թէ բեկանէր անձնն , արտասուքն
ընդ ծնօտան հեղուին . այլ սակայն կատազութեն չե-
րովզի ծառայելով , մինչդեռ բանքն ՚ի բերանն էր՝ ՚ի
ձեռս ծնօզացն սպանանէր զմանուկն . և զտապան՝
սպանմանն ողբումն հաստանէր : Եւ զայս նոցա համար-
ձակեալ գործել , յառաւել արտամութեն և ՚ի մոլորու-

թի յորդորեր : 'Ի տունս մասմելին , և զամենայն յուղելին զարհուրեցուցիւ և մահահոռ աչօք : 'Ի բարեր տաճարս ընթանային , արդեօք ընդ մահճաք կմը ընդ այլ իւլիք գտեալ 'ի թագսահեան , միայն 'ի լալիւն դուշակեալ 'ի տանեւ ձգելին որպէս քարինս 'ի հրապարակս , թագաւորին սրամնուութին զայսպիսի չնորհելով սրանումն : Եւ գուշումն յառնելը խառնակիցու , և ողբաձայնս ընօրը պէսպէս . մեծագոյն մանկանցն լալով զեզրարս , հարցն կողկողելով զոր ծնանն . խեկ մարցն ձիւ բառնալով 'ի չարչարանն . և ծերտնեացն ոչինչ այնպիսի տեսեալ՝ ազազակելով , ոչ թշնամեացն 'ի վը յարձակելոյ . և ամենեցուն աւազելով զջառնեացս աւուրին այնորիկ :

Ե . Ազա կատարումն առեալ այնպիսի վարուքաթութեն զօրավարացն և զօրացն ցրուեալք իրրե 'ի մեծ յաղթութենէ , գարձեալ վերակենգանանայր ոզրումն մարցն և արտասուելոյ , իշխանութիւն առեալ այնուհետեւ իւրաքանչիւր ոք զմանկանն այլ այլուստ արտասուոք զանդամնն ժողովելով , և զերուսեալն ընութիւն՝ զիարդ և հնար իցէ շարայարել , և զպակասեալն խնդրեր : Եւ զայն գտեալ՝ բազում համբուրելով յայլ անդամնն յարեր , և 'ի ծոցին եղեալ միւրան զմարմինն՝ գոչեր ուժգնապէս . վայ ինձ մանուկ , ոչ ունեի ակն՝ ը հողով ծածկել , զիարդ իրրե զոսոս ծաղկեցար , և որբան գեղեցիկ ծաղկով փեթեցար , կամ որբան բարի յուսով տայիր ինձ սերմանս : Զարթիր առ փորբ մի , թօթափեա զքունդ՝ զոր նախանձ թագաւորին ած 'ի վերայ քո . տուր ինձ 'ի խնդալց ձայնէդ քումին , սթափեա 'ի վերայ թշուառացեալ ծնողիս քո սահանց . ձգեա զոր յառաջ սիրեիր ըղտումէն , զմօրս պարանոցաւ զանձնդ հասատեա : Լուս ես , անմատնէ ես . վայ ինձ , որդեակ , վայ ինձ շարեզս , վայ ինձ , զիարդ առնուցում զանդամն քո միւսանգամ՝ զոր սուրն կոտորեաց յանինայ . կամ որով ձեռօք զհարկաւոր հողն 'ի վերայ քո կուտեցից . կամ որպէս զանձն 'ի կերպարանացդ որոշեցից :

Այսպիսի սգով քազաքն ամենայն լցեալ ընելը , յորդորելով միոյն զմիւնն առ 'ի կողկողանս և յոզբումն մեռեալ մանկանցն , , ,

Ահա զեղեցիկ օրինակ Տարտասանական ընդլայնման . զի թէսլէտ և պատմութիւն իրացն սուզ ինչ է և

համառօտ , բայց զուգագրութեք ձեռց և բազմազէմ՝
յօրինուածով տեսանի լեռալ ներբողեան բազմիմաստ
և հոգեշարժ : Բայց յընդլայնմանց տասից՝ Են և այլ
կարևոր դիտելիք 'ի յօրինուածու ճառից , որը թէ ողեա
ոչ պակասէին յօրինակիս , այլ մեք յառաջիկայ
գլուխութ առանդեսցուք զայնս , նոր օրինակս 'ի ներքս
ածեալ :

ԳԼ. Ժ.

Յաշտու բարատ 'ի իիր արհանելոց պլու , և շնորհացան
լու խոհական իմաստ :

ՊԱՏՈՒԾԿԱԸՆ Են ձեք , և ընդլայնմունք բանից .
այլ առանց խոհական խմաստից՝ ոչ զմիտս զուարձա-
ցուցանեն , և ոչ շարժեն զմիրտ : Զի այր կատարեալ
խմաստասէր է բնութեք . և թէ ճարտասանութեն վրի-
պէ յիմաստափրուէ , վրիպէ յիւրմէ նախապատուու-
թենէն : Որ ինչ միանդամ մատուցի առաջի հոգ-
ւոյն , սկսանին միտք հետազօտէլ որ ինչ 'ի նմա կայ-
ցէ . և որչափ 'ի խորս իրացն խելամուէ , այնչափ ընդ-
առաջ լինին նմա մասածութեք : Ամենայն շարժմունք
հոգւոյն և մասցն նորանոր երանդս պատրաստէն , որը
թէպէտ և զուարձացուցանեն՝ այլ ոչ ամենայնք ըդ-
պիրտս հաձեն . յաղագս այսորիկ անաշտ ընտրութե
սլէտք են :

Են փոխակերպութեք , ձեք , զրոյցք և խմաստք , որ
առ աչօք և եթ ունին զնշոյն , այլ ինքնին ոչ ինչ Են :
Են և անպիտանք՝ որք բնաւ օգուտ և ոչ մի ինչ մա-
տակարարեն առաջի կարգելոյ բանին . թողում զանո-
տիսն և զիսորշելիսն՝ որք բացէ 'ի բաց տարագրելի . Են
'ի կարգաւորեալ բանից և 'ի գրուածոց : Խակ 'ի սպի-
տանի ձեռց՝ Են որ սովորականք Են դիւրընտելք առն
զգաստի՝ զորս ինքնին նիւթ բանին անաշխատ մատա-
կարարէ , իբրև նկար պատկերի՝ յորում պահանջին
կարեոր երանդքն : Յաւել 'ի վերայ այսոցիկ զպէս-
պէս զուգախառնուի նոցին , զպայծառն , զսաստիկն ,
զճոխն , զզուարձալին , զազնուականն , այլովքն հան-
գերձ . և յայնժամ կատարեալ կենդանագրեսցի
պատկերն՝ ճարտար գծած մարդկային հանճարոյ ,

տրժանի վեմախոչ մտաց : Այս է բովանդակութի , և իրը պնդակազմ մարմին ճառիցն ողջոյն . յաղագա որոյ կանուխ ուրեմն 'ի միտ առցեն աշակերտեալքն պերճախոսութեան զանհրաժեշտ պատուեցն աւանդեալս 'ի կիկերոնէ և 'ի կուբնտիլիանոսէ , զի ամենայն բառք կարդեալ են և սահմանեալ 'ի բացայացաել զիմացուած մտաց մերոց , և 'ի զարդարել զարտագրութի առ 'ի մէնջ խորհելոցն : Արդ թէ չափազանցք իցեն արտայայտիչ բանք , և ձեք զօրացուցիչք առաւել յոյժ քան զւափն , ծաղքելի են որպէս անփորձ նկարիչ՝ որ զպայծառ զերանգս անշափուր յորդեսցէ 'ի պատկերին . յորմէ խորշեալ հեռանան տեսողք . զի յամենայն գեղեցկութիս պարզութի և յառկութի է նախկին խնդրելին : Ոչ ինչ է առաւել վիատակար յօրինուածոյ բանին՝ քան զաստիկ հետապքն դութի 'ի զարդս , զոր բնութի և աշխոյժք ոգւցով ընդ կարդի բանին 'ի բաց ընդուանուն , և յանդիման ցուցանեն զգրողին ունայնամափրութիւն . քանոլի ասէ կիկերոն . Սաստիկ զուարճութեց սահմանակից է միշտ ապակութի :

Դոյ աւսանել հասուածս բանից չքնազս առ բազում 'ի մատենագրաց , ոյք առանց ինչ ձեռց և անպահճոյն բանիւք ընծայեն ազդեցութի ուժդին . զի բնութի և իմաստասիրութի թէլադրեն զնոյնս : Են և այլք , որք յաճախեալ 'ի մատեանս իւրեանց ձևս բազմադիմս , ցուրտ են և անոնք յիմաստս . այնպիսի շարադրած թէպէտ պատրուակէ զաւս վեր 'ի վերոյ տեսողաց , այլ ոչ և զանաշառ ընտրողացն : Վասն որոյ ընդհանուր կանոն է կիրառուել ձեռց՝ բխել անդստին 'ի նիւթոյն , և զեղուն մտածութի շաղկապել ընդնմա : Եւ որովհետեւ ամենայն ձեք բարբառ են երեաւկայութէ և կրից՝ որք զմի մի մտածութիս հոգւոյն թարգմանեն անդէն , որչափ առաւել հրացայտ ջերմութի եկեսցեն 'ի սաստկութէ կրից յուղելոց , այնչափ գեղեցիկ յօրինեն . ուստի բովանդակ 'ի սոյն արժան է դէտ ակն ունել , զի բխեսցեն ինքնին 'ի մտաց վառելոց պարագրելով 'ի խորհուրդս զիրան , և ոչ բռնի ձգձգել տարապարտ պահուճանօք՝ որք յանօդուտս տատանեն զիմուտ : Զի ուր միտք ոչ ջեռնուցուն , կցկցել անդէն ձևս՝ ցուրտ է և անպիտան :

Զայս ամենոյն համառօտ կանոնօք և օրինակօք

և վերլուծութեք դիւրիմաց գործեսցուք համբակաց արուեստին :

Առաջին կամուն գեղեցիկ խմատից է Տշմարտութեն, հիմն և խարիսխ ամենայն արդարացի մտածութեց : Քանզի խորհուրդը մտաց, օրինակին 'ի պատկերս, և բարրատ արտայացածից է խորհրդոց : Արդ պատկերը և նկարը որչափ նմանք են բնականին՝ նոյնափ և Տշմարիոք են . նոյնակես և ամենայն մտածութիւնք ըստ չափու մերձաւորութեն 'ի Տշմարիան՝ Տշմարագոյն խմացուցանեն զիրոն : Իսկ զայտ Տշմարտութեն մտածութեց անդ գտանեմք՝ երբ համանման գտանիցին ընդ խկութե առաջիկայ բանիցն . և զոր օրինակ այն զգեստ պատկանաւոր է մարդոց՝ որ 'ի չափ հասակի զուգայարմար իցէ, նոյնակես և խորհուրդ՝ որ համապատշաճ գտանիցի ընդ խկութե իրացն, յայնժամ ունի զկատարեալ Տշմարտութեն : Գեղեցիկ է մտածութիւն Լամբոնացւոյն 'ի ճառն Համբարձման . ուր ասէ զաշակերտաց . " Իսկ նորա սրտաթափ յուսակառուր խոնարհեալ, զերկիր համբուրեալ՝ շնորհ ունելով օրհնութենն, յարուցեալ փութապէս, և երադ սլշուցեալ նայէին ը երկինս 'ի յերթալն նորա, :: : 'Ի սմին վայլէ Տշմարտութեն ամենայնիւ անվորէալ, զի մարթ էր դրելոցն անշուշտ այնապէս դիպէլ : Քանզի ընդ օրհնել փրկչին զնոսա՝ 'ի հարկէ շնորհ ունելով երկրորդագութեք զերկիր համբուրեին . սակայն սրտաթափ յուսակառուր էին, զի մեկներ վարդապեան 'ի նոցանէ . վասն որոյ յարուցեալ փութապէս՝ սլշուցեալ հայէին ընդ երթալն նորա :

Երկրորդ՝ պարտ է խորագոյն ազգել բանին 'ի սիրոս ունկնդրաց : Տշմարտութեն հիմն է բանին՝ որ հաստատուն առնէ զասացեալմն . այլ միայն առանձին հաստատուի շինուածոյ ոչ հաճէ զտեսանելիս, զի ը հաստատութեան պահանջի և մեծութիւն : Որ և յիմաստս խնդրի . այս ինքն զոյտ ընդ Տշմարտութեն և մեծութիւն խմատից՝ յեռեալ 'ի կարգ բանին վայելու վիխակերպութեք : Այս խմաստ . Աշխներին միօրինակ մեռանին . Տշմարիա է ամենայնիւ, այլ պարզ և սովորական . վասն որոյ առ 'ի տագաւորագոյն յօրինել զայն և նոր խնդրի շրջաբանութեն հանձարեղ . զոր օրինակ շրջաբանէ խմատունն . (իմաստ . է . 6 .) " Մի մուտ է ամենեցուն յաշխարհս, և մի ել հասարակաց :: :

Այս ազդողական է և նմանեցուցիչ . զի զոր օրինակ ամենայն մարդ միապէս ծնանի , նոյնալէս և մռռանի : Զայն իմաստ այլարանութեք ունի և Ովբատիոս քերթող :

“Նորին տուամբ հարկանէ մահ գալկահար
Եւ զարբունիս և զաղքատին տաղաւար,, :

Յերկոսին ՚ի սոսա փայլէ զանազանութեն իմաստից . բան իմաստանոյն վճռական է և Տշդրտատիպ , խոկ հռովմայեցոյն՝ ձեւաւոր է և կենդանի . երկորին առ հասարակ մեծիմաստր և ազնուականք :

Զի՞նչ սովորական առ մարդիկ քան զբանան Յովբայ , թէ մերկ եկի յաշխարհ , և մերկ ելանելոց եմ . և ահա զայն նորօրինակ բանիւ ձեւացուցանէ Ընորհալին . զի կրկին դրամբը քաղաքի նմանեցուցեալ զաշխարհ , ասէ :

“Ծնող մին մըտեր մերկ յարդանդէ ,
Ծնող միւսն ելքէս մերկ յաշխարհէ ..”

Զայն իմաստ այլարարազ յօրինէ և Եղիշէ . որպէս եղայք ՚ի վերոյ ՚ի ձեն Դարձման :

Տեսանի յօրինակս , զի իրք մեծամեծք և նորանշանք ուժգնութեն տան իմաստիցն և ահաւոր ցուցանին , Եթէ պատկանաւոր դացին ընդ նիւթոյն և իմաստքն . իրը զի միջաստհմանս միջական պահանջինն իմաստք , և ՚ի վեւմարկանս վեւմ : Ազնուական և վայելուչ է ստելն Եղիշէի զպարտուց թագաւորական վիճակի . “ Թագաւոր , Եթէ ոչ ունի զիմաստութեն աթոռակից իւր , ոչ կարէ ՚ի վիճակին իւրում վայելուչ դու : ” Ահա մեծութ նիւթոյ . զի բանք են վասն թագաւորի . և նմին համապատշաճ իմաստ , զիմաստութեն աթոռակից գնել նմա :

Երրորդ՝ պարա է համեմատ զնել զյօրինուած բառիցն ընդ նիւթոյ բանին . զի գեղապանձ շարագրութիւն տպառորագոյնս և ազգողակոյնս ընդմտանէ ՚ի լսելիս , և ախորժ ընծայի ՚ի խորհուրդս : Արպէս թէ յիրս զուարճալիս նմանութեք առցին ՚ի ծագկազարդ և ՚ի կանաչազգեաց դաշտաց . ը որս իրուն չ այլեայլ տեսարանս յածեալ շրջին միտք : Զայս քաղցրութեն

կերպարանս ըստ նիւթոյն է չափելի . որ եթէ հաճելի իցէ և ախողուժական , ըստ նմին և զյօրինուածն պահանջէ . իսկ թէ մեծ և աշաւոր , համեմատ նմին հրացայտ ազգեցութիւն : Գեղեցիկ է խորենացւոյն առելն 'ի Տառին Հախիսիմեանց . "Վաշարանց մէզն Տրդառ՝ մօլեգնուառ տա վանօր տենչանայր առ թէ լինքան զէական լուսոյն հարսնացեալ գշխոյն Հոխիսիմէ , որ զայն էր առ թէ լոց իւրում վեսայինն : Դարձեալ 'ի բերանց նորա գիմառնութիւնն առ հայաստան . "Մշակել զքեզ գրախատ իմում վեսայինն , որպէս զի իջցէ և զրօրորդին իմ 'ի պարակզ իւր , և կերիցէ զպառող ծառոց իւրոց , : Գեղեցիկ ևս է բազմայեղանակ ձեռով խորհրդարաննել Մամբրէի 'ի յարութիւնն Դազարու . 'ի գերեզմաննէ . "Հեռի եկաց տէրն 'ի գերեզմաննէ անտի կանգունս տասն և Երկուս , չմերձենալով 'ի մեռեալն . վիխանակ ձեռինն զձայնն սասակացոյց : Զայնն եղե որոտումն Երկնաւոր , արտաստուքն ցող շահեկան ամսոց . խստութիւն վիմին կակացաւ , և եզե անգաստան բերրի . քարինք՝ որ անբոյսը Են 'ի խոտոց՝ մալեաց կակզեաց սաստկութիւն ձայնին , և առ ընկալու զշահեկան անձրենն լիութիւ , և մածոց զլուծութիւ սերմանն . հոտ նեխոյն դարձաւ 'ի հոտ անուշուն , Եմուտ ձայնն 'ի գերեզմանն , կալաւ զձեռանէ մեռելոյն , :

Գեղեցկութիւն մասածութեց և ձեռոց սուաւելապէս նշողէ 'ի կրկին գէմ ընդդէմ ասացուածն՝ իր Երկերապարան Երեւելով դիմաց բանին : Աքանչելի են ոյսալիսի յօրինուածք իմաստից 'ի գիրս իմաստութիւ , որպէս յասելն վասն կարմիր ծովուն պատառելոյ . "Դաշտ ծաղկաբեր 'ի պտուախց բռնութեն , : Եւ այլուր . "Յամապայմնքն 'ի ջուրս փոխելին , և լուզակըն յերկիր դառնային . հուր ջորյ յաղթէր իւրով զօրութ , և ջուր զիւր շիֆուցիւ բռնութիւն մռաննայր , : Այսպէս ունի և Լամբրոնացին 'ի Տառն Համբարձման . "Մարդ Եր , և զիարդ առանց օգնականի թէ թէ թռուցեալ ընդ Երկինս վերացաւ . ած , և զիարդ ընդ աշակերտան կերակրոցն հաղորդեցաւ , :

Զայս ամենայն ասացեալքո՝ համանգամայն տեսքն զպարառութիւ փոխակերպութեց և ձեռոց և մասածութեց յառաջիկայ հաստուածդ 'ի գրիգորի Կիւտացոյ մարդակազմութեց գիրսն (Քւիլ .) 'ի վերայ յարութիւ միամօր մանկան 'ի Նային քաղաքի՛ ըստ աւել-

տարանական պատմութեն - այսպէս ունելով բանին - Անային քաղաք զան՝ ՚ի հրեաստանի պատմէ դիր - մանուկ էր անդ միածին՝ ոյրուոյ միոյ - և էր ոչ ևս այս պիսի մանուկ որպէս թէ ՚ի պատանեկակս համարեալ - այլ աշա - ՚ի պատանեկաց յայր կտտարեալ - պատանի զնա անուանէ բանն : . . . Այրի էր, առէ, մեռելոյն մայր - տեսանե՞ս զծանրութիւ աղջտին - զիարդ տակաւու զախտն բանն աշխարելով երգեաց : Քանզի զի՞նչ տասցեալն - զի ոչ գոյր նորա մանկարութե յոյս, զի ՚ի վերայ գնացելոյն զաղէտոն բժշկեացէ : Քանզի ոյրի կինն ոչ ունէր առ այլ ոք փոխանակ այնը որ մեռանէրն՝ հայել - քանզի միածին էր ծնունդն . և որուսի ՚ի վերայ սորա էր չարն, ամենայն ունեք դիւրին է դիսել՝ որ ոչ օտար է ՚ի բնութեօ : Միայն յերկունս զնա ծնաւ, միայն տեսամբը զիկցոյց, միայն նմա պայծառ սեղան առնէր - միայն է պայծառութե Ենթագրութիւ, խաղալով փութալով ՚ի գործս, ուսումն ուսանելով զուարիթացուցեալ յելս և ՚ի մուտս, յըմբշամարտս, ՚ի ժողովս պատանեաց - ամենայն ինչ որ ինչ միանգամ յաղագս մօրն քաղցր և պատուական է, միայն նա էր : Ահա այն ինչ յանուանութե տիս հասեալ, ազդին շառաւեկղ, փոխանորդութեան ուսնն, մական ծերութե . այլ և հաստակին յաւելուած՝ այլ աշխարոզ բոց է : Քանզի որ պատանին սասաց, զծաղիկն սասաց զթառամեցելոյ տիոցն . այն ինչ մօրուօքն ծնօտքն գալարացեալ էին, չե ևս մօրուացն ՚ի խոր անցեալ էր, գեռ ևս գեղեցկուք այտքն փաղ փեալ էին : Արդ զի՞նչ անցք անցեալ դեստ էր յազագս նորա ընդ մայրն . որպիսի հրով որովայնն աղեսարչեալ - որպէս գառնարար ՚ի վերայ նորա սաստկացուցանել զաշխարանան . շուրջ զնուաւ հայելով և մաշելով մինչդեռ առաջի կայր կործանեալ պատանոյն դի : . . . Ետես զնա ՅԱ և զթացաւ, և մասուցեալ մերձեցաւ ՚ի տապանն . և որբ բարձեալն տանէին՝ կացին . և առէ ցմեռեալն . պատանի, քեզ առեմ, արի : Եւ ընձեռնեաց զնա մօրն կենդանին . :

Աւ շատ գատեցեալ զայն՝ գարձեալ առաջի մասուցուք ՚ի Լիւիսէ ՚ի վերահամբաւ պասմարքէ հառվայիցեւոց զնկարագիր մենամարտութե Ովրատիուեանց և Կուրատիուեանց - զոր նախ անոպաճոյն բանիւ առաջի կացուցուք, որպէս զի յայտ յանդիման:

Երեւեսցի Հարտարութիւն մատենադրին՝ ի մտածութիւն և՝ ի ձեռ՝ որը պարզք էն, բնականք և դիւրիմացք, ոչ սեթևեթեալք և ոչ կարկառունք, այլ բովանդակ յառաջ եկեալք՝ ի նիւթոյ անտի:

Ա. Կռեալ զուխոտ գաշինն երկուառելք Երեցուն հարազատացն, ըստ պայմանագրութեն զին առնուն:

Բ. Յառաջ խաղան՝ ի մէջ երկուց ճակատուցն:

Գ. Բանակեալ էին հանդէպ միմեանց զօրքն Երկոբին, յայն տեսարան դէտ ակն կայեալ:

Դ. Նշան արձակի, և ահա բախին ընդ միմեանց զինուք Երեքին պատանիքն:

Ե. Իբրև առ սուդ ինչ ժամանակ հաւասար ուժով մրցեցան ընդ իրեարս, երկուց՝ ի հռովմայեցւոց խոցեալ զերեսին ալբայեցիս, անկան դիտապաստ զինի միմեանց:

Զ. Նոքա շուրջ պատեցին զհռովմայեցւովն. ըստ յաջողուածոյ սա ովզանդամ մնաց. և առ ի ցրուել զարտերազմն՝ ի փախուստ ձեպէ, ակն կայեալ թէ զհետ իւր պնդեսցին նորա՝ ըստ զօրել կարելէր մարմնոյն:

Է. Այն ինչ խուն մի հեռացեալ էր փախուեամբ՝ ի աեղլոթէն՝ յորում պատերազմն եղե, ընդ թիկունս հայեցեալ տեսանէ զնոսա հարուստ խորոցաւ հեռի ի միմեանց հետամուսու, և զմին ոչ յոյժ՝ ի բացեայ յիւրմէ. դառնայ ընդ կրունին սաստիկ ուժով՝ ի վերայ նորա, և սպանանէ զնա:

Ծ. Դիմէ անդէն յերկրորդն, և զնա դիտապաստ արկանէ:

Թ. Արդ՝ ի հաւասարել մարտին, մնացին երկուս տեք մէն մի. թուով հաւասարք, այլ աննմանք զօրութք:

Ժ. Խայտացեալ հռովմայեցւոյն, առէ. Զ Երկոսին՝ ի վերայ ոգւոց եղբարցն իմոց պատարագեցին, արդ և զերորդն պատարագեցից՝ ի յաղթութիւն պատերազմիս, զի հռովմայեցին աիրեսցէ ալբայեցւոյն: Հարկանէ զոււսերն չեշտակի ընդ փող նորա, և դիակապուտ դառնայ:

Ժ.Ա. Հռովմայեցիք հռչակաւ և օրհնութք ընդունին զնիվատիոս.

Ժ.Բ. Դառնան ասկա թաղել զիւրաքանչիւր անկեալսն:

Արդ գործ է ընդլայնել զայս սլատմութիւն իմաստիւք և ձեռովք՝ որբ կենդանացուացեն դրանն . և այն պէս նկարագրեացեն զիրան , որպէս զի իրը ականատես սրամմելէացն ընցի ընթերցօղն: Պարտ է խնամով զնենել զպատճառն և հետազօտել որ ինչ հնար էր անցանել ընդ միտ Ովոստեանցն և Կուրատեանց , հոռվայշեցոց և ալբայշեցոց , և զայն ամենայն կենդանագրել . զոր ահա 'ի Լիւիոսի դիրան է տեսանել :

Ա . Առեն զուխտ դաշինն Երկուասեք հարազատք երեքին , և ըստ պայմանելոյն ձեռն 'ի զեն ձգեն :

Բ . Խըրախուասեն Երկաքանչիւր կողմանիք զիւրեանց նահատակն . Դիբն հայրենիք , կայեան ծննդեան ձերոյ և ծնողք , քաղաքացիք համօրէն՝ որ առանին և որ 'ի զօրուն՝ ասս այժմ 'ի զէնս ձեր և 'ի բազուկս ակն կալեալ կան : Նոքա գաղանացեալք 'ի բնէ , և առաւել ևս 'ի ձայն խըրախուասանացն գրգռեալք , շահատակեն ընդ մեջ երկուց հակառուցն :

Գ . Աստի և աննախ բանակեալ կային Երկաքանչիւր զօրք , անկցորդք առաջնիկայ վտանգին , այլ ոչ և հոդոցն . Քանզի յերերի կայր պետութիւն՝ ապաստանեալ 'ի սակաւուցն քաջութիւն և 'ի բազք : Ասսն որոյ արձանացեալք և տարտամք , 'ի դժուհի անսարանն դէտ ակն ունէին :

Դ . Յարձակել նշանին , զինուք շկահելովք զօրէն հակառուց Երխուասարդքն երեքին զմեծամեծ այրութիյ բերելով զիերագրանն՝ բախին լը միմեանս : Ոչ սոցա և ոչ նոցա թուէր ինչ յաւս՝ անձին վտանգ , այլ հասարակաց տէրութիւն կամ ծառայութիւն , և հանդերձեալ բախտ հայրենեացն՝ զոր ինքեանիք սպատրաստէին : Իր ոյն ինչ բախէին ընդ միմեանս , 'ի շառաչել զինուցն և 'ի փայլակնացայտ շողալ սուսերաց , պակուցումն անհնարին ունէր զանուզս . յոյս և ոչ առ մի կողմի խօնարհէր , ընդարմացեալ էր յամենեսին բարբառ և շունչ :

Ե . 'Ի դիմի հարան . և էր անդ տեսանել ոչ շարժումն միայն մարմնոց , և Երկուասեք շկահիւն նետից և զինուց , այլ և զէրս և արեան հասպազիս . և ահա Երկուք 'ի հառվայեցուց՝ խոցեալ զերեսին ալբայշիս , մի զմիով անկան դիաթաւալզ : 'Ի գետնատարած անկանել դնէլ նոցա , դոչիւն ուրախուե արձակեաց զօրն ալբայշուց . իսկ լեդէոնիք հոռվմայեցոց յու-

սարեկ վհատելին, ոչ ազատ 'ի տագնապէ, ոգեսպառ անշնչացեալք յաղագս միոյն՝ զորով շուրջ փակ ու նէին երեքին կուրասուեանք:

Զ. Առ յաջողեաց նմա մնալ ողջանդամ. և ոչ բաւեալ միայնակ ամենեցուն զգէմ ունել, ը միում միում մենամարտելք. և առ. 'ի ցրուել զգուն, 'ի փախուստ դառնայ, ակնկալեալ՝ զի հետամուտ լիցին իւր, որչափ իցէ զօրութի 'ի մարմինն վիրաւոր:

Է. Մինչ դեռ փոքր մի հեռացեալ եր փախստեամբ 'ի աւեղողըն՝ յորում մարտն մզեցաւ, հայեցեալ 'ի թիկունս աւսանէ զնոսա հարուստ խորոցաւ հեռի 'ի միմեանց՝ հետամուեալս իւր, և զմին ոչ յոյժ 'ի բացեայ յիւրմէ. դառնայ ընդ կրունկն, սաստկութիւն խոյանայ 'ի վերայ նորա: Եւ յաղաղակել զօրուն ալբայեցոց առ կուրասուեանս՝ ձեռն տալ եղրօր իւրեանց, Ովատեայ տապալեալ զթշնամին, դիմէ յաղթանակաւ յերկրորդ պատերազմն:

Ը. Յայնժամ 'հռովմայեցիք աղաղակաւ, որպէս 'ի յուսահատութիւն պահու խրախուսողացն ոովորութիւն, օգնեն նահատակին իւրեանց. և նորա աճապարեալ վհարել զգործ պատերազմին, յառաջ քան զհասանել երրորդին՝ որ չեր բացագոյն, եհար և զերկ բորդն:

Թ. Արդ հաւասարեալ վիճակի մարտին, մնացին երկուստեք մէն մի. բայց ոչ յուսով, և ոչ զօրութիւն հանդոյն: Զմին՝ մարմին անվիթար 'ի զինուց և կրկին յաղթութիւն խրոխտ առ երրորդ կուխն առնեին. իսկ միւսն ընդ քարշ տարեալ զառ 'ի վիրաց և յընթացից զտաժանարեկ մարմինն, և վհատեալ՝ որ յառաջ քան զինքն կոտորածիւ եղբարցն, մատչի ընդ առաջ յաղթական ախոյենին: Զեր իսկ անդ պատերազմ:

Ժ. Հռովմայեցին խայտացեալ ասէ. Զերկոսին պատարագեցի 'ի վերայ ոգւոց եղբարց իմոց, արդ զերրորդն պատարագեցից՝ վասն որոյ պատերազմն է. զի հռովմայեցին աիրեսցէ ալբայեցոյն: Եւ սուսեր 'ի վեր առեալ միւէ 'ի փող անդք նորա, որոյ ձեռք հազ զիւ զզէնսն ունեին, և առնու կապուտ զանկելոյն:

Ժ. Հռովմայեցիք հոչակաւ և օրհնութիւն ընդունին զնվասարու այնչափ առաւել ցնծացեալք, որչափ խիթալի երն ինքն:

Ժ. Եւ դառնան Բարդել զիւրագանը լիւր անկեալն

բայց ոչ նովին անդորրութե՛ս սրտիւ . քանզի միոյ կողման յաղըտական գտաւ պետուի , և Երկրորդին նուանութիւ վիճակեցաւ . :

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵ՛Ր Բացատրեացուք զօրինակու :

'Ի Բ . Հագուսածն : Բնաւորական է Երկաքանչիւր կողմանն յորդորել զիւրեանցան , և յիշեցուցանել նոցա՝ թէ հայրենիք ողջոյն ակնկառոցց են ՚ի բախումն նոցա , և յեւ գործոյն՝ որ միումն յաղթութիւ բերէ , և Երկրորդին նուանութիւ : Այս իմաստ գեղեցիկ առաւել արտափայլէ յօրինակէ բացատրութեն . ուր քաջալելք Երկայնաբանք թոյլ լինելին և անհամ : Եւ սպա թուին իմն յառաջ խազալ նահատակքն ՚ի մէջ Երկուց Տակասուց՝ աներկիւղ արութե՛ր :

'Ի Գ . Հագուսածն : Չեր մարթ առ տեղեաւս վայելուշ քան զայս պատշաճն իմաստս . անշարժ + --- զիւշայ կանգն , այլ ու և հագույն . վասն զի որպէս ոչ ՚ի հոգո ծփեխն , մեծի իմն այլափոխութ մնալով յանըստոյդ ելս իրացն . զոր և քաջ նկարագրէ ասելուին . ույանշեւց և ուրագութ . որովք ցուցանին կրկնն զիմամարտ խորհուրդք նոցա :

'Ի Դ . Հագուսածն : Ոչ ինչ պէտք են յաւելուլ ՚ի չքնազ պատկեր լիւիուեան նկարագրին : Երկրին եղբարքն էին Երկուստեք իբրև զորք կասուցեալք , և յանձին բերեին զնոցայն արիութիւ . ոչ ուշ եղեալք ՚ի վտանգ անձանց , այլ ՚ի հասարակաց բաղդն պշուցեալ կային , որ ՚ի քաջութիւ բազկաց իւրեանց ապատան կայր : Երկու այս իմաստք վսեմք են և Տշմարիաք :

'Ի Ե . Հագուսածն : ՎԵՐԾՈՂաբար ձեւացուցանէ զտիսուր լսութին , որ ուներ զամենեսին յերկմիտս : Եւ յանկարծակի փոխէ զկերպարանս . ցնծութիւ յալքայեցիս , տեսանելով նոցա գիտթաւալ զերկուս յՈվրատեանց . և յուսաքեկ լքումն ՚ի հռովմայեցիս . ՚ի մնալ Ովրատիոսի միայնակ ընդգէմ Երից . ոչ այլ ինչ զմաւաւ ածելով բայց զմահ նորա : Ոչ ապաքէն զնոյն կիրս կրեին անդ զօրքն Երկոքին յետ մահուան Երկուց հռովմայեցւոցն :

Խակ յետին մասունքն չկարօտին վերլուծութե , զի ՚ի նախակարգէլոցդ դիւրիմաց լինին և նորին . զայն միայն յուշ արարից , թէ գեղեցիութիւ վիպասանութես է բազմաձև զանազանութիւն Երևեալ ՚ի նմին , և

ոյլափախ շարժութեալք երկիւղի, տագնասին, յուսոյ, խնդութե, յուսահասութե, և որ այլ ևս կիրք ազդեցեալք յանակնկալ փոփոխութեցն, որք այլայլութեն զուարձացուցանեն, և անստոգութե կատարածին՝ ախորժ մեծ ընծայեն :

ԳԼ. Ժ.Ա.

Յառաջ Ոչոյ (*):

ՈՉ դոյզն ինչ է՝ որոշակի զհանգամանս ոճոյ աւանդել. զի առաւելք քան զոր կարծին՝ իրս թագունս կայ մեզ հետազօտելի նմա. Է ուրեք զի կարդ դրութեանն անվրեալ է և ուղղախօս, ասկայցն ոճն ՚ի բազում զդիւոց թերացեալ գտանի. Է զի անհարթ է կամ ցամուք կամ ակար՝ վերջացեալ յուժգնութեննէ: Ոճն յամենացնի սերա ապչակից է ընդ նիւթոյ բանին և ընդ խնասախց, և հաւասարիմ թարգմանն է և նկարագիր մոտածութեց և եղանակի ասացուածոց. մինչեւ զի ՚ի քննել անդ զբեզնաւ բութե մասց մասենազդրի տրուք, առ նմին անվրեալ ունիմք խմանալ և զոհ գրութեն. և յեղանակէ դարձեալ զբութեն վերելս առնեմք խմանալ և զհանգամանս խորհելոյ մասց նր:

Եւ չեն ինչ զարմանք թէ երկորին աշտորիկ սերախի կցորդ են ընդ իրեարս, զի սահմանն իսկ ոճոյ յայտ առնէ: զայս - զի է ոճն՝ Ս-հանուսոր կաղունիւն հայուսնեց՝ զորս ինուան մուտ ըստ պայմանի նիւթեց ինուտանլուր: Եւ որովհետեւ մարդիկ այլազդ միրերաց բովանդակեն ՚ի միաս զնիւթ բանիցն, նաև ազդ յազգեց ըստ այսմ զանազանի, ասամի յառաջ կայ և այլայլութեն ոճոյ նոցա՝ ըստ ընաւորութ բարոյիցն և հանոյից

* Բառադ օճ ըստ իմաստիցն նշանաւութեն նայնօքինակ է մասնաւութեալ: Հառ զի որմասութեալ նշանաւութենին է եղածին և ծագութ արմութեալ: Կոր կարեն ՚ի ոկտագուլի: յորմէ մասն լարին և նշանաւութեն ուղիւն պարտին գուլը՝ ուղիւն գուլին ՚ի ըլքայ հագուղանի: Ցեր այնորին դախավիւնութեալ օքի նախաւութեալի իւսու վեղանակ և զինը պարտեւ գրաւին մասնաւութեն և բաշիւն զայն յաստիման և ՚ի իւրդա:

ՅՆ. Գրաքոյ. լու. Stilus.

Ընարութեն : Արեւելքան ազգը և ասխացիք, քանզի
պերճառէր Են և անձնատուր 'ի մեծաշուր հանգեր-
ձանս թէ 'ի զգեստ և թէ 'ի կերտակուրս, նոյնպէս և
Եղանակ զրուցաց նոցա լայնախոս է և յաճախարան :
Աթենացիք, ժողովուրդ հրահանգեալ 'ի բարեյար-
գար քաղաքականութիւն, խօսէին յո՞ք յատակ և ան-
խառն : Կակոնացիք սակաւասպէտը և անպահոյնք .
համառատախոսը էին և անսպահոյնք 'ի բանս ։ Այսպէս
իմա և վասն այլոց՝ ըստ ազգելոյ բնաւորութեց ազգե-
և առն իւրաքանչիւր, որք 'ի յայտ թերեն զմատենա-
դրին տիպս մասածութեցն և զրացաւրութեն, որք կա-
խեալ կան զիրերաց : Քանզիք զորօրինակ՝ բառք նշա-
նակը են իրաց, նոյնպէս և սերտ կցորդութիւն է եղա-
նակին որով մասենագիր որ 'ի վար արկանէ զրառս,
ընդ եղանակին որով խորհրդարանէ և 'ի յայտ թերե-
զիմացուած իւր : Եւ յօրինակէ անոնի մասածութեն
և բացայայտելոյ զիտրհեալսն տպաւորէ յո՞ք բանից
իւրաց հանգամանս իմն սեփականու անձին տկար կամ
ցամաք կամ սպարզ և կամ սեթելեթեալ, որք կեր-
պանան յընորութիւն բառիցն, 'ի արամագրութիւն կար-
գին, 'ի չափոյ Տշդութեն, 'ի ներգաշնակութիւն, և
յեղանակէ սփառառութեալոցն : Զի թէսլէտ կարծեալ
այնպէս է թէ զանազանութիւն նիւթոց միայն ունիցին
ազգել զբանազանութիւն ոճոյ, իրրե այն թէ յընթացս
ողջոյն հառին այլ և այլ մասունիք շարագրածոյն այլ և
այլ խնդրեացն եղանակու բացաւրութիւն, վերջարանն
չքեղ, հաստատականն սպարզ, և որ ըստ նոցուն սա-
կի, բայց այս արամագրութիւն և փոփոխութիւն ոչ թիր-
նին կերպարանէ զմառառոր ոճ և զեղանակ խորհելոյ
իւրաքանչիւր մասենագրի : Զի թէ և ըստ արաւորին
երկութիւն փոփոխեալ տեսանիցն զատենարանն, տա-
կացն զի ներբին բնաւորութիւն նորա և մասածութիւն ան-
փոփոխ մնայ, չմարթի տիրասպէս փոփոխեալ ասէլ և
զպատաքինն . այլ հետազօտել սպարտ է որ ինչ 'ի նմա-
գլաւոր հանգամանք են ըստ եղանակի մասածութեն
և բացայայտութեն 'ի բովանդակ ընթացս հառին : Զի-
ն յեռանդն բանից երկուց այլ և այլ մասենագրաց է
ակտանել, զի մին վեճմ և գերապանծ ինացուածով
յօրինէ զրանն, և միւսն թոյլ և մեզմ . զի տիրէ բա-
նին՝ ըմբռնութիւն երեւակայտթեան նոյսա : Աան որոյ

Հանացուք նախ յայտնի երեւցուցանել զգանազան հանգամանս մատուոր իմացմանց, և ասդա մատիցուք ՚ի զանազանութիւն գրաւոր ոճոյ :

Առաջին հանգամանք ոճոյ է հարազատութիւն, զոր արժան է մանր հետազօտել. զի սովար ՚ի յայտ գայ իւրաքանչիւր մատենագրի բնաւորութիւն, թէ յորում առաւել աշխատասիրաբար տքնեցաւ ՚ի վաստակս մատենից իւրոց : Հարազատութիւն է մտածութիւն և ազգեցութիւն երեւակայութիւն իւրաքանչիւր գրողի . որով ՚ի յայտ գայ եռանգն, իմաստութիւն, տգիտութիւն, տկարութիւնորա, և որ այլ ևս սոցին սակի են . և առ ՚ի քննել զայնս յայր իւրաքանչիւր, գիտելի է՝ զի ամենայն մտածութիւն կամ բնական են կամ Աւթեւեթեալ և կամ բռնական : Զառաջինն ինքնիննիւթն արտասանել տայ . Երկրորդն ՚ի գրողին սպահամիրութիւն յառաջ գայ . Երրորդն անյարմար իմն է, և դիւրաւ ՚ի բաց ընդուանու ՚ի կարգե բանին . արդ զամենայն մտածութիւն և զօրինակ մտածութեան մատենագրաց մօտ զնելով յերեսին ՚ի սոսա, գտանեմք զնոցայն մտածութիւն կամ բնականս, կամ սեթեւեթեալս, կմբ բռնական . և այսու գտանեմք զհարազատութիւն իմաստից նոցա :

Մեծն վարդան յատենաբանութիւն իւրում այսպէս իւրախուսէր զզօրս իւր . (Ե՞՛Վ. 176:) “Մի Երկուցեալ զանգիտեսցուք ՚ի բազմութիւն հեթանոսացն, և մի յահագին սրոյ առնն մահկանացուի զթիկունս դարձուացուք : Զի Եթէ տացէ տէր յաղթութիւնն ՚ի ձեռս մեր, սատակեսցուք զզօրութիւնոցա, զի բարձրացի կողմն ճշմարտուե : Նւ Եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց նր մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութիւն սրտիւ . բայց միայն յարութիւնս քանութիւն վատութիւն մի խառնեսցուք,,,: Ահաւասիկ հարազատութիւն իմաստից ատենախօսին, որ զոր ինչ ունէր ՚ի միտոն՝ զնոյն սրարզութիւն տպաւորէ ՚ի խորհուրդս զօրացն, զզանգիտել Երբէք ՚ի պատերազմէ : Առ նմին բնական էր մտածել նմա զդիպէլ մահուն, վասն որոյ ասէ . ընկալցուք խնդութիւն սրտիւ՝ որպէս արժան է ախոյանաց Եկեղեցւոյ և աներկիւղ զօրականի : Դարձեալ զկնիք հարազատութեն ՚ի վերայ յաւելու . բայց միայն յարութիւն քանութիւնս վատութիւն

մի խառնեսցուք : Այս բնական հարազատութիւն է զի նուռական ոգուց , ոչ սեթևեթ , և ոչ բռնական . այնպէս է ատենաբանութիւն այն ողջոյն :

Տեսուք և զհարազատութիւն բանից առն պերճաժնոսի և դիտնաւորի . նա ինքն Եղիշէ վարդապետ յերկրորդ յեղանակ գրոցն յառաջարանէ այսպէս . Որոց ոգին թուլացեալ են յերկնաւոր առաքինութէն , յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ . յամենայն հոգմոյ շարժի և յամենայն բանէ իռուսիֆ ; յամենայն իրաց գողաց . երազագէտ է այնախին 'ի կեանս իւրում , և յանգիւտ կորուսան յուղարկի 'ի մահուան իւրում : Ոնկ և առաց ոմն 'ի հնումն . Մահ ոչ իմացեալ՝ մահ , և , մահ իմացեալ՝ անմահութիւն է . որ զմահ ոչ դիտէ , երկնչի 'ի մահուանէ . իսկ որ դիտէ զմահ , ոչ երկնչի 'ի մահուանէ : Եւ այս ամենայն չարիք մտանեն 'ի միտս մարդոյ յանուսումնութէ : Կոյր զրկի 'ի ճառագայթից արեգական , և տղիտուի զրկի 'ի կատարեալ կենացն . լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք . որպէս մեծ է հոգի քան զմարմն , այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց . : Ահա հարազատութիւն , յորում երեխ բնական պերճախօսութիւն , դիտութիւն , և 'ի փորուն բազում ինչ բովանդակել : Ըստ այսմ օրինակի քննել ունինք և դտանել զսեթևեթն և զբանականն յիւրաքանչիւր 'ի գրոց : Զի որ 'ի տղայականս և 'ի գոյզն զարդս ուշ ունիցի , իմաստակութիւն և ձեռովք բառից լուռ զհառս : Իսկ բոնական մտածութիւն են , երբ չգիտիցէ ոք զինչ դրեւցն է , նիւթոյ 'ի նիւթ անցանէ տարաժամու , 'ի բազում ինչ ձեռն արկանէ , և ոչ զմին լրիւ իւրով բացատրէ . զի վեր ՚ի վերոյ ունի յինքեան զդարափար իրացն այնոցիկ : Այս քննութիւնք ահա զհարազատութիւն ուսուցանեն գտանել :

Եշրկրորդ հանդսմանք ոճոյ է ձոխ կամ սուղ բաշատութիւն իւրաքանչիւր մատենագրի : Ուր տեսանես զմատենագիր ոք առաւելեալ 'ի բանս կամ յանձուկ սահման ամեխոփեալ , նովին իսկ զանազանի յոճ լայնաբան կամ 'ի համառօտ . և եղանակ գրութեն նորաըստ նմին յարանուանի :

Ատենագիր արարաբան ամփոփէ զիմաստս բանից իւրոց 'ի համառօտն՝ որչափ հնար է . զայնս ևեթ յիմաստից 'ի կիր առեալ որ աղդողագոյնք են , 'ի բաց

մերժէ զամենայն աւելորդ զբոյցո՞ որ ոչ ինչ յաւելուած առնեն 'ի բովանդակութի ճառիցն, տակայն և ոչ հրաժարէ 'ի ճարտասանական ձեռց, որ ախորժ և ահաւոր ընծայեցուցանեն զդէմն բանիցն : Ոչ յեղյեղէ զնոյն իմաստ, այլ յայնափառում վայրի զետեղէ, զի միանգամ և եթ ասելովն՝ լիազոյն իմանի : Կարգք իսպից նորա յաւելու ուժդին են և ազգոյ, բան ներդաշնակ և քաղցրաձայն . և ամենայնիւ ջանահնար ընկն տպաւորել 'ի միաս ունկնդրին առաւել քան զատացեալսն :

Մատենագիր ճոխարան՝ ամենայն առասութ արտայայտե զիսորհուրդս մուաց իւրոց . բազմօրինակ բանիւք հոլովէ զմի և զնոյն իմաստ, և ընձեռէ վերծանողին օգնութի յոյժ՝ առ 'ի ինելամուլ իրացն : Զառաջինն ոչ խորամուխ խազայ 'ի բանն . քանզի գիտէ յաճախարան յօրինուածովք առանգել զբանն, զի մի ինչ թերի միասցէ : Այսպիսի մատենագիրք սիրեն զագերճախօսութի և զընդլայնումն բանից . վասն այնը պարրերութի շարադրածոյ նոցա ընդունակք են բազմագիմի պահուածանաց՝ ոչ սնուուոց :

Երկու այս ոճք օգուտ բազում յիւրեանս բերեն 'ի պատշաճն 'ի կիր առեալ և զիւաս' 'ի տարապայմաննեւ: Վանզի սաստիկ ամփոփումն թերի և միմին դործէ զբանն, և աւելորդ յերկարութիւն՝ թոյլ և անզօր առնեկ :

'ի կարգի ականաւոր մատենագրաց մերոց քանք են 'ի համառօտութի բազմիմաստ՝ խորենացին քերթողահայրն մեր, և իգնատիոս վարդապետ մեկնիչ Ղուկայ : 'ի գրոց առաջնոյն բառ մի 'ի բաց թողիւլ խանգարի շուեմարանեալ ճոխութի նորա, որ 'ի սուզբանն զլիտւլի տեղեկութի հնագիտութել իւրոց ամբարեալ ունի : Խակ ընդ իգնատիոսի յօրինուածն ամենայն զգօն միտք հիացեալ զարմանան . զի գտանի իմաստից ճոխութի առաւելահրաշ 'ի փոքու մատենին : Ճոխարանք են և պերճախօս Ծնորհալին, Սարգիս վարդապետ, և Լամբրտնացին, զեղունք և թաթաղունք յիմաստ և 'ի բանս : 'ի վեր քան զոտոս Եղիշէ վարդապետ, Մեզու այրարատեան . որոյ մասծութին ազնուական, և յօրինուածն ոքանելի - ըգորչափ և ընթեռնուցու ոք՝ ոչ յադի : Յազում զայլս, զի չէ տեղւոյս քննութի դոցա :

Բայց թէ պէտք և լայնարձակ դրութիւն ախործէ պարբերութիւն յերկարաձիգս. և ամփոփն համառօտա: այլ ոչ զնիւ գոյ սաել թէ ուր դուցեն այսպիսի պարբերութիւն, ըստ նմին յարանուանել պարտ իցէ զբանեանն ողջոյն և զինանեագիրն զլիսովին: Քանզի է ուրեք՝ զի լայնարձան մասենոգիր համառօտ գործէ զպարբերութիւն, այլ իմաստ նոցին ճապաղ է և տարածեալ. և համառօտախօսն ուրեք ուրեք յերկար պարբերէ զրանն: Ազդեցութիւն ամփոփ զբուցաց ուժգին է, զի երագ յառաջբերութիւն իմաստիցն արթուն և զգաստ պահէ զունելնգիրն. իսկ երկայնախօս պարբերութիւն հանգարոք են և ծանունք:

Երրորդ հանգամանք ոճոյ, որ նախակարգելոց գետ գոյ, և զօրուոր և տկար դրութիւն: Բազում այն է զի լայնարձան մասենագիր տկարագոյնք են, և համառօտախօսպն զօրաւորք ՚ի բանս: թէ պէտ այս ոչ յամենայնի հաւասառեալ է: Հիմն զօրաւոր և տկար զրուցաց հաստատեալ կոյ յիւրաքանչյուր եղանակս մուածութեց: Եթէ մասենագիրն խորագոյնս իսելամիցէ հանգամանաց իրացն, ազդոյ բանիւ բացատրէ զայն. իսկ եթէ վեր ՚ի վերոյ առնուցու ՚ի միտ, և չիցէ լիով հասու բովանդակութեն նիւթոյն զորմէ բանն է, կամ ոչ ըստ առաջադիր բանիցն պահանջելոյ, յայն ժամ տկարագոյն մնայ բանն, և վերջացեալ ՚ի զօրութէ: Անդ է տեսանել մակդիրս տարտամն և բառուանչանականս, բացատրութիւն ճապաղս, և զբաղանութիւն շփոթ:

՚ի նախակարգելոց տեսակաց ոճոյ՝ համառօտաբանն և ճնիսարձանն ընդունելի են ըստ աեզւոյն, այլ ոչ նոյնպէս և տկարն: Մասենագիր հզօր ՚ի բանս թէ պէտ և լայնախօս իցէ և թէ համառօտախօս, միշտ ազդեցուի կցորդ է բանից նորա: Զի որովհեան միտք նորա համօրեն ՚ի վերոյ կացեալ են իմաստիցն, ըստ նմին և բացատրութիւն՝ թէ ՚ի սուշն և թէ ՚ի բազումն հզօր է և ազդոյ, և ամենայն զրոյցք նորա և ձեք կենդանութիւն տան նկարագրի բանիցն: Վասն որոյ ամենեցուն՝ որոց դրել կամ ատենարձանել առաջի կայցէ, հարկ է ջանալ ՚ի պահակաղմութիւն և յուժգնութիւն բանին. զի որչափ ՚ի տկարութիւն անդր զինանի, այնչափ իսոտան լինի: Ըստ մեծարդի և կարեոր լինելոյ նիւթոյն՝ առաւելու պարտ է և զափ ուժգնու-

թԵն. վասն որոյ յիմաստասիրարական բանս, 'ի պատմութիս և յատենախօսութիս արժան է առաւել սաստկացուցանել զիերպարանս ասացուածոյն՝ քան յոյը վարկապարազի ճաւս :

ԳԼ: ԺԲ.

Յաղագ Պրաւորական ոճոյ :

'Ա միտ առեալ իմաստասիրարար զհանդամանս ա-
ճոյ ըստ եղանակին՝ ըստ որում ծնանին միոք զրանս
և բացատրեն, և որով 'ի յայտ գայ իւրաքանչիւր խոր
հեցողացն բնաւորութիւն, արդ տեսցուք և զարտարին
տիպս կերպարանացն ըստ աստիճանաց՝ ըստ որոց ըն-
ունին ճոխութիւն զարդուց : Զի որպէս ասէ Կիկե-
րոն, Վեհագոյն և քաջընտիր առաջնորդ է և ուսո-
ցիչ բանից՝ ոճն :

Բազումք 'ի հռետորաց ընդ Կիկերոնի և ը Կուին-
տիլիանոսի յերիս տրոհեն զոձն ըստ երեակ գործոց
առենախօսին . որք են՝ ուսուցանել, զուարձացուցա-
նել և շարժել, ըստ սոցին և զո՞ն բաշխեն 'ի պարզ,
'ի միջին և 'ի վեմ . յորս մեք յաւելցուք այլ և ո
երկուս, ցամաք և բարդաւաճ . ը հնդեակ թուովս
բովանդակեալ զամենայն տեսակս շարադրածոց . այս
ինքն են՝ Յամաք, Հարթ, Յստակ, Հոյակապ և
Շարդաւաճ :

Ա. Յամաք ոճն ստորին է և ռամկական, հեռի
յամենայն պերճուէ, շատ համարելով տալ զիմաստան
և եթ : Ո՞չ այսպիսի ոչ 'ի ճահ գայ ճարտասանութիւն,
այլ ներելի է միայն 'ի վարդապետականս և 'ի խրա-
տականս . բայց և 'ի նոսին սպահանչի, զի գէթ նիւթ
բանիցն ճշմարիտ իցէ, և շարադրածն հարազատ իւ-
րաքանչիւր բարբառոց : Այս եղանակ խօսից ոչ ինչ
ամոքէ զկամս, և ոչ զմիտս համոզէ . այլ միայն տրա-
մարանորէն տայ զիրացն ճանաչումն . վասն որոյ ոչ
յերկարեմք զայտմանէ :

Բ. Հարթ ոճն ընտրելի է քան զցամաքն, զի ոչ
անտես առնեէ զընդելական զարդս և զպաճուճանս,
միտ եղեալ 'ի դիւրիմաց և 'ի վայելուչ բացատրու-
թի : Սեփական է այս ոճ՝ առտնին զրուցաց և նա-

մականուոյ, և յընթացս Հառին տեղի գտանէ՛ ՚ի պատմութիւն և ՚ի փաստ : Կարեռոր հանդամանք են սորա՝ բացայատութիւն, պարզութիւն և հարազատութի բարբառոյ : Կատարելութիւն սորա ոչ է յեռանդան և ՚ի հրաշազարդ ասացուածս, այլ ՚ի քաղցրութեն և ՚ի չափաւորուեն, հանդերձ ընդելուզմամբ ախորժ արտուղութեց :

Ուրիշ վերոյ նայիցին ընդ այս ոճ, դիւրին ինչ համարին . իբր զի ոչ օտարանայ յեզանակէ սովորական զրուցաց, վասն որոյ և առձեռն պատրաստ է ամենեցուն և անկարոտ բազում վաստակոց, դիւրին և համբակաց իսկ : Սակայն բազում խարոց է ընդ կարծիս և ընդ Տշմարտութիւն . զի ոչ դոյզն ինչ է յօրինել բան դիւրիմաց, որահելով զնորհս վայելութեն և զնարտասանութեն բազմարուեստութիւն : Զի այս ոչ այլազդ յաջողիւ, բայց զբնութեն հանդամանս վով գաղափարեալ . որ որչափ սքանչելին է և քաջարուեստ, նոյնչափ և անարուեստ :

Ամին հանդոյն պատմութիւք, և որ ըստ նմին կարդի հարթ շարագրածք, որչափ մերձենայցեն ՚ի բնականն այնչափ ընտիրք են և դումլիւ : Որչափ հաճոյարար և ամոքիւ ձեւ է տեսանել յընտանի զրոյցս՝ մանաւանդ ՚ի բերանս դիսնաւորաց . ընտիր ընտիր օրինակս բացարութեց, առածս իմաստալցու, արտուղութիւնս համապատշաճս և գեղեցիկ յատկութիւն հայկարանութեն, այսոքիւ ամենայն սեփական ձիրք են հարթոճոյ, որք ոչ երբեք զանցանեն ըստ չափ դիւրիմաց խօսից :

Զօրինակ հարթ ոճոյ է տեսանել ՚ի դիրս խորենաց ոյն յառաջիկայ հատուածդր . (դ. 55.) “ Եր երբեմն (Ծապհոյ և Աստմայ) զնեա երանակաց ցուուց յանդ գնագոյնս արշաւել ը խորտաքրոտս և վիմուտ տեղիս յորմէ կասել սկսաւ Ծապուհ : Իսկ Աստմայ մոկաց ոյ եպերեալ զնա, առէ . Դնա դնա, աստուածորդիդ Պարսից, եթէ այր իցես : Եւ նա առէ . Դու երթիջիր, զի ՚ի քարինս դիւրաց է շահատակէլ : Դարձեալ յայլում ժամու դիսեցաւ ՚ի շամբա՝ կինճն որսալ հրով . և Ծապհոյ ոչ համարձակեալ ՚ի թաւուն քաջարշաւ մինել, մինչև շրջապատէր հուրն . և նր զհայեցուածան յերկուս բաժանեալ, այսր անդր բերեալ լինէր Երի վարաւն : Միւսանդամ առէ Աստմ . Աստուածորդիդ

Պարսից, ահա հայր քո և նծ, ընդէ՛ր զանգիտես: Իսկ Ըստուհ ասէ. Թողեալ զկառակելք՝ յանցանել ընդ հուրդ դարձո զքեզ, որ և ես զկնի քո. քանզի յառաջելն՝ ձիս իմ խրաչի: Յայնժամ այսպանեաց զնա Սոսմ ասելով. Միթէ և այդ քարինք իցին, զի ես յառաջեցից. և արդ եթէ դու զմակացիս կոչես դիւզդիս, ևս զսասանեանսդ կոչեմ կնամարդիս: Եւ մարակեալ զերիվարն իբրև ընդ հովիտ ծաղկանց անցաներ ընդ հուրին՝ զերծուցանելով զԸապուհ ։

Այս նկարագիրը ընդէլսկան ձևովք յօրինեալ գեղեցիկ յայանարանէ զամենայն զպատմեալսն, ոչ մի ինչ ազօտ թողլով. և միանդամայն մերթ ը մերթ նորօրինակ ասացուածովքն ուժգնութիւն յաւելու ՚ի բանն: Որպէս ասելովն. Նորա զնայեցուածուն յէրիսու բաժանեալ, այս անդէ բերեալ լինեց երիշորան. իբր առաջի աջաց նկարէ զանցսն. նա և փոխակերպութիւն կոյ ՚ի բայն բաժանել: Յասելն. Յանշանել ընդ հաւրի տորի զնէն, ոչ և և զնի ու. բայդ տորի, ուժգին հնչէ, և նշանակէ առաւել քան զսովըրականն: Իսկ որ զկնի. ոչ և և զնի ու. ՚ի համառօտ բանսն ամբողջ իմաստո տայ, թէ և ես զհետ քո եկից: Օրինակն՝ իբրև ընդ հավաքաներ անշաներ ընդ հաւրն. մեծ նմանութիւն մէջ բերէ ընդ հուր և ընդ ծաղիկ՝ վասն արծարծուն շարժմանն. ևս և ՚ի կողմանէ երիւ վարին՝ որ ընդ երկուսն միօրինակ անցաներ, ոչ ինչ խափր զնելով ընդ հուրին և ընդ ծաղիկ:

Գ. Յստակն սիրէ զզարդու, այլ զդիւրինս և ըզպարզս. ըստ կանոնաց պերճախօսութե հանդէս առնելով ամենայն քաղցր յօրինուածոց՝ որ զեղեցկութ յինքն առարկանեն զմառադրութիւն ունկնդրաց: Ծքեզ ՚ի նմա լուսափայլէ շարակարգութիւն բառից, և յարմարութին իմաստից. ուր պարբերութելքն բարեշափք՝ յաւետ յամփոփին մերձենան քան յընդարձակն. ձեք զորս ՚ի մէջ առնու՝ հանդարաբ են քան հրացայտք: Եւ բովանդակ իսկ ասել, համարի դաղափար ընտիր մատենադրութեան. զի է ՚ի նմա ամբարձումն մտաց միջական, ոչ սրաթռիչ, և ոչ վայրաքարը:

Յստակ ոճն խորագոյնս ազդէ ՚ի միտո ունկնդրին գեղով յօրինուածոյն. հաւանեցուցանել և յօժարեցուցանէ ՚ի կատարումն ասացելոց իւրոց, թափանցեալ ՚ի միտո և ՚ի սիրտս: Սակայն առ ՚ի կատարել

զայն՝ հարկ է նման նախ յերեւակայութել լսողին ազ-
դել յորդութեք բանից ընդելու վելոց զգօն իմաստիւք
և զուարթարար ձեռվլք, որովք զուշ և զմիտ և զե-
րեւակայութել համանգամայն թակարդէ: Աղդէ ՚ի միաս
զնշմարտութե և զհաստատութե աստցելոցն. իսկ յերեւա-
կայութի՝ զգեղ և զնորհս բանին:

՚Աման է ոճ յատակ՝ ականակիտ վտակի, որ հեղա-
սահ ընթացեալ ընդ յատակ իւր՝ կարկաչելով հար-
կանի ընդ քարինս, և վչիտ լուսափայլ երեւեցուցա-
նէ զնոսա ընդ յատակութի իւր. ափունքն երկուստեք
Դալարազգեացք ծաղկազարդք իրը թէ արբեալք
Յյագ ՚ի կենդանի ջուրց անտի, ծիծաղին: Այս հան-
գամանք են յատակ ոճոց:

Եղիշէ վարդապետ տպաւորագոյն ընծայէ զօրի-
նակն ՚ի պատմութեք երանելի կանանցն. (361.) “Բա-
զում ձմերաց հալեցան սառնամանիք. Եհաս գարուն
և եկին նորեկ ծիծեռունք. տեսմին և ինդացին կենցա-
դատէր մարդիկ, և նորա ոչ երթէք կարացին անսանել
զանձկալիսն իւրեանց: Ծաղիկք գարնանայինք յիշա-
տակեցին զպսակատէր ամուսինս նց, և աչք իւրեանց
կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա:
Սպառեցան բարակիք որսականք, և խցեալ կուրացան
արշաւանք որսորդաց: Բնագրօք յիշատակեցան նո-
քա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ՚ի
հեռատասանէ: ՚ի ճաշակատեղս նոցա հայեցան և տր-
տատուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս
նոցա: Բազում արձանք կանդնեալ էին յանուն նո-
ցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ՚ի նոսա:
Եւ իրրե այնպէս յամենայն կողմանց ալեկոծ լինէին
միաք նոցա, ոչ ինչ կատեալ թուլացան յերկնաւոր
առաքինուէն: Արտաքնոցն երևէին իրրե այրիք սգա-
ւորք և շարչարեալք, և յոդիս իւրեանց զարդարեալք
և միմիթարեալք երկնաւոր սիրովին: Ոչ ևս սովորեցին
հարցանել զեկեալ քք ՚ի հեռաստանէ, եթէ էրը լինի-
ցի մեզ անսանել զսիրելիսն մեր. այլ այն էին իղձք
աղօթից նոցա առ ած, եթէ որպէս սկսանն՝ քաջու-
թեք ՚ի նմին կատարեացին լի երկնաւոր սիրովին,,:

Հանգոյն իմն և Շնորհալին յառաջին նամակն առ
կայսր. “Զարթեաք որպէս ՚ի քնոյ՝ զուարթարար
բանիւք որ ՚ի սուրբ թագաւորութէդ. որով պատա-
ռեցաւ քուրմն սկոյ առ ՚ի մէնջ, և զդեցաք զուրա-

խութեն ըստ գոհարանութեն նը մարդարեին որ յաղագս են : Վանզի ծանոյց մեզ զօրութիւ բանիս , ոչ միայն անուանակցութեն և աթոռակալութեն՝ այլ և դործակցութեն ճշմարտին կամանուելի արժանաւորել ձեզ . այնում՝ որ հարիւրոցն ովարաց և դրամիցն տասանց էջ ՚ի խնդիր նուազութեցն լրման : . . . Վանզի զցանկ օրինայն՝ զոր խրամատեաց թշնամին , և զուռան հաւատոյ՝ զոր քանդեաց կինքն վայրենի ՚ի ճշմարտ որթոյն , փութալ խրամակարկատ լինել , և առ նոյն պատուաստել վերսատին . և այսմ բարւոյ դործակից լինել զմերս տկարութիւ հրամայեալ էք եղօրն իմոյ՝ առաքել ՚ի նը թագաւորութիւ : . . . Բայց քանզի ճարտարապետն ընութենս զսիւն ճշմարտութեն որ յայսր խարսի վերայ հաստատեալ էր՝ սասանեցոյց , և փոխանակ զմերս հաստատեաց անարժանութիւ , արգելու յայժմուս այսու պատճառաւ յարձակումն կամացս յօժարութեն , զի մի գուցէ որ ՚ի մէջ աղտաղտուկ ջուրց անհաւատութեան հաստատեալ կղզիս՝ ընկղմեսցի ՚ի զանազան աշեացս խոռվութեց ՚ի վերայ յարուցելոց . . :

Դ. Հոյակապն գերազանցէ քան զյուտակին առաւելութեն զարդուցն , ազնուականութեն խորհրդոցն , շքեղութեն հիւսուածոյն , մեծութե բանիցն և եռանգուն յուզմամբ կրից՝ որով ոչ միայն հաւանեցուցանէ , այլ և ըստ օրինակի ամենի գետոյ՝ որ ընդ իւր զքարինս և զթումբս առեալ խազացուցանէ , յափշտակէ զոդի ունկնդրին , ակամայ բռնագատեալ զնա ՚ի զարմացումն և յախորժ : Որուայ , շանթէ , պակուցանէ , խորտակէ զամենայն դիմուկացս , և զամենայն ուժգնութիւ ճարտասանութեն ՚ի վար արկանէ ՚ի յաղթահարել զհակառակորդն :

Զյուտկութիւն հոյակապ ոճոյ ՚ի չորս ինչ մարթէ բովանդակել : Առաջին՝ ՚ի մեծախորհուրդ և ՚ի բարձրմտածութիւն , որով բաւական լինի տաենարանն դատաստան առեւել խոհական ընտրութեն ՚ի վերայ իրաց իւրաքանչիւր . ընդ նմին և յեռանգուն երեւակայութիւն ՚ի գտանել քերթողաբար վսեմ զրոյցս ՚ի ժամու : Որ առաւելապէս յաջողեն ընդ ձեռամբ ազնուական և մեծիմաստ վարժապետի , որ շտեմարանեսցէ ՚ի միտանոցա խմաստ ազնուականս , և ՚ի սիրտս նոցա խորհուրդս արժանաւորս մեծարոյ անձանց . զի ընդ հա-

կառակն նուաստ և ցածուն դաստիարակութիւն անշքացուցանէ զմիտու , և ոչ թողու խորհել զաղնուականա :

Եցրկրորդ յատկութիւն հոյակապ ոճոյ է յուզութիւննուական կրից , որ յափշտակեսցեն զոգիս ազդուական բանիւք , և խրախուսեսցեն հանդերձ զուարձութիւն :

Եցրրորդ ձեք և փոխակերպութիւնը ըստ սրատշաճի դասաւորեալք առանց մնուաի պահուանանաց , որչափ հարկաւորն է՝ և ոչ աւելի . զորոց զհանգամանս և զպիտառութեն չափ՝ լիով ծանուցեալ եւք յիւրում տեղութիւն :

Չորրորդ բարեյարմար ներդաշնակութիւնը ըստ բառիցն և ըստ պարբերութենց : Ուր ուրեք գեղապանձ շարագրութիւն կատարեալ ունիցի զորեսին զայսուիկ հանդամանս , օրէն է դասել զայն ՚ի գլուխ հրաշակերտ շարագրածոց . յորում արհեստ և հանճար զուդընթանան :

Ընտիր օրինակ հոյակապ ոճոյ ընծայէ Յովհանն իմաստասէր . յորում է տեսանել գերազանցութիւնն իմաստից փոխակերպութեանց և ձեռց , ընտրութիւն բառից , և դժուարին իրաց քաջ բացայացտութիւնն զոր թէ ոք քաջ իմանայցէ , հրաշանայ ընդ բանս և ընդ գրովն : “ Յայնժամ բոլորովին ես ինքն էի լուսատեսիլ յանայնոյ . թափանցանց լինելոյ նշուզից , զոր իբրև մաքուր հայելեաւ առ իս զփրկչականն ձգելով գիմի զնմանուի , հանգոյն արեգական ՚ի խորս ուրեք ընդ յատակութիւն թուրցն առաքելով զիւր ճառագայթսն : Եւ նախ նորին ստէպ ստէպ չոգւոյն ուղիսից վտակօք ոռոգանէր զարգաւանդ երկիր մնաց իմոց . և որպէս ՚ի ծաղկահոտ դինի սպունդ ինչ թացեալ այնպէս լցեալ ուռռնանայր ՚ի նմանէ բանական իմ ոգի . մինչ զի կարել ասել ինձ զյայնժամու պատահիցն՝ իբրև զայլմէ պատմելով . Մանուկ էի մուավարժ և ոգւոյ բարւոյ դիպեցայ : Քանիզի և վարժապետ վեհագոյն ունեի յԱՇ պարգևեալ ինձ հայր ... որ ոչ զառ յինքենէն և եթ բաւականանայր շտեմարաննել յիմումն ոգւոջ զբարին , այլ ՚ի յոլովից զպայծառագոյնսն ծաղկաքաղ առնելով զնորհաց՝ լիացուցաննել զագահութեն իւրոյ ինեւ չանայր զուսումնասիրութիւն : Եւ գրեթէ յաղդմանէ չոգւոյն զլինելոցս նախատե-

սեալ, զառ. 'ի յոքունցն հաւաքեալ պատրաստէր լինել բազմաց պիտոյից նիւթ - ծածկարար զայսն առխս բարբառեալ . Կեր մանր զմառեանդ զայդ, պատղամառարդ հրաւիրել լինել խորայէլեանն ազին : Եւ եթէ երբեք ուրեք խորհէի արդէ օք զհրասմանացն խորտակել զուծ, և խողել զաշխատունն տամետէս՝ այլում ակն զնելով կենցաղական տարփանաց, ածայինն չնորհ անդրէն ձգեալ բերեր զիս կապանօք սիրոյ իւրոյ, տաստելով յականնս խորհրդոցն իմոց . զի՞ կայ քո և ճանապարհին եղիպտացոց՝ ըմպել զջուրն գևհոնի : Յաղագս որոյ ապա հաւանեալ իմ այսոքիւք, իբրու թէ ձայնի կոչողին զիս այ զյանձնառականն ընդ առաջ տանելով բան . Ահաւասիկ եմ ես, առաքեա զիս : Զոր օրինակ ձի ոք նորավարժ ոչ կարայեալ զմիրելեակն իւր յինքնէնէ 'ի բաց ստուցանել, զակամայ սանձիցն բռնագատութէն գժոխակամութէն իւրոյ եգեալ, գործիցէ քաջ հլութե ասպարէզ,, :

Ե . Իսկ բարդաւաճն ոճ այն է, յորժամ զարդք և ձեք 'ի կիր արկեալք 'ի բանս՝ յաճախեն յոյժ առաւել քան զարայման առաջադիր նիւթոյն, ըստ օրինակի ցոլացուցիչ հայելեաց, որ համակ լուսաւորեալ կրկնապատկեն զպատկերս : Վասն որոյ շուայլ անուանել զայս ոճ՝ չինչ տարադէապ : 'ի համբակ դեռակիրթ ներելի է այս ախտ, մանաւանդ թէ և ապադայ յաջողութէն նախագուշակ է՝ ճոխարան լինել նորա քան ցամաք և ազաղուն : Քանզի ամէ կունտի լիսնոս . 'Կամիմ թէ իցէ բեզնաւորութէն բանից 'ի պատանեակս, զի բազում ինչ անտի 'ի բաց յապաւեն հասունացեալ ախք, բազում ինչ քերէ հանձարն, և զբաղումս հոսեալ անհետ առնէ վարժութէ : Իցեն ապա բանք, յորոց մարթ իցէ հասանել և յղիել : Մի երկիցէ հասակն այն ձեռներէց լինել 'ի գիւտս բազումն, և ընդ գտեալսն խնդացէ, թէպէտ և չիցն հասուն և կատարեալ. զի ամուլքն ոչ իւիք վաստակք արդասաւորին .. : Սակայն 'ի հասունացեալս և յայր կատարեալ գարովելի է այդ իրը թեթևամուաց և ազայաբարոյից գործ : Քանզի աններելի է տեսանել յայր ատենախօս և մատենադիր՝ զեղիսութիւն բառից առանց իմաստից, Տիգն տարապայման 'ի գիւտս իմաստից, տարադէալ բացադանչութիւն և ձեք, յորոց օգուտ և ոչ մի :

Այս բարգաւառ ոճոյ դովելի օրինակ ընծայէ
խորենացին ՚ի ճառն Հռիփսիմեանց, ՚ի տիս մանկու-
թէ յօրինեալ. յօրում եռանդն մասաց նորա և հան-
ճարեղ իմաստք զեղուն : Զառաջիկայ հատուածդ
բացադարձուի յօրինէ ՚ի բերանոյ սրբուհւոյն Հռիփ-
սիմեայ առ Լուսաւորին մեր . “Եւ քեզ աւետիք ,
Երկնաւոր նահատակ և քարոզ փրկուէ , բազմափայլ
ճառագայթ՝ որ ճածկեալդ ես ՚ի գրի : Ահա հասի
քեզ ՚ի թիկունս՝ սլացեալ յարեւմոց յարեւելո թե-
թեւընթաց ամարով իմոյ կուսութես . զիայլակնարոր-
բոր ճառագայթ տիեզերածաւալ լուսոյ աւետարա-
նին՝ իմոյ հարց Պետրոսի և Պօղոսի՝ ՚ի վայրս քո եկի
ժագել , վանել փարատել զմեդ խաւարի , որ զքոյդ
արգելեալ փակեալ զեկենդանի լուսոյդ ճառագայթ :
Մագեատ , լուսաւորդ մեծ , ՚ի խորոց անդնդոց քաղց-
րանուադ լուսովդ՝ զաշխարհարձակ ճառագայթա-
լոյս փայլումն քոց որբոց հարցն աւետարանին թա-
գեսոսի և բարդուզիմեսոսի , երկաքանչիւր լուսով
փթթեալ զհիւսիսի : Հար զիսորան քո յարեւու , և ել
արեգակն արդարութէ ՚ի դնացս քո ցնծութիք՝ յող-
ջոյն արիւնազգեստեալ հարսին , որ մարտիրոսական
արեամբ ճգնեալ , եկեալ ՚ի քո խորանիս հարսնարան
անմահ փեսային , :

Զ հնգեսին զայսոսիկ ոճս մի համարիցիս թէ ըստ
էգեալ գասակարգութէս ոտորագաս իցեն քան զի-
րեարս . քանզի ոճ միօրինակ չէ պատկանաւոր առ ա-
մենայն ազգ բանից և առ ամենայն լսելիս , այլ այն է
լաւագոյն՝ որ յանկաւոր իցէ տեղւոյն և ժամանակին
և ամենայն հանգամանաց . զի թէ տարագէալ ՚ի դորձ
վարեսին . թերի են և արաստաւոր :

Զ անազանի ոճ յոճոյ ըստ եռթի դլիսոց : “Նախ ի-
մասախւք . քանզի յոճ հոյակասպ օրէն է բացարել
զիրն ազնուական և զերազանց մասածութիք . որ չէ
յայլս նոյնպէս :

Երկրորդ՝ եղանակաւ . զի հոյակասն պահանջէ շա-
րագրութիւն շքեզ , թռոյցս իմն երեւակայութէ և յօրի-
նուած ճարսապ , որ յայլս չունին տեղի : Կոյնապէս են
և յատուկ եղանակք յատակին , որ չեն պատշաճա-
կան հարթ ոճոյ :

Երրորդ՝ բառիւք . վասն զի ՚ի հոյակասն ՚ի դորձ
ածին բառք մեծիմաստք , ընարելագոյնք , ներդաշնա-

կաւորք, զորս անմարթ է՝ ՚ի կիր արկանել յայլ ոճս : Արտիւ և բառք դիւրընտելք ՚ի հասարակաց խօսս, ոչ սպատկանին հոյակասպ շարագրութէ :

Չորրորդ՝ ձեւովք. զի հարթ ոճն ընդունի միայն զորարզ ձես և զդիւրինս . յատակն զբերիրեցուցիւս . հոյակասպն զայն ամենայն՝ որ արծարծունք են և զարթուցիչք : Խակ բարդաւաճն զամենայնն ՚ի կիր առնու:

Հինգերորդ՝ անդամօք. քանզի անդամք հոյակասպ ոճոյ զեղուն են խմաստիւք՝ քան զայլոցն :

Վեցերորդ՝ բաղազանութք. զի ՚ի հարթն յզկեալ են բանք և անարուեստ . ՚ի յատակն յաւելու ինչ արհեստ . խոկ ՚ի հոյակասպն քաջարուեստք են մէն մի յիմաստից , և ընդելուզեալք յիրեարս Շարտար կցորդութք :

Ետքերորդ՝ սպարբերութք. զի ՚ի հոյակասպն անդամք և հատաճք յօրինին մեծաշուք օրինակու և ուժգնութք . ՚ի յատակն խնդրին վայելուչքն և զուարթացուցիչք . խոկ ՚ի հարթն անզարդ նմանութիւ բնականին :

Յիւրաքանչիւր մատենագիր թէալէտ յանախ է նշմարել զէլեւէջ և զբանազանութիւ ոճոյ ըստ պիտոյից, սակայն մարթ է յարանուանել զնոսա 'ի մի և էթ ոճ յոր առաւելապէս միտէ : Զի որ ՚ի հոյակասպն միտեալ է՝ ՚ի գերիվերոյսն տանի յանախ զմուածութիւս իւր, և ըստ նմին չափէ զշանգամանս նոցին . և այն դրութիւն համարի իրրեւ հայելի, յոր տպաւորին կերպարանք մատաց մատենագրին : Ըստ այսմ խմանալի է և զայլոց : Սոյնապէս և զոր ՚ի վեր անդր այլ և այլ տեսակս շարագրածոց զանազանեցաք, և որ համառօտ, է որ լայնարան, և որք ըստ այնմ օրինակի, զի թէ և համառօտարանն ուրեք Տօխանացէ 'ի բանա՝ միշտ զոյ տեսանել անդ համառօտուի և ուժգնուի խմաստից : Եւ թէ յանախարանն ուրեք ամփոփեսցէ զբանսն, սակայն և անդ համար են միտք բանիցն . յօրմէ գիւրին է խմանալ զմասն դրչին, ըստ որում վերագոյն աւանդեցաք վասն հարազատութէ :

ԳԼ. ԺԴ.

Յառագույն համարակալիքնեւ:

ԱՍԵՄ' յիրաւի մեծութեն և ահեղ կերպարանաւն զամենայնիւ դեր ՚ի վերոյ անցանէ: Յաւանդել զանդեկութիւ և զմարդուս սորա աշխատասիրեցին քաջք ՚ի հռետորաց՝ ՚ի հելլենացւոյն լոնդինուէ և այսր զի տեսին ՚ի բնական կարգի ընդհանուր ամենզերացս, նոյն և ՚ի փոքր աշխարհիօ ՚ի մարդումն, վսեմականսին պակտոցիչս խորազնին մտաց՝ ՚ի կարգի բնութել և ՚ի կարգի բանաւոր մտածութեց, և ՚ի կարգի մարդկեղէն դործոց: Արդ զայս սքանչելիս բնութեկ չանացան ընդհանուրիւր կարգաւ սահմանել: Պոր և մեք փոքր ՚ի շատէ համառատել ճգնեցուք:

Վսեմն է Առաւելահրաւին և առաւելացիւ յուշ, ծառաւելով շաւիւրիւ գուշ անդր գուն պինաւուրէանը (*): Որ ինչ զառաջինն ընդհարկանիցի մտաց՝ ահեղ և ուժդին օրինակաւ ընդարձացուցանէ զգայութիւնն և զմուածութիւ: Ծնդարմանան զգայութեք՝ վասն զի հանդիսպին իրաց ահաւորաց, որ ՚ի վեր են քան զբաւականութիւ իւրաքանչիւր միոյ միոյ զգայութեցն: ընդարմանայ և մտածութինն, զի տեսանէ մեծահրաշ և պակուցիւ առաջի այսացն: յորոյ ՚ի պատճառն և ՚ի դործանքաւականն լինի խելամտել, վասն վերջանալոյ զգայութեց իւրոց հպել յանմատոյց յայն տեսիլ: Քաղցր է շարժութինն, սակայն ահագին: մեծ և հրաշացուցիւ, այլ ոչ զուարթարար:

՚ի սահմանէս և ՚ի բացատրութենէս յայտ է, զի բացում ինչ խուռան յորդեն ՚ի վսեմն, մեծութիւ ահեղ, և ՚ի նմա բազմակերպ զանազանութիւ, ոչ մանրամասունք կցկցեալք և ընդխառնեալք, այլ պարզ, միանդամայն և պակուցիւ: Մեծութիւ զհետ իւր ձգէ զմտադրութիւ, իսկ զանազանութիւ արծարծանէ զո-

* Այս շահագույն ճարդառանուն ՚ի ինը արթեւ եր վահան ՚ի շահագույն պինաւուրէան առաջիւն ամու շար գրաւուր եւանանին, պայն մեծ առաջան ՚ի ինը առաջ:

գիս՝ ուշ ունել անյագաբար յամենայն մասունս բանիցն, մի առ մի զննելով զայնս։ Այս ամենայն միախուռն դրդեն 'ի հոգւոջ զարմացումն յետ ընդարմացեալ ապշութեն։ զի ինքնին միտք յաւելով զպատճառս մեծութե իրացն և զհանգամանս, խելամտեն վսեմութե նոցա։

Այս օրինակ առցուք 'ի գրոց Յովեայ. (դ. 13.)
“Արհաւիրք և բոմբիւնք գիշերականք, հասեալ ահ 'ի վերայ մարդկան. դողումն և սոսկումն պատահեցին, և մեծապէս զոսկերս իմ շարժեցին։ Եկն հողմ 'ի վերայ երեսաց իմոց, քստմնեցին հերք իմ և մարմինք. կանգնեցայ, և ոչ գիտացի. տեսի, և ոչ էին կերպարանք առաջի աչաց իմոց. բայց միայն օդ և սօսափիւն լսէի,,։ Այս բացատրութիւն ահաբեկ պակուցման՝ երեւեցուցանէ զպատմոլն հրաշացեալ ընդ տեսիլն յերկիւղէն և 'ի զննութե իրացն. ջանայ հասու լինել երեւութին, դարձեալ և նահանջի՝ վասն անհնարին սաստկութեն։ Տեսիլն պարզ է և բազմաման. ահացուցիչ է, այլ ոչ յուսահատիչ։ Այս խսկուի է վսեմին, և այս հանգամանք բացատրութեն։

Զայս հրաշալի ձիրս բնութե ընդ կանոնաւ բովանդակել՝ անհնար թուի. զի ո՞ր արհեստ գիտէ չափ և սահման դնել հրաշակերտից բնութե և իմաստասիրութե. միայն զչափն և զնմանութե ջանացուք համառօտիւ առաջի դնել. նախ որ ինչ յաշխարհի ինքնին վսեմականքն իցեն. երկրորդ՝ որ ինչ 'ի բանաւորս վսեմականք իցեն ըստ բարոյականի մասին. երրորդ՝ զհանգամանս վսեմութե բանից, և չորրորդ՝ զգաղափարս նմանութե։

Ա. Օրինակ արտաքին վսեմութե յայտ յանդիման տեսանի յընդարձակ և 'ի լայնածաւալ տեսարանս բնուե. յոր որչափ իմաստասիրաբար ակնարկեն աչք խորացնին, այնչափ յոլովագոյնս գտանեն կերպարանս ահեղ սքանչելեաց։ Դաշոք՝ զորոց ոչ նշմարեն աչք զծիր. մեծութե հաստատութե՝ ճաճանչեալ 'ի խոր գիշերի 'ի նշուլից սփիւռ աստեղաց, որ ընդ երկիւղին տխուր լուութեն՝ յորդորեն զտեսօղս 'ի զննել զնոսա. և տարածութե ովկիանոսի, որ ահս պակուցանողս արկանէ լեռնակուտակ ալեօքն, ընդ որս խեղախսեն մարդիկ չնչեն լաստափայտիւն նաւել։ Եւ հա-

մառօտ ասացեալ, որ ինչ ընդարձակատարը է՝ աղբիւր է վսեմականին :

Յերկարաձիգն ոչ այնշափ վսեմ թուի, որչափ բարձրն և խոր. զի թէպէտ և դաշտ լայնածտւալ մեծ է, սակայն լեռն բարձրաբերձ և առապարիւք և դահաւանդիւք սեսպացեալ, և վիհ խորանդունդ սպակուցիւք են տեսողաց : Դարձեալ և լեռն դալարագեղ և մարմանդք և բուրաստանք, թէպէտ մեծ և լայնարձակք իցեն, այլ զի զուարձացուցիւք են և հաճոյ աւաց հայելոյ և ոչ ահարկու, ոչ տպաւորեն զդապափար վսեմին : Որոյ ոչ իցե չափ և սահման, մեծ է և վսեմ. նոյնպէս որ գեր 'ի վերոյ ինչ է քան զհատարակացն և քան զատլորականն . որպէս ձայն մեծագոչ և ուժգին, որոտքնդոստ թնդիւն երկնից, հնիւն սաստիկ հողմոյ, և խոխոջիւն սահանաց յորդաջուր գետոյ : Սասանութիւն երկրի, յոր առանց ձեռին շարժողի նկատեն միտք զատատանել լիրանց, և զտապալել բարձանց : Հրաբուիք լիրանց, որք զամենածախ տարրն յանսպառ շումարանացն ուզիսօրէն 'ի գուրս հուեն, և զտուար հատորս վիմաց իրը գուզնաբեսայ քարինս հեղեղատի 'ի բացարձակ վայրս արկանեն : Այսպէս և տմենայն նորանշան իրք յամենայն կարգի : Վասկ հեղասահ՝ ախորժելի է 'ի ճառս բանից . իսկ 'ի յորդելն և 'ի հեղեղել՝ մեծ է 'ի տեսիլ, և վսեմ 'ի բացատրութիւն : Խառնամբոխ բախսիւն երկուց ճակատուց՝ յորում գետահետեն արեան ճապաղեք, և աղդ ը ազգի զինուք մաքառին, մատակարարէ բազում վսեմական իմաստու, արծարծանելով և բորբոքելով զմիստ : Այսպէս և ահարկու իրք, վայր խաւարին, սօսափիւն անսպասաի, խորին լուռութիւն, և տմենայն իսկ տեսարանք ընութէ, որք վերամբառնան զմիստ, և պատճառու տան լի և զեզուն բանից, վսեմականին են մաստունք :

Բ. Հանդոյն տասացելոց են և բարյական վսեմութէք՝ յառաքինի գործս և 'ի բանս . ուր վսեմախոհ միտք յափշտակեալ 'ի հիացումն, ոչ ևս որպէս մարդ՝ այլ գերմարդկային իմն խորհրդով և անյողդողդ որախ խիզախէ 'ի մեծահանդէս գործ ինչ կամ յաներկիւղ սրբատասիսանի :

Գլուխ ամենայն վսեմականծ գործոց մարդկան, և

Հիացուցիչ ամենայն մասց, Են անցք արրահամեան պատարագին. ընդ որ նախանձեալ և հին առասպելաց, բազմօրինակարքար ջանացան գողանալ մուծանել զայն ՚ի մնատի իւրեանց պաշտամունան: Յետ այնորիկ և յազգու ազգու ու վերջացաւ թնութիւ մարդկային ցուցանել վեևմ առաքինութիւն, որ բանիւ և որ գործով յայլ և այլ կարգի: Յուլիոս Կեսար նաւարկեր երրեմն ծպատեալ, և յարեաւ մրրիկ սաստիկ, մինչ ՚ի վտանգի լինել նաւուն: Եւ մինչ նաւավարն ջանայր յափն կոյս գարձուցանել անդրէն զնաւն, Զի՞ երկնչիս, ասէ, զկեսար բարձեալ տանիս: Արդ այս բան յայնպիսում ծանր վտանգի՝ ապշեցուցիչ իմանէ, զանդրդուելի տրիութիւն Կեսարու ՚ի դէմն ըերեւով:

Պորրոս արքայ հնդկաց յետ մեծի պատերազմին իրրե անձնասուր լիներ Ազեքսանդրի, Եհարց զնա Սպեքտանդր, թէ իրրե ընդ ում վարեցաց ընդ քեզ և նա ասէ. Իրրե ընդ թագաւորի:

Վահան մամիկոնեան սպարապետ ՚ի մոտանելն ՚ի բանակ Նիխորոյ պարափիկ մարդպանի, հրաման ետ իւրցին վող հարկանել որ ու էր օրէն: Եւ իրրե ազգ արար նման Նիխոր թէ չէ ումեք այդ՝ բաց ՚ի սպարապետէ Արեաց, ասէ. Նախ արա զիս ծառայ Արեաց տն, և ապա զիտեմ ևս զԱրեաց աշխարհի զկարգ և զարժանն: Այս ամենայն վեևմ մոտաց զրոյցք են և տարացոյց անվեհեր հոգւոյ. որպէս և որ ՚ի ծանր և ՚ի մօտայուտ վտանգու անսասանելի կայցէ գեր ՚ի վերոյ քան զկիրս և զերկիւղ, և քամահանս առնիցէ զկարծեօք ուամկաց, զշահ անձին արհամարհիցէ, և զմահ յաւան դնիցէ, սբանչանամբ ընդ նա մեծապէս:

Ըստ այսմ օրինակի յորժամ թամթուլ զօրավար Հայոց ընթանեալ ՚ի մարտի՝ յանկանել խոց Երիվարին, ածաւ առաջի Տուզրիլայ Պարսից արքայի, և ասաց ցնա թագաւորն վասն վիրաւորէլոյ ՚ի նմանէ որդուոյ ուրումն պարտիկ նախարարի, զի եթէ պատանիու այդ վիրաւոր մեռանի՝ սպանանեմ և զքեզ, իսկ թէ ապրին ապրեցուցանեմ, եւ պատասխանի թամթուլ՝ թէ իմ է զարկածն չէ կենաց: Այսպէս ամենայն ինչ որ զարմացուցանէ, պատճառս տայ վեմութե իմաստից և բանից :

Դ . Խակ հանգամանք վսեմութել յայսոսիկ բովանդակին : Կախ յեղանակ մտածութեն , զի ոչ ՚ի մանունս և ՚ի գուղնապեայս . ընդ անարդու և ը նուատը կապեալ դնի , այլ ամենենին յազնուականս և ՚ի բարձրագոյնս մնաբերէ . իրը այն թէ բարձրագահ բազմեալ , մեծ ամենիցէ : Արդ որ այսպէս վսեմախոհն իցէ , ը նմին և զիմաստան բացատրէ . որպէս այն որ ՚ի հիացումն ըմբռնեալ ընդ խաւարել արեգականն ՚ի խաչելութել ան , երգէ .

“ Ընկալեալ լուսամեմ տարերցն զգոյնս արեան անեղին , :

Զի՞նչ քան զայս վսեմ և բարձրախոհ մտածութել . զի ոչ միայն զգործ բանաւորի ասյ լուսաւորաց , այլ և ահաւոր և շքեղ օրինակաւ զմթագնել հոցա բացատրէ , որպէս թէ ներկան ՚ի գոյն արեան անեղին՝ ՚ի սրսկել նորա ընդ օդս ՚ի խաչելութեն : Եւ ահա մտածութել վսեմական այսպէս վսեմ կազմէ զպարզ պատմութել խաւարելոյ արեգականն :

Երկրորդ՝ վսեմ բանք և իմաստք են պարզք և անպաճոյնք , յստակք և կնիտք . զի եթէ մտածութեն անպրտոր իցէ և ՚ի յաւելուածոց անխառն , ապա և բանքն նոյնպէս յստակք և պայծառք գտանին : Արդ եթէ ըստ նախակարգեալ հանգամանացաւ մեծիմաստին բանք իցեն պարզ և քաջորոշ բացատրեալ , առաւելագոյն ունին ազգեցութել՝ քան զպտոյան և զմանուածոյ . զի որ յընդհանուր տիեզերս և ՚ի հրաշակերս բնութել ափրէ պարզութին , նոյն և անհրաժեշտ պահանջի ՚ի վսեմականս : Սովին պարզութել քերթող աւագ օրհնութեցն նուագէ .

“ Անապականութել աղբիւր և ՚ի մահու կեանք զքեղ ծանեան հրանիւթիցն սեռք , և բանական կենդանիք .” :

Արդ այս բան որըսպէ վսեմ է՝ ՚ի բացատրել զբնութել այ և զհրեշտակաց և զմարդկան , և ՚ի համառօտութեն բազում իմաստից բովանդակիչ , նոյնչափ ՚ի յօրինուածն պարզ է և յստակ . զի և նորավարժ համբակ քերականութել դիւրաւ կարէ լուծանել զայն . սակայն քերթողն հրաշանայ ընդ կազմած բանին :

Երրորդ հանգամանք են վսեմականին՝ ուժութեն և քաջայանդուգն համարձակութի . քանզի սա զամե-

նայն մասունս մեծութեւ խմառոիցն երևելի առնել, և պակուցեալ ապշեցուցանէ զմիտու : 'Ի յահայաւոր վաեմ նուագաց Շարականին ցդխում զորն ածել առ այս օրինակ . մարթե՞ր արդեօք զպարծանս խաչափայ տին վաեմագոյն ևս բացարել քան զոր ՚ի վեցերորդ աւուրն կանոնի խաչին նուագէ քերթողն .

“ Անպատճն կառք, անքննելի խորհրդոյն ընդունարան, ով նր քառաթեւ . ՚ի սաւառնաթեւից յարաթուելոց սրոբեից անտեսաբար ահիւ պատուեալ . քեզ երկրպագեմք, յօդնութե մեզ ժամանեաւ յելս և ՚ի մուտու :

Վեյաղթելի նշան, անպարտելի զօրութեն ընդունարան, ով նր քառաթեւ . ՚ի յահարկութեն ապատամբիցն երևեցար, որք ՚ի քէն ահիւ սարսեալ դողան և անդնդասոյզ կորնչին . քեզ երկր” :

Յառաջադոյն տեսեալ զքեզ մարդարեն Զաքարիաս աշտանակ ոսկին՝ Լոթնաջահեան լուսով պայծառացեալ յերկրի, ով նր քառաթեւ . և ՚ի վերայ քո տարածեալ աննիւթ գոյին գոյացեալ ՚ի մեր բնուկս, և աղքերահոս կողիւ մաքրեալ զաղտեղուեն աղքի մարդկան . քեզ երկր” :

Ընդ երևումն քո ՚ի թաղմանէ, ով նր քառաթեւ, ՚ի յահէ քումմէ կորեան գունդք զօրաց բանսարկուին . և ընդ յառնել սպատանւոյն, զուարձացան հաւատացեալք . քեզ երկր” :

՚ի յերկրի երկինք, և ՚ի յերկինսս մեզ անբարբառ բարեխօս, ով նր քառաթեւ . ՚ի յահաւոր և ՚ի հրացայտ փայլմանն կարապետ դոլով և նախադուշակ դալստեան որդւոյն այ . քեզ երկր” :

Յորժամ յարեւելից փայլեալ անձառ լուսառես զհաւատացեալսն, և դաստապարտես զազդն հրեից անհաւատից, ով նր քառաթեւ, և զիս լուսաւորեա զիսաւարեալս մեզօք, և դաստակարդեա ՚ի դաս մատենագրի յանձառ երկնից արքայութեդ . զի անդադար օրհնաբանիս, և քո են փառք յաւխեանս, ամէն,, :

Չորրորդ՝ քանզի վաեմն յափշտակիչ է և պակուցիչ, և ոչ ինչ պակուցանէ՝ եթէ չիցէ նոր, վասն որոյ միւս ևս հանդամանք են վաեմականին՝ լինել նորանշան և անակնկալ, որպէս զի յեղակարծ ընդուսու-

շանելով զի զմիտս և զերևակայութեն, իաբացէ յափըծակել և հիացուցանել: 'Նորութեն իմա ինձ ոչ զշան ճարաւորն և զբազմորհեստ, զի այդ արտաքոյ եւանեսահմանի վսեմականիս, և բազմաբանդակ բանիւք եղ կացուցանէ զեռանդն վսեմ խորհրդոց. այլ նորութեամ, զոր ազգէ ուժդին բերումն մասց: Տե՛ս զի որպէս նորօրինակ բացատրութեն նկարէ իմաստունն ըզպատկեր Ահարոնի, յորժամ եկաց նա ընդ մէջ մեռելոց և կենդանեաց՝ զիջուցանել զցատումն ան, 'ի կոտորել բարկութեն նորա զժողովուրդն. (Ժը. 21.) "Գութացեալ այրն անարատ, մատեաւ յառաջ 'ի կուիւ' իւրով պաշտաման զինուն, աղօթիւք և խնկօք ուղերձեալ զքաւութեն. Եկաց ընդդէմ բարկութեն, և արար վախճան հարուածոցն, յայտ արարեալ թէ քո ծառայ է: Յաղթեաց բազում ամբոխի, ոչ զօրութեն մարմնոյ, և ոչ զինուց ազգեցութեն, այլ բանիւ զատանջիւն հնազանդեաց: Զերգմունս և զցաշնուհարցն յիշատակեալ, զւեղջաշեղ դիականցն անկելոց առ միմեանս՝ կացեալ 'ի մէջ դադարեցոյց զբարկութեն. Եհերձ ճանապարհ ընդ մէջ կենդանեաց և մեռելոց: Վանզի պնդնաւոր հանդերձին էր ամենայն զարդն, և փառք հարցն 'ի չորեքկարգեան ականանքանդակեալս. և մեծութեն քո թագ 'ի գլուխ նորա: Յայնց խորշեցաւ սաստակիւն, և 'ի նոցունց զարհուցեաւ,, :

Տե՛ս զբազմօրինակ նորութես բացատրութեն. զազօթեն օրինակելով 'ի պատերազմ, զբուրվառն 'ի զէնս զկալն ահաւոր կերպարանաւ պաշտաման զցւասուցն 'ի մէջ դիականց և ապրելոց, զբարհուրել մահուն յերեսաց նորա. զի այս ամենայն նոր են և ոքանչելի, սեփական վսեմ մոտածութեց:

Հինդերորդ և վերջին հանդամանք վսեմութեան է համառօտութեն: Զի որովհետեւ հիացումն առնէ մասց վսեմն, այս բոնադատութեն բնութեն չկարէ յերկարել ժամն միցս, այլ 'ի սակաւ պարբերութես բովանդակի: Ապա թէ բուռն արասցես երկայնել զբանն, անդ վսեմութեն փոխի 'ի ցուրտ ճոռումութեն և 'ի փքոցուռոց բանս դիւրեղծականս, և իմաստք հաստատունք դառնան 'ի ճամարտակութեն:

Աստի իմանի, զի ներհականք վսեմականին թերու-

թեք՝ յերկուս վերածին, 'ի ցուրտ և 'ի ճամբարտակեալ: Ցուրտն անշքացուցանէ զվեմ իմաստն՝ խոտան արտայայտութեք, և տկար տղայական նկարագրօք. յորում յայտնի նշմարի աղքատութիւն մտաց գրուն: Իսկ ճամբարտակեալն գեր 'ի վերոյ առեալ տանի զստորին և զսովորական բանն ջանացեալ ամբառնալ 'ի վսեմութիւն: Յայս վրիպակ գթեն թերացեալքն յուղիղ տրամաբանութեք, որոց զանցեալ զՃՇրիտ տեսութեք վսեմականին՝ զարտուղին անդր քան զսահման բնականին և բանաւորականին:

Դ. Գաղափարս նմանութեք վսեմ իմաստից և բանից բազումն ունին գտանել աշակերտեալքն գրոց, այլ և մեք փոքր 'ի շատէ յիշատակեսցուք: Ածաշունչ գիրք յաճախութեք մատակարարեն զայնս, մանաւանդ գիրք մարդարէականք. քանզի 'ի տեսիլս ածայինս յափշտակեալ մարդարէիցն ածախօսք լինելով, իսկապէս զվեմասպանծն խորհէին և բարբառէին: Լոնգինոս հռետոր հեթանոս սքանչացեալ էր ընդ Մովսիսեան բացատրութիւն յասելն. “Ասաց ած, Եղիցի լոյս, և եղեւ լոյս” : Քանզի իմաստասիրական աչօք նկուտէր անդ այրն հեթանոս զմեծութիւն իմաստիցն: Առեւ այս. պարզութիւն անպահոյժ, քան զոր առաւել չմարթի իսկ: Եւեաի լոյս. վՃիռ սկատութիրանին: Եւեաւ լոյս. երագ կատարումն: Արդ 'ի նորութիւն իրացն ստեղծագործութեք հայեցեալ, և 'ի համառօտութիւն բանիցն, գեր 'ի վեր դնէր զայն քան զամենայն վսեմական ճառս: Ըստ այսմ օրինակի բազումն է տեսանել 'ի նը գիրս ահեղ և մեծ կերպարանս, զուգընթացութենքից նախակարգեալ պայմանացդ:

Տես՝ զիարդ վսեմ և ահաւոր նկարագիրք են 'ի սաղմոսս յայս (ԺԷ). “'Ի նեղութե իմում ես առ տէր կարդացի, և առ ած իմ աղաղակեցի. լուաւ ինձ 'ի տաճարէ սրբոյ իւրմէ ձայնի աղօթից իմոց, և աղաղակ իմ առաջի նորա մոցէ յականջս նորա: Խռովեցաւ և դողաց երկիր, և հիմունք լերանց սասանեցան և խռովեցան. զի բարկացաւ 'ի վերայ նոցա ած: Եւծուխ 'ի բարկութէ նորա, և հուր յերեսաց նորա բորբոքեցաւ, և փայլատակունք հատան 'ի նմանէ: Խոնարհեցոյց զերկինս, և էջ. և մէդ 'ի ներքոյ ոտից նորա: Եւ 'ի քրովբէս և թռեաւ, սլացաւ նա 'ի թես

Հողմոց . Եդ զիսաւտրն 'ի ծածկոյթ իւր , և շուրջ զնովաւ են յարկք իւր , և խաւարային ջուրք մինչև յամպս օդոց , :

Վսեմական ես է այս բան Ամբակումայ : “ Եկաց , և շարժեցաւ երկիր . հայեցաւ , և հալեցան աղքք . լեռինք խորտակեցան բոնութեր , և բլուրք յաւիտենականք հալեցան , : Տեսանես 'ի սոսին՝ զի բովանդակ այլաբանութեք են , և առ հասարակ մեծութեր բանից , միանգամայն և պարզութեր շարագրածոյ՝ ամենայնիւ դիւրիմաց : Զի թէ լնուին օրինակքդ աւելորդ պեր ճութեր , և ոչ մի երևէր 'ի նոսա աղդողագոյն իմաստ . զի յօրինուած այնպիսի տատանէ զմիտու ընթերցողին , և կթուցանէ զջառն :

Ահաւասիկ միւս այլնոր և վսեմ պատկեր նորագոյն օրինակաւ (Դաստիարակութեան 40.) “ Տէր , յելանելքո 'ի Սէիրայ և 'ի չուել քում յանդաստանացն Եդովմայ , երկիր շարժեցաւ , և երկինք իւռովեցան , և ամսլք ցողեցին ջուր , : Թէ 'ի սմին փոխանակ բառիցդ չուել և իւռու դնէր գուել զարհութել , չկարէր զնոյն իմաստս աղդել : Որպէս և դնելն յօշեցին չուր , փոխանակ անելոյ անձը նետին , ոչ ձեւ է , և ոչ յատուկ փոխակեր սլութեր , այլ բանք յափշտակեալ մտաց :

Ոչ նուազվսեմ է 'ի գիրս Յոբայ ստորագրութերի վարին . (ԼՂ. 21.) “ Որոտայ 'ի դաշտի , և դափր հատանէ . ելանէ 'ի դաշտ զօրութեր . 'ի պատահելնետից՝ արհամարհէ , և ոչ դարձցի յերկաթոյ : 'ի վերայ նորա շողան աղեղն և սուսեր , և շարժիւն վահանի և նիզակի . և բարկութեր ապականէ զերկիր : Եւ ոչ հաւատայ , մինչև փող հարկանիցի . և իբրև փող հարկանի , նավաշ վաշ կարդայ . 'ի հեռաստանէ առնու զհոտ սլատերազմի , վազս առնելով և փոնչելով , :

Ան է այսովէք վսեմ իմաստիւք և Շարականն մեր , մանաւանդ 'ի կանոնան յարութեր և ծննդեան և խաչի , և յաւագ օրհնութիւն , յորս տեսանի ահեղութեի իմաստից՝ զոյգ ընդ վսեմ բացատրութեր :

Յայսմ մասին սքանչելի է Հոմերոս . զի ոչ ոք 'ի դասակարդէ քերթողաց հաւասարէ նմին 'ի վսեմութեր իմաստից և միանգամայն 'ի սլարզութեր բանից : Նկարագիրք մարտամբոխ զօրաց , յորս առատսապէս սփռէ եւանդն հրացայտ , և յափշտակէ զոդիս , բազ

մագեմ օրինակո մատակարարեն ընթերցողաց 'ի վահ-
մապանծ դրուե : Որպէս այն՝ զի նկարագրէ զդդդիւն
դից 'ի պահու արոյական պատերազմին, (Գէշ. Ե.) իրը
թէ հայրն առառածոց և մարդկան որուսաց ահագինո 'ի
բարձանց, և 'ի ներքուստ Պոսիդոն շարժլէ զերկիր
լայնարձակ, և զբարձրաբերձ կառարս լերանց : Տա-
տանին համօրէն ստորոտք և դլուխիք բիւրականն իդայ,
քաղաքն տրոյացւոց և նաւք արայեցւոց : Զարհուրի
'ի խորոց երկրի սանդարակետն Պղուտոն, և ահա-
բեկ վաղեալ յաթոռոցն՝ գոչէ մեծաձայն, զի մի՛ տասա-
նութիւն սրատառեսցէ Պոսիդոն զերկիր 'ի վերայ, զի մի՛
յայսնեսցին 'ի տեսուե մահկանացուաց և անմահից՝
յարկք իւր խաւարչտին սոսկալիք, և դից անգամ ա-
հարկուք : Զոր այսպէս թարգմանէ քերթող ոմն :

" Ա. Ալ այն ինչ և դից անմահիցըն սկար
խառն ընդ մահացուաց իջին 'ի դուպար,
Աշխոյժք երկուսակք զարթեան արութել,
Ըրունդն և զայրոյթ, ճապաղիք արեան :
Վստուստ ՚ի ցատումն Աթենաս Պալլաս
Զիւրոց ելլագեանց բորբոքէր ըզդաս,
Եւ անդուստ Արէս ահեղաբարբառ,
՚ի խիտ մառախուղ և յամալրուպ խաւար,
Յեղիոնական սիրին 'ի բարձանց
Խրախոյս տայր անդուղ տեկրեան պատանեաց :
Այսպէս 'ի ճակատ արիւնոտ կրուռոցն,
Գըրդիո քաջալերք անմահից սկարուն
Զաքայեանց գընդին և զուեկրեանցն աշխոյժ
Վառեալ բորբոքէն յեռանդն սպաժոյժ :
Արուսաց ահեղ յԱղիւմսկեայ բարձանց
Անմահիցըն հայր և մահկանացուաց :
Եւ յանդընդախոր 'ի հիմանց անտի
Հարժեաց Պիսիդոն զերկիր վիթխարի,
Ըզբարձրածայրեալ լերանց ըսպառուած
Յիւր երկքժանւոցն դըրդուեալ 'ի հարուած :
Հարժլին խորածոր իդեան դաշտավայրք,
Դադաթունք բըլլոց Ճօճին երկնած այբք :
Պատնէշք աքայեան դըրդուին նաւակերտք,
Պարիսակք և սկատուարք տատանին և բերդք :
Սոսկացաւ Պղուտոն, և երկիւղալից

Աստուցեալ 'ի վեր յիւրոց դահոյից ,
 Դադարեաց , դուէ առ շարժմանն առիթ ,
 Ջըգել զերկրաշարժ քո զերեքժանիդ .
 Գուցէ պատառես արդ զերկիր համակ
 Եւ հաստակառոյցդ այդ բացեալ յատակ ,
 Անմահից պարուն և մահկանացուաց
 Դիտեսցն վերտւատ աչք 'ի ստորերկրաց ,
 'ի նրանմասառեր տեսիլ ահարկու
 Տարտարուական մըթապատ դահու .
 'ի ողխուր ոգւոց կայս մըշտագիշեր ,
 Եւ դիցն անմահից դու դըժոխըմբեր :: :

Եւ այս ցայս վայր շատ լիցի . թէպէտ և այլք մա-
 տեանս զամանէ գրեցին , այլ աւելին քան զասա-
 ցեալքս քերթողաց է անկ :

ԳԼ. Ճ.Դ.

Յաշակ Շնորհանիչ Խամ Ախուճակայ :

ԱՄԵՒՈՐ է համբակաց ունել զախորժակս կիրթ
 յընարութիւն դրաւորական վատակոց , որպէս զի տի-
 րաբար կարօղ լիցին որոշել զաւն յանարդէն 'ի յօ-
 րինուածս իւրեանց և այլոց : Հանձարն և ախորժակ
 զնովին իրօք յածին յամենայն արհեստա . առաջինն
 հնարէ , երկրորդն գատի : Յորժամ հանձարն զցործս
 արհեստին բազմապատկաբար 'ի հանդէս հանիցէ նմա-
 նել ջանալով դործոց բնութեան , խելամասցես թէ
 լաւ են այնոքիկ ' եթէ ախորժակք և ընտրութիւն այն-
 պէս դատեսցին , և տացեն վճիռ՝ թէ նման է բնութեէ :
 Արդ զայտմանէ առաջի կայ մեզ ասել . նախ՝ թէ
 զինչ իցեն ախորժակք . երկրորդ՝ թէ զինչ պահանջի-
 ցին առ այն . և երրարդ՝ թէ զինչ կանոնք իցեն նորա :

Ա. Ախորժակն զայն դործէ յարհեստա՝ զոր ինչ
 միտք 'ի դիտութիս : Երկոցուն նպատակք այլ և այլ
 են , այլ դործք նոցա ազգակից են միմեանց , և մին
 զմիւսն դիւրիմաց դործէ : Գիտութիւք դճշմարիսն հե-
 տազօտեն , արհեստք զբարին և զգեզցիկ . և սոքա ա-
 մենեքին , թէ մանր խնդրիցես , դլսաւորին 'ի մի կէտ

նպատակի . քանզի միտք քննեն թէ զինչ իւրաքանչիւր զիտութիւն իցեն՝ զատարար տեսեալ յինքեանս . իսկ ախորժակը համարեալ զայն ամենայն ՚ի մեզ , այն պէս քննեն զնոսա : Են ուսանք ՚ի մարդկանէ , որոց խեղաթիւր է մոտացն դատաստան . զի կարծելով տեսանել զնշմարտութիւն , տեսանեն և ոչ ինչ . դարձեալ են և մարդիկ , որոց խեղաթիւր է ախորժ ընտրութիւն . զի համարին թէ քաջ խարեն ընդ լուն և ընդ խոտան , սակայն ոչ ինչ խարեն : Ապա ուրեմն յայնժամ կատարեալ են միտք , երբ տեսանիցն զիրսն որպէս և են , և անսփառ ընտրեսցն ընդ համարիւն և ըստ սուտ , ընդ հաւանականն և ըստ ստուգագոյն : Ըստ նմին օրինակի և ախորժակն կատարեալ է , երբ խորագոյնս խեղամտեալ յիրսն՝ դիտացէ ընտրել ըստ կատարեալն և ընդ թերին , ընդ հոյակասն և ընդ հարթ , առանց ընդ իրեարս խառնակելոյ :

‘Սախակարդեալ զայս ամենայն , այժմ ՚ի վերայ բերցուք զահմանս իրացդ : Միտք է կարողութիւն որոշելոյ զնշմարիւն ՚ի ստոյ : Ախորժակն է կարողութիւն խարելոյ ընդ լուն և ընդ յուրին և ընդ միջական : Զոր ինչ և խմանայ հոգի , յինքն առարկանէ զնոտին . ընդ որս թէ հաճիցի , սիրով խանդաղատի . իսկ եթէ չհաճիցի , ՚ի բաց խուսափէ յայնցանէ : Զայս կարողութիւն ընտրութէ և ախորժակաց յամենայն մարդիկ տեսանեմք բնաւորեալ բատ իւրաքանչիւր ասափճանի . քանզի չիք հասարակաց ինչ առ մարդիկ քան հաճել ընդ բարեկարգն , ընդ համեմատն , ընդ մեծն , ընդ նորատեսիլն , ըստ գեղեցիկն : Է տեսանել ՚ի մանկունս անգամ ախորժակս իմն և հաճութիւն թերակատար՝ ՚ի յօժարամուել նոցա ընդ իրս բարեչափս , ՚ի սպանչանալ նոցա ընդ անդրիս և ընդ նկարս , ընդ նմանութիւս ասեմ բնութիւն : Նա և տիմար մարդիկ շինականիք վայրենաբնակը անհրահանդք զուարձացեալ խնդամտեն ընդ երդս և ընդ պատամութիւնս , և զարմանան ըստ գեղեցիկ տեսարանս բնութիւն . և հնարեն ազգս ազգս զարդուց ՚ի զգեստս և ՚ի սպասս , որչափ առաջնորդեն նոցա թերի և անփորձ ախորժակը և ընտրութիւն : Յայսմ ամենայնէ յայտնագոյնս իմաստասիրեմք թէ բնածին են ՚ի մարդումն ընտրութիւնն և ախորժական թերիութիւն ընդ հաճելին . թէպէտ և ըստ իւրաքան-

շիւր վիճակի և հրահանգուե առաւելու կամ նուազէ , ըստ զանազան կազմութե ներքին կարողութեցն , ըստ տարազու կենացն և սննդեան + որով յոմանս անդործ մնայ , և յոմանս գերազանցութե մարդեալ յառաջանայ :

Յայտնի եւ տեսանելք զսոյն՝ համեմատելով զբարգաւաճեալ ազինս ընդ վայրենաբարոյս , այլ և զմի և զնոյն ազդի գիտեաւորսն ընդ տգեաս : Դիր առաջի ազնուական ուսումնասիրին և ուսմիկ շինականին պատկերս երկու՝ զմին ճարտար և զերկրորդն անարտեստ . դիր և երկուս ճառս , զմին անհարժ և զմիւն հոյակապ : Անդէն ազնուականն ախորժեալ ընտրէ և առնու զբաջարուեստն և զհոյակապն . իսկ գեղջուկն միօրինակ ախորժէ կամ մերժէ զերկոսին , ոչ ինչ խաիր դնելով ընդ այնս :

Պատճառ խորութես յայտ է . զի կրթութին է և հանապազորդութին յառաջեցուցիչ այսոցիկ կարողութեց ներքնոց և արտաքնոց , որով սրագոյնք Են և ազդողագոյնք 'ի մարդիկ՝ ուրբ միշտ 'ի մարզս ունիցին զայնս . որպիսի Են ազնուականք և որք յերկար աշակերտին 'ի վարժս զանազան ուսմանց : Եւ զսոյն զօրհանապազ ուսուցանէ փորձն . որպէս յաճախին յունկնդրութե երաժշտական երգոյ՝ օր ըստ օրէ մարզէ զաելիս . զառաջինն անսպաճոյճ ձայնք քնարաց հաճոյ թուին , ապա մտադրութի և վարժութի առ ընտրելագոյնս ձգեն զկարողութի լսելեաց , մինչև քաղցրացուցանել նմա զբաջարուետո յարմարութիս նուադաց , և խորել ընդ այլայլութիս եղանակացն և ձայնից : Այսպէս իմա և զախորժակաց և զընտրութէ 'ի գրաւոր վաստակս , ըստ չափու առաւելլոյ հրահանգաց և մարդութե :

Բ . Հոդիս մեր յամենայնի խնդրէ գտանել զնը մարիսն և սիրել զբարին : Եւ զի ընական իմն համեմատութի է ընդ հոդի և ընդ ճշմարիսն և ը բարին , անհնար է նմա անջատել յայնցանէ . զի որոց և իցէ տեղեկութի իրաց ստուգագունից մատուցի առաջի հոդւցն , հարկաւորաբար հաւանի և ընդունի զայն : Կոյնապէս և յընտրութիս և յախորժակս հոդիս մեր առաջնորդէ մեղ , դոդցես և առանց իսկ գիտելոյ մերզի և չիք այլ ինչ դիւրագոյն , քան սիրել զայն՝ որ ինքնին սիրելին է :

Ապա ուրեմն ախորժական զօրութին որ 'ի մեզ՝ ոչ մոտացածին ինչ է, այլ ընդ մեզ ծնեալ, և իրրու առաջնորդ մեր, առ ՚ի բուռն հարկանել յայն՝ որ բաւն է, և ջանալ ՚ի վայելս նորին. զի երկուք այսորդիկ, ընտրելն և ախորժել, անանջատ են ՚ի միմեանց. և հաճութիւն մեր ընդ այնու այնչափ առաւել է, որչափ առաջի արկեալ իրբն՝ արհեստական կամ գրաւոր՝ ընտրելը իցեն և ճշգրիտք: Կարկասուն յաւելուածք գեղեցկութել, բռնական իմաստք և անհարազան նկարագիրք, քանզի չեն բնականք, առժամն և եթ պատրեն զաւ. սակայն իրրեւ համեմատէ զնոսին ախորժակն ընդ օրէնս և ընդ գաղղափարս բընութել, թէ որով օրինակաւ պարտ էր կազմել զայն, անդէն վազվաղակի անհետ մնին պատրանքն և ՚ի յայտ գան թերութիրն:

Թէ կանուխ ուրեմն ջան դնելին հետամուտք ազատական և գրաւոր արուեստից հասու լինել բնական ախորժակաց, և խելանուել ամենայն մասանց քաջ ընտրութել, մարզել զանձինս ՚ի քննութիւն և ՚ի համեմատութիւն, ստանային տիրաբար զանփոփոխ և զանվրէպ կանոն դատաստան առնելոյ ՚ի վերայ ամենայն գրաւոր վաստակոց: Քանզի որ այդու ամենայնիւ ձօխացեալ իցէ՝ քննէ և գոտանէ թէ ուր նմանի ընութել, ցոր վայր զնետ գնայ զկանոնաց արհեստին, և ուր խոտորի. ՚ի ըստ հանէ զպատճառս խոտորմանն և զհաւատարիմ նմանութեն, մեկնէ զյարմարութիւն և զտարադիպութիւն իմաստից և զբանից. ցուցանէ թէ յորում իցէ գեղեցկութիւն՝ որով զուարձանայ որ ՚ի մեզ խանգաղատականիս մասն. յորում թերութիւն իցէ, յորմէ խորշեալ հեռանայ հաճութիւն մարդկան: Ահա այս նպատակի է ախորժակաց և ընտրութել:

Ուպէս յակնարկել մատգիր քննութիւն ՚ի պատմագրութիւն վզիչէի, մշծապէս զուարձանամբ ընդ բարեյարդար կարդ պատմութեն, տեսանելով զամենայն մասունսն եցորդեալ ընդ միմեանս բնական և ճշմարիտ եղանակաւ, զհանգամանս խւրաքանչիւր ականաւոր մարդկան ՚ի նմա սեփական միոյ միոյ, զիմաստիցն զպերձութիւն և զհոյակապ շարագրածն, և ըստ ամենայն մասանցն յարդարուն: Յայսմ քննութիւն թէպէտ և ախորժակիք մեր և երեակայտուի և զարմացումն միանդամայն զուարձանան, և վասն նման դոլոյ բնականին՝

Համարին զմատենագիրն մի ՚ի քաջաց , այլ տիրապէս միայ են անդ կառավար , և առաջորդն այլոց կարողութեց՝ տեսանել ՚ի նմա զաւն . և սովոր կատարի գործ ախորժակին :

Այս կրկին գործողութեց , այսինքն մատգիր ընթերցանութիւն քաջ մատենագրաց , և համեմատութիւն որինաց ընտրութեն ընդ գրաւոր վաստակս , հասուցանեն մինչ ՚ի կատար ամբարձման զախորժակս , ուր է լրումն ընութեն և արհեստի :

Չհանդամանս կատարեալ և կիրթ ախորժակաց մարթ է վերածել յերկուս . յարթնութիւն և յուղութիւն : Արթնութիւն խնդրէ յիրան քննելիս զգերակատար նմանութիւն բնականին , յորոյ վերայ հիմնի ընտրութիւն . զոր և քննել ներքին նրբազնին զգայութեց՝ վասն իմանալոյ զամենայն , և ՚ի խորս անդր բնութեան թափ անցեալ , ՚ի վեր հանել և զմանրամասն թերուիս պատկանաւոր համեմատութեն : Ուղղութիւն կատարեալ ախորժակաց է այն կատարելուն՝ զոր ՚ի մատց ընդունի , մօտ դնելով առ ամենայն իրս զպատճառս և զօրէնս ճշգրտութեց . որով ոչ ընդիմառնէ զներ հականս ընդ իրեարս , այլ զիւրագանցիւրսն զատարար զուգակշռեալ համեմատէ բառ չափու նմանակցութեն իւրեանց , հայեցեալ յառաւելուի միոյն քան զմիւսն յիւրում ազդի : Չանազանութիւն երկուց հանդամանաց յայն բովանդակի , զի արթնութիւն գործ է ներքին զգայութեց , խոկ ուղղութիւն բանի և դատողութեն . առաջինն սկարդէ է ընութեն , երկրորդն և արհեստի :

Բաց ՚ի կանոնաց արհեստին զոր ուղղութիւն աւանդէ պահանջի դարձեալ անդստին ՚ի բնել ունել զյարմարութիւն ընտրելոյ կիսանդաղատելին և զգորովելին . զտենչ և զախորժակս ՚ի գեղեցիկն՝ առ որ յօժարամտէ սիրտ , և ՚ի նոյն յարի իբրև ՚ի սիրելի և ՚ի պատուական :

Գ. • **Տեսցուք** արդ զկանոնս ընտրութեն ախորժակաց : Որպէս ասացաք , ախորժակն հիմնեալ է ՚ի ներքին համառնութիւն մատց ընդ լաւն . և այդ կարողութիւն

բնական է ամենայն մարդկան, և նովին առաջնորդին ըստ օժանդակելոյ բանին : Ապա ուրեմն կանոն ընտրութ ախորժակին այն է, յորում բանն և զգացութիւնք համեմատ դտանիցեն զգրաւոր հաճելին՝ ընդ բնական նախագիծ օրինակին և ընդ կանոնս արհեստին : Ուր միաձայն դտանիցին այս ամենայն, անդ կամարեալ են ախորժակիք, և ընարութիւն օրինաւոր :

Օոր աստեն ասացաք՝ նոյն է որ աւանդեցաւն ցայս վայր ՚ի կարգի գրոց, մանաւանդ զոր ուսուցաքն յաղագս շարակարգութեան և յաղագս ոճոյ և վանմի : Այս է . յամենայն լաւ և յընտիր յօրինուածս դրաւորս պահանջի գեղեցիկ բացայացաւի, որ ափրաբար և անմռայլ խմացուացէ զիրսն, և զոր գրողն և ընթերցօվն միապէս ՚ի միտ առնուցուն :

Երկրորդ՝ նիւթ բանին լիցի մի և եթ, և ոչ բազմախուռն կամ բազմամասն . ապա թէ ոչ, խմանի ընաւ և ոչ ինչ : Զի և աին զերք որչափ բազմամասն աեսանին, սակայն այն ամենայն ՚ի մի կետ նպատակի ընթեթես հաւաքեալ, յայտնապէս քարոզեն զարարչական խմասութիւն :

Երրորդ՝ զի ուժգին և զօրաւոր ունիցի զկերպարանս բանիցն . որով ամոքեալ զմիտս, ՚ի հարկէ զօրանայ խոնարհել և զկամս . նմանեալ ահեղակերպ երեման հաստատութեան երկնից, որ որչափ ահաւոր է և նշուլազարդ, նոյնչափ և զմայլեցուցիչ մտաց զննողին :

Չորրորդ՝ զի քաղցրաձայն և ներդաշնակեալ լիցի յօրինուածն, առ ՚ի ձգել միանդամայն զաելիս և զերեակայութիւն և զզարմացումն . որոց գհետ զնան ամենայն զդայութիւք բնութեանս ներքինք և արտաքինք :

Հինգերորդ՝ զի խմաստ բանին բովանդակ օգտակար լինիցի գրողին և լսողին . քանզի յայնժամ գրողն ազդողագոյնս վառէ զխանդ մասացն, յայնժամ և արդիւնք գրութեն օգտակարագոյն դտանին, բովանդակ ՚ի գուրս բերելով զզօրուի բանիցն . յորմէ և ընթերցողն կամ լսող զզուգաչափն անձին ձգէ օգուտ :

Վեցերորդ և զլուխ ամենայնի՝ զի ոճ մաածութեն և գրութե յամենայնի ազնուական իցէ, յարդարուն և յղեւալ . յոր բովանդակին անստերիւր խորհուրդը :

և անստգիւտ քաջութեն արհեստին, առ ՚ի վարակել զունկնդիրն որով իւիք և կամիցի :

Այսափ է զօրութիւ ախորդժակաց, և այսորիկ են պայմանիք ընտրութեն, որովք ամենայն զգայութիւնն ներդինք և արտաքինք առ հասարակ զինոյնն, և համօքն բնութեն ամենայն մասամբքն՝ բնականօքն ասեմ և բանականօքն՝ զուարձանայ ՚ի վայելս ընտրութեն : Զի թէ կատարեսցին այդ ամենայն պայմանիք, միուր հաւանին ընդ իր՝ զորմէ բանն է, կամբն շարժին և յօժարին ՚ի գործ, յիշողականն ոչ ևս մոռանայ զայն, երեակայութիւն նովին արծարծանի, և զարմացութիւնն առաւելու : Այսպէս և արտաքին զգայութելք ըստ իւրաքանչիւր պատկանեալ սա հմանին զուարձանան :

՚ի վերայ այսոցիկ՝ որպէս զի ոք ինքնին առանձինն զուգաձայն գտցի բազմութեն յրնտրել իւրում, զայս կալցի կանոն : Ուր միաբան գտցէ զհաւանութիւ ներքին կարողութեց իւրոց, զգատասատան բանին, համանգամոյն և զձայնակցութիւ բազմութեն մարդկան, այն միաբանութիւ ձայն է բնութեն, ուստի և ախորժակ ուղիղ . քանզի և մարդ ինքնին ՚ի վորքը աշխարհ օրինակեցաւ, յոր բովանդակի բնութիւն ըստ ամենայն արարածական կարողութեցն : Բազմութիւ մարդ կան և հասարակաց հաւանութիւ իմանամբք զհամախոհ կարծիս աղքաց ծաղկելոց գիտութեք . որք կարող իցեն յամենայնի ընտրութիւ առնել անստգիւտ : Ազա կնիք բանիս՝ Ախորժակն և Ծնարութիւնն առ հասարակ յամենայն մարդիկ հիմնեալ են ՚ի վերայ ներդին կարողութեցն, ըստ չափու կատարելութեն նոցա իւրաքանչիւր :

Յայսվայր զձեւոց և զզարդուց հարտասանութեն մանրամանաբար ասացեալ, անցուք այժմ ՚ի բուն իսկ հրաշակերտա նորին, ՚ի յօրինուածն ասեմ աղքի աղքի ձառիցն ողջոյն :

ՄԱՍԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏՐԱՄԱՆՐՈՒԹԻՒՆ *

ԵՌԱԾՅԻՑԻՆ ԲՆՔՆԵՆ ուսուցանէ, զի յամի մշտարելի է կարդ և արամարանուի: Զի և առ ՚ի կատարեալ կազմուի կենդանւոյ՝ ոչ միայն պահանջի ամսվթար զուգաչափուի ընդ իրեարս ամ մասանցն, այլ զի և մասունքն համօրէն յիւրեանց տեղւոցն բաջադէպ պատկանեացին: Զի ըստ կուինսիլիանոսի՝ (է . ։ Հ Հ) Ոչ ՚ի խռնել ամենայն անդամոցն կազմի անդրի, այլ ՚ի պատշաճաւոր զետեղելն: Եւ Եթէ զմանն մի փոխեցես ՚ի մարմնոյ մերմէ կամ այլոց կենդանեաց, և այլուր յարմարեսցես, թէպէտ և զնոյն զամենայն ունիցի, սակայն հրէշ իմն է. և յօդքն թէ և դոյզն ինչ շարժեացին, վերծանան ՚ի գործոյն՝ զոր կատարէին,, : Լաւագոյն է յօրինել ատենախօսուի ոչ այնչափ ճոխացեալ պահումանոք և առացուցիւք, որչափ որ ը կարդի յերիւրեալիցէ, որտամադրեալ ՚ի կարդ բանին, և պատշաճ դասաւորեալ ՚ի փաստան. զի ոչ ինչ օգակ յաճախարանն, կուտակեալ աւելորդ երկարութեամբ բանից :

Տրամադրութիւն Հարցուասանական է բարեկարգութիւննեւ, ու ՚ի բարեկարգութիւննեւ զանդիրից և բարեկարգութիւննեւ զանդիրութիւննեւ դադին: Կամ ըստ կիկերոնի, գործոց իշաց իշրջաւ դադութիւննեւ: Գործ է սորա ՚ի բազմատունկ անտառախիստ յաճախուեց զկարեւորան ընտրել առնուլ. յառաւելութէ բանից զանդիրասանն ՚ի բաց յապաւել. զամենայն զգտեալսն ճշգիւր քըն-

* Ց. · Διάθησις. լ. · Dispositio.

նեալ քաղել զծաղկաբերսն զհաստատունսն զբոնաւ-
գաստիչն :

Արկին է տրամադրութի Տարտասանական ։ առա-
ջինն ընական ։ յօրինեալ ըստ ընդհանուր կանոնաց
արհեստին ։ երկրորդն կամաւոր ։ յօրինեալ ըստ մաս-
նական պայմանաց գատին ։ Քանզի բազում այն է ։
ուր ըստ օրինաց արհեստին կազմէ առենաբանն զկարգ
հառին՝ անփոփոխ ունելով զառ ՚ի բնութենէ և զառ
՚ի հոեւտորաց սահմանեալ զկարգն ։ որպէս թէ ա-
ռեալ ուրուք ատենաբանել Հարկառորաբար սկիզբն
առնէ նախաշաւիզ բանիւք պատրաստել զսիրսո ուն-
կընդրաց իւրոց ։ ապա բերել ՚ի մէջ զնիւթն առաջա-
գիր ։ և յայտնի ցուցանել զոր ինչ ընդ նմին կից կայ-
ցէ ։ կամ անդատին ՚ի բնութենէ ։ և կամ իբր յաւե-
լուած ։ յետ այնորիկ ՚ի վերայ բերել զհաւաստին ՚ի
հաստատութիւն բանից իւրոց ։ և զհակառակորդացն
հերքել ։ և ապա դիմուորել զհառն վերջաբանիւ ։
Այս բնուկան և ըստ արհեստին է ։ Խոկ կամաւոր ։
յորում ատենաբանին հայեցեալ զցօնութը ՚ի հանգա-
մանս գատին ։ յերիւրէ զարամագրութն ըստ պահան-
ջերոյ իրաց և աեզւոյ և ոստիացն ։ և ըստ տանելոյ լը-
սելեացն և դատաւորաց ։ ՚ի ամին ատենաբանն ոչ ինչ
կազի ՚ի կանոնա կարգաւորութեն ։ այլ ըստ իւրաքան-
չիւր պատշաճաւոր տարազու շրջէ զկարգ մասանցն ։
յապաւէ կամ յետ և յառաջ կարգէ զմաստնան ։ Հե-
ռանայ յընդհանուր կանոնաց բնութեն և արհեստին ։
զի գիւրաւ ընդ կարճոյ հանապարհ ՚ի նալատակն մեր-
ձենայցէ ։

Տեսեր ՚ի կարգիս զի յօրինուած Տարտասանութեն
Հշցրատ նմանութին է դործոց բնուել ։ կազմեալ սկրզ
բամբ ։ բովանդակիչ բազկացութը մարմնոյ ։ և հետե-
որդ կատարածով ։ Զի որ ոք ձեռն ՚ի դործ ինչ ար-
կանէ ։ ՚ի հարկէ սկիզբն դնէ նմին ։ ընդ մէջն նորս ան-
ցանէ ։ և ՚ի կատարածն ՚ի գլուխ ելանէ ։ Վապա սոցին
զհեւ գայ աւել թէ հինդ են մասունք բարեկարգեալ
հառի ։ նախ յառաջաբան ։ երկրորդ առաջարկուի ։
հանդերձ բացատրութեամբն և բաժանմանմբ ։ երրորդ ՝
հաստատուի ։ ընդ որով իմա և զհերբութն ։ շրբորդ
շարժութի կրից ։ հինդերորդ վերջաբան ։ թէպէտ և
ոմանք աւելի կամ պակաս թուեն զմաստնս Տառի ։
այլ ամին ՚ի սոսին աւարտի ։

ԳԼ. Ա.

Յ-Ղ-Ա-Դ-Հ-Ա-Բ-Ա-Ն-Ի :

ՅԱՌԱՋԱԲԱՆ (*) է մասն Տառին՝ որով ա-
տենախօսն յարդարէ և պատրաստէ զոդիս լողաց
յունկնդրութիւնիկայ Տառին : Սահմանի ՚ի կի-
կերտնէ . « Բան՝ ու շաբարապէս պատրաստէ զիրդ ունիշն-
տին ՚ի լու զինացած բանիցն » : Սա չէ հնարագիտունի
արհեստի կամ սեթեւթ ճարտասանական , այլ հարա-
զատ ազգեցութ մտաց՝ հիմնեալ ՚ի բնութ , և թելադ-
րեալ ՚ի հասարակաց զուգաձայնութ : Քանզի մասու-
ցեալ ուրուք առ ոմն՝ խորհուրդ հարցանել ՚ի նմաննէ
կամ իրատ տալ նմա , կամ կշտամբել , ու միջամտիս
ընի ՚ի նոյն անոնք և տմարդի , այլ ՚ի բացուստ առ-
նու զգլուխ բանին , սկիզբն առնէ յամոքարար խօսից՝
որը յօժարեցուցանեն զլողն ընդունել յօգուտ որ
զինչ և իցէ : Այս նովատակ է յառաջաբանութեան՝
ցուցանել զհետեւորդ բանն . վասն զի բազում այն է ,
որ ՚ի քաջարուեստ յօրինուածոյ յառաջաբանին բիւնն
բովանդակ Տառին յաջողուածք : Զի որովհետեւ յայն-
ժամ պարապորդ է ունկնդիրն և ցանկացող լսելոյ ,
տպաւորագոյն ընդմուանեն ՚ի սիրտ նորա բանիքն . մա-
նաւանդ՝ Եթէ ընտրականք իցեն աղնուականք և
քաջունք : Յորժամ յատեան ելանէ ատենաբանն
առաջի բազմահոյլ ունկնդրաց , անդէն զդենու զկեր-
սլարանս պատգամաւորի ճշմարտութեան՝ խօսել առ-
լսողս զօդտակարն և զպիտանին : Արդ տեսցուք՝ որով
բանիւ , և որպիսի օրինակաւ սկիզբն արասցէ հրապա-
րակախօս ընել :

* ՅԱ. · Προσιμίον . πρῶχνος . լու . Praefatio , prae-
quiūm , exordium .

ՊՐԵՎԻ • Ա.

Յաշտի աշդի աշդի յառաջարանունը :

ՏԵՍԱՆԵՄՔ 'ի մեզ բնական եղանակ խօսելոյ՝
ուրեք հանդարտ, և ուրեք եռանդուն. նոյնպէս և յա-
սաջարանուն կրկին ազդք են. Օքինաւոր և Ըստակո-
ղական : Առաջինն է՝ որ մեզմով և հանդարտ ընթա-
ցիւք պատրաստէ զաելիս յունկնդրուի գատին : Երկ-
րորդն է՝ որ յանկարծուստիմն և բուռն յափշտակութ
մինի բանն՝ սաստկութք ձեռոց և եռանդեամբ կրից :
Յայտ է՝ 'ի բաժանմանէս՝ զի ուր բուռն կիրք գրգռեն
զիսոսողն՝ շտապաւ սկսանի, և ուր չգուցեն այն կիրք,
այլ ամենայնն խաղաղ իցէ, սկսանի հանդարտ բանիւք
և օրինաւորաւ :

Յորժամ օրինաւոր յառաջարանութք հանդերձի
առենարանն սկիզբն առնել, է զի ամ ունկնդրաց ար-
դէն յայտնի է բանն՝ յոր բուռն հարկանէ, և կամ
յարակից գործողութիք զնոյն յայտ առնեն . կամ
դարձեալ՝ ոչ ևս համբերեն երկայն նախաշաւիղ բա-
նից, այլ փութան լսել զբանն . յայսպիսիս գրեթէ
բնաւ չափտի յառաջարանութիւն ։ Այսպէս է յառա-
ջարան առենախօսութիւնն մեծին վարդանայ : Է ու-
րեք դարձեալ, զի գիտէ առենախօսն թէ դժուարուի
տուաջի կայ նմա համոզելոյ զունկնդիրս՝ որք 'ի միաս
կասկածոտս իցեն, անդ պարտ է 'ի ձեռն առնուլ
զրազմակերպ բանս և զքաջարուեստ դարձուածու
առ 'ի գազոռուկ խթէլ զոգիս ունկնդրաց, և յիւր
կոզմն ձգել զնոսա : Ա՛ս որոյ կիրերոն յերկուս բաժանէ
զօրինաւոր յառաջարանն . 'ի Ակզինաւորական և 'ի
Մտահաճոյ : Յերիս տեղիս, առէ նա ինքն կեկերոն,
չէ պարտ վարել զսկզբնաւորականն . նախ՝ եթէ խո-
տան և ընդվայր իցէ գատն . Երկրորդ՝ ուր ունկնդիրն
համոզեալ տեսանի յընդգիմակն, և Երրորդ՝ յորժամ
թէ վաստակաբեկ իցեն բանիւքն՝ զորս յառաջն լուան :

Արդ համարեալ թէ իրն՝ զոր առենարանն պաշտ-
անէ՝ իցէ ինքնին մերժելի, ըստ իւրաքանչիւր հնա-
րից պարտ է առաջաստել զայն, և յերկարաձիդ կախ-
մամբ ձդձգել զբանն, մինչեւ 'ի միտ առցեն ունկնդիրք՝

թէ կամիս նոր իմն առենաբանել նոցա : Եւ խոտոր նակի պարտ է ոգորել ընդ հակառակորդին , զոր չկարիցես ուղղակի հարկանել . այնր ազագաւ իրը թէ ցասումն ցուցես յանձին քում , որպէս թէ չկամիցիս պաշտպանել այնպիսում անհաստատ խնդրոյ . սակայն մեղմով և ըրջորերութբ բանից ազգեսցիս զիրսն 'ի միտս ունկնդրաց , մինչև ցուցանել թէ չէ այնպէս , որպէս յառաջն թուեցաւ նոցա : Ըստ այսմ օրինակի կամեցեալ կիկերոնի ջատագովել իդարեայ , որոյ ձեռն ամբողման էր ընդդէմ կեսարու , նախ ՚ի յառաջաբանին պարագաւոր դատի զնա՝ իրը չկամելով պաշտպանել նմա , այլ ներումն խնդրէ ՚ի կեսարէ վասն նորա : Սովոր սկիզբն եղեալ բանին՝ մասչի ապա ՚ի կանուխ դիտեալ նպատակն , թէ սուտ են յանցանքն զրեալ ՚ի մեղս 1 իդարիոսի :

Դարձեալ գժուարին է պաշտպանել դատին , յորժամշակութ և դատաւորք կանխակալ մուահաճութբ իցեն ՚ի հակառակ կարծիս . և պարտ է յայնժամ տաենախօսին մուահաճոյիւն քակուել զիսստութի խորհըդոց նոցա : Յայտ է՝ զի ամենայն ցանդապատուիք մուաց նոցա շուրջ պաշտպան ևն յիսկութենէ անտի դատին , երկրորդ՝ վասն առանձնական ինչ պատճառաց առենախօսին , և երրորդ՝ հակամիանով ՚ի հակառակորդն : Եթէ գժուարին իցէ նոցա հաւանութի ընծայել դատին , մարթ է նմա՝ առել , զի թէպէտ բազում ինչ անհաւատարիմ թուի , սակայն անաչտաքնութիւն ազգակիցս Նշմարտութե գտանէ զնոսա : Սովոր յառաջ հապայ հնարագիառութեամբ իւլով :

Եթէ գժկամակիցեն ունկնդիլք ընդ առենախօսն սակս անշքութե հայրենեաց նորա կամ անտոհմութեանն կամ անփորձ տիտոցն խակութէ , պարտ է նմա մուահաճոյիւն սրբել ՚ի մուաց նոցա զամենայն արատ և զիարծիս , և ցուցանել նոցա թէ միայն վասն Շըմարտութե կայ նմա խօսել , և ՚ի պարտուց բռնադատութենէ :

Եթէ ՚ի հակառակորդն միտեն ունկնդիլք վասն պերճախօսութենն և կամ զի երևելի է և մեծանուն , զգերճութի բանից նորա պարտ է կեղակարծ ցուցանել և խորտակել , տակլով իմն՝ զի եթէ մեծասպաս հանգերձանք , աղաղակաւ և պերճախօսութի օրէն իցէ յաղթել ՚ի դատաստանի , ևս ոչ ձգէի ձեռն

ի զրոյց, և ոչ յայս բեմի արձանանայի. այլ յաջուղեաց ինձ ատենաբանել առ գատաւորս անաւառս, որք ոչ 'ի հռուտութիւնից' այլ 'ի հշմարտութիւն ակնկառոյցք են և 'ի վաստա անապատելիս։ Ըստ այսմ Եթէ մեծարոյ իցէ, հարկ է ակնածութիւնը սկիզբն առնել. որպէս թէ ոչ միայն պարուք են ինձ, այլ և օրէնք դժութէ՝ ձեռն առլ բարեկամի ընդդէմ առն հզօրի և մեծարելոյ յատենիս, որ արդ խեկ ատենախօսեաց. մեծարեալ ոչ անուամբ միայն և վառաք, այլ և արդեամիք և զիտութ և պերճախօսութը։ Սակայն յաջողեաց ինձ բարեբաղդուի՝ լինել ընդ դատաստանաւ անկաշառ դատաւորաց, որոց ոչ խտադին աչք 'ի շքու աւագութ. որք ոչ ակն առնուն երեսաց, և ոչ վասն ուժգնութէ բանից խօսորին յիրաւանց և 'ի հշմարտութենէ։

Այս ուրիշ դարձեալ՝ զի անհնար է կամ տարադէալ ատենախօսին ծանուցանել համարձակ՝ որ ինչ աղդելն խնդրէ 'ի դատաւորա և յունկնդիրս։ Զոր օրինակ Եթէ որդի առ 'ի պաշտպանել զդատ խըր՝ բռնադատի ամբաստան լինել զհօրէ խւրմէ, և ոչ իշխէ վասն արդարացի մեծարանաց առ հայրն, կամ բարեկամն զբարեկամէն, և կամ ակարն զհզօրէ, պարս է յայնժամ հարտարութիւնը և դարձեածովք բանից դիւրել դատաւորին, զի գուշակեացէ զայն՝ զոր ասելն կամի, և ոչ համարձակի. ընդդիմութ և տարստամութիւնը խօսից՝ կեզծեաք իմն սպրդեցուցանել 'ի բերանոյ զհշմարիտն, զոր իբր թէ չկամելով ասել, և առ հարկի աւելով։ Ըստ այսմ կամեցիալ կիկերոնի խօսել յաղագս անդատանական օրինաց՝ որում յանկայր ժողովուրդն, և աւսեալ թէ խոչ մեծ առաջի կոյ նման ընդդէմ օրինացն ողորել, սկիզբն առնէ շնորհակալութ առ հռովմայեցիս՝ որք 'ի բդեշխուութիւն ամբարձին զնտ. յօժաբամբա գաւանէ զանձն լինել 'ի ժողովրդականաց կարգի, ցուցեալ և զհարազատ խմաստ այնոր ըղձանաց, մինչև մեզմով ձեռն արկանէ ցուցանել թէ այն օրէնք կըթին 'ի ծանր առուգանս պետութէն։

Այսափ ինչ վասն դժուարութէց որք ընդ առաջ լինին 'ի յառաջարանութիւն, զայլն ամ զդօնութիւնը և սատարութիւն նախակարգելոցս ունիս 'ի դլուխ հանել, առեալ զնոխութիւն բանիցն յազբերաց՝ զորս մնայ արդ առաջի առնել։

Յառաջանութեալ այնշատ են , որըաք
հնարս և օրինակս ազգել կարէ եռանդն բնութե : Ա
մենայն ձեւք և կերպարանք իմաստից նախակարգեալք,
ունին տալ նիւթ յառաջանութե յօրինաւորն և
'ի շտապողականն . սակայն ըստ օրինի հռետորաց ցուց-
ցուք զկարեւորսն օրինակօք , յօժանդակութի համբա-
կաց :

"Նախ հնար է առնուլ նիւթ յառաջարանի , բերելով
'ի մէջ զպարագայս իրացն՝ զորոց առաջի կայ խօսել ,
զունկնդիրս՝ որք միտ գնեն , զոստիս՝ ընդդէմ որոց ե-
լանէ 'ի ճակատամարտ , զժամանակն , զտեղին , զյօ-
ժարութիւնս դատաւորաց և ժողովրդեան . որք քաջ
մասիսութիւն զեղուն իմաստս 'ի նիւթ յառաջարա-
նի : Ըստ այսմ Յովհանն իմաստասէր կանխարանէ առ-
ժողովականս , պատճառս առեալ զհամախմբութիւն
իւրեանց՝ փուլթալ 'ի կանոնագրուի կարեւորացն . առէ *

"Արդ որովհեան 'ի միասին հրաւիրեալ գումարեաց
զմեզ ածային տեսչութեն հրաման , որք միանդամ
հաղորդք եւք միմեանց առ ած խոստովանութիւն և նա-
խադահութիւն , այլ և սիրով առ իրեարս եռացեալք ,
ոչ ինչ արդելու զառաջի արկեալս 'ի դլուխ բերել
մեզ հոգեւորական ջան : Քանզի և զայս 'ի մէնջ պա-
հանջէ 'որ հաւատացն 'ի մեզ զվերակացութեն այսո-
վիկ շնորհ . շուրջ գալով միշտ տեսանել հոգաբարձու-
թիւ զհօտ քնի , զոր պատուական արեամբն իւրուլ
փրկեալս ազատեաց , և յամ հարուածոց բանապ-
կունի բժշկեալ առողջս և անարատս ինքեան յօրինեաց
մարմին , զբուղքեցուն զանուանս գրելով 'ի գայրութեն
կենաց . զի մի գուցէ որ առ մահն զմեզ ածէ 'ի վերայ
եկեալ ծուլութեն քուն , յավշասակել համարձակու-
թի տայ զհօտս հանդերձ հովուանն աներեւոյթն գա-
զանի , որ յամ ժամ շուրջ գայ և խնդրէ կլանել զորս
եթուքն , և դտանիցիմք եղեալ պարտականք արեան
անձանց և յանձնեցելոցս .. :

Երկրորդ՝ սկիզբն առնել իմաստուն բանիսք կամ

առակաւ, և զայն որպես հիմն արկեալ շինուածոյ բանիցն՝ յառաջ խաղալ յընդարձակութիւն իմաստիցն։ որ եթէ շահմարանեալ իցէ լիութիւն խորհրդոց և ըստ օրինի ընդլայնեացի, կազմի յառաջաբան իմաստալից։ Այսպէս յառաջաբանէ Գրիգոր կաթողիկոս, մականուանեալն Տղայ, 'ի թուղթն առ Տուեկորդին։ 'Արդոյ և պատուական յամ մասունս բարեաց, որ ըստ ածային նախարինամող մասակարարութիւն բաշխեցաւ 'ի բոլոր սեռ իմանալի և զգալի ընութեց, առաջին և նախամեծալին յընտրելեացն վերագոյն և գերաշխարհիկ, և ողայծառագունացն գլխաւոր տեսանի խրատ։ Սա որ անկելոյն ընդ ինքեամբ ախորժակաց մակացու և բարձրացնակ գահերիցութիւն ընդ անհամեմասն յաստիճանեալ դասուն, և զօրութիւն յառաջ խաղալով պաշտի յառանձնականան, ձկոտի և 'ի նիւթեղէնսն ուստի առին զարգանալ բազմաստեղն հանճարոյն աեսակը 'ի բանական և 'ի գործնական արհեստա զընդհանուրա շարժելով, ոչ միայն զկելոյն պահարանն՝ այլ և առ գիտութիւն էլիցն, և անհուն հմտութեց հասուգութեալը,։

Երրորդ՝ 'ի պատմական և 'ի կեղծեթլ յարացուցէ։ կամ նմանութիւն օրինակելով, որ զնոյն ունի զօրութիւն Յովհանն իմաստասէր 'ի պատմական օրինակէ կանխաբանէ 'ի վակմ ատենաբանութիւն իւրում։ 'Համբերողացն նախարիպ մեծն Յովի ասէր Երբեմն յիւրում բանսն, նեղեալ 'ի փորձանացն արկածից։ Ո՞վ առնէր զիս ըստ աւուրցն առաջնոց։ միանդամայն 'ի բաց եղեալ զբաջողութիւն, զընչաւետութիւն և զբաղմորդութիւն։ Զնոյն և ես հանդերձ հառաջմամբ բարբառիմ, 'ի գիտուածոց աստի վտանգեալ, ովլ զիս անցելոյն առաջի գնէր ամանակաց, վերատին զմանկական տիոցն զգեցուցանելով զհասակ։ Այսպէս հիսողի աայ եալիսկոպոսի 'ի յարութիւն Ղազարու յառաջարանելով ասէ։ 'Զորօրինակ մայր որդեսէր տուեալ զտափնսն ցմանուկն, խնդալով մանկանն և ձգելով զկակուղ կերակուրն։ Խակ յորժամ ոլորտնք կաթինն պանրացեալ, ինուցու զցնցուղ ստեանն, յայնժամ մանուկն ըսյ, և մայրն վշտանայ, զյօժարութիւն կերակրոյ տարածեալ ունելով, բայց զկերակուրն ոչ 'ի ձեռն տուեալ տեսանելով։ 'Նոյնպէս և մեք յերկրէ յառաջագոյն զստինս մտացն ընդ ձեօք եղեալ իւըն-

դասցուք, ձեր ձգելով զկալն բանին . իսկ յորժամ մոռացմամբ՝ ի ներքս ընթացեալ մասաց մերոց՝ զբանն կտրեաց, յայնժամ և դուք բարկանայք իրքեւ զրկեալք յաւետարանական մասաց ուամսնց, և մեք իսկ վշտանակը՝ զյօժարութիւն ասելոյն տարածեալ ունելով, բայց զմիստ արգելեալ 'ի մոռացմանէ տեսանելով։ Այլ թերեւս այս պատահեաց՝ զի ծանիցուք եթէ ոչ ընթացողին, և ոչ ըստ այնմ՝ որ զժետ ընթանայ, այլ ըստ այս ոզորմելոյն։ Իսկ եկայք այսուհետեւ, զի ած տացէ բան լսողացդ . ոչ եթէ վասն արժանաւորութեն տաղացս, այլ վասն լսողացդ պիտոյ զնա աղաւեսցուք . և առ այժմու ընթերցելոցս ըստ կարի մերում լրմակելք վարդապետութեն ազբեր առեալ ըմբիցեմք . . .

Չորրորդ՝ յանձնեն սկիզբն տալով բանին, զանբաւականութիւր կամ զկրտակերութիւն յառաջ բերելով, և որ այլ ևս նմանաձև նահանջմունք։ Այսպէս առնէ կիերոն յատենաբանութեն Արքիայ քերթողի . . Եթէ դուցէ յիս մասաց զգոնուի, ով դատաւորք, զորոյ զնուազութիւն ես ինձէն գիտեմ, կամ թէ զօրութիւ բանից յոր ոչ ժխտեմ թէ հրահանդեցայ փոքր 'ի շատէ . և կամ եթէ յառաջադիմութես շահ կթեցի յընթերցմանէ և 'ի հրահանդաց գրոց, յորմէ պարծանօք ասեմ' թէ ընդ բուլանդակ կեանս իմ ոչ յետս կտսեցի բնաւ . զայր ամի զարդասիս, որպէս ինչ և իցեն, նախ դա ինքն Աւլոս Լիկինիոս Արքիաս մինէն պահանջէ անազարակլ իրաւամբք։ Զի ցոր վայր ընդ հեռաւորս և ընդ անցեալ ժամանակս ակնարկեացեն խորհուրդք իմ, և ընդ միտ ածից զիշատակ մանկութեանս իմոյ, զդա ինքն գտանեմ առաջնորդ ինձ 'ի բուռն հարկանել և յառաջ խաղալ 'ի մարզս սյամցիկ գլորութեց : Եւ արդ եթէ այս իմ բարբառ՝ մարզեալընդ ձեռամբ սորա և ընդ զաստիարակութեամբ՝ ձեռն օգնութեն ետ ոմանց, ապա իմովսանն բաւակաւ նութեց՝ արդար համարիմ հասանել 'ի թիկունս և օժանդակել սմա, յորմէ ընկալայ զայն՝ որուլ զայլս պաշտպանն ալ ազատեցի, . . .

Հինգերորդ՝ բացադարձութեն ձեռվ սկիզբն առնել, առ ունկնդիրս ուղղեալ զբանն հարցուածոյ պայմանաւ, կամ ընծայելով զերկս վաստակոց իւրոց մեծի ումեմն : Այսպէս Շնորհալին և Լամբրոնացին առ ժողովականս ուղղեն զբանս իւրեանց, Աարեկացին

՚ի սկիզբն մեկնուել Երգոց երգոյն, խցնատիռս վշպատ
մեկնիչ Դուկայ, և Գրիգոր արշարունի ՚ի սկիզբն դրոց
իւրեանց առ այնոսիկ ուղղեն զրանս, յորոց ՚ի ինդրոյ
եկին ՚ի յօրինել զդիրսն . (Գրէֆ. - ըշ.) “ Զհարկ բա-
նիս՝ զոր պահանջնցեր յինէն փութապէս յաղագո
ածային ընթերցուածոցն, ուլկամարականդ վահան-
պատրիկ, հասուցի քեզ յամբագոյն . ոչ ՚ի հարուտտ
մտաց ուրուք ժողովեալ, և ոչ ՚ի բարձրագոյն բանից
ուսեալ, այլ յաշխատութենէ աղքատ իմոց իսորհրդոցս
զտեալ նուաստ իմացուածովք : Եւ վասն այսորիկ
հեղդ առ այսպիսի փոյթս դտոյ յառաջագոյն, զի մի
նուազ զպայծառ ջահ իմաստութենէ եկեղեցւոյ երեւ-
ցուցից, և կամ տիսուր զվայելուչ դեղեցկութիւնոր-
հրդոյս : . . . Այժմ վերստին հասելոյ հրամանիս քո
ու կարացեալ ՚ի գիմի հարկանել, ուստի իսուստիքի
յառաջագոյն իրրեւ յալեաց ծովու, այժմ ՚ի նոյն
դարձեալ գիմեցի՝ վստահանալով ՚ի ընորհս Հոգւոյն
սրբոյ . ոչ գիտեմ՝ հնազանդութիւն Յանդգնութ . . .

Երկրորդ տեսակ յառաջարանուն՝ Շտապողականն
անուանեալ վարի ՚ի սաստկութեն կրից յուղելոց, ՚ի
մեծի ուրախութեն, կամ ՚ի սրտմառութեն, և յորս ՚ի
նոյն կարդի: Որովք յափշտակեալ Տարտասանին, և
իրը թէ այլ յայլմէ լեալ, բանիւք սաստկութեն բերի
յատենախօսութիւն: Օրէն է կազմել զայն համարձակ
սկսուածով, բարկութ, գոշմամբ, զարմացմամբ . կամ
որ լաւագոյն ևս է՝ մանաւանդ յատենական պատաս-
խանատուութեան՝ ուղղակի առ ունկնդիրն կամ տո-
հակառակորդն լսելի առնելով զբանն: ՚ի սկզբանն
սաստկութիւն մերժել զդրութիւնորա, որպէս թէ յի-
շատակութիւն անդամ անուան հակառակորդին զար-
թուցե զդայրոյթ լսելեաց, կմթէ երևել նորա՝ լուց-
ցէ զհուր սրտմառութիւն: Այսպէս Կիկերոն հրացայտ
սկսուածով ընդդէմ կատիլինայ դաւաճանի յառա-
ջաբանէ: “ Մինչև ցերր, կատիլինա, զեղծանիցիս
երկայնմոռուք մերով . մինչև ցերր խաղ առնիցէ զմեռք
այդ քո վայրագութիւն . առ ի՞նչ ձգտեսցի քոյին լրբենի
անդամութիւն: Ոչ շարժել մարթացան զքեզ պահա-
պանք ապարանիցս, գիշերապահք բաղաքիս, Երկիւղ
ժողովրդեանս, խուռն ընթացք ամենայն առաքի-
նեաց, ամրակառոյց ժողովարանս ծերակուաթին, ոչ սո-
ցա ամենեցուն բերանք և գէմք: Ոչ գիտես, զի նշա-

ւակեալ Են ամենայն խորհուրդք քո, ոչ տեսանես, զի դաւ քո յայտ յանդիման կայ ամենեցուն : Զո՞՞ի մէնջ անդիտանալ համարիցիս զոր ինչ գործեցերն յայտ դիշերի, ուր եղերն, զըս ընդ քեզ խմբեցերն, և զինչ խորհուրդ կալար : Եղուկ ժամանակացն, աւով այնը գործոյն : Ծերակոյտն խմանայ զայտ, բգեցին տեսանէ, և դա կեցցէ տակաւեին, և զինչ ասեմ թէ կեցցէ : Նաև և ՚ի ծերակոյտս մասնէ, կցորդի հասարակաց խորհրդոյ, առ մի մի ՚ի մէնջ ակնարկէ : Մէք, ովք քաջը, խնամակալ լինիսիք պետութեան՝ թէ անձնապահ լիցուք ՚ի մէքենացից դորա: Աաղ ուրիմն զքեզ կատիլինա, պարտ էր մահու դատել հրամանաւ բրդեցիսին : և զառ ՚ի մեզ ՚ի քեն ափուեալ ժանասխատ ՚ի քեզ դարձուցանել, : Յայտ է յօրինակէս, զի ՚ի սմին սասակութիւն բանիցն պահանջէ դշամառօտութիւն զուժդութիւն, ՚ի համառօտ բանսն բովանդակելով լիութիւն խմասաից :

ՊՐԵԱԿ. Գ.

Ապանական յանդապահութան մասն :

Ա. Առնաքէս, անհրաժեշտ կանոն ՚ի յօրինուած յառաջարանութեան այտ է, զի լիցի բնական և յարակից ընդ ճառին, առեւալ զիմաստսն յառաջադիր նիւթոյ անտի : Թերութիւնն է, թէպէտ և յաճախեալ, անխարաբար առնութեան առանց սերտ միաւորութեան ընդ նիւթոյն, մինչև անջատեալ իմն համարել զայն ՚ի զանգուածոյ ճառին : որպէս զի զնոյն յառաջարան պատշաճեալ առ այլեւայլ իրս տարանժաման Աամն որոյ առ ՚ի զգուշանալ յանահեզութենէս, և առ ՚ի բնական ընծայել զյառաջարանութիւն, կարեւոր է քաջ մասզբել ՚ի նիւթեան, և զննել զբովանդակ իմաստա ճառին, և ապա ձեռն միւել ՚ի կանխարանն : Ապա թէ ոչ, ընդ հակառակն նախ յօրինելով զյառաջարանն՝ առանց դիսելոյ զյարմարութիւնն ընդ խնդրոյն, բազում այն է՝ զի փոխանակ զյառաջարանն ՚ի ճառն յաւելոյ, դէպ լինի զճառն դլխովին ՚ի յառաջարանութիւնն անդր կցել : Այս է ասելն կիկերոնի .. : Յետ զամենայնն հանճարելոյ, զոր առաջինն է յասել՝ ՚ի վերջոյ մասձել սովորութիւն է ինձ, թէ որպիսի յա-

րինեցից յառաջարան - քանդի ուր միանգամ յօժա-
րութիւններ ինձ զկանիսարանն նախ կազմել, ոչ ոյլ
ինչ ընդ առաջ լիներ ինձ, այլ կամ օտար իմն, կամ
դուզնաքեսյ, և կամ ռամկական,, : Յետ վառելոյ
մտաց, և մտածելոյ զնիւթն ողջոյն, ինքնին թելա-
դրեն խորհուրդք զնիւթն յառաջարանին : Զի զի՞նչ
ցուրտ և անոնք, քան բռնադատեալ բանիւք մտա-
նել՝ ի ճառն, որում ոչ ոք ախորժէ ունեն մատու-
ցանել :

Բ. Յատակ և բացայայտ լիցի յօրինուած շարադ-
րութիւն, յարդարեալ ըստ բաւականուել ունենդրաց :
Վանզի յայնժամ առաւել քան յայլ ժամանակս պար-
սաւադէտ լինին ունենդիրք, չե ևս յօժարամուեալք
՚ի պատճառաց և ՚ի փաստից . վասն որոյ խնդրի ճար-
տարութիւն առ ՚ի կանխել զառաջս առնուլ չարեաց .
անձնապահ լինելով՝ ՚ի սեթեւթից . զի մի զօրացեալ
տազտկուել, ՚ի վայր արկցէ զրանս՝ որ զհետ գան : Նմա-
նութիւն բնականին և մեհապանն չքեզութիւն իմաստից՝
պատշաճ հանգամանք են ընտափր յառաջարանի . որպէս
զի, ըստ որում առէ կուբնտիլիսնոս, թուիցիմք յըս-
տակախոսք և ոչ պատճուճարանք :

Գ. Վարել՝ ՚ի բանս ցածուն համեստութիւն զի սա
ճանապարհ հորդէ յազթանակի փաստիցն : Զի ուր
սկիզբն արացէ առենախօսն ըեմբասաց լինել ամբար-
տաւանութիւն և յանդգնութիւն, վաղվաղակի ընդդէմ
խիզախսն նմա անձնասիրութիւն և գժդմուի լսողաց .
վասն որոյ և ողջոյն կազմած ճառին ընդ խեթիւ ան-
կանի : Զայն չափաւորութիւն պարտ է նմա ցուցանել
և յարտասանութիւն, ՚ի հայեցուածմն, ՚ի շարժմունան-
և ՚ի ձայնն . զի այս ամենայն նշանակիք մեծարանաց
գիւրամոք առնեն զլսելիս : Դարձեալ՝ մի լիցի մեծա-
մեծս խոստանալ և հրաշալիս ՚ի սկզբան անդ . զի թէ
ոչ կարացէ կատարել զիստառութիւնն, այսն լինի առաջի
նոցա . այլ պարտ է սակաւս խոստանալ, և մեծա-
մեծս ՚ի դլուի հանել տռաւել քան զիստառացեալն : (*)

* Ամառապահ առաջն պատահիք Ուշապ լսուին գերիշող համա-
յառաջնուի . (Արհեստ . քերթ . 156 :)

** Մի լիցի քեզ առնել ըակիզբն իրը ըղբերթող
սինլըբոր,

Դ. Օրինաւոր յառաջաբանութիւն լիցի հեղ և հանգարտ, զեղուն յիմաստու, և տարադ շարագրութեն հոյակաստ - ծանր, և մի շուտափցիթ . հեռի ՚ի սասակութե խօսից և կրից : Ա. Ա. յընթացս անդ Տառին ը յառաջ խաղալ կազմութեն, և ըստ զօրութե վաստիցն յուղեսցին և կիրք ՚ի շարժումն : Սակայն պարտէ անդստին ՚ի յառաջաբանէն ճանապարհ հորդել լըսելաց յայնս՝ յորս խորհի առաջնորդել նոցա . պարտէ անդստին ՚ի սկզբանէ ուղղել զոդիս ժողովելոցն յայն պատրաստուի կրից՝ զորս կամք իցեն նմա յետոյ զարթուցանել . վասն որոյ սերմանեսցէ ՚ի միտո նոցա զերմանս հանդերձեալ վաստաբանութեանցն :

Ե. Համեմատ գայցի յառաջաբանն ընդ բովանդակ ճառին՝ ըստ երկարութեն և ըստ եղանակի կազմութեն : Ըստ երկարութեն՝ զի չկը ինչ անտեղի, քան լայնարձակ գաւիթը կանգնել տառաջի անշուք խրճիթի: Եւ ըստ եղանակին՝ զի տարադէալ է բազմազրուագ պահումել զդաւիթ անզարդ սենեկի :

Ա. յաջափ ինչ յաղագս զլիսաւոր կանոնաց յառաջաբանութե, զորս օրէն իցէ վարել յամենայն ազգս ճառից . սակայն խնամով զգուշութե խնդրի ՚ի հանդիսական բեմբասացութիս՝ մի՛ առնուլ ՚ի մէջ յառաջաբանուի այնպիսի՝ զոր հակառակորդն յիւր օդուտ

Թէ զՊրիամս երգել ըսբակուն և զաջայալ յարդին
Գու:

Զի զի՞նչ ապա ածցէ շրքեղ նախերգանացն արժանի :

Յերկունս դոլով դուշն ըերինք, և ընցին մուկն եղանի :

Իսկ քանիօն բարւոք երգէ, որ ոչ ոգեալ ինչ անճահ :

Պարման ինչ զայըն, ասէ, Առաստ՝ ո՛չ յէս բեկանըն
Տըսյայ :

Զագաւանց երես բարչը մարդիսն և ընդ ուշու ուշունելու

Սա ոչ ըզդուխ ՚ի վայլմանէ, ոյլ ՚ի ծըսոյ տայ ըզդ փայլ :

Յերին երիս պայտ նօդրագիր + եւ ոիկըն Ո՛՛իսականին շամբի . որով ցաւանէ Ո՛՛շատ զնամեսս նախերգանու + երբուշն առ համեմագանիք միասոյ պառագանօս եր գաբանին :

շրջեցէ . որով անդէն վաղվազակի անպիտան լինի գտան և անգունելի : Զի այն կորդեալ յառաջաբան հակառակորդին յանկի ՚ի սպարծանս նորա . իբր ոչ առանձինն ՚ի սենեկի յօրինեալ , այլ յանպատրաստից քաղեալ ՚ի բերանոյ դիմամարտին :

ՊՐԱՎԻ ՀԱՅԻ Դ.

Ո՛՛ ԲՆԼ ՍԵՎԵԼ ՍԴՅԱՅՆ ՉԱՆԻՑ ՊԵՐՔ ԵՆ ՚Ի ՅԱՎԵՐ-ԲԱՆԵ :

ՎՐԱՅԵՇԻ ՀԱՐԿԱՎՈՐ է առևնախօսին վաղագոյն յինքն յանկուցանել զոգիս ունկնդրաց , և յօժարամանել զնոսայախորժական լսելուի , որպէս զի որ ինչ առելցն է ՚ի հաստատութել գիւրընկալ լիցի նոցա , սպարտ է նմա գողանալ զսիրտս նոցա երիւքս այտոքիւք-առնել զնոսայախորժամիտս , յօժարամկամա , և մօռա-դիրս : Զի թէպէտ և այս ամենայն հարկաւ պահան-ջին ՚ի նմանէ ՚ի բուլանդակ հառին , այլ առաւել սպարտ է միտ գնել այնմ ՚ի սկզբաննե :

Ա . Յառաջանութիւն է հաճութիւն ունկնդրաց ընդ-բեմբասացութիւն տառենախօսին : Խակ յառաջամիտս ա-րացես զնոսա միով ՚ի չորից գլխոց տափ : Կախ յանձ-նէ , ՚ի մէջ թերելով ցածութեք և սպարզմութեք զբարիոք համբաւ կամ զվաստակ , հեռագոյնս դնելով զամ կարծիս ատելութել և նախանձու , յայտ արարեալ՝ թէ ՚ի սպարտուց յանձնառութենէ մաստոցեալ է յայն դործ , և ոչ առ ՚ի լիսանել ումեք : Յայսմ գլխոյ յա-ռաջամիտս առնելը զգօրսն յունկնդրութիւ բանից իւ-րոց քաջն վարդան . “ Ազաւեմ զձեզ , քաջ նիզակիա-կիցք իմ . մանաւանդ զի բազութիւ ՚ի ձէնջ լաւագոյն էք քան զիս արութեք . և դահու ՚ի վեր ըստ հայրենի սպատուոյն . բայց յօրժամ ձերով կամօք և յօժարութեանաջակորդ և զօրագլուխ ձեզ կացուցելք , հեշտ և բաղձալի թուեացին բանք իմ ՚ի լսելիս մեծամեծաց և փոքունց .. :

ԵՐԿՐՈՐԴ ՅԱՆՁՆԷ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ , որպէս ասա-ցաք վերագոյն ՚ի գժուարութիւն յառաջաբանութե :

ԵՐՐՈՐԴ ՅԱՆՁՆԷ ԳԱՄԱՎՈՐԻՆ , գովելով զգթութիւնորա առ տառապեալս , զարդարութիւնորա առ հարը-առահարեալս , զիստութիւնն առ կեզեքիս : Զօրինակ

բանիս է տեսանել՝ ՚ի գործս Առաքելոց (Եղ. Եջ.) յատենախօսութեն Տերափւդոսի առաջի Փելլքսի, և սրբոյն Պօղոսի առաջի Ագրիպանոյ :

Երկրորդ՝ յիսկութենէ գատին, իբր թէ ծանրագոյն է խնդիրն քան զբաւականութեն իւր, կամ ցուցանել զհիգութ կարօտելոյն՝ որ ակն ունի ողորմութ : Սովին իբր թէ ժակ զունկնդիրս զիջանել՝ ՚ի տկարութ իւր, և միտ դնել բանից իւրոց : Այսպէս առնէ Ընորհալի յընդհանրական թղթին : “ Եւ իմ յայսոսիկ Եղեալ՝ զարհուրիմ սարսեալ, զահ և զերկիւղ գատատանին այ զմուաւ ածելով որ վասն հովուաց և առաջնորդաց ՚ի հին և ՚ի նոր կտակարանս սաացեալ, մինչ զի ոչ սալ քուն ալաց կամ նինջ արտեանաց յերկիւզէ այսոցիկ չարչարեալ ոգւոյ իմոյ .. :

Բ. Յօժարակամ լինին գատաւորք և ունկնդիրք ՚ի լսելութ եթէ անդէն ՚ի սկզբան յատակ և համառօտ առաջի դիցես զքաղուած նիւթոյն՝ հանդերձ Զշդրիտ բաժանմամբն . զոր ըստ կարգի տրոհութեն ՚ի միտ առեալ ունկնդրաց, մնացեն ապացուցից : Օդուն ՚ի յօժարակամ լսելութ և յառաջնթաց բանիք համեստութեն, զոր վերագոյնդ աւանդեցաք : Եւ Եթէ սկիտոյ լինիցի ուրեք առաւելութի տալ բանին ՚ի յառաջարանն յիրաւանց և յարդեանց իւրոց, տակաւին պահանջի համեստ չափաւորութիւն ըստ օրինակի ընդհանութեն, որ յամենայն գործս իւր ահագինս և ՚ի սաստիկս՝ մեզմով և հանդարտութեամբ սկլորին առնէ :

Գ. Մտադրութիւն ունկնդրաց է ոչ միայն յօժարութը տալ լսել նոցա, այլ և միտ դնել զօրութեն ասացելոցն . իսկ մոտադիրս արասցես զնոսա, ցուցանելով հառել զկարևորաց և զօգտակարաց : Արժանէ աղաւել զնոսա, զի ունկն դիցեն սիրով և զիջանելով և ներելով ակամայ վրիպակաց՝ յորոց ամենայնիւ ազատ լինել չէ հնար, և խոստանալ՝ համառօտ առնել զճառսն : Այս ամենայն հոյակապ ոճով յարմարեալ, ձգեսցեն զսելիս յունկնդրութիւ . զի զճաշակս իմն քաղցրաբանութ ատենախօսին առեալ ունկնդրաց, մնան վայելել զնոյն քաղցրութիւ բանից և ՚ի բովանդակ հառին :

ՊՐԵՎ Ե·

Յառաջի հասնելու առաջնային մեջ:

ԼՐԻԵՔ են մասունք յառաջարանունքն . . . Սկըզ-
բնաւորութիւն, Առումն, և կատարած,, : Սկզբնաւորու-
թին իբրև հմտն համարի յառաջարանին . այն է առա-
ջն զրոյցն բազմիմաստ, զորով հիւսին թելք առաջնոյ
ընդհանուր բանին : Առումն է երկրորդ ներգործութիւ-
խորհրդոցն՝ ածանցեալ յառաջնոյ անտի, որ չանայ
և ևս պարզել զնոյն, և զբազմադիմի հայեցուածն ա-
ռաջն իմաստիցն ամփոփել առ մի միայն իմաստ որո-
շակի . որով յառաջարանութին աճէ յիմաստս և ՚ի
բանս : Խակ կատարածն որ զբնի դայ, կնիք է բանին
յորում յայտնի կացուցանէ զառաջարկութին, կցոր-
դելով զյառաջարանն ընդ հառին :

Ըստ այսմ օրինակի կազմէ Ընորհալին զյառաջա-
րան առենարանութիւրոյ, յետ բացադարձունքն առ-
ժողովականս :

ԱԴԻՇ . Բանականս բնութիւն յերկուս բաժանի,
յանմարմինս և ՚ի մարմնաւորս . անմարմնոցն սեռք,
Երանական պատահեալ զինակի՞ անմահութե և ան-
ախտութե, անփոփոխ ընկալան զկայանս փառաց և
զպատիւ, յորմէ հետէ գոյացեալք եղին : Քանզի ոչ
փոփոխելով յայլս՝ բարձրացան ՚ի խոնարհութենէ,
և ոչ փոփոխին յորոց ստացան՝ մինչև յաւիտեան .
այլ յաւետ մշանջենարար ունին՝ զոր ՚ի լինելութեն
ընկալան յարարչէ :

ԱՀԵՔ . Կը առաջի և մարմնաւորացս ազդի նոյնա-
րար լինել, եթէ կացեալ էաք ՚ի պատուիրան սկըզբ-
նասպին . բայց զի պատուիրանազանցութիւն մեղաք,
և յաղագս մեղաք, և մեռելութիւն կորու-
սաք զփառս յաւերժականս, և տարագիր գոլով ՚ի
հայրենի ժառանգութեցն՝ յաշխարհս յայս վշարեր
և անիծիւք դասապարտեալ անկաք, նորին ազագառ
անվաւեր և փոփոխական ամենայն ինչ եղի, եթէ
ածային գործոցն տեսուի, և եթէ նիւթականիս աշ-
խարհի իշխանութիւ :

ԿԱ-Դ-Ի-Շ-Ն . Եւ զի այս այսպէս գոլով, հնարաւո-

բետաց բնութիս խմաստութ՝ մանաւանդ թէ ՚ի վերուստ
տուեալ, որպէս զի փոփոխմամբն զմիմեանս՝ անմահա-
բար և մահկանացուացս սեռ ըստ անմահիցն կացին
զգործ և զիշխանութիւն : Ըստ որում . . . և մերն հայր
Լուսաւորիչն հայաստանէացց Գրիգորիոս, և որք ՚ի
նմանէ ըստ հոգւոյ և մարմնոյ ծնունդք . . . Հետեւ
ցուցանէ զինի, թէ յաջորդելով զմիմեանս՝ և հաս և
նմա ունել զաթոռ սրբոյն Գրիգորի . յորմէ և անդք
յառաջ խաղաց յատենախօսութիւն դահակալութեան
իւրոյ :

Կման այսմ օրինակի և կիկերոն ՚ի մանիլեան Տա-
ռին սիւն դնէ յառաջաբանութեն՝ յայտ առնելով
զմեծարանս իւր առ ժողովուրդն, և զերախստագէտ
շնորհակալուն իւր վասն աւագութեն շնորհելոյ նմա
՚ի հռովմայեցւոց : Աստի անցանէ յառաջն, ասելով
թէ քաջ խելամուտ լեւալ խորհրդոցք՝ որով յօժարե-
ցայք վերաբառնալ զիս ՚ի վառս, սպարտ անհրա-
ժեշտ անձին վարկանիմ ՚ի ձեռն առնուլ զնարտարա-
խօսութիւն իմ և զիշխանութիւն յօգուտ ձեր : Իսկ է-
տարծ առնէ բանին՝ ցուցանելով նոցա զվատանդ սկե-
տութեն և զմօտալուտ հարկ պատերազմին ընդ Տե-
դրանայ և ընդ Միհրդատայ . ուստի ասէ, թէ սպարտ
է փութալ կարգել զոմն քաջ զօրավար :

՚ սկզբնաւորութեն և յառան պահանջի ուղղուի
մուածութեց, և Տարտարուն ընդարձակելոյ զբանն .
որով յարին ՚ի միմեանս բանին, և բովանդակն միան-
դամայն շքեղ բանիւք և համառօտիւ հասանէ ՚ի նպա-
տակն, որ այն ինքն է կատարած յառաջաբանութեն :

ԳԼ. Բ.

Յ-Ն-Գ- Ա-Ն-Ե-Ր-Ի-Ա-Ն-Է- և Խ-Ն-Ք-Ր-:

ԱՌԵՆԴԱՐԿՈՒԹԻՒՆ, (*) ատենական է՝ յո-
րում բեմբասացն ծանուցանէ սուզ բանիւք զնիւթ
առաջադրեալ ճառիցն, զնելով յանդիման աշաց զոր-
պէսն խնդրոյն, և ցուցանելով զնսպատակն՝ յոր ուղ-
ղէ զզօրութիւն բանից իւրոց :

Յ-Ն- Պրօթլուկա . արօտաօտ . լ- Propositio .

Առ ՚ի սահմանել զայս առաջարկութիւն, յորոց վերայ կանգնեացի յօրինուած Տառին, պահանջի երիցտոյն փոյթ ճարտասանին. քանզի անհնար է դասնել փաստա հաստատութեամբ մինչև քաջայայտ ծանուցեալ զ. ինչ հաստատելոցն է յառաջբերութ պատճառաց :

Յամենայն առաջարկութիս անվրեսպ պահանջին երեքին այսորբիկ հանդամանք : Նախ՝ զի իցէ մի և անխառն. որով ՚ի մի միայն կէտ ուղղելով զամենայն զրանան՝ բաւական լիցի ունկնդիրն պատկանել զձեռնարկութիսն առ ոյլեայլ հայեցուածս իրացն, և ՚ի միտ առնուլ զրանոն նորա : Երկրորդ՝ զի համառօտ իցէ. որպէս զի անդէն և անդ համանգամայն սրաշարեսցէ զմիտս, և բովանդակ ընծայեացի ՚ի տեսութիւն լողաց առ. ՚ի դիւրաւ խելամառութիւն : Երրորդ՝ զի պարզ իցէ և յստակ. որպէս զի վաղվազակի իմանայցեն որբ լրանն. քանզի և ՚ի սկզբան անդ լիով հասու գտանել իրացն՝ բազմօք նարաստէ. ՚ի բարիոք ելս և ՚ի յաջողուած Տառին :

Մեծապէս կարեոր դատեցան ճարտարք արուեստիս նորամձեւ կազմել զառաջարկութին. իմաս ոչ ըստ նիւթոյն, այլ ըստ Եղանակին. զի մի փոխանտէկ որսալոյ զունկնդիրն՝ տաղափացուացէ զնոսա, և ասիցեն թէ որ հանապազորդ յածի ՚ի բերանս ամենեցուն, սա զնոյն վերստին յեղյեղել ունիցին : Որպէս ասելի. Ամբ ոք ինքն է պատճառ շարեաց իւրոց. սովորական իմն է. իսկ ասելով Ոսկեբերանին. Ոչ ոք ժնասի, եթէ ոչ յանձնէ. ըստառցանէ զլողն :

Դարձեալ եթէ երբէք առաջարկութին, զոր յիշտասկէլ ունիս, անդէն վաղվազակի ՚ի բաց դարձուցանելոց է զմտադրութիւն լողաց վասն ներհակ կարծիս ունելոյ նոցա, ճարտարութիւն ՚ի վար արկցես՝ շրջէլ զայն յօդտակարն, և այնպէս յօրինել զառաջարկութին, զի նարատակ բանիդ առ ժամն ծածկեսցի : Այսպէս կիկերոն ՚ի միլոնեան Տառին, դիակելով զի միայն հնարք ապրեցուցանելոյ զՄիլոն՝ էր յուցանել, թէ իրաւամբք սպան նա զկզողիսս առ հարկի պաշտպանելոյ զանձն իւր, և զի դիակը թէ այս առաջարկութիւն ծանրէ ՚ի լսելիս ժողովրդեան, շրջէր զկերպարանս բանիցն. ոչ առաջարկելով ըստ սովորականին, թէ Միլոն ոչ ապրաւարտուց սպան զկզողիսս,

կամ թէ օրէն էր Միլոնի սպանանել զայր Եղեռնաւոր, այլ ասաց . դուք ինքնին տեսանիցէք զառ ՚ի Կղողիոսէ լորեալ դարանոն առ Միլոն : Այսպէս կերպարանավոխ առնէր զդատն, ցուցանելով զի Կղողիոս էր առաջնորդ չարեացն, և Միլոն վունդեալ ՚ի դարանակալութենէ . զորոյ զհետ բերէ, թէ առ ՚ի ճողոպրել զանձն ՚ի լարեալ որոգայթից անտի՝ ստեղծաւ ՚ի գործ, զոր նամ ումեք օրէն է առնել ՚ի պաշտպանութ անձին : Պարտ է յայսպիսիս, մանաւանդ յես գժուարինս, ՚ի պաշտպանել յանցաւորի՝ յառաջարկուե անդ ըրմէլ զվասմն ՚ի գլուխ ամբաստանողին, և կասկածելի առնել զնա յաչս գատաւորին, կամ նուազել զցասումն գատաւորին ՚ի վերայ յանցաւորին :

Առաջարկութին, զոր ճարտասանն դնէ հիմն բանից իւրոց, և խնդիր ճարտասանական՝ յորոյ վերայ տիրաբար կամ օրինօք բանակռուութե սրարտի յառաջ խաղալ ըստ կանոնաց արհետին : Բազմօրինակ զանազաննեն և բաժանեն արամարանք դիմուդին . այլ ըստ ճարտասանից՝ ամենայն խնդիրք դրեթէ բովանդակ ՚ի գործականն ակնարկեն . քանզի գովեստք կի՞ պարսաւք, որք են խնդիրք կացրդական հանդիսին, նպատակ ունին զեր և զնմանութ գովելոյն և զնորշութին . ՚ի գորովելոյն : Նոյնպէս ամոցելն և զայրացուցանել, արդարացուցանել և սրարտաւորել, որ են խնդիրք բազխուհականին և առենականին, ջանան յամենայնի խոնարհել զունկնդիրս ՚ի կատարումն ըստնիցն առացելոց : Ազատ սմին համեմատ՝ ամենայն խընդիրք ճարտասանութե ըստ ինքեան գործականք են և արդիւնականք : Խնդիրն նշանակէ միշտ զերկուստեք ընդդիմամարտութի . և թէպէտ կացրդականն ոչ է երկուստեք մրցելի, այլ միայն գովեստ է կամ պարսաւ, ստկայն ընդ այլովքն և զատ խմանամք, առ ՚ի կարճել զտարապարտ բաժանմունն :

Յորժամ ճարտասանն յառաջարկութե իւրում բացարել զմնդիրն, և ծանուցանել զհանդանունորա, և որ ինչ վասն նորա տարաձայնութիր իցեն կամ զուգաձայնութիք, այս բացարութի հանդանացն անուանի պայման խնդրոյն, (*) զորմէ մրցին դատա-

խաղն և պարտաւորն : Ըստ այսմ՝ ի մեջ առեալ հատուած մի ՚ի պատմութեալ չայոց , Մոնոմախոս կայսր ստիպէր զԳագիկ վերջին թագաւոր մեր՝ տալ զաշխարհ իւր և զմայրաբաղաքն Անի ՚ի ձեռս Յունաց ըսկակի հօրեղբօր նորա Յոհաննու արքայի : Կայսրն սկզբէր զվաւեր դու թղթոյն , և Գագիկ զանվաւերն ընել : Արդ գործ է ընտրել և հաւասարել զմին յերկուց աստի . ահա այս է պայման խնդրոյ :

Երիք օրինակօք մարթ է մեզ առնել զայս քննութի , և հանել զիրան ՚ի պայման խնդրոյ ըստ միոյ յերից գլուց . զոր գրեթե յամենայն խնդիրս է տեսանել , թէ սկզբան յատենականն զիւրագոյն նշմարի քան յայլս : Առաջին է անուանեալն պայմանն Գառաչիսին . այն՝ թէ իրն առաջարկեալ խկապէս եղե՛ արդեօք թէ ոչ : Զորօրինակ Դաւիթ դաս վարէ ՚ի վերայ ամազեկացւոյն , որ ասացն՝ թէ ինքն սպան զԱսւուղ արքայ . արդ այս է պայման գուշակութե՛ , զոր պարա է հաւասարել գուշակութը , և զարակոյսն հաւասարեալ ըստ այսմ դատել կամ արձակել : Դարձեալ էթէ ոք քննեցէ ընդհանուր բանիւ , զինուորութի՝ թէ Երկրագործութի իցէ ընտրելի , այս գուշակութի է , վասն առնլոյ զմին յերկուց ընտրելեացն :

Երկրորդն անուանի պայման Ուղիսաւին . զի ուր չիք աեզի գուշակութե՛ , և գործն ինքնին յայտ է . անդ քննի պայման գործոյն և հանդամանք . իրաւամբք արդեօք եղեւ թէ յանիրաւի , և որով պատճառաւ : Այսպէս փուրչիչ ամբաստանութե՛ լինի առաջի խորովու Պարսից արքայի զԱմրդանայ սպարապեաէ Հայոց զերկրորդէն , ամբոխ արարեալ յարձակեալ ՚ի վերայ Սուրբէնայ մարզպանի , և սպանեալ զնա : ՚ի սմին՝ գործ սպանութեն յայտնի է , և խնդրի պատճառ սպանութեն . որում պատասխանի առնէ ասենարանն՝ թէ արդարեւ Վարդան սպան զԱռուրէն , ոչ զհաւատարիմ կուսակալ արքայի , վայ և ոչ յանցեաւ ընդդէմ թագաւորի , այլ սպան զայր խոռվար՝ որ ամբոխէր զաշխարհն ընդդէմ դաշանց և օրինաց արքունի : Զայս առաջարկութի եղեալ բանին , ըստ այսմ յարմարէ և զհառն ողջոյն : Նմանապէս և

անուանէ զայն ժՄՓԻԾՅԻՇԽԾԻՉ . այսինքն է յիշութիւն , իսէ բան զարմէ դարւայանաւին է :

՚ի բապիտհականէն . մինչդեռ թշնամին ՚ի վերայ յարձակեալ՝ հասեալ կալեալ է զգուրս , մինչդեռ ուսմիկն զէն ՚ի ձեռքն յարուցեալ է ընդդեմ արքայի , մշակել զերկիր լաւ իցէ , թէ զինու վառել ընդդեմ ապատամբաց , և զգինուորութիւն թագաւորին զինուորել : Աւասիկ այս որպիտութէ պայման է . զի որ վերագոյն ՚ի գուշակականն հասարակաբար տացաւ , աստանօր ըստ վերահաս պայմանացն առաջարկի :

Եցրորդն է սպայման քանակուն . զի յորժամ յայտնի է գործն , և նպատակ գործոյն , յայնժամ խնդրի թէ որպիտի գառասասան պարտ իցէ վարել ՚ի վերաց նորս , և որպիտի վարձս կամ պատիմ փոխարինել : Զոր օրինակ յաւուրս Արշամայ թագաւորին մերոյ ՚ի դատ կոչի Ենանոս բաղրատունի ՚ի Զուրայ դնունեաց նահապետէ՝ իրր քրեական յանցանաց պարտաւոր , զի ձեռն ետ ՚ի Հիւրկանոս , և գաղտ արձակեաց զնա : Աստ պիդէ Զուրայ ցուցանել զենանոս վեսաստ պարտ ընդդեմ արքայի և ձեռնոտւ յայր թշնամի : Իսկ բարեխօսն ընդդեմ գնէ , զի թէսլէտ յանցեաւ նա ձեռնոտուութիւն ՚ի Հիւրկանոս , այլ այն յանցումն չէ քրեական և ընդդեմ թագաւորի , զի այլազգ սահմաննեն օրէնք . վասն որոյ այլում պատուհասի պարտաւոր է Ենանոս : Դարձեալ՝ Արտաշէս արքայ Պարսից խորհուրդ հարցանէ ընդ Համան , թէ որպիտի փառօք արժան իցէ մեծարել զայր ինձ հաւատարիմ . և Համան քանակէ զվարձն , փառաւորել արքայականծ շքով :

Զայս առաջարկութ եղեալ առենախօսին , և որոհեալ ՚ի մասունս , յառաջ խաղայ ՚ի կարգ փասախցն՝ քազելով զայնս յաղբերաց Տարտասանութ , հաստատելով զնդունելի փաստան , կամ մերժելով զբանս գիմակալացն :

Գ.Լ. Գ. ·

Յաղագու բաժանման (*):

Առաջանական է արոհութեան առաջարկութեան կարգութեանը մասսուն: Զի եթէ առաջարկութեան բազում ինչ յինքեան բովանդակիցէ, յայնժամ հարկ է բաժանութեան առնել, և մի առ մի ցուցանել զբաժանեալ մասունքն, որով ցուցանի և առաջարկութեան ողջոյն: Ըստ որում կիկերոն՝ ի մանիլեան ճառին յերիս մասունս բաշխէ զբանն: Կարեւոր թուի ինձ ասել նախ յաղագս ազգի պատերազմին, երկրորդ՝ յաղագս մեծութեան, երրորդ՝ վասն ընարութեան զօրավարին: Իսկ ուր ամփոփէ է առաջարկութեան, և ոչ անջատի ի մասունք, յայնժամ առելորդ է բաժանելը:

Բաժանութեան թէպէտ ըստ սմանց մեղիէ զուժդութեանութեան ճառին, և քակէ զզօրութեան միութեան, սակայն և ճանապարհ հորդէ առ ի դիւրաւ խելտմանէ ասացելոցն, զիւրաքանչիւր մասունքն որոշակի տպաւորէալ ի միտս ունկնդրին: և հասանելով զերկարութեան ճառին՝ դիւր առնէ լուղաց առ ի չպարտասելոյ յունկնդրութեանէն: Օդաէ գարձեալ բաժանութեան մասդիր առնել զլուղս, և մերթ ընդ մերթ յիշատակել զանցեալ բանն՝ կշռելով ընդ առաջին, և մնացելոցն միտ դնել: Ամանի բաժանութեան ընդհատութեարածիք ճանապարհի, յորում մոսկ հատեալ և մզոնաչափը կանգնեալ իցեն առ ի չափ ընթացիցն, կամ գագարելոյ առ վայր մի յօթեանս առ ի հանդիսաւ ուղեգնացիցն: Տարապարտ թուի և կասկածն իսգելոյ միութեան ճառին: զի քաջադէպ բաժանութեան մոխանակ հաջուածելոյ՝ լրագոյն ևս ցու-

* Յն. μερισμός. լր. Divisio. Ըստ առանդեւոյ կիկերոնի, պայծառաւուն նիւթոյ ճառին հնարիսաց նույն Ուրդենիսս մէծանուն արենալու հառվայրէցի: Այս առագուայտնաբանութեան Յունաց, և և ի ճառա հարց, և գուանի բայծառաւուն: զի անծանօթ էր առ նոսս այս այլ մայրէ հառվայրէցից ի իւր, որին զայն ինաւուը և ի նոյն նէ առանդեւոյ ի յէտին:

ցանել զայն . յայտ արարեալ թէ որպէս իւրաքանչիւր մասունք ճառին ունին զիրերաց , և 'ի մի նպատակ բերին : Կանոնք բաժանման այսորիկ են :

Ա . Տարանջատք լիցին 'ի միմեանց մասունք՝ յորս որոշի առաջարկութին , և մի բնաւ մի մասն զմիւսն յինքն ամփոփեցէ : Ըստ այսմ անյարմար է խօսել նախ զօդտութենէ առարինութեց առ հասարակ , և առաջ յերկրորդումն զարդարութենէ կամ զժուժկա- լութենէ . զի դորին յառաջնումն բռվանդակին իրրե տեսակ ընդ սեռիւ . այլ պարտ է անջատել զնոսա 'ի միմեանց , և յիմաստ առաջարկութեն միացուցանել :

Բ . Պարտ է 'ի բաժանման ունել զբնական կարգ . այսինքն 'ի մէջ բերելնախ զպարզագոյնս , և յետ լիով ընդարձակելոյ և բացատրելոյ զայն՝ առաջ յայլ մա- սունս անցանել : Դարձեալ պարտ է զայնս յառաջ կարգելոր կարեւոր են , և անտի անցանել 'ի բարձրա- գոյն 'ի հիմնեալն 'ի վերայ առաջնոց : Այսպէս ըզ- ճառո ընդդէմ բամբասող լեզուաց՝ յերիս բաժանես- ցես , առաջին՝ որպէս սկսանին բամբասանք . Երկրորդ՝ որպէս զօրանան . երրորդ՝ զինչ ինաստ դործեն :

Գ . Ամենայն մասունք բաժանմանն միանգամայն առեալ բռվանդակեացեն զառաջարկութին ողջոյն . մի ինչ առաւելուցու և մի նուազեցէ : Վասն զի յոռի է բաժանումն , յորժամ զգումար մասանցն ա- ռաւել դտանիցես քան զբոյորն և աճեցեալ քան զա- ռաջարկութին , կամ ընդ հակառակն նուազեալ : Օ- րինակ իմն՝ եթէ զաշխարհս բաժանիցես յԱսիա , յԵւրոպա , յԱֆրիկէ , յԱմերիկա , և 'ի վերնագա- ւառո օդոյ . հինգերորդդ այդ աւելի է քան զտիեզե- րականս գունտ :

Դ . Բառք՝ որք զբաժանումն ցուցանիցեն՝ լիցին ձիւդ և որոշ , և 'ի բաց ելցեն ամենայն մանուածոյ բացատրութիք և ձեւք . և մանաւանդ ուժգին և աղ- դու լիցին մէն մի 'ի բառից անտի , միանգամայն և բանն ողջոյն համառօտ . զի այս ընդուսաուցանէ զլսե- լիս , և հաճոյական ընծայի :

Ե . Պարտ է զգուշանալ 'ի բազմաման բաժան- մանց . զի թէպէտ 'ի տրամաբանականս տեղի ունի մանրամասն բաժանումն , այլ 'ի ճառս ճարտասանա- կանս տաղակալի է և ծանրացուցիչ յիշողականին , զի յոյժ անջակետին յիրերաց դասակարգութիք պատ-

Հառաց , և ուրեք խառնակին ըստ իրեարս , կամ կըրկնին և երեքինին : Եցրկու , կամ թէ առաւել երեք լիցին մասունք հառի : 'Ի լրումն կանոնիս' զԱկիկերռնին յուշի կալցես . Պարս է , ասէ , լինել բաժանմանն համառօտ յատակ և սակառ : Եւ զԱռութիվանոսին :

Մի ինչ պակասեսցէ , մի ինչ յաւելուցու :

'Ի քարոզի կամ յատենախօսութեն բազում օգուտ բերէ բարիոք տրոհուի . որ թէ ընդ հակառակն թիւր իցէ , անալիտան լինի և բովանդակ ատենախօսութին : Վանդի լսողքն թէ և չիցեն բաւական 'ի վերայ կալվրիակին , սակայն նշանարկն ՚ի նմին թերութիւն իմն յանրաւականութենէ ուժգնութեն ասացելոցն :

Ընտիր օրինակք են բաժանման , Մասիլիոնի գաղղացւոյ բաժանումն 'ի վերայ բանին . . . Ամենայն ինչ կատարեալ է . . . զոր յերիս բաժաննէ . 'ի կատարած արդարութեն այ . 'ի կատարած չարութեան մարդկան , և 'ի կատարած սիրոյն աքնի : Դարձեալ և Պուռատալցի գաղղիացւոյ 'ի վերայ բանին . . . Զիաղաղութեղիմ տամ ձեզ , . զի բաժաննէ 'ի խաղաղութիւ մտաց՝ հնազանդութիւ հաւասոց . և 'ի խաղաղութիւ սրտի՝ հնազանդութիւ օրինաց : Եւ Կիկերոնին գարձեալ . Ընդէր չկամին զհաշտութ . բանդի չար է , բանդի վտանդաւոր է , քանդի անհնարին է . մինչև զերիս զայսոսիկ բացատրեցից , խնդրեմ 'ի ձենչը լուիջիք զբանս իմբարեմարդութիւ ձերով , :

ԳԼ. Դ.

Յաշտա սուսական դադարանէ (*) :

ԱՏԵՇԱԱՆ պատմուին սահմանի ըստ Կուբիսիլիւանոսի . Անցք , զորմէ առաջի կայ գատաւորին վճիռ հատանել : Այսինքն է ճշդիւ բացայայտութիւ այնոր ամենայնի , որ կարգի առ նպատակ դատին . և յորմէ ծագէ խնդիրն : Յատենական հանդիսի՝ մի 'ի կարեւոր մասանց հառին է պատմութիւն . զի զայնմանէ կամի պայման խնդրոյն , և է նա սկիզբն և հիմն փաստից և հաստատութէն : 'Ի բաղնոհականն ոչ մտանէ

* ՅԱ . ՖԱՐԱՆՍԻԱ . ԱՅ . Narratio .

սա . այլ ունի տեղի՝ ՚ի կացրդականն՝ ձեռնառւ լինելով գովեստից կամ՝ գործվանաց առնեն՝ զորմէ բաննէ , պատմադրելով զործու նորա : Այլ անդ պարտէ բաշխել զպատմութին յիւրաքանչիւր մասունս ճառին , և ընդլայնելով վիպել . զի մի նմանիցի պատմագրութե : Քառեակ են կանոնք առենական պատմութե . Համառօտութե , Պարզութե , Ճշմարտութե և Քաղցրութե :

Ա . Համառօտութե սեփական է իմացուցանել զպատմութին՝ սկսանելով ուստի արժանն է , և ՚ի բացթողով որ ինչ ոչն կցորդի ընդ առաջիկայ բանն : Չէ արժան հեռանալ ՚ի նպատակէն անօգուտ արտուղութքք . որոց յաճախութի յաւէտ վնասել գիտէ՝ քան թէ օգնել . սրարտ է զկարեորմն և եթ սրատմել , և ոչ տարապարտ յիշաւակել՝ որ ինչ դիւրին իցէ իմաստասիրել ՚ի զուդընթաց հանգամանացն : Միով բանիւ , համառօտութե է՝ չասել աւելի քան զոր պարտն է :

Բ . Պարզութե թէպէտ և ամենայն ուրեք յընթաց ճառին կարեռ է և յամենեցունց մեծարեալ , այլ առաւել ՚ի պատմուէ . քղի այս և զբովանդակ ճառն դիւրիմաց գործէ : Իսկ սրարզ լինի յօրինուած պատմութեն՝ եթէ զցուշանայցես յամենայն երկդիմուէ ; և զմէն մի ՚ի հանգամանաց քանածանօթս արասցես , ուշ ունելով և քաջ դասաւորութե անցիյն և ժամանակաց և տեղեւաց : Մի միայն գործ , կամ մի ՚ի հանգամանաց գործոյն միթին մնացեալ , կամ ոչ քաջ հասու լեալ յունկնդրաց , մանաւանդ ինչ ՚ի հարկաւորացն , եզծանէ զաղցուուի բովանդակ ճառին :

Գ . Կարեորագոյն ևս է ճշմարտութիւնն պատմելեացն . զի ո՞ հաւասայցէ ստալատիր կեղծեաց : Ա սան որոյ պարտ է մերժել զամենայն զկասկած երկմութե , միտ գնելով զի հանգամանկը պատմութեն պատկանաւոր գտցին անձանցն , զորոց է բանն՝ ըստ գըլխոյ առաջարկութեն , ըստ պայմանի խնդրոյն , ըստ ժամանակին և ըստ տեղոյ : ՚ի մէջ մասուցին պատճառք և վկայք . օգնական լիցին օրէնք և հասարակաց սովորութին . և ՚ի վերայ ամենայնի , յայտնի իցեն մեծարանք առնն և հաւասարմութե :

Դ . Քաղցրութի պահանջի ՚ի պատմութե , ըստ բանից և ըստ իմաստից . ոչ միայն յստակ և հոյակապ

ռԱռվ յօրինուածոյն, այլ և զանազանութե՛ ձեռցն, զորս մատակարարեացէ ճարտասանութի՛ յամենայնի անտիսեղծ պահեալ զվայելուի և զհաւասատիս պատմութեն, խորշելով երկուստեք 'ի ծայրայեղ խոսորմանց, զի մի առ ցամաքութեն անզարդ իցէ, և մի առ տարապայման յաւելուածոյ զարդուց՝ բանաստեղել թուիցի. զի զշշմարիտ պատմութի՛ խնդրեն ունկնդիրք, և ոչ զեղջիրուաքաղ:

Երկու աղջք Են պատենտկան պատմուե՛. յատուկ և պատահական: Յատուկին է իրրե խարիսխ առաջարկութեն, որ կարգաւ և բացայայտ ծանուցանե զգործն՝ զորմէ բանիքն են: Խակ պատահականն է այլով իմն օրինակաւ մտեալ ը մեջ բանին՝ առ 'ի զարդ կամ առ 'ի բացարդութի՛, և կամ իրը յարակից ընդ խնդիրն նմանութե՛ կամ օրինակաւ և կամ իրը ձեւ արտուդութե: (*) Յատուկ պատմութի՛, որ նպատակ է բանիս, և թէ կարգեացի 'ի գլուխ ճառիցն իրրե ներածութի՛ և շտեմարան փաստից՝ լիցի պարզ առանց պմձնութե: Եւ թէ նիւթ պատմութեանն յարակից գոցի ընդ այլեայլ մատունս ճառին, օրէն է բաժանել և զպատմութին, և յիւրաքանչիւր մատունս կամ 'ի մի մի ասպացոյց առընթեր դնել և զպատկանեալ մասնն պատմուե՛: Զպատահականն անդր մուծանիցես՝ ուր պէտք իցեն զուարձութե լսովաց կամ պարզութե բանին, պմձնելով բատ ամենայն երանդոց արհեստին, և կենդանագրելով ամ ձեռովք պատշաճականօք, զդուշացեալ ամենայնիւ 'ի ստութենէ, զի մի երևեսցիս պահուճանօք նիւթել խաբէութի:

Այլեայլ Եղանակը Են պատմուե՛ ամբասանողի և պաշտպանողի: Պարտ է ամբասանողին պատմել զիրսն մասնաւորելով և համառօտիւ, սիռեալ յիւ-

* “ Երբէակ աղջք էն պաշմուե՛, առէ կիրառն (յաղ. գիւտի. Ա. 19.) սուսզին՝ յորում բաշնութաիլ դադին ինչնին և ամենայն բանք վիճաբանութին: Երբէութ՝ յորում որդուուղութի գործի արդաւույ դադին 'ի պարձուու ամբասանուութի կամ նմանութի կամ զսաւարձութի, և հետառաւու՞ դադին՝ յաղափու որոյ բանն է, և իամ սիս ընդարձակութի: Երբէութ զսաւարձութ է 'ի պարձուուն դադին. առ օրէն է կըրել առ 'ի զսաւարձութի, և առանց ինը շահառութաւեց: և զնոյն 'ի գիւր դրաւելու:

բարձնվեր հասուածս զակրմանս փաստիցն, և կեղակարծ երկմառութիւն արկանելով զամբաստանեալ կողմամբն . ազօտացուցանել և ընդ լոռութիւն քօդարկել զանդիսն՝ որք նպաստեն հակառակորդին, ջանացեալ հանել զվարան բովանդակ յամբաստանեալն : Զգուշանալ պարտ է նմա , զի մի տացէ կասկածանս նենդութութեամ խարեւութեամ . վասն որոյ բնական օրինակաւ կարգեցէ զդաստուրութիւն բանին, որպէս զի երեւցուցէ՝ ոչ առ մախանաց կամ 'ի չարութենէ բնել զբանս իւր, այլ յիսկութենէ և 'ի թելադրութենէ դաստին :

Ընդ հակառակին պարտ է պաշտպանողին զանց առնել կամ ընդ աղօտ նշմարել զիրս, որք ընդ յերկուանօք արկանեն զնա . և զայնս միայն յառաջ բերել, որք օգտեն նմա ըստ պայմանի իննդրոյն իւրոյ : Զոր լուել հնարաւոր իցէ, զայնս ընդ լոռութ ծածկեցէ . որ ինչ նպաստաւորն է ոստիին, հարեանցի յիշեցէ . յստակ պատմեցէ զօդտակարսն, ընդարձակեցէ և զօրացուցէ . և յամենայնէ որ ինչ խոչընդուն է նմա, տեղի տուեալ մեկնեցուն, միայն պատճառ նորա խնդրի : Եռեք՝ զի և պարտ իսկ է զանց առնել զպատմութ, երբ վիսասակար իցէ և անօդուառ վնասակար է պարտաւորին, յորժամու ժխանել կարէ զանցն և ոչ ամբասիր կացուցանել զանձն. զի յայնժամ պարտ է զանց առնել զայնու՝ առ 'ի չծանրաբեռնել զդաստ իւր, և չանկանել ը ցասմանիւ ունկնդրաց . կամ որպէս վերագոյն աւանդեցաք, ցանեցիր սփռել 'ի կարգին զբասութեն, յարելով 'ի մի յայնց մասանց և զօդասագովութիւնն և զպատճառ գործոյն թէ էր սակս արար . որպէս զի ցաւոցն և զդարմանն մօտ դնիցէ : Աւելորդ է պատմութիւնն, եթէ պատմեալ իցէ կանիսաւ 'ի հակառակորդէն, և ինքն դատաւորն գիտակ իցէ իրացն . միայն թէ զիտիցէ դատաւորն ըստ այնմ եղանակի՝ ըստ որում ատենաբանին օգուտ է . ապա թէ ոչ, պարտ է նմա

Մարթ է երբեմն զանց առնել զպատմութիւն, եթէ նիւթն առաջարկեալ ոչ ինչ մատակարարէ, կամ եթէ դատն ծանօթ իցէ ամենեցուն, և միայն պատճառ նորա խնդրի : Եռեք՝ զի և պարտ իսկ է զանց առնել զպատմութ, երբ վիսասակար իցէ և անօդուառ վնասակար է պարտաւորին, յորժամու ժխանել կարէ զանցն և ոչ ամբասիր կացուցանել զանձն. զի յայնժամ պարտ է զանց առնել զայնու՝ առ 'ի չծանրաբեռնել զդաստ իւր, և չանկանել ը ցասմանիւ ունկնդրաց . կամ որպէս վերագոյն աւանդեցաք, ցանեցիր սփռել 'ի կարգին զբասութեն, յարելով 'ի մի յայնց մասանց և զօդասագովութիւնն և զպատճառ գործոյն թէ էր սակս արար . որպէս զի ցաւոցն և զդարմանն մօտ դնիցէ : Աւելորդ է պատմութիւնն, եթէ պատմեալ իցէ կանիսաւ 'ի հակառակորդէն, և ինքն դատաւորն գիտակ իցէ իրացն . միայն թէ զիտիցէ դատաւորն ըստ այնմ եղանակի՝ ըստ որում ատենաբանին օգուտ է . ապա թէ ոչ, պարտ է նմա

վերստին պատմել և շրջել զիրան յիւր կողմն, ըստ վերցյդրեալ կանոնաց :

Օրինակ առենական պատմութեառ առ նախնիս մեր գտանեմք 'ի դիր Կաղարոյ փարպեցոյ զպատմութեարշարի կատօնարականի 'ի գատաստանի ուրացելոյն Վասակայ 'ի հրապարակին Պարսից . ուր կարդաւ համառօտէ զբունագատել Պարսից զչայս յուրացութիք քրիստոնէութեառ, և զոոցա վեր 'ի վերոյ ուրացութին . զբագմօրինակ նենդութիս Վասակայ առ հայս և առ Պարսա, ամենայնի պատճառ դնելով զուրացեալն : Եւ 'ի յիշատակել զիոռամանկաւթիս նորա՝ ընդարձակէ զբանն մանրամասնաբար պատմութեամբ յականատես վկայից և 'ի վաւերական նորայն նամակաց՝ զորս ժողովեալ և իւրաքանչիւր կնքովն առ իւր պահեալ ունէր : Զայն ամենայն յատեան հանեալ նորաքաջայայտ ապացուցիւք, այսպէս աւարտէ զբանն . " Այնչափ բազմութեառ Պարսից և Հայոց կոտորածի . և աշխարհին կորսական եղել պատճառ : Եւ արդ ինքն զարդարեալ աւագիկ որպէս բարեգործ նատի 'ի միջի ձերում անհոգութէ : Բայց դուք զնամականից զամենայն, զոր գրեալ և կնքեալ է առ կայսր և առ ամենայն աշխարհն հռոմեաց և կամ առ այլս բազումս, տեսանել հրամայեցէք զայն . և որպէս ձեզ Արեաց կամ է, հրաման տուեալ կատարեցէք 'ի վերայ մեր : Զի ուր գրեալք և կնքեալք 'ի միջի են, որպէս ձեր արդարութիգ, աւելորդ բանից և շատիօսութեառ պէտք անդ ոչ են .. :

'ի ճառս' յորս ոչ է արժան պատմութիս առնել, վոխանտակ այնր օրէն է կարդել զբացատրութիս նիւթոյն առաջամրկելոյ . որ ըստ վերոյգրեալ կանոնաց լիցի համառօտ, պարզ, ճշմարիտ, քաղցր և աղաս 'ի սեթեւթից :

ԳԼ. Ե.

ՅԱՂԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ և ՏԵՂԵՐ (*) :

ՆԱԽԱՏՈՒԹԻՒՆ, է մասն ճառին, յորում առենարանն ապաստ բանականս 'ի մէջ բերելով հաստատել և ամրապնդէ զրայն իւր: Սա նախապատիւ և կարեռը մասն է ճարտասանական արհեստիս. վասն զի 'ի սիմն է տեսանել զուժգնութիւ և զցօրութիւ ճարտարխօսութէ, առանց որոյ անհնար է հասանել կատարածին. և ամենայն նախօննեաց և հետեօրդ բանիք առ 'ի սոյն կարգեալ են: Զի որպէս մարթի իցէ նմա ամքել զուտոս 'ի ճշմարտութիւ բանից իւրոց, առանց 'ի մէջ բերելոյ փաստ և պատճառս 'ի յաղթահարել զնոսա, և 'ի հաստատել զոր ինչ յանձին կարաւ ցուցանել: Քանզի, որպէս ասէ կիկերոն, յորժամ ըզ փաստս մեր 'ի հանգէս հանցուք և զներհականն քակտեսցուք, անդ լրիւ իւրով բովանդակեսցուք դատենարանութէն սպասահարկութիւ: Վասն զի և գործ ճարտասանութէ, որպէս յոլով անգամ ասացաւ, այս է, ողոքել և բռնադատել զմիտս և զիամս ունկնդրաց 'ի խելամառութիւ ճշմարտութէ և ուղղութիւ բանին իւրոց. և սովոր սպիտեալ և զկամն նոցա, յօժարեցուցանել զնոսա 'ի կատարել գործով զթելաց դրեալն բանիւ:

Առ այս հարկաւոր է զիտել զՏեղիս ճարասանութէ, և ասին աւղիք՝ Ըստմարանիք ձեռնարկութէց, յորոց առնու փաստարանն նիւթ բանից ըստ իւրաքանչիւր պիտոյից: Զճարտասանական տեղեաց զօդուտն և զահ 'ի գործ առենարանին թէպէս ունանիք առ ոչինչ գրեն, սակայն անաշառ իմաստափրութիւ ակնարկեալ յիսկութիւ միոյ միոյ 'ի աեզեացդ՝ ատե-

* Յն. - Բէթօւատիւ. լու. Confirmatio. Դարձեւ անունն յայն պհապաննեն ըստ Աբիստութէլի Պիստիւ, որ է հաստիք, հաստորմութիւ:

Յն. - Τόπος. լու. Locus. ըստ յանական յայնիւ՝ Topica անունն գիւր կիկերոնի, որ յաղի ճարտասափրութիւ բեղիւ:

Նարանն արտաքոյ սոցին ոչ այլ ուստեք գտանել ունի
Նիւթ պերճախօսութեն : Վասն զի առ ՚ի գիտել զա-
մենայն խնդրոց զրոպէն և զդիարդն , պարտ է զիսկն
դործոյն քննել իմաստասիրաբար , և սահմանել զայն :
Ամենայն գիտուած և դործ ՚ի մասունս իւր բաժանի ,
և ահա թուարկութիւ մասանց : Ամենայն դործ ունի
զննանե և զներհակն , զպատճառն , զզուդընթաց
հանդամանս և զհետեօրդն . Թողում զայն ամ ,
զվեայս հաւատարմացուցիչ անցելոց և զայլ
ամենայն արձանագիրս իրացն ճշմարտութեան : Այս
ամենայն , որ յամենայն դործս՝ որ զինչ և իցեն՝ Ե-
րեխն և Ճշմարտին , ոչ այլ ինչ են՝ բայց նոյն իսկ հար-
տառանական տէզիք , յորս արդ ձեռն արկանեմք ա-
ւանդել : Եթէ զընախր ընախր ճառս կիկերտնի ՚ի
վերլուծութիւ մասուցես , գտանես զայնս քաղեալ
բովանդակ ՚ի աեզեաց տատի , և ճոխացոցեալ պեր-
ճախօսութիւ :

՚ի տեղեաց են՝ որ ներքին Են , և Են՝ որ արտաքին .
զներքինս արհեստականս կոչեցին ումանիք , իբր զի ոչ
ինքնին ՚ի յայտ բերեն զփառասն , այլ ճանապարհ
հորդեն և ուսուցանեն զեզանակ գտանելոյ փաստ :
Իսկ արտաքինքն անարտուեստք կոչին . քանզի ՚ի յայտ
բերեն ինքնին զապացոյց , յորոց ատենաբանն անաշ-
խատ առնու զիզարեորս : Ըստ այսմ առէ Կուինտիլիուս
նոս . “ Զոմանս ՚ի ձեռնարկութեց՝ արտաքոյ բանին
առնու ատենախօսն , և զայլս ՚ի նիւթոյ բանին յա-
ռաջ բերէ , և դողցես իմն ծնանի . վասն որոյ զառա-
ջինս անարտուեստս անուանեցին , և զսոսա արուես-
տականս , ” :

Բազումք բազմորինակ թու.Են զներքին տեղին ըստ
զանազանութ նիւթոց , յորոց է քաղել ձեռնարկու-
թիս . մեք յինն բովանդակեսցուք , որ Են այսոքիկ .
Սահման , թուարկութիւ մասանց , Սեռ և Տեսակ ,
Նախրնթաց և Հետեօրդ հանդամանիք , Յարակիցք ,
Պատճառք և Գործք , Նմանութիւ , Կերհականիք , և
Բաղդասառութիւ :

ՊՐԵՎԻ • Ա.

Յ-Ղ-ԱԳ- Ա-Հ-Ա-Խ- (*) :

Ա Բ Ժ Ե Խ Ն Ա , Է յ ա ռ ա թ ք ա ն զ զ ա մ ե ն ա յ ն գ ի տ ե լ Տ ա ր տ ա ս ա ն ի ն , թ է գ ի մ մ է բ ո ւ ռ ն հ ա ր կ ա ն ի ց է Տ ա ռ ե լ . զ ա ս ն ո ր ո յ ա ռ ա ջ ի ն խ ն դ ր ե լ ի ն է , գ ի տ ե լ զ բ ն ո ւ ի ի ր ի ն , զ ո ր մ է բ ա ն ն է . և ա յ ն խ կ է Ս ա հ մ ա ն , ա ռ ա ջ ի ն տ ե զ ի Տ ա ր տ ա ս ա ն ո ւ թ ե ա ն : Ա ռ ա ն ց ա յ ա ր բ ա զ ո ւ մ ա ն դ ա մ խ ո տ ա ն լ ի ն ի ն Տ ա ռ ն ո ղ ո յ ն , զ ի զ ր ա ն ս ա ս ո զ ի ն ո չ խ մ ա մ ք ը լ ո ւ լ բ ա ն ի ց ն , ի ն ս ո տ ա խ ս բ ա ն ա կ ո ւ ի մ ք ը : Ա պ ա ս ա հ մ ա ն ն է բ ա ս Դ ա ս թ ի Ա ն յ ա զ մ ի ն բ ա ն կ ա ր Տ ա ռ ո ւ յ ա յ ա ր ի ց ի ր ի :

Ը ա ս կ ա ն ս ա ն ա ց ա ր ա մ ե ր ա ն ի ց , պ ա ր ո տ է բ ա զ լ կ ա ն ա լ ս ա հ մ ա ն ի ն ՚ի մ ե ր ձ ա ւ ո ր ս ե ռ է , և ՚ի յ ե տ ի ն զ ա ն ա զ ա ն ո ւ թ ե ն է . ա յ ս է ց ո ւ ց ա ն ե լ զ օ ւ ռ ն է կ ա մ զ ա ն ա ս ա կ ի ն մ ե ր ձ ա ւ ո ր ՚ ը ն դ ո ր ո վ ի ր ն ա յ ն պ ա ր ո ւ ն ա կ ի ն , և զ զ ա ն ա զ ա ն ո ւ թ ի ն ՚ ո ր ո ր ո չ զ ն ա յ ա յ լ մ է ա մ ե ն ա յ ն է ա ն ե կ ե լ ո յ ը ն ո վ ի ն ս ե ռ ի ւ կ ա մ ը ն դ տ ե ս ա կ ա ն ա լ ո ւ յ ա ն է : Ը ա ս ա յ ա մ պ ա տ շ ա ն ա կ ա ն ս ա հ մ ա ն է մ ա ր դ ո յ , կ ե ն դ ա ն ի բ ա ն ա կ ա ն ն : Վ ա ն զ ի պ ա ր փ ա ս կ ի ն մ ե ր ձ ա ւ ո ր ա պ է ս ը ս տ կ ե ն դ ի ն ՚ի ս ե ռ ի կ ե ն դ ա ն ն ե ա ց . և բ ա ն ա կ ա ն ո ւ թ ի ն զ ա ն ա զ ա ն ե ն ա լ զ ա ս ո ւ ց ա ն է զ ն ա յ ա յ լ ա մ ե ն ա յ ն ն կ ե ն դ ա ն ն ե ա ց է զ ա յ ա մ պ ա տ շ ա ն ա լ :

Ա յ ս է զ ա ն ա կ ս ա հ մ ա ն ն ե լ ո յ , փ ի լ ի ս ո վ ի ա յ ի ց ս ե լ ի ս կ ա ն ե ա լ է . ո ր բ խ ն դ ր ե ն մ ի ա յ ն զ է ա կ ա ն յ ա ս տ կ ե ո ւ թ ի ս ի ր ա ց հ ա մ ա ռ ո ւ թ ու ո ւ ց ա ն ե լ . խ կ Տ ա ր տ ա ս ա ն ն ա ռ . ՚ի հ ա ւ ա ն ե ց ո ւ ց ա ն ե լ և շ ա ր ժ ե լ ո չ շ ա ս հ ա մ ա ր ի զ ա յ ս ա ն ս պ ա մ ո յ ն ս ա հ մ ա ն ն , ա յ լ ը ն դ լ ա յ ն ն ե ա լ ծ ա ւ ա լ է զ ա յ ն , յ ա ռ ա թ թ ե ր է զ պ ա տ մ ա ռ ա մ ն , զ զ ո ր ձ ս , զ ր ա զ կ ա ց ո ւ մ ա ս ո ւ մ ս , և ո ւ ր է բ փ ի ս ա կ ե ր պ ո ւ թ է բ , ո ւ ր է բ ն մ ա ն ո ւ թ է բ , ո ւ ր է բ ն ե ր հ ա կ ա ն օ ք ջ ա ն ա յ բ ա ց ա ս ո ր է լ ո ր ի ն է ս տ ո ր ա գ ր ո ւ ի գ ի ւ ր ի մ ա ց ա մ ե ն ե ց ո ւ ն . և ա հ ա ա յ ս է , զ ո ր ա ն ո ւ ա ն ե ն Տ ա ր տ ա ս ա ն ի ը Ա դ ա բ ա դ ա ի ա ն ս ա ն ն : ՚ի ս տ ո ր ա գ ր է լ ը ա յ ա մ օ ր ի ն ա կ ի զ բ ն ո ւ ի ի ր ա ց , գ ի ւ ր ա գ ր յ ն է խ մ ա ն ա յ լ թ է ք ա ն ի մ ե ռ ն ա ր ի ո ւ թ ի ք յ ա

ռաջ գոն առ ՚ի ցուցանել թէ արդեօք դուլլի՛ իցեն
իրբն թէ պարսաւելի, ողտակար թէ վնասակար, առառ
թէ ճշմարխտ . և սովորն պայման ինդըոյն ը միոյ յերեց
դլուցն՝ զոր յանձին կալեալ իցէ՝ քաջ ՚ի յայտ դայ :
Ահաւասմիկ զվերոյեղեալ արամարանական ասհման
մարդոյ կիմկերոն այսպէս ընդարձակէ ստորագրակա-
նաւն . ։ Կենդանիս այս նախառակո, արթուն, բաղ-
մասխորհուրդ, ուշիմ, յիշատակող անցելոց, լիահանքար
և զգօն, զոր մարդն անուանեմք, պամչելահրաշ
տարազու ստեղծաւ ՚ի գերագոյակն այ : Քանզի նա
միայն ՚ի բովանդակ ազգէ կենդանեաց և ՚ի բնու-
թեանց հազրոդ է բանի և խորհրդոց . առ որով այլք
ամենեքին անբաժ են այդմ : Զի զի՞նչ, ոչ միայն ՚ի
մարդն՝ այլև ՚ի բովանդակ երկնի և երկրի, գերագոյն
քան զբան կայցէ . ։ :

Երեք կանոնիք են սահմանաց . առաջին՝ համառօ-
տութիւն, ոչ փիլիսոփայականն՝ այլ որ ոչն ձգեոցի
անգր քան զպայման, և մի աւելորդ իրս արտաքրոյ բա-
նին ՚ի մէջ բերցէ : Երկրորդ՝ պարզուի, որով յան-
ազօտ բացայայտութիւն հանցէ զիրն՝ զոր սահմանէ :
Երրորդ՝ յատկութիւն, զի նման միայնոյ պատկանեցին
ստորագրութիւնն, և մի այլում բնաւ : Զոր օրինակ
եթէ սահմանել ոք կամիցի զծով յառաջ բերելով ըզ-
տարածութիւն նորա, զիսորութիւնն, զլուծականութիւնն,
սորբին չեն յատկութիւք ծովու գատուցիչք յայլմէ ա-
մենայնէ . այլ պարս է բացայայտել զկուտակութիւն
ջուրց նորա, զաղիսութիւն, և որ ինչ ըստ այսմ կարդի
յատկութիւք են նորա :

Ըստ կանոնացս այսոցիկ Սարդիս վարդապետ (ա-
Յան . Է .) կամեցեալ համարուն երևեցուցանել ըզ-
կոստակաշտութիւն ընդ արծաթսիրութիւն, սահմանէ զա-
տարար զերկուին, առ ՚ի նոցունց յառաջ ածել զա-
ռաջարկենալն . ունելով բանին այսպէս . ։ Աղէ՝ տես-
ցուք եթէ զինչ են կուռքն, եթէ ոչ յոսկուոյ և յար-
ծաթոյ ուրուական պատկերս կանգնել . և զինչ այլ
է պաշտօն նոցա, եթէ ոչ աիրելն զնոսա և երկիրսկա-
գանելն իբրև այ : Եւ ոչ միայն յոսկուոյ և յարծա-
թոյ դու զկուռումն ՚ի պայծառագոյն նիւթոցն և ՚ի
զարմանալեաց տգէտ մարդկանն, այլև յայլ ինչ վատ-
թարագոյն նիւթոց, պղնձոյ ասեմ և երկաթոյ, ՚ի
քարանց և ՚ի փայտից, ուստի զմեռելոտի պատկերան

քանդակեալ՝ պաշտօն նոցա մասուցանէին։ Արդ ոչ
ապաքէն նկարագիրը ունիք էին, որոց նորա զերկըր-
պագութին մասուցանէին։ Զի՞նչ այլ ինչ է ուկին,
որ 'ի մէնջ պատուի և պահի, քան զպատկեր թագա-
ւորական՝ որում մէքն կամք 'ի ծառայութեն, և զո-
հեմք՝ ոչ զուսուերս և զբաներս, այլ զհոգի և զմար-
մին։ Զմինն 'ի հոգս և 'ի ծուփս մասէլով։ իսկ զմիւսն
'ի չարազար ծառայութիս մեռուցանելով։ Հոգովքն
վարակեալք անհանգիստ 'ի տուէ և 'ի գիշերի, ամե-
նեցունց առելի գորով և թշնամի։ և քան զգազան
մի չար և անընտել ագահութքն երեւի։ Տեսե՞ր զագա-
հութեն կռապաշտուի։ քանզի որ ունինն զնա՝ զած
ընդ մամոնայինն վոխանակեն, որպէս յայնժամ ապե-
րախոն խրայէլ ընդ որթուն յանապատին,,։

Կիկերոն 'ի հրաշանառան այսպէս սահմանէ պերճ
բանիւ զմեծատունն և զաղքան։ « Ո՛վ իցէ մեծա-
տուն, կամ զո՞ արժան իցէ կոչէլ։ Ինձ մեծատուն
թուի այն, որում է ճոխութիւն բաւական յաղնուա-
կան վայելս կենաց։ որ ոչ ինչ առելի ինդքէ, ոչ ի-
միք փափաքէ, և ոչ ըզձանայ իմիք։ Միտք քո զքեզ
մեծատուն համարեսցին, և ոչ բանք մարդկան, և ոչ
ստացուածք քո։ մի ինչ քեզ պակաս դրեսցի, և մի
առաւելագունից ակն դնիցես։ Եթէ իցեն քեզ ինչը
բաւական և լցցին պէտք քո, շատ է, և մեծատուն ես։
սպա թէ առ այնագ ցանկուել ընցից՝ ոչ ինչ 'ի շահից
խոտան համարիս, և հանապազօր նենդէս, պատրես,
պահանջնս, դաշինս կռես, կորդես, և յափշտակես,
Եթէ զընկերսդ մերկես, թէ զգանձնն կողովալես, թէ
բարեկամացդ կտակի ակնկալեալ մնաս, այդ ամ ոչ
մեծատան՝ այլ կարօսելց նշանակք են։ Զմիրտ մար-
դոյ մեծատուն անուանեմք, և ոչ զարկեզ նորա։ զի
թէ և արկեզք լցեալ իցեն քո, այլ յորժամ զքեզ
դատարկ տեսանեմ, ոչ ևս մեծատուն կոչեցից զքեզ-
զի դովին, որչափ շատ իցէ առն իւրաքանչիւր, չափի
ճոխութեն պայման։ Ո՛վ անմահ ած։ ոչ իմանան
մարդիկ՝ եթէ որպէս չափաւորութի գիտէ առաւե-
լուլ զեկամուս։ Հահի ոմն 'ի կալուածոց իւրոց վեց
հարիւր դահեկանս։ իսկ ես յիմոցն հարիւր։ Կմա՝
որ ոսկեձեղուն յարկս կանգնէ 'ի գիւզս, և յատակս
կձեայս, նկարս, արձանադիրս, և որ կարասէ օք լր-
նու զոււնն, և անբաւուել զգեստուց փափաքող է,

ոչ միայն ամենայն ծախքն անհամեմատք են ընդ մոից
կալուածոցն , այլ և ընդ առկոսիսն : Խակ յիմոց գոյզն
մտից 'ի բաց հանեալ զծախս փափաքանաց իմոց , տա-
կաւին յաւելու : Արդ ՞ յերկուցս մեծատուն իցէ .
որում պակասէ՞ն , թէ որում առաւելու . ովէ որ կա-
րօտն իցէ , և ով որ յդփացեալ . այն , որոյ որչափ յոր-
դեն ստացուածք՝ զաւելին խնդրէ , թէ նա՝ որ իւ-
րովքն լիացեալ է : Ոչ թուով համարոյ , այլ 'ի սեղա-
նոյն և 'ի հանդերձանացն սահմանի հարաստ թեանն
չափ . ցցանկալն՝ մեծութիւն է . չծախսելն՝ եկամուտք
են , բաւականութիւն՝ մեծ և հաւասարի ճոխութիւն է :
Ապաքէն Եթէ քաջածանօթք իրաց իրաց՝ մեծադին
համարին զմարգս և զանդասամանս , զի ստացուածքն
այն բնաւ ոչ տպականին , ապա քանի առաւել հա-
մարեսցի առաքինութիւն որ ոչ յտփշտակի և ոչ յտ-
դարս վարի , ոչ նաւաբեկութք ծախսի և ոչ հրկիղու-
թք : ոչ միրկաց և ոչ ժամանակաց այլայլութք ա-
պականի . որովք որ միանդամ ճոխացանն՝ միայն նոքա-
եղէն մեծատունք , զի նոքա միայն 'ի ձեռին ունին
զպտղարերսն և զյաւերժականս . միայն նոքա շատա-
նան որովք 'ի ձեռին ունին . զի այս սեփական է հարըս-
տութեան : Հատ համարին զոր ժառանդէնն , փա-
փաքէն և ոչ խմիք , անկարօտք են , և պակասէ ինչ
ոչ նոցա , և բնաւ ինչ ոչ խնդրէն : Այլ յանմատցն
և յընչաքաղցից , որոց կեղակարծ և ըստ դիպուածոյ
միայն է ճոխութիւն , և միշտ առաւելագունին 'ի խըն-
դիր են , ոչ ոք է 'ի նոցանէ որ շատանայ 'ի ստա-
ցեալն : Զնոսա ոչ միայն թափուրս կոչել արժան է
'ի մեծութենէ և 'ի ճոխութենէ , այլ մանաւանդ ար-
նանկս և աղքատս , : Աւասիկ երկոքեան ևս Սարդիս
վարդապետ և կիկերսն , գեղեցիկ ձեռվք և փոխակեր-
պութք և հանճարեղ իմաստիւք զարդարեն զանդիմ
զայս ըստ կանոնացն ընդլայնման զորս եղաք 'ի վերոյ :

ՊՐԱԿ Բ .

Յառաջ թափուրս ճառանց :

Ճառաջ թափուրս ճառանց 'ի համար բերէ զմա-
ստնս՝ յորոց բոլորն բովանդակի . որպէս զի յայտ առ-

նելով որ ինչ պատկանի միոյ՝ ի մասանցն, զբոլորէն տացէ իմասնալ։ Այդ բաշխէ զցուցանելի առաջարկութին յամենայն մասունս իւր խակականս կամ՝ ի մասւորականս։ Եւ լինի բաշխութին ըստ իրաց իրաց յայլեացլ նիւթօ՛ յորոց իրն կազմեալ է, ՚ի տեսակս իւր զորս ընդհանուր տարածութին իւրով ընդ նեքեամբ բռվանդակէ, ՚ի պատճառուն զանազանեալը՝ յորոց յառաջ դայ, ՚ի գործս՝ զորս առնէ, ՚ի ժամանակս՝ յորս իրն այն լինիցի, և յայլ հանդամանս, և առ հասարակ յամենայն ինչ, որ իւիք կցորդին ընդ առաջարկեալ նիւթոյն։

Երրեակ կանոնք են թուարկութէ մասանց։ Նախ՝ յայնչափ մասունս բաշխնել որչափ յօդք իցեն և մանրանառունք իրացն, և մի տարրապարտոց ճղջմելվան զի յառաջբերութի մանրիկ իրաց ոչ ինչ աղդումն տայ։

Երկրորդ՝ զնման և զհամարուն մասունս առ միմեամբք գասաւորել, զի ուժգնուի հետևութէ նոցազօրագորդոյնս աղդիցի։

Երրորդ՝ մի կրկնել զնոյն մասն, թէ և այլովք բանիւք զի տաղտկացուցիչ է։ Ըստ կրկնի օրինակաց, որով մարթ է ՚ի թիւ արկանել զմասունս, կրկնակի կազմի ձեռնարկութի յայսմ տեղւոյ։ Առաջն՝ ՚ի մէջ բերելով զամենայն մասունս, կամ գէթ զամբողջականս, զի նոգոք հնար է զբոլորն ընդունելի ցուցանել։ Երկրորդ՝ մերժել զամենայն զմասունս, որով ինքնին մերժի բոլորն։ բանզի յայտ է թէ ուր մասունքն բովանդակ ՚ի բաց հերթին, անդ և մարմինն և բոլորն։ զի բոլորն ՚ի մասանց բազկանայ, իսկ ՚ի քականել մասանցն, ոչ ևս մնայ բոլորն։

Օրինակ առաջնոյն, ՚Նարեկացին (Էջ.) նաւու նման նեցուցեալ զհոդի իւր, այլաբանութիւն ՚ի թիւ արկանէ զաղէսոս վասնեցելոյ նորա յերեսաց ալեկոծութէ։ ՚Մինչդեռ չուեի ես յանհոդուե անտարակոյսն վրատահութիւ, դոյզն կասկած արկածից ՚ի միա բերելով առ խարոց փորք միջոցին, որ ՚ի մէջ հանդսանեանն և աշխատութիւն, իբր այն թէ համեալ իցէ ձմեռն յամարայնի, ըքարեր հողմով ժամանեալ երեքալեանն գիմակցութիւ, ամբոխեաց զհանդարտութիւն։ Ուստի նաևն ՚ի բախմանէ վայրենի ալեւացն խորտակեցաւ թուոյն ձեռնարկութիւ քայքայեցաւ, կայմն ամբառձ-

ման 'ի կայից իւրոց խլեցաւ , առագաստին թռչարան յանկարկատելի ծուէնս պատառեցաւ . շնուռածոյն շուք անզարդեցաւ , առասանք ձգողականացն խզեցաւ , աեսարան դըմոյն դիտակի խոնարհեցաւ , արդաւանդակին պարան կտրեցաւ , ապաւինութիւն խարսխին լուծաւ . լուծք ստուարք ամողիցն կցորդութե բաժանեցան , սամիք ուղղացն հետոց գալարեցան , լուստ հիմանն հաստարանի ընկղմեցաւ , զեկացն կառուցմունք անդրէն սուզան . լուսցն յարմարութիւն պակասեցան , ողնափայտին պատապարան խկոյն բեկաւ , կապարանք զտտին հաստուածոյ յօշտեցաւ , գողք ամփոփման ծոցյն կազմածոյ անարդեցան , խելք շրթանցն եղերաց խախտեալ ոտտեաւ . պաղպաջունք բազմականացն անկեալ բարձաւ , վանդակապատին վայելըութիւն յատակեցաւ , գահաւորակին հանդստարանն շփոթեցաւ , մածմունք տախտակաշարք 'ի միաբանութեց միմեանց անջատեցան , հեղոյոք պնդման բեկուացն քարշեցան : Արդամիք իրին՝ յիշատակարան ողբոյ ինձ նմանեցաւ : Կաւուղիղն հանդեպ նաւին դեգերեալ ողբայ , ձեռն 'ի ծնօտի եղեալ՝ արտասուաց գետս իջուցանէ ... :

Դարձեալ և Դրիդոր ածաբան 'ի մկրտութե ճառին 'ի թիւ արկանէ շքեղ բանիւք և քաջարուեստ ընդլայնմամբ զամենայն հասակ մարդկան և զամենայն վիճակ , յորս պարս է մարդոյ կռուել զհոգեւոր մարան ընդդէմ սատանայական հնարից . ասէ . “Մեծամեծք են , յաղագս որոց պատերազմիս . մեծամեծաց պէտք են քեզ և ամրութեց : Առաջի արկ զվահանն հաւատոյ . երկնչի 'ի քէն հանդերձ զինուն մարտնչէլ , վասն այնորիկ մերկացուցանէ զքեղ 'ի շնորհէն , զի բմբռնեսցէ դիւրաւ անզէն և առանց ուահպանութե : Զամենայն հասակէ բուռն հարկանէ , զամենայն տեսութէ կենացս . յամենայնէ պարտեսցի : Մանուշէկ ես . ընդդէմ կաց ախտիցն , հանդերձ մարտակցաւն . յայ 'ի գունդն թուեսցիս : Կահատակեցիր ընդդէմ Գողիագայ , հար զհազարս կամ զբիւրս . յայնպիսի հասակի վայելեաւ , այլ մի ներեսցես թառամել մանկութդ՝ անկատար հաւատով մեռեալ : Ծերունի՞ ես , և 'ի հարկաւոր ժամադրութին մերձ . 'ի յաշեացդ պատկառեա , տուր զոր սպահանջիս զիմաստութին՝ փոխանակ ընդ որոց ունիս այժմ զմտա-

կուրութիղ . սակաւ աւուրցդ օգնեա , հաւատաւ ծերութէդ զմաքրութիղ : Ընդէլը երկնչիս 'ի մանկութէն և 'ի ծերութէն և 'ի վերջն շունչդ , և կամ դու մնաս մեռեալ լուանալոյն , զի առաւել ողորմելի լիցիս քան թէ տանիք , և կամ հաւանիս հեշտութէց նշխարաց՝ որ կենաց նշխար ես : Գարըշէլի է հասակաւ զառամանալ , և ոչ զառամանալ 'ի պակշտութէնեն , այլ եամ ախտանալ զայնոսիկ և կամ կարծիս տալ յազգագո հանգերձելոյն առ մաքրութին : Տղայ է քեզմի առցէ ժամանակ չարութն . 'ի ազայուեն սրբեացի , ինսուսութէն նուիրեացի Հոգւոյն : Դու երկնչիս 'ի կնքոյն յազգագո տկար բնութէդ , իւ բերրի փոքր ևս մայր և սակաւահատ . բայց Աննու նախ քան զննանելն խոստացաւ և նուիրեաց այ , և ծնեալ քահանաց վաղվաղակի եղանէր , և քահանայական զգեստու որ նոց . ոչ 'ի մարդկայնոյն երկեաւ , այլ այ հաւատաց Ուինչ պէտք են քեզ հմայից և յուռթաց , և որ չար 'ի ներքս մնանէ զողանալով յինքն յայ զբարեպաշտութին , և թեթևամուացն առա նմա զերիտատարդութէն զմեծութն պահպանարան : Եթէ տակաւին ևս կուսուք նահատակին , մաքրութք կնքեցիր , զաս արա կենացդ հազորդ և հատակակից , սա յարմարեացէ քեզ և զվարսդ և զբանն , զամենայն անգամն , զամենայն շարժումն , զամենայն զգասառութիդ նմա հաւատաւ , զի զքեզ զարդարեացէ և առացէ զլիսոյ քում պատկ շնորհաց , և պատկաւ փափկութէ պաշտպանեացէ զքեզ : Կապեալ ես ամուսնութք . և կնքովս ընդ նմին կապեցիր : Զսա բնակեցո ընդ քեզ , զողջախոհութն պահպանս . քան զողպանս ներքինիս . քան զորչափ զգրունս ամրագոյնս ևս իցէ . ոչ ևս ը մարմնոյ հազորդեցեր , մի երկիցես 'ի կատարելութէնէս . մաքրուր ես և յետ ամուսնութէն : Իմ է վտանգն . ես եմ յարդարիչ , ես զվեսայդ զքեցուցանող , ոչ վասն զի կուսուին պատաւականագոյն՝ յանարդագոյնս իցէ ամուսնութին : Նմանեցիր Քրիստոսի սուրբ փեսայածուին և փեսային , որ և պքանչելագործէ 'ի հարսանիսն , և պատուէ զամուսնութին . մերձաւորութին հարսանիքն և Եթ լիցին պատճառք , և աղաեղի փափագանաց անընդունակք : Զմին միայն իննդրեմառ . 'ի պարզես զամրտին . և առուր պարզեին զարդութին . 'ի դէպ ժամանակի , մինչ դեռ աղօթիցն ա-

ռաջի հան գուշինք և պատուականադոյն պարապումն ։
Եւ զայս 'ի հասարակաց խոսառվանութենէն և յի-
մաստութենէ ոչ օրինադրեմ, այլ խրահեմ. և 'ի քոց
ինչ յազագս քո առնուլ ախորժեմք, և հասարակաց
մերոց զցուշութեց ։ Գլխաւորելով ասել. ոչ են ոչ
կեանք, ոչ գործք, որում ոչ է սա օգտակարագոյն ։
Ընկաւլ որ յիշեանութեղ ես՝ զանձս, որ 'ի ծառայ-
ութեղ՝ զուգտապատութեա, որ 'ի արտմութե՝ զմիւ-
թարութեա. աղքատդ՝ զանկապուտ փարթամութեա,
Տոխդ՝ զբարի որոց ունիս զմատակարարութեա ։ Մի
ինչ բայբազեսցես, մի ինչ արուեստաւորեսցես հա-
կառակ քո փրկութեղ ։

Օրինակ երկրորդին. «Ա ինքն Նարեկացին դար-
ձեալ 'ի թիւ արկեալ զամենեսին՝ յորս մարթ էր ա-
պաստանել Մանսաւէի յետ մեղացն, ցուցանէ զի և
ոչ առ մին հնար էր ապաւինել նմա. ապա ուրեմն զի
և խապառ հատեալ էր յակնկալութե ։ (Ճ՛՛.) Առ
ած ոչ գոյր դառնալ, զի ուրացեալ էր զնա. զԱր-
բահամ ոչ էր յիշել, զի խորթացեալ էր 'ի նմանէ .
Խարայէլիւ ոչ էր պարծել, զի տարագիր էր անուան
կոչմանն մեծախորհուրդն շնորհի ։ Զդաւթեան երդ
ոչ էր նուագել, զի կշտամբիչ էր նորին . 'ի քաւա-
րանն ոչ էր մերձենալ, զի պղծեալ էր զնա. 'ի տա-
պանակն ածագիծ ոչ էր ապաւինել, զի ընդ գարշու-
թե ձրւածուին էր վոխանակեալ. առ Ահարոն ոչ
էր տղաչել, զի վասասպարտ էր առ նա. առ մերձաւոր
մարդարէիցն գունդ ոչ էր գիմել, զի սպանող էր նո-
ցա ։ Ապա զհեա բերէ թէ այսպիսում մեղուցելոյ,
որոյ չկայր ուստեք դարման, ողորմեցաւ ած :

Շնորհալի հայրապեան մեր յատենաբանութե իւ-
րում յօրինակ բերելով զբոզմազարդ առաքինութեա
նախնի հայրապեաց, մի առ մի բերելով 'ի մէջ զկա-
րեոր առաքինութեա նոցա, յարէ խոնարհութեամբ
զնուազել իւր յիւրաքանչիւրոց անտի առաքինու-
թեանց :

Խտալացի ուն 'հռչակաւոր մատենագիր՝ դրելով առ
բարեկամմիւր, իրը անբաւական 'ի պատմել զարուիս
զօրագլիսի ուրումն՝ որոյ ոչ ինչ արարեալ էր 'ի
պնդրզմի, ասէ հենդնելով. ։ 'ի քանի պատերազմունս
գտաւնա, քանի գունդս հակատեցոյց, զըյս 'ի փախըս-
տականաց քաջալերեաց, զքանի թշնամեաց վատթա-

բեաց զջօրս, զիյս ոմանս դերի վարեաց, քանի աւարս
անկածս, կապուաս, դրօշս զինուորականս յառաջոյ
իւր խազացոց, քանի քանակս առ զթշնամեաց, քա-
նի գաւառս նուաճեաց. գու ինքն ասա. ասա գեթ
զմին, զի իմ և ոչ զմին լուեալ է. իսկ զո՞րն գրեցից ...:

ՊՐԵՎԻ Գ.

ՅԱՂԻՄ ՍԵՐԻ և ՏԵՇԻ:

ՍԵՐԻ ասի հայեցումն հանրականին առ բազում
զանազանեալս, զորս ընդ ինչեամբ բովանդակէ: Տե-
սակն պարունակի ընդ սեռիւ, իրրեւ մասն ընդ բոլո-
րիւ: Օրէն է ձեռնարկել ՚ի սեռէ և ՚ի տեսակէ, ՚ի
միջն անցանելով ՚ի միւսն - խօսել նախ զայնմանէ՝ որ
բազում ինչ պարունակէ ընդ իւրեւ, և ապա իջանել
առ մասնաւորն՝ որ սեցրական է առաջարկեալ խըն-
դրոյն: ցուցանելով զի որ ինչ յանկաւորն է հանրա-
կանին կամ բոլորին, հարկաւ պատշաճի և մասնա-
ւորին պարունակելոյ յայնու: Զոր օրինակ պարս է
պատկառ կալ արդարութե, քանզի և պարսիմք ուղ-
ղել զառաքինուի գլխովին՝ որ զայն ընդ իւրեւ ունի:

Այս տեղի առաւել յաճախեալ է, և է իրր հա-
սարակ տեղի. սակայն զցուշութի պահանջի մի՛ տա-
րապայման յերկարել զրանան ՚ի սկզբան անդ, զի մի՛
տաղտկուի տացէ լսողաց՝ մինչև մասուցեալ ՚ի նիւթ
առաջադիր բանիցն: Վասն որոյ չէ արժան ձեռնար-
կել ՚ի հեռաւոր ընդհանուր դիտելուց, այլ ՚ի մեր-
ձաւորաց. և այն համառօտիւ, զի դիւրաւ յաջողեացէ
՚ի մասնաւորն իջանել. և մի՛ անոն կազմել զրանին,
այլ ճարտարութեր ոլորել. որպէս զի թագուն կացցէ
արհեստն, և ազգեցութի նորա բացերեւ յայտնեացի:

Սարդիս վարդապէտ յընդհանուր վարդապետուէ
նածային բանից՝ այսպէս իջանէ ՚ի մասնաւոր վարդա-
պետութիւն Պէտրոսի առաքելոյ. (յաջը. ա. Պէտր.)
.. Բանք աստուածայինք ամենայնք արդիւնագործք
էն և շահաւորք. և ՚ի ձեռն քաջաց և առաքինեաց
ցուցանեն աշխարհի դուռղական ձայնիւ հարթ և
կազմ զակիզբն և զմէջն և զծայրն բոլորովին, յերեսս
բերելով լուսաձեւ յայտական տեսուած: Զոր այժմիկ

մեծն Պէտրոս արքեպահնարար ծաւալեցոյց 'ի միտա
մեր բան լուսափայլ առ ծնունդս իսկապէս բարւոյն :
աղբերն կենարար բղիմանն 'ի ծարաւի և 'ի մեռեալս
վայր մարդկացինս բնութել , տալ ամա մասն կենդա-
նութել . և մանաւանդ առնուլ զմեռեալն , և խառ-
նել 'ի կենդանութին : :

Աիկերտն յայսմ տեղոյ ձեռնարկէ 'ի ջատագովու-
թեն Նըրիայ քերթողի . ուր 'ի ներքս ածեալ զբաշու-
թի նորա 'ի քերթուածօ' որ իբր մասնական ինչ է ,
անսի 'ի վեր ելանէ 'ի գովեստ ընդհանուր քերթո-
ղութել . և 'ի նոյն յաւելու . "Նըրդ դատաւորք , մի
անսուրք ինչ գրեսցի առ ձեզ՝ որ մարդասիրութեամբ
պերճացեալդ էք՝ անուն այսր քերթողի , զոր ոչ իշ-
խեաց աղարսուլ երբէք խուժագուժ անդթութի :
Աէմբ որձաքարը և անսապտար պատասխանի տան
ձայնից . յոլով անգամ գաղանիք վայրենիք ողոքին և
հանգարսն 'ի ձայն երգոց . իսկ մեք հրահանգեալքս
'ի մարզս լաւագոյնս՝ ոչ շարժիցիմք 'ի ձայն քերթո-
ղաց : Կողափոնացիք քաղաքացի իւրեանց գրեն զհո-
մերոս , քիսացիք յիւրեանս ձգեն զնա . սազամինացիք
զնոյն երկրորդեն , և զմիւռնացիք ձայն բառնան՝ թէ
նոցա է . որպէս 'ի նմին քաղաքի անդրի կանդնեցին
նմա : Թողից և զայլ քաղաքս , որք ընդդ իրեարա զայն
մանէ մրցին : Արդ նոքս զայր օտարաւկան վասն բա-
նասաւեզութեն տակաւին և յիտ մահուն ինդրեն .
մեք զայրդ կենդանի , որ և կամօքն և օրինօք մեր է ,
'ի բաց մերժիցեմք .. :

Եղանակ ձեռնարկութե 'ի սեռէ առ տեսակն վա-
րի առաւել 'ի սկզբունս ճառից և 'ի յառաջարանու-
թիս , որով առենախօսին ճանապարհ հարդեալ ճա-
ռիցն , անարդել յառաջ խազայ 'ի նոյն :

'ի տեսակէ առ սեռն կամ յանհատից առ տեսակն
լինի ձեռնարկ , ծանուցանելով նախ զտեսակացն կամ
զմանականաց հանգամանս , և անսի անցանելով 'ի
լաւութի կամ յանպիտանութի , հանրաւկանին . և այս
առաւելապէս օգտէ առենարանին առ 'ի դլուիս հա-
նել զդժուարին ձեռնարկս . զի մի առ մի մերժելով
կամ հաստատելով զմասանսն , դիւրին է այնուհետե-
յարմարել 'ի նոյն և զընդհանուրն :

Աիկերտն 'ի ջատագովութեն Դէսոտարայ գաղատա-
ցոց արքայի , յուցեալ կեսարու մի ըստ միունչ զվաս-

տակս նորա և զմիամտութիւն, զհետ թերէ զջշմարտութիւնդ համար անուր առաջարկութեալ իւրոյ՝ թէ անիրաւ է թշնամի համարել զնա . . . Նա ինքն պօրա Դոմեափոսի զառնն երեւելոյ ընդ յարկոք իւրովք և իւրեան թոշակօք ինտմեաց . նա ինքն արծաթ յղեաց յեփեսս առ այրն, զոր դու ընտրեցեր յամենեցունց իբրև հաւատարիմ և մեծախորհուրդ . նա ինքն դարձեալ երկիցս և երիցս յաւել տալ դրամն ՚ի պէտս պատերազմիդ . նա ինքն ՚ի կշիռ վտանգին արկ զանձն, և ընդ քեզ միջամուխ եղեւ ՚ի ճակատամարտ ընդդէմ ժառնակայ . և զքո թշնամիդ՝ իւր թշնամի համարեցաւ : Արդ եթէ այնպիսւոյն խորհուրդ իսկ կազեալ էր սպանանել զքեզ ՚ի տան իւրում, անմարդ էր քեզ կասկածել ընդ նա . բայց եթէ ցնորեալ համարեիր զնա . . :

ՊՐԱԿ Դ.

Յաշակ Ռուսնեաց և Հետեորդ հանգամանաց :

Այս թագ կոչին անցք և դիպուածք, որոց հարկաւ զհետ դան այլք . իսկ Հետեորդք՝ զհետ եկեալ գործք, որոց հարկ է ունել սկզբնապատճառս : Զորօինակ ծագեաց արեւ, ապա ուրեմն տիւ է . զի անհնար է ծագել արեւու, և շառնել տիւ : Այսպէս և ՚ի հետեորդէն . տիւ է, ուրեմն ծագեալ է արեգակն :

Այս տեղի ազգովագոյն է, և մեծապէս օգնէ ՚ի կազմել հաւասարի դուշակութեք հզօր ձեռնարկուիս : Զի եթէ արգարեւ նախընթաց դործն եղեալ իցէ . անժխտելի է հետեորդն, եթէ հարկաւ և ըստ բնուել իւրում հետեւեցուցանէ զայն : Զի ամենայն գործ : Թէ բնական և թէ արհեստական, իբրև սկսանի ելանել ՚ի գոյ՝ հարկաւ կից իւր ունի զմեցն և զկատարածն . ապա թէ ոչ, ոչ անցք ասին այնք և ոչ գործ բնութեք : Արպէս թէ ասիցեմ . ՚ի խէթ և ՚ի թշնամութիւն վառեալ էր քո ընդ ումեք, և սպառնայիր դու նմա : Աւտօիկ նախընթագք : Ապանաւ նա, և

թագեար դու . ապա ընդ կտսկածանօք ես : Աւասիկ
հետեւորդք :

Քաշն վարդան յատենախօսութեան իւրում ըստ
այսմ օրինակի ցուցանէ 'ի նտիրնթացից զշետեանս
հարկի առ ած ապաւինելոյ իւրեանց : " Յերկուս և յե-
րիս կռիւս տէրն ինքնին մեծաւ զօրութեամբ օգնեաց
մեզ - որպէս զի զանուն քաջութեն ժառանգեցաք ,
զզօրսն արքունի չարաչար հարաք , և զմողմն անողորմ
աստակեցաք , և զաղծութի կռապաշտութեն 'ի աե-
զեաց տեղեաց որբեցաք . զանօրէն հրաման թագա-
ւարին եղծաք ապականեցաք , զխուվութիւն ծովուն
ցածուցաք . լեռնացեալ ալիքն դաշտացան , բարձրա-
դէզ փրփուրն պայթեցաւ , դազանացեալ սրտմառնն
դադարեաց : Ար 'ի վերայ ամսոց որոտայր , նկուն ե-
զետլ գտաւ 'ի ներքոյ քան զուվորական բնութին՝ ը-
մեզ խօսելով . :

'Ի հետեւորդաց յանդիմաննէ կիկերոն զայր ոմն սպար-
տաւոր 'ի սպանուե . ասէ . " Զի թէ նա սրով սպա-
նաւ , և դու թշնամիդ նորա ըմբռնեցար անդէն առ
տեղեաւն՝ արիւնամած սուր 'ի ձեռին , և ոչ այլ ոք
բաց 'ի քէն գտաւ անդ , և դատաստանս 'ի վերայ քո-
է , և դու միշտ ըմբոստ կաս , զի՞նչ այլ ևս երկրայելի
իցէ զքէն վասն եղեռնաւոր գործոյդ . :

ՊՐԱԿ Ե .

Յաշագու Յաշակից հանգանաց :

ՅԱՄԱԿԻՑՔ ասին այն ամենայն հանդամանք ,
որ թէպէտ ոչ հարկաւ՝ այլ սովորաբար զուգընթաց
դտանին յամենայն պատահարս : Զայսոսիկ 'ի ներքո
բերէ Տարտասաննն՝ քննելով զորպէսն գործոյն , զպատ-
ճառն , զաեղին և զայլ կարևոր հանդամաննն . որովք
սաստկացուցաննէ կամ նուազեցուցաննէ զգործնն : Այս
մեղի պատրաստէ ատենաբանին ասպարէզընդլայնե-
լոյ զբաննն , մանաւանդ 'ի պատմուիս իւրաքանչիւր
ինդրոյ . և յայտնագոյն ծանուցաննէ զպայման քանա-
կութե խնդրոյն : Զի 'ի կացրդականն մարդ է սովորմբ
մեծացուցաննէլ զերն ներբողելի , և յատենականս ար-
պատորագոյն ցուցաննէլ զծանրութի կամ զթէթ և ու-

Թի յանցանացն, և զօրացուցանել նովաւ զձեռնարկութին :

Յութ վերածին յարակից հանդամանք . յորոց գոնեայ կեսք գտանին յամենայն գործողութիս . և են այսոքիկ . Ավ . Զինչ . Ուր . Արտվ . Քանիցս . ընդէր . Զիարդ : Աշ . մատծէ զարարող գործոյն , զորմէ բաննէ . յորում յիշատակին վիճակ հայրենեաց նորա , տիոցն , ազգին , մնեցեանն , տարազու կենացն , վաստակոցն , հետապնդութեն , ճոխութեն , ևս և արտաքին կերպարանացն և զցեստուցն : Զիւ . քննէ ըղործն եղեալ , և զհետեանսն՝ որ յառաջ եկին անտի , օգուտ կմ իւաս : Աւ . զհանգամանս տեղւոյն յորում գործն կատարեցաւ . որպէս թէ սուրբ տեղի իցէ կմ անսուրր , հասարակաց թէ առանձնական : Արշ . զցործակիցն և զընկերս գործոյն : Վանիշ . զկըրկնուի խորհրդոյն կամ գործոյն : Ընտէր . զպատճառս և զառիթսն՝ որք յառաջոցոցիւ եղեն գործոյն . զի պատճառն զբազում իրաց այլափոխէ զկերպարանս : Զիարդ . զորպէսն գործոյն ցուցանէ , արդեօք կանոնիս դաւաճանութեք եղեւ թէ յանկարծ : Երբ . դժամանակն ցուցանէ յորում եղեւ այն . յարդելալ ժամանակի թէ ոչ . ի դէ՞պ ժամու թէ տարաժամու . ևն :

Տուղիոս կիկերոն 'ի միլոննան ատենախօսութեն 'ի տեղւոյնէ աստի հանէ ձեռնարկս առ 'ի ցուցանել թէ կղողիոս է դաւաճանն : Յանինէ նորա՝ Քանզի միշտ անզգամ դտաւ կղողիոս , ովլորեալ 'ի զցուել և 'ի նեղել զայլս : 'ի Գործայն . Քանզի ակն յանդիման ամենայն տեսողաց յարձակեցաւ 'ի վրա նր սպառազինեալ , որում բնաւ ոչ ակն ուներ Միլոն : 'ի Դեշտայն . Քանզի ընդ առաջ ել նմա յանձուկ ճանապարհի , ուր շուրջանակի դահաւանդք եին , և դիւրաւ կարեր ընկճել զնա : 'ի Գործայն . Քանզի կացուցեալ եր արա զինու վառեալս 'ի վերայ քարաժայոից , որք հարին զծառայս Միլոնի . ուներ և զայլս ընդ իւր , որք շուրջ պատեցան զկառօքն : 'ի Էրնստինէ իւրհետայն . Զի յոլով անգամ դարանեալ եր , և մահ սպառնացեալ Միլոնի . և զի կերպարանեցաւ իմն փոխել զճանապարհ իւր ընդ դալուստ նորա : 'ի պատճառէն . Քանզի Միլոն միշտ ամբարտակ ընդդէմ կանդներ չարուեալ խորհրդոցն կղողիոսի . և վասն այնր միշտ ատեցեալ եր 'ի սմանէ : Յեշանահին . Քանզի կղողիոս ընդդէմ

սովորութեաւը՝ 'ի վրը հանապարհին ել ը առաջ Միլունի, որ համօրէն ընտանեաք իւրովք փակեալ նստեալ էր 'ի կառաւ : 'ի Ճանաւուն . Զի չկային ինչ պատճառք զհանապարհաւն հանգիպելոյ կղոդիոսի յայնմ ժամու և 'ի տեղով, բայց զի դադանեալ մնայր հասանելոյ առելուոյն իւրոյ :

Ետեսանել 'ի գիրս իմաստութեաւ (Եւ 14.) զանցրանկածախ պատուհասն եգիպտացւոց յարակից հանգամանեցն չքնաղ նկարագրեալ : Ե՛րբ Մինչդեռ խաղաղութեն պատեալ էր զամենայն, և այն ինչ գիշերն իւրով արագութեն ընդմիջէր : Ա՛ւ Ամենազօր բան քո յերկնից յաթուոց ալցունեաց սաստիկ պատերազմող 'ի մեջ սաստակման երկրին հասաներ : Զի՞ւ Սուսեր պողովատիկ՝ զանաշառ հրամանդ քո բերեալ և 'ի մեջ անցեալ զամենեսին ընոյր մահուամբ - անդ առ երկնիւք քերէր, և այսր յերկիր հասաներ : Զի՞ւ Յայնժամ վաղվազակի ցնորք անհնարին երազոց խոռ վեցուցանէին զնոսա, և արհաւերք անկարծք 'ի վերայ հասանեին : Եւ այլ ոք այլուր անկեալ կիսամահ, վասն որոյ պատճառանաց մեռաներն՝ յայտ առներ : Ընդէ՞ր . Զի երազոցն խռովեցուցեալ զնոսա, զնոյն յառաջագոյն գուշակէին . զի մի յանգետս, վասն որոյ չարաւարն առնթէին, կորչիցին :

Յօրինակիս ինքնին տեսանե մտադիր ընթերցողն՝ թէ զկարդ զուգընթաց հանգամանաց մարթ է յետ և յառաջ տանելով փոփոխել, և ըստ կամն դասաւորել ըստ պահանջնելոյ վայելութե բանին . և զի ոչ միշտ հարկ է յամենայն յարակցաց առնուլ հաւատակիս, այլ միայն յորոց պիտոյ լինիցի :

ՊՐԵԿ Զ.

Յաշուա Պատճառաց և Գործոց :

ՊՐԵԿ ՅԱՇՈՒԱ է սկիզբն և առիթ գործոյ իրիք, և գործք յառաջ գան 'ի պատճառաց : Զայս իմաստամիրական զնուուի 'ի ձեռն առեալ նարտասանն, քննել զամենայն իրաց զպատճառս մանրախուզիւ, զի նոտին դիւրաւ խելամտեսցէ ամենայն գործոց . կամ ը հա-

կառակն ՚ի մրոցէ ՚ի միւսն անցանելով։ Զի երկուք այսորիկ, գործք և պատճառք, տաինչունակք են. և ըստ ընդհանուր օրինաց բնութմէ՝ միոյն քաջ քննութքնի և դտանի միւսն, և ուղիղ առնի դատաստան։ Արդ եթէ պատճառն բարի է, լաւ է և գործն. զի ծառ բարի՝ պատուղ բարի առնէ, և ծառ չար՝ պատուղ չար առնէ։ Եւ անդրագարձութք՝ ՚ի գործոյն լինի զպատճառն իմաստասիրել։

Այս տեղի մասակարարէ Տօխութի բանի և ընդլայնումն և ազգուութի փաստից, յառաջբերութք ամենայն նիւթոց՝ յորոց հանգամանք ինչ յաւելուցուն ՚ի գործն, լիազոյնս բացարեալ զսկիզբն իրաց և զհետեանս։

Ըստ այսմ օրինակի ՚ի գործոց առ պատճառն ձեռնարկելով իմաստեցյն, յանդիմանէ զանմտութի հեթանոսաց. (Խմառ, Ժդ. 3.) “ Ընդ որոց թէ ը գեղն զուարձացեալք՝ զնոսա ածս կարծիցեն, դիտասցեն՝ թէ որչափ ևս նոցա տէրն առաւել լաւ է. զի որ գեղեցկութէ արարչապետն է՝ նա հաստատեաց զնոսա։ Ապա թէ ընդ զօրութիս և ընդ ազգեցութիս զարմանայցեն, իմասցին ՚ի նոցանէն՝ որչափ ևս որ կազմեացն զնոսա առաւել զօրաւոր է։ Զի ՚ի մեծութէ և ՚ի գեղեցկութէ արարածոյն՝ ըստ նմին համեմատութէ և արարչապործն նոցա երեխ։ Բայց սակայն տակաւին և նոցա գոյ սակաւ ինչ մեղագրութիւնի և նորա թերես մոլորեալք խնդրեն զած, և կամին դտանել։ Ընդ գործս նորա յածեալ քննեն, և հաւանին տեսլեամբն՝ թէ բարւոք Են Երեւելիքս։ Դարձեալ և նորա ոչ Են ներելիք. զի թէ այնչափ կարսցին դիտել՝ զի բառական լիցին նկատել զաշխարհս, զոցա տէրն զիարդ ոչ դտին վազվազակի։”

Կիեկերոն ՚ի մանիլքան ճառին զՊոմպէոս ՚ի գործոց նորա գրուատէ, կըուելով զլաւութիւն առնն. “ Վկայ է խասլիա, զորոյ զազատուին և ինքն խսկ քաջայաղթն Սիլլա խոստովան Եղև. թէ սորուն քաջութք ել ՚ի դլուխ։ Վկայ է Սիկիլիա, որ ՚ի շուրջ պաշարելն բազմադէմ վտանգօք՝ ոչ ահարկութք պատերազմի ազատեցաւ, այլ արագամիտ հանճարով նորա։ Վկայ է Աֆրիկէ, զի որ նկուն լեալն էր ՚ի բազմութէ թշնամկաց՝ ՚ի նոցին ճապազիս արեանցն ներկաւ։ ... Արդ զանց զբաղմօք արարեալ, և ոչ օստարացն յարացու-

ցիւ հաւաստեալ՝ թէ որը զօրեացէ՝ ՚ի պատերազմին
առայս առաջնորդութիւն, ՚ի նմին խակ ՚ի Պամպէոսէ
ուստանել արժան է զօրինակս ամենայն քաջափառու-
թեց նորա : Զի յորժամ զօրագլուխ կարգեցաւ նա
՚ի ձենջ մեծի պատերազմին, համբարք ցորենոյ՝ որ
տակաւն էր և ծանրագին՝ յորդեաց առաւելութք,
միոյ միայնոյ ստնն համբաւով . զոր հազիւ ուրեմն
կարող էր առնել մշանջենաւոր խազազութիւն արդա-
ւանդ քաջաբերութք , :

Սարգիս վարդապետ ՚ի լուսեղէն խեկութէ Հօր յու-
ցանէ դէռեկցացն համարուն խեկութիւն . (Յակ. դ.)
“ Եթէ պատճառն ըստ է, ապա յայտ է թէ որ ՚ի
պատճառէն յառաջ եկին՝ ըստ են և նոքա . ոչ այլ
ըստ, և ոչ բաժանեալ և որոշեալ, այլ միաւորեալ և
՚ի միասին կացեալ մնացեալ , :

Յաճախագոյն ՚ի գործ ածի տեղիս այս ՚ի գովեսքո
և ՚ի պարաւաւ . քանզի գործովքն ճանաչի թէ որ
ովհան որ է : “ Աս և զած գլխովին ՚ի գործոցն ունիմք
խմանալ . իրը զի եղական և չափաւոր բնութիւն ոչ
այլազդ վերելս առնել կարող է յածութեն ճանա-
չումն, բայց ՚ի գործոց նորա ՚ի գործող անդր վերու-
նելով : Դարձեալ զի և գիւրին է ճարտասանին յըն-
տանի գործոց մարդկան առաջնորդել նոց ՚ի բարիոքն
և ՚ի պատշաճն :

ՊՐԵԿ Է .

Յական Նախարարութիւն (*) :

ԱՄԱՆՈՒԹԻՒՆ Է՝ երկուց իրաց զանազանելոց
համեմատութիւն ՚ի մի կամ ՚ի բազում մասունս : Բա-
զում լուսափայլութիւն յաւելու տեղիս այս և ազդուու-

* Յա. Օ'մօնաչիս . լս. Similitudo . Սուլըռութիւն է հան-
դարաց՝ զննեալիւն դնել և ՚ի իսրաֆի յեւց, զըրուն մէտ
առնուց արաբուն՝ իսրավուն ՚ի իրինակնենն . և ասդ միայն
առանդեմի զայն ՚ի իսրաֆի պեղեաց, ասք ասաւելնեիւն մա-
րտարարէ ժամանակնեն : Խաչ ենէ ու իբրւ յիւ ՚մը զարդ
իսրաֆի ըստ էլ զննեալիւն, խանոնքն առ հասարակ հայա-
ւանդիւդ էն :

թե յառաջի արկեալն բան, և ընծայէ մտաց զուար-
ձալի տեսարան :

Ն. մանուկ աստեն իման ոչ յանձուկ միտս՝ Տշդրիտ
զուգաւորութիւն կերպարանաց և ձեռց, այլ զհամե-
մատութիւն երկուց իրաց, որք թէպէտ և արտաքուստ
աննմանք իցեն, սակայն ըստ միոյ մատին և եթ համե-
մատութեն և հայեցուածոյն առ իրեարս՝ բերին ՚ի
նմանութիւն. և միոք խմացեալ զհանգամանս միոյն, ըս-
տու ՚ի նմանէ ծանօթուեն ըստնելոյ՝ անցանէ ՚ի մա-
ծել և զայլս : Կանոնք նմանութեն այսոքիկ են :

Ա. Չէ օրէն ածել նմանութիւն ՚ի յոյժ մերձաւո-
րաց ընդ առաջարկեալ իրն . քանզի Տարտարութիւն
նմանութեն անդ է՝ յորժամ ՚ի համեմատութիւն մեր-
ձեսցին զանազանք, և ոչ համանմանք : Վասն որոյ
պարտ է առնուու օրինակս նմանութեն յանակնեալ
իրաց . որպէս զի զուարձացուսցէ նորութիւն, և ու-
ժովն յաղթահարեսցէ :

Բ. Մի առցին նմանութիւն յանձանօթից, և կամ
որ սակաւուց միայն և ըստ փոքրու և եթ մասին ծա-
նօթ իցէ : Վանզի նմանութիւն առ ՚ի բացատրութիւնա-
րեցան . ապա մի՛ բնաւ լիցին մթինք կամ անձանօթք :
Ուստի նմանութիւն հիմնեալք ՚ի վերայ իմաստասիրա-
կան խնդրոց կամ ոսկինստական օրինակութիւն ՚ի սպառ-
խոտելի են :

Գ. Նիւթի նմանութենց պարտին համեմատել նիւ-
թոյ առաջարկեալ բանին : Իբր զի ՚ի հայակապ շարա-
գրածս պարտ է և զօրինակ նմանութեն ածել ՚ի մե-
ծամեծ և ՚ի կարևոր իրաց, և մի նուաստացուցանել
զշառսն անչքութիւն օրինակին :

Դ. Չէ օրէն ածել նմանութիւն ՚ի բանս կրից յու-
ղելոց : Զի որովհետեւ անդորր և զէպ ժամանակ խըն-
դրի ՚ի քննել և ՚ի գտանել զնմանութիւն՝ որ ըստ մէջ
երկուց իրաց, ոչ պատշաճի սաստկութեն կրից, և ոչ
մնայ տեղի երևակայութիւն զուգակշռելոյ մեղմով ըդ-
համեմատութիւն :

Արդ կամեցեալ ածել նմանութիւն, պարտ է գտա-
նել ինչ համեմատ ընդ առաջիկայ իրին, և նշմարել
յերկոսին ՚ի նուսա զծայրս նմանութեն : Որպէս առ ՚ի
նմանեցուցանել իրաց ինչ զպատերազմ, խնդրելի է
նախ թէ իմ արդեօք մարդ իցէ նմանեցուցանել, և
ըստ որոյ գործոյ . որ այն ինքն է միշնորդ նմանու-

թեանն : Եւ աւասիկ սեփականեալ յատկութիւնն է պատերազմի՝ աւերել, կոտորել . այսմ յատկութեան ունակ գացես զմբրիկ՝ որ աւերէ և կոտորէ : Առա ուրեմն զորօրինակ մարտ զշէնու և զմարդիկ, նոյնպէս և մըրիկ զծառս և զանդաստանս աւերէ և կոտորէ : Ըստ այսմ զճրագավառ թափոր փոխադրութենչիսուրաց սրբոց ՚ի գիշերի, հրեղէն գետոյ նմանեցուցանէ ուկերերան . քանզի լաստերք զիշերավառք խիտ առխիտ կուտակութեք զմիմեամբոփ թանձրացեալք մինչեւ ՚ի վեպարանն ՚ի ձեռս բազմամբոփ ժողովրդոց՝ զպատիկը հրեղէն գետոյ նկարեին հանդէալ տեսողացն : Յորում առնումք զծայրս նմանութե, օրինակելով զերկայնաձիգ կուտակութի ժողովրդեան ՚ի փողոցս՝ ընդդետոյ, և զճրագավառութիւնն ընդ հրահոս ընթացիցն :

Եղիշէ վարդապէտ այսպէս նմանաբանէ զսաստիկ ցասումն Յազկերախ արքայի ընդ նախարարս Հայոց . (բ . 73 .) “ Իբրև զշարագե մի ոչ ևս գագարեր յուղել և շարժել զբուք ձմերայնուոյ . որպէս և նմանեալ իսկ էր ծովածուփ ալէկոծ խոռովութե . և ոչ դուդ նաքեայ վերիվերոյ, այլ անդստին յանդնդոց բարձրանալ փրփրել կուտակել՝ վիշապաւայն որոտալով, գազանաբար գոչելով, առ հասարակ գողացուցաներ ըզափերական իշխանութիւնն . որպէս փլեալ տարածանիցի համատարած ամենայն ՚ի վերայ լերանց, խորոց ձորոց, ապականել միանդամայն զլայնութի դաշտացն վայելութե .. :

Ընտրելագոյն և բանաստեղծական լինի նմանութին՝ նկարագրելով յառաջ զօրինակն գեղապանծ ստորագրութեք, յոր յետոյ զնմանելին ՚ի վերայ բերցես : Ըստ այսմ Գրիգոր Նիւսացի զմայրենի խնամարկութիւնն ածէ օրինակ խնամարկութեն քնի առ ազդ մարդկան . (ՄՇԴՒՊՀ . Գւ . Է. .) “ Որպէս մայր գիշեցուցանելով ըզափայն, մինչդեռ տղայն է՝ փափկին և գիշին բերանոյն զկաթն ատկովն ՚ի ներքս ՚ի բերանն դնէ . և ատամնաւորի և աճեցելոյն մասուցանէ զշացն . ոչ խիստ և անկազմ, զի մի քանցեսցի քերեալ խստաւ կերակրուն ընդացն փափկութի և անկրթութի . այլ իւրաքանչ զօրութեանն այնմ որ մասուցանէն արար : Եւ ապա ըստ յաւելուածի զօրուն աճեցելոյ ընդէլեալ

'ի վավեկագոյնն հանդարտ հանդարտ տղայոյն , մատուցանէ զհաստատագոյն կերակուր : Այսպէս ըզմարդկային զիրոքրոգութիւնն՝ ուշըն իրրել զաղայ իմն անկատար 'ի ձեռն հրաշխցն կերակրելով և դիեցուցանելով , :

Ուկերերան բազում ուրեք Տարտար 'ի կիրարկանէ զայս տեղի . զոր օրինակ (Մէն . Մատ . Է . 420 .) ուր զզեղջ Դաւթիյետ անկմանն ձևացուցանէ . " Որպէս որ 'ի Տակատու ուրեք և 'ի պատերազմի՝ յախոյեանէ սուր արդեանց 'ի սիրտ առնուցու , և կամ թէ 'ի լւարդն նեաիւ խոցիցի , և 'ի վերայ առաջնոյն միւս ևս այլ ազդոյ վերա առնուցու , և յարեան և յապաժոյժ ամենախին իրացն կայցէ , և պատապարիցի վաղվազակի , նիզակ առեալ , և զայն որ նեաիւ խոցեաց սպանանիցէ , և մեռեալ 'ի դաշտի ուրեք ընկենուցու , նոյնպէս և այրն . որչափ և սաստիկ զվերսն ասիցեն , նոյնչափ զարմանալի զոդիս վիրաւորին ցուցանեն . զի խրախուժեաց յետ սաստիկ մեղացն յառնել և կալ ընդդէմ Տակատուն , պատապարել , և ընկենուլ զախոյեանն յորմէ խոցեցու , :

Եւ դարձեալ (Շ . 26 .) " Չաեսանեն և զմարմնոց իսկ զայս . յորժամհանապազ ընդ ծուխ դայցեն , արտօսր ըերեն . և յորժամհի խազաղ օդս և 'ի մարդս և յազրիւրս և 'ի դրախտս զրօմնուցուն , առողագոյնք և քաջատեաք : Նոյնպէս և մասցն ակն եթէ յեղախուրս հոգեւոր բանիցն Տարակիցի , սուրբ յատակ և քաջատես լինի . իսկ եթէ ընդ ծուխ ինչ աշխարհի իրացս դայցէ , բժարեր արտօսրալից լինիցի , և զազդի աղդի լալիւնս լայցէ , և աստ և անդ , :

Զայսպիսի օրինակ մարթ է և յետ օրինակելոյն յառաջ բերել . այսինքն նախ կարդել զբանն , և ապա յարել 'ի նոյն զնմանութիւն , ըստ որում առնէ Յովհան իմաստաեր : (Ընդունէ Երևան .) Զի յերկար խոսեցեալ նախ յազագս սպականութեան , յաւելու ապա զօրինակ նմանութեն . " Որպէս թէ առաջի կայցէ բանիս տռւնէ , 'ի տնկագործողէն իւրմէ խրեալ . առ որ մերձեցեալ ապականութէ , վախուցանէ 'ի նմանէ նախկին՝ հրաման տռեալ այլայլութէ՝ զբնականն որ 'ի նմա որակութիս , և վորսանակ այլոցիկ զանվայելագոյնս 'ի ներքս ածէ վորպիսութիս , և ոչ այս թոյլ մնալ նմա յայլայլութէն յայնմիկ , այլ 'ի

վայրը .քարշեալ անձնիւրցն մասուցանէ զնա յորոց
բաղկացաւ ասրեց .զոր ասպա կարողութիւն է միայն
տմէնատօք ձեռինն՝ միւսանդամ զքոյքայեալն նիւթ
առ նոյն հաւաքելով հաստատել առասկ :

ՊՐԵԿ Բ.

Յ-Ղ-Գ- ՆԵՐԴԱՒԱՆԱՇ :

1. ԵՐՆԱԿԱՆ, Ք. ասին , որոց անհնար է միանդա-
մայն լինել 'ի նմին ենթակայի : Զոր օրինակ բարութ
և շարութիւն չկարեն կալ 'ի միասին . հուր և չուր ,
հեղութիւն և բարկութիւն , և որ նման սոցին : Այս տե-
ղի հակառակ է տեղոյ նմանութ . զի նա ջանայ զգա-
նազանս միաւորել , իսկ սա զնման կամ զնոյն կարծե-
ցեալն 'ի բաց զատուցանէ : Ուստի որշափ պնդադոյնս
բուռն հարկանէ զմիոյն , նոյնչափ 'ի բաց հերքէ զնո-
րին դիմաւարան . որով յաջորդէ նմա հաւաստել զա-
ռաջարկեալն : Զի ընդդիմանարտութեր լաւագոյն 'ի
յայտ դան հանգամանկը երկուց ներհականաց . զոր
օրինակ սալիտարկութիւն ոչ ուրեք այնպէս ցոլանոյ՝ որ-
պէս 'ի բազդասելն ընդ ներհականին իւրում ընդ
սեի :

' Ա տեղովնէ աստի ձեռնարկէ Եղիշէ 'ի խրառն մի-
անձանց . " Եւ արդ ես տեսանեմ 'ի մերում աշխար-
հիս և ոչ զոր ազատեալ յայսափիս աղետից . յետա
ընդդէմ ընթերցաք զգեղեցիկ գրեալսն . 'ի պատ-
ճառս ուխտաւորութիւն հեռացաք 'ի սուրբ ծնողացն ,
և արարաք բազում հարս օտարուախս . զորս պատուե-
լոյ արժանի եր՝ անարդեցաք , և յորս ոչն ունեաք իւ-
խանութիւն դնել մեծարանս , զախա աղետից մերոց ,
յոյժ ծախեցաք : Ազատացաք 'ի հարկաց արքունի՝
զորս տռանց մեզաց եր հարկիլն , և մասք ընդ հար-
կաւ սատցուածոց՝ որ լի են անառակ ակահութեր :
Չելաք յանկողինս սուրբ հարանեաց , և արարաք
մեզ բարձրագահոյս տռաւել քան զաշխարհի : Փափէ
կանալք յանկողինս յարմարեալս , և յածեալ կոծին
միոք մեր 'ի խորհուրդս ազաեզիս զգեւերն ամենայն :
Կօշիկք ոտից մերոց յանդիմաննէն զմեզ՝ Եթէ ոչ են
սուրբք ճանապարհք մեր : Հանդերձք մեր ալթազակեն

զգործոց ձեռաց մերոց՝ Եթէ մերկ Եմք յերկնաւոր զգեստուցն : Երիվարք մեր ցուցանեն զմեղ Եթէ ոչ Եմք յափշասկելոց ընդ տառջ տեսան ՚ի վերայ օդոց : Ընուածք ապարանից մերոց յայտ առնեն՝ Եթէ ոչ ունիմք մեր տաճար տառնց ձեռագործի յերկինս , յոր մասնելոց են ամենայն գայք սոսկացելոցն յերկրաւոր ախարից : Կաղուածք անդատանաց մերոց կը տամբեն զմեղ՝ Եթէ չիք մեր բաժին ՚ի վեճակս երկնաւորս : Մրգուզք անյագք եղաք ՚ի կերակուրս , և առանց չափոյ արբաք գինի պղղուրին խորհրդոց և և մասց : Խոր ՚ի քուն ննջեմք ամենեքեան , և երազ թուի մեզ ճշմարտուին : Կափուցեալ են աչք մասց մերոց ՚ի տեսական խորհրդոց , և անյագ պակշտուեալ՝ հայել ՚ի կեանս աշխարհիս : Արգելեալք զաելիս ՚ի սուրբ ընթերցուածոց , և ունկնդիր Եմք բառանչման խաշանց մերոց : Ոչ եկն մեզ հոտ անոյշ ՚ի Հոգւոյն որբոյ , վասն զի սիրեցաք մեք զեւզ ախտալից աշխարհիս : Ոչ ճաշակեցին քիմք ոգւոց մերոց զիերակուր երկնային , վասն զի պարարեցաք զանձինս մեր ՚ի զանազան խորտիկս : Մութ է գոյն գիմաց մերոց , վասն զի ոչ զուարթացան երեսք մեր ՚ի խորհուրդս որբուն : Յաւալից են անդամք մարմնոց մերոց , վասն զի յառաջ քան զմարմինս՝ զոգիս ախտացուցաք : Գերից զմանաց բռելոց նմանեցաք յաձինս մեր , վասն զի ունայն Եմք ՚ի շնորհաց սուրբ Հոգւոյն : Վասն այսորիկ և ամենայն չարիք եկին հասին յաւարս մեր , :

ՊՐԱԿԻ թ.

Յաւալից բառացուցանունը (*) :

ՅԱԴՅԱՏՈՒԹԻՒՆ է համեմատելընդ միմեանս Երկու իրա զանազանս , վասն խմանալոյ զիստիրն որ ՚ի նոսա : Այս ինքն զուգակշռելով ընդ իրեարս զանցս կամ զգործս հրաշականս , զմին գեր ՚ի վերոյ դնելքան զմիւմն վասն պատճառաց լաւութեն՝ որով մին առաւելու քան զերկրորդն . որպէս այս աշխարհ անարգագոյն է քան զանտիս : ՚ի սմին կրկին բաղդատելք ծայրիք են . աստի աշխարհս և անտիք . յորում

* ՅԱ . Σύγχρισις . լ . Comparatio.

որահանջին յարմարել զանտրդութին ՚ի մին, և զաւու-
թին ՚ի միւսն :

Երեք ազգք ևն բազգաստութե՛ . առաջին ՚ի մեծէ
առ փոքրն, երկրորդ ՚ի փոքրուէ տո. մեծն, երրորդ ՚ի
հաւասարէ առ հաւասար : Զառաջնովքն զանց արա-
բեալ՝ յերրորդն միտ դիցուք, որ պատուականադոյնն
է, յերկուց նմանեաց զմին մեծագոյն ցուցանել: Օրի-
նակ իմն կարգեսցուք աստ ՚ի Ամիկերոնէ ՚ի մարկեղեան
ատենարանութենէն . յորում բազգատեալ զդթուի
Յուլիոսի Կեսարու ընդ քաջնութեն, մեծ ևս ցուցա-
նէ զառաջինն : Այս Մարկեղոս յամենայնի հակառա-
կամարտ էր Կեսարու՝ յանիքաւի սոնդացեալ մոռք .
և իրեւ դարձաւ Կեսար յազմութեր ՚ի Հռովմ, նե-
րեաց Մարկեղոսի վասն թափանձանաց ծերակուախն,
և ընկալաւ զնա վերստին յիւր մաերմութեն : Արդ
Կիկերոն առ ՚ի ցուցանել զմեծութի գործոյս, դնէ
առաջարկութի այսպիսի . գիշութին զոր Էցոյց Կե-
սար, ներումն շնորհելով Մարկեղոսի, գերագոյն է
քան զամենայն յազմութիս նորա : Թուի իմն նուա-
զեցուցանել բազգատութին զինառ յազմութեանց
մեծի գիւցազինն՝ որ նախանձաւորն էր վառաց իւ-
րոց, զուգահաւասարէ զդովիլ գործա նորա ընդ տ-
րիապանծ շահատակութիս՝ ընդ որս խանդակաթ էր,
և ՚ի վեր դասէր զայնս քան զամենայն հրաշակերտ
աշխարհի : Եւ զինչ ապա հաճոյադոյն նմա առաջի
գնիցէ . ասէ : « Չէ բաւական երբէք հանճար մարդ-
կեղէն, չէ ձեռնհաս կորովուի բանից և գրութեան,
որք ոչ եթէ գեղազարդել ինչ ով Կեսար, այլ և ոչ
պատմել կարեն զառաքինութիս քո : Այլ գիտեմ ես
զայն, և առաջի քո բարբառիմ . չիք ինչ առաւել զո-
վութեանց յանկաւոր՝ քան զոր ՚ի սերկեան աւուրս
կատարեցեր : Սովորութի է ինձ յանդիման ա-
չաց գնել, և զայն բազմագէմ յեղյեղել բանիւք, թէ
ամենայն արուեք զօրագլխաց մերոց, և ազգաց օտա-
րաց . և հզօր ժողովրդոց, և մեծանուն թագաւորաց
ոչ հաւասարեն քոյոցդ ոչ մեծութեամբն, ոչ պա-
տերազմացն յաճախութիւն, ոչ բազմութեր գաւառաց,
ոչ գործոցն երագութեր և ոչ կռուոցն զանազանու-
թեամբ : Զի ոչ ոք ընդ բացարձակ նահանգսն երա-
գագոյն քան զքեղ անցանել կարասցէ, և ոչ ընթա-
ցիւք՝ թողթէ աշխարհակալութիք, որպիսէ զիառաւու-

թեցարն : Զորս թէ ոչ մեծահրաշա խոստովանեի , քզի դժուարաւ միաք բովանդակեն զայնո , խօթա միտու թեմն էի . սակայն են այլ ևս մեծամեծք .. :

Յնտ այսոցիկ յառաջընթաց բանից՝ ձեռն արկանէ համեմատել զպատերազմական գործն Կեսարու ընդ գթութեան նորա , զոր արար ընդ Մարկեղոս , և զայն աղնուական ցուցանէ քան զայլս երիւք պատճառք :

Նախ՝ զի զօրադլուխն չկարէ յանձն իւր գրաւել զպատիւ բովանդակ յաղթութեանն . իսկ գթութին , զոր ցոյց Կեսար , սեփական է նման և առանձնական : Զայս պարզ առաջարկութի ընդլայնէ պերճա խօսութք : « Քանզի զպատերազմական ներբռոզս սովորութի կալան բազմագէմ արկածք նուազէլ բանիւք , կապտել զայնս ՚ի զօրադլուոց և հանել անտի մասն զօրուն , զի մի սեփական լինիցին զօրավարաց : Եւ արդարեւ քաջութի զօրականին ՚ի զէնս , վայրոցն քաջադիպութի , նիղակակցացն օդնականութի , նաւատորմիզք և սպարէնք մեծապէս սատարեն : Այլ զառաւելագոյն մասնն իրաւամբք գոգցես ինքեան սեփականէ բազզն , և որ ինչ յաջողուածովն է՝ զայն բովանդակ յինքն առեւալ տանի : Սակայն ՚ի վառսդ յայդոսիկ , Կեսար , զոր սուզ մի յառաջ ստացար , չիք ոք քեզ բաժեանորդ : Աչ ինչ կորզեն ՚ի գովութեանց այտի , ոչ հարիւրապեան , ոչ հազարապեան , ոչ գտնդն , և ոչ խուժանն : Ազաքէն և բազզն , մարգկային իրաց տնօրէն , ոչ համարձակի կցորդել վառացդ . զի քո է բովանդակն և սեփական քեզ . զի ոչ ուրեք երբ զուդախառնի յանդգնութի ընդ իմաստութէ , և ոչ մտանէ դիպուած ՚ի իորիհուրդս :

Եկորոդ պատճառք , զի առաւել դժնդակ է յաղթել կրից անձին , քան զօրոց թշնամեաց : « Կուանեցեր զազդս վայրենիս՝ զանհամարս ՚ի բազմութենէ , զանհունս առջեօք , զի իացեալս ճոխութքք , սակայն յաղթեցեր այնոցիկ՝ որոց և ընութի և պայման ընդ օրինօք պարտութէ է : Զի չիք երբեք ուժգնութի կամ առաւելութի որում անհնար իցէ վատթարել և խորտակել սրով և քաջութք : Իսկ անձին յաղթել , զըրտմառութէ սանեձակոծել , ՚ի չափու պահել զսահման յաղթութէ , զհակառակորդն զնշանաւորն աղնուականուք զշօնութք և առաքինութք՝ ոչ միայն վերաբառնալ ՚ի գլորմանէն , այլ և յաւելուլ ՚ի նախ-

կին աւագութենորա . որ որ զայս առնե՛ ոչ ընդ ա-
րանց գիւցազանց համեմատեմ զնա , այլ նմանագոյն
այ դատիմ , :

Երրորդ պատճառք , զի բազում անդամ՝ ՚ի պատե-
րազմունս յուղին տղմուկք , զորս և պատմելն աղմեկ-
զբոզ , այլ գործք մարդասիրութե և գթութեան
ամօքեն քաղցրութեր զմարդիկ , և յանկուցանեն զա-
մնեցուն զիսորհուրդս : “ Արդ , ով Կեսար , նահա-
տակութիւն պատերազմաց քոց ոչ միայն ՚ի մեր մա-
տեանս և ՚ի բարրառս հաւակեսցին , այլ և ամենայնց
գոզցես ազանց : Ընդ ամենայն գարս՝ մի՛ լսեացեն
զրուազք բանից ՚ի վերայ քո . նա՝ յորժամ լսեմք
և ընթեռնուն զգոստ , հնչիւն իմն թուեսցի աղազակի
զօրականին , և գոշիւն փողոց : Այլ յորժամ լսեմք
և ընթեռնուն զգործո գթութե հեզութե չափաւո-
րութե իմաստութե , և այն յաւետ ՚ի սրամառութեն
պահու և յաղթուե՝ որ ՚ի բնե վայրագն է և ամբար-
տաւան , վասիմք մեծաւ ցանկուք՝ ոչ միայն ընդ գոր-
ծեցեալսն , այլ և ընդ կեղծեալսն . զի սովոր եմք սի-
րել և զորս չիցէ տեսնալ մեր : Իսկ դու , յոր ակնար-
կեմքն , զորոյ զիսորհուրդս զիսանդազատելն և զրանս
զառաջեաւ ունիմք . թէ զոր ինչ բազդ պատերազմին
թողացոյց պետուե՝ անեզծս թողուցուս զնոսա , զո՞
ներբող ընծայեցուացուք քեզ : Արմունք տաճարիս պա-
տուասիրեալ առ ՚ի քէն , Կեսար , գոզցես իմն շնորհ
ունին զքէն . զի ոչ յետ բազում ժամանակի վերատին
կանգնեսցի ասուն բարձրագահ աւագութե նախնեաց
իւրեանց , :

ՊՐԱԿ Ժ.

ՅԱՂԱԳ ԱՐԴԱՔԻՆ ՏԵՂԵԿ :

ԱՐՏԱՔԻՆ , կամ անարտեստ տեղիք են , զորս
քաղեմք տրտաքուստ ՚ի նպաստ ինդրոյն՝ զորմէ բուռն
հարեալ է . զորս ոչ խսկութիւնն ըանիցն ՚ի ներբուստ
՚ի բնութենէ իւրմէ մատակարարէ , այլ հանճարով
հնարեմք օժանդակել նմին սցըլուստ :

Զթիւ արտաքին տեղեաց ումանք ընդ Կիկերոնի
յերկուս ամփոփեն , մանաւանդ թէ ՚ի մի . ՚ի վկայ-

ութի ածային և 'ի մարդկային : Խակ ումանք չել կուին տիլիանոսի 'ի վեց բովանդակեն . այն են՝ օրէնք , համբաւ , տանջանք , արձանագիր , երդումն , և վը կայք . այլ Կիկերոնին յաւետ դիւրընկալ է , զի 'ի սակաւուն զբազումն բովանդակէ :

Ա. 'Սախոկին ապացոյցք՝ զորս հնար իցէ գտանել արտաքուստ , և աղջողագոյնք՝ որով անաշխատ ամոքին ունենագիրք , Են ածային վկայութիք . զի ուր բնաւ չիցէ խիթալի վկայութեն իմացուած և թարգմանութի , այն խակ է հաւատափ ապացոյց Տշմարտութել :

Ապա եթէ երկմտութի կամ երկրանութիւն ընդ մէջ մոցէ շատ կամ սակաւ , անդ արժան է լինել ապաստան 'ի հաւատարիմ բացատրութի բանիցն առ մէկնիչո վկայեալս :

Բայց քանզի Սէփական է ածեղէն գրոց՝ ոճ յըտակ և գեղապանծ , հանոյ ամենեցուն և ամոքիչ . ուստի կամեցեալ վկայութի առնուլ անտի , պարտ է նովին վարել բանիւք և ձեռվք , և մի յաւելուլ իմաստո օտարաձայնս 'ի մատց , կամ բռնի քարչել առնել կամակորել զիմաստա նորա : Մի խառնեսցին 'ի վկայութի անդր և 'ի բացատրութի նր տարագէսպ կը անդոյ առասպէլք՝ 'ի պղտորել զականակիստ վտակս սուրբ մատէնին : Եւ համանգամայն ասել . մուծցին յայն ձեք բանից 'ի զարդ և 'ի շքեզութիւն . և մերժեսցին՝ որք ազօտացուցանեն կամ խոսան երեւեցուցանեն զիրացն մեծութի : Վկայութիք գրոց սրց յայտ է՝ զի միայն տու նոսա ազգեն , որք ընդունին զայն մատեան իբրև բան այ . ապա թէ ոչ , հաւատափ բերել անտի առ անհաւատա կամ առ ուրացողս այնց , լինի յարհամարհութի տալ զտորբ մատեանն , և զմարգարիսն արկանել առաջի խոզաց :

Բ. 'Ի մարդկային վկայութեց Են՝ որ աղջողագոյնք Են , և Են՝ որ տկարագոյնք , ըստ արժանեաց և հաւատարմութեան վկայուցն . յորա երէք ինչ նկատին . Արժանապատութի , կամք և խօսք :

Յարժանապատութենէ վկայութ մեծարոյ առն և կրօնասիրի օրէն է հաստատել զինդիրն , ըստ որում Տշգրտաբանէ Կիկերոն 'ի չատագովութեն Արքիոյ :

" Ահա մօտ առ մեզ կայ մեծապատիւ այրն կրօնամէր և արժանահաւատ՝ Լուկուլոս . որ սատւգաբանէ յազագս անձին իւրում , թէ ոչ 'ի կարծ ընդուսու-

շեալ՝ այլ գիտելով բերէ զգրոյցն. ոչ ՚ի ըուր ական-
ջաց՝ այլ ՚ի տեսիլ աչաց. ոչ մօտ առընթեր և եթ կա-
լով, այլ ինքնին գործելով. : Օրէն է գարձետլ հա-
ւաստել զիննդիբն յայսմ տեղւոյ յառաջ բերելով զար-
տիւ և զմեծարանս պատմագրաց, և կմ զհատարակաց
կարծիս ՚ի գեմա ածելով :

Ըստ երկրորդ պայմանին՝ որ են կամք օրէնսդրին,
պարտ է քննել զգրաւորական խմատ օրինացն, այս-
ինքն զենքինն և զմաքուցեալ. խուզել զժամանակն
և զանցով վասն որոյ կարգեցան. հայել՝ թէ արգեօք
դիսուածն, զորմէ խնդիրն է, պարունակի՝ յօրէնս անդ.
կամ թէ ճշդիւ առնուլ պարտ իցէ զբանս օրինացն,
և կամ թէ իցե՞ն և այլ օրէնք ներհականք և եղծիչք
յառաջը բերելոցն : Դարձեալ՝ օրէն է ձեռնարկել և
յիշխանական և յատենական դատավճռոց, ՚ի կտա-
կաց, ՚ի թզմոց, և որ այլ ևս գրութիւնք՝ որովք
մարթ ինչ իցէ բերել ստոյդ ապացոյց ՚ի վկայել հառ-
տատութէ կտմաց մեռելոյն կամ կենդանւոյ :

Իսկ ՚ի խօսս վերածին ամենայն փաստք կամ ձեռ-
նարկք առեալք ՚ի վկայելոյ ուրուք բանիւ բերանոյ.
յորս առաջին է համբաւն, զոր հաւասառել արժան է՝
Եթէ յօդուա մեր յանկեսցի. իսկ եթէ ընդ հակա-
ռակն, հերքել իբրև սուտ և կեղծիք : Երկրորդ՝ դա-
շինք խոստանունք և երգմունք. որք եթէ վաւեր օրի-
նօք լինիցին՝ ընդունելի են ամենայնիւ. իսկ թէ ան-
հաստատ իցեն, անօդուտ են և խոտան : Երրորդ՝ ՚ի
վկայից, որք վաւերական դատին՝ եթէ արժանահա-
ստոք իցեն և չիցեն յօժարեալ ՚ի վկայութիւ յուսով
շահու կամ առ ահի, և թէ ամենեցուն վկայութիւ ՚ի
մի և ՚ի նոյն գլխաւորեսցի. ապա թէ ոչ, անզօր է
վկայութիւ նոցա : Չորրորդ՝ ՚ի տանջանաց և ՚ի խոս-
տավանութենէ պատժաւորաց. որք եթէ ընդ գիմակք
իցեն՝ մարթ է մերժել զայնս, իբր զի ՚ի դառնութեան
տանջանաց դիւրին է ստել վասն զերծանելոյ, և ոլ-
տուք խոստվան լինել զոր չիցէ գործեալ՝ առ չհան-
դուրժել առաջապի չարչարանացն : Իսկ ուր նպաս-
տամատոյցք իցեն, մարթ է առնուլ զայնս յապա-
ցոյց ճշմարտութէ :

Այս արտաքին տեղիք օժանդակեն յամենայն
ազգա ճառից և յամենայն դատա . զի առ ամենայն
հանդէս ատենաբանութեանց և առ ամենայն վիճակ

խնդրոց առաւելութեամակարարեն զիմաստա հառատութե , եթէ ճարտարութիւն առենախօսին դիտացէ ՚ի պատշաճն վարել զայնս : Վանդի բազում այն է , զի առ անուպայ մարդիկ և առ վերջայեալո ՚ի վարժից դպրութենէ առաւել աղքեն յարտագին ուղղաց ձեռնարկութիւք քան ՚ի ներքնոց , և առ ոմանս զուգախառնութիւն երկուցն միանգանցն : Արդ ՚ի քաջութիւն ճարտասանին ապաստան է՝ ուղիղ կըռել զայս ամենայն :

ԳԼ. Զ.

Յ-Հ-Ի- Դ-Ի- Բ-Ի- Ե- Խ- Ա- Ե- Յ- Շ- Ա- Ե- Յ-

ԱՄ Ա Բ Ե Ա Ա առենախօսին զեիւթս բանիցն և զրանաւոր պատճառսն , և ապա կրկին օրինակաւ պարտի հաստատել զառաջարկութիւն . նախ՝ յառաջ բերութիւն վաստից , զոր Ապաշտառանդ անուանեմք . և երկրորդ՝ մերժելով զհակառակ կարծիս , զոր Հերանք անուանեմք : Վանդի զորօրինակ ՚ի հաստատել անդ զմերսն՝ ապացուցանել խնդրեմք , նոյնալես և ՚ի մերժելն՝ ՚ի դերե հանել զներհականնեն : Արդ թէ պէտ այլեւայլ ճանապարհք են սովին՝ ՚ի յանկուցանել և ՚ի յաղթահարել , սակայն և երկորին ՚ի նոյն նպաստի առաջնորդեն , քանդի զմերն հաստատելով զթշնամույն հերքեմք . զի մի է ճշմարտութիւն , և ոչ բազում . և զթշնամույն հերքելով , զմերն հաստատեմք . զի ըստ ասացելումն , ՚ի բառնալ ամենայնի մնացելոյն է յաղթութիւն : Առանոր ըստ կարգի բանիս և զերկորին ունիմք աւանդել :

Ապացուցանել և հերքել յիւրաքանչիւր հանդէս ճարտասանութեամագգ ՚ի միմեանց վարին : ՚ի կացըրդականն ոչ յաճախինն ձեռնարկութիւք , քանդի բանք են անդ գովութեամ կամ պարստաւանաց՝ որք խնդրեն ստորագրական պերճութիւն , լիութիւն քաջարուեստ բանից ՚ի գլուխ հանել զգովասանական հաստատութիւն , կամ զպարասաւագիր հերքումնն : ՚ի բաղխոհականն առ զի ունին ձեռնարկութիւք , մանաւանդ ուր աեսական իցեն խնդիրք՝ կարդեալք ՚ի ճանաշումն եեթ , որք ձեռնարկութիւն վճարին , ՚ի հաստատել

զընտրելին հաւանողականօք, և դնուուելին հերքել մերժողականաւն . թէպէտ և մասնեն անդ օրինակք և յարացոյցք լսյնադոյն բանիւք : Յասնեականնյա- ճախութը առաւելուն նրբին ձեռնարկութիւնի հա- նել յերեան զարատնառու և զկատարած իրացն, զո- բոց խնդիրն է :

ՊՐԱԿ Ա.

Յաշով Աղայացին :

ՊԱՅՑՈՅՑ է բացայացուել պատճառաց և փաս- տից, որովք առենարանն ջանայ զառաջարկութիւն իւր հաստատել : Յայտ իսկ է՝ զի ամենայն ճգնութիւն ա- տենարանին յազացոյցս բովանդակի, ամբացուցանել զբանս իւր ճշմարտութը և ամբութը սոցին : Այլ զորօրինակ մինչ չեւ նեսովնիեց լեալ հարկ է գետակն ունել 'ի նպատակն, զի մի վայրաստար ուրեք հարցի վրինն, ըստ այսմ օրինակի և 'ի յառաջրերութեան փաստից պահանջի զգօնութիւն և հանձար, զննել զպայման խնդրոյն՝ յորոյ վերայ քննութիւն է, և 'ի նոյն ուզդի զբանս իւր, որով կարասցէ բոնադտուել զհաւանութիւն լսողաց :

Այս գործ ճարտասանութեն յաւետ կարեոր է և աննահաննչելի, և 'ի սոյն վերածին այլքն ամենայն վասն զի բացարաւութեցն զանազանութիւն, իմաստք, ձեք, և այլ ամենայն զարդք՝ զորոց աւանդեցաք ցայս վայր, օժանդակել միայն դիտեն ապացուցից և զո- րացուցանել զնոցին զերևոյթ, և ոչ թէ զիսկութիւն : Ազա որպէս բազում անդամ առացեալ է մեր, պարտ է համբակաց առաւել միտ գնել փաստից և պատ- ճառաց, անաշառութ քննել զնուուին՝ 'ի բաց զատու- ցեալ յամենայն զարդուել, զամբութիւն նոցա գտանել, և ապա մանրամասնարար պերճացուցանել :

Վասն կարգի փաստիցն ընտրելի գատեալ եղեւ ո- մանց՝ զազդողականան և զյաղթահարիչս կէս յառա- ջագոյն կարգել, և կէս 'ի վերջոյ, քանզի զառաջինն անդ մտադիր կայ լսողն, և միտք նորա չեւ պարտա- մեալ քաջ հասու լինի իրացն . նոյնակէս և որ ինչ ամի յաւարան ճառին՝ տպաւորի 'ի լսելիս : Իսկ զա-

ապացոյցս՝ որք չեն ինչ ազդոյ և զօրաւոր՝ կարգել՝ ի միջավայրի. որպէս և ՚ի դասակարգս զինուորաց սովորութիւն է զօրագլխաց՝ ՚ի միջի կարգել դակարս, որ որպէս զի Երկուստեք զօրավիզն ընկացին։ Այս կանոն Կիկերոնի է և Կուբինավլիանոսի։ Խակ այլք ումանքը ընտրել լագոյն գաստին առնեցու ցանել սասակացու ցանել զկարգս ապացուցից ըստ յառաջինակացութեն։ որով առաջին փաստն տեղի յարդարեցէ երկրորդին, և Երկրորդն ամրագոյն ևս ուրանալ զանգութիւն տառաջնոյն՝ ճանապարհ հորդեցէ հետեւորդին։ որպէս զի հետզհետէ բուռն արարեալ մատաց ունկնդրին՝ յաղթահարեցէ զնա ՚ի կամա իւր։ Իրր զի մի առ մի քըննեալ զամենայն ապացոյցս առաջիկայ նիւթոյն, պարտ է այնու օրինակաւ գաստորել զմեռնարկս, զի իւրաքանչիւր փաստ ոչ միայն նոր զօրութիւն յաւելուցու յառաջինն, այլ և ճանապարհ կազմեցէ դլխաւար ապացուցին՝ զոր հուսկ յետոյ բերելոց իցէ։

Ա. Ա. Ա. գիտել արժան է ևես, զի այս հարահանգ ոչ օգնէ՝ ուր առնենախօսն յերկրայս իցէ ընդ ելս դատին իւրոյ, և մի միայն պատճառ բռնադատիչ կայցէ նմա, և այլք դոյզն ինչ իցեն։ զի յայնժամ լաւագոյն է զզօրաւորն յառաջոյ կարգել, և կանխել ունել զլումիս, որով ամենայնն գիւրանայ նմա։ Դարձեալ հարկ է նմա հայել խոհական մտօք, և արամադրել զիրսն ըստ պետոյից գատին իւրոյ։ յորում է զի յաջողէ երբեմն պահել ՚ի վախճանի զմին ՚ի փաստից, որ թէպէտ ինքնին տեկարագոյն իցէ՝ այլ թերեւ հաճոյական թուիցի լառզաց։ իրր զի յօժարեցուցիչ է օդախ հայրենեաց նոցա, կամ ըստ հանգամանաց կենաց նոցա, կամ օրինակաւ նախնեացն, և կամ վասն անցից իմն ծանուցելոց։

Խակ կանոնք զգուշութ այսոքիկ են։

Ա. Ա. Ա. խառն ՚ի խուռն յաւելուլ ՚ի միմեանս զմեռնարկս զանազանեալս տեսակաւ։ Վանզի ամ ձեռնարկք ՚ի բնէ իւրեանց կամ զնշմարտուի զառաջարկեալ խնդրոյն ցուցանեն կմ զարդարուի, կմ զօդատեկարուի։ նոյնպէս և ամ ինդիր կամ ՚ի ճշմարտուի հայի, կամ ՚ի հրահանգս դործոց կարեորաց և կամ յօդատեկարութիւն։ Արդ ուր միանգամ զանազանին ձեռնարկք ՚ի բնէ, նմին հակառակ ընդխառնութիւն նոցին անպիտանացուցանէ համօրէն զկազմութիւնն։

Օրինակ իմն, եթէ առաջի կայցէ յօժարեցուցանել զաւնկնդիբս 'ի սէր ընկերին, և 'ի մէջ բերիցի նախ ձեռնարկ 'ի ներքին պարտուց՝ որ դրդէ 'ի սէր նմանաց մէրոց. Երկրորդ 'ի պատուիրանեն քնի վասն սիրելոյ զնիկերն, և երրորդ 'ի բնական բերմանել բընուես 'ի հաճել զայլս: Ընաիր են երեքին այս ձեռնարկք, այլ գասաւորուին ոչ բարեկարգ. Վասն զի առաջինն և երրորդն ազգակից են միմեանց ըստ առանձնական օգտութեն. և 'ի մէջ երկուց այդոցիկ յարմարեալ է երկրորդն՝ որ է պարոք 'ի պատուիրանէ. վայ սպարտ էր զաւածինն և զերրորդն առ միմանցը կարգել, մանաւանդ թէ յիրեարս կցել, և ապա յաւելուլ զերկրորդն:

Բ. Խւրաքանչիւր ձեռնարկութիք որշափ որոշակի աւանդեսցին և ուրոյն յիրերաց՝ այնչափ աղդողագոյն Երեւցուցանեն զզօրութի սպացուցին. վայ որոյ սպարտ է զմի մի յայնցանեն սպարզաբանել ըստ կարգի իւրեանց, հանգերձ ճարտասանական սկերչութիք: Բայց եթէ ձեռնարկքն երկբայականք իցեն, յայնժամ սպարտ է զբովանդակն կամ դէթ զնմանս ամփոփել 'ի մի, որպէս զի մին միւսումն զօրավիզն լինիցի. և ըստ կուինտիլիանոսի, որք տեղաբարոյնք են բնութիք՝ օգնականութիք միմեանց սատար դտանիցին, որպէս թէ բազմութ նրբին թէլից ընդ միմեանս ոլորեալ՝ գործիցեն առասան կարկամ անխղելի: Կուինտիլիանոս բերէ յորինակ զմի ոմն ամբաստանեալ 'ի հայրասապանութիւն. որում առ 'ի չգոյէ հաւասափ վաստից, խուռն 'ի վերայ յորդէին դատախազք զտրկարագոյնս. « Անայիր դու մէծի ժառանգութեան, սատանեալ էիր և նկուն 'ի սպարտատեարց, անարդէալ էր քո զհայրդ՝ որում էիրն ժառանդ, և գիաւէիր դու՝ թէ խնդրէ նա փոխել զկատակ իւր,, : Աէն մի 'ի բանից ատափ տկարք են, այլ միագումար՝ յաղթանակեն:

Գ. Զգուշանալ սպարտ է 'ի խուռն յորդութենէ փաստից, և յերկարաձիգ Ճոխաբանութէ. Քանզի տարսապայման բազմութի պատճառաց ծանրաբեռնէ և սպարտասէ զմիտս, որով և զօրութի նոցին տկարանայ: Որպէս և յաճախտաբան ձեռնարկութի 'ի մառացօնս տրկանէ զհամեմատութի երկուց ծայրից ը միմանս, և բթացուցանե զսայրս իմաստից:

Դ. Անցումն փաստից ՚ի փաստս լիցի անդրակի օ-
րինակաւ, զձե անցմանն թաքուն յօրինելով զրովան-
դակն անընդհատ երևեցուցանել: Քանզի Տարա-
րուի մեծ է զազդի ազգի զիմաստս ծածուկ ձեռամբ
ազիսաղիսել յիրեարս միահետ:

ՊՐԵԿ Բ.

Յաշուհի Հերքման:

ԵՐՔՈՒՄՆ, և ձեռնարկելով ՚ի գերե հանել
զիմաստս հակառակորդին. զրդ գեղեցիկ սահմանէ Աի-
կերոն, “Լուծումն տեղեաց ներհականաց,, : Զի զոր
ինչ կազմէ հակառակորդն ՚ի մրցել ընդդեմ առաջար-
կուե առենախօսին, սա զնոյն յետս ընդդեմ լուծանէ,
և քակտէ զուժդնութենորա: Այս գործ Տարա-
սանական չունի սահմանէ տեղի յընթացս Տարին,
զի երբեմն յառաջը դնի քան զապացոյցս, և երբեմն
՚ի վերջոյ: Ըստ Կուինախիլիանոսի՝ պրարտ է դատա-
խաղին նախ հաստատել զառաջարկուի իւր, և սպա-
հերքել զհակառակ կողմանն: իսկ ջատագովին նախ
ձեռն միսել ՚ի հերքումն, առ ՚ի մերժել ՚ի սրտից ուն-
կընդրաց զամենայն զհակառակ կարծիս՝ որովք պա-
շարեալ իցեն, և պատրաստել զնոսա ՚ի յօժարակամ
լութեն փաստից իւրոց: Կիկերոն օրինակաւ իւրով
ուսուցանէ ըս պաշաճի զերկաքանչիւրն ՚ի վար ար-
կանել. զի թէ հերքելով զհակառակորդին՝ հզրու-
սոյն հանդերձեացի Տառն, պրարտ է յենուլ բովան-
դակ Տգամբք ՚ի հերքումն, ՚ի վերջ կոյս պահելով
զհաստատութին: Վապա թէ դիւրագոյն իցէ հաստա-
տել ապացուցիւ զառաջարկութին, քան հերքելով
զբանս ախոյենին, հարկ է յայնժամ ՚ի բաց քեցել
անտի զմիտս դատաւորաց՝ համառօս բանիւ հերքեալ
զհակառակորդին, և առաջնորդել նոցա ՚ի լուր հա-
տառութեն իւրոց:

՚ի քառեակ գլուխս բովանդակին օրինակք հերքե-
լոյ: Նախ՝ բացէ ՚ի բաց մերժելով զդրութեն հակառա-
կորդին իրը սուտ բովանդակ, կմ մասամբ իմն թիւր.
զի Լթէ սուտ հանցես զբանս ոսոյին՝ յոյտ յանդի-
ման ցուցանելով զիրացն անհարութի, ինկնին յոյտ

Նի լինին իրաւունք ճշմարտութե՛ : Այսպէս հայրապետական գիւտ 'ի գերե հաներ զամբաստանութե՛ Մաւիազու Դադիչոյ 'ի գուռն Պարսից . (Փարագէշի) .. Եւնենայն ասացեալքդ Մախաղու ... են՝ որ արդար Են, և են՝ որ ոչ են ստոյդ արդար : Քանզի սիրել զքրիստոնէութե՛ և որ ոք քրիստոնեայ է, զայդ ոչ ընտրեալ պահէմ յանձնին խմում, այլ 'ի մանկութէ իմմէ . և զամենայն մարդ որ վրիպեալ է 'ի ճշմարտութէ՝ ատեմ. և կամիմ թէ ամենայն որ 'ի ճշմարտութէն մոլորել կամէր, և զնալ զՃանապարհ՝ որ ոչ է ուղիղ, և գոյր հնար բռնութե՛ և կամ ազաշելով, այլ թէ և կարաւով կարեի հաւանեցուցանել, ջանայի անվեհեր մաօք, և ոչ տայի կորնչել այնպիսոյն զանդիւա կորուսն : Այլ որ ասէնդ՝ թէ երթեկեկք նորա 'ի հռուսմն, ոչ ըստ գորա կարծեաց և իսոսիցն այդպէս Են իրքն, քանզի սուտ է : Այլ վասն զի զդարութե՛ գիտութես մերոյ, և զիմաստ բանաւոր ուստանց յաշխարհէն Հոռոմոց ուսեալ եմ, և են իմ անդ ծանօթք բազում և ուսումնակիցք : . . . Այլ զՃնազանգուի ծառայութե՛ օրէնքն իսկ մեր պատուիրեն հատուցանել տերանց զդիպողն և զարժանաւորս : :

Երկրորդ՝ պայքարելով ցուցանել, զի թէպէտն ոչ ստեաց հակառակորդն, այլ մեր գործք և բանք՝ զորմէ ինդիրն է՝ իրաւացի և բանաւոր է, ոչ որպէս ամբաստանօղն օխերիմ մաօք ինկաթիւրէ : Այսպէս հէրքէ Սարդիս վարդապէտ զբանբասանս՝ որ 'ի վերայ վարդ ապետոց . (Յ-Ե-Դ. Է-.) .. Զայր վարդապէտ էթէ աւսանեն որ 'ի կերակրիկ ինչ մտարերիցէ, և բարեքիկ հանդերձիկ ագանիցի, և զի՞ ոք արբանեակ ունիցի՝ որ զկարեւոր պէտս նորա վՃարէ, զի մի անձամբ ջրեր լինիցի և փայտակոտոր և հրավառ, և 'ի կարեւորսն գոյաւոր իցէ, բամբասեն երգիծանեն . մշծառուն է, ասեն, զիարդ զայլս կարիցէ յանդիմանել : Եւ արդարեւ մեծառուն էմք 'ի սակաւուն, բան նորա 'ի բազմին. զայս և նորա ակամայ խոռոտովանին : Զի մեք թէպէտ և սակաւ ունիմք, մեծանամք, և նորա թէպէտ և զամենայն աղխաղիմն, աղքատանան : Մինչեւ ցերք անմտանամք, աղէ՝ ասացէք . չիցէ՝ բաւական մեր կարիքն մեզ 'ի տանջանս, այլ և 'ի բամբասայն յաւելումք մեք վկասս : Եթէ քո ինչ մի առւեալ է զոր ունի նա, ոչ զվարձն կորուսանես

բամբաստանօքն : Եշւ Եթէ քո իսկ տուեալ է , բնաւ
ընդէ՞ր բամբասես . նախ քեզէն վկայէիր՝ Եթէ զոր
ուներն աղքասաց ետ , և ապա ետուր նմա . և արդ
քեզէն բամբասես : Եթէ գիտէիր Եթէ աւելսասա-
ցու է , զի՞ բնաւ ետուր և գարձեալ բամբասես :
իսկ Եթէ այլոց տուեալ է , և դու զայդ առնիցես ,
և անհետրին աղէտք են . զի չետուր ինչ , և բամբա-
սես զայն ինչ՝ զոր այլքն բարի արարին : Ո՞րչափ ինչ
կարծիցես նոցա վարձս , որբ այդպիսի բանս 'ի քէն
լսիցեն , և վասն այ տանիցին վշտաց .. :

Երրորդ՝ զանց առնելով և յունչն դրելով զամբ-
բաստանութիւն . որով ոչ թէ ամբաստանութիւն այց
պատասխանի , այլ գարձուածով իւլիք յայլ ինչ ան-
ցանէ , և անդ իր ՚ի բացուատ կողմնակի հարկանէ
զուսին , և կամ բնաւ ոչ միտ եղեւալ ՚ի հեղնութիւն
անցանէ : Զօրինակ կանոնիս գացէս . (ԵՌԴՀ 55.)
՚ի ժողովական նամակին Հայոց առ Միհրներսէն . յո-
րում թողեալ զպատասխանի բանին՝ թէ զման չոր-
տասուածն արար , անցանեն յայլ բան՝ քննել զբնու-
թիւն մահու : „ Եթէ զման չոր աստուածն արար ,
զի՞նչ գոյացուի երեխ մահու . ՚ի միջի . և ոչ ինչ Բայց
զի զբարի այ զպարածսն խանդարեաց : Եթէ այդպէս
է , նմա և բարի իսկ ասել ոչ մարթի , այլ կիսագործ
ասպականացու : Եշւ որոյ այ արարածքն ասպականելիք
են և Եղծանելիք , նմա անեզ ած չմարթի ասել :
Տի անդր թողէք զյիմարութէ զբարբանֆմունսգ :
Միոյ աշխարհի երկու զեհասկեաք ոչ մինին , և ոչ
միոյ արարածոյ երկու ածք .. :

Ըստ սմին օրինակի և Եպամբնոնդ հեղնելով թա-
փեաց զանձն ՚ի գատակներոյ մահու , խնդրելով դրել
զիւսա իւր այսպէս , թէ ։ Եպամբնոնդ մահու գատե-
ցաւ ՚ի թերացոց , փոխանակ զի սախպեաց զնոսաս առ-
կեւկարաւ յաղթել սպարտացոց . որով ոչ զթերա-
ցիս և եթ թափեաց ՚ի մօտալուա աղեանց , այլ և ըդ-
համօրէն Ելլադա բարձրացոյց յազատուի . և յայն
պայման հասոյց զիրա երկարանիւրոյն , մինչև թերա-
ցոց պատերազմաւ ՚ի նեղ արկանել զքաղաքն սպար-
տացոց , և սոցա զիեանս և եթ շատ համարել .. : Իւ-
րեւ զայս ասաց , ասէ կուռնելիս ՚Նեպոս պատմազիր ,
՚ի ծազք զուարթափառն ած զամեննեսին . և ՚ի դա-
տաստանէ գլխապարանութէ ելանէր մեծաւ վառօք :

Ա. Մի ՚ի նանիր զրապարտել դժակառակորդն՝ վրա խանակ սպա ասամբանի առնելոյ բանից նորա . և մի անչափութիւն վերաբերաւնալ զգովելին, զի մի առիթ լիցի մասնանաց : Զգոյշ կալ ՚ի խոցելոյ՝ փոխանակ բուժելոյ, և ամենենին ՚ի բաց կալ ՚ի ստութիւ :

Բ. Աշնաման իրերաց ձեւացուցանել զձեռնարկս և զօրինուած յառաջբերութիւն իւրաքանչիւր փաստից, զի միօրինակ նմանաձեռնութիւն ծնանի զատղակութիւ :

Գ. Անժխաելի հետեանս յառաջ բերել յիւրաքանչիւր փաստից յայտնագոյն օրինակաւ, զի յաւետ ևս ամբապնդեսցի կատարած նոցին :

Դ. Չթողուլ անպատասխանի զճզօր ապացոյցս ոտոխին, զի մի կարծիք տացին անբաւականութիւն ՚ի ներհականացն լուծումն :

Ե. Յամենայնի խուսել ճարտարութիւնակար բանից, և առաւելութիւն ճոխանակալ յօդտակարս :

ԴԼ; Ե.

Յաշու Զեռնութիւննել :

ՅԱՅՍ վայր գեղերեալ մեր ուսուցանելաշակերտելոց ճարտասանութեան զամենայն յօրինուածս, զջարձուածս, զտելիս և զնիւթ բանից ճարտասանին, մնայ մեզ աւանդել միւս ևս, յաւելովլի պեր ճոխս օտութիւն և զեղու վիլխատփայական : Այս ինքն թէ որով կարգաւ զմի մի յապացուցութեցն պարտ իցէ յօրինել, և զիարդ զինուորել զնոսա ՚ի սպառազինութիւն յաղթողական : Վամենաբանն պերճամասութիւն զուարճացուցանել և շարժէ զլողս, շտեմարանեալ նիւթովլին պատրաստի զսիրտ հարկանել զունկնդրին և զոսոխին, այլ առանց օրինաց ձեռնարկութիւն անհնար է հանել զայն ՚ի գլուխ . և ահա զայն մնայ մեզ ուսուցանել յայս դլուխ ոյորում առ սուզ ինչ տեղի տուեալ ՚ի բազմազարդ զուարճութեց, յանձուկ սահման իմաստասիրական զրուցաց ամիսփեռցուք զբանս մեր :

Ալոյտ է ձեռնարկութիւն պատճառ հաւանեցուցիւ :

* Յն. Επιχείρημα . լու . Argumentum.

որով զմի ինչ գուշտեմբ յայլմէ , և յորում զերկ-
բայականն հաւաստեմբ աներկբայիւ : Այս խելամտու-
թի ճշմարտին կամ հաւանողականին կատարի՝ համե-
մատելով զերկբայական առաջարկութին ընդ այլում
աներկբայ ճշմարտութե , և առ նմին ճշմարիտ կամ
սուտ ցուցանելով զայն : Մակայն ոչ կարօտին առա-
ջարկութիւնք ձեռնարկութեց , երբ յայանի իցն և
սաոյդ : Ե զի և լոկով բացարտութե՛ի բաց մերժեմբ
զյերկուանս , բացայայտ լուսաբանելով զիրսն , որով
ոչ մեռյ տեղի երկմտութե :

Վեց են ազգք ձեռնարկութեց . Հաւաքաբանուի ,
Հնագք , Մակածութի , Յարացոյց , Համարարդութի ,
Երկայրաբանութի :

Ա. Հաւաքաբանութին (*) է մեռնարկութի , յո-
րում 'ի գնել երկուց առաջարկութեց . Հարկաւ եր-
րորդ իմն զհետ գայ : Այսինքն զերկուս զանազան ա-
ռաջարկութիս ճշմարիտս 'ի միմեանս հարկանելով .
այլ իմն ճշմարիտ առաջարկութի անտի հետեւի :

Յերկուց առաջարկութեց աստի՝ հարկ է առաջ-
նոյն լինել ամենայնիւ աներկբայելի , և յիմաստան
ընդհանուր և լայնածաւալ . իսկ երկրորդին լինել
ճշմարիտ , և պարունակել ընդ առաջնովն իրը տեսակ
ընդ սեռիւ : 'Ի սմին թէալէտ միաձայնի ատենաբանն
ընդ տրամաբանի , այլ ըստ հիմանն ևեթ . քանզի
ուր անպահոյն և անձուկ ոճ տրամաբանին յայտ
յանդիման ցուցանէ զարհեստ ձեռնարկութեն , և 'ի
բաց դարձուցանէ զերեսս լուղաց , սա թափուն պա-
հէ զարհեստ տրամաբանութեն . վասն զի նպատակ
սորա հաւանեցուցանել է , ոչ միայն ուսուցանելով
ըստ տրամաբանին՝ այլ և զուարձացուցանելով և
շարժելով : Արդ կամեցեալ ցուցանել զճշմարտութի

* Յն. Συλλογισμός . լո. Syllogismus . Զինան իմա-
ստան առաջնորդ պայինեան՝ իսեղեւուցաւանել վերիւ
զանազան առաջնորդ ընդ պարաբեանիւն և ընդ ճարդաստանիւն
հաստաբանութի , զին օրինակիւ իծիւուլ վեստու իւր ,
պարաբան պարզութեան լուս իւր յայտ իւր այսովէ աբարեւ-
սի իւրիւն երիւոյն մ և նոյն է , այլ առաջինն իւր բացնոյի
հարիւնն , իսի ճարդաստանականն իւր թէ գտնելու պիրու
յիւնն արիւնն . իւր թէ զիրոյի ճարդանիւն և զիրոյի առ-
աջնորդ այնու յաւագ աբարեւ :

առաջարկութես, թէ պարտ է ինձ օդնել կարօտելոց, տրամաբանական հաւաքաբանութիւնն այսպէս առնէ. Որ եգիտ օդնութիւնը յայլըց՝ պարտ է նմա ցուցանել զնոյն առ կարօտեալս. արդ ընկալայ ևս օդնութիւնը յօտարաց, ապա պարտ է ինձ օդնել կարօտելոց: Այս հաւաքաբանութիւնը տրամաբանական՝ բազկացեալ է յերից առաջարկութեց, յորոց առաջինն կոչի մշտագոյն, երկրորդն ժամանակոյն, երրորդն հետեւոց: Իսկ ճարտասանն ՚ի նոյն հիման վերայ ամերառնոց զշինուած իւր, այլ զմի մի յառաջարկութեցն ընդարձակէ, առընթեր կարգեալ և զարտանուս առաջնոյն և երկրորդին, իրը հաստատելով զայնս, և ՚ի տեղեաց տեղեաց ճարտասանութեն սահմանելով, և թուելով զմասունան, պատճառք, յառաջբերութիւն պարգայից, նմանութեք, այլովքն հանդերձ: Որով ճարտասանական հաւաքաբանութիւնն բովանդակի ՚ի հինգմասունա ընդարձակս. որ են երկու առաջարկութեց, երկու պատճառք, և հետեւութիւ. զոր և յորդորական կամ մերժողական ձևով յօրինեալ, կամ ներբողենիւ, և կամ պարսաւով գլխաւորեալ, մէն մի ՚ի ճարտասանական հաւաքաբանութեց՝ ձևանայ ճառ համառօտ, կամ ապացոյց բովանդակեալ: Աւասիկ վերոյեղեալ հաւաքաբանութիւնդ ՚ի ձև ճարտասանական:

“ Ընդարդոյս է մարդկան կարեկից լինել ը վշտացեալս, մանաւանդ որոց երբեմն ՚ի նեղութիւն դափն յայլըց օդնութիւն. զի ակն յանդիման աեւանեն զազեսա նոցա, զուդակըսելով ը բարօրութեւ իւրեանց .. : Այս առաջարկութիւն է. Որ եգիտ յայլըց օդնութիւնը պարտ է նմա ձեռն աալ կարօտելոց: Դարձեալ երկրորդ առաջարկութիւն ածանցեալ յառաջնոյն հանդերձ պատճառաւ: ” Յորոց եթէ ոք ’ի կատարումն յօժարեսցի, կմ թէ հաճոյական իցէ նոցա ձեռն կարկառել ՚ի պէտս կարօտելոց, ահա ես ինքն եմ մին ՚ի նոցանէ յօժարեալ ՚ի բարերարութիւն: Ա ասն որոյ չնորհընկալ դոհութիւն մեծապէս դովութեալ արժանաւոր գտանիք քան զբազում այլ առաքինութիւն, և նորին հակառակն ստոգտանոելի .. : Ահա սմին զհետ դայ և հետեւութիւն. ” Եւ զի մի ապաշնորհ առ երախտաւորն թուեցայց, հաստատեալ եղի ՚ի մտի սփոփանս մատուցանել փոքու իւիք որչափ մարթացայց փոխա-

ըէն որոց ընկալայ . և թէ ոչ այնոցիկ՝ որք ինձ օգնեցին , գէթ որոց ՚ի գէպ թուիցին , : Գիտել արժան է և զայն , զի ուր առաջարկութեքն յայտնի իցեն՝ մարդէ է զանց առնել զպատճառքն . զորօրինակ (Եւհ. 311):

1. * Մէռանի այն՝ որ շնչէն և շարժի և գնայ և ու տէ և ըմպէ :
2. Ե՞ր տեսեր դու զկրատկ գնայուն կամ իսուուն կի՞ գիտուն :
3. Արդ զոր կենդանի քո չէ տեսել , մեռեալ խոստովանիս :

Այս ճարտասանական հաւաքարանուն՝ ՚ի սմին ըռ վանդակի : Մէռանի այն՝ որ կենսաւոր է , իսկ կրակն չէ կենսաւոր , ապա և չէ մեռեալ :

Դարձեալ և բազում անգամ յետ և յառաջ կարգին առաջարկութեքս . նախ զհետեւութին զնելով , և ապա զայլս . որ առաւել ընտկան է , և քօղարկէ զարհեստն :

Բ . Հնարք (*) կոչի հաւաքարանուն անկատար , յորում միակ առաջարկութիւն ՚ի մէջ մասուցեալ , ՚ի վերայ ածեմք զհետեւութին , ընդ լուութե թօղլով զմիւսն՝ իբր ծանուցեալ : Զորօրինակ . « Քարոզք եիք առաքելական զօրութեանն , արդ զտարերս աստուած խոստովանիք » : Իբր թէ ասեր . որ արարչին է քարոզք երկիր պատանէ . իսկ դուք զի քարոզք եիք արարչին , ապա ընդե՛ր զտարերս ած համարիք : ՚ի սմին ևս իշխանուն է ատենարանին՝ լարձակել զբանն , հանգերձ պատճառօք եղելոյ առաջարկութեն , կամ յառաջ դասել զհետեւութին , և ապա զառաջարկութին : Աւասիկ դարձեալ օրինակք հնարից ՚ի Սարդմէ . (ա . Պէտք . ը .) :

“ Ե՛թէ մարմին եմք ՚ի մարմնոյ նորա , որպէս խոստմունքն են , և տիրապէս հաւատացաք նմա , մի՛ ապա ազտեղեցուք զանդան քնի ՚ի շարաւս մեղաց և ՚ի ճենճերս անօրէնութե , :

՚ի Լամբրոնացւոյն . (ադէնաբ .) “ Համամայք եմք որդիք . մի՛ կարծեցուք հրապոյրս պղտոր մեզ արբու-

* Զայս յէտնարիստի Ընթարք . Ενθυμετα , անուանէ Դասիլ ակադեմի . Եւհամած :

ցանել : Պատուիրան ընկալով՝ արեգականն ոչ մասնելի վերայ բարկութեն . յիշեսցուք զորքանութեյանցուածոյ օրինացո , և զդասացուք , :

Արկին օրինակաւ ձեանան հնաբք . հաստատական՝ յասպացոյց առաջարկութեն . և մերժողական՝ ՚ի հերքութեան դրութեան հակառակորդին : Հաստատական հնարք յօրինին հանդարտ բանիւք , առ որ խնդրի բարիոք շշութեի պատճառաց վայելուց ձեռովք : Մերժողականին լինին եռանդուն բանիւք և յուղեալ կը րիւք . հարցական կամ արգելական ձեռով : Ըստ այսմ օրինակի Յովհանն իմաստասէր (Հարաբեկ Երևան) . յառաջ բերեալ զբանս հակառակորդին՝ թէ ածափութենն միանդամայն և ուսումնասիրութեան ըմբռնեալ ցանկութեր , որոց և հանդիպել կարացին դրիցելոց թարգմանեցին և բերին , տես զպատասխանին՝ զորկազմէ ձեռնարկութ՝ ՚ի ներհականաց . . . Զի՞նչ ասէք , աստուածասերք լինելով ածատեցութեյ յանդգնեին ցուցանել գործ . և յուսումնասիրութենէ անտի կանխեալք ելանէին տու յիմարութիւնն , զդառն քաղցր վարկանելով , և գնելով զիսաւարն իրու զլոյս . զարն ընդ բարւոյ փոխանակել , և բառնալ բերել զմարդարեականն ՚ի գլուխս իւրեանց վայասացութի , . . Կայ ՚ի սմին հաւաքարանուն այսպիսի : Ամենայն ածասէր և ուսումնասէր ուսուցանէ զդործս բարեպաշտութե և ուսումնասիրութե . իսկ սոքա էին արք ածասէրք և ուսումնասէրք , ասպա ոչ ուսուցանէին զնածատեցութե և զյիմարութի :

Գ . Մակածուի (‘) կոչի ձեռնարկութին , յորում ՚ի թուել բազում իրս ստոյգս և աներկբայելս , թէ պէտ և զանազաննեալ յիրերաց բնութեր կամ զօրութ , զհետ գայ հետևութին յամեննեցունց միանդամայն : Զայս օրինակ ձեռնարկութե յաճախ ՚ի կիր արկանէր Սոկրատ փոխանակ հաւաքարանութե հաստատելոյ զբանն՝ հարցուածոյ պայմանաւ . ՚ի մէջ բերեալ նմանս իրերաց հետ զհետէ . որոց ՚ի համանդամայն պատասխանէլ դիմախօսին , զբովանդակն միահաղոյն ընդունելի առնէր նմա :

Կանոնք ձեռնարկութես ըստ Կիկերոնի յերիս վերածին : Նախ՝ զի առաջարկուիք դասաւորեալք զինի

միմեանց իցեն ամենայնիւ հաւաստի և աներկրայ . և խնդիրն , որ իբրև հետեւութիւն ծագելոց է 'ի մակա-
ծեալ առաջարկուեց անտի , ամենայնիւ նման գոցի
նմին :

Երկրորդ՝ զի թագուն մնասցէ 'ի լսողէն թէ յինչ
ակնարկին իւրաքանչիւր առաջարկութիւնին մակա-
ծեալք հետզհետէ՝ որպէս զի անակնկալ հետեւութիւն
ծագեալ 'ի նոցանէ ուժգին ընդհարցի և պարանեսցէ
զլոտղն :

Երրորդ՝ զի 'ի մերժել ունկնդրին զհետեւութիւնն ,
ցուցցի նմա մի առ մի նմանութիւնկալ առաջար-
կութեցն ընդհարցին զոր ժիտէ :

Մակածութիւն գործէ Լամբրոնային յատենարա-
նութէ իւրում այսպէս . " Բազում գիտէ փափկու-
թին գործել գանդաղութիւն՝ որով յօրանան (Յոյնք) :
Դիւրաւ որսայ գոռողութիւն 'ի մոռացութիւն պատուի-
րանին՝ որով պանծանան : Գիտէ վանել արծաթին
ծառայեցուցիչ՝ որով խրոխտանան : Հպարտս առա-
գրէ գիտութիւն , զոր մայր ունելով , 'ի նոյն ապաս-
տան եղեալ՝ Տօխանան : Հետապնդի . Արդ կրիցն լի-
ցուք մի աղճատիչք , այլ ցաւակիցք .. : Բազում այն
է՝ զի հարցմամբ յօրինելով զբանն՝ աղդողագոյն ևս
ընծայի . ըստ որում է տեսանել գարձեալ առ Լամ-
բրոնայոյն . " Չունի՞ն զապասն մեր մանկունքն Բա-
րելոնի , և հարճքն Կարուգունոսորայ աներեւութիւն:
Զբաժակ սիրոյն , որով մերն պաշտէաք միմեանց ,
թերեւս ոչ տեսանէք այժմ'ի ձեռս նոցա : Զինկա-
նոցն ոսկի , այսինքն զաղօթիցն ասեմ փոյթ , միթէ ոչ
առին նորա և ունին . . . հետապնդի . Այնոքիկ մեր եր-
երբեմն , Եղբարք , սեպհական . այնոքիկ , մինչ չե էաք
խռովութքն գերեալք , մերոյ տաճարիս էին գործիք
պաշտաման . զայս սպաս մերն հարք ետուն մեզ 'ի
պատիւ սրբութեցն , :

Դ . Յարացոյց (*) կոչի ձեռնարկութիւն առեալ յօ-
րինակէ պատմական անցից՝ յապացոյց առաջարկու-
թիւն : Պարզէ սա և զդալի գործէ զառաջարկեալ խըն-
գիրն , վասն որոյ յաճախ վարին սովաւ ատենարանք և
խմատասէրք : Ատենաբանք՝ զի օգուտ մեծ է նոցա
քաջ իմանալ ունկնդրին զառաջարկութիւն , և զի ուա-

* Յն . Παράδειγμα . γν . Exemplum .

միկ մարդիկն 'ի նմանւոյն առաւել յորդորին . և ի-
մաստասէլք՝ առ ՚ի բարեխառնել զերբութի ձեռնար-
կութեց իւրեանց զգալի օրինակօք :

Միտ դնել արժան է , զի թէ յարացոյցն իցէ դի-
պուած ճշմարիտ լինիցի և բատ բնութե իւրում ըն-
դունելի և ազգողական , և պարագայք նորա զուգա-
յարմար գացին ընդ առաջիկայ նիւթոյն : Իսկ թէ
կեղծեալ կամ առակ իցէ յարացոյցն՝ գարձեալ քա-
ջայարմար լինիցի . և բարեկարգեալ կեղծումն , զի մի
իրր անառնի մերժեսցի ՚ի բաց : Յայտնութի ասացե-
լոյս չկարօտի օրինակաց :

Ե. Համարարդուի , (*) զոր կուտակեալ , կմշշեղաւ-
կուտեալ հաւաքարանութի կոչէ Կիկերոն , և մակա-
րերութի հետեւութե ՚ի բազում առաջարկութեց ա-
ծանցելոց ՚ի միմեանց : Վանզի ՚ի միոջէ խոստովանեալ
առաջարկութենէ դիմետ բերէ ածանցելով ՚ի միմեանց
այլեայլ հետեւութիս . որոց իւրաքանչիւրն համարի
առաջարկութի հետեւորդին . մինչև իջեալ հասանիցէ
՚ի խնդրեալ նախատակն : Զանազանի սա ՚ի մակածու-
թենէ . զի նա ձեռնարկէ ՚ի բազում զանազան իրաց
միաւորելոց ընդ հետեւութե . իսկ ՚ի սմա իւրաքան-
չիւր մասունք զիրերաց ունին և ՚ի միմեանց ածան-
ցին , մինչև հասցեն յեզր հետեւութեն :

Զորօրինակ (Լամբ . Բին պարագ .) " Թէ ոչ մտանեմք
և ելանեմք հրամանաւ , ոչ խայտառակիմք վասն մե-
զացն . և յորժամ ոչ յանդիմանիմք , ոչ ամաչեմք . և
յոչ ամաչելն , և ոչ յապաշնարութի յորդորիմք .. :

Այս ձեռնարկութի առաւել իմաստամիրաց անկ
է համառօտութիք քան ճարտասանից : Եւ ևս՝ դիւ-
րաւ սպրդին ՚ի սմա վրիպակք , զի նար է թէ յիւ-
րաքանչիւր տռաջարկուիս մոցեն ստութիւք և պատ-
րանք : յորոց ոչ ուղիղ ելանէ հետեւութին : Թուղ զի
և ծանրաբեռնէ զուշ մտաց :

Զ. Երկսայրաբանուի (**) է ձեռնարկութի կազմեալ
յերկուց ներհական առաջարկութեց , որոց չիք մի-
ջին . զի զորն և մերժեսցէ հակառակորդն յերկուց
ծայրից անտի , անկանի ՚ի միւսն : Այսր աղագաւ-

* Յն . Σωρείτης . լո . Sorites . ու հանավիէ Շեշտ-
իոյք իսմ շեղջառն :

** Յն . Διλήμμα . լո . Dilemma .

և Եւ Չերաւոր կոչի սա : Կանոնք ձեռնարկութեն էն :
‘Սամ’ զի յերկուս տուածարկութիս անդ բովանդակութեր ամփոփիւցին խմասաքն, որպէս զի մի մնացէ ինչ միջական՝ զոր ’ի ձեռն տոնուցու հակառակորդն առ ’ի թափել զանձն ’ի ձեռնարկութենէն :

Եցրկրորդ՝ շուրջ պրկել զհակառակորդն երկոբումբք մասամբըն առ հասարակ . որպէս զի մի կարասցէ նա զբովանդակն յետո ընդգեմ դարձուցանել . որով ’ի սպառ վատթարի ձեռնարկութին :

Յովհան Խմաստառէրն (ԸՆԴՀԵՄ ԵՐԱԿԱՆԻ) . Երկուս տեք կաշկանդէ սովառ զհակառակորդն, զի յոր կողմին և դարձցի՝ անկցի ’ի ծանր մոլորուի : “ Զիաղոդ դու մոլորեցար, կամ ոչ իսկ ասել գեմ և առանձնաւորութի երեքանձնական զօրութեն, և կամ թէ ասել չարաչար ասել, ընդ լիբէացւոյն ելանել սուր . վոխաննակ երից դիմաց և առանձնաւորութե՝ մի ասել գեմ և առանձնաւորութիք, : Եւ Կիկերոն այսպէս Երկսայրաբանէ . “ Ամենայն ցաւ կամ սաստիկ է կամ թէթէ . եթէ թէթէ, դիւրաստար է . իսկ եթէ սաստիկ, վաղ անցանէ, :

ԳԼ. Բ.

Յաշտա Կրիշ : (*)

Պայտնագործութիւն, մասն ճառին, զոր շարժուել կրից անուանեմք, այն է՝ յորում առաւելքան յայլս յայտ յանդիման ցուցանէ ճարտասանութին զփորձ ուժգնութեն իւրոյ : Զի չէ բաւական ամոքել զսիրտս լսողաց, եթէ ոչ յազմահարեսցէ և խոնարհեսցէ զկամն նոցա ’ի կատարումն բանին իւրոյ . որ շարժութեն և եթէ կրից կատարի : Քանզի չի ինչ ըստ Կիկերոնի առաւել մեծադոյն ’ի բանս որ նապատեսցէ առենախօսին և լսողին, բայց դրդել զունկնդիրս կրիւք քան դատաստանաւ և խորհրդով : Զի բազում ինչ առաւել դատին մարդիկ առ առելութեն կամ սիրոյ կամ ցանկութեն կամ բարկութեն, քան առ ճշմարտութեն : Յազտգս այսր տմենայնի անհնար է ատենաքանին հասանել որում վափաքէ, և յանկուցանել

* Յ. · Πάθος. լ. · Affectus .

բունկնդիրն վաստիւք բանականօք՝ մինչ չեւ փոխեալ
և շրջեալ զիթրտս նոցա, և առանց բռնանալց՝ ՚ի վե-
րայ նոցա քաջութեալ արհեստին իւրոյ :

Յաղթանակ ճարտարախօսուե բովանդակ ՚ի սմին
է . քզի եռանդն՝ ՚ի բանս՝ շունչ իմն և հոգի է ճա-
ռին . իսկ ուր ցուցեալ արծարծուն բանիւք վառութեա-
կրից, այն ատենախօսուի մեռեալ է և անբարբառ .
և ոչ լինի ձեռնհատ ատենախօսն բռնանալ նովաւ ՚ի
մերայ ունկնդրաց իւրոց, և աղջել ՚ի նոսա զոր ինքն
կամի՞ ընդդէմ բնութեալ և յօժարութե նոցա, և ընդ-
դէմ իսկ կամաց նոցա : Ըստ այսմ չկարաց կեսար
զդէմ ունել կիկերոնի ՚ի լսելն զնառու նորա ՚ի ջա-
տագովութեալ կիդարիոսի . թէպէտ և կամակար պըն-
դեալ էր ՚ի խորհուրդու անձնապահ լինել ՚ի յափըշ-
տակիւ լեզուէն կիկերոնի, և չներել կիդարիոսի : (*)

Կիրք յարձակումն է հոգւոյ սասատիկ ՚ի փափա-
քումն կամ ՚ի խորշութեալ որով այլայլեալ վրդովի բը-
նութին դվյումին, և դոդցես ՚ի դուրս ելեալ յիւրմէ
ոչ ևս աւսանէ և խմանայ զիրս որպէս եննն զոր օրինակ
են սէր, ատելութի և ցասումն . և մեզմականք՝ հե-
զութի, պատկառանք, այլովքն հանդերձ :

Յաղագս կրից աւանդեն բնաբանք և բարոյախօսուք
և հոետորք : Բնաբանք ուսուցանեն զիսկուի նոցին .
և զպատճառու՝ յորոց աղջին ՚ի մարդ : Բարոյախօսուք
հրահանգեն զմարդիկ ՚ի հանգամանս ուղղուե կրից :
Իսկ հոետորք ուսուցանեն զեղանակն արծարծանե-
լոյ կամ հանդարտելոյ զկիրս, որով ատենաբանք հա-
մոզեն կամ տարհամոզեն զունկնդիրս : Արդ ը այսմ
մասին անկ է մեզ նկատել զայնս :

* ՅԱՀԻԿԱԳՈՎՈՆ ալենացաց պապուի ընաւա - արդէլ լու-
էր արենաբանից, մի ՚ի վար արիանել յառաջաբանութի և
շիւս ՚ի յառաջան իշից . ունեկի՝ առ դադարաւ Արդիկա-
գին, որտ էին արդ իմաստունք և զգօնք, շոր էր յառա-
ջիւրուի պարմատաց առ ՚ի շարժել զնուս յարկի դադա-
րան : Զնոյն էր առնել և արդի արենաբանից, եթէ շոր
համարէր առ մարդիս յիշապահութի և էր բարույ . ամիսն
զի բազումն նեղէր և գիտեն ովայականն , ամիսն պապ-
ուսէց ՚ի նալար իմաբենաւնեն անյանց՝ ունդի դառ ՚ի լսեն,
շուն որոյ հարի և արենաբանին բառն հարիանել ՚ի աղու-
թիւնապին՝ առ ՚ի շարժել շիւրա նոցա :

Կիրք մարդոյ այնչափ են, որչափ այլայլի և տադշասի հանգարառութիւն բնութեա: Վասն որոյ ոչ ինչ միտ Եղեալ յորոշումն թուոյ նոյս, զկարևորան և եթ համառօտել վութառցուք յառաջնկայդ:

ՊՐԵԿ Ա.

Յաշակ Սիրու և Արեւած: (*)

Ակիմն է յօժարուի հոգւոյ, շարժեալ 'ի բարութենէ սիրեցելոյն: Պատճառ և սկզբնառիթ սիրոյ ծագէ յընդհանուր նմանութենէ և համեմատութենէ իրացն առաջի մասուցելոց. յորում աեսանէ զըննողն՝ հանգիստուի իմն ընդ առաջիկայն և ընդ անձն իւր, կամ գեղեցիկ համեմատութիւն ընդ մէջ մասանց իրացն այնոցիկ: Զորս մի առ մի նկատեալ և սքանչացեալ ը այնս, բնաւորական ախորժանոք յօժարամբաէ 'ի նոսա, որպէս զի որչափ 'ի խորս մասանէ 'ի հանգամանս նմանութեց նոցա և գեղեցիկութեց, այնչափ առաւելու յօժարութիւնոց սիրել և գուռել ըդնոյն: Զայս միօրինակ է մեզ խմաստասիրել և 'ի քըննութենիւթականաց և աննիւթականաց, և յոր ինչ առ հասարակ յօժարէ բնութիւն արդար օրինոք, բռվանդակ յայսմ իմաստասիրութենէ յառաջ գայ, և ըստ պայմանի իրացն սիրեցելոց՝ զանազան անուանց և տարազու վիճակին յօժարութիք մեր:

Արդ այսպէս իմացեալ մեր զիսկութիւն սիրոյ, որ անողին բունաւորն է և գլխահար ամենայն խափանածոց, 'ի յօժարեցուցանել զոք 'ի սէր ուրուք՝ մարթէ յորդոր ընծայել.

'Կախ' առաջի գնելով զգերազանց առարինութիւն և զքանալաւ բնաւորութիւն սիրելոյն: Զի եթէ առարինութիւն և լաւուի ինքնին սիրելի են և հաճելի, յորմէ ոչ ոք երբէք զերեսս դարձուցանէ, հարկաւասպա և որ ունողն է առաքինութեցն այնոցիկ՝ գովութեարժանաւոր գատեալ լինի և սիրելի:

Երկրորդ՝ յիշաստակելով զերախախս և զօգուտս նը առ այլս, կամ առ այրն զոր յօժարեցուցանել կամիցիս, և զսէր նորա վորսադարձ:

Երբորդ՝ 'ի վերայ թերելով զապատայ բարեյցը ակն-կալութին, որում մարդի իցէ մնալ առ. 'ի նախնենէ. զի յայնժամ երախտիքն մշծարտնաց պատճառս տան նմա, և սիրոյ արժանի կացուցանեն :

Օոր ինչ ասացաք վասն մարդոյ. զնոյն խման և վասն այլոց իրաց, 'ի մէջ թերելով զամենայն որ 'ի նմին պա-սուականութիս, զօգուան, զկարեղութին, զպի-տանութի և զգեղ : Ըստ այսմ Փարավեցին ընդարձակ ճոխարանութիք և ստորագրութ 'ի հսմար թերէ զար-գաւանդութի Այրարատայ, ընդ որ սիրով վառին և կարօտանզք ճմին սիրով վերծանողաց. մանաւանդ որք գեղերեալ իցին 'ի հնապատում աւանդութիս հայրենեաց մերոց :

Առելութի է հնացեալ բարկութի, կամ մշտնջե-նաւոր երեսգարձութի յայնմանէ. յոր իբրև 'ի խո-տան զք հայիցի : Ակզբնասպատճառ տաելութէ, է հա-կառակութիւն միոյ ընդ միւսում՝ թելադրութիք կա-մաց և ներհակակիր՝ հաճոյից, յորոց անմիաբանու-թենէ ծագէ գժառութի, և անտի տաելութի : Բարի է ատելութիւնն պատճառեալ 'ի չկամութենէ իրաց չարաց՝ յոր հակառակորդն սրտի մոտք զակասեալ իցէ, և ոչ կամիցի յետա կալ : Այս հակառակութի զհետ թերէ զարդար ատելութի վրէժինդիր : Յայ-պիսի ատելութիւն ջանայ զարթուցանել ճարտասա-նութի, որոյ ազրելք են դիմանարաքն սիրոյ. ըստ ո-րում և ատելութի ընդ սիրոյ դիմաբաժանի . զի ուր սէրն գարդարէ՝ անդ ատելութի ոկասնի : Ասա կա-մելով ատենախոսին յարդար ատելութի շարժել, ջա-նուցի հաւասարի ծանուցանել թէ պատճառք շար-ժիչք սիրոյ ընդ հակառակս փոխեալ են յատելին, և զոր օրինակ գործքն ատելի են ինքնին 'ի գործովն. նոյն պէս և գործովն գլխումին : Ուստի զաղբերս սիրոյ բո-վանդակ ճոխութիք և պերճութիք 'ի հակառակն շըր-ջեսցէ, և անտի ցուցյէ զարդարացի պատճառս ատե-լութէ թշնամույն :

Սարդիս վարդապետ ըստ այսմ օրինակի 'ի ներհա-կաց սիրոյն ատելի ցուցանէ զբարկութի : (Յակ. 7.) « Բարկացօղն ոչ ճանաւէ եթէ գոյ ած և դատաս-տանք նորա և հատուցմունք նորա և սպառնալիք նո-րա և քաղցրութի նորա : » մին իրի յար 'ի գաղանու-թէ կայ մնայ ամբոխեալ խռովեալ, որ և զայլս ամբո-

խէ և խռովեցուցանէ . . . Որպէս զազդ ընծուցն ա-
սեն՝ Եթէ Տիրանունք նորա չար ևս պատառէն քան
զբերանն , սոյնալիսի Են և նորա : Զի մաղիլք բար-
կութէ մահ և սպանութի . Վասն զի չիք և չիք ինչ
դառնագոյն բնութէն քան զրարկութի . որ ոչ միայն
զմբքակայսն դառնացուցանէ , այլ և զունողս իւր
չարաչար տանջէ և մաշէ : Վասն զի որ մաղմի գտո-
նութի կամ մաղասոյ խստութի դիտէ այնպէս իւսա-
սէլ զմարմինս , որպէս բարկութէն դառնութի զհոգի
և զմարմին : Վասն զի այլ ախտք թէպէտ և 'ի դա-
տապարտութի տանին , սակայն սակաւ ինչ հեշտա-
ցուցանեն զգացյութին . խակ սա որքան առաւելու՝
այնքան ցաւեցուցանէ , և տգեղագոյն գործէ զկեր-
պարանն : Յօնքն անկեալք և խոնարհեալք , երեսքն
դեղինք և ապականեալք , շրմունքն սեաւք և երի-
թացեալք . ունչք երկայն և սուր , ձայն խոշոր և
թիւր , աչք հրատեսակք , բանք ընդդիմադրեալք և
անախորժելիք . և բոլորովին դժնեայ և ահարկու տե-
սողաց : Զոր օրինակ Եթէ որ զգազան վայրենի և զան-
ընդէլ տեսանիցէ , որոյ գլուխք բազումք , և աչք որ
'ի գլուխն՝ հրատեսակք և ահարդնահայեացք , և շունչք
բերանոյն՝ հուր բորբոքեալ , և փոխանակ լեզուին՝
սուսելք կախեալք 'ի բերանն , կողք երկաթիք , և
մադիլք պղնձիք . և ինքն մեծութեամբ իբրև զմի մեծ
բլուր . և թէք 'ի նմա հրեղէնք իբրև զարծուոյ , և
ձայն ահարդին և խռովարար իբրև զփողոյ , և զբե-
րանն բացեալ՝ զամենեսին կամիցի կլանել . արդ ովլ-
ոք զնա տեսանելով ոչ սարսէր և զօղէր փախառա-
կան լինել , կամ մեռանէր յերկիւզէն : Այսպէս խմա
և զրարկասիրան , :

ՊՐԱԿԻ . Բ.

Յ-Հ-Դ- Յ-Հ-Ջ- և Ե-Շ-Ե-Ջ- : (*)

ՅՈՅՍ : Ընդ որում իմա և զվատահութի , է հա-
ռութի հոգւոյ ընեդ վայելումն մօտակայ բարւոյ : Զի
'ի վերսոյ հասեալքածայոյայ կմը հաւանողական փաս-

* ՅՆ . Eλπίς . լո . Spes . Հ . Φόβος . լո . Timor .

տիւք զի ընդ հուալ գրաւեսցէ զբարին՝ որում անձուկ փափաքէ, զարթնու ախորժակ կամացն ինդամուել ընդ այն :

Յայսմ յանձնապատասան բերկրութէ մասցն բա զում խորհուրդք յածին 'ի հոգւով նորա, զի մօտ տեսանէ զանձկացեալ բարին, և իբր թէ 'ի ձեռին ունի և վայելէ, և զիստուակումն դիմամարտիցն՝ յորոց տադնապէրն ցայնժամ երկմտութէր և վարանէր : Համեմատէ ընդ իրեարս զմեծութիւն՝ զոր ստանայ, ընդ սպառնալիս վտանգիցն՝ յորոց նեղէրն և եղծեալ վատթարեաց զնոսա : Զայս ամենայն առաւելութէ հանդերձ ընդ միտ ածեալ, իբր յազթական այնպէս խայտայ յանձն իւր, մինչև առաւելուլ իսկ երբեմն և յորդէլ խնդութէն քան զիսկապէս վայելողս բարացն ստացելոց :

Աւրդ ըստ ընութէ այսր կրից օրէն է վառել զայս յօժարութիւն յայր վշտանեալ, նախ առաջի նկարելով նմա զմեծութիւն հասելոյ բարւոյն, և զի մօտ առ դուրս կայ ժառանդութիւն նորա :

Երկրորդ՝ ցուցանելով վառձեռնապատրաստ հնարյան ժամանելոյ փափաքելոյն, յորոց մէն մի բաւական է նմա առ 'ի ստանալ և 'ի ձեռս բերել զբարին զայն, թող թէ բովանդակութիւն ամենայնցն :

Երրորդ՝ խելամուտ առնելով զնա, զի զդժուարուիսն որ առաջի կան գիւրին է իսափանել և յաղթահարել. և զայն յուշ առնելով նմա 'ի բաղում անցից :

Չորրորդ՝ յորդորելով զնա ապաւինել յած. որ գերազանցէ զամենայն հնարիւք, և մեծ ազդուութիւն ներգործէ յայր ածապաշտ :

'Իարձեալ և յարացոյցս 'ի մէջ բերելով առ 'ի ցուցանել զձեռնասուութիւն առ յուսացեալս իւր : Յառաջբերութիւն այս ամենայն հաւանեցուցիչ պատճառաց՝ ազդէ յոդիս լսողաց, մանաւանդ եթէ հարտար յօրինեսցին :

Մեծն վարդան առ ած ապաւինութէն խրախոյս տայր զօրաց իւրոց . (Եւհեկ. Է. 179.) " Հաստատուն կացէք յանցուշտ զօրագլուխն մեր, որ ոչ երեկք մառացի զդործս նահատակութեան ձերոյ : Ովքաջք, մեզ այս մեծապէս է զոր կատարեաց ած 'ի ձեռն մերոյ բնութէս, յորում և զօրութին այ մեծա-

պէս երևի : Զի եթէ զայլս կոտորելով 'ի վերայ ած՝
ային օրինացն՝ պարծանս անձանց ժառանգեցաք , և
զքաջ անուն աղքատոհմին մերոյ թողաք եկեղեցւոյ ,
և վարձուց ակնկալութի 'ի տեառնէ է՝ որ պահի իւ-
րաքանչիւր ումք 'ի մէնջ ըստ սրբին յօժարութեան
և ըստ առաջարկութի գործոց , որչափ ևս առաւել
եթէ մէք մեռանիցիմք 'ի վերայ մէծի վկայուե տեառն
մերոյ Յնի Քնի , որում և երկնաւորքն են ցան-
կացեալ 'եթէ գոյր հնար : Եւ զի այս պարզեք ոչ ա-
մենեցուն է անկ , այլ որում պատրաստի 'ի բարերար
տեառնէն , և մեզ այս ոչ եթէ յարդար գործոց ինչ
պատահեաց , այլ յաննախանձ պարզեաստեն :

Այսպէս է և քաջալերելն Ղեւոնգեանց զկապեալ
նախարարանն , (Եւիւ շ. 276.) "Զօրացարուք , Եպրալք ,
'ի տէր . և միսիթարեցարուք 'ի մարդասիրութին նոյ , որ
ոչ թողու զձեղ որբա , և ոչ 'ի բացէ տռնէ զողոր-
մութին իւր 'ի մէնջ հաւատով 'ի Ք. բացում բարե-
խօսիւքն՝ զոր ունիմք առ նա՝ ոչ շիջանի վառումն կան-
թեղաց ձերոց , և ոչ ուրախ լինի խաւարասէր թշնամին
կենաց ձերոց : Այլ նոյն տէր է , որ զօրացոյց զառա-
ջին նահասական՝ խառնելով զնոսա 'ի գունդօ հրեշ-
տակաց իւրոց : Այսուն սուրբ ոգիբ և ամենայն դաք
արդարոց հասցեն ձեզ յօդնականութի համբերութի ,
զի ընդ նոսին նոցունց պատկացն արժանի լինիթիք ... :

Աերհական է յուսոյ Նրկիւզն , որ է ամբոխումն
և տագնատպ հոգւոյ ը հասանել մօտալուտ չարեաց :
Զի զաստկութի վերահաս արհաւրացն բռնագոյն
համարելով քան զբնական զօրութիւն իւր , որով ոչ
բաւէ զդէմ ունել չարին , լքանին ոգիքն յարիու-
թենէ : Զօրոյ զհետ գայ ահ և դողումն սրտի , և այն-
չափ սաստկանայ երկիւղ յայր վեհերատ , որչափ ան-
բաւական դասի զզօրութի իւր 'ի դիմամարառութիւն
ոսոխին , և որչափ զօրաւոր համարեցի զաստկութի
ուժոյ հակառակօրդին , որում չկարիցէ յաղթել ոչ
իւրով ուժգնութի , և ոչ այլոց օդնականութի :

Ապա ըս այսմ՝ վասն երկեղուկս արկանելոյ 'ի սիրտ
ուրուք , պարտ է նախ՝ սաստկացուցանել զծանրու-
թի չարին :

Երկրորդ՝ վերահաս ցուցանել զաղեան , յորմէ չէ
հնար զերծանել . որպէս թէ 'ի ցասմանէն նոյ հան-
գերձին պատռհասք , որ ոչ աշտուել գիտէ և ոչ

դանդաղել . կամ թէ 'ի մարդոյ , որոյ ներովաճառուն շափ ցեալ՝ այլ ոչ ևս շնորհեացէ զվասան , կամ զի ցասուցեալ է , կամ զի վազնչական ատելութեք մթերեալ պահէ ոխտ 'ի սրաի :

Երրորդ՝ հատանել զամենայն ակնկալութիւն օգնութէ , կամ զի մենաւոր անօգնական է՝ մերժեալ յամենայն ձեռնատուութէ , կամ զի հասարակոց են չարիք՝ յորմէ ոչ որ կարէ խուսափել , և ամենեքին ըսովին դատակներեալ են պատուհասիւ :

Այսու օրինակաւ երկեզուկս արկանէ Սարդիս վարդապետ (Պ. Պէտր. ֆ.) « Բարուոք անօրինեցուք զկեանս մեր , գիտելով թէ ոչ ինչ աւելի եմք քան զիստ գիւրաթառամ . . . և չնչմունք զանազան տապահառն փորձութեց շուրջ զմեզ մածեալ կայ , և ախտք անհնարինք և հեշտացուցիչք զմեզ վայրաբարչ առնեն . և պատրոզն դող , և մարմինս օգնական , և զգայութիս խեթիչ , և հեշտութին ձգիչ , և կարիքն 'ի ձեռին , և ծուլութն խաւարիցուցիչ : Յօրոց յայանէ տիրապետ զերծանել անհնար է ումեք : Զի որ միանդամ մարմին զգեցեալ է , և զգարշապարտ իւր յերկիր հաստատեալ . յայսցանէ նր և անարատ զերծանել ոչ կարէ . . . :

Ըստ այսմ և կիկերոն նկարէ յանդիման աչաց հռովմայեցոց զմօտալուտ արկածս տղէտիցն . « Թուիմ տեսանել զքաղաքս զայս , զակն տիեզերաց , զապահնն ազգաց և ազանց , մօտալուտ հրկիզուք տապականեալ : Տեսանեմ անշքացեալ զհայրենիս , ողորմ և անթաղ զդիակոյտ քազաքացեաց . և զկիթեկոս տեսանեմ մոլեալ 'ի ձեր կոռորած : Յաղագս որոյ մեծապէս ինամ կալարուք ձերոց փրկութեդ և ժողովրդեան Հռովմայ , կանանց և որդեւոց ձերոց , բագնաց և մեհենաց , ազատութեք և փրկութե իսալիոյ , և պետութեդ ողջոյն . . . :

Առ ազգողագոյն ևս տպաւորել զյուղումն երկեղի , պարս է հայել յիւրաքանչիւր ընաւորութիս լսողաց , և իմանալ թէ յորմէ առաւել երկիցէ այրիւրաքանչիւր . զրորինակ ագահն 'ի կորսակնել ընչից , թուլամորթն 'ի կորսակնէ դիւրութնն , փառասէրն 'ի վնասուէ պատուոյն ևն : Զի առանձին երկիւզ կորսեան շահու առաւել դիտէ աղջել քան զհասարակացն :

Յաշտա Բարիսունի և Հեղունի : (*)

ԱՄԱՐԿՈՒԹԻՒՆ, է եռանդուն ցանկութի վրեժինդը լոյ ընկալեալ նախատանացն : Վանդի նախատեալն յարհամարհութի գրելով պատուոյ անձին իւրոյ զառ ՚ի յայլոց ընկալեալ զի՞նամն, փութայ հանել զքէն վրիժուն : Բարկութի յանկարծակի լուցանի, այլ ոչ միշտ փութով չի՞նանի . որ թէ ընդ երկար ձգեոցի, յատելութի գառնայ . զի ոչ միշտ պահէ զի՞նյն ջեռուցեալ զայրոյթ : Զայրանայ բարկութի՝ յանարդելն յանցուք և ՚ի վատատոհմիկ առնեկամց յերախաւաւորելոյ . զննէ զլատրոց անջրպետութի՝ որ ընդ ննքն և ընդ անարդուն, զնորա նուատութին և զյանդդնութի, և զիւր նախապատուուին . վասն այսր ամենայնի բորբոքի, և ՚ի վրեժինդը մաւրերէ :

Կիրք բարկութէ բուռն է քան զայլս, զի սաստկութի շարժէ զոգիս և այլայլէ զկազմած բնութիս . որով դիւրին է վառել ՚ի ցասումն զունկնդիրս :

Սախ՝ Առաջի արարեալ նման զյարդ և զմեծարանս առնն արհամարհելոյ, ՚ի համեմատութի առեալ ընդ անարդութի և տմարդութի անարդողին . մանաւանդեթէ երախտաւորեալ իցէ նա, որ ընդ չնորհակալութին հատուցանէ զայն չարիս արհամարհութի, փոխանակ զի պարտ էր բարիս խօսել և առնել :

Երկրորդ՝ թուարկութի մասանց ՚ի համար բերելով զգեսն և զտուդանս, որ յանարդութէ անափ ՚ի զիսաս անարդելոյն :

Երրորդ՝ Ընդ վայր հարկանելով զանպատճառ և զանիրաւ նախատինսն, որ տարապարտոց յայն եզեւն բուռն հարկանէ : Կարեոր է ՚ի սմին հասու լինել իւրաքանչիւր բնաւորութեց, զորա կամիցիս շտրժել ՚ի ցասումն . քանզի իւրաքանչիւր ոք ՚ի ցասումն վառի յայլեայլ պատճառաց, զորոց եթէ զդիւրագրդիո մասնէն բուռն հարկանիցես, դիւրաւ հորդի ճանապարհ վառելոյ զնոսա բարկութի :

* Յն. Οργι. լ. Ira. յ. πραστης լ. Mansuetudo.

Ընդ սովար դասի և գժգմնութեն, որ է ցաւ սրտի ընդ անիրաւ յաջողուած անարժանից : Վանդի որ վրէժիսնդիրն է և արդարութեն նախանձաւոր, իրաւամբք զարի ընդ բարձրանալ վատթարագունից : Դիմելով թէ անարժան և անրաւական էն նոքա պատռուցն այնմիկ, և զի չարաչար վարելով նոցա զայն աւագութեն, յանկի դործն ՚ի վնաս հասարակաց, և յանարդութեն այնը պատռուց և իշխանութեն զոր յանիրաւի ստացեալ ունին : Այս յուղումն կրից արդար է յամենայնի, նպաստակ ունելով իւր զարդարութեն և զօդուտ հասարակաց : Մասն համարի արդարացի որամառութեն, զի վրէժիսնդիր է վնասուց . և փոխանակաւ զիրերաց ունին, զի բարկութեն վրէժիսնդրէ զվաճառու անձին իւրոյ, և գժգմնութեն զվաճառ հասարակաց :

Մասմիկ բարկութեն փոխադարձ է հեղութեն, որ է նուազումն պրամառութեն . և է բազմաջան առարբնութեն, քան ընդարոյս կիբք : Բազում եղանակք են ՚ի հեղութեն ձգելոյ բատ զանազանութենութենց . քանզի զումանս մարդ է հաճել ամոք բանիւք, որպիսիք են հզօրք և մեծատունք . զումանս սպառնալեօք, որպիսի խուժանն է և ասիկար մարդիկ . զոյլս աշարկութք, որպիսի են վեհերուք և վատասիրաք : Են մարդք, որպի թէպէտ արտաքուստ արտաքս խրոխասապանծք և աշաւորք երևին, սակայն զի ընդարոյս ընաւորութք մեղկաղէտք են, դոյզն սաստիւ թողանան ՚ի որտամութեն . և են դարձեալ մարդիկ որ թէպէտ խոտանք և ընկեցիկք են, սակայն խստութիւն սրտի նոցա և անդրդուելի պնդութեն ոչ դիւրաւ աեզի ասայ հրապտարանաց և սասակութեն սպառնալեաց : Ազա բատ իւրաքանչիւր բնաւորուեցն սպարտ է պատշաճել զրան ողոքանաց :

՚Նախ՝ ինդրել գտանել գեալ ժամանակ : Զորօրինակ՝ եթէ յուրախութեն գոյի ցասուցեալն կամ ՚ի յաջողութեն մեծի . զի յայնժամ առ յորդել իւրնդութեն՝ ուրախութիւն սուաւելու քան զցասումն, և դիւրաւ շնորհէ ներումն : Այսու դիպող յաջողուածով ցածոցց Եսմենք զցասումն Արտաշէսի:

Երկրորդ՝ յայտ առնել մեղմով և համեստ բանիւք, զի վնասն կամ յանցումն եղեւ յանխորհուրդ

գործոյն կատարմանէ , կամ ըստ դիպոց իմն և յանցէտս , և ոչ 'ի կամակար յօժարութէ :

Երրորդ՝ համեմատել զնախկին երախտիս և զվաստակո յանցուցելոյն ընդ առաջիկոյ յանցուածոյն , զմեծութի բարեացն 'ի մէջ ածելով և զնուազութի սխալանացն :

Չորրորդ անպատճառ և անպատրուակ խոստովան լինել զյանցումն , և ներումն ինդրել . և թէ գործն չունիցի իրաւունս անբասիր լինելոյ , յաւելուլ 'ի վերայ՝ թէ մեծ և շքել է 'ի մոռացօնս գրել զյանիրավի թշնամանսն : Սովին օրինակաւ 'ի հեղութի շրջեաց կիկերոն զկեսար առ Լիգարիոս ոմն թշնամի նորաասէ . “Այսպէս սովոր եմք խօսել առ դատաւորայլ ես առ հայրդ բարբառիմ . սխալեցի , յանդգնութէ գործեցի , սարջացեալ եմ . առ դթութի քո ապաստան լինիմ , մաղթեմ ներումն յանցանացս , ազերսեմ զի անտես արասցես , :

Յիշտակաւ վաստակոցն առաջնոց ազատեաց ծերումին Ովրատիոս զորդին իւր , որոյ սպանեալ էր ըզքոյր իւր զԱգրիսինա . Լիւիոս սյսպիսի իմն բանս աւանդէ 'ի նմանէ խօսեցեալ . “Զի՞նչ ապա . զորարդ իսկ մեծաշուք և յաղթանակաւ սկերճացեալ տեսէք , հանդուրժէք տեսանել զնոյն կապեալ ձեռօք , ը կախաղանաւ 'ի գանս և 'ի խոշտանգանս , զոր և ոչ ալբայեցիք կարասցեն բերել զդժնդակ տեսիլն : Երթ դահիճ , կապեա զձեռսն , որք գամմ մի յաւաջ զինու վառեալ զպետութ առեալ բերին ժողովըրդեան Հռովմայ . Երթ արկ քօղ զգլխով ազատարի քաղաքին նոցա . կախեա զնա զմահառիթ փայտէն . գան հար կամ 'ի ներքս 'ի պարսպափակ վայրիս առ կոթողիւք և աւարօք թշնամեաց , և կմ արտաքոյ՝ այլ առ շիրմօք Կուրատեանց : Զե յու տանել մարթասանիք զսլատանիդ , ուր ոչ գեղապանծ յիշտակք արութեն նորա թափեսցեն զդա յանողորմ պատուհասէդ , :

ՊՐԱԿ Դ.

Յաղագ Խնդութե : (*)

Խւրութիւն է յուզումն հոգւոյ ընդ վայելս
բարւոյ : Քանզի յըմբռնել հոգւոյն զմօտակայ զառ-
ձեռն բարին՝ շարժեալ թնդայ ընդ յիշատակ բար-
ւոյն . որով այն շարժումն ուրախական՝ սկիզբն ա-
ռեալ'ի սրտէն՝ ծաւալի և 'ի դէմսն և յաչսն, 'ի հայե-
լին ասեմ շարժուածոց հոգւոյն :

Արդ առ 'ի զարթուցանել յունկնդիրս զիսնդու-
թի, շատ է խորհրդածութե ցուցանել զմեծութիւն
բարւոյն իւրե կամ բաղդատութե չարին մերժելոյ .
մանաւանդ զի և յիշատակ անցեալ չարեացն զիեր-
պարանս իմն յաղթութե տայ կարծեցուցանել : 'Ի
սմին խնդրի ճարտարութի՝ առ 'ի քաջ նկարագրել
զիրսն, մինչե շարժել և խանդաղատել զսիրտ լսողին,
որ և ևս առաւելու, եթէ ցուցտնիցես զսաստկութի
չարին անցելոյ, և զփոխանակել գերազանցութե բար-
ւոյն հասելոյ . որպէս թէ զվեշտսն նմանեցուսցես սառ-
նամսնեաց ձմերայնոյ, և զբարիսն ծաղկաբեր դար-
նայնոյ :

'Ի մտածութէ մեծութե բարւոյն տայ զօրինակ
ներգործութեց խնդուեն, Յոհան մանդակունի յա-
տենախօսութեն : "Այլ սյոօր առ ցնծալ սրտիս և
ուրախանալ մտացս՝ համբարձեալ զձեռս 'ի յերկինս
ընդ ծերոյն դաւթայ աղաղակեմ առ ած, զոր ինչ
գրուաաեաց գոհութե նա յաղագս որդւոյն իւրոյ
Սոլոմոնի մատուցանէր այ բարձրելոյ . Օրհնեալ տէր
ած իսրայէլի, որ ետ ինձ 'ի զաւակէ իմմէ նստել յա-
թու իմ, և աչք իմ տեսանեն : Զայնակցելով ընդ
մարդարէին, ասեմ զնոյն և ես . Օրհնեալ տէր ած
իսրայէլի, որ ետ ինձ տեսանել զորդիս եկեղեցւոյս որ
ինձ հաւատացաւ՝ պատուով շքեղութե պայծառացէլս
'ի քնէ : Հրեայքն պապանձեսցին, ուրացոլք ամա-
չեսցեն . փախեաւ Աղոնիա, որ առանց այ կարծէր
թագաւորել . օգնականացն զգեցեալ զամօթ, սալա-

* Յն . Խօրձ . լու . Gaudium.

բեալք ընդ սեղանովն թագվին . թագաւորեցին , առէ , և ոչ ինեւ . գաշինս կռեցին , և ոչ իմով կամու ...
 Դարձեալ և կիկերոն 'ի ճառին Պիտոնի այսպէս
 'ի մէջ բերէ զինդութիւնն՝ որ եղե նմա 'ի դառնայն
 իւրում 'ի տարագրութէ , “Այն օր յանմահութի
 գրեցաւ ինձ , մինչ 'ի հայրենիս դարձայ , յորժամ
 տեսի զծերակոյտն ելեալ արտաքս , և զամենայն ժո-
 ղովուրդն հռովմայ . մինչ տեսանէի , զի ինքն իսկ
 Հռովմ դզրդեալ 'ի կայից իւրոց՝ 'ի դուրս առ ազա-
 տարարն իւր ընթանայր : Այնպէս նա ընկալաւ զիս ,
 զի ոչ մարդիկն միայն յամենայն դասուց և 'ի տիոց
 և 'ի կարդաց , և կանայք ամենայն , այլ և պարփակք
 անգամ և յարելք և տաճարք թուելին ուրախա-
 ցեալք ... :

Որպէս յայտնի տեսանի յօրինակաց աստի , խըն-
 դուին ընդ իւր անանցըսկետ կցորդեալ ունի և զլըս-
 տահութի , կամ զմէծայոյս ասպատինութի՝ ստացմանը
 անկապուտ բարւոյն , և 'ի մերժելոյ չարին՝ որ երբեմն
 ահարկու երեւէր :

Ազգակից է ընդ խնդութէ և զարմացումն , որ ոչ
 այլ ինչ է բայց ավշութի մտաց , որ յանառնոր և 'ի
 նորանշան իրա կրի , և զորոց ոչ դիտելով զպատճառն՝
 ըզձանան միտք հասու լինել այնց :

ՊՐԱԿ Ե.

Յաշակա Նախայացաւութէ : (*)

ԱՅՆՅՆ ԶԱՒՈՐՈՒԹԻՒՆ է հետապնդութի
 հոգւոյ 'ի ստանալ զբարխ՝ զոր այլք ունին :

Առ 'ի զարթուցանել զայս առաքինի եռանդն յայր
 զգօն , պարտ է առաջի դնել զպայծառութի և զփառս
 առաքինեաց քաջաց , մանառանդ 'ի հայրենակցաց կի՞մ
 'ի համազգեաց : Վասն զի այր ազնուական բնաւո-
 րեալ է թեակոխել 'ի նմանութի վեհից . վասն որոյ
 դիպողագոյն օրինակաւ նոցին՝ վութով վառի 'ի նա-
 խանձ : Պարտ է նկարագրել առաջի նորա զնարսն ,
 որով ամբարձան նորա յայն մշտութի աւագութէ ,

և խրախուսել զնա 'ի նոյն նմանութեն, կտոր 'ի նախանձ դերազանցելոց քան զնոսա . և դիւրին ցուցանել զհնարա առ 'ի նոյն ժամանելոց :

Ըստ սմբին օրինակի խրախուսեր երանելին ղեւոնդ երեց զբանակն չայց 'ի գիշերի պատրաստութեա մարտին . որ յառաջ բերեալ զարիացեալսն 'ի հին օրէնս ընդդեմ ամբարցատութեն և հեթանոսութեն, 'ի վերայ բերեր . (Եւմ. Ե. 190:) "Զի՞նչ ևս երկրորդեցից առաջի ձերոյ քաջ նահանակութեալ գիտակութեալ, զի քան զիս տեղեկագոյնք և հմուտք էք որ կտակարանացն : ... Ապաքէն նոյն տէր է 'ի սկզբանէ և մինչև ցայսօր և առ յարգա, և յաւիտենից յաւիտեանս, և անդր քան զամենայն յաւիտեանս : Ոչ նորոգի, զի ոչ հնանոյ. ոչ մանկանայ, զի ոչ ծերանայ. ոչ փոփոխի անյեղեղուուկ բնութենն այ : Զայս գիտելով, եղբարք, մի թուլութք լքանիցիմք, այլ պնդութք սրտիւ և հաստատուն հաւատովք կամակար յարձակեցուք 'ի վերայ թշնամեացն, որ յարուցեալ գան 'ի վերայ մեր : Մեր յոյսն մեզ կրկին երեի, եթէ մեռանիմք, կեամք . և եթէ մեռուցանեմք, մեզ նոյն կեանք առաջի կան : Մի, տեարք իմ պատուականք, յետ այսուափ 'ի բարձունս վերանալոց՝ այսրէն յերկիր անկեալ թաւալիցիմք . այլ տեղի առեալ անդրէն 'ի բարձրուն հաստատեցուք : ... Օ՛ն անգր 'ի բաց թողցուք զիսաւարային խորհուրդս մոլորելոցն, եղիկլիս և ողորմելիս քան զամենայն մարդիկ զնոսա համարեցուք . . . այլ մեր բացահայեաց աջօք տեսեալ զլոյսն երկնառոր, մի պատահեցոյէ մեզ խաւարն արտաքին . զի ոյք էին 'ի խաւարի, եկին առ նոսա ըցսն ճշմարիս . կուրացեալք վրիպեցան 'ի կենացն, իսկ որք ընկաւայքդ հաւատովք՝ որդիք էք և ոչ օտարախորթք, սիրելիք և ոչ թշնամիք, բաժանորդք և ժառանգորդք վերին խմանալի քաղաքին : Անդ է առաջնորդ վրկութեն մերոյ . աստ քաջութք նահատակեցաւ, և զիոյն ուսոյց ամենայն նիզակակից գործակցաց իւրոց առաքելոց : Յորմէ և դուք էք այսօր կրկին երևեալք, օրհնեալք հաւատովք ընդդեմ աներեւոյթ թշնամւոյն, պատենազէն զբահիւք գէմընդդէմ ընկերակից սատանայական գործոյն . . .

Յաշտի Պատիստանաց : (*)

ՊԱՏԿԱԽՏԱՆՔ կամ ամօթ է խռովուի հոգւոց
ընդ վերահաս անարդութիւն կամ ընդ չար համբաւ :
Գեղեցիկ և առաքինի կիրք են պատկառանք , և
քաղցր շնորհ , որ ոչ ՚ի գործս ևեթ՝ այլ և ՚ի բանս
յայտ յանդիման նշմարի , զի մի ՚ի գուրս ելցէ ըստ
սահման սպատաճողութեն : Այս բնաւորութիւննեւ
պէտ ամենայն հասակաց անկակից է . այլ յաւետ
մեփական է մանկագունից , յորս զօրանայ տիրել :

Օրէն է ամաչեցուցանել զբարեխրատն , առաջին
արարեալ նմազանարդուի գործոյն , զինասն տարեալ
յանձն և յընանիս , և որ յետ այնորիկ չարահամ-
բաւութիւն :

Զայսօրինակ մեղադրութիւն յանդիմանէին հաւա-
տացեալք զառ երեսս ուրացութիւն նախարարացն
հայոց , ընդ որ ամաչէին նորա մեծապէս . (ԵՎՀ. Գ. 92 :) “ Զի առնիցէք զօր կտակարանադ , և կամ
յու տանիցէք զալաս տէրունեան սեղանոյն . մոռանայ-
ցէք արդեօք զհոգեոր օրհնութիւնգ , և կամ ըռեալ
գաղարիցէք ՚ի մարդարեական ձայնիցդ : Կափուցէք
զալս յընթերցուածոց , և խցէք զականիս ՚ի լսելոյ .
մի թէ զմասցդ անմոռացութիւն ոչ յիշիցէք : . . . Նո-
ցա է սպառնացեալ հուրն անշէջ , ընդէ՞ր դուք ընդ
նոսա այրեցեալ տուրեցայք . նոցա պարարի որդն
անմահ , իսկ արդ դուք պարարիցէք զմարմինս ձեր
նմա ՚ի կերակուր : Խաւարն արտաքին նոցա թանձ-
րացեալ սպահի , դուք լուսազգեստք ընդէ՞ր յուրղար-
կեցայք ընդ նոսա ՚ի նոյն խաւար : Նոքա ՚ի վազնջուց
հետէ էին իսկ կուրացեալք , դուք զկնի կուրացն
կուրացարուք : . . . Եթէ գիտէիք և երեւէր ձեզ
յայտնի , սուգ առին երկինք ՚ի վերայ ձեր , և թախ-
ծեցաւ երկիրս ՚ի ներքոյ սոից ձերոց : Հրեշտակք ՚ի
վերուստ են ձեզ բարկացեալք . և ՚ի յերկրէս՝ մար-
տիրուքն են ձեզ ցասուցեալք : . . . Դուք էիք մեր

սպարծանու առ թշնամիսն Տշմարտութեն, արդ դուք
էք մեր նախատինք առ նոյն թշնամիս։ Յայժմ վասն
մերոյ Տշմարիս հաւատոցն և՝ ի մող փոքր ՚ի շատէ;
խնայեին։ և արդ ՚ի պատճառս ձեր և զմեղ անո-
դորմ դասին։ Աչ միայն զանձանց դատաստան տա-
լոց էք առաջի ահեղ ատենին այ, այլ և բազմաց ա-
մենեցուն՝ որ ՚ի ձեր պատճառս և զնոսա ևս չարշ-
ըեցեն,,:

Այսպէս ամաչեցոյց և Աւատրիա կին հռով-
մայեցի զորդին իւր զկորիուլանոս զվտարանչեալն ՚ի
ժողովը ենէ իւրմէ. (Այ-իս. Բ. հօ.) և Կաց մնան
առ վայր մի . չե քո մատուցեալ առ իս, թող դիտա-
ցից՝ առ թշնամի՝ արդեօք դիմեալ հասի, թէ առ որ
դի . գերի՝ իցեմ ՚ի բանակիդ քում, եթէ մայր։ Յայս
վայր ձգեցին զիս երկարութեն կենաց և պատաւութեն
զժուարին, զի զքեղ վտարանդի աեսից, նոյն և թըշ-
նամի։ Ի՞ր իշխեցեր առար հարկանել զերկիր, որ
ծնաւն զքեղ և սնոյց։ Թէպէտ ոխերիմ մաօք հա-
սեր այսր և սպառնալէօք, այլ ՚ի մոտանելն քո ՚ի սահ-
մանս երկրիս՝ ոչ թուլացաւ սրամառութեն քո։ Զիարդ
՚ի նշմարել քո զչուովմ ՚ի բացուսամ՝ չեղե քեղ յուշ
զի ընդ սպարսագրս կան քո տուն, և թերափք առ
տնին, մայր և կին և որդիք։ Ուրեմն թէ չէր իմ
զքեղ ծնեալ, Հռովմ ոչ վտանդէր ՚ի մարտէս։ ու-
րեմն եթէ չէր իմ որդի, աղատ մեռանէի յազատ
հայրենիս,,:

Որպէս և յօրինակացս է տեսանել, առ ՚ի պատ-
կառեցուցանել զայր խիստ և վայրագ՝ օդուէ խըս-
տութիւն բանից։ զի բազում անդամ և խրոխան
՚ի հզօրագունէն զանգիտէ, որ յազերաանս ոչ խո-
նարհէրն։ Կոյնապէս և հեղք բնութիւն ՚ի հանդարտ և
յոզգոյ խօսից առաւել պատկառէն՝ քան ՚ի հրա-
ցայտ կշատամբութէ. զի յոր ինչ յօժարէ ոք, նովին
և թակարթի։

Գ. Լ. թ.

Յ-Հ-Դ- ի անոնաց՝ ՚ի շարժումնել իրից առ հասարակ :

ՈՐՊԻԾԱ զի կարող լիցի առենաբանն զաղցեցու թիւն ազցի ազցի կրից տպաւորել ՚ի լուսա , պարտէ նմա յառաջ քան զամենայն ինքնին զգածիլ կրիւքն այնուիկ, և իրը անձամբ կրեալ զաղէտան և զվիշտա այնպէս միսիլ ՚ի խորս բանիցն , զի և ազդողագոյնս տպաւորել կարասցէ յունկնդիրա : «Բանզի անհնար է յուզել զոք՝ թէ ոչ ըս այնց կրից համանան գըտցին և ասացեալքն , ձայն խօսողին , շրջել դիմացն , արտասուք կամ ցոլմունք աշացն : Եւ զսոյն ոչ կարասցէ նա ՚ի գլուխ հանել , մինչչե քաջ հասու լեալ իցէ իննդրոյն՝ զորմէ բանն է , հաւանելով ընդ այն անձամբ անձին կամակար մոօք , խօրագոյնս խելամաելով Շշմարտութեն և օգտուել , և կենդանի նկարագրելով զիրացն զհանգամաննս ըստ իւրաքանչիւր ընուե : Ուստի բնաւ յառաջ գայ , զի տգետ մարգիկ Տոխաբար յայտնաբանեն զվիշտա իւրեանց կամ զցատումն , բայց զի բացատրեն նոքա զայնս ըս իրացն խելութե , և զի լիով հասու են այնոցիկ յանձինս իւրեանց : Առն ուրումն աթենացւոյ գնացեալ առ Դիմութենէս , աղաւէր զնա ՚ի ջատագովութիւն բնդդէմ ոստիսի իւրոյ՝ յորմէ տարապարտուց հարտահարերն : Եւ զի հանդարտ և անխուով բանիւք պատմելու նմա , ասէ Դիմութենէս . Չերենին ինձ բանքդ Շշմարիս , թէ իցէ նորա հարատահարեալ զքեզ : Խակ այրն բարձրացուցեալ զձայն իւր , ետ պատասխանի զայրագին . Եւ որպէս , ես ոչ հարատահարեալ , ես ոչ վնասուել : Յայնժամ ծանեաւ Դիմութենէս թէ Շշմարիս էին բանք նորա , և յանձն էառ վարել զցատ նորա , քաջ ապացոյց համարեալ զկրիցն այլափոխութիւն ըստ հըռչակաւոր բանիցն Ովբատիսիքերթողի (աշհեսդ+էրեւ.)

“ թէ իննդրես լալ և ինձ , դու յառաջ լաց քեզէն .

Յայնժամ քո դառն աղէտք ինձ ողբալ հանդերձէն , :

Առվարական տեղի արտայայտութեա կրից է վերջարանն . անդ ատենախօսմն հեարի կորզել զհաւանութիւննենքն գրացն ամենայն ճգամբը՝ որչափ ձեռնհաս է ճարտարախօսութիւն ողով և խանդաղատանս հայթայթել : Սակայն և յորով ուրեք ընդիւառնէ զարժմունս կրից 'ի ճառն , հողմով սասակութեա բանիցն բորբոքեալ ուրեք ուրեք զունկնդիրս , մանաւանդ 'ի յերկարածգել ճառիցն , զի մի՛ բազմաբան յերկարութիւն տաղտկացուցէ զսելիս :

Ընդհանուր կանոնք 'ի շարժութիւն կրից , եթէ 'ի վերջաբանի և թէ 'ի հաստատութեա , 'ի սոսին բովանդակին :

Ա . Զննել խնամով թէ արդեզք 'ի խնդիրն առաջեկայ պատշաճիցի սասակութիւն բանից 'ի յոյզու կրից . և ո՞ր կիրք են որ 'ի նմին զօրանայցէ տիրել , և յո՞ր մասն ճառին յանկաւոր իցէ յեռուլ զայն : Որոշումն իրացս պահանջէ զգօնութիւն և մարզութիւն 'ի գործն . քանզի են բազում ինդիբք՝ յորս չիք տեղի շարժութեա կրից , և անպատճառ բռնադատել զնոսին՝ ծագու արժանի առնէ զրանն և անօդուտ :

Բ . Մի ուրոյն ինչ մասն ձեւացուցանել զբանս շարժութեա կրից , և կանխաբան ծանօթութիւն մտանել 'ի նոյն , յորդորելով զունկնդիրս միտ գնել բանիցն ասացելոց : Այս ամենայն տկարացուցանեն ըզբանն . զի յայնժամ պատրաստին նոքա լսել մեծամեծս քան զկար ատենախօսին . և յոյն յաջողել նախատ լինի այլ մեծախօս : Գործ ատենախօսին , որպէս բազում անգամ ասացաք , է գաղափարել ըզբնութիւն . արդ բնութիւնս յորժամ գրգռի և 'ի բազմադէմ կիրս վառեալ բորբոքի , ոչ կանուխ պատրաստէ զանձն . այլ յեղակարծ և բնական օրինակավառի և բորբոքի , մինչև լուցկիք հրոյն սպառեսցին :

Գ . 'ի միտ առցէ ատենաբանն թէ այլ է բռնադատել զունկնդիրս , և այլ շարժել զնոսա : Բռնադատախին՝ առաջի գնելով զհարկն զպատճառն և զօդուտն , իսկ շարժին՝ նկարագրելով և կենդանացուցանելով զիրան այնպէս , մինչև անհնար լինել նոցախուսել կամ հրաժարել 'ի գործոյ անախ : Քանզի ըստ ամենայն շարժութեան կրից յարմարեալ կացոյց բնութիւն և զպատկանաւոր նոցին պատկերս , առ նմին և զերանգս . որոց մինչև կենդանի նկարեալ առաջի

ոգւոցն՝ անհնար է ատենախօսին դրդոել զոք։ Եւ զի օրինակաւ բացարեցից զսոյն, զիարոդ յանձնն զգամբը զպարտա երախտագիտութե կամ կարեկից լինիմք ընդ ումեք։ Աչ յորժամ երկար բանիւք փառ տարանե ատենախօսն՝ թէ ազնուական բնաւորութեք են այդոքիկ, և թէ հարկ է յանձնն զգալ զգոսին։ բանզի զայս և զսոյնն նմանս խօսի նա առ միաս, և ոչ առ կամս։ իսկ միոք ճանաչող են լաւութե, այլ կատարումն ՚ի կամս մնայ, վասն որոյ հարկ է զկամս շարժել։ Յայն սակս պարտ է ատենաբանին կենդանագրել զմարդասիրութն և զփոյթ և զյօժարամառութե բարեկամին, զաազնապ և զվիշտ կարօտելրյն։ զի այսպիսէօք միայն զարթնու յունկնդիրն յօժարութե ՚ի կատարել զիրսն։ Տես զիարոդ նկարագրէ Սարդիս վարդապետ զմաղթանս ողորմութե առ յայ ՚ի դիմոց ողորմածին, որ առաւել ազգոզագոյն է՝ քան զբազմագիմի ներբոզս ողորմութե ՚ի յորդորել յողորմածութե։ (Յաւ ։ չ։) « Յինէն ուսիր, ով դատաւոր, զողորմածութեն շնորհ։ զի ես մարդ դոլով արարի, և գու արա՞ ած գոլով։ Նմանեա ծառայիս տէրդ, աղքատիս՝ որ ամենեցունցդ ես թագաւոր։ Ողորմեցայ պահանջողին, պատկառեցի յաղալողին։ մի մերժեր և գու զբազմուի մաղթողաց։ Բերկրեալ առաքեցի զկարօտեալն, նոյնպէս եզիցի և քոյս։ Երկոքին կարօտեալքն միապէս դոհասցին։ Ողորմեցայ վասն քո կամացդ ես, նոյնպէս և առ քեզ զօրացի։ Բազումցուցի ես ազգակցին զողորմուի։ նմանեա իմուժ մարդասիրութեն՝ բնութե մարդասէրդ։ Այլ զի թեթեագոյն են իմքն, և մեծամեծք քոյք։ Խոստովանիմ և ես։ Այլ գիտեա և զայն ևս, թէ որպան ինչ գերիմերոյ ամենեցուն ես ամենայն բարութեք։»

Դ. Պարտ է վարել զբարբառ կրից, կմ զբնութե և զկերպարանս միոյ միոյ ՚ի կրիցն զսնձամբ զգենուլ։ զի որպէս հանգերձք եթէ համաշավիք իցեն հասակի մարմնոյն՝ քաջավայելու պատշաճին, այսպէս յորժամ համաշավիք և սեփական լինիցին բարբառք իւրաքանչյուր կրից, անդ լիով կատարի գործ ճարտասանութե։ Ըստ այսմ կանոնի պահանջի յստակ բացարութիւնսէ թե, այլ ազդոյ քանզի այր բորբոքեալ ՚ի կրից ոչ այլ ինչ ինդրէ, բայց առաջի առնել զիրսն ըստ որում ենն, և բովանդակ ուժով

սաստոկութք՝ որչափի յինքեան զգայ : Եւ է սեփական քնառորութիւն կրից յուղելոց, զոոյց աներկիւղ, և ռանգուն, զեղուն, պարզ, անարուեստ . զի սնոտի պահունանք՝ ազարտեն զուժգնութին, և արուեստ ոչ մասնէ, 'ի գործս բնութիւն : 'Նոյնպէս նմանութիւք և յարացոյցք օտար են 'ի բանից ասափ . վասն զի այլուր տատանեն զիսորհուրդս, և ցրտացուցանեն զեռանդն յօժարութիւն :

Յաճախ են 'ի ճառու Ասկեբերանի չքնաղ օրինակք զարթուցիչք կրից . որպէս և ուրանօր յաղագս ոք խորհրդոյն ճառէ . (Գ. 108.) Ավայլ ամենեին արթուն պարտիս լինել . քանզի և ոչ սակաւ տանջանք պահիցին այնոցիկ՝ որպէս անարժանութքն հազորդիցին : Զմանաւ ած՝ որպիսի ցառումն մասնըն և խաչահանուցն եղեւ . զգոյշ լիր այժմ, դուցէ և դու պարտական մարմնոյ և արեամն գտանիցիս : 'Նոքա զմարմինն սպանին, և դու յազգանզեալ հոգիդ ընդունիս յետ այնչափ երախանացն :

Քանզի ցառացաւ մարդ լինել և ապտակել և մեռանել, այլ և տակաւին զանձն իւր խառնէ ը մեղ . ոչ միայն հաւատովք, այլ և արդեամբք իսկ մարմին իւր յօրինէ զմեղ . քան զի՞նչ չէ պարտ սրբագոյն լինել այնմ, որ յայնմ վենման վայելիցէ . քան զորպիսիք ճառագայթս պայծառագոյն՝ ձեռինն, որ զայն մարմին հասանիցէ . և բերանցն՝ որ հոգեոր հրովին ընտցու . և լեզուին՝ որ համակ 'ի կարմիրա յահագին յարենէն ներկանիցի : Զմանաւ ած, որպիսի պատուով պատուեցար, կամ յորմէ սեղանոյ վայելես . զոր հրեշտակք աեսանեն և զարհուրին, և չիշխեն համարձակ ընդդէմ հայել 'ի փայլատականցն որ անտի հասանիցին, և մեք նովաւ կերակրիմք, և նովաւ զանկանիմք . և լինիմք մի մարմին և մի հոգի : Ա պատմեսայէ զգօրութիս տն, լսելի արացէ զամենայն զօրհնութիս նորա,, : Ո՞ր հովիւ յիւր անդամոցն կերակրէ զիւր ոչխարան . և զի՞նչ ևս ասացից հովիւ . այլ և մարդ ևս իցեն բազում անդամ, որ յետ երկանց և ծննդոց՝ գայեկաց տան զորդիս : Խակ սա ոչ ժուժեաց զայս առնել, այլ ինքնին կերակրէ զմեղ իւրով արեամբն, և ամենայնիւ ընդ իւր գրկախառն առնէ զմեղ : . . .

Եւ արդ մի ծուլանայցեմք՝ որ այսչափ արժանի

Էղեալք սիրոյ և պատուոյ . չաեսանիցեմբ զմանկունս
մասամգը՝ որպիսի յօժարութ բուռն զսուանցն մարցն
հարկանիցեն , որպիսի յօժարութ մածուցանեն զշը
թունսն ընդ մարցն շրթունս . այսպիսի յօժարութը
մասիցուք յայն սեղան և 'ի մայրենի հոգեոր բա-
ժակն , մանաւանդ թէ ևս յոլովագոյն քան զիսն-
կանցն ձգեսցուք մեք դշնորհս Հոգւոյն : Եւ զմին
միայն արտմութի համարեսցուք , չվայելելն յայնպի-
սի կերակուր . քանզի չէ մարդկեղեն զօրութե դործն՝
որ առաջի կայ . զոյ յայնժամ յընթթեացն ժամն ա-
րար , և այժմ զնոյն դործէ . մեք զարսաւորաց աշ-
ախնան ունիմք , և սրբէ և վերստին կազմէ նա , :

Բաց 'ի զեղուն արտայայտուե աստի , որպէս տե-
սեր յօրինակիդ , բազում ուրեք քան մի համառա-
'ի մէջ երկար զոտցաց , մորմոքիւ որտի և խան-
դաղաստիւ , ազգոյ գտանի մեծապէս և ուժգին բոր-
բորէ զիիրոս : Որպէս Եղիշէ գեղեցիկ խորհրդարանէ 'ի
պատմել զու զօրուն քրիստոնէից յերկրէ խւրեանց՝
գնալ 'ի սրամերազմ 'ի Պարաս . " Խաղացին գնացին
յիւրաքանչիւր աշխարհաց լընմառութիւ ակրասէր խոր-
հրդուլ կատարել զպարսս զինուորութէ . . . հրա-
ման տուեալ աշխարհի ոչ իրու յակնկալութիւ կե-
նաց , այլ իրու վճարութն վախճանի . յանձն առնե-
լով միմեանց զսդի և զմարմին . . . Գորովաղէուք Են
այս քանիք . զի նկարագիրք խմասափցն զարթուցանեն
ուէր և յօժարամութիւ առ հայրենիս . և յայնպիսում
պահու 'յորում հրաժարելն 'ի հայրենեաց զանու-
թի մահու վոխանակէ նմա , սասաթիկ ամրոխէ զբնու-
թի խելամուտ եղելոցն :

Դրիչ երրարդ Մակաբայեցւոյն (Ն . 27.) յիշա-
տակեալ զազիողորդ տագնապ կանանցն վարելոց 'ի
սպանդ ընդ այլ երրայեցիս , հանգամանս իմ 'ի վե-
րայ յաւելու . " Զմասազածին մանկունս 'ի դիրկս
տռեալ՝ յետին զայն ծուծ սախն 'ի բերան եղեալ առ-
դայոցն համարելին . . . Իբր այն թէ յիշէին . զի զայն
վերջին նուադ կաթն զիեցուցանեն աղայոց իւ-
րեանց :

Վազար վարպեցի յետ պատմելոյ զառերեսս ու-
րացութիւն նախարարացն հայոց 'ի զրան Պարսից , և
զդարձ նց 'ի հայս , այսպէս թախծագին նկարագրէ
զտիսրութիւ ընտանեաց նոցա , և զկաթնասուն աը-

զայրցն, բանաստեղծական իմն ոճով. " Ենդ էր լսել զձայն լսլու և զձայնս գումի, գոյխւնս ողբոց և բարբառ հայություն : Տղայքը անձեռուք ՚ի գրկաց հարց իւրեանց պակուցեալք փախչեին, կարծելով այլափոխեալս իմն . և ոչ զնոյնս նկատելով կերպարանս : զարդուրեին : Առեալ հայելով յերեսս մարցն, զօրս անսանեին կողկողագին միշտ և արտօսրաբուզինս : յաղագս որոյ և ինքեանք յարտաստուս հարեալ արդզոյքն, ոչ ոք կարեք լաեցուցանել ՚ի գայեկացն կմ՝ ՚ի գաստիարակացն : Ընդ որ հայեցեալ այնոցիկ, որք պատճառանօք և ոչ ճշմարտութիւնուրացն էին, փութանակի և առժամայն կամեին յառնել և ընդ ինքեանց սուր ելսնել . որոց ոչ պիտեր և առ վայր մի կեալն, քան թէ զայնպիսի անսանել զաղետա և ժուժկալել :

Եւ ուրեք զի և զդէսկս իմն ժամանակին յանկարծ ՚ի ժառան խառնելով յուզէ զկիրս նարտարախոս քաջութեալ պրակէս կրասոս մեծանուն առենարան հռովմայեցի ՚ի հրապարակախոսելն ըդէմ բրուտոսի՝ արար : « Քանզի գէալ եզւ յայնմ վայրի, զի զաֆիկին ոմն մեռեալ յազդէն բրուտոսի յուզարեւուրեին . և առենարանին զայն ՚ի Տահ առեալ, փոխեաց զրանան, և առեցն բրուտոս . » Զի կաս դու առա, զի՞նչ զրոյց կամիս զի ասարցի դա առ հայր քո զքէն, զի՞նչ առ այնուսիկ՝ որոց բարձեալ տանին ահա պատկերքն, զի՞նչ առ ամենայն նախնիս քո, և մանաւանդ առ Յունիոս Բրուտոս՝ որ պատահացն զժողովուրդս զայս ՚ի ձեռաց թագաւորաց : Զո՞ր պարծանս քո, զո՞ր փառս, զորպիսի վաստակս քո պատմեսցէ : Մի թէ զյաւելուլ հայրենի ժառանգութիւն, այլ այդ ոչ ՚ի գէալ զարմիդ աղնուականուն . բայց թէպէտ և ՚ի գէալ էր, զեզիսութիւն սպառեցեր զայնս : Մի թէ զիսոյթ քազարական օրինաց . ասպարէն և անունդ հայրենի պարտ առներ, քեզ զայդ, այլ դու բնաւ իսկ տգէտ ես այնց : Թերեւս զհրահանգս զինուրութիւն, այլ և ոչ զօրս և զբանակ տեսեալ է քո : Իսկ զճարտարիստութիւն, յորմէ ՚ի բաց անկեալ՝ և զփոքք մի ինչ սթափութիւն լեզուիդ և զօրութիւն թոքոցգ ոչ յայլ ինչ ՚ի կիր արկանես, բայց յամօթապարտ զօշաբազութիւն զըսպարտութիւն : Եւ դու իշխեն տակաւին անսանել զարև, դու հայել ՚ի գատաւորս, դու յատնի առու

և 'ի քաղաքամիջն երկել, ոռւ յանդիման քաղաքայն նոց . ոչ և 'ի մեռելսյդ և 'ի ողատկերացդ զարհուրիցիս . յօրոց ոչ միայն 'ի նմանութէն վերջացեալ, այլ և ոչ տեղի տաս գոցա առ քե .. :

Ա. Յուստի ինչ յաղագս շարժութէ կրից :

ԳԼ. Ժ.

Յ-Հ-Գ-Վ-Հ-Բ-Ն-Ի : (*)

Ա ԵՐՋԱԲՄԱ, է յետին մասն ճառին, յորում ամենայն փաստք 'ի մի գումարեալ ուժդին ընդհարկանեն : Վանդի 'ի նմա պարս է համառօտութէր բռվանդակ ամփոփել զնախկի զասացեալսն, և յուղել շարժել զիկրո ըս իւրաքանչիւր պիտոյից : Այս մասն մրցանակ է ճառին . և եթէ ոչ ճարտար յօրինեսցի, կթուցանէ յուժգնութէ զնառն ողջոյն :

Յայտ է 'ի սահմանէս և 'ի բացարութէս' թէ երկու մասունց Են վերջաբանութէ, բովանդակութի և Ըարժութի կրից . Բովանդակութի է, որով առենաբանն հաւաքէ համառօտիւ զյառաջբերել փաստս 'ի կարգի ճառին՝ ամփոփեալ իրրե 'ի մի տեսութի, առ 'ի վերստին յիշեցուցանել լսողաց զասացեալսն, և ուժգնակի տպաւորել զայնս 'ի միտա նոցա :

Կանոնք վերջաբանին այսորիկ են .

Ա. Քաղել յապացուցից անտի զազդողագոյնսն և զկարեորս, և զանց առնել զդուզնաքեիւք, զի մի սաստկութի բանիցն մեղմացեալ առ տեսարութէն նոցա՝ զբովանդակն արկցէ 'ի զօրութէ :

Բ. Յիշեցուցանել զփաստան համառօտիւ, և մի յերկար յայնս գեգերել :

Գ. 'ի կրկնութէ անդ պատճառացն և բացարութէ զանազան եղանակօք ծանուցանել զիւրաքանչիւրսն, զի մի նմանաբանութին յամենայնի միօրինակ՝ տազտկութի արկցէ 'ի լսելիս :

Դ. Գրաւել վերստին զմուագրութի ունկնդրաց շքեղ ոճով, որպէս զի գիւրաւ մարթասցէ յուղել զիկրա նոցա : Առ որով և զայս գիտել արժան է, զի

* Յπίλογος . լո . Peroratio.

առ վերջաբան համառօտ հառից՝ ոչ խնդրի բովանդակութի : Վասն զի 'ի համառօտութե բանից չներէ : աեղին ձեռն արկանել 'ի կրկնութի պատճառաց, ուր յայտնի են ինքնին . և քանզի նպաստակ բովանդակութե է գարսան առնել մոռացութե, 'ի սակաւը բանս մոռացութին ոչ զօրանայ տիրել : Նոյնակէս 'ի կացրդական հանդիսի չէ օրէն բովանդակութի առնել . քանզի ընթացք բանին ոչ է յառաջբերութի փաստից ըստ ատենաբանին և բաղիուհականին, այլ դոմիսոք նկարագիրք և գեղազարդեալ վիպասանութիք : Այլ պարտ է աւարտել զվերջաբանութին կացրդականին 'ի բարեմաղթութի կամ 'ի խոնարհական նուիրումն . կամ առ գահագլուխ ժողովոյն զբանան ուղղվէ, ոզորկագոյն գարձուածովք իմաստից բարեմաղթելով . կամ ներումն հայցելով : Մարթ է և յորդորականաւ գլխաւորել, յօժարեցուցանելով ղլսողս 'ի նմանութի առաքինութեց գովելոյն : (*)

Յաղագս շարժութե կրից լիով աւանդեցաք վերագոյն . այլ զի առաւել 'ի վերջաբանի պիտին այն ամենայն, յիշեցուցանեմք ասաէն զիարեորդ դիտելիս : Քանզի են բազումք յատենաբանից, որք քաջ հարաբախօսեալ զամենայն 'ի սմին թերանան, որ կարուրագոյնն է :

'Ամի՞ պարտ է ջանալ զի յաւարտ ատենաբանութին 'համոզեաւ մեկնեսցին ունկնդիրք . և առ այս հարկ է զբովանդակ հառսն յառաջ թերել յաղբերաց վայելութե, իրաւանց, և հստարտկաց օգտակարութե, ըստ պատշաճելոյ տեղւոյն, ժամանակին . ունկընդրացն, և միշտ ճշմարտասեր ցուցանելով զանձն :

Երկրորդ՝ ըստ բերելոյ հանդամանաց մեծացուցանել կամ փոքրկացուցանել զառաջարկեալ խնդիրն, իրեն իւր յատուկ ցուցանելով զբանն . և նովառ աղջողագոյնս տպաւորել զիրս՝ հոյակապ ոճով և վսկէմ իմաստիւք :

* Զիւշնդասիւնի ժարդիշ 'ի վերջաբան ճառին հնարեւաւ Ուրբենակա հաւակնեցի ժամանակաւուիշ, կիկերանի, և երիշագոյն գան ըստ : Մարդ է առնել բակարաւուիշ սորեւ և 'ի իւրդի ճառին, զան դիւրաս յառաջ պահելու զանցնաւուն . յաղագս այնորին առնդիշին զայն հանգ և 'ի իւրդս յւեց :

Եղբարդ՝ շարժել յունկնդիրսն զկիրս սպառկանաւորս ՚ի մրցանակ և ՚ի յաղթութեն. համառօտ առնել զվերջաբանն, այլ ուժգին. զի ըստ Կիկերոնի չկը ինչ գիւրացանքելի քան զարասասուս։ Միանդամայն առնել լուրջ և սպառկառելի, ըստ նմանութեան ծանրաթեան նաւու, որ Երագ սահեցեալ ընդ մկանունս ծռվուն, ՚ի մոտանել անդ ՚ի նաւահանդիսան՝ հանդարտէ զգնացս իւր, և սիդանեմ նազելով խարիսխ սրբանեալ ծռվափամբ։

Յաւելու արժան է աստ և օրինակս գեղեցիկս ՚ի նմանութեն։ Լամբրոնացին գրեթե բովանդակէ զամ զկանոնա զայտոսիկ ՚ի վերջաբան Տառին Համբարձման։ «Ո՞վ մեծի շնորհիս, ով անհառ երախտեացս՝ ով անկշռելի երախտեացս՝ որում արժանի գտար, և կեղեցի, ՚ի համբառնալս Քնի։ Զի ած ՚ի մեր կոյսէ, և ոչ ոք է մեր հակառակ։ Հայր արդարացոյց զքեղ միածնին արեամբ ձրի շնորհօք. և նովաւ հանդերձ այսօր զերկինս ամենայն Երկնային փառօքն շնորհեաց քեղ։ Ո՞վ դատապարտէ զքեղ, կոյս սուրբ, որ խօսեցար հարսն Քրիստոսի, և յանդիման կացեր նմին հաւատով, յարժամ ած զքեղ արդարացոյց, և ընդ նմին յարուցեալ յերկինս նոտոյց։ Յա Քն մեռաւ վասն սիրոյ քո, և յարուցեալ ել այսօր յերկինս, և նստու ընդ աջմէ Հօր բարեխօս վասն մեր, զի՞նչ է յերկրային հեշտութեց՝ որ կարէ մեկնել զմեղ ՚ի սիրոյ նորա։ Բաց զաջո քո, և անս թագաւորին քո զիտոս, և ՚ի նոյն փութացեալ Երագեա։ Արկ ՚ի բաց զքոզ տգեղութեն Երկրաւոր սահեցման, և մուտ ընդ յոյսն քո ՚ի ներդոյ վարագուրին աարածման։ Խարիսխ քո յերկինս, դու ընդէ՛ր ՚ի ստորինս կորանաս։ Թագաւորին քո յաթոռն փառաւաց և շնորհաց։ դու ընդէ՛ր մասունել առաջի նորա հեղդանսաս։ Կարապեսն Յիսուս զերկնից դուռնն այսօր մաեալ քեղ երաց, ժողովուրդ նորա և հօտ՝ ընդէ՛ր ճշմարիս Տանապարհաւն առ նա հանդէ՛լ յուլանսաս։ Աստի, օ՞ն, հրաւիրեցար զնալ ՚ի յերկրէ յերկինս, յապականութենէ յանապականութեն, ՚ի միջոյ կարձաց ՚ի հրեշտակաց դասակցութեն։ Դարձիր յունայնութեց, և կացու զոսա քո յուղիղ պողոտայն. զի գնացեալ ընդ նոյն այժմ հաւատով, արժանի լիցուք յետ ելցն առափ՝ Երկնային տանն օթեանայն հոգւով, և յաւիսէ.

համան կենացն ՚ի հանդերձեալ գալուանն մարմ-
նով,, :

Դարձեալ և Եղիշէ վարդապէտ այսպէս վերջաբա-
նէ ՚ի խրառն առ միանձունս . . . Եթէ եկեսցես զիես
գեղեցիկ վարդապէտութեան հարցն՝ զորս վերագոյնն
գծագրեցի քեզ զվարս սուրբ միայնակեցացն, յայն-
ժամ կարասցես համբառնալ զաշու մտացդ առանց
ախախց չարչարանաց, հայել և առանել զքեզ գեր՝ ՚ի
վերոյ քան զամենայն Երկինս . Երանի տայցես անձինդ՝
քաջապէս հողոպրեալ ՚ի վշտալից կենաց աշխարհիս : . .
Դռւ ևս այնու հետեւ մարդարէն, որ ոչ պատրեցար ՚ի
մարմնական աշխարհիս . այլ թեածեալ թռուցար
յանմարմին աշխարհն, և հանգուցեալ դադարեցեր
յանմարական ուրախութիւն,, :

Ավելերոն զօտագովութիւն Լիդարիոսի, որ ամ-
բաստանեալն էր առաջի կեսարու իր թշնամի նորա և
թեկնածու հակառակ որդւոց նորա, այսպէս առար-
տէ . . Եթէ նկատեալ հայիցիս ՚ի միաբանութիւն Լի-
դարիոս զբարց, զամենեսին զոտաս քեզ եզրարս հա-
մարիցիս : Եւ ով երկմանեցէ, զի եթէ Լիդարիոս ՚ի-
տալիա գիտեալ էր, ՚ի խորհուրդս եզրարցն լինէր .
ո՞ւ է որ ցիտիցէ զոտաս միաշունչ և միախոն համակա-
մութիւն, մանաւանդ ՚ի սմին եղբայրական զուգաձայն
նութիւն : Ո՞ւ ոչ գիտիցէ, զի որ զինչ և պատահէր,
Եզրարցդ այդոցիկ անմարթ էր համակառակ ունել խոր-
հուրդս ընդ իրեարս : Արդ կամակար դոքա ամենեքին
ընդ քեզ եզեն . մին ՚ի մրրկէ յափշտակեցաւ, որ թէ
կամակարութիւն գործէր զայն, դարձնալ ՚ի նոցա սա-
կի էր՝ որոց գու ներսամն շնորհեցեր : Սակայն ՚ի պա-
տերազմ միեցաւ . մեկնեցաւ, ոչ ՚ի քեն միայն՝ այլ
և յեզրարցն : Սորա քոյն հաւատարիմք ազաշեն
շքեզ . . . այլ ոչ ինչ է յիշասակել ինձ զայդ . ակն
ունձիմ եւս, որ ոչ ինչ գիտես՝ մոռանալ՝ բայց զանի-
րաւութիւն . զի այս սեփական է ոգւոյ և մտաց քոց : . .
Արդ այժմ Եզրայր ամբաստանելոյն ազաշաւոր առ
քեզ՝ զեզրօրն աղերսէ զազատութիւն . զոր թէ սորին
բարեխօսութիւն շնորհեցաւ եզրարցն իւրոց Երկոցուն,
զանձինս Երից եզրարցն առ հասարակ զքաջնակրս և
զառապինիս, ոչ միայն նոցա և մեզ մերձաւորաց նո-
ցա, այլ և պետութեան զլիսովին շնորհեցաւ : Արդ
արա զոր ՚ի մօտոյ իսկ արարեր յատենի ը ազնուա-

կան և ընդ քաջալաւ այրե Մարկեղոս • արդ զնոյն և
աստ 'ի հրապարակիս արասցես ը առաքինի և ը ար-
ժանաւոր Եղբարս : Զոր օրինակ շնորհեցեր զնա ծե-
րակուտին , շնորհեա և զսա ժողովրդեան , ընդ որոյ
իղձոն խանդաղատիս : Եւ Եթէ այն օր մեծափառ
եղեւ քեզ , և ժողովրդեանն չուովմայ 'ի զարմացումն ,
մի՛ աղաչեմ , մի՛ երկմտեր Կեսար՝ զի և այժմնմանօրի-
նակ փառք հասեալ կան քեզ : Զի չիք առաւել հա-
ճոյական բազմամբոխ ժողովոյդ՝ որպէս բարութի , և
չիք 'ի բազմադէմ առաքինութիս սքանչելի և չնաշ-
խարհիկ քան զողորմութի : Զի և մարդիկ ոչ այլազգ
ինչ մերձաւոր գտանին առ ած , քան փրկութի շնոր-
հելով մարդկան : Բաղդ քո ոչ այլ իմիք մեծագունի
ձեռնհաս գտցի , և ոչ բնութիւն քո լաւագունի՝ քան
զոր կամիսդ , զյոլովիցն ասեմ փրկութի : Երկարագու-
նից արդեօք պէտք էին բանից 'ի ջատագովութի , այլ
առ քո բնաւորութիդ՝ համառօտ անկ է . վասն այնո
օգտակարագոյն դատեցայ՝ առաւելքան զիմ և զայ-
լոց բանս լսել քեզ ը միտս քո 'ի խորհուրդ մտանել ,
և ես բանիս վախճան արարից : Այլ զայս ևեթ ա-
սեմ . զի եթէ նմա , մինչ 'ի բացեայ կայ , փրկութի շը-
նորհեցես , մեզ ամենեցուն զանձն քո պարդես-
ցես , :

**Այս վերջաբան , արտասանեալ 'ի Կիկերոնէ , սասա-
նեցոյց զանդրդուելի պնդութի Կեսարու . որ այլ յայլմէ
եղեալ , եթող 'ի ձեւաց զփուրշից ամբաստանուեցն ,
և կամակար ներումն շնորհեաց Լիգարիոսի :**

ԳԼ. ԺԱ.

Յաշագո կազբական հանդիսէ :

|| Սկիզբն կորոցս սուղ բանիւ յիշեցաք զՃար-
տասանտկան հանդէսս , և թէ զինչ այնոքիկ իցեն .
մնայ արդ լիագոյնս աւանդել զնոցանէ : Առաջինն է
կացրդականն հանդէս , որով իմաննամբ զամենայն աղգ-
ճառից հրապարակախօսեալ 'ի ժողովս բազմակոյտ
մարդկան 'ի տօնախսմբութիս եկեղեցականս և 'ի քա-
ղաքականս , 'ի պատուասիրութիս թագաւորաց , և 'ի
տիսրական հանդէսս արձանականս նշանաւոր արանից

Քախճանելոց : Յաւել' ի սոյն զներհականն զպարսաւ և զդորովանս 'ի վերայ անարժան գործոց և գործողաց : Զայտոսիկ և անունն ինքնին (*) նշանակէ . զի կացուրդ 'ի մեզ իմանի համահաւաքումն բազմութե՛ ի տօնս ուրեք և 'ի ժողովս :

Աւդ 'ի կացրդականս պիտոյ է ատենաբանին ոճքանից յստակ և արծարծուն : Այն ամենայն ձեք որք զուարժացուցանել գիտեն և շարժել, բովանդակ լրիւ իւրեանց պերժանան 'ի սմա՝ զմի մի 'ի գտեալ և 'ի պատրաստեալ իմաստիցն զարդարել և ճոխացուցանել . որովք առ հասարակ շարժեալ իսուղին, 'ի նոյն յեռանդն շարժէ և վառէ զառին :

Առ այսու ինամով յուշի կալցին աշակերտեալքն Ճարտասանութե՛ զյետագայ զանհրաժարելի և զընդհանուր կանոնքս 'ի յօրինուածս կացրդական Ճառից :

Ա. Զեռանդն բանին համեմատել ընդ իսկութե՛ առաջադիր նիւթոյն . զի ոչ ինչ է տարադէստ քան զչափազանց սաստկուն բանից 'ի նիւթ դուզնաքեայ, կամ ընդ հակառակն 'ի մեծամեծս նուազութի բանից : Չափ ճոխութե՛ և մեծութե՛ բանիցն լինիցի ըստ իսկութե՛ ինդրոյն 'ի հանդէս մատուցելոյ . զորօրինակ թէ ոք ձեռն արկանէ դսրովել զարբեցութի, և այլ ամն զմախանս . յառաջնումն ազդուղոյն է արտաքին նկարագիր գործոց արբեցութեն, և եռանդնոտ յօրինուած իրացն . իսկ յերկրորդումն քաջութե՛ ատենաբանին անկ է մանր քննել հանդարա բանիւք ըզբնութի մախանացն և զչարակինութի նորա . զի մին արտաքուստ տոչորէ զյափիշտակեալն 'ի նմանէ, և միւսն ներքուստ սպառէ զսիրտ և զոգիս նախանձուաին :

Բ. Որպէս կանուխ աւանդեցաք 'ի Ճառս կրից, զի ոչ ոք կարէ շարժել զունկնդիրս 'ի բանս իւր, եթէ ոչ ինքն նովին ազնուական հրովարտակեալիցէ, զնոյն այժմ գարձեալ յիշեցուցանել արժուն համարիմք : Իսկ առ այս սլարտ է նախ խելամտել 'ի խորս իրացն, իրը թէ մեք ինքնին բաժանորդք իցեմք 'ի գործ անդր, և 'ի մեզ յանկիցին յաջողուածք կամ ձախորդութիք

* Յոյն+ յորոց և Լապին+ և Էպալացի+, Ցուցական անուանն զայս հանդէս . Ե'πιδεκτικόν . Demonstrationum . Իբր նէ յայս յանդիման շուշանէ պարձն գովել և զպարհառելի :

իրացն . յայնժետմ 'ի հարկէ առաւել ջեռնուն օգիք մեր , և զնոյն թերմութիւն աղջողագոյնս տպառորեմք առ որս մերձ կան : Ապա թէ ոչ , քան զկէ զծուպատիր հնարս չեք ինչ ծաղրական . որ և առակ նշաւակի կացուցանէ ցցուրտ ատենաբանն : Զի ցուցանել բան մին զնշանակս կրից զայրացելոց առանց զգալոյ , արտաքոյ ելանէ ըստ օրէնս բնութիւն . և անդոյ կերպարաննեան յամենայնի սիսալ գտանի :

Գ . Ուր նիւթն մատակարարէ ուժգնուի բանից , և բնաւորութիւն օգնէ 'ի նոյն , դարձեալ արժան է մի զանցանել ըստ արդարացի սահմանն : Մի յեղակարծում վառել լուցանել սաստիկ զունկնդիրս . այլ չափաւորութ սկսեալ , լու չափու յառաջնազացութէ փաստիցն և մեծութէ նիւթոյն՝ յաւելուլ զուժգնութիւն ոճոյն և զհուր սաստիկութն , ձգելով զունկընդիրս զինի : Զի եթէ ատենաբանն ինքն անպատճառ յառաջ խազայ 'ի զայրոյթ կրիցն , և զնոսա զենի իւր թողու , ոչ աղջելով 'ի նոսա փաստա հզօրս զպատճառս ուժգնութէ բանիցն , տարապարա լինին բանիք նորա . զի զոր նայն ասէ , այլք ոչ իմանան : Դարձեալ զի և մեծարանս պարտ է զնել ունկնդրաց , ընդ կոպարաւ ունել զյարձակութն կրից , և չժողացուցանել 'ի տեսութենէն զմառադրութիւն փաստիցն , և զնոցուն ընդ իրեարս կցորդութիւն : Այս սանձակոծութիւն բանին 'ի խուճապել անդ եռանդանն , բազումս օդնէ 'ի զուարձութիւն և 'ի յազմութիւն :

Դ . Գլուխ ամենայնի պարտ է գետակն ունել յասի 'ի վայելութիւն ժամանակին , տեղւոյն , նիւթոյ բանին , ունկնդրացն և անձին խակ գլխովին . և պատկանել այնմ ամենայնի զզօրութիւն և զո՞ք բանիցն : Խշխանապանծ ուժգնութիւն , որ քաջադէան է աւագաց , տարադէալ է չափաւորութէ երիտասարդ ատենախօսի : Կատականաց բանիք , պատշաճեալք յառանին և յընկերական զրոյցս , անվայէլ են յերաստա կարեւոր խորհրդոց : Գլուխ արհեստիս , ասէ կուինտիլիանոս , վայելութիւն է : Ոչ է արժան արձանանալ ումեք յատեան ատենախօսութէ , առանց գիտելոյ զանկաւորն հասակի իւրոյ և վիճակի , նիւթոյն , լսողացն , տեղւոյն և ժամանակին : Գեղեցիկ պատկանադրէ կիկերոն վասն այսր , թէ հիմն է պերճախօսութէ իմաստութիւն , որպէս և յայլիրս . զի զորօրինակ 'ի կեանս՝ նոյն-

պէս և 'ի հառոս չիք ինչ դժուարին քան զտեսութեաւ պատշաճիցն : Առ անդիտութեաւ սորին՝ յանախ սպըրդդին վրիպակէք . զի ոչ նովին բանիւ կամ իմաստիւք մարդէ է հաղել առ ամենայն բազդ , առ ամենայն աւազամեծար իշխանութիւն , առ ամենայն հատակ , առ անդիս կամ առ ժամանակս և առ ամենայն ունկնդիրս . քանզի յամենայն մասունս ճառին , որպէս և կենաց՝ խորհել արժան է զպատշաճականն ը առաջիկայ գործոյն , և անձանցն որոց խօսին և լսեն :

Յայս վայրը յաղագս ոճոյ գրութ կացրդականն հանդիսի : Խակ զնիւթ գրութենն ունիս քաղել յերից աստիր գլխաց , 'ի կատարելութեց հոգւոյն , 'ի բարեմանութեց բազդի , և 'ի մարմնական գերազանցութեց :

Ա . Զ հագեղէն գերազանցութիւն գովելոյն 'ի մեջ բերէ առենաբանն , պէրք բանիւք լուսաբանելով զընտիր ընտիր առաքինութիւննորա . ցուցանելով զերկոն և զվաստակս՝ որովք զայնս ստացաւ , և զդժուարութիւն ընդ որոց մաքառեցաւ , մինչեւ զկատարեալ յազեթունն 'ի գլուխ տարտու : Յաւելու յայսոսիկ և զմբաւոր առաւելութիւն նորա , զհանճար իմաստունն , զներհուն գիտութիւն , զմարզութիւնն յարտւեատու . զզոնութիւն 'ի քաղաքականութե , զբանականութիւնն 'ի պատերազմի . որք այնչափ առաւելութե պատճառս տան գովեստից , որչափ մեծամեծք իցեն և գերազանցք և անօրինակէք :

Բ . Բարեմանութիւք բազդի բովանդակին յազգատոհմն , 'ի հայրենիս և 'ի պատիւս : Թէ գովելի այրն յազնուական ազգէ իցէ , արժան է անցանել համառօտիւ և եթ ը փառու նախնեաց նորա՝ առանց մթագնելոյ սրայծառութե նոցա զանուն անձինն գովելոյ : Խակ եթէ յանաւագ ազգէ իցէ , պարտ է զանց առնել զայնու մասամբն . կամ թէ լու ևս՝ անօտին գովութեաւ առնուուլ , ասելով թէ քաջ գիտաց զանչքու . թի տոհմին վաստակք իւրովք յազնուականութիւն վերածել : Հայրենի երկիր և քաղաք թէպէտ սատարէ 'ի գովութիւն , ոյլ բազումայն է՝ զի յանձանօթ ազգաց երեւցան արք նշանաւորոք . և այն խակ գովելի է , զի յանայի աշխարհէ մեծահամբաւ ոք գտցի յարհեստ կամ 'ի գիտութե :

Պատիւք և աւագութիւք , եթէ իցեն արդասիք առաքինութեան և ըստ պատշաճի 'ի վայր արկեալք 'ի

ստացողէն, դաշտընդարձակ բանան առաջի՝ գտանել
անտի ճոխութիւն գովեստից . և ևս յաւելու, եթէ
քաջութե խորհրդով ՚ի բաց մերժեալ իցէ նորա զա-
մենայն փառս և զաւագութիւն : Նոյնպէս և մեծու-
թիք ստացեալք արդար վաստակօք, և կարգեալք
՚ի կարեւոր պիտոյս կենաց կամ յերախտիս կարօտե-
լոց և ոչ ՚ի մնուիս վասնեալք զեղիսութիւն, դուռն
բանան մեծաց գովութեց : Ապա թէ պակասիցէ այս
ամենայն, մարթ է գովութիւն վերամբառնալ զանհո-
գութիւն նորա ՚ի դիւրեղծական վայելք աստեացս, ցու-
ցեալ զանդրդութութիւն մտաց նորա և զաւաքինութիւն
՚ի թափուր լինել նորա յայսպիսեացս հետապնդու-
թենէ :

Դ. ՚ի մարմնական դերազանցութեց, իմաս ՚ի մարմ-
նոյն բարեյօդ գեղոյ և ՚ի կատարեալ զուգաչափու-
թենէ անդամոցն մարթ է առնուլ նիւթ գովութիւն,
իմաստասիրելով զլաւութիւն հոգւոյն յարուաքին առ-
սութենէն : Քանզի կերպարանք քաջավայելուչք առ-
զի տան գովութիւն կամ դարովանաց, ըստ որում կցոր-
դեալ իցեն ընդ առաքինութիւն կամ ընդ վաստութիւն :
Այլու ՚ի բնէ, եթէ պակասիցն այսոքիկ . զի արտաքին
տեսիլ ոչ բնէ արժէ տա հոգւոյն ազնուականութիւն :

Որ ինչ առացաքն ՚ի նիւթ գովութեց վասն մարդ-
կան, զնոյն մարթ է պատշաճն համեմատութիւն . ՚ի
քաղաք կամ յերկիր, առեւալ նիւթ բանից ՚ի շինողէն,
՚ի հնութենէն, ՚ի քաջայարմար դրիցն, ՚ի հոյակապ
շնութենէն, յազնուականութենէ բնակչացն և յո-
րոց ՚ի նմին կարգի : Զայս ամենայն ազքերս բանից,
զորս աստէն համառօտեցաք, ունիս ըարձակել Ճոխ
բանիւ . ՚ի տեղեւոց ճարտասանութիւն, որք ըստ իւրա-
քանչիւր գլուց մատակարարէն լիուլի առաստութիւն
իմաստից . և զարգարեսցես առ հասարակ սատարու-
թիք ընտիր ընտիր ձեռոց :

Դարձուք արդ յընդհանուր կանոնս, որոց զգու-
շանալ արժան է . ՚ի կացրդական հանդիսի :

Ա. Եթէ գովութիւն և եթէ պարսաւք պարտին
ճշմարիս գոլ և ամբացեալք ՚ի հիմն հաստատուն, զի մի
լիցի աստենաբանն նշաւակ ծագու, և մի ստախօս և
պատրող երեւեցի : Նմին իրի լիւսիմաքոս նկարիչ մե-
զադիր լինէր Ապեզեայ, վն նկարելոյ նորա զւազեք-
սանդր շանթ ՚ի ձեռին որպէս զԱրամազդ . զի ոչ ու-

մէք հաւատալի էր աստուածեղէն զօրութիւն ունել Աղեքանդրի : Կմին իրի ինքն Ի իւսիմաքոս նկարեաց զնայ յեց 'ի գեղարգն :

Բ . Անգականք իցեն բանք գովեստիցն արանցն գովելաց , և նոցա միայն պատշաճականք , և ոչ առ ամենայն ոք անխսիր :

Գ . Դործքն 'ի գովութիւն առեալք մի իցեն նուազունք և մանունք , այլ մեծամեծք և սրանչելիք , նըշանաւորք մեծութիւն և նորութիւն . զի այն և եթ արժանի է գովութեն՝ որ ընդ գեր 'ի վերօյս զկարգն ունիցի անդր քան զահման հասարակաց ընութենո :

'Ի կացրդական հանդէսս բովանդակին բազմօրինակ տեսակք բեմբասացութեց . յորս կարեռուագոյնք են Ներբողեան , Արձանական , Հարասնեկան , Ծննդոց , Խնդակցութեն , և Ծնորհակալութեն :

Ա . 'Ներբողեան () կոչէին առ Յոյնս Տառքն , զորս մեծահանդէս պատրաստութիւն հրապարակախօսէին 'ի տօնս խաղուց , 'ի պատիւ գիցն խնամակալուաց խաղուն , կամ գահէրիցանց , և կամ յաղթականին : Առ հռովմայեցիս սովորութիւն էր առնել ներբողեանս առաջի ծերակուախն 'ի պատիւ կայսերաց : Խակ 'ի ծաւալել քրիստոնէութեան ընդ տիեզերս . յօրէնս Եղեյամենայն Էկէղեցիս՝ զկարգեալսն 'ի սնուաի պաշատունս գից փոխէլ 'ի պատիւ այս և հրաշալի առաքինութեց սրբոց : Վասն որոյ զարդիս ներբողեան առնեմք յէկէղեցական և 'ի քազարական տօնս , 'ի գովասանութիւն վեմապանծ գործոց գովելոյն :

Առդ յօրինեսցես զներբողեանն գլխովքս այսոքիւք . յետ պատկանաւոր յառաջարանութեն և առաջարկութեն՝ ջանացցես 'ի մի գլուխ բովանդակել զամենայն առաքինի կամ զհոյակապ գործս գովելոյն , յորմէ իրրե 'ի միոյ ազբերականէ բաշխեսցես զմասունս Տառիդ . որպէս զի գիւրին լիցի խելամտել լսողին : Թէպէտ և հնար է կազմել առանց այսպիսի հաւաքման և բաժանման , պատմական կարգաւ բովանդակելով զընթացաց վարուց գովելոյն , և զամենայն մասունս իրայն մի առ մի գեղազարդելով , այլ սա նկարագիր համարի քան Տառ կացրդական . լը ու

* Θν . Παγηγυρικός . լո . Panegiricus . որ ըստ յոյն բառին հայութիւն ամենածաղկած է :

բում յօրինել Խորենացին զներբողեան իւր ՚ի սուրբն Հռիփսիմէ . և առաջինն յիրաւի դժուարին , սակայն մեծարդի գատեալ լինի յաւս բանախրաց :

Երկրորդ՝ պանծացուացես զառաքինութիւն գովելոյն , մինչեւ շարժել ունկնդրաց , և յօժարել ՚ի նմանութիւ այնց :

Չոր ինչ ասացաք վասն ներբողի , զնորուն ներհականն իմասցիս և վասն պարաւի . զի երկոքին այսոքիկ գիմանարտ են իրերաց :

Բ . Արձանաւկան կոչի կամ Դամբանական Տառն զոր սովորուի է հրապարակախօսել ՚ի մահու արանց երեւելեաց : Այս ՚ի վաղնջուց ժամանակաց հետէ սկիզբն կալեալ առ Յոյնս , ՚ի նոցանէ ածանցեցաւ ՚ի հռովմայեցիս և յայլ ազննս մինչեւ ՚ի յետին գարս . որով առնուն ՚ի յիշատակ զպանծալի գործս վախճանելոյն , առ ՚ի ցոյց մորմոքանաց սրտի ՚ի զրկել յայնպիսոյ բարերարէ և առաքինուոյ . և այնու իրր թէ անմահացուցանել Տղնին ՚ի վառս համբաւոյ մեռելոյն զբազմարդիւն կեանս նորա :

Պարտ է զսկզբնաւորութիւն այսր Տառի առնել եղերական և սգաւոր , որպէս զի տիրութիւն համակեսցին ունկնդիրք : Յետ այնորիկ թաղծագին բանիւ կոծել զվախճան առնն այնքանոյ , և համառօտել զվարս նորա , ՚ի համար բերելով զառաքինութիւն և զմեծամեծ գործս նորա : Յոր մասնէ ողջոյն իսկ Տառն ներբուզնի , տիրական կերպարանաւ . ՚ի կարեկցութիւն ոզաքելով զունկնդիրս : Զենի այսր ամենայնի որպէս թէ խրախոյս առեալ , քաջաւերս տալ ազգականաց մեռելոյն յանվիշէպ յուսոյ վայելից անտի կենացն անվախճանից , ՚ի յաջորդութենէ որդւոց նորա կամ յանեղծական յիշատակացն՝ որը ցանդ կենդանի պահեսցն զանուն վախճանելոյն : Առ նմին յաւելուլ ամենեցուն յորդոր ՚ի նմանուի առաքինի գործոց նորա :

Մարթ է վերջաբանուի գործել այսմ Տառի՝ զարթուցանելով վափաքումն և կարօտ առ մեռեալն , անշուշտ ցուցանելով զանմահութիւն նորա ՚ի սերունդս իւր , ազգել երախտագիտութիւն ՚ի սիրա երախտաւորելոցն ՚ի նմանէ , և այլ ևս հանճարեղ հնարագիտութիւք՝ ըստ թեւագրելոյ իրաց և հանդամանաց ժամանակին : Պասիւեդ գաղղիացի մեծահամբաւ է ՚ի յօրինուածս արձանաւկանաց . և ՚ի հնոց գրիգոր ածաբան :

որոյ արձանականք թարգմանեալ Են 'ի Հայումն 'ի նախնեաց մերոց :

Գ. Հարսանեկան կամ Առագաստի ճառ յօրինի ՚ի հանդէս հարսանեաց ազնուականաց : ՚ի սմա հնար է հրաշական սկսուածով ՚ի գովուի առնուլ զամուս-նութի, ոչ միայն զի խորհուրդ է եկեղեցւոյ, հոս-տատեալ ՚ի Քնէ, և շնորհօք ճոխացուցեալ, այլ և զկենցազօդտութիս նորա ներբողել, կամ բանաստեղ ծօրէն ձևացուցանել, թէ տեսեալ ընդ հանուր բնու-թե զամենածախ վայրագութի մահու որ անխնայ զամենայն հասակ մաշէ և սպառէ, դուն գործեաց ՚ի ձեռն ամուսնական ածագիր օրինաց բազմացուցանել զազդ մարդկան : Այսոքիւք և այլ ևս հանդերձանօք յառաջ խաղացեալ ՚ի հաստատութի ճառին, պարտ է հիւսել ներբող հարսին և փեսային ըստ առաքի-նութեց նոցա, ըստ ազնուական սերնդեանն, և ըստ բարեիրաստ գաստիարակութին, ՚ի կանոնացն զորս վերագոյն կարգեցաք : Անդ առ նմին ունիս ՚ի մէջ բերել գեղագանծ յօրինուածով զհանդերձանս պատ-րաստութեցն, զվայելական ուրախութին, զանա-զան պատճառս ՚ի յարակից պատահարաց, և որ այլ ևս նմին զուգընթաց ազբիւքը պերճախօսութեան : Մարթ է վերջարանել բարեմատղթելով նոցա յաջո-դութի և սերտ միաբանութի ՚ի մէջ երկոցուն . յա-ւելուլ և վատիաքումն և յոյս տեսանելոյ զտոհմ նոցա բազմազաւակ բարգաւաճնալ ՚ի պարծանս հայ-րենեաց :

Դ. Ծննդեան ասի ճառ զոր ատենախօսէ ճար-տասանն ՚ի համախումք խրախունս տօնի ծնըն-դէան ուրուք, խնդակից լինելով ընդ ծնօզն նորա : ՚ի սմին ուրախութի մեծ յանձին իւրում ցուցե-ատենաբանն ընդ հասանել պայծառ և նշանաւոր աւուրն, յորում սկսաւ մշտնչենաւորել ՚ի վերայ երկրի սերունդ այնպիսէաց ծնողաց : Անսի անցցէ ՚ի գովութի նորածին մանկանն, ոչ զիստնձարրասպատ տղայն գովելով, այլ զփառս նտիսնեաց նորա, զառա-քինութիս ծնողացն, զճոխութիս և զաւագութեան պատիւ ազգատոհմին, զորս իրը սեփական ժառան-դութիւն յանձին գրաւել ունի հանդերձ առաւե-լութեամբ : Մանաւանդ եթէ զաւակին իցէ պառուղ ազգթից, ցուցանել թէ ծառ բարի պտուղ բարի առ-

Նէ . բարի ծառոյն աղօթից՝ քաղցրանաշակ պտուղ է մանուկն , որում ակն ունին ամենելքին հաստատուն յուսով : Նիւթ այսպիսի ընդարձակ ճանապարհ հորդէ Նարտասանին յառաւելուի բանից : Ասքա խնդակից լիցի ընդ ծնողս մանկանն , և բարեմազմելով յայ կնքեցէ զբանն , խնդրելով յաջողութի ծնողացն և զաւակին : Են բազում այլ ևս հանգամանք զուգ . ընթացք , զորս տեղին և ժամանակին գիտեն մասակարին , եթէ Նարտարամանեցէ ատենաբանն 'ի վարարկանել զնոսին վայելու օրինակու :

'Ի սոյն կարգին և ճառք , զորս յաւուր մկրտութեաղայոյն սովորութի և ատենախօսել , 'ի վերայ նախակարգեալ կանոնացդ յաւելով և յաղագս խորհրդոյ մկրտութե , և շքեղ բանիւք բացատրել զգործս և զօրութի մեծի խորհրդոյն :

Ե . Խնդակցութի է՝ ուրախակից լինել բարեկամաց 'ի յաջողուածս միմեանց . և ուր տօն և խնջոյք կարգեցին վասն իրայն այնոցիկ՝ ատենախօսել խընդակցուեան բանս : Յոգունք Են պատճառք և դիպուածք այսպիսիք . յորոց առաջին է մեծապանծ յաղթանակ զօրագլխի ուրուք , կամ ապաքինել մեծի ուրումն 'ի մահառիթ խօթութի , կամ սպատիւ գերագահ բարձի և իշխանութե բարեկամի , կամ յաջողդարձ բարեկամին 'ի տար աշխարհէ , և այլ այնպիսիք բազումք :

Արդ յայսպիսիս անգէն 'ի սկիզբն բանին պարտ է ցուցանել խնդութի մեծ ընդ յաջողուած անձինն ընդ որ խնդակցինք :

Երկրորդ՝ մեծացուցանել զերջանիկ ելս իրացն , նկարագրելով զիսհականութի նորա 'ի տեսչութի գործոյն և 'ի զգուշութի 'ի վասնգից , զարիութի նորա 'ի վիշտս , զաներկիւղութին 'ի գժուարինս , ևն : Առ նմին գարձեալ ահաւոր ցուցանել զգժուարութիսն՝ որոց յաղթեաց , որպէս զի յաջողուածք նորա և ևս առաւելուցուն , և ինքնին 'ի յայտ գայցէ արժանաւորութի նորա մեծի աւագութեն :

Երրորդ՝ քաջայայտագոյնս ցուցանել զեռանդն փափաքանաց 'ի մշանջենաւորութի փառաց նորա , որպէս պահանջեն օրէնք բարեկամութէ կամ երախտագիտութէ , և որ այլ ևս բանք և պատճառք նմանօրինակք :

Յայսմ կարդի է տաենաբանութիւնն Յովհաննու
մանդակունւոյ 'ի խնդակցութիւն յազմութեանց և
իշխանութեց Վահանայ մամիկոննի . յորում ցու-
ցանէ զամօթ ուխտազանցիցն , և կարեկից լինի նո-
ցա . և քաջալերէ զուխտապահն , մինչև 'ի վախ-
ճան հաստատուն կալ յածային երգմանն :

Զ . Ընորհակալուն անուանին Տառք , զորս օրէն
է ասել փոխարէն ընկալեալ երախտեաց , մեծացու-
ցանելով զբարերարն և զբարերարութիւն , և յայսնա-
դոյնս ցուցանել զկարօտութիւն բարերարելոյն :

Պարտ է նախ լուսափայլ բանիւք մխեալ 'ի յառա-
ջաբանութիւն , ցուցանել անկեղծ պարզուք զինդունն
ընդ ընկալեալ երախտիսն :

Երկրորդ՝ պանծացուցանել զդործ երախտեացն 'ի
կողմանէ բարերարին կմ' երախտառորելոյն՝ ըս իրացն ,
ըստ ժամանակին , ըստ օրինակին՝ որուլ 'ի գլուխ ել
բարերարութիւն , և որ այլ ևս նմանիք :

Երրորդ՝ տալ խոստումն անմոռաց 'ի մոխ ունելոյ
զերախտիսն , և առնել խնդրուածս 'ի յերկարա-
ձգութիւն բարերարութիւն , և մազմանս առ ած՝ վասն
փոխարինելոյ լիուք ընդ բարեացն դործելոց յերախ-
տառորէն :

Նշանաւոր է յայսմ մասին շնորհակալութեան
Տառն կիկերոնի , զոր խօսեցաւ 'ի դարձին իւրում 'ի
Հռովմ' յաքսորանացն :

ԳԼ: ԺԲ.

ՅԱՂԱՔՆ ԲԱՂԻԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՏԱՐԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ :

ԲԱՂԱՔՆ ԱԿԱՆ , ՀԱՆԴԵՍԻ ՏԱՐԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ
Խորհի և քննէ զամենայն հանդամանս խնդրոց առա-
ջորկելոց , առանել զինչ 'ի նոսին լաւագոյն իցէ և
խոստան , զինչ է որ զայս ինչ գեր 'ի վերոյ գնիցէ քան
զայն , և զինչ 'որ նուազ առնիցէ : Ա ամս որոյ Տահո-
զապէս յայդ անուն կարդացաւ 'ի մեզ՝ հելլենակա-
նին թարգմանութիւն : (*)

* ՅՆ . Συμβουλευτικόν . Ա . Deliberativum . Կ-ՀԻ
-- ՅՆԻՆ և Ε'χκληսιաστικόν . Ե - Δημηγορικόν .
-- Ի-ԻՆԻՆ Ժողովական ի-մ բնմբական :

Առարքինութեն զոր գովութեր գրուատէ կացըր-
դականն, զնոյն ՚ի խորհուրդ մատուցանէ բազխոհա-
կանն. և ՚ի մէջ բերէ զարդարացի փաստս, որք բուռն
առնեն մարդոյ խոհականի ՚ի գործ անդր: Առ այս
տառաջին և անհրաժեշտ կանոնն է համօրեն վարժա-
պետաց, հաւանել մեզէն ընդ բանն՝ զոր այլոց հրա-
պարակախօսուել խնդրեմք: Քանզի անհնար է յորդո-
ւել զոր ՚ի գործ ինչ՝ մինչեւ ինքնին ՚ի վերայ հասեալ
ուղղութեն և ճշմարտութեն իրացն: ապա թէ ոչ, ոչ
յիւրմէ ինչ խօսիցի ատենախօսն այն, այլ զօտարին
յիւր գէմն կեղծէ: Եւ չէ քաջ ատենաբան, որ ոչն
առէ զիւրն և զառ ՚ի յիւրմէ հանճարոյն հնարագի-
տութեն. քանզի ճշմարիտ է առածն, թէ բանք կին-
գանիք ՚ի խորոց սրտէ ելանեն, և յաղթահարեն
զլսողս:

Որ միանդամ՝ խելամոնէ ՚ի խորս խնդրոյն, ՚ի հար-
կէ ոչ զանց առնել քննել զստին: Յամենայն խոր-
հուրդս առաջարկեալս՝ հարցաքննել պարտ է, օգ-
տակար իցէ, թէ անօգուտ: Զորօրինակ եթէ հարկ ՚ի
վերայ կայցէ զօրահատոյց լինել, և պատերազմ մըկէլ
ընդդէմ օտարի առ ՚ի վրէժինդրութիւն, քննել ատե-
նաբանն զօդուտն և զի՞նաս այնը գործոյ, զինչ է որ
երկիւղ արկանէ, և զինչ որ վատահացուցանէ: Ո՛ր-
չտիք է զօրութիւն ուժոյ պետութեան իւրեանց, և
թշնամն ոյն որչափ: Ի՞ւ հնար է զառաջս ունել զաղե-
տիցն՝ եթէ յաջողեսցէ թշնամն ոյն. և ինասն որ ան-
տի առաւել իցէ քան զառաջին չարիսն թէ նուազ:
Զայս ամենայն մանր քննեալ ատենաբանին, և հաս-
տանեալ յանդրդուելի փաստս, ոչ զանձին դիւրու-
թի խնդրելով այլ զհասարակացն, զամենայնն ազ-
գոյ և պարզ բանիւք ՚ի մէջ մատուցէ: Պիրճ և
բազմոքանդակ ձեւք բանից անպատճանաւոր են ՚ի բաղ-
խոհական հանդէսս. զի ուսուցանելոյ պէտք են անդ
և ոչ զուարձացուցանելոյ, զմիաս յանկուցանելոյ և
ոչ զսելիս կամ զերեակայութիւն ամոքելոյ. քանզի
փաստք հաստատուեք խնդրին անդ, և ոչ զրոյցք ար-
ծարծուեք: Խմա զայս ամենայն յընդհանուր կազմու-
թեն բանիցն. ապա թէ ոչ, անտէզի է բովանդակ ոսին
և ազազուն թողուլ զբանն:

Համառօտ առել ընդ Ախերտնի. բազխոհականն
հանդէս ապաստան է յատենախօս քաջ և փորձ, որ

և առաքինութեք Հոխացեալ իցէ և պատուով և զգանութեք . որպէս զի աւագութեն նորա և մեծարանք և Տարտարախօսութեան ոգնականութեն տացեն միմեանց , և յանկուցեալ խոնարհեցուսցեն զիրտառունկնդրաց : Այսափ յաղագու տարազու դրութե բազիսոհական հանդիսի . արդ ակնարկեցուք և 'ի նիւթ գրութեն :

Ամենայն նիւթ բանից և ձեռնարկութենց , զորս պատրաստէ Տարտարասանն յայլեայլ տեղեաց Տարտարասանութե ըստ պահանջելոյ խեկութե առաջիկայ խնդրոյն , բովանդակին 'ի հանդէսն բազիսոհական ընդ վեց դըլիովք . որք են Վայելուց . Օգտակար , Հարկաւոր , Դիւրին , Չուարճալի և Պանծալի : Սակայն ոչ թէ միշտ զամեննեաին միահամուռ . 'ի կիր արկանել պարտ իցէ . այլ որչափ ներէ ընդարձակութեն բանին և առատութեն նիւթոյ խնդրոյն : Եւ թէպէտ 'ի մասունս բաժանել կամիցի զնառն . լաւագոյն է յերկուս կամ յերիս 'ի վեց պայմանաց աստի ամփոփել զբանն . զի բազիսոհականն հանդէս , որոյ նպատակ է յորդորել զունկնդիրս 'ի գործ , ազդողագոյն երեխ նկարեալ ընդ այսորիւք երանգօք՝ որք գիտեն դրդել և զարթուցանել զմարդկային բնուիս յուսով և անձկանօք :

Ա. Վայէլու է , յոր ինքնակամ յօժարամատէ ոք վասն իրացն ևեթ պատուականութեն : Ոչ 'ի յոյս շահու հրապուրեալ , ոչ յառժամեան օգնութեն կամ 'ի պատուարութեն 'ի նեղութեն , այլ միայն իմաստամիրական քննութեք խորագոյնս մտածեալ զիրացն ազնուութեն խելամուել 'ի նոյն , հետազոտելով յէր վերայ համբարձեալ է հիմն հաստատութեն նորա : Եւ ահա սա արժանավայել գործ է մարդոյ բանաւորի , որ պերճացեալն է հանճարով և ընտրութեք : Զի զի՞նչ առաւել արժանի քան զվայելսականին ընտրութեն , որ համապատշաճն է ընդհանուր բնութեանս , մարդկային պայմանի , բաղաքական օրինաց , և որ այլ ևս յիւրաքանչիւր գործողութենս վայելսականք անխորշելիք : Ամպաշտութեն , գութ և խնամք և մեծարանք առ ծնօղս և առ բարեկամս , արդարութեն և հաւատարմութեն 'ի դաշինս , ինքնին խեկութեք իւրեանց գեղեցիկ են և գովելի , և առանց ինչ ակնկալութե շահու յորդորեն զմարդ 'ի կատարումն :

Ա. այս գլուխ հանդիսիս բազում ինչ ամփոփել

կարէ ասենաբանն, և ըստ այնմ՝ գտառորել զկարգ ապացուցիցն :

Բ. • Օդութիւն է, որ հակամիտէ ոք վասն որ 'ի նմանէ շահիցն և նպաստից : Այս ակնկալութիւն օդտի ըստ բազմադիմի մասանցն բազմօրինակ ունի և զարդարիս օդտութեն : Օդուտ հոգեկան, եթէ ոք իրնդրեցէ զհոգւոյն իւրոյ զանծախական շահս կամ մտաւոր, եթէ 'ի տենչ ուտումնափրութեն վառեալ իցէ, Տոխանալ բազմապատիկ դիտութը՝ որ կարեն իմաստուն առնել զնա և մեծապատիւ : Օդուտ մարմնեղէն՝ 'ի հայթայթանս պիտոյից կենաց, զոր տուեալ է մեղ արարիչն վարել սովին կենօքա ցորչափ 'ի կենցազումն եմք : Օդուտ առանձնական, զիւրոյ սեմական շահուն առաւելութիւնն ինդրել պատշաճ օրինօք քան զայլցն աւելորդ Տոխութիւն : Օդուտ հասարակաց, որ բազդին յաջողուածով և այլովք ևս նպաստիւք գեր 'ի վեր ամբարձէ զհայրենի երկիր զազդ և զտուն, և որ այլ ևս սմին յարակիցք : Եւ քանզի անձնասէր է մարդ, ուր ուրեմն շարժի առանց սեփական օգտին ակնկալութեն . և ուր զայն յաջողեալ տեսանէ, անդէն անխափան 'ի գործ անդր պնդիք զի յոյս օգտին խրախուսէ զժրութիւնորա : Եւ առնիւրաքանչիւր այլեւայլ է յոյս օգտի . վասն որոյ 'ի հնարագիտութիւն Տարտասանին մնայ դիտել զիւրաքանչիւրոցն յունինդրաց զկարօտութիւնն, կմ զակարագոյն մասն, և ընդ այն բուռն հարկանել :

Գ. • Զէտիւթիւն ոչ բնուի և ոչ բռնութիւն ձեռնհաս էն խափաննել . որպէս զի զոր ոչ վայելուչն և ոչ օգտակարն կարեն յօժարեցուցանել, սա յանկուցանէ և նուաճէ . զի թէ օրէնք արդարք, և թէ անխորհուրդ անխարութիւն, դիտեն միօրինակ տեղի տալ հարկի : Այս զլուխ բանից փաստա հաստատունս 'ի ձեռն տայ Տարտասանին, եթէ կարասցէ զառ 'ի տեղեաց շոեմարաննեալ զնիւթմն ընդ կերպարանօք հարկի զինուորել, և զանխորշէլի բռնադատութիւնորա յայտ յանդիման արձանացուցանել : Որպէս զի թէ և ապառում և կամակոր ոք իցէ 'ի պնդել զիսորհուրդս իւր, և ամրափակ խցցէ զականջս իւր առամենայն իմաստուն պատճառադրութ, 'ի ձայն բուռն հարկի՝ անկանի և խոնարհի : Ալդ հնարեսցի առենաբանն սովին բախմամբ սասաննել զմիտս սալացէալս .

զի զի զայս փաստ՝ թէ որդւոց պարտ է մեծարել զծնօղս, թէ պէտ և ազնուագոյն է ՚ի վայելլականէն ցուցանել բերելով ՚ի մէջ զարաշան՝ և զարժան, այլ ոչ ազգէ ՚ի միտս անուզայս խոկ եթէ զհարկն յառաջ մասուսցես, սոսկայ և գորայ, և ՚ի վայրագութէ ՚ի հեղութի խոնարհի :

Դ. Դիւբանէնի գործոյն ՚ի մէջ մասուցելց ազդողագոյն խրախուսէ զտկարս և զէրկըսոս բնութ, որք յամենայն գժուարութեց լքանին, յամենայն կամկածանաց խիթան, առ ամենայն հնարս զիսափանտրարսն մօտ դնեն : Հակառակ այսմ ձեռն արկանէն ճարտասանութի հարթել և դիւրել զամենայն խոչ և զիսութ ճարտարութը արհեստին, և իրը թէ արդի խոկ հասեալ ցուցանել զմեռնարկութին ՚ի վախճան գործոյն, միայն թէ կամբցի : Արարիչն բնութեա ոչ ետ մարդոյ եղջերս և մագիլս առ ՚ի խեթիկ և գեշատել, այլ ՚ի վեր քան զայնս շնորհեաց իմաստութի և հանձար, գտանել զնարս դիմակալութի, և զամենայն գժուարութի ՚ի գերեւ հանել : Գործունեաց կամաց ամենայն ինչ հնարաւոր է . և մարդկային ճարտարութի գրեթէ ոչ ինչ ՚ի գժնդակաց տկարանայ ՚ի գլուխ հանել, եթէ միայն կամեսցի : Ապա զայս յօժարութի կամաց փութասցի ատենաբանն զարթուցանել յունկնդիրս իւր՝ շարժութը յուսոյ, և տարամերժութը երկիւղի . որոց քաջ օժանդակեն տեղիք ճարտասանութի, մատակարարեալ փաստ և ըլունիսութի բանից :

Ե. Զուարձաւէն է ամենայն ինչ վերջացեալ ՚ի տրտմական կրից . յորում զմայի բնութիս ՚ի վայելլաբարօրութի, որպէս Երբեմն էր նախատեղիցն կենցաղ յեղեմական դրախտին, և կերպարանեալն գեղցիկ կենցաղ ոսկեզէն դարուն, յորում ոչ աւելքօքն յղփանայր մարդ, և ոչ կարօտութ տուայտէր : Արդ յամենայն գործս, յորս ատենաբանն քաջալերս տայ ունկնդրաց ձեռն արկանել, զայս պատկեր պարտ է նկարել տռաջի նոցա : Ոչ սեթեեթեալ բանիւք և ստութը, այլ ճշմարտութը ստուգաբանել թէ որ պէս ՚ի կասարումն միոյ միոյ յառաքինի գործոց յաջորդեն վայելլք զուարձութի ՚ի հասարակաց միաբանութի, կամ ՚ի քաղաքական յընկերասէր կեանս, կամ յանդորրութի խզմի մասց, և որ այլ ևս սոցուն նմանիք :

Զ. Պահանջման դրդեալ յօժարեցուցանել զայր վեհագն և արի, որում առաջի մասուցես զմեծութեա վառացն և համբաւոյ որ ՚ի դործոյ անափ, զմեծութեա դործոյն՝ յոր արժան է մարդոյ ազնուականի ձեռն արկանել, Մարդկայինս բնութեան անյասապազ հաւանի բնոր այն ամենայն՝ որ դովութեան բերե անձնին իւրում, և ընդ դարս ապագոյս անմահացուցանել զիշտատակ իւր - մասն որոյ դիւրագոյն է խրախուսել զնա ՚ի բռւռն հարկանել զհրաշալի և զմեծամեծ դործոց : Այս մեծութեան դործոց չափի ըստ վիճակին իւրում, եթէ յարիական նահատակութիս տահմանեսցի, եթէ ՚ի հասարակաց նարաւ և ՚ի շինութեան, եթէ յածուպաշտութեան դործոց յանձնառութի, եթէ ՚ի վանել զծանր մօապուտ վանդս հասարակաց, և որ ևս այլ գերապանձ իրք իցեն լը իւրաքանչիւր պայմանի, որովք առենարանն ձեռնհաս իցէ վառել զմիտս ունկղնոց, և ՚ի բանս իւր յօժարեցուցանել զնոսա :

Զայս ամենայն վեց զլուխս բանից ՚ի ներհականն շրջեսցես առ ՚ի քեցել և ՚ի խորչեցուցանել զլոտս ՚ի դործոյն զորմէ բանն է, ըստ նախագրեալ կանոնաց :

Ընդ բաղիոհական հանդիսիւ թէպէտ բազում ազգք ճառից բովանդակին, որպէս ընդ կացրդական նաւն - ըստ այսմ Են յանձնարարականն, և աղերսականն, այլ զի այս ամենայն վերածին ՚ի հաշտեցուցին յամբիշն մամբիշն և ՚ի միսիթարականն, վասն զի յանձնայն նառս բազիսոհականն սորիմբք ջանաց առենարանն յանկուցանել զլոտս, վասն այնիր և մեք յերիս զնոսա ամփոփեսցուք :

Հաշտեցուցանել զգը ընդ այլում այնչափ դժուարին է, որչափ ցանութիւն և առելն դիւրին: Վասն որոյ ցուցցէ առենարանն զփառմն զոր առաջի կոյ նմասանալ ՚ի ներել միասուն: ՚ի համար բերցէ զյանախեալ աղետսն ՚ի տարածայնութեաց և զօգուտ ընկերասեր միարանուն: առաջի դիցէ զտարապարտ թըշնամութին: և ՚ի վերայ ամենայնի ճգնեսցի զարթուցանել զլողին ՚ի կարեկցութեան կամ յերկիւզ, և որ ՚ի նոցուն սակի Են՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից: միանգամայն առաջի դիցէ զակնեկալութեան հասարակաց ՚ի հաշտութիւնոց, և զնախատինսն՝ ՚ի յերկարել զըժառութեան:

Յամոքելն ջանկուցանել զունկնդիրս՝
դովելով զառաքինութիւնոց , և ցուցանելով զանձն
եկեալ 'ի բանս յայնոտիկ 'ի պարտուց զարժանն իս-
սելոյ: Յետ այնորիկ առաջի մասուցէ զօդուտ իրացն
զդիւրութիւն , և որ ինչ նոցին նման է: Զորին ներ-
հակն է առել վասն խոշշեցուցանելոյ զոք միմեքէ:

'Ի միմիթարականն պարտ է Տարբասանին դոյզն
ինչ երեւցուցանել զդիստեալ վնասն առ համեմատու-
թիւ մեծի յուսոյն և վայելըննցն՝ որ մօտ հասեալ
կան: Պատճառք յօրինելոյ զմիմիթարականն որչափ
ստէպ հանդիպին , նոյնչափ և հնարդ դարմանոյն և
բանք միմիթարութել բազում են . զորս կամ վիշտքն
զիսքեալք մասակարարնն , և կամ հանգամանք իւ-
րաքանչիւր վշտակրելոցն: Ա ան զի ըստ ամենայն
պայմանի անձանց և ըստ ամենայն վշտոց՝ ածուաշ-
տութիւն և իմաստասիրութիւնում ինչ դիտեն հայ-
թայթել սփորփանս , զորս մնայ առենաբանին ըստ ար-
հեստին իւրոյ զոր ուտաւն՝ 'ի կարգ արկանել , և յօ-
րինել Տառս միմիթարականս աղջուս: Ա ան զի որ
ինչ մինչև ցոյժմ կարգեցան կանոնադրութիւք , բա-
ռական են առ սոսին: Օրինակ միմիթարական Տառի-
ունիս զիժուզիթ Մաշտոցի վարդապետի առ դունե-
ցիս , զԸնորհալուոյն առ եգեսացիս , և առ իշխան ունի
վասն որդւոյ իւրոյ տարածամ մեռելոյ: Ընդ բազ-
խոհական հանգիսիւ բովանդակի և Քարտզն , որոյ
դործ է յօժարեցուցանել զունկնդիրս յեռանդն ած-
ուաշտութել , և 'ի զգուշացուցանել 'ի մեզաց: Այլ
զի առ 'ի լրումն դործոյ քարտզութել բազում ինչ
ովետք են , զի ուրբ առենաբանին կարևոր իցէ իմաս-
տասիրականին և բանասիրականին աշակերտութիւ , 'ի
քարտզասաց վարդապետէ պահանջի 'ի վերայ այնը և
ածուաբանական հանգիսիցն ներհուն հմտութիւ , վասն
այնը ուրոյն զլլուով լիադոյն աւանդեսցուք յետոյ
զայնմանի:

Գ. Լ. Ժ. Գ.

Յաշու առէնական իմանամբ զդատողականն
առեւան :

ԱսԴԵՍ առենական իմանամբ զդատողականն
առեւան , յորում հրապարակախօսէ առենաբանն ա-
ռաջի օրինաւոր իշխանութե վասն արդարացուցանե-
լայ զհարստահարեալն և դատելոյ զպարտաւորն , ի-
րաւունս յառաջ բերելով ՚ի գործոյն եղելոյ , յօրի-
նացն և ՚ի սովորութեց : Վասն որոյ իսկութիւն և սահ-
ման այսր հանդիսի յայս բովանդակի : գաստախազել
և ջատագովել ըստ որոց ՚ի վերայ բերեն դատաւորք
զյանկաւոր վճիռն :

Ընդ այս հանդէս առենական և ընդ առաջինն
զորս կարդաւորաբար աւանդեցաք՝ թէպէտ ըստ բա-
զում զլիսոց ազգակցութիւն է և նմանութիւն , այլ զա-
նազանին դիտաւորութիւնն : Զի ուր կացրդականն բե-
րի ՚ի հաճել , և բաղխոհականն ՚ի հաւանեցուցանել ,
առենականն ջանայ յազթահարել զմիտս : Ոչ ջան
յանձն առնու խելամտեցուցանել զդատաւորս ՚ի բա-
րին և յօդտակալին , այլ ազդել ՚ի նոսա զճշմարիսն
և զարդար , և հարկաւորել զնոսա ՚ի կատարումն ա-
սացելոցն ճանաւրմամբ մտաց : Վասն որոյ պատրափ աղ-
դել նախ ՚ի միտս , և ասպա իբրեւ անհրաժեշտ հետեւու-
թիւ ՚ի կամն : Այս առաջին որոշիչ կնիք է առենաբա-
նին և յայտարար բնութե իբրայն , յօրմէ դիւրին է
մեզ իմաստամիրել զհեաւորդս : Արենաբանն յայտն
հանդիսի առաջի միոյ և եթէ կամ սակաւուց դատա-
ւորաց խօսի , առաջի արանց խոհականաց՝ ճոխացե-
լոց հանճարով և դիտութիւն , որք ոչ ՚ի ջերմութիւն բա-
նից այլայլին , այլ խնդրեն զանվրեալ ճշմարտութիւն
օրինաց և զկատարումն պարտուց քաղաքացւոյ առ-
հասարակաց ընկերութիւն : Ապա ոչ ևս նոյն դիւրուկն
է նմա . որ ինչ յայլ հանդէսս առաջի յորդեալ բազ-
մութե . զի ՚ի դատաստանական առենի անդ ոչ կա-
րէ շարժել դիւրաս զփիրտա արանց իմաստնոց՝ որք
հանդարտութիւն և անաշառ ունեն զնեն բանից նորա .

* Յն. Δικαιονόμ. լ. Genus Forense.

և իստութե՛ք 'ի քնին առնուն զասացեալսն : Աւստի չէ նմա 'ի ձեռն առնուլ զբնգործակութե՛ի բանիցն՝ որ յայլ հանդէս . թող զի և նիւթք Տառիցն այլազգ էն ամենենին : Յայլ հանդէս բացարձակ է ասպարես առենարանին . քաղէ ձեռնարկս 'ի բազում տեղեաց , և 'ի գործ արկանէ զամենայն երանգս բանից՝ զորս թելազրէ նմա բնութեն . այլ 'ի սմին սահմանափակ է , մանաւանդ 'ի բանս օրինաց և սահմանադրութեց միշտ առընթեր կայ նմա չափ և լոր խօսից , և չկարէ բնաւ զարտուղել յառաջագիր նպատակէ բանին :

Աստանօր անհրաժեշտ հարկ է նախ առենարանի լիով աշակերտել օրէնսդիտութե՛ . և չեք ինչ կարեռ բագոյն նմա քան զսոյն : Զի թէ և յամենայն դիտութեն քաջավարժ իցէ , և 'ի սմին ծանծաղ և վեր 'ի վերոյ , ոչ ինչ կարէ վճարել : Սորա գործ է գիտել զամենայն թագաւորութեց զօրէնս և զովորութեն , որ օրէնք յոր գաւառս զօրացեալ տիրեն , և որպէս հրամայն զցործ դատաստանաց : Առ մէն մի խնդիր և պայքար զինչ հրաման է օրինաց , որ ինչ նպատաւոր է և որ ներհական , որպէս բացարքին այն ամենայն , ըստ գրայն թէ առ 'ի միտս , և որպէս զուգաձայնի երեւալ ներհակութ նոցտ : Այս գործ լայնածաւալ կարօտի հմտութե՛ , և բազում քրաւանց և աշխատութե՛ :

Երկրորդ , չե յատէան արձանացեալ՝ մանր զննել զամենայն հանգամանս խնդրոյն , զիրաւունս դատախազին և զարարաւորին , զինչ նոցա 'ի նպաստ իցէ . և զինչ ներհակ : Պարտ է նմա յերկարագոյնս վաստակել և խնամով հետազոտել զցործն , քննելով ոչ միայն որ ինչ առաջի կայ 'ի պահու բանակառութե՛ այլ և որչափ անցք անցեալ իցեն ընդ մէջ նոցա յառաջ ժամանակաւ , և որչափ իրք իցեն նոցա ընդ օտարս վամն այնր գործոյ : Զի ոյս ամենայն բազում ինչ անակնեկալ 'ի յայտ բերեն . որք թէպէտ ումանց վարկապարազի կարծիցին , այլ ոչ այնչափ զեան է յաւելորդսն պարապել , որչափ 'ի կարեռացն ադիտանաւ . քանդի յոլով անդամն յաջողէ գտանել յաւելորդ կարծեցեալսն զմերն և զգարման :

Երրորդ , 'ի կիր արկանել պերճախօսութ ոչ բազ մազարդ՝ յորմէ յառաջն 'ի բաց հրաժարեցուցաք , այլ ահաւոր և առատ : Զի պարտ է Տարտասանին

զՆշմարտութին համել յատեան . արդ առ ընծայեցու :
ցանելոյ զՆշմարտութին որպիսի մեծափառ շքով ար-
ժան իցէ երեւեցուցանել զնա : Ապա 'ի վար արկցէ:
լեզու ճարտարաբան՝ որպէս Նշմարտութին պատշաճ
իցէ, և ոչ ոնուափ սեթեւեթմա՝ յորոց խորշեցեալ մերժի
Նշմարտութին : Ամին համեմատ և ոճ բանիցն պահան-
ջի յատակ և դիւրիմաց, ընդ իմաստիցն մեծուել զու-
գաչափ գնելով և զօրինակ բացարարութին :

Իսկ 'ի յօրինուած ատենաբանութին՝ յերկուս իրա
պարա է ուշ ունել : Առաջին՝ քաջ որոշել զպայման
խնդրոյն : Առ հարցումնս, ո՞ սպան . պատասխանէ
դատախաղն, Դա սպան . և պարտաւորն պատասխա-
նէ, Ես ոչ սպանի . և ահա պայման խնդրոյն է դու-
շակել և ստուգել զսպանովն : Ապա պարա է քննել
զհանգամանսն, որք հաւասառեն զՆշմարտութին կամ
զստութին գործոյն, այսպէս . թշնամնացեալ էիր ընդ-
հմա, սպառնայիր նմա, 'ի նմին տեղեւոյն էիր, կարող
էիր հարկանել զնա, և ոչ ոք տեսանէր զքեզ, և
օգուտ իսկ էր քեզ անուի : Այս ամենայն հանգա-
մանք գուշակեն՝ թէ դու սպանող ես : Հերքի ամբաւ-
տանութին՝ յառաջբերութք այլոց հանգամանաց, որք
ոչն կարեն կալ ընդ առաջին հանգամանսն, սակայն
հակառակորդն կամեք ձախողակի 'ի վերայ յաւելուլ :

Խոստովան լինի սպանովն, սակայն զիրաւունս իւր
'ի մէջ մատուցանել . և ահա փոխեցաւ խնդիրն 'ի
պայման որպիսութե, այսինքն թէ օրէն իցէ սպանա-
նել զոք առ ապրեցուցանելոյ զանձն 'ի ձեռաց նորա:
Նըստաշէս՝ սուր 'ի ձեռին էհաս 'ի վերայ իմ . ես զդէմ
կալայ, և 'ի սաստիւանալ վտանգին՝ սպանի զնա .
յայսմ ազատ արձակեն զիս օրէնք :

Եշ այլազդ գարձեալ՝ եթէ զանուանէ գործոյն
եղելոց իցէ խնդիրն, ահա փոխի 'ի պայման քանա-
կութե : Զոր օրինակ եթէ զինուոր ոք մէկնեալ 'ի
գատականացն, դատիցի վասն այնո՞ թէ արդեօք գա-
սալիք իցէ թէ ոչ : 'ի սահմանել անդ գործոյն, և յո-
րոշել անուան յանցանացն, քանակի և պատուհաս
նորա :

Ըստ այսմ օրինակի բացայայտագոյնս յանդիման
կացուցեալ զպայման խնդրոյն, անցցէ ապա յերկ-
րորդն 'ի բարեկարգ տրամադրութին և 'ի գիւրիմաց ա-
տենախօսութին կազմածոյ բովանդակ ճառին : Յամե-

նայն ճառս կարդ գիւրըմբո՞նելի նպաստէ մեծապէս, այլ առաւել եւս յատենականին. յորում ՚ի բազմակընմիան խնդիրս ոքք ընդ առաջ ելանեն, որոշ գառաւորութիւն բարեյարդար երեւցուցանէ զամենայնն, և խնդիր բազմամանուած իրր պարզ իմն և դիւրին յանդիման նկարի: Այլ աստանօր կարդ իմա ինձ մի զորամարտնականն ցուրտ և անոնք, այլ զնարտասահականն՝ լը որում աւանդեալ է մեր վերագոյնդ ՚ի ճառն հաստատութե. ՚ի մէջ մաստուցանել զամենայն փուռաս բռնագատիչս և ուժդինս՝ վատահութեր արիար լիով եռանդեամբ և ճշմարտասիրուք: Եւ միանգամայն խեկ բովանդակ սպառազինեալ ամենայն ճարտասահական զինուք և կանոնօք ելանել ՚ի հանդես:

Գործ գասահսաղի և ջատագովի այնչափ հեռի են ՚ի միմեանց, և առաջնոյն ոյնպէս գիւրին քան զերեւ բորդին, որչափ խոցելն զանազանի ՚ի բուժելոյ. նմին հանդոյն և այլազդ է յօրինուած ատենախօսութեան սմբաստանողին և պաշտպանողին: Զորս թէպէտ լիով ունիս տեսանել ՚ի կարդի գրոցս, այլ ոչ է տարագէտ և աստանօր համառօտիւ առաջի դնել:

Ամբաստանողն ՚ի յառաջաբանի իւրում պարտի ցուցանել զի ոչ շարժի յատելութենէ ՚ի վրէժխըն դրութե կամ ՚ի չարակամութե ընդ պարտաւորին, այլ ՚ի սիրոյ տրդարութե և ճշմարտութե՝ պնդել զարդար իրաւունս, և բողքել վասն կրէլոյ տուդանացն: Պարտաւորն յայն ևեթ ուշ կացի, յինքն յանկուցանել զյառաջանատութիւն և զյօժարակամութելուայ՝ խոնարհ կերպարանօք, միանդամայն և կառեածանս իմն և երկմատութիւն ՚ի մէջ բերելով զհակառակորդէն: Պատմութիւն ամբաստանողին լիցի զօրաւոր և յառակ, առանց բազմարուեստ զարդուց. կասկածելի ցուցէ զպարտաւորն, և խիթալի զգործս նորա: Խեկ սմբաստանեալն ամոք զպատմուին յօրինեացէ. եթէ հակառակորդն ակարագոյն պատմեաց, ինքն վերատին առցէ ասել ուժդին ևս. թէ նա խստութեր, սա ողոքով: ՚ի հաստատուե պահանջին բազմորեզուն բանքք քան յայլ հանդէս. զի ՚ի սմա պարտ է ՚ի ներքս բերել զօրէնս, զդէսպ, զառվորութիս, և զայլ ևս հանդամանս, ոքք խնդրեն ընդարձակութիւն բանից՝ առ ՚ի խելամուտ առնել զունկնդիրս: Փաստքն լիցին բարեկարդ ըստ անստերիւր կանոնաց տրամադրութե, հետ-

զհեաւէ տառւելուի տալ տասակութեն բանին, և զար-
թուցանել գրգռել զառղս փաստիցն արդարութեք
առ որս անհարին իցէ և անհանդուրժելի խնուլ
զւսելիս :

Եթէ բուռն հարկանիցէ պատասխանողն բան տո-
րան հերքել զհակառակորդին ապացոյցն, զգուշու-
թեան պէտք են մի տարապարատ ՚ի գերես հանելով
զայնս իրր սուսա՝ փախուստ երեւցուցանել : Զի
նենգութին գիւրաւ նշտակի, և ընդ յերկուամօք
անկանի տաենախօսն տռաշի ունինգրաց . որք չեն
՚ի մարի թէ անբաւական է լուծումն տալ փաստից
հակառակորդին, և չունու յանձն զպարտուի խոս-
տավանել : Իսկ ը հակառակն իրրե տեսանիցեն զման-
բախոյզ պատասխանառութին նորա առ ամենայն
բանս հակառակորդին մինչև յառաջ մասուցեալ
զիւր արդարութին, անդէն թակարդ է զհաճութիւն
մտաց նոցա . քանզի տեսանեն, զի որ հանդիսացաւն
՚ի բեմբ առենախօսութեն քաջ ՚ի վերայ կացեալ է
երկուստեք հանգամանաց դատին, և վաստի է յար-
դարութեն իւրոյ կողմանն, վասն որոյ ոչ պատրուակէ
զբանս սոսիսն հնարիւք կամ կեղծեօք : Զայտօրինակ
քաջալանջ մենամարտութին թափ անցուցանէ զբանս
իւր ՚ի խորհուրդս դատաւորաց, և յիւր կուսակցու-
թի շրջէ զնոսա : Քանզի և ՚ի բեմբասացութեն չիք այլ
մասն պատկանաւոր ՚ի հանդէս հանելոյ զհարտարու-
թի մտաց, որչափ ՚ի ցրել հզօր պատասխանեաւ ըլ-
փաստ գիմամարտ կողմանն :

Աերջաբանք յերկուց կողմանց լիցին յորդ և թա-
թագուն յիմաստս, և արծարծունք ՚ի շարժութիւնն
կրից : Եթէ երրէք բուռն ճգնեայի սոսիսն . դատա-
պարատ կացուցանել զպարտաւորն՝ ծանր և ահաւոր
ցուցանելով զյանցանս նորա, ունի ջատագովն ՚ի
մէջ մատուցանել զվաստակս իւրոյ կողմանն և զա-
ռաքինութիս, ՚ի ներզագամութին ածելով զդատա-
ւորս բանիւք կարեկցութեն և մաղթանաց :

՚ի կարգի առենաբանութեն ողջոյն՝ կարեւոր է առ
ձեռն պատրաստ ունել զերմութին բանից . զի բնա-
ւորապէս ՚ի ջեռանել անդ փաստիցն՝ հետզետէ ՚ի
սաստկութին անդք գիմելով ըստ օրինաց տրամադրու-
թի, գրգռին և ոգիք խօսողին՝ ուժգնութին տալ բա-
նիցն, և շարժել զունկնդիրս : Իսկ առանց ջերմութեն

անզօր է բանն : Զայս ամենայն լիադոյն առանգեցոց
՚ի ճառելն յաղագս կը ից :

ԳԼ: ԺԴ.

ՅԱՂԱԳՍ ՀԱՐԱԿԻ :

ՊՍԿՈՒԹԻՒՆ, քարոզի, որպէս յառաջ ասացաք,
համահանգետ է բաղխոհական հանդիսի . զի մի է
ործ սոցա երկոցուն : Ա ան օրոյ ՚ի սմին ոչ նորոգ
կանոնս ունիմք աւանդել . այլ զարաշան և զվայե-
լու կարգաւորութիւն մեծապատում ճառ իցն : օրոյ
զառաքելաձայն վարդապետութիւն յանձն առեւլ է
քարոզել, լիադոյն բանիւք աստանօր աւանդեսցուք :

Քանիզի նպատակ քարոզին է տալ առնել մարդկան
զբարին, յորում է պարառութիւն ամենայն բարեաց,
սովին դեր ՚ի վերոյ անցանէ զամենայն հանդիսիւք :
Աւատի պարա է նմա զամենայն վոյցի վաստակոց իւ-
րոց առ այս ՚ի վար արկանել և զբովանդակ ուժգնու-
թիւն ճարատանանուկան շքեղ յօրինուածոց :

Եւ միւս ևս առաւելութիւն այսր հանդիսի քան զայլ
հանդեսս ճարատասանութել . զի առ ոչ խօսի առ մի
ոք և եթ, կամ առ սակաւս, այլ առ ժողով բազմամ-
բիս . նիւթ բանին շնորհեալ է յընարութիւն նորա, և
առ ձեռն պատրաստ կան նմա նպատաք ամենայն՝ որ
՚ի ճարատասանական շքեղ յօրինուածոց :

Ընդ այս ամենայն նպատասս Էն նմա և գժուարու-
թիւք ծանունք . զի թէպէտ և ոչ մաքառի նա ընդ հա-
կառակորդս, այլ բազում խոչք նիքնին ընդ առաջ
երանեն նմա . և որչափ ճոխութիւն և ազատութիւն բա-
նին դաշտ անարդել պատրաստեն առաջի նորա, նոյն-
չափ և պարսաւադետ կացուցանեն զունկնդիրս՝ վու-
թանակի բերել ՚ի վերայ ստգիւտ և արհամարհութիւն :
Դարձեալ զի և նիւթ բանից նորա թէպէտ ըստ իս-
կութեն սղնուատկան է և կարեւոր, սակայն սովորա-
կան է և յաճախիւալ ՚ի բերանս ամենեցուն . յեղյե-
ղեալ գրեթէ յամենայն քարոզաց, և վարժեալ
յայնս լսելիք հասարակաց . որոց վասն պահանջի ու-
շիմութիւն մոաց դեր ՚ի վերոյ, այլակերպութիւն բանից
դրաւելոյ զունկնդրութիւն նոցա, նորութիւն իմն ընծայե-

լով իրացն՝ որ սովորականք են առ ամեննեմին : Յաւել և զայն, զի վարդապետութիւն քարոզութել յոլով անդամ՝ ի մեջ առնու բանս իմն վերացեալս, ակնարկէ յառաքինութիւն և ՚ի վասութիւն՝ զորս մոտաց և եթաչք զննեն իմաստասիրաբար . իսկ բանք այլոց հանդիսից շուրջ յածին զմարդկամբ որով գիւրըմբռնելի են, և բազմաց վախճակէլի : Նպաստակ քարոզողին է մերժելի ցուցանել զախտս և սիրելի զառաքինութիւն, որ ոչ տեսանին և ոչ ըմբռնին . իսկ ատենախօսին կէտ նպաստակին է գատապարտ ցուցանել զայր յանցաւոր, և պաշտպանել անմեղին . և զի զկենդանի մարդկանէ են բանք նորա, գիւրին է նմա շարժել ի վերայ նոցա ղցաստմն կամ զկարեկցութիւն, զատելութիւն կամ զուր :

Առ ՚ի գիւրաւ յաղթել գմնդակ խափանածոցս պարտ է նմա խարսխնել զբանս իւր ՚ի յաղթաւ արիչ փաստս, և լիագոյնս և զօրագոյնս բացատրել զայնս : Ամեննեին անտեղի է մինչչև հաւանեցուցեալ զմուստ ունկնդրաց, և մինչչև ցուցեալ զանվրէու ճշմարտութիւն ասացելոց իւրոց, և չե յաղթահարեալ զնոսս, տարաժամ անցանել յանպատճառ յորդորակս և ՚ի շարժումն կրից, քան զոր չիք ինչ ակարագոյն : Ոյ զորոց զբնութիւն և զիրացն հարկ ոչ խմացաւ ոք՝ զիարդ ՚ի գործն յօժարիցի . ապա ըստ ասացելումն՝ այդ յորդորակ բոց իմն է խռուոյ բորբոքելոյ, և ոչ խարոյկ հաստաբուն փայտից : Քարոզիչն ոչ ՚ի բննութիւն անծանօթ բանից ՚ի բեմ արձանանայ, և ոչ ՚ի ճառել բնազնոցական զննութիւն կամ նորալուրս ինչ, այլ ՚ի լաւ անդր և ՚ի նահատակութիւն անտի կենացն ճանապարհ ցուցանել նոցա, և տպաւորել ՚ի խորհուրդս նոցա զանձեղին ճշմարտութիւն, բացատրեալ զամենայն զկարեռուսն գիւրիմաց օրինակաւ և ազգոյ բանիւք : Նմին իրի թէպէտ և պերճախօս և յզկեալ յօրինեսցէ զճառան քաջաբան և բազմիմաստ, այլ պարտի զամենայնն գիւրիմաց յարդորել ՚ի բաւականութիւն լսելեաց . ուստի որ ինչ միանդամ հեռանայ ՚ի նպաստակէ ասաի՝ խոտորի ՚ի շաւզաց սրբազն պերճախօսութիւն : Ներհականք են ասացելոցս, և խռարումն յուզիդ շաւզաց՝ իմաստասիրական նրբունք կամ բնազնութիւն և բնազնուցութիւն . քանզի զայդապիստ կամ ոչ խմանայ ռամփին, կամ բանք այդպի-

ովք ոչ առաջնորդեն առ դործական ճշմարտութիս, որ այն ինքն է նպաստակ քարոզին :

Դարձեալ դիմամարտ է խկութե քարոզի տեսական ածարանութի, և վիճաբանական ձեռնարկութիք 'ի վերայ անմտառոյց խորհրդոց որ հաւատոց, զորայունկանէ և 'ի թագուն շահմարտանս պարա էր ուսուցանել և ոչ 'ի վերայ տանեաց : Քանզի 'ի պահութարոյական քարոզի ոչ զիսորհրդոց հաւատոց խնդիրը լինին յականչո քաջավարժից կամ հերիախովաց, այլ յտկանջո հաւատացեալ ժողովրդոց որոց ծարաւեալք 'ի լուր բանին այ փութան յեկեղեցին առնուլ ջուր ուրախութե յաղթերայն փրկութե 'ի վարդապետութե ածաշունչ գրոց : Յաղագս որոյ պարտ է քարոզչին 'ի սոյն հետամուել, շարժել խրախուսել զնոսա 'ի գործս առաքինականս, և հրաժարեցուցանել 'ի չարէն :

Յաւելումք յասացեալքս, զի տռաջին և անհրաժարելի պարագ են քարոզչի՝ յանձին ունել զիմին երկիրդածութե : Զի որպէս այլուր ասացաք, անհնար է ումեք լինել պերճախօս քաջ մինչև ինքնին 'ի խորհուրդս իւր յաղթահարեալ իցէ 'ի փաստից անափ, և մինչև 'ի ներքուսա 'ի խորոց բղակացեն բանքն : Թէ այս հարկաւ պահանջի յայլ հանդէսս, առտւել ևս 'ի սմին . խելամասեցէ քարոզին ճշմարտութեան բանիցն՝ զոր յայլս ջանայ տարրացուցանել . ոչ 'ի խորհուրդս ևեթ այնպէս հաւատալ, այլ և գործով 'ի նմին յարանալ : Այս ամենայն ուժգին և եռանդուն գործէ զբանն, զոր և ստորև լայնագոյնս ունիմք աւանդել :

Կարեւոր հանգամանք, իբր կնիք սրբազնն պերճութասութե, երկուք այսոքիկ են . ծանրութի և ջերմութե : Մեծութի իրացն, զորս վարդապետէ քարոզին, պահանջէ ծանրութի 'ի բանս և 'ի գնացս . խկհարկ նոցին առ 'ի գործով կասարումն խնդրէ աղջոյ ջերմութի : Յերաւի գժուարին է միարանել զերկուս զայստոսիկ . զի ուր տիրէ ծանրութի, անդ հանդաբանին բանիքն և խմասագ . խկ ուր եռանդն բորբոքի, անափ տեղի տայ ծանրութի : Այլ զգժուարութի սորակարէ դիւրացուցանել քարոզին, վարժելով 'ի յօրինուածս և յարտասանութիս :

Յազադ կանոնաց տարաշի :

ԱԱՐԴ յօրինուածոյ և մասանց քարոզին չէ ինչ
ընդհատ յայլոց հանդիսից . վասն որոյ զրբ ինչ անդ ա-
ւանդեցաք , զնոյն է իմանալ և վասն քարոզի . քանզի
բովանդակին ընդնութիւն կանոնոք ատենաբանութեան:

Այլ ՚ի վերայ այնոցիկ Առաջին պայման քարոզի
է միութիւն բանին : Այս թէպէտ յամենայն ճառա-
և ՚ի գրութիւնս անվրէպ պահանջի , սակայն զի յայլ
հանգեսս ընտրութիւն առաջարկութեն չէ ՚ի ձեռա-
ատենախօսին . և բազում զուգընթայ բանք հարկա-
ւորաբար յաւելուն ՚ի նոսին , գժուարին է պահպա-
նուի կանոնիդ . այլ ՚ի սմին հարկաւ պահանջի զգու-
շութի , և զանց առնելն՝ ընդ ստգատանօք է : Միու-
թի իման զնպատակի բանին՝ յոր ամենայն բանքն պար-
ափին ուղղել : Հասուցաք այլուր զպատճառն՝ վասն որոյ
կարեւոր է միութիւն . զի ՚ի բաժանելնիւթոյ բանիցն՝
ընդ նմին բաժանեալ ցրուի և մտադրութիւններուն
դրացն , և ակարանայ յիւրաքանչիւրոցն լիով խելամը-
տութի : Եւ թէպէտ բաժանեմք զայն ՚ի կարեւոր մա-
սունս , յաւելումք արտուղութիւն ՚ի զարդ կմ ՚ի բա-
յաստրութի , այլ միա եղեալ զի բոլորն ՚ի մի նպատակ
ամփոփեսի . զորոց զկանոնան և զզիարդն առաջեալ
եմք յիւրում տեղւո՞ն : Զորօրինակ ձեռնարկութիս
զանազանս յառաջ բերեալ վասն զարթուցանելը ՚ի
լսողս զեր առ ան , մարթ է յաւելուլ ՚ի վերայ զպատ-
ճառս նուազութիւն առաքինութեն . քանզի այս ՚ի նոյն
նպատակ ձգամի , և ոչ խզէ զմիութիւն : Սակայն որով-
հեաև ասէ գիր : որ սիրէ զանձ՝ սիրէ նա և զէղբայր
իւր , թէ պատճառս առեալ այտի ՚ի ներքս արկցես ՚ի
նմին և ընդարձակ բանս վասն ընկերին սիրոյ , խան-
դարեցեր զմիութիւն , և խորհուրդս անհաստատ ար-
կեր ՚ի սիրս լսողաց :

Եցրկրորդ՝ այնչափ ազդոյ լինին բանքն և օդտակալք,
որչափ ճշգեսցի և մասնաւորեացի դիսաւորուի բա-
նիցն : Այս հետեւուի է նախկի ասացելոյս . զի թէ-
պէտև ընդհանուր իմն նիւթ բանից յառաջ բերցի ՚ի
ընաբանին իբրեւ ՚ի մի և Եթ իմաստ բովանդակեալ ,

տակայն թէ՝ 'ի բազում' իրս զանազանս հայեցուցանէ այն զբողս, տարտամ' և անորոշ մնայ բանն և թերացեալ յուժգնութէ:

Ասան որոյ պարտ է յընդհանուր իմաստից անտի զմի մասն և եթ առնուլ 'ինսլատակ', և իբրև թէ զայն միայն եղեալ բնաբան քարոզութեանն, 'ի նոյն ուղղել զբովանդակ ուժգնութի բանիցն: Զ որօրինակ յօժարեցուցանել զմարդիկ 'ի մի յառաքինութեց, և խորշեցուցանել 'ի միութէ յախտից, ունել ունի միութի և զհաւաքումն իմաստից, այլ լաւագոյն է և յաւէտ 'ի մի նախատակ ուղղեալ՝ թէ ամփոփեսի 'ի մի միայն հայեցուած և յազդեցութի առաքինութի կմվասութէ: Ա յապէս մարթ է զմիակ հանգստմանս համակերպութի ընդ կամացն այ, կամ զսիրոյ եղբօրին, կամ որ զինչ այլ կամք իցեն, ընդ քննութի արկանել, և միշտ զնովլիմբ գալ:

Երրորդ՝ տարագէտ է զամենայն զբանն, որք յառաջիկայ իմաստմն հայիցին, անխորարարար յորդել 'ի քարոզն: Քանիզի և յաճախութինն տաղտկութի և ամբոխումն ծնանի: Ա յլ ընտրեսցես 'ի խուռն կուասկուէ բանից զօդասկարտն զբանագատիչն զողորիչս, և նորօք բովանդակեսցես զնառն: Եթէ աւետարանական վարդապետութիք 'ի ճառ արկեալք նոր էին և անընդր, մարթ էր Տոխարանել ամենայն բանիւքն թելագրելովք 'ի հարստուէ առաջարկութեն՝ առ 'ի լիով խելամուտ առնել զսելիս: Ա յլ զի նիւթք քարոզականիք ամենեցուն ծանօթ են, վասն այնր առաւելքան զտեղեկութի և զբացատրութի՝ հաւանութի պահանջի: Որում չիք ինչ ներհական քան զարապարտ առաւելութի բանից: զի փաստք բանաւորք ինդրին անդրին անդ և ոչ բազմախօսութի: Պարտ է քարոզչին այնպէս համարել թէ դրազումն 'ի խօսելեացն գիտեն լսողք: Վասն այնր ընդ բազում բանս համառօտ յիշատակութիք անցցէ: Դիցէ նա 'ի մափ թէ ինքն է ունինդիր բանից իւրոց իբրև այր որ բազմահմտւտ, և իբր թէ առ ինքն ուղղեալ խօսիցի ըղբանս իւր 'ի բերանոյ այլոյ քարոզչի: Նկատեսցէ յայնժամ թէ որ փաստ և որ կարդ բանից քաջ մինքն ազդիցեն: որ պատճառ զնուս հաւանեցուայէ, որ մասունք հատին հարեալ խորտակեսցեն զպնդութիւնն պարփ իւրոյ: 'ի սոսին մատդիւրագոյնս պար-

ողեալ զատողի և զստովի դործ միանգամայն կտուարելով, կարէ ըստ նմին յարմարել զբաննան, և չափառորոշ խօսիցն զօրացուցանել զքարողն : Առւու է ըսնն, թէ որչափ յերկարեն՝ այնչափ լուագոյն խմացուցանու դի այն տաղտկացուցիչ յերկարուեն յառաջ դոյ կամ 'ի թերի ընարուեն կարեռաց, և կմ' 'ի խեղաթիւր արամագրութէ :

Չորրորդ՝ բանից քարողին պարտ է օգտակար լինել. վասն որոյ այնպէս յօրինեացէ զջառմն, զի ամենայն լսող համարեսցի 'ի միտս իւր թէ առ ինքն միայն խօսեսցի : Զգոյշ կացցէ 'ի բազմակնձիւն արամարանութէց, կամ 'ի տեսական և յընդհանուր առաջարկութէց, կամ 'ի բնազանցապէս քննելոյ զգործհականու : Միտ դիցէ ուղղել զբանն 'ի սիրոս, և ոչ 'ի միտս . յայն սակս խառնեացէ ընդ վարդապետականին և զգործով կատարման զօրինակն : Օժանգակէ առայս յանդիման աշաց ունել զայլեայլ հասակս մարդկան, որք միախուռն գտանին յունկնդրութիւն բանից նորա . զգանազան բնաւորութիւն և զհանդամանս նոցտ . և զամենայն հրահանգան ըստ նոցա յարմարել զանազանարար ըստ իւրաքանչիւր բաւականութէ : Այս եղանակ դործական վարդապետութէ՝ յատուկ տռաքելական քարոզութիւն է . և ամոք տռաւել զգածի օրինակաւ և նկարագրութէ բնութէ իւրոյ, քան ամենայն տեսական վարդապետութէ : Զի ընդմունել 'ի սիրոս, և յայտնել մարդոյ վնորս խորհրդոց նորա՝ զոր չդիտէր յառաջն, հրաշացուցանէ և պակուցանէ զունկնդիրս : Յորչափ շուրջ յածի քարոզիւն 'ի մառախուղս ընդհանուր վարդապետութէ՝ մինչեւ իջեալ 'ի նկարագիր կրից մարդկան, տարտամ և երերուն մեռյ սիրոս ունկնդրին . մանաւանդ թէ և ոչ 'ի մի կողմն խռնարհի : Խակ մանրապատումնկարադիր դործոց մարդկան կենդանացուցանէ զքարովն ողջոյն : Սմին հանգոյն յարացոյցք 'ի պատմական անցից և 'ի հասարակաց կենացս, զոր յաճախութէ է դտանել յածաշունչ դիրս, սասակութեամբ ազդին 'ի սիրոս, երբ տեսանիցեմք զանձինս մեր մասուցեալ 'ի համեմատութիւն դովիլի առաքինեացն կամ պարտաւելի վատացն : Նկատեալ զանցա նոցա, և զնոյն 'ի մեզ օրինակել, և զնման օրինակ կատարած նոցա 'ի մեզ յարմարել, այս ամենայն խորագոյն սպաւորին 'ի սիրոս, և առատութիւն պաղաքերեն :

ՊՐԵՎԻ Բ.

Յաղագ - մայ ժողով :

ԱՐԳԻՍ յիրաւի ասաց ոմն հզօր ատենախօս,
այնպէս պարտ է խօսել ատենաբանին, զի ուսուցէ,
զի զուարձացուցէ, զի շարժեսցէ : Զնոյն է ասել և
վաք քարոզի . այնպէս յօրինեսցէ զբանս հրապարակա
քարոզ վարդապետուն իւրոյ, զի որ լսէն 'ի միտ առ-
ցէ, զի յօժարագոյնս ունկն մատուցէ , զի հաւանես-
ցի դործով կատարել զՃշմարտութին . ախորժանօք
լսել զՃշմարտութի և դործով կատարել զայն : Ըստ
այսոցիկ պարտուց քարոզին՝ չափի և ոճ բանից նորա:

Ուշ եղեալ քարոզին յառաջին պարտ իւր, որ
է ուսուցանել, պարտ է նմա բացայացտութ խօսել և
վարդապետել որպէս անկ է ուսուցչի : Քանզի քա-
րոզին արձանացեալ 'ի բեմ՝ յանձին կավեալ է ուսու-
ցանել զլսողս ըստ ամենայն հաստակի և ըստ ամենայն
վիճակի . վասն այնը արժան է նմա 'ի պարզութ անդր
ուղղել զբանս իւր, և ըստ այնմ յարմարել զկարգն,
զմաւծուիս, զարտայացտութին և զարտասանութի :
Գերազանցութի ոճոյ քարոզին այն է՝ զեղուն լի-
նել յիմաստս առ արս գիտնաւորս, և դիւրիմաց առ-
տպէտս . զի և երկոցուն համանագամայն համոյ գտա-
նիցի : Խակ թէ անբաւական զանձն կը ռեսցէ յերկո-
սին, լաւագոյն է զերկը որդէն և եթ բուռն հարկանել
զպարզագունէն ասեւմ, զանց արարեալ զպերձութըն.
զի ռամիկն իմանայ, և իմաստունն որպէս 'ի վաեմ
զրուցաց նոյնպէս և 'ի գիւրը բանելեաց շինի : Այս
անտեսուի զարդուց 'ի շնորհս ռամիկն՝ դործ է մեծ-
անձն ոգւոյ, որ ոչ յանձին սկերձութի՝ այլ 'ի լսո-
գացն օգուտ վաստակի : Միայն զի պարզութի տա-
լով խօսիցն, միշտ հեռագոյն զիցէ 'ի շինականացն
նուաստ բանից . ծանրութի տալով որչափ յեղանակն
նոյնչափ և յիմաստն, ըստ տկար լսելեացն տանե-
լոյ (*):

* Արբոյն Օդսաբինասի մաքեանս ի՞ն շնորհէ մանիսնաց
արձանացացէալ գէշալուրդ և հայատագ մանը, զոր ու բո-
ւէին 'ի միտ առնեալ ներացէալն 'ի խորին դպրութին, առ-

Պատճառ մթութե ճառին է Եղանակ բացարքութեն՝ ամփոփեալ 'ի համառօտն : 'ի վարդապետականս լուսգոյն է վրիպել յաւելախօսութեն, քան թերի ասել և ինչ ոչ իմացուցանել : Բան կարդաւոր 'ի համառօտն ամփոփեալ թելքէտ և բազմեռանգն իցէ և իմաստալից, ըստում վերագոյն 'ի ճառն ոճոյ լիագոյն հատուցաք, սրտաշաճական է 'ի գիրս կարդեալս յառանձին վերծանութիւն, քան յատենական հրապարակախօսութիւն : Զի յրնթեռնոււլ անդ զմատեան համառօտարան՝ մարթ է կրկին վերծանել կամ մտածել 'ի վերայ բանիցն առ 'ի հասկացումն . խել թե 'ի լսելն յատենախօսէ՝ ոչ իմասցի ինչ ոք, ոչ ևս կարէ միւսանդամ դարձ առնել և 'ի քնին առնոււլ զրանն . ուր Տոխարանն ըստ պիտելոյն յայտնագոյնս 'ի մեջ բերէ զիմասան, և ոչ ևս տեղի մնայ ունկնդրին երկմը առութե :

Դարձեալ մթոգնեն զբարովն ամ բառք անսովորք բազմանշանակք իմաստասիրականք և քերթողականք . զի սորա ընաւ խել տարադրելի Են 'ի քարոզէ, և են նշանակք վքացման նորուսումն քարոզչաց . և ոչ բարւոք ընտրութեան : Զառաւելագոյնն յալագա բացայայտութեն և ընտրութեն բառից՝ դացես յիւրեանց տեղիս ասացեալ :

Երկրորդ պարոքք քարոզչին է զուտրնացուցանել, որ հայի 'ի միտս . զի մուաց է Ճանաչմամբ Ճշմարտութեն և օգտութեց նր խնդամանել ընդ այն : Այս խնդրի բան ամորիչ՝ յանկուցանել զդատասասան մըտացն 'ի վերայ Ճշմարտութեն խնդրոյն, զորմէ բանքն Են : Սակայն ցուցաք վերագոյնդ՝ թե ամորելն ոչ 'ի գլուխ ելանէ լոկով յառաջըրութը պատճառաց և Ճշմարտութ, այլ առ նմին սրահանջի և խայծ զուար Տութեան, մանաւանդ առ այնպիսի ունկնդրիս՝ որք չիցեն բաւական ինքնին հասու լինել զօրութեն վասակիյն : Յազագո այսորիկ պարտ է բարոզչին պատրաստել ընդ բացայայտութեն զյատակ ոչ բարդի բառութեանն և ամ պարագաներին էլեւեցան : Օքինակ նորա իւնու համարեստ ունեաց կարդագոյն բանին :

այսուհետեւ առաջ հայրապետն զայլ մագեան իւր ընդույն հերեւակացաց և գիրտարական վարդապետաւթիւնն յանդ պարագաներ տիւրահան ամենեցան : Օքինակ նորա իւնու համարեստ ունեաց կարդագոյն բանին :

իոսպեն անուշեցին : Գանգի մարդիկ եմք ըստ ակարության դրաւեալք, և զգալեաբս առաւել յօժարեմք քանի խմանալեօք : Յաղագս որոյ գեղազարդեսցէ զընթացու բանին պատշաճական ձեռվիք յոն յատակ, զուարձացուացէ և ամոքեսցէ հեղիկ հանդարսութիւնն և ելեւջութիւն բանից . և զանազանութիւն փոխակերպութիւն, որք 'ի կարգէ բանին դիւրիմաց լինին ամենայն լուելեաց, մինչեւ 'ի գետ ժամանակի 'ի վերոյ բերցէ և զարժութիւն : Այսր աղագաւ 'ի գետ դատեցան զգան վարդապետք՝ մարզիլքարողաց բանին յաշակերպութ ամենայն դպրութիւն, մանաւանդ հաւատրականին . քանգի առ 'ի շարժել զհոդի՝ պարտ է զմիտոն հարկանել, զի 'ի շարժումն միոյն կայ հաճութ միւսոյն :

Ըստ երրորդ պարսուց քարոզչին, որ է շարժելն, պահանջի ոճ հոյակապ և բանից շքեզուի : Թէալէա ախորժելի է քարոզ բացայայա և գեղազարդ, ստեկայն զլրագոյն արդասիս պերճախօսութիւն ոչ պարզախօսն կամ զուարժագեղն յինքն բերէ, այլ հոյակապն և հոգեշարժն : Երկորումքը առաջնովիք, որպէս ասացաբս, ունի քարոզիչն ուսուցանել և զուարճացուցանել . և շատ համարի այն 'ի տեսական ճշմարտութիւն կարգեալս 'ի ճանաչումն և եթ, առ որ խնդրի հաւանութիւն մասց : 'ի բարոյական հրահանգս և 'ի վարդապետութիւն կրօնից սրբութեան, մանաւանդ 'ի վերջարանին՝ ուր զարգասիս վաստակոցն է քաղել, խնդրի օժանդակութիւն հոյակապին՝ առ 'ի դրդել զսիրաս ունկնդրաց, և առաջ նոցա գործովիք կատարել զոր լուանն : Զի զի՞նչ օգուտ է լսել և խմանալ զշշմարտութիւն ասացելոցն, առանց յանձնն յանկելոյ . առ որ թէ ոչ ժամանէ քարոզիչն, տակաւին 'ի նախադրունս դեգերի : Ամենայն քարոզ կամ ճառ, որ 'ի հանդարտութիւն մասց թողու զունկնդիմն, չկարէ յաղթահարել զնաւ . և կործանել զկամակար դիմանարատութիւնն նորա : Պարտ է ազդել քարոզին արհաւիրս 'ի մեզաց, և երկիւղ 'ի դատաստանացն այ . 'ի ծուխ ցնդել ըզպատրանս, որ կաղեալ ունի զաւս մեղաստիրին . յաւելութիւն դարձուցանել զոր սիրէն, կամ 'ի սեր՝ զոր տառեայն . արմատաքի խլել 'ի սրտէ նորա զշնացեալ արմատս ախտից, որք ախրացեալ և բռնացեալ են 'ի վերոյ սրտի նորա . և խարոց ընդ մէջ արկանել ընդ նա և ընդ չար ախտս նորա : Առ որս պիտին եռան-

Դուն բանք և հոյակապ ոճ։ Մարթ է նմա 'ի վար արկանել զայլաբանութիս, ձես ահաւորս, և բացադարձութիս առ արդարս կամ առ մեղաւորս, դիմառնութիս անշնչից, բացագանչութիս, և զամենայն իսկ ձես զառ 'ի բորբոքեալ կրից յառաջ եկեալս յեղանակել։ որով շուք և մեծութիւ յաւելեալ 'ի բանն, բացցէ զսիրտ լսողաց՝ արդիւնարարութբ ընդունել զբանն այ առ 'ի զգաստութիւ որ այն ինքն է գործ քարոզի։

Սակայն հանդերձ այսու ամենայնիւ ածային շնորհացն գործ է շարժել և փոխել զսիրտս, և առնել ըզնոսա բարիս։ իսկ ջանալ զօրութբ Ճարտասանութենեթ բուռն առնել յօժարութեն սրտից՝ է ընդունայն առնել զխացն Քնի ըստ առաքելական բանին։ Վասն այնը մինչ չել յատեան ելեալ ատենախօսին և խօսեցեալ առ մարդիկ, ինդրեսցէ յայ՝ տալբանից իւրոց զաղդեցութիւ ածեղէն հոգւոյն։ Ճարտարութիւ մարդկային պարտի զամ Ճիգն ըստ կանոնագ արհեստին 'ի վար արկանել, զարդիւնս իրացն յած ապսպարեալ։

ՊՐԱԿ Գ.

Յաղագո ու ինչ գիտութիւն իարեւոր էն սրբազնա տպենախօսին։

ԱյսեւորագոՅն քան զասացեալքս միւս ևս պայման պահանջէր սուրբն Օգոստինոս 'ի քարոզչաց, իմաստութեն խօսել։ Քանզի Ճուռոմութիւ խօսից առանց գիտութեն ոչ ինչ օգտէ։ ապաքէն և հեթանոսք, որք չէին պայծառացեալ լուսով ածեղէն իմաստութեն, բանին և եթ առաջնորդութբ անսլատրուակ երեւեցուցին զանարգութիւ մնոտի պերճախօսութես։ Միակ Ճանապարհ բարւոք խօսելոյ՝ է բարւոք խորհել։ իսկ առ 'ի բարւոք խորհել՝ պահանջի հրահանգութիւ, քաջ խելամատութիւ 'ի ձեռնարկեալն, և Ճոխութիւն մտաց բազմագիմի գիտութեք։

Ամբարեալ կայ առաջի քարոզչին մեծագանձ հարսաութիւ ածաշունչ գրոց, և մատենից վարդապետաց սրբոց։ որոց բաղմադէմլիութիւ հտմանգամայն թելադրէ և զնիւթ և զկարգ պերճախօսութեան։

Զբանսն առցես ածաշունչ գրոցն իմաստութենէ, և զկարդաւորութեն՝ 'ի բազմաձև մարզութենէ վարդապետաց յազգս տղգս գիտութեց :

Քարոզիչ աւետարանին պատգամաւոր է այ առ մարդիկ՝ խօսել առ նոսա 'ի բերանոյ նորա, յայտնել զկամս նորա, իմացուցանել զօրէնս և զհրամանս նորա, ըստ հոգեշունչ բանին Պօղոսի՝ թէ վասն քոփ պատգամաւորիմք : Արդ ուսախ՝ ունիցի պատգամաւորն զոր խօսիցի • ոչ այլուստ, բայց յայ՝ որ առաքէ զնա • ըստ որում ինքն Առաքեալն յորդորէր զեփեսացիս՝ աղօթս մատուցանել վասն իւր առ ած, վի տացի նմա բան 'ի բանալ բերանոյ՝ համարձակութեց ցուցանել զեռհուրդս աւետարանին : Խոստովանել արժան է, զի ճշմարտութի հրապարակախօսեալ առ հաւատացեալս՝ այլօրինակ իմն տպաւորի 'ի լսելիս երբ ըզդենու զածային հոգւոյն զօծութի . և այնչափ խորագոյն 'ի ներքս խաղան ածազդեցիկ ճշմարտութիք 'ի սիրաս լսողաց, որչափ զոյգ գտցին ը բանից ածաշունչ գրոց : Եւ վի այս այսպէս՝ հարկ 'ի վերայ կայ քարոզին խորագոյնս խոկալ յիմաստս նբ գրոց, և 'ի լոյս բերել զոր 'ի նմա գանձեալ վսեմութի իմաստիցն : Որչափ 'ի վեր է ածային ազդեցութի քան զմարդկան դատաստան, նոյնչափ և ածեղէն իմաստք և գիրք քան զմարդկային հանճարոյ հնարագիտութի . ապա և փաստ կամ ասկացոյց՝ որ հիմնեալ իցէ յածային գիրս, և յայնը հիման վերայ յառաջ խաղայցէ ատենաբանն, անշուշտ աղդողագոյն և բազմաբեղուն բուսանին շահք 'ի քարոզէ անտի :

Բանք ածաշունչ գրոց ըստ պատշաճի յարմարեալ 'ի քարոզս, ճոխութիւն ընծայեն իմաստիցն, միանգամայն և պերճութի շքեղ : Փաստք կամ վկայութիք առեալ 'ի սուրբ գրոց 'ի հաստատութի առաջարկեալ ճշմարտութիւն, ընդ ահեղ կերպարանացն լիութի տան ասացուածոցն . զի յիւրաքանչիւր այլաբանութիւնս նորա կամ 'ի խրատաբանութիւնն գտանի մեծութի իմաստից և ընդարձակութի բանից : Վայ ը գեղեցիկ խրատուն Մամբրէի վերծանողի . ' Յորժամ յածային գիրս միսիցիս՝ ընթեւնուլ և իմանալ զզօրութի բանիցն, գիր մի ձայնաւոր մի՛ անցցէ զմտօքքոյովք . ամ շարագրածքն լի են հոգեւոր իմաստութի, և ծնանին զբանս հոգեւոր՝ իմաստուն մտաց , :

Բեմբասացութեն քարողի մասամբ իմն գիւրագոյն
 է քան զատենականն : Զիյատենականն պարտ է զըռ-
 վանդակ կազմութեն ճառին յանձնէ ճարտարել ըստ
 անակնկալ գիւպուածոց բազմուգէմիրաց . ունի գտա-
 նելնպաստս այլուստ ըստ եղանակի զըռուցացն , այլ
 ոչ ըստ նիւթոյն . զի ամ խնդիրք տարօրինակ են 'ի
 միմեանց : Իսկ քարողին որ ինչ և առնուցու խօսել
 պատրաստի նմա զառաջեաւ գաշտ ընդարձակ 'ի գիրա
 հարց սրբոց . առ որս գիւրին է նմա գտանել զամենայն
 զազդոյ փաստս և զընտիր ընտիր ասացուածո 'ի վերայ
 բուռն հարեալ առաջարկուեն հանդերձ սկզբամբն և
 հետևուեն : Ոնկ զի այր քարողիչ , որ ինքեան զօրու-
 թե չկարիցէ քաջ հանդիսանալ , Ճոխանայ մեծութե
 օտարին՝ զոր յոճ իւր և 'ի գրիչ պատկանէ : Եւ որ
 յայլ հանդես ընդ ստդտանօք է օրինակել յայլոց ,
 իբր զի յայլեայլ դատս բանկ զանազանք ոչ սերտ մի-
 աւորին , 'ի սմին ստդտանելի է մանաւանդ սնտեսուին
 նմանելոյ հարց սրբոց՝ ոքք զազդս և զգարս ողջոյն բաւ-
 եցին հրահանգել վարդապետութեն իւրեանց : Իբր
 ոչ եթէ ըմբռնեալ սոսկապէս 'ի հետևողութեն բանից
 նոցա , այլ փաստս իմն յայնց կամ ազդողական զրոյցա
 քաղեալ , կամ զկարդ բանիցն միայն : Զոր օրինակ եթէ
 առաջի կայցէ քարոզչին ցուցանել թէ ած թոյլ տայ
 յաստիս գալնեղութեն 'ի վերայ արդարոց , զայսմանէ
 երանելին Ոսկեբերան ճառէ յառաջնում ատենախօ-
 սութեն անդրիականացն՝ ամրապնդեալ զայն երկո-
 տասան ապացուցիւք 'ի սուրբ գրոց : Նոյնպէս և Ըը-
 նորհալի հայրապէտն մեր 'ի մխիթարութեան թղթին
 իւրում առ եղեսացիս , և Մաշտոց վարդապետ առ
 գունեցիս : Արդ քարոզիչ ոք զանց առնելով զսոքօք՝
 մի թէ լաւագոյնս ինչ ճարտարիցէ . ուր հետևողու-
 թե գաղափարացն մարթ է նմա ընտրել 'ի խուռն
 նիւթոց և 'ի փաստից անտի զլաւագոյնսն և զկարե-
 ւորսն , և ըստարելոյ ճարտարխօսուեն իւրոյ՝ կար-
 դաւորել և շքեղել զայնս 'ի ձև վայելուչ և ահաւոր:
 Զի թէպէտ և ինքնին քարոզիչն պերճախօս իցէ և
 ազդողաբան և հնարագէտ , ոակայն առանց ուստեք
 օգնութեն՝ տկարանայ . զի այլեւայլ գիւտք իմաստից
 զանազան ընձեռեն օգնութիս , և բազմադիմի ճանա-
 պարհս ցուցանեն ատենախօսութեն :

Թոնդ զծովացեալ վարդապետութիս , զորս հնար

է քաղել 'ի գրոց անտի : Ոչ խնդրի ժամանակ և աշխատութիւն բազում, որպէս կարծի . մարթ է 'ի շըջանս ամաց սակաւուց մտադիւր ընթերցանութեա գրոցն՝ հմտանալ 'ի նոսին . մանաւանդ յաճախելով 'ի գիրսն թարգմանեալս 'ի մեզ, զորօրինակ են Ոսկեբերանին, Ածաբանին, Կիւրղի, Աթանասի, ևն . նոյնպէս և 'ի գիրս նախնի վարդասլետացն մերոց և 'ի լատինացւոցն, առ որս գացէ քարոզիչն նիւթ ամբաւ 'ի պէտս քարոզին եւրոյ : 'Ի նոցունց բովանդակեացէ զզիարդն հրահան գութե ժողովրդոց, բացատրելով նոցա զհիմունս օրինաց քրիստոնէութե և զկանոնս բարոյականին . զմարդեղութիւն բանին, զվարդապետութիւն նորա, զսքանչելին, զքարչարանսն, զվորհուրդսն . և այսմ ամենայնի մերձ դնել զբանս ածաշունչ գրոց : 'Ի նոցունց ուսցի և զհուետորականին պերճութիւն, յորում առաւելութեա գերազանցէ Ոսկեբերան :

Ապա ծայրայեղ խոտորումն է և աններելի վրիպակ քարոզչի, եթէ ակն դիցէ 'ի պանծացուցանել զգիտութիւն իւր և զՃարտարիօսութիւն 'ի քարոզելն : Որ պատաղի 'ի բառան և ոչ յիրս, կթուցանէ զզօրութիւն ճշմարտութեն քարոզելոյ՝ աղայամիտ սեթեթիւք և նշուլագեղ խմաստիւք . 'ի թիւր հանէ և կամսկորէ զբանս ընդիւառնութեա զտրդուց դուզնաքէից, և որ չար ևսն է, հեթանոսական կամքերթողական առասպելեօք : Մեծն Ամբրոսիոս ոչ ներեր քարոզչաց բանին դանդաղել 'ի հրահանդելոյ զունկնդիրս յօրէնս կարգաց սրբութե, և միտ դնել 'ի պերճութիւն զրուցաց . նա թէ մարթէր, 'ի բաց հանէր 'ի քարոզից զանուսնեալ պերճութիւն՝ որք տկարացուցանել և եթ գիտեն զբանն : Յայտ յանդիման եցոյց զայս և ած առեզեկիէլ 'ի ստգտանել անդ զհիդացեալ վիճակ խրայէլեանց գերելոց 'ի բաբելոն, որք փոխանակ օդալոյ 'ի չարագուշակ նախասացութեց մարգարէին, խուռն ընթանային առ նա լսել և զուարթանալ, որպէս եթէ դնասցէ ոք յունկնդրութիւն երաժշտական նուագաց : Թէ 'ի լսողս այսպէս, հարկաւ ևս առաւել մեղադրութեա արժանի է քարոզիչն՝ որ յարմարէ ըզբանս իւր 'ի լուր ականջաց, և ոչ յօդուտ հոգւոց :

Եթէ ըստ Կուինտիլիանոսի պաճուճանք սլատկանաւորք 'ի բանս ընտելս՝ խառնակեն և խանգարեն զՃառն, եթէ վարեսցին 'ի դատս մեծամեծս կար-

գեալսյօգուտ հասարակաց, ո՞չափ ևս առաւելեթէ սպրդեսցին 'ի քարոզ կարգեալս 'ի փրկութի հոգւոց: Զոր օրինակ առեալ ուրուք ահ արկանել 'ի սիրտ մեղաւորի, փոխանակ առաջի նկարելոյ նմա զերկիւղ մահուն, զբողոք արեանն Քնի՝ որ վրէժինդրութիւն պահանջէ վասն ընդ երկար անարգութեն, զցասումն ածասաստ՝ որ 'ի մօտոյ թափիեսցէ զբարկութի իւր 'ի գլուխ նորա, և զդժոխս բացեալ ընդ ստիւք նորա 'ի կորուստ, օրէ՞ն իցէ նմա գեգերել յանօգուտ պաճուճանս խօսից, խնդրել իմաստս գեղազարդս, պարբերութիս զուգաչափս յօրինել, կուտակել ձես աւելորդս: Այն զի պարտ էր նմա տիրութի և ցասումն ցուցանել յանձին, յորս ոչ մտանեն պաճուճանք: որպէս ուսուցաք 'ի կարգի գրոցս:

Երկրորդ վրիպակ է և քան զառաջինն մխասակար, եթէ 'ի հակառակին ծայրայեղ անկցի, յանոճն և յանհարթ իմա, 'իսպառ անտեսելով զկարեւոր զարդս, և ոչ ինչ մեծարանս դնելով ունկնդրաց և բանին այ, անարդ ցուցանել զգործ սպասաւորութե իւրոյ, և յատեան ելանել առանց պատրաստուե, ասել բանս՝ որ ինչ 'ի միտս եկեսցեն, և զայն առանց կարգի, առանց ընտրութե, առանց չափոյ: Որոց հետեւանք դժնդակ ևս են՝ ազդել 'ի լսողս արհամարհութի բանիցն այ:

Փրկութի հաւատացելոց և հաստատութի հաւատոց նոցա յեցեալ է յօժանդակութիւն ազդողական բանից այլ անօգուտ են բանք՝ եթէ ոչ յառաջ բերցին քաջարուեստ յօրինուածով առ 'ի թափ անցանել 'ի հոգիս: Զի ոչ միայն հարկ է ունկնդրին իմանալ զասացեալսն, այլ և յօժարակամ լսել. իսկ զիամրդ յօժարակամ միտ դնիցէ՝ առանց կարթելոյ 'ի խայծէ հաճոյական զրուցաց: Այս պերճութիւն ոչ 'ի բաց մերժէ զպարզութին, և չէ ներհական յառաջասացելոցս. քանզի պարտ է հեռագոյնս դնել զկազմութի ձառին յանոպայ գեղշկացն խօսից, որ տաղակացուցին է. զմիջինն ունել ձանապարհ ընդ ծաղկախիտն և ընդ ցամաքուտ. այն ինքն է յստակն՝ խառնեալը հոյակապին, որ պատկանաւոր ոճ համարի 'ի քարոզութի, ընդ նմին և տրամադրութի և կարգաւորութի կատարեալ:

ԳԼ. ԺԵ.

ՀՐԱԿԱՆԳ + ՏՐԱՋԱՇՐՈՒՅՑ :

Պլումն կանոնաց ճարտասանութեան արժան համարիմք, զամ զոր ինչ ցայս վայր աւանդեցաք՝ 'ի մի տեսութիւն բովանդակել, և առ ՚ի հրահանգութիւնորավարժից դասաւորելոյ զձեռնարկութիւն ՚ի կարգ ճառի և յօրինակ ընդլայնելոյ զապացոյցս՝ կարգել աստեն զյորդորակն Պակովիսի կապուացւոյ առ որդի իւր Պերոլա :

Կապուա քաղաք էր ՚ի ստորինն իտալիա, և անձնատուր եղեւ Աննիբաղայ կարքեդոնացւոյ ՚ի սաղրելոյ և ՚ի նիւթելոյ Պակովիսի, որ մեծապատիւն էր ՚ի նախարարս քաղաքին. և ոչ յետ բազում աւուրց ինքն իսկ Աննիբաղ եկն եմուտ անդր: Եւ զօրն ողջոյն իրախունք լինէին ՚ի քաղաքին. և եղբարք երկու յաղնուականաց կապուացւոց ՚ի ինջոյս հրաւիրեցին զԱննիբաղ: Տաւրէաս միայն և Պակովիս ՚ի բազմակոյտ աւագանւոյն կոչեցան ՚ի հրաւիրանս խրախճանացն. և անդ Պակովիս հազիւ ուրեմն հաշտեցոյց զԱննիբաղ ընդ որդւոյ իւրում Պերոլայ. քանզի Աննիբաղ ՚ի միտս կասկածոտս էր վասն մաերմուե պատանւոյն ընդ հռովմայեցիս: Սակայն ներեաց նա պատանւոյն վաղացանաց հօրն, և էր անդ Պերոլա ՚ի կոչունան:

Իբրև յանկ ելանէին նուագք խրախանացն, Պերոլա կոչեաց մեկուսի զհայրն, և անդ ՚ի ծածուկ հանեալ ՚ի ներքոյ հանդերձիցն զդաշոյն, յայտնեացնմազսորհուրդն՝ զոր երկնէր ՚ի սրտի, սպանանել զԱննիբաղ, և վրիժուք արեան նորա կնքել զդաշնն՝ զոր կռել ինդրէին հռովմայեցիք: Զարհուրեալ Պակովիսի, կամէր խափանել զորդին յայնմ դժնդակ եղեռանէ:

Աւրդ աւասիկ հարկ բռնադատիչ ՚ի բաց մերժելոյ ՚ի մոտաց պատանւոյն զասլիրատութե խորհուրդն. ահագին էր տագնապ ժամանակին և իրացն:

Յայնպիսում ստիսլող սպահու հարկաւ արդեօք համառօտ պարտ էր խօսել, աղդոյ և թափանցանց ՚ի սիրտ լսովին. պարտ էր ինդրէլ փաստս բաւականս

՚ի հանգարտուել զհրաստապ պատանին զվառեալն ՚ի գործ անդր : Երրեակ կարդո փառատից մարթ էր գտանել Գակովիոսի յանկաւորս իրացն : Առաջին՝ ՚ի վտանգեն յոր պարաներն , յարձակելով ՚ի վերայ Աննիբազայ ՚ի խռան թիկնապահաց նորա : Երկրորդ՝ զի ինքն բարեիրօնեաց առ Աննիբազ վասն որդւոյն , որով և վտանգին՝ մինչ չե հարեալ զԱննիբազ՝ յանձն իւր կրթէր : Երրորդ՝ զի երդումն տուեալ էին և դաշնոս կուեալ ըստ պաշտամանց գենի իւրեանց յընդունելն զԱննիբազ , մանաւանդ զի և զօրէնս հիւրասիրութեան և երահուտագիտութեան պարտ էր նոցա առ ոտն կոմել : Ահա առաջին ներդործուի մտաց ընհանգամանաց գործոյն , և ըստ վտանգի հօրն յայնապիսում պահու :

Ապա յետ ճարտարելոյ զիտատան , արժան է միտ գնել ՚ի կարգ դաստաւորութեն , և ըստ յառաջատութեն սաստկացուցանել զմաստան , և զջորաւորսն կարդել հուսկ յետոյ : Յիշատակութի կրօնից համարէր և ոչ ինչ ՚ի բորբոքեալ սիրտ պատանւոյն Պերոցայ . վասն այսորիկ զայն յառաջոյ կարդէ : Եւ քանզի օգուտ և վտանգ անձին առաւել աղջէին ՚ի նա , գնէ զայն ՚ի գլուխ փաստից յերկրորդ կարդի : Մեծարանք և գործվ սիրոյ առ հայրն , որում մահ առաջի կայր՝ մինչ չե հարեալ նորա զԱննիբազ , առաւելուին քան զամենայն . գնէ զայն ապա ՚ի վերջոյ : Ահա կարեռրագոյն գործ ճարտասանութեան , զոր ջանայաք ուսուցանել ցայս վայր : Յաւել ՚ի սոսա և զգերճախօսութիւն , որ թելադրէ զհանգամանս զրուցացն՝ զանաշանութեանը և եռանդեամբ ձևոցն և խօսից , որով կենգանութիւն զգենու բանն : Եւ ահա ՚ի սին համառօտ ճառի է տեսանել զայս ամենայն , հանգերձ համառօտ և զօրաւորյառաջաբանութ և վերջաբանիւ , զոր Տիտոս Լիւֆոս աւանդէ ՚ի գիրս իւր այսագէս :

“Որդեակ իմ , աղաւեմ զքեզ , և թախանձ արկանեւմ ամ օրինօք ընուե՞ որ կցորդեն զորդիս ընդ ծնողաց . մի և մի մսաբերիցես յանդիման աչաց հօր քո գործել և կրել զգժնդակս , : Ահաւասիկ յառաջաբանուի անթերի . յորում յայտ առնէ զսիրտ իւր հայրենի , և զյանցուածն և զահաւոր աղեաս սպանուեն , որ է ըրումն բանիցն ողջոյն : Արդ մատիցուք ՚ի հաստատուին :

Չառաջին մասն բանիցն առեւալ 'ի կրօնից , ամբազընդէ երիւք փաստիք , և բացառոք պերճախօսութը , առանց բնաւ զանց առնելոյ զիւիք 'ի կարևորացն , և ոչ ինչ յաւելորդաց ը մէջ արկանելով : Առաջին՝ ուխտ դաշնոց հաստատեալ երդմամբ և պատրագօք : Երկրորդ՝ անազարտելի իրաւունք հիւրըն հալութե : Երրորդ՝ իշխանութե հօր 'ի վերայ որդւոյ : Արդ այս երեք անժխտելի փաստք ամփոփին 'ի սմին . « Աակառ ժամք են՝ յորմէ հետեւ երդուեալք ամենայն զիւցականօքն , ձեռն 'ի ձեռն տուեալ , զհաւատարմութիւ խոստացաք . և զիարդ զձեռս սրբեալս հաւատրմութը , արդ իսկ մեկնեալք 'ի դաշնակցութենէ . վաղվաղտիկ զինեսցուք ընդդէմ նորա : Յարուցեալ 'ի հիւրամեծար սեղանոյ , յորում երրորդ 'ի կամպանիացիս պատռեցար յԱննիբաղայ , զնոյն սեղան աշխանք հիւրընկալուիդ շաղախնցես : Ուրեմն հայր քո , որ հաշտեցոյցն զԼինիբաղ ընդ որդւոյն , ոչ կարիցէ այժմ զօրդի իւր ը Աննիբաղայ հաշտեցուցանել :

Երկրորդ մասն . « Բայց աակայն չկայցէ ինչ ուխտ սրբանուէր , ոչ հաւատարմութիւ , ոչ կրօնք և ոչ բարեպաշտութե . յանդդնեսցուք յանարժանսն , որ ը եղեւն ածեն և զիորուատ , : Աւանիկ անցումն գեղեցիկ յառաջին մասնեն յերկրորդն , զոր և 'ի վերայ ածեցա այսմ օրինակի . « Դու միայն յարիցես 'ի վերայ Աննիբաղայ . իսկ ում ապա այն նմմ ամբոխ աղատաց և ծառայից կացցեն , և զի գործիցեն որոց աչք նամցն 'ի մին կան ակնկառոց , զինչ նամցն նոցա բազուեք , ընդպարմասցին արդեօք 'ի պահու կատաղութե : Իշխիցն գու նկատել 'ի դէմն Աննիբաղայ , որոյ առաջի ոչ հանդարտեն կալ բանակք աղջէնք , յորմէ սոսկայ ժողովուրդ հռովմայ , :

Երրորդ մասն . « Եւ թէպէտ չիցեն նման այլ օդնականք , կարիցես հարկանել զիս՝ որ զմարմին իմ արկից պատճեց Աննիբաղայն , և ընդ կուրծս իմ հարկ լիցի քեզ թափ անցուցանել 'ի նա զհարուածն , : Աւանիօր ընդ պարզուել և ընդ համառօտութե՝ աղդուութիւ մեծ է անսանել . իրը թէ ասիցէ , կարողինչ իցես շաղախնել զձեռս քոյ յարեան ծնողիդ քո , կասպատել զնա 'ի կենաց՝ յորմէ գու կեսնս ընկալար :

Վերջաբան . « Աստեն յանձն առ զպարտութիւ քան անդ . լսելի լոցին առ քեզ աղաւանք իմ , որպէս այս-

օր իսկ եղեն վասն քո .. : Տես ինձ որպէս յանկարծ ուրեմն քաղցրացեալ 'ի խստութէն, աղերսանօք յանկ հանէ զբանն՝ որ 'ի բերան հօր ազգողագոյն եր քան զամենայն ձեռնարկուի : Անհնար եղե որդւոյն դժէմ ունել այսպիսի ողոքանաց հօրն . ընդ որ յարտասու հարեալ, 'ի բաց ընկեց զդաշոյն 'ի ձեռանեն :

Արդ վերլուծուիս այս օգտէ համբակաց ոչ միայն 'ի տրամադրութիւն, այլև և 'ի յօրինուած ողջոյն իսկ ճառի . զի զոր անդ Պակովիսոս առ չներել ժամուն՝ 'ի համառօտ բանս բովանդակեաց, ունի քաջակորով ճարտասանն ընդարձակ շահատակել 'ի սմին . յառաջնում մասին պերճախօսութիւն բացատրել զկարգեալ պատճառասն . այն՝ թէ ցոր վայր բռնագատէ եր դումն զերգնվս 'ի կատարումն խոստացելոց : Հիւրըն կալութիւն որպէս ազնուական գործ է, և որչափ անթողիլ յանցումն՝ իւառնակելն զայն հաւատագրժութիւն : Եւ երրորդ յաւելուլ զհայրենի իշխանութիւն 'ի վերայ որդւոյն : Առ որս առատապէս սատարեն տեղիք ճարտասանութե ըստ իւրաքանչիւր դլիոց : Բնական իրաւագիտուի օժանդակէ 'ի ցուցանել զպարտա մարդոյ առ ած 'ի գործս, զորս կրօնիւք յանձին կալաւ . զպարտա առ մարդ՝ թէ քանի բռնագատութիւն 'ի վերայ կայ զդուշանալոյ հաւատարմութէ գաշանց . և զպարտա հպատակութէ որդւոյ առ ծնողս, մանաւանդ յայսպիսի գործ մեծ :

Դարձեալ և յերկրորդում մասին, որոյ իմաստ բանիցն է անվաննելի զօրութիւն Անհիբազայ և զօրաց նորա, տեղին բազդատութիւն տայ համեմատել զպատանեակն Պերոլլա ընդ հառվմէական զօրութիւնն և ը բուռն ուժոյ Անհիբազայ գոր պատերազմողի, և ընդահաւոր զօրութէ զօրաց նորա, ընդ սպայակոյտ թիկլ նապահս նորա՝ որք և յերախանս և 'ի բազմականի շուրջ պահ ունենին զնովաւ : Որ ոք հմաւա իցէ անցից Անհիբազայ և հռովմայեցւոց, գիտէ պերճ և շքեզ յօրինել զայս ամենայն և ահաւոր նկարագրելով ըզճարտարիմաց արթնութիւն կարքեգնացւոյն, զանհաշտոդի վրէժինդրութիւն նոցա, և զայլ ևս պակուցիչ հետևանս խիթալի գործոյն :

Յետ այսորիկ յերրորդում մասին, որ խանդազատականն է, նկարէ զիտիսագարձ գութ հօր և որդւոյ առ միմեանս, և զվատանդ մահու հօրն . զի զինչ օդ .

աւեր վրեժինոգրութե՛ Պերոլլայ, եթե տարապարտուց
և 'ի պատճառա նորա՝ գուցե և նորին խեկ ձեռ օք հա-
սանէր մահ ծնողին :

'Ի վերայ ամենայնի աղաւանք և յորդոր վերջարա-
նական պատկե զնառն որպէս 'ի բերան Պատկովիոսի,
նոյնպէս և 'ի բերան քաջարուեատ ճարտառանի, յար-
մարեալ և յերիւրեալ ըստ իւրաքանչիւր անցից պատ-
շանի : Բարեոք է ուսուցչաց՝ օրինակ նմանուե զայս
և զայսպիսիս գնել առաջի աշակերտաց, և տալ նոցա
յօրինել ճառս 'ի վերայ նոյն իմաստից :

ՄԱՍԻ ԵՐՐՈՐԴ

ՅԱԴԱԳԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ (')

ԱՄՅԱԼԻ երբեմն Դիմութենէս, թէ զի՞նչ կարեղագոյն է ատենախօսի. և ետ պատասխանի. Արտասանութի: Դարձեալ միւսանդամ հարցեալ՝ թէ զի՞նչ է երկրորդ կարեղորն, և դարձեալ ետ պատասխանի. Արտասանութի: Եւ երրորդ անդամ հարցեալ, դարձեալ զի՞նչն ետ պատասխանի: Եւ ոչ միայն բանիւ, այլ և դործով վկայեաց Դիմութենէս, զի զայն քան զամենայն ինչ գեր ՚ի վերոյ դասէր. զի զամենայն անշնարին ճգունու արար առ ՚ի ստանալ զայն: Արդ արտասանութի է, ըստ Կիկերոնի, Համեմատութի ձայնի և շարժուածոց ըստ պատշաճի իրացն և բանից:

Որոց միանդամ վեր ՚ի վերոյ ակնարկեցեն յայս գործ ճարտասանութե, թերեւս ունիցին ասել՝ թէ սասցուածք և ձեք շարժուածոց՝ յարագին ևեթ վայելցութի վերաբերին, ասկայն այլազգ է գործդ ՚ի կարծեացդ: Արտասանութի սերտիւ կցորդեալ է ընդ նպատակի ատենախօսութ, այն ինքն է ողոքել և հանել. վասն որոյ խնդրի անխոնիջ և կամակար ջան, քանզի թարգման և օժանդակ են ամենայն վաստկոց ատենարանին եղանակաւորութի ձայնի, հայեցուած աշաց, շարժուած ձեռացն և մարմնոյ: Եւ ազգեցութին, որ յարտասանութէ աստի, առաւել է քան զոր ՚ի շարագրածոց բանին: Կ' աւսանել յոլով անդամ, զի հայեցուած իմն խոժոռ կամ ազաղակ հնչեցեալ ՚ի կրից՝ թէպէտ և անբարբառ, եռան-

* ՅԱ. E'κφάγησις. լու. Pronuntiatio.

դեամբն սաստկութե ազդէ և ընդուատուցանե , զոր
չեր մորթ կառարել բանիւք լոկով :

Առդ զպիսանութի սորին ծանուցեալ , մատիցուք
՚ի գործն , յերկուս գլուխս բովանդակեալ , ՚ի ձայն և
՚ի շարժուածս :

ԳԼ: Ա

Յաշակ Ձայնի :

¶ ԱԱԱս քան զամենայն կորեոր է ատենախօսի
լսելի առնել և իմացուցանել զբանս իւր . առ որ պա-
հանջի քաղցրութի և ուժգնութի ձայնի , և եղանակ
ասցուածոյ համապատշաճ :

Ուժգնութի ձայնի համարի պարբե ընութե , այլ
մեծապէս օգնէ նմաս կրթութի : Երրեակ աստիճանք
էն ձայնի . բարձր , միջական և նուազ . բարձր է , ո-
րով կոչեմք զոք ՚ի բացուստ . նուազն է խօսել դաշն
ձայնիւ իրբե . ՚ի ծածուկ . խկ միջականն՝ որ յընտանի
խօսս վորի : Ոչ ուզիզ համարին ունանիք՝ թէ պահան-
ջիցի սաստկութի ձայնի . ՚ի խօսելն յունկն բազմուե .
ոչ է պարա խառնակել ընդ միմեանս զբարձրաձայ-
նութի ընդ սաստկաձայնութի : Բարձրաձայն խօսի
ատենաբանն , զի բազումք են որ լսեն . այլ ոչ միշտ
սաստկաձայն , զի ոչ միշտ յուզմամք կրից բարբառի :
Ապա օրէն է ըստ տեղւոյն ընդարձակուե և ըստ լսո-
զացն բազմութե մեծաձայն ատենախօսել . այլ ոչ և
սաստկաձայն : Մեծաձայն բարբառ է՝ ոչ եթէ պար-
տասելով և չնշասպառ դումամբ հրապարակախօսել .
որ տազտկալին է ասողին և լսողին , այլ այնչափ
ուժգնութի տալ ձայնին՝ զի և հեռի կացեալքն լուի-
ցեն : Առ ՚ի չափու պահել զայս աստիճան ձայնի՝
ընդհանուր կանոն է յառել զայս առ հեռառոր ոք
ունենեցիր , և իրը առ նա միայն խօսել : Յայնժամ
ընաւորապէս յայն աստիճան բարձրութեան արտա-
րերի բանն , որ իցէ լսելի ամենեցուն : Զայն և յըն-
տանի զրոյցս է տեսանել . զի ըստ չափու հեռաւորուէ
լսողին պատշաճմք զձայն մեր :

Երկրորդ պահանջի յստակ արտաքերութի , որոյ
օգտութի մեծ է . զի և այլ նըրաձայն յստակ արտա-

բերութիւն լսելի առնի բազմաց քան վլսառնաձայնն՝ ողի հնչմունս բառիցն կակազէ, կամ թոթովելով ոչ յատակ արտարերէ: Ապա պարտ է ատենախօսի ջանդնել սմին, ըստ ամենայն ձայնի հնչմանն յարմարել և զյոտակ արտարերուն, զամենայն սիւղորայ և զտառուշ խմացուցանել, և ոչ ընդ շրթամբ և ը լեզուածեք:

Երրորդ պահանջի հագագ կամ ամանակ համեմատ ձայնի բառիցն: Ծտապ հոլովումն բառից 'ի բերանի՝ խանդարէ զարտարերութիւն և զիմաստ բանին: որպէս և ընդ հակառակին՝ հնչումն ծանրաքարշ և բոնի յերկարեալ, յորում ունկնդիրք միշտ խորհրդովք իւրեանց յառաջ ընթանան քան զբանս տառդին, տաղուկալի է: Բաղումբ ոչ միտ եղեալ կանոնիս, մանաւանդ համբակք, արագ և շտապ արտասանեն: յորմէ այնչափ կարեոր և զգուշանալ, որչափ և դժուարին է ուղղութիւն թէ ոք ունակացի 'ի նմին: Եւ այն զի հանդարտութիւն 'ի բանս՝ ազգեցութիւն մէծ և շուք յաւելու 'ի բանն, օգտէ ձայնին՝ հանդիստ տալ դիւրաւ, և սատար լինի նմա՝ ելեկթուք ձայնին զբովանդակն խմացուցանել:

Չորրորդ պահանջի յատակութիւն արտարերութիւն: աղդէլ 'ի մէն մի բառիցն այնպիսի ձայն և վերսաստութիւն, որ զուգայարմար իցէ քաջ առողանութեան բնիկ բարբառույն, զգուշանալով յաղաւազ և 'ի խեցքէկ արտարերութէ:

Այսչափ ինչ վասն արտարերութէ պարզապէս: արդ մատիցուք յիմաստիցն մտադրութիւն, զորս ըստ պատշաճի արտասանելով ատենախօսն՝ կենդանացուցանէ զբանան 'ի լսելիս ունկնդրաց: գիտել իմանալ թէ զմի մի 'ի պարբերութէց որպէս հանդերձեալ է բացախօսել ըստ պահանջնելոյ իմաստիցն: Ցերեալ տեսութիւն օրէն է բովանդակել զայս: յազգեցուն: 'ի հանդիստ և յեղանակաւորութիւն, որք առ հասարակ զուդընթաց են յարտասանութիւն:

Ա. Ազգեցութիւն է եռանդուն և լի հնչումն ձայնի, որով զեշտելի սիւղորայն իւրաքանչիւր բառիցն՝ իբր տրոհեալ զատուցանեմբ 'ի բառէն ողջոյն, և նովին ցուցանեմբ զուժդնութիւն այնր անդամոյ խօսից: Եւ ուրեք՝ զի շեշտելի բառք պահանջնեն ոչ միայն վերսաստութիւն իմն, այլ և յատուկ եղանակ կամ ելեկթ

ձայնի . որ եթէ անտես առնիցի , ոչ միայն թալիա . ցեալ և մեռեալ մնայ ճառն , այլ և յոլով անգամ ընդ երկուանոք կամ ընդ խրթնութե՛ մնայ իմաստ բանին : Իսկ քաջոլորակի արտասահութեն պարզի : Չոր օրինակ ՚ի բանին ոն առ Յուդա . “Յուդա , համբուրելով մատնես զորդի մարդոյ , . վերսատելով ՚ի վերայ ձայնիդ Յ-Ե-Դ-Ա- , կոչական ձեռով , ապերախտութե՛ աշակերտին ցուցանի առ վարդապետ իւր : Եւ հարցական ողորակաւն ՚ի գերբայն համբաւը լուն , քաջածանօթ լինի մեծութե՛ յանցանաց մատնութեն , վատութե՛ հնարից մատնչին , որ զնշանակն մեծարանաց և բարեկամութե՛ ՚ի թշնամութե՛ գարձուցաներ : Իսկ վերսատելով ՚ի վերայ բառիցդ Կ-Ե-Դ-Ա- , ցուցանի ծանրութե՛ անարգանացն առ գերտպատութե՛ անձինն նախատելոյ : Ա-յնշափ խտիր է ընդ ազդոյ ապացուած և ընդ տկար , որչափ ընդ նոյն եղանակ հարեալ քնարաւ ՚ի քաջարուեստ մատանց և յան վարժից :

՚Ի վերայ այսոցիկ պարտ է ՚ի գեմա բերել և զյուզմունս կրից յարտասահութե՛ . որոց ընդ լուցանելն վիսիս և բարբառ . զի այլօրինակ ասացուած պահանջի ՚ի ցասման , այլ ՚ի կարեկցութե՛ . նոյնակէս իմա և յայլան , զորս պարտ է համակել յանձին , որպէս թէ իւր իսկ գիպեալ իցեն իրքն : Գ.անդի պատկեր հոգւոյն են գեմք ՚ի ցուցանել զապաւորութիս և զփոփոխութիս նորա , զի ՚ի խնդուե զուարթանայ և ընդարձակի . ՚ի տիսրութե՛ ընկճի և նուազի : Արտմատութե՛ խստացուցանէ զնա , և իշխանակերպ յօրինէ զբանան , և ուրեք կցկառուր : Եւ ուր հարկ իցէ զանձին տկարութիս խոստվանել կամ յաղաշանս խոնարհէլ , քաղցրութիս իմն և երկիւղ ցուցանէ զանձամբ : Զայս ամենայն , զոր զգայ բնութին ՚ի հոգւոջ , զնոյն ապացուցանէ յարտասահութե՛ պահուն յանձին իւղում և ՚ի ձայնն :

Բ. Հանգիստ է դադարումն արտասահութե՛ , ուրեք ուրեք ՚ի կախ ունելով զձայնն ըստ արհեստին առողանուե : Այս ինքն է՝ զատանել յիրերաց զանդամն պարբերութեն , և ոգի կլանել : Յասուկ և ըստ պատշաճի բաշխումն հանգստից՝ պահանջի ճարտարութի մեծ , չարոհել երբէք առ տուրեառ շնչոյ ըզրառու , որիք ՚ի ընէ պահանջին միաշունչ արտասահու-

թիւն։ Ետեսանել զրազումն յանվարժից, որք առ
թիւր տրոհմանց՝ անպիտան կացուցանեն զուժդնու-
թե և զազգեցուի բանին։ Ամենայնին, որ բուռն հար-
կանէ հրապարակախօսել հարկ է շահմարանել 'ի
թռս զըռւնչն՝ առ 'ի կարծի պարբերութեն արտա-
շընչել տակաւ։ Վրիպակ կարծիք են թէ միայն 'ի
վախճանել պարբերութեն պարտ իցէ շունչ առնուլ՝
ուր ինքնին յանկիցի ձայնն։ այլ դիւրագոյն ևս է
շնչառութեն 'ի միջավայրս պարբերութեն՝ ուր առ վայր
մի ձայնն 'ի կախ մնացցէ։ Այս զգուշաւոր մասա-
կարարութիւն շնչոյ, օգնէ յարտասանել երկար պար-
բերութիւն՝ առանց տարադէալ տրոհմանց։

Չվայր և զւափ հանդսանին առնուլ պարտ է յի-
մասափց բանին։ քանզի զեկավար հանդսանեան ձայ-
նին՝ իմաստուքն են։ զի ուր առաւել իցէ կախումն
ձայնին, անդ և ունկնդ իրն զհամապատշաճն խնդրէ
զիմաստաւ։ 'Ի բացախօսութեն նովին օրինակաւ գոր-
ծեսցես զհանդիսան՝ որպէս յընտանի զրոյցս, մանա-
ւանդ ուր յաւէտ հարկեցուցիչք իցեն։ Ուր ինքնին
տեսանի, զի ընդ տեղիս հանդսափցն աղդելոց 'ի բնու-
թէ՝ պարտ է կցորդել և զեղանակաւորութիւն ձայնին-
և երկոցուն սոցա զուգադրութիւն՝ ցուցանի չափ հան-
դըստին։ զի է ուրեք՝ ուր պահանջի դրյան ընդհա-
տութիւն ձայնի, ուրեք աւարտ իմն անկատար, և ու-
րեք աւարտութիւն լրացեալ։ Յայսմ ամենայնի մնայ-
նարտասանին կանոնել զանձն ըստ աղդելոց բնութեն-
ատենախօսելով ոչ իրր սերտողաբար, այլ իրր 'ի մտայ
հառելով։ Օրինակաւ լաւագոյն բացատրի ասացեալս-
յորում զանազանութիւն չափոյ ընդ մէջ արկեալ գծիցն՝
ցուցանեն զբանազանութեն չափոյ հանդսափց։ '' Ոչ
ունայն ցուցանի առ մեզ իմաստութիւնորդոցն վիճի-
որ պահեալ էր առ այ 'ի սկզբանէ։ —, և յայտնեցաւ 'ի
յեսին ժամանակս 'ի վառա մեր —։ Այլ դիտումք
ստոյդ — և հաւատամք նշմարիտ, — զի թէ էր ծանու-
ցեալ զերեւալն մարմնով ած — իշխան աշխարհիս, —
ոչ արդեօքատերն վառաց 'ի խաչ հանէին —,,։ 'Ի սմին
ըստ զանազանութեն հանդսափցն յիւրաքանչիւր նշա-
նակս, ինքնին պատշաճի եղանակ ձայնին, հանդերձ
գադարմամբ արտաքերութեն։ Այսպէս օրէն է առնել
և յամենայն վերծանելի կամ 'ի հրապարակախօսին
բանակարդութիւն։

Գ. Լողանակաւորութե է Ելեւեց ձայնին 'ի բեմբաստցութե, այս ինքն է ձայն յարմարեալ ըստ ամենայն լրաց, քազցր, ահաւոր, մեզմ և խիստ, առ որ պահանջի հագագ դիւրաշրջիկ առ ամենայն եղանակ, և ազգեցող 'ի լսելիս, ոչ ըստ սասակութե՝ այլ ըստ բազմօրինակյ յեղանակեցոյ զամենատեսակ ձայնս։ Շարտարութիւն արհեստիս է ուղղել զամենացն հնչմունաձայնին, և այնու աստիճանաւ սկսանել զի մարթացի ըստ կամս ամբառնալ և զինուցանել զձայնն՝ առանց բուռն առնելոյ և առանց խայթեցոյ զամելիս։ Զօդուտ սորին ունիս 'ի միտ առնուլ այսու, զի ըստ ամենայն խորհրդոց և ըստ ամենայն կրից թելագրեթնութիւն և զեղանակ ձայնին։ որպէս զի եթէ ոք արտայայտեցէ զարտմառութիւն իւր կամ զցաւս սրտին եղանակաւ՝ որ անպատկան իցէ այնոր կրից, փոխանակ հաւատարիմ առնելոյ զիրսն՝ ձաղը լինի։

Ամենայն ոք յընանի զրոյցս՝ ուր ընդ առաջ ելցէ նմա ըսն հարկեցուցիչ, կամ խօսել զիրաց ինչ՝ որ սերա տպացեալ է 'ի սիրտ նորս, ըստ ազգեցոյ բնութենն խօսի այնու եղանակաւ, յորում աեսանես յեղափոխութիւն և խրոխառումն բարբառոյ առաւել քանզառվորականն։ Եւ յայս սակս խակ բեմբասացութիւն յոլով անդամ ոչ ինչ արգասիս ընծայեն, վասն զի սրտով զի ելանեն ըստ եղանակն ազգեցեալ 'ի բնութէ, և զհեա պնդին արուեստակութե։ Զիք ինչ անտեղի քան զոր առնեն ոմանք յելանել 'ի բեմբաստանախօսութե, 'ի բաց թողով զբնական իւրեանց կերպ առասացութե, և բուռն հարեալ յանսովորն կամ յանախորժ արհեստականն։ կամ յանհարթ և 'ի բարձրագու։ Այդպիսիք մեկուսի են յաշակերտութեթիւն, և հետամուտք գեղեցկութե և ուժոյ՝ որպէս ինչ նոցա բարիոք թուի, և ոչ ըստ թելադրեցոյ զօրութեն բանիցն։ Պարտ է ատենախօսի դնել 'ի մակի, իբր թէ 'ի համախումբ ժողովի ը արս գիտնաւորս 'ի մէջ եկեալ զկարեար ինչ իրաց խօսիցի։ քանզի անդթէպէտ և կիրքն յուղիցին, պատշաճ եղանակաւորութիւն և յեղյեղմամբ ձայնին բարբառիցի։

ԳԼ. Բ.

Յաղսդա յևոց արդասանաւթե :

ԶԵՒՔ արտասանութե Են բարեձև շարժուածք ըստ հնչման ձայնին և ըստ իմաստից բանին սպահան ջելոյ, որով գիւրընկալ ընծայի ասացեալն : Անբար բառ իմն լեզու Են ձեք, այլ հզօր և պերճախօս . որ և յոլով ուրեք առաւել դատանին քան զիսօս անգամ : Ըարժուածք ըստ նախասացելոցս օրինակի յառաջ դան յամենավարժ բնութենէ, զոր արհեստն և ևս վայելքացուցանէ ըստ իւրաքանչիւր պիտոյից . և 'ի սմին՝ յոր անդատին բնաւորեալ Են ամենայն մարդիկ, ազգք ազգք ըստ անձնիւր տնկակից բնութեն մի քան զմի առաւելուն կամ նուազին : Զի չիք ազգ այնպէս դանդաղ, որ ոչ ընդ բանիցն և շարժուածս կցորդեցէ . մանաւանդ իբրև եռանդն և ջերմուի զգայցէ 'ի հոգւոջ : Ըստ այսմ արտաքոյ է կարգի բնութե՝ խօսել շտապեցուցիչս իմն, և կալ մնալ անշարժ ըստ օրինակի արձանի :

Ընդհանուր կանոնք շարժուածոյ այն Են, զոր ինչ ասացաք վասն Եղանակաւորութե ձայնի . այս ինքնն է խուզարկու հետեւութիւ բնութե, միտ դնել 'ի հայեցուածս 'ի շարժմունս և 'ի գործս առն՝ որ 'ի կիրս ինչ իցէ, և զնոյն կալնուլ գաղափար : Են 'ի շարժմանց՝ որ հասարակաց Են ամենայն մարդկան, և Են՝ որ սեփականք ումանց առանձինն, յորոց անկ է ճարտարախօսին զբնականն առնուլ ընտրել . յորս յաւելեալ և կանոնաց արհեստին՝ ուսուցանեն ըզվայելքականն, և զաւելորդն կամ զսարադէսլ 'ի բաց յապաւեն :

Բազումք բազմօրինակ աւանդեն վասն կարգաւորելոյ զարժմունս . և Են իսկ՝ որք 'ի հայելոջ ուսուցանեն ուղղել զթերին : Այլ ոչ անձին իւրում քաջ դատաւոր է, և անաշառ տեսօղ թերուե շարժմանց իւրոց . վասն որոյ լաւագոյն է զհետ ընթանալ խորհրդոյ փորձ և հմուտ բարեկամի կամ վարժապետի . ըստ որոյ և մեք համառօտեսցուք, հետեւողութե ընտրելագունիցն յուսուցչաց . յորս երևելին է

Կուլինտիլիանոս . և բարւոք առէ նա՞ թէ յայսմ ար-
հեստի բանախօսաց թերես կարեռրադոյն այն է , չե-
րեւ արհեստին :

Արդ պարա է առենախօսին դիտել՝ թէ առ ո խօ-
սի , ուր խօսի , և զորմէ խօսի : Եթէ բնմբասաց լինի
առ աւտգամեծարտ , հարկ է խնայել՝ ի բանս , չափա-
ւորութիւն և աղնուականութիւն կիր արկանել , մեծա-
րանս առնելով ունկնդրացն : Իսկ եթէ առ ժողո-
վուրդն , ազատութիւն է նմա վարել առաւել իմն զօ-
րութ և սաստկագոյնս : Եթէ խօսեսցի յանձուկ վայ-
րի , պահանջի չափաւորութիւն ոչ միայն 'ի ձայնն՝ այլ
և 'ի շարժուածու . զի 'ի փոքու տեղով արձակաբար
շարժել անախօրժ է . և թէ ընդ հակառակն՝ հրա-
պարակախօս լիցի յարձակավայրի , արժան է նմա շար-
ժել ազատօրէն : Իսկ ըստ իմաստից բանին հարկ է
նմա զամենայն շարժմունս իւր քաջ յարմարել ընդ
բանիցն , և մի 'ի շարժմունս զիսօսն կապել :

Եւ քանզի նախասպատիւ մասն 'ի մարմնի դլուխն է ,
նոյնպէս և շարժուածք նորա կարեռոք են : Առաջին
կանոն է՝ ուղիղ ունել զդլուխն ըստ բնական դրիցն ,
երկրորդ՝ յարմարել զարժմունս նորա ըստ բանիցն
ասացելոց : 'ի հրաժարականն կամ 'ի խորշելն և 'ի
ժիանել շարժեմք զդլուխ , և իբր թէ յետս ընդդէմ
դարձուցանեմք : 'ի դլուխն առաւել յայտնատեսիլ
են դէմք . չիք ինչ յօժարութիւն կամ կիրք հոգւոյ՝ զոր
դէմք ոչ արտայայտեսցեն . սպառնալիս , պատուհաս ,
ողոք , տիրութիւն , ցնծութիւն , ամբարհաւաճուի և խո-
նարհութիւն , սէր և ատելութիւն . և առաւել քան
զբանսն դէմքն տան իմաստա : Արդ առենախօսն զա-
ռաաջինն ցուցցէ 'ի դէմա իւր վայելութիւն և ծանրու-
թիւն՝ ազատ 'ի խրոխտմանէ : Զուարթերէս յառաջ
բերցէ զուրախականս , տիրագէմ զարտմականս . և
առ ամենայն կիրա հուակ դիցէ զայլայլութիւն դիմացն
զինքնին աղդեցեալն 'ի բնութիւն , որով դիւրաւ մտա-
նեն բանկ 'ի լսելիս ունկնդրաց : Յամենայնի զբնութիւն
զհետ գնասցէ 'ի ցոյցս դիմացն , և ոչ արհեստական
երեւութիւն : ապա թէ ոչ , ծաղու լինի նշաւակ , և
անպիտան կացուցանէ զբանսն :

Աչք օգնեն մեծապէս 'ի բազայայտութիւն խորհր-
դոց հոգւոյն , բազմագիմի շարժմամք զյոյզս հոգւոյն
յայտնեալ : Թամզ զարտասուսն զթարգման սրտին , որ

՚ի տիսրութեն ուղևորէն յորդեն, և յուրախութեան զուարթ կայլակեն : Արդ եթէ աչք փոխանակ պատշաճ յեղյեղմանն՝ յառեալ հայիցին յերկինս կամ յառաստաղս լսարանին, կամ կիոցեալ բւեռեալ ընդգետին կամ յայլ ինչ տեղի, կարի դժուհի թուին : Մի՛ անշարժ կացցեն յօնք, և մի՛ ստեպ բացիսվիկ խաղայցեն արտեանունք : Երեսք ուղյեսցին միշտ յայն կողմն, ուր ձգին ձեռք . բաց ՚ի բանից ատելութեան կամ հրաժեշտի :

Կախապատիւ ևս են շարժուածք ձեռաց, առանց որոց ձանձրալի է հրապարակախօս արտասանութեն . զի որ այն շարժումն կամ գործ իցեն ՚ի բնութեն, որ ոչ բացատրեսցին ձեռօք : Այլ մասունք մարմնոյ նըպաստեն ՚ի յայտարարութեն . այլ վասն ձեռաց ասելորէն է՝ թէ խօսին անբարբառ, և լաւ ևս իմացուցանեն (*): Չարժուածոյ ձեռացն պարտ է համեմատել միշտ աստիճանի ձայնին, և սահմանել չափով, մի՛ դանդաղ և մի՛ շուտաշարժ : ՚Ի սկիզբն խօսից պարտ է ձգել զգեռս յառաջոյ ՚ի կողմն տարածանելով . զառաջինն յարմկանէն միայն շարժեալ՝ և ՚ի բացէ ունելով յիրանացն, բացելովք դաստակօք, և զմատունսն առ փոքր մի բացատ ունելով յիրերաց :

՚Ի վերջ պարբերութեն՝ մեղմով յինքն դարձուցանել զգեռսն, հանգուցանելով ՚ի վերայ սեղանոյ կամ ամբիոնին՝ յոր խօսի, և ոչ երբէք ՚ի խորս անդ կախել : Իսկ եթէ յոտին խօսիցի յարձակավայրի՝ չունելով յենարան յառաջոյ, պարտ է ընդ պարբերուեն դադարեցուցանել զգեռսն առ կողմամբ : Եւ թէ ՚ի գահու բազմեալ խօսիցի՝ հանգուցէ զգեռսն ՚ի վերայ ծնդաց իւրոց, կամ թեոգ աթուոյն : Զայսոսիկ հա-

* ՚Ի նախնուան յաճախեալ էին մնջկապահիւ, որ+ ը-ին ժ-ջի խաղարիունիւնս կապարէին՝ մայն շարժութեն չեւաց իմացուցանելով զամբնայն, և ներւու առա-նելուն զբանից բացարսութեն : Մի՛ ոմ ՚ի նագաւորացն պանդացուց յաւուրունեռնի կայսեր երեւեալ ՚ի Հոռովու, և առեւեալ անդ զիւշարիունի ուրուն : ՚ի մեծանուն մնջկապահոց՝ որ համը կաւլ զիւս անծանօթս պայր իմանալ նագաւորին, ՚ի մինեւ եւրում ՚ի Հոռովու նոնդուեալ զնա ՚ի կայսերէին՝ ածեւ ընդ եւր . ուռեւ զի ՚ի խօսեւընդ սահմանակիցս եւր ընդ ազգութագութս այլանէզու՝ նարգման կալցի զնա եւր :

ստրակաբար ասսացաք, ասսասցուք արդ և մասնաւորաբար, սակայն փոքր 'ի շատէ. զի ո՞ կարէ բովանդակել զամենակերպ ձես շարժմանց տպաւորեալս 'ի հարկէ կամ 'ի բնութէ:

Առ 'ի ցուցանել զբարձրութ՝ պարտ է վերամբառնալ զաչս, սուլ ինչ 'ի վեր կոյս շրջելով և զգլուխն ամբառնալ միանգտմայն և զձեռս 'ի վեր, տարածեալ և հեռի 'ի մարմնոյն, որով զարտաքին կողմն ձեռաց տեսցեն ունկնդիրք: **Առ** 'ի ցուցանել զխորութ՝ պարտ է խոնարհել զաչս 'ի վայր կոյս, և 'ի նոյն հակել զայնը կողման զձեռսն, զմիւսն ունելով յառաջին դիրսն յորում էր: **Առ** 'ի ցուցանել զընդարձակութ՝ պարտ է համանգամայն տարածել զերկոսին զձեռսն, 'ի միջավայրէն յերկուս կողմանս տանելով, մակաւասար կալեալ զդաստակն ընդ բազկին, առ նմին և զաչս շուրջ յածել ընդ այնս՝ զորս ձեռամբ ցուցանիցէ: **Առ** 'ի նշանակել զերկարութ՝ պարտ է ձգել զձեռսն ընդ մի կողմն: Յայսոսիկ շարժութի ասելով ձեռաց՝ յամենայնի զհամարձակն աւանդեմք, յուսոցն տալով զշարժումն, որով 'ի բաց մեկնեսցին ձեռք յիրանաց, և մի՛ յարմկանէն միայն շարժելով. յորում հեռաւորաց և ոչ շարժումն բնաւ տեսանի, այլ կոճղ ինքնախօս. մանաւանդ զի և շարժումն անձուկ և կաշկանդեալ՝ անշնորհ ցուցանէ զխոսուլն: **Շարժումն** 'ի բարձուէ և 'ի խոնարհ չէ ինչ վայելուչ: **Առ** այսոքիւք ինդրի ևս երբեմն դոյզն ինչ տեղափոխ շարժութի մարմնոյ՝ եթէ յոտին կայցէ խօսովն, որպէս զի մի՛ համարիցի արձան անշարժ. այլ մի՛ վաղվազելով և բազմաշրջիկ տատանմամբ:

Յասացելոց է 'ի միտ առնուլ և զշարժումն, որ 'ի կրից ազդեցեալ. զի 'ի բորբոքել ազգի ազգի կրից՝ սկարտ է պատշաճել նոցին և զշարժմունս. առ որ չէք այլ կանոն առաջի դնել ուսանողաց՝ բաց յանխաբ առաջնորդութէ բնութէ: **Զի** է զի մանկունք 'ի խօսելն ընդ միմեանս՝ գեղեցիկ և անվրէալ կատարեն շամենայն կրից զշարժմունս՝ զոր նոցա թելադրէ բնութին. իսկ յորժամ մատչին յատենախօսել՝ խափանի նոցայն առաջին համարձակութի, և կամ բազում վրիպակօք կատարեն զձեռնարկելն: Քանզի թերամտութք համարին զատենախօսութի օտար իմն 'ի հասարակ խօսից. վասն այնը 'ի բաց թողուն զբնա-

կան իւրեանց զաղցեցութես, կամեցեալ իւրեւ 'ի նորագոյնս իմն սկիզբն առնել: Գոխամանակ զի պարտ էր նոցա զուվորեալն իւրեանց և զբնդաբոյս բնաստուր շարժութեան ջանալ լաւ ևս 'ի կատարելութեան ածել, զմանկական զանհոտադիր պակասութեան 'ի բաց յապաւելով: Որչափ ոք մտադիր աշակերտի ընուեն, այնչափ և քաջ նմանող հանդիսանայ: Ամենայն հրապարակախօս զբնական զիւրն 'ի գործ վարեսցէ, և ոչ զօտարին նմանութե: ամենայն ինչ որ ընդածին է, թէպէտ և զուգախառն փոքրութերութեք, հաճոյական դատի, զի բովանդակ զիսօսողն յանդիման կացուցանէ, և զոր ինչ բխէ 'ի սրաւէ նորա: 'Նա և զոր ինչ արհեստի ուսեալ իցէ, և ուղղեալ զթերին բնատուր շարժութեցն, մի որպէս եկամուտա իմն ցուցանիցէ, այլ բնական և ընդաբոյս: միշտ յուշի կապեալ զառածն անսոււտ, զի չիք ինչ գեղեցիկ՝ բայց որ ճշմարիսն է, և միայն ճշմարիսն է սիրելի:

'Ի գլուխ բանիս՝ դաշնաւոր դացին շարժութեն ընդձայնի, և դէմք ընդ շարժման: և ամենայնն այնպէս քաջ զուգախառնեսցի, զի և 'ի հաճելն և յոզոքէ: մի կորուսցէ զազնուական ծանրութե իւր: Ու այնչափ արհեստ պահանջի անդ, որչափ ճարտարութե և աշխատութե: զի որպէս ասէ Կիկերոն, շարժուածք ատենաբանին քաջայարմար դացին ընդ կրիցն և ընդբանից: Քանզի գեղազարդ, շքեղ և ախորժ ընծայի ճառն ոչ այնչափ բանիւք, որչափ ձայնիւ, շարժուածով և գիմօք, որք յոյժ ազդողականիք են՝ եթէ զուգընթաց դացին մտացն դատաստանի, և զնորին ճշմարտութեն զհետ զնասցեն:

ԳԼ: Գ.

Յաղագ: յիշութեն:

ՅԱՅՍ վայր աւանդեցան բազմադէմ կանոնք ճարտասանութե: Ժամ է արդ և զյիշողութէ առւզինչ ասել: Որ թէպէտ 'ի բնէ չէ ազգակից ճարտասանութե, այլ զի սորայս սատարութե յաջողէ հանել 'ի հանդէս բացախօսութե զճարտասանութեանն

տրդասիս, վասն այնոր իրը կարեւոր գործւոյ միտ եղին ամա Տարտարը արհեստիս, պիտանի կանոնքը զյիշողականն կազդուրեալ:

Առդ է յիշողականն զօրութիւն հոգւոյ, որով ՚ի մաի ունի զիմաստո զբառս և զտրամադրութ ճառին:

Կրկին օրինակաւ մարթ է նկատել զյիշողութիւն. կամ իբրև ձիրս բնութիւն, և կամ ստացեալ արուեստիւ: Առաջինն բնական է, որով յիշատակեմք զիրս անցեալս կամ զընթերցեալս, և որ տակաւ առաւելու կրթութիւնը: Երկրորդն արհեստական, որով բազում իրս յիշատակեմք այլեւայլ նշանօք տեղեաց կտժամանակաց:

Եթէ ոք ՚ի բնութիւն ոչ բնկալաւ զքաջառու յիշողութիւն, անհնար է ստանալ իւիք զայն. այլ զիոքըն զոր ունի՝ կարէ պահէլ, ևս և աճեցուցանել պարկեցութիւնը ՚ի կերակուրս, անզբաղութիւնը հոգւոյ և մասաց, և մանաւանդ հանապաղորդ կրթութիւնը: Զի որպէս կուինափիլանոս տաէ. Մեծն և միակ արհեստ յիշողութեան՝ կրթութիւն է և աշխատաւութիւն: Առ այս ձեռնուու է բազումս ուսանել և բազումս խորհել, և թէ հնար ինչ իցէ՝ ցանդ պարապել յուսութիւն: Կանոնք պիտանիք Տարտարախօսի ՚ի սրել զյիշողութիւն, և առ ՚ի դիւրաւ ՚ի միտ առնուլ զշարագրածս, այսոքիկ են:

Ա. ՚ի միտ առնուլ ստէպ հտառուածս կամ ճառս ընտրականս. զի սոքին հաճոյականք գոլով, դիւրաւ տպաւորին ՚ի յիշողականութիւն:

Բ. Ըննել նախ զկարդ, զտրամադրութիւն և ըլքաժանութիւն մասանց ճառին, քննել զձեռնարկս, և ըստ արտհելոյ մասանց ճառին սերտել ՚ի մաի. զի իմաստիցն ուշ դնելով և կարգին՝ դիւրաւ յաշողէ սերտաղութիւն:

Գ. Խքնին դրէլ զիրսն սերտելիս, և մի՛ փոխել զթուղթին կամ զդիրսն ՚ի սերտելն անդ, զի նշանք կամ եղծուածք տպաւորէալք ՚ի միտս ՚ի յաճախ վերծանութիւն, բազումս օդտեն դիւրաւ յուշի կապել զիրսն:

Դ. Ուսանել յանօթուց, կամ ոչ իսկ և իսկ յետ կերակրոյ: Մանաւանդ դէպ ժամանակ համարի առաւօսն, մինչդեռ չեն ծանրաբեռնեալ միտք բազմահոգ խորհրդովք, և առ հանդսեան դիշերոյ պարզեալ են և յստակ:

Ե. Յուսանելն անդ Տեմ առնուլ, կամ ուղիղ յոտին կալ - մի բարձրաձայն ընթեռնուլ զառաջնեն. յետ ուսանելը յն կրկնել ընդ միտս զուռեալն, մանաւանդ ընդ երեկս մինչև 'ի քուն մուշալ:

Զ. Թէ համառօտեսցի ժամանակն, և ոչ բաւեսցէ յիշողութին սերտ տպաւորել 'ի միտս զամենայն զրառան, յայնժամ մորթէ է զանց առնել զսերտողութը բառից, և յիմաստան միտս ակնարկել. զի թէ բառ մի վրխպեսցէ 'ի մոտաց, չիցէ երկիւղ 'ի շփոթս տագնապելոյ:

Պատահէ երբեմն, զի և քաջ սերտողութը 'ի միտս առնալն, առ ակսարտանայն փափոխելոյ և կամ առ խուռն բազմութ ունկնդրաց, 'ի բաց անկանի 'ի մոտաց: Առ այս հնարս Տարտարիցին ոմանք օգնել յիշողութը առ անմոռաց ունելոյ զսերտեալն 'ի մասի. և այս է արհեստականն անուանեալ յիշողութի, գովեալ 'ի հռետորաց քաջաց, և 'ի նմին իսկ 'ի կիկերտնի:

Արհեստականն յիշողութի այսպէս կատարի. զոր օրինակ եթէ ոք ուրեք կացեալ հրապարակախօս լինիցի, և անգանօր կարգաւ նշանակս իմն կանգնեացէ, գրոշմելով 'ի նոսա զեարեոր հատուածս բանին. զի ըստ Կիկերտնի՝ յիշողութի նման է գրուածոյ. որ որպէս տարածանի 'ի թղթի և բազյոդի տառիւք և բառիւք, այսպէս և միտք նկատեն զուղին իրը թուղթ, և զօր 'ի նմա նշանակս՝ իրը նոյնչափ գրերս. յորս իրը 'ի գրեալ քարախզի ընթեռնու զգորշմեալն: Ուստի պարտ է նախ զանազանել յիրերաց զուղիս, որք եթէ նշանաւոր և փառազարդ իցեն՝ փութով յիշատակնին: Երկրորդ՝ գնել նշանակս Երեւելիս, որք գիւրաւդայցնեն 'ի միտս, և եթէ մարթ ինչ իցէ՝ յարակիցք իցեն խմաստից բանին:

Զոր օրինակ որպէս հաճոյ թուեցաւ ոմանց կեղծել առ 'ի գիւրաւութի, եթէ ոք յեկեզեցւով ասենախօսէ՝ հնար է նմա արոհել զնառն ընդ միտս իւր 'ի մասունս մասունս, և զմի մի յայնց զետեզել մոօք յայլ և այլ տեղիս. զյառութաբանն 'ի գաւութի, զառաջարկութին և զպատմութի առ մուտս գրան, յայլ և այլ սիւնս կամ 'ի պատկերս կարգաւ զփաստս հաստատութին և զհերքման, և 'ի բեմի զվերջաբանն: Զնոյն նշանակս գրոշմեալ և յեղերս թղթոյ հառին, և այնպէս 'ի միտս առեալ, 'ի ժամ ատենախօսութիւն կարէ անվրէալ ար-

տասանել կարգաւ և անշփոթ . իբր թէ հասեալ ՚ի գաւիթ եկեղեցւոյն, և անտի ընդ ողջ սահմարն շուրջ դայցէ :

ԴԼ. Դ.

ՀՅԱՀԱՆԴԻ + ՏԱՐԱՊԱԽԵՒԾԱ :

ՕԿԱՄԵՒՈՐԱԳՈԽՆԵԿՆ քան զնմ հրահանգս աշակերտելոց այսաց արհեստի, զառարինուելն առեմ, առելորդ համարիմ խօսել . քանզի առած էր առ նախնի հռետորս՝ թէ ոչ ոք լինի ճարտարախօս առանց առաքինութէ : Զի քան զնմ ինչ առաւել հաւանեցու, ցանէ զունկնդիրս՝ ճարտարախօսին առաքինութիւն, յոր վասահ իցեն ամերին՝ զի սէր ճշմարտուե և ողջամիտ հայրենասիրուն խօսիցի ՚ի նմա : Մանաւանդ զի և գորամիթն է առաքինութի ՚ի բարդաւահանս ճարտարիսութէ , թելագրելով զժոն նախանձայութութիւն, և թեթևարեւն գործելով զմիտս, մերժեալ ՚ի բաց զամենայն աղմկայոյզ կիրա՝ որբ թշնամի են ուսումնական յատաջադիմութէց : Որպէս գեղեցիկ իմաստափրէ մերս Յովհան Ապրկաւագ վարդապետ . ու գոտնձու իմաստուե, ասէ, ոչ է գասանել ումեք գոմիեստ զուգական . . . որոյ գիւտ, առաջին՝ սասակութի բաղձանաց, երկրորդ՝ յարձակումն խորհրդական՝ ոչ վայրապար, երրորդ՝ ախախց սասակումն և օտարութիւն մարմնոյ, չորրորդ՝ երկոց և քրտանց յոլովութիւն, կամ Նշցրտելով ասել անրաւութիւն, որում լծակցի հարկաւ որապէս աշխատութիւն և առկ, հինգերորդ՝ ամ նա և առաջին իսկ, երկիւղ տն : Եւ եթէ ոչ առքօք ողմնեսցի ոք, զի այսակէս սասցից, գործականին զայս վարկանելով շտեմարանել, սպասել և անսալ բաղբանդելով կարդի և ժամանակի, զնա և ոչ գեթ ճանաւել զիրին զօրութ աստցից, և յոյժ ուղղակի : Վազի յանձն չարարուեստ՝ իմաստուն ոչ մուանէ, իսկ առ պատրաստականս բարեցն, զուզզակի գարձեալ՝ զինի փորձ արկանելոյ՝ ուրախ առնէ պազուին քաղցրութէ իւրոյ զաշխատասէր անվասատկ անձնն, յորում զաննենգն որսացաւ բարս և զմարմին անմեզ, խուսեալ վախսափէ ՚ի հակառակէն, ինքն ոք գոլով և մարդասէր՝ որ իմաստութէն է հոգի . . . Եւ կուինադի:

լիանոս առէ , « Զի թէ վութաջան խնամիք անդատանաց , և աչալուրջ ոքնութիւն առանին հոգոց , և որոցն հեշտուի , և ասհմանեալ օր տեսարանին բազում ինչ նուազեն 'ի ջանից ուսմանց , զի՞նչ կարծից մք գործել անդ ցանկութեն , ագահուե և նախանձու : Չկայ ինչ այնչափ բազմազբաղ և բազմադիմք և 'ի բազմորինակ յօժարութեց հարեալ և խոցուեալ , քան զար և զախտիւք վարակեալ հոգին : Խակ տը անդ տեղի մնասցէ գրասիրութեն կամ այլում վայելուչ արհեստի . զի է արգարեւ որպէս անդաստան լի մասուռոք և տաստակօք» : Քանից և որ անճաշակն իցէ առարինութեն , և 'ի վորձոյ իրացն վերջացեալ , բնութեն նոցուն անտեղեակ է , և չմարմի տպաւորել 'ի ըսելիս՝ զոր յանկաւորն է յիւրաքանչիւր ազգս ճառից ազգել զմի մի յառաքինութեց . զի զոր ինքն չտնիցի՝ որպէս յայլը ազգեացէ :

Երկրորդ Տօխութեն կարեւոր Տարտարախոսի են գիտուիք : Յոլով ուրեք յուշ առնեն Կիկերոն և Կուինաֆիանոս՝ թէ պարտ է ատենաքանին մարզիլ յամենայն հրահանգս և յարհեստս . որով իմանան զիարգաւորեալ աշակերտութիւն յօրենս բազմադիմ ուսմանց : Գիտութիւն և իսոհականութիւն հիմունք են ամենայն վայելուչ ասացուածոց . ոչ ումեք հասանէ լինել պերճախօս՝ առանց հասու դոլոյ ամենայնի՝ որ անկ իցէ առաջարկեալ խնդրոյն . յորմէ վրիպեալն շաղակրաս է , և ոչ պերճախօս : Արհեստն Տարտարխոսութեն շնորհէ Տարտարասանին զատարազ բարւոք և եթի խոսելոյ . այլ զիմաստս բանիցն առնուլ ունի յիւրաքանչիւր դլսոյն : Որ կամիցի հրապարակախոսել յատենական հանգիսի՝ սպահանցն զլիսուի հմտութիւն օրինաց , եթէ ընդհանուր օրէնտդիտութեն բնականին և քաղաքականին և եկեղեցականին , և եթէ յիւրաքանչիւր գտաւոի կանխակալ սովորութեց , հանգամանաց գատին , և ամենայնի որովք ինչ ամոցել կարասցէ զդաստաւորն : Որ քարոզէ զբանն ոյ՝ պարտ է նմատքնել յածաբանական վարդապետութեն , ոչ վեր 'ի վերոյ և առանց տեսութեն ածաբանելով . այլ մինչեւ ցյետին նշանախեցն քննել : Նոյնոպէս 'ի միտ առնուլ և իրը 'ի հայելութ տեսանել զկանոնս բարեպաշտութեն , զընդարձակութիւն բարոյականին , զբազմադիմի հրահանգս մարդկային բնութեն , և նորիմբէք Տօխա-

ցուցանել զվարդապետութիւնը : Զտրամաբանութենէ կանոնն ամենայնիւ հարկ է գիտել նմա , որպէս զիւղիդ խորհեսցի և խօսեցի : Զբնաբանականին հըմառութիւն և զտեղեկութիւն համօրէն արարածոց բնութենէ հարկ է նմա ունել , զի բազում ինչ 'ի կարգի բանիցն ընդ առաջ լինի նմա , զորս պարտ է քննել օրինագր բնաբանութեն , և ստուգել կամ ստել : Այսպէս իմաս և զայլոց :

Բաց 'ի կարեւորացն՝ հարկ է նմա յածիլ ընդ ամ մասունն գրաւոր վաստակոց , և հմուտ գտանիլ 'ի նոսին : Բանաստեղծութիւնի բազմութ ձեռնոտու լիցի նմա 'ի գեղազարդել զբանս իւր , ազգել եռամդուն նկարագիրս , և մոտաւոր զուարձութիւն : Պատմութիւնն օգտակարագոյն ևս իցէ նմա . զի անցք քաջաց և երեկեւաց վարժիւն են ազիտութեն մարդկան , եղոքոք առաջնորդի ճարտասաննն 'ի վարել շրջել զննմանս , և թերութիւնն յայդցանել համարի նմա 'ի կուրութիւն :

Երրորդ՝ կարեւոր է յոյժ գործնական կրթութիւն : Առանց այսր անհնար է քաջ հանդիսանալ , և անխորհուրդութ է կարծել թէ 'ի սուղ ժամանակի հասցե ուսանողն 'ի չափ կասարեալ վաստաբանի և քարոզչի : Պահանջի երկայնամիտ աշակերտութիւնն , և խնամով վարժութիւն 'ի յօրինուած ազգի ազգի խնդրոց , որպէս զի կազմ գացի ամենայն ուրեք իրը յանպատրաստից յատեան ելանել : Այս կէտ նպատակի դնէ անձին՝ յառաջադէմ խաղալ յարհեստիս , պարտ է նմա 'ի բռվանդակ մասց 'ի նոյն պարապել : Եւ 'ի յօրինուածս անդ՝ պէտք են զառաջննն հանդարտութ մօտաց 'ի գիր դրումել զբանսն . զի մի առ հասկնեալ տագնապին սպրոդեսցին վրիսակեք յիմաստու և 'ի կարգս , զորս գժուարինն է յետոյ ուղղել զամենայննն : Իմաստութիւն սպատուիրել կունինախիմանու . ։ Յամը և մտադիր սպատուիրեմ , ասէ , լինել 'ի սկզբանն . քանզի նախ զայս հաստատել և կարգել պարտ է , զի ոզորկարգոյնս գրեսցուք . իսկ զերագութիւն 'ի վերայ բերցէ սովորութիւնն : Պարապով գիւրագոյնս 'ի յայտ գան իրք . զշետ գայցեն բառքն , և յանդիման երեկացի կցորդութիւնն . ամենայն ինչ 'ի կարգի լինիցի՝ որպէս 'ի բարեկարգ տան : Գլուխ բանիս . հասկնեալ գրութեամբ ոչ անստերիւր գըի , իսկ բարիոք գրութեամբ երադագոյն , :

ԱՐԵ և յետ դրութեն պիտի ժամ տալ, և առ վայր մի թողուլ անգործ, մինչև հանգիցն եռանդուն յուղմունք մասաց . և յետոյ անդորր աչօք ընդ զննութեց արկեալ զդրեալսն, դիւրաւ մարթի զաւելորդան յապաւել, և զկարեորսն յաւելուլ, և լրումն տալ գործոյն ըստ ամենայն կարեոր կանոնաց : Լաւ է աշակերտաց 'ի սակա հրահանդութե, մի ընարել դիւրագոյն խնդիրս, այլ մանաւանդ զբաղմակն ձնոն և զդժուարին . զի որ մարզեացի յաղթել դժուարութեց, դիւրաւ յաղթէ և 'ի պահու փաստաբանութե յասեանս՝ որ զինչ ծանր և անլոյծ խնդիր առաջի արկցի նմա :

Չորրորդ կարեոր է վութաջան հետեռդութիւն ընտրելագոյն մատենագրաց . քանզի այս մեծապէս օգնէ 'ի մարզութի պերճախօսութե : Ամենայն մատենագրի հարկ է ստանալ սեփական իմն ոճ գրութե որպէս զիարդ թելագրեացէ նմա իւրն ուշիմութի . վասն այնր չնորհեալ է ամենայն ումեք ստեալ ընթերցմամբ օրինակել յանձն զդերազանց գաղափարս : Յանկալի էր թէ ամենայն հետամուտք ուսումնափրութ ջան դնելին, և զդովելի նախանձն նախանձելին, գեր 'ի վերոյ անցանել արդիւնական վաստակօք իւրեանց քան զքաջ մատենագիրս, և անձանց բաժին հանել յարժանապէս գովեստից նոցա . ոչ թէ մեծամուլով առ 'ի տապալել զքաջութիւն նոցա՝ որ ժանա մախանաց է գործ, այլ ճգնել 'ի հանդէս առաքինի նախանձաւորութե . 'ի գերագոյնն միշտ ակն դնել, և 'ի նմանութի կատարեալ գաղափարացն թեակ կոխել, միշտ մեծարելով զնախնեացն պատիւ և զաւագութիւն : Այս եռանգն զԴիմութենէս և զկիկերոն ամբարձ յանմահութի փառաց և վաստակոց :

Սակայն և 'ի հետեռդողութեգ ոչ է սպարտ կասպիլ ափշութ յամենայն հատուածս բանից մի և նոյն մատենագրի : Զի և 'ի բաւագոյնս անդ ևն հատուածք անարժանք 'ի նմանութի . վասն որոյ խնդրի քաջ զընել որոշչէլ զդեղեցիկ յօրինուածս իւրաքանչիւր օրինակագրի, և նոցին նմանել : Չէ արժան սերտ յարեալ մնալ 'ի մի և եթ գաղափար, և յախուռն ձգիլ 'ի նմանութիւն միում միայնոյ, ոչ զնելով խափր ընդպատուական մասունս և ըլ անարդս . այլ արժան է մեղուօրէն ծառիցքազ հաւտքել յիւրաքանչիւրոց

զընսիրս, առաջի ունելով զտարաց բազմադիմի շարագրութեց:

Յետ ընտրելոյ զգաղափարս առ 'ի նմանութիւն, սկսուած է մտադրութե և ուշի ուշով ընթեռնուլ զայնս, կրկնելով և երեքկնելով զկարդացումն, մինչև բանից գրոցն խորագոյնս տպաւորել 'ի միտս: Նկատել զորսկէսն 'ի զուգագրութե բառից 'ի զանազան դասաւորութիւնն, զկարգն և զներդաշնակութիւն: Խելամուտ 'ի հանգամանս բանից նորա, հայել 'ի խորս մտածութեցն, քննել զզեարդն ձեռց և զփոխակերպութեց, և զննել զպատճառսն թէ ընդէր այս մատենագիր այսպէս 'ի վար արկանէ միօրինակ, և միւսն այլազդ. կամ ուրեք այսպէս, և ուրեք այնպէս: Որոց լիով խելամուտ լեալ, առնուցուս քեզ զկարեւորսն 'ի նոցանէ 'ի նմանութիւն: Եւ յորժամ առաջի կայցէ ճառագրել զերաց ինչ, զմտաւ ածցես, եթէ ոյր ուրութ 'ի քաջ մատենագրաց գրեալ իցէ զայնպիսեաց, և քննողական աչօք ակնարկեալ 'ի գրուածս նորա, և զեղանակ բացատրուե նորա 'ի միտ առեալ, յայնմհետէ մատիցես 'ի գրութի:

'ի վախճան հրահանգացս կարեւոր համարիմ զեկուցանել համբակաց, զի որովհետեւ ոչ առ ամ ոք, յամենայն տեղիս, և յամենայն ժամանակի, նոյն բանք և նոյն ոճ բանից են պատշաճական, ըստ նմին անկէ զգօնութե ատենախօսին պատկանել զՃառս իւրքանզի նախըստ կարգի տիոց՝ այլազդ պարտէ խօսել առ ծերս, այլազդ առ կատարեալս հասակաւ, և այլ առ պատանիս: Կոյնպէս և ըստ պայմանի իւրաքանչիւրոց, այլազդ ախորժելի են ճառք աւագ որերոյ, և այլ ռամկին. այլազդ մեծասանն, և այլ աղքատին: Դարձեալ և առ գիտունս և առ տիմարս ընոցին ախորժակացն և ըստ ժամանակին պարտ է յարդարել զՃառս: Իսկ եթէ առ օտարազգիս առաջի կայցէ խօսել, և անդ ըստ բարուց իւրաքանչիւր ազգաց յարմարելի է: Կմին իրի անկ է ատենախօսի և բարոյականին լինելքաջամուտ գիտուե, առ 'ի գիտել զկիլս իւրաքանչիւր հասակաց և այլեայլ կարգի մարդկան. և աշխարհագրութե դարձեալ լինել տեղեակ, որում անկ է ճառել զբարուց ազգաց և ազանց:

ՎԱԽՃԱՆ

ԳԼԻՒՅԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ

ՄԱՏԵՆԻՍ



ՆԱԽԱԾԱՒԻՂ

ԳԼ. Ա.	Անդրեած և յառաջապուլ վեղուախօսունք .	12
ԳԼ. Բ.	Սիւլվանուրունքի հարգաւոր բանախօսունք	
	և գրունք	19
ԳԼ. Գ.	Սիւլվի և բարգաւաճունիւն ճարպասանունք	29

ՀԱՍԱՐՁԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ :

Թէ պինչ է ճարպասանունք , և իբր սահմանի , և յաղագս մասանց նորա , և ապդի ապդի ճարպասանունք	37
----------------------------------------------------------------------------------------------------	----

ՄԱՍՆ Ա.

Յաղագս պերմախօսունք	45	
ԳԼ. Ա.	Յաղագս վայելաբանունք	49
ԳԼ. Բ.	Յաղագս շրահարգունք	49
ՊՐԱԿ Ա.	Յաղագս բայայապունք	49
ՊՐԱԿ Բ.	Յաղագս մուռնք	52
ՊՐԱԿ Գ.	Յաղագս ուժգնունք	54
ՊՐԱԿ Դ.	Յաղագս ներտաշնակունք	57
ՊՐԱԿ Ե.	Յաղագս պարբերունք	62
ԳԼ. Գ.	Յաղագս ճոխաբանունք	66
ԳԼ. Դ.	Յաղագս ժոխակերպունք	71
ՊՐԱԿ Ա.	Յաղագս ժոխաբերը	72
ՊՐԱԿ Բ.	Յաղագս խելամփունք	75
ՊՐԱԿ Գ.	Յաղագս ժոխանունունք	77
ԳԼ. Ե.	Յաղագս ժոխակերպունք իմաստից	78
ՊՐԱԿ Ա.	Յաղագս այլաբանունք	79
ՊՐԱԿ Բ.	Յաղագս հենգունք	80
ՊՐԱԿ Գ.	Յաղագս լուժականունք	82
ՊՐԱԿ Դ.	Յաղագս շըջաբանունք	85
ԳԼ. Զ.	Յաղագս յեղաբանունք	87
ՊՐԱԿ Ա.	Յաղագս աւելադրունք	87
ՊՐԱԿ Բ.	Յաղագս զեղան	91

ՊՐԱԿ Գ.	Յաղագու հանգիպութեն.	92
ԳԼ. Է.	Յաղագու յեւս իմաստից.	94
ՊՐԱԿ Ա.	Յաղագու պարակութեն.	95
ՊՐԱԿ Բ.	Յաղագու շնորհման.	97
ՊՐԱԿ Գ.	Յաղագու նախապաշտման.	98
ՊՐԱԿ Դ.	Յաղագու անշման.	99
ՊՐԱԿ Ե.	Յաղագու արքուղութեն.	101
ՊՐԱԿ Զ.	Յաղագու լուսնեան.	102
ՊՐԱԿ Է.	Յաղագու բաժանորդութեն.	104
ԳԼ. Ը.	Յաղագու հոգեշաբաժ յեւս իմաստից.	105
ՊՐԱԿ Ա.	Յաղագու հարցման.	106
ՊՐԱԿ Բ.	Յաղագու բաշտագանցութեն.	107
ՊՐԱԿ Գ.	Յաղագու տիմառնութեն.	109
ՊՐԱԿ Դ.	Յաղագու բաշտագանցութեն.	114
ՊՐԱԿ Ե.	Յաղագու նկարագրե.	116
ՊՐԱԿ Զ.	Յաղագու աշերանաց.	120
ՊՐԱԿ Է.	Յաղագու անիծեց.	122
ՊՐԱԿ Ը.	Յաղագու ուղղութեն.	124
ՊՐԱԿ Թ.	Յաղագու իտիման յեւս.	125
ՊՐԱԿ Ժ.	Յաղագու բազմայէղանակն յեւս.	128
ԳԼ. Թ.	Յաղագու ընդլայնման.	130
ԳԼ. Ժ.	Յաղագու բարեստ ՚ե ինը արկանէլոյ զյեւ,	
	և ընդէլուզանէլոյ խոհական իմաստ.	136
ԳԼ. ԺԱ.	Յաղագու ոճոյ.	146
ԳԼ. ԺԲ.	Յաղագու գրաւորական ոճոյ.	152
ԳԼ. ԺԳ.	Յաղագու վսէմութեն.	161
ԳԼ. ԺԴ.	Յաղագու ընդլայնման իտմ ախորժակաց.	171

ՄԱՍՆ Բ.

	Տըամատընթեն.	178
ԳԼ. Ա.	Յաղագու յառաջաբանի.	180
ՊՐԱԿ Ա.	Յաղագու աղգի աղգի յառաջաբանութեն.	181
ՊՐԱԿ Բ.	Յաղագու աղբերաց յառաջաբանութեն.	184
ՊՐԱԿ Գ.	Կանոնի յառաջաբանութեն.	188
ՊՐԱԿ Դ.	Ու ինչ առաւելագոյն շանից պէտք են ՚ի յառաջաբանութեն.	191
ՊՐԱԿ Ե.	Յաղագու մասանց յառաջաբանութեն.	193
ԳԼ. Բ.	Յաղագու առաջարկութեն և խնդրոյ.	194
ԳԼ. Գ.	Յաղագու բաժանման.	199
ԳԼ. Դ.	Յաղագու արենական պատմութեն.	201
ԳԼ. Ե.	Յաղագու հասպատութեն և պեղեաց.	206

ՊՐԱԿ Ա.	Յաղագու սահմանի	208
ՊՐԱԿ Բ.	Յաղագու Ըստաբիւթե ճառանց	211
ՊՐԱԿ Գ.	Յաղագու սէոի և պէսակի	216
ՊՐԱԿ Դ.	Յաղագու Նախընթաց և հետևող հանգամանաց	218
ՊՐԱԿ Ե.	Յաղագու յարակից հանգամանաց	219
ՊՐԱԿ Զ.	Յաղագու պատմառաց և գործոց	221
ՊՐԱԿ Է.	Յաղագու Նմանութե	223
ՊՐԱԿ Ը.	Յաղագու Նէրհականաց	227
ՊՐԱԿ Թ.	Յաղագու Քաշտապութե	228
ՊՐԱԿ Ժ.	Յաղագու արդարին պէղեաց	231
ԳԼ. Զ.	Յաղագու Շասակարգութե ժասակից	234
ՊՐԱԿ Ա.	Յաղագու աղացուցից	236
ՊՐԱԿ Բ.	Յաղագու հերժան	238
ԳԼ. Է.	Յաղագու Յեռնաբիւթե	241
ԳԼ. Ը.	Յաղագու իւից	248
ՊՐԱԿ Ա.	Յաղագու սիրու և ապելութե	250
ՊՐԱԿ Բ.	Յաղագու յուսուր և եւիլութե	252
ՊՐԱԿ Գ.	Յաղագու Քարիւթե և հեղութե	256
ՊՐԱԿ Դ.	Յաղագու ինդութե	259
ՊՐԱԿ Ե.	Յաղագու Նախանչառութե	260
ՊՐԱԿ Զ.	Յաղագու պատկառանաց	262
ԳԼ. Թ.	Յաղագու իանոնաց 'ի շարժութե իւից առ հասարակ	264
ԳԼ. Ժ.	Յաղագու վերջաբանի	270
ԳԼ. ԺԱ.	Յաղագու իայրտական հանդիսի	274
ԳԼ. ԺԲ.	Յաղագու Քաղիւհական հանդիսի	183
ԳԼ. ԺԳ.	Յաղագու ապենական հանդիսի	290
ԳԼ. ԺԴ.	Յաղագու ժարուհի	295
ՊՐԱԿ Ա.	Յաղագու իանոնաց ժարուհի	298
ՊՐԱԿ Բ.	Յաղագու ոճոց ժարուհի	301
ՊՐԱԿ Գ.	Յաղագու ու իւլ գիտութե + իարեւութ և ուբական ապենակիօնի	304
ԳԼ. ԺԵ.	Հրահանգ + պըամատընթեան	309

ՄԱՍ Գ.

	Յաղագու արդարանութեան	315
ԳԼ. Ա.	Յաղագու Յայնի	315
ԳԼ. Բ.	Յաղագու Յեղու արդարանութեան	320
ԳԼ. Գ.	Յաղագու յիշութե	324
ԳԼ. Դ.	Հրահանգ + ճարպարախօնի	325

~~25~~

~~FB~~

~~7P.~~

8n - ~~St~~

~~St~~